

38.092 [Հայերն] Գրության և պատճեն
= 15. =

Հ. ՍՈՒՐԵՆԱՌՅԱՆ

ՏԵՂՄԱՆ Հ. 1881 թ.

ՀԱՅԵՐՆ
ԵՒՔԱՂԻՐ

A 11/21903



ՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 5



1106



L. Առաքելյան




«Ճումական արվեստ ու վիալերգուրյունը դեռ
շարունակում էն պատճառել մեզ գեղարվեստական
նանույթ և պանականում վարու իմաստով նորմայի
և անհասանելի տիպարի նշանակուրյուն»: «Յեթ իմ-
չո՞ւ մարդկային նասարակուրյան մանկուրյունը
այնտեղ, ուր զարգացել և ամենազեղեցիկ կերպով,
չպեսք և նախիննական գրականուրյան մի ամենասա-
նելի աստիճան բվա մեզ»:

ԿԱՐԼ ՄԱՐՔՍ

«Մարդկուրյան ամբողջ զարգացումով սենդված
կուլտուրայի ճիշտ ըմբռնմամբ միայն, երա վերա-
մականամբ միայն կարելի յե կառուցել պրոլետա-
րական կուլտուրա»:

ԼԵՆԻՆ

ՅՈՄԵՐՈՒ





1

ՀԻՆ ՀՈՒԽԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ -- ՆԱԽԱՑՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆ

Հին Հուխաստանի արքինեան ու գրականությունը ունեցել են զարգացման այնպիսի բեղմանավոր շրջաններ, վորագիսիք մինչև հույները չեն ունեցել մեղ ծանոթ հնագարյան ժողովուրդներից և վոչ մեկը։ Դարեւը շարունակ թովչանք պատճառող հունական արվեստը (Մարքս) բողբոջել ու զարգացել և հունաստանի քաղաքական անկախության զարգացանում, վորն ընդգրկում և հնագույն ժամանակներից մինչև չորրորդ դարի վերջը քրիստոնեյությունից առաջ։

Հունական անթիք աշխարհի արվեստի և գրականության արմատները պիտի վորոնել այն նախապատմական անցյալի հետագոր շրջաններում, ուր ծնունդ են առնում հին ժողովուրդների ավանդություններն ու առասպելները, վորոնց մեջ շնչավորված են ընության յերևույթներն ու նախնական մարդու վերաբերմունքը դեպի շրջապատող սոցիալական իրականությունը, «Հայտնի յեւ,—ասում ե Մարքսը, վոր հունական դիցարանությունը վոչ միայն հունական արվեստի զինարանն եր, այլ և նրա հողը»։ Հին հույների արվեստի և գրականության զարգացումը տեղի յեւ ունեցել դրեթե ինքնուրույն, քանի վոր յեղիպատական և բարելական գրական կուլտուրայի ազգեցությունը մնացել է համա-

կարծիքով, հին հույնը չգիտեր, թե ինչ ե տառապանքը, ինչ և ներքին փոթորիկը և հակասություններով խտացած հոգեկան պայքարը, իր այդ անդորր ու անխռով կյանքի հետ վորպիս թե նա ունեցել ե հրաշալի բնաշխարհ, վորի զեղածիծաղ ծոցում նվիրված ե յեղել միմիայն ստեղծագործական աշխատանքի և փիլիսոփայական խաղաղ մտորումների:


Մենք սակայն դիտենք, հակառակ Ծընանի ու զրականության պատմաբան Թենի և ուրիշ շատերի պնդումների, վոր հին Հռւնաստանի տնտեսական և հասարակական կյանքը, վորը հիմնված ե յեղել ստրկատիրական սիստեմի վրա, յերբեք ել ազատ չե յեղել և ազատ չեր կարող լինել իրենց ժամանակի սոցիալական հակասություններից ու տառապանքներից, վոր աշխատավոր հույն մասսաների համար յերկիրն ու հողը յերբեք ել բավարար չի յեղել իր բերքով, վոր տնտեսական կյանքը յերբեք ել զիրծ չի պահել նրանց ապրելու համար միջոցներ գտնելու անսահլի ծանր հոգաբերից, վոր հասարակական փոխադարձ հարաբերությունները ընթացել են դասակարգային սուր պայքարի և ընդհարումների բովում. վոր վերջապես, իրան հետևանք այդ ամենի, հին հույնի հոգեկան աշխարհը չի յեղել «խաղաղ ու ներդաշնակ», Մեզ ծանոթ հոմերական դարաշրջանից սկսած մինչև Նվիրիպիդեսն ու Արքատոփանը, նույն և հելենական հռոմեյական դարաշրջանում, սոցիալական ընդհարումներն ու հակադիր խավերի պայքարը հաջորդել են իրար և ստրուկը, աշխատավորը այդ պայքարի մեջ վոչ միայն «անդորր ու յերջանիկ» վիճակ չեն ունեցել, այլ ճիշտ հակառակը՝ ապրել են դասակարգային պայքարի, քաղաքացիական պատերազմների սուր շրջաններ, ճիշտ ե, հարաբերությունները հոմերական հասարակության մեջ առավել պարզ ու պրիմիտիվ են յեղել և բարզացել են տնտեսական - քաղաքական պայմանների հեղաշրջման հետևանքով, սակայն միշտ ել

պայքարը յեղել և կատաղի, ցասումն ուժեղ, մզումները
բուռն ու փոթորկալից, Այդ մենք կտեսնենք հետո:

* *

Վիճակինք պատմական և հասարակական միջավայրումն
են հանդես յեկել հունական ցեղերը և վորն և այն հասա-
րակական կյանքը, վորի ստեղծած դրականությունը, գյու-
ցաղներգությունը այնպիս հարատէ տպավորիչ և մնում իր
ստեղծագործական բարձր նմուշներով: Ավելի պարզ լմբըսո-
նելու և հեշտ պատկերացնելու համար հունական կուլտուրայի
ծագման պատմությունը և հույն գեղարվեստի ակունքները,
մենք համառոտակի կանգ կառնենք հունական պատմական
անցյալի վրա:

Հունական պատմության հնագույն շրջանի ուսումնա-
սիրության գլխավոր նյութը հնագիտական հուշարձաններն
են. հեթիթական և յեղիպտական փաստաթղթերի հիշատա-
կումը և մասամբ լեզվաբանական տվյալներ: Հարուսա-
նյութ և մատակարարել հայտնի հնագետ Շլիմանը իր այս-
պես կոչված «միջնական» պեղումներով, վորոնք հետազո-
յում լրացվեցին «կրետական» և «կղզիական» կուլտուրա-
ներին վերաբերող նոր նյութերով (Կրետ, Միջնաեր, Տրո-
յա, Եգիյան կուլտուրա), կորնթոսի մոտ վերջերս կատար-
ված պեղումները հայտնաբերեցին ընակավայրեր նախահու-
նական կուլտուրաների շերտավորումներով, վորոնք վերա-
բերում են Նեոլիտից (նորաքարե դար) մինչև 12-րդ դարը
քրիստոնեյությունից առաջ ընկած ժամանակամիջոցին:
Այդ տվյալների համաձայն յենթաղրվում ե, վոր 2-րդ հա-
դարամյակում ք. ա. գոյություն են ունեցել մեծ պետու-
թյուններ (համեմատական չափով) թագավորների գլխավո-
րությամբ: Պեղված պալատների և գմբեթաձև դամբարանների
հակայտականությունը ցույց են տալիս, վոր թագավորները



Ակրոպոլ (ու Թիրան) *The Acropolis (after Thiersch).*

Այսուհետ վերականգնած տեսքը Տիրչի նմանազնութեան

Ակրոպոլ (ու Թիրան).
The Acropolis (after Thiersch).

պարբառը յեղել և կատաղի, ցասումն ուժնեղ, մղումները
բուռն ու փոթորկալից, Այդ մենք կտեսնենք հետո:


* * *

Վժրալիսի պատմական և հասարակական միջավայրումն
են հանդես յեկել հունական ցեղերը և վորն և այն հասա-
րակական կյանքը, վորի ստեղծած գրականությունը, դյու-
շազներգությունը այնպես հարատե ապավորիչ և մնում իր
ստեղծագործական բարձր նմուշներով: Ավելի պարզ ըմբըռ-
նելու և հեշտ պատկերացնելու համար հունական կուլտուրայի
ծագման պատմությունը և հույն դեղարվեստի ակտունքները,
մենք համառոտակի կանդ կառնենք հունական պատմական
անցյալի վրա:

Հունական պատմության հնագույն շրջանի ուսումնա-
սիրության գլխավոր նյութը հնագիտական հուշարձաններն
են, հեթիթական և յեղիպտական փաստաթղթերի հիշատա-
կումը և մասամբ լեզվաբանական տվյալները: Հարուստ
նյութ և մատակարարել հայտնի հնագետ Շլիմանը իր այս-
պես կոչված «միքենական» պեղաւմներով, վորոնք հետազա-
յում լրացվեցին «կրետական» և «կղզիական» կուլտուրա-
ներին վերաբերող նոր նյութերով (Կրետե, Միքեններ, Տրո-
յա, Եգիյան կուլտուրա): Կորնթոսի մոտ վերջերս կատար-
ված պեղումները հայտնաբերեցին բնակավայրեր նախահու-
նական կուլտուրաների շերտավորումներով, վորոնք վերա-
բերում են Նեոլիտից (նորաքարե դար) մինչև 12-րդ դարը
քրիստոնյությունից առաջ ընկած ժամանակամիջոցին: Այդ
տվյալների համաձայն յենթադրվում ե, վոր 2-րդ հա-
զարամյակում ք. ա. գոյություն են ունեցել մեծ պետու-
թյուններ (համեմատական չափով) թագավորների գլխավո-
րությամբ: Գեղված պալատների և գմբեթաձև դամբարանների
հսկայականությունը ցույց են տալիս, վոր թագավորները

Արտաքիսա կրտսելով առաջ տեսն, Տիբէ նախածն
The Acropolis (after Thiersch).

Ակրոպոլ (ու Տիբէ).





իրենց ձեռքի տակ ունեցել են ստրուկների մեծ բազմություններ և կախման դաժան վիճակում պահել ազգաբնակության ցածր խավերը։ Հակայական հարստություն և կենտրոնացած յեղել թագավորների և իշխանների ձեռքին։ Միքանական պեղումների ժամանակ հայունաբերութած մի դամբարանում դառն են 800-ից ավելի վոսկե իրեր՝ տիրոջ հետ թաղված։

Պալատների պեղումները ցույց են տալիս նաև արտաշեյալ փոքրամասնության—արիստօկրատիայի գոյությունը։ Յերերի խորքում տիրում եր հոգագործությունը, ծովեղբյաժայրերում առաջանում առևտուրը։ Ունեցել են զիր և համեմատարար հարուստ նյութական կուլտուրա։

Հունական ցեղերը հանդես են յեկել 1200 տարի ք. ա.։ Նրանց կուրտուրական զարդացման նախնական շրջանը անկասկած յեղել ե վերևը հիշատակված Եգիյան կուլտուրայի աղղեցությունը։ Հունական ամենահին ցեղերից մնկը, որինակ, ախայցիք կամ աքայեցիք, համաձայն հարեթական թեորիայի, ըստ երևույթին, ունեցել էն հարեթական ծագում։ ապացույց ցեղերի պնունը achaloi = a-hay = հայ կամ յոնիան անունը լաղերի և չաների մոտ (ակաղեմիկոս ն. Յա. Մարը), Յեղերի խոշոր տեղաշարժերի հետևանքով հյուսիսարևմտյան բալկաններից վտարված թրակիական ցեղերը, վորոնց թվում նաև հայերի նախահայրերը, խուժում են արեւելք, խորտակում աքայեցիների տիրապետությունը։ Պետապննանում, ապա անցնում Փոքր Ասիա և այստեղ կործանում հեթեթների պետությունը, զուցե դրանց թվում նաև Տրոյայի «Երդ քաղաքը» (12 դար ք. ա.)։

Պատմական այդ գարաշրջանում տարածված եր յերկաթի գործածությունը բրոնզի փոխարեն, նոր կերամիկան, դիակիզամ՝ թաղման փոխարեն և այլն (անս «Եղիքական»)։

Հունական պատմական առաջնաժողովական հաջորդում և այսպիս կոչված «Հունական միջնադարը» պարմանական

տերմին), վոր ընդգրկում է 1150—750 թ. ք. ա.: Այս շրջանի ուսումնասիրության համար արդեն գոյություն ունեն վոչ միայն հնագիտական նյութեր, այլ և գրական այնպիսի դրկումննաներ, ինչպիսիք են Հոմերոսի պոեմները, Միքենական դարաշրջանի «մեծ» պետությունները — միապետությունները այս դարաշրջանում արդեն կործանվել են. նրանց փոխարեն առաջացել բազմաթիվ անկախ քաղաք՝ պետություններ արիստոկրատիայի տիրապետության տակ:

«Հունական միջնադարի» յերկրորդ կեսը իր գեղարվեստական անդրադարձումը գտնել է հոմերական վիպերգության մեջ: Այստեղ զվաճագոր սոցիալական ույժը հողային արիստոկրատիան և իր առնմային կազմամկերպությամբ: Գյուղական ազգաբնակության մեծ մասը կամ նորտային կախման վիճակում և կամ հողազուրկ և իրավագուրկ մշակ: Գյուղացիության աղաստ մասի տեսակարգար կշիռը աննշան, Արտօնյալ դասակարգը կենտրոնացած և քաղաքներում: Առևտրական՝ արգյունաբերական ճյուղը դերևա թույլ զարդացած: արտաքին առևտուրը գտնվում է փյունիկեցիների ձևոքին, Այս դարաշրջանում (9—8 դար) ուժեղանում է հունական կոլոնիզացիան գեղիքի արևելք, արևմուտք և հյուս - արևելք: Արևելքի անտեսական և կուլտուրական ազգեցությունը զառնում և ակնհայտնի: Փյունիկեցիներից փոխ են առնում այրուքներ, Կոլոնիզացիայի զվաճագոր պատճառը առևտուրն և հողի անքնը բարերիությունը: Գաղթողները դուրս ելին գալիս զվաճագորապես Խալկիդայից, Կորնթոսից և Միւլեթից: Կոլոնիզացիան տարածված եր Եգիպտան ծովի ամազանում, Փոքր Ասիայի ավաղուտ վայրերում, Սև ծովի ափերին և խորական ծովափնյա առևտրական կետերում:

Յեթե նայենք Հունաստանի քարտեզին, կտեսնենք, վոր յերկիրը շրջապատված և յերեք կողմից բազմաթիվ ծովախորշերով ու ծոցերով: Թերակղղուն մոտիկ ձգված են բազմաթիվ փոքրիկ կղզիներ, վորոնք բուն յերկրի և

ասիրական ափերի միջն մի տեսակ կամուրջի զեր են կառտարում։ Կղղիները այնքան մոտ են միմյանց, վոր մեկի վրայից մյուսի պարզ ուրբագիծն և յերնում։ Մալեի հըրսվանդանից յերեռում են կրետական լեռների կատարները, Կրետեից՝ Հռոդոսյան լեռները, Հռոդոսից՝ Փոքր Ասիրն։ Կըդղիների մերձավորությունը միմյանց՝ գեղեցիկ կերպով պատկերացված և Նսքիլսսի «Ազամիննոն» դրվածքում, թե ինչպես և Հռուստատանը տեղնկություն ստանում Տրովադայի կործանման մասին, դեպքի մինուույն որը։ Այդ մասին իմաց տվողները հրային ազգանշաններն են լինում։ «Ասաջ Խղոսի վրա վառեցին մի բոցավառ խարույլի։ Հրային ազգանշաններ յերեացին մեկը մյուսի յետեից՝ համնելով մինչև այստեղ։ Խղոսի վրա վառված առաջին խարույլին հաջորդեց յերկըրորդը՝ Լիմնոս կղզու Ներմես ժայռի զլիխին։ Յերբորդ մեն խարույլը վառեցին Զևսին նովիրված աթենական լեռան դադարին։ Հոկայական բոցը կարծես սլանում, անցնում եր ծովի վրայով և ուրախություն բերող կրակը մոխաղրիում եր մի տեղից մյուսը, զորպես մի վոսկեփայլ ջան, զորպես մի տրեղպակ։

Բազմաթիվ կղղիների ողակները զդալիորեն դյուրացնում եյին հազարդակցությունը հարևան յերկրների հետ, և այդ բնական պայմաններով պիտի բացատրել հույների առևտունական հարաբերությունների արտգ զարգացումը արևելյան ժողովուրդների հետ, և դրա հետևանքով վոխաղարձ շիռումն ու մտավոր հորիղոնի լայնացումը, կուլտուրական աստղագիտությունը։

Հռուստատանի հողը իր ամբողջ տարածության վրա բերը չեր, Եգիպտան ծովի հյուսիսային կողմը կլիման խիստ եր ու անհամըռույլը։ Ռումելիոն զուրկ եր հարավային պտուղներից։ Աշխատավլոր զանգվածները այստեղ գոյության ծանր կույլ մղելու եյին դատապարտված։ Փար-

թամության ու անդորրության մեջ ապրող իշխաններն ու թագավորները միայն, նրանց յենթակա յերդիչներն ու մտածողները թե ժամանակ և թե պարտականություն ունեցին զբաղվելու արվեստի խնդիրներով և փիլիսոփայական մտարումներով,

Մեղմ ու բարեխառն եր կլիման հարավային Հունաստանում, այստեղ բնությունը հրաշալի, բուսականությունը փարթած ու մշտադալար, հողը համեմատարար բերրի, ծովը սքանչելի իր անհուն ապահովությամբ:

Դասական վաղբերգուներից Յեմրիպիդեսը իր հայրենակիցներից շատերի հետ միասին հաղատացած և յեղին, վոր իրենց գեղեցիկ աշխարհը իր հողով ու յերկնքով՝ յեղել և խմառաւության առաջին աղբյուրը: Մոտավորապես նույն միտքն եր լրացնում թենը ասելով. «Այսպիսի կլիմայի մեջ առաջ յեկած ժողովուրդը զարդանում է ուրիշներից ավելի արագ և ներդաշնակ, վոչ չափազանց աաքն և նրան թուլացնում ու ճնշում և զոչ ել ցուրտը սառեցնում ու վնասացնում», Յեթե ստեղծագործության թափը պայմանավորված լիներ լրացնուապես կլիմայով, այն ժամանակ հազիվ թե յերկրագնդի բարեխառն գոտիներից այս և այն կողմը արվեստը զարդացման պայմաններ ունենար: Մինչդեռ մենք գիտենք, վոր զեղարվեստական ստեղծագործության թափը հատուկ և զեղածիծաղ հարավին, և դաժան հյուսիսին, ապրըներությունը միայն նրա ընույթի մեջ և հյուսիսային որդիները իր վրա կկրի յերկրի և ժողովրդի հատուկ դրոշմը, վորոշ կորուիտը:

Հունական արվեստի և գրականության զարգացման պատճառները չպետք ե վորոնել նրա գեղեցիկ բնավայրի մեջ: Յեթե այդպիս լիներ, այն ժամանակ Հունաստանը յերբեք իր անկման շրջանը չեր ունենա, վորովհետև «բարեխառն» կլիման չեր փոխվել: կամ նման բնավայրի ըոլոր ժողովուրդները ոժուած կլիմային ստեղծագործական մեծ-

թափող և «կղարդանային ավելի արագ», —քան ուրիշները՝ Դիլավար պատճառները ուրեմն այլ են. —հասարակական հարաբերությունները: Հունական հասարակական հարաբերություններն ենին, վոր ծնեցին հույն դասական գրականությունը և վոչ նրա գեղածիծաղ բնությունը: Հունաստանը՝ իր առևտրական յեռուն հարաբերություններով արևելյան հարևան ժաղավորությունների հետ, իր շփումներով ու ընդհանրություններով՝ որևէմտյան «բարբարոս» ազգերի հետ, դարձել եր հին ազգերի մեջ ամենաքաղաքակիրթը, ամենակուլտուրականը: Նրա աշխարհազրական դիրքը նպաստում եր նրա յեռուն շարժմանը: Հույների աշխարհագրական դիրքը թերգրեց նրանց պարապել ծովագնացությամբ. տնտեսական կյանքի ներքին դրդումները, հողի պակասությունը և յեղածի մի մասի անբերլի լինելը յերկրի հյուսիսային մասում, ստիպեցին շարունակել իրենց տեղաշարժը հյուսիսային Հունաստանից գեպի Փոքր Ասիա, գեպի Խիբան, գեպի Տրոյադա, Յեզ յերկրի «քաջները», այսինքն տիրող դասակարգը, հողային ռազմական արիստոկրատիան, շարունակ արշավում ելին ավելի թույլ հարևանների վրա. ավելերում ելին նրանց քաղաքները, հափշտակում նրանց հարստությունը Հույները յերկար ժամանակ զրադվեցին ծովագնացներ, վորը նախորդել և առևտրական հարաբերություններին: Փոքր ասիական ափերի բազմաթիվ կղզիների վրա զաղութներ հրանեցին և իրանք դարձան վարպետ ծովագնացներ, Շվանձականներ, ծովագնեններ, ճանապարհորդներ, միջնորդներ, ավանտյուրիստներ, ահա այսպես են յեղել հունական տիրողները իրենց տիրապետության յերկրորդ շրջանում, Գործ գնելով ճարպիկություն և բռնություն՝ նրանք կարողացել են շահագործել արևելյան խոշոր միապետություններին և արևմտյան բարբարոսներին, արտահաններով այնտեղից համարյա ձրի ձեռք բերած վոսկին, արծաթը, փղոսկը, սարսուկներին, վայտեղնը, բազմաթիվ թանկադին ապրանք-

թամության ու անդորրության մեջ ասլրող իշխաններն ու թագավորները միտքն, նրանց յենթակա յերգիչներն ու մտածողները թե ժամանակ և թե պարտականությունն ունեցին զբաղվելու արվեստի ինդիրներով և փիլիսոփայական մտորումներով:

Մեզմ ու բարեխառն եր կլիման հարավային Հունաստանում, այստեղ բնությունը հրաշալի, բուսականությունը փարթամ ու մշտագալար, հսղը համեմատարար բերրի, ծովը սքանչելի իր անհուն առածությամբ:

Դաստիան վաղբերգուներից Յեվրիպիդեսը իր հայրենակիցներից շատերի հետ միասին հավատացած և յեղիկ, վոր իրենց գեղեցիկ աշխարհը իր հողով ու յերկնօրի՝ յեղել և իմաստության տուաջին աղբյուրը: Մոտավորապես նույն միտքն և լրացնում Թենը ասելով. «Այսպիսի կլիմայի մեջ առաջ յեկած ժողովուրդը զարգանում և ուրիշներից ավելի արագ և ներդաշնակ. վոչ չափազանց տաքն և նրան թուլացնում ու ճնշում և վոչ ել ցուրաց սառեցնում ու փետացնում», Յեթե ստեղծագործության թափը պայմանավորված լիներ բացառապես կլիմայով, այն ժամանակ հազիվ թե յերկրագնդի բարեխառն զոտիներից այս և այն կողմը արգեստը զարդացման պայմաններ ունենար: Մինչդեռ մենք դիտենք, վոր գեղարվեստական ստեղծագործության թափը հատուկ և գեղածիծաղ հարավին, և դաժան հյուսիսին, ուարենքությունը միայն նրա բնույթի մեջ և. հյուսիսային արվեստը իր վրա կկըի յերկրի և ժողովրդի հատուկ դրոշմը, վորոշ կոլուրիալ:

Հունական արվեստի և գրականության զարգացման պատճառները չպետք և վորոնել նրա գեղեցիկ բնավայրի մեջ: Յեթե այդպիս լիներ, այն ժամանակ Հունաստանը յերբեք իր անկման շրջանը չեր ունենա, վորովիետն «բարեխառն» կլիման» չեր փոխվել. կամ նման բնավայրի բոլոր ժողովուրդները ոժումած կլինեյին ստեղծագործական մեծ

թափող և «կղարդանային ավելի արագ», —քան ուրիշները, Դյիսավոր պատճառները ուրեմն այլ են. —հասարակական հարաբերությունները: Հունական հասարակական հարաբերություններն եյին, զոր ծնեցին հույն դասական գրականությունը և վոչ նրա գեղածիծաղ ընությունը: Հունաստանը՝ իր տաճարական յեռուն հարաբերություններով արևելյան հարևան ժաղովուրդների հետ, իր շփումներով ու ընդհարումներով արևմայան «բարբարոս» ազգերի հետ, դարձել եր հին ազգերի մեջ ամենաքաղաքակիրթը, ամենակուլտուրականը: Նրա աշխարհագրական դիրքը նպաստում եր նրա յեռուն շարժմանը: Հույների աշխարհապրական դիրքը թերդրեց նրանց ոգարապիլ ծովագնացությամբ. տնտեսական կյանքի ներքին զրդումները, հողի պակասությունը և յեղածի մի մասի անքերը լինելը յերկրի հյուսատյին մասում, ստիպեցին շարսնակել իրենց տեղաշարժը հյուսախային Հունաստանից դեպի Փոքր Ասիա, դեպի Խիոն, դեպի Տրոյադա, Յեզ յերկրի «քաջերը», այսինքն տիրող դասակարգը, հողային ռազմական արխտոկրատիան, շարունակ արշավում եյին ավելի թույլ հարևանների վրա. ավելուած եյին նրանց քաղաքները, հափշտակում նրանց հարստությունը: Հույները յերկար ժամանակ զբաղվեցին ծովագնացությամբ, զորը նախորդել և առևտրական հարաբերություններին: Փոքր ասիական ավելի բազմաթիվ կղզիների վրա գալութներ հիմնեցին և իրանք դարձան վարողետ ծովագնացներ, «Նամառականներ, ծովահեններ, ճանապարհորդներ, միջնորդներ, ավանտյուրիստներ, ահա այսպէս են յեղել հունական ակրողները իրենց տիրապետության յերկրորդ շրջանում, Գործ դնելով ճարպիկություն և բռնություն՝ նրանք կարողացել են շահագործել արևելյան խոշոր միավետառություններին և արևմտյան բարբարոսներին, արտահանելով այստեղից համարյա ձրի ձեռք բերած վոսկին, արծաթը, փղոսկրը, ստրուկներին, փայտեղենը, բաղմաթիվ թանկաղին ապրանք-

ներ և ապա գյուտերն ու գաղափարները, փոխ առնելով այդ ամենը Յեզիրակառսից, Փյունիկեյից, Թաղթեայից, Պարսկաստանից և Ստրուրիայից»^շ):

Ցուրացնելով քաղաքակրթված հարնանների դորձնաւկան զիտելիքները, նրանք գտան և հիմնավորեցին վերջիններիս տեսությունը, Փյունիկեյի պարզ թվարանությունը Հունաստանում վերածվեց բարդ մատենատիկայի, տալով Պյութագորոսի և Արքիմեդեսի նման մատենատիկաններ, Յերկրաչափությունն ունեցավ Յեվկլիդեսի պիս նշանալոր մասնագետ, վորի կաղմած ձեռնարկը մինչև այժմ ել ծառայում է իրեն հիմք յերկրաչափության մեր բոլոր ձեռնարկների, Ասաղագիտությունը՝ ավելց ներկայացուցիչներ սկսած Թալեսից և Պյութագորոսից մինչև Հիոնորկուսն ու Պտղոմեոսը, Բնադիտությունը՝ Հիոնորկրատից մինչև Արիստոտել և Աղեքսանդրիայի անատոմները: Պատմությունը՝ Հերսոգոտից մինչև Ֆուլիդիտեսը և Պոլիբիոսը, արամարանությունը, քաղաքականությունը, զեղարգեստը՝ Պլատոնից, Թանոսֆոնթից, Արիստոտելից մինչև ստորիկներն ու նոռալատոնիկները: Յեվ այս ամենից հնատ չեր կարող մտքերի ամփոփման վորձն ել առաջ չզալ. ուսափի փիլիսոփայությունը Հունաստանում ունեցավ իր դասական ներկայացուցիչները հանձին Սոկրատեսի, Պլատոնի, Արիստոտելի և ուրիշների^{թթ}):

Հասարակական այս միջավայրում զարդացման բարձր տատիճանին հասավ հունական արվեստն ու զբականությունը: Բնական միջավայրն ել նորաստեց յուրահատուկ յերիներանգություն հաղորդելու զեղարգեստական ստեղծագործություններին: Հասարակական-քաղաքական կյանքի բոլոր կողմերը լրիվ ու ամփոփի արտահայտություն կտան Հունաստանում, ուսի ըստ ամենայնի փոքր մասշատրով:

^շ) Իշուլիս Թեհ. «Արվեստի մասին»:

^{թթ}) Իպոլիտ Թեհ. «Արվեստի մասին»:

Հունաստանը բաժանված եր բազմաթիվ մանր քաղաքական միությունների. դրանք ինքնուրույն քաղաք - պետություններ եյին, վորոնց քաղաքական կյանքում, հողային արխատոկրատիայի անկումից հետո, հասարակապետական քաղաքացի հույնը կատարում եր իր ներգործական դերը. Անշուշտ վերջին հանդամանքին նպաստում եր և այն, վոր նրա հայրենիքի սահմանները նեղ եյին, և հույն քաղաքացին հնար ուներ մի պարզ հայացքով պատկերացնելու նրա ամբողջությունը. Ուստի և հայրենիքի դադափարը նրա համար վերացական ու անըմբռնելի չեր.

Նույն իրական ու գործնական բնույթ են ունեցել կուլտը, գիտությունն ու փիլիսոփայությունը, Հին հույնի կրոնական աշխարհայացքը հայտնի չափով ազատ և յեղել քրիստոնեյական կրոնի աղոստ ու վերացական ըմբռնողությունից:

Հունական դիցարանությունը, ինչպես ասել ե Մարքսը, հունական արվեստի դինարանն և և հողը, Հին հունական բոլոր եպիկ և դրամատիկ գրվածքների հիմքում դրված և միջը, առասպելը: Հունական առասպելները պատմվածքներ ու զրույցներ են աստվածների և հերոսների մասին, վորոնք կազմում են պատմական զարգացման առաջին աստիճանում գտնվող հույն ցեղերի հավատալիքների բաղադրիչ տարրը. Առասպելի ծագման արմատները կորչում են մարդկային ցեղի հեռավոր տնօցյալի մշուշում: Բնության ու յժերը անձնավորված են աստվածների մեջ, վորոնք դեկավարում են այդ ույժերը: Դրանք լեռների, ոդի - մթնոլորտի, տարերքի և յերկնքի ու ծովի աստվածներն են, վորոնք, ինչպես տեսնում ենք, ստեղծված են անտեսական պահանջների կապակցությամբ. դրանք անասնապահության, յերկրագործության և ծովագնացության հետ կապված յերեվույթներ են, այդ յերեսույթների շնչավորված շղեկալարները: Նախնական մարդը շնչավորել և իր շուրջը յեղած վողը

իրականությունը, տարրերություն չի գրել բնության և հասարակական կյանքի յերևույթների մեջ:

Առասպելները ասավածների ծագման մասին -դա միևնույն ժամանակ տիեզերքի ստեղծագործության նախնական պատկերացումն է, վորոնց մեջ մուտք գործելով՝ թագավորներն ու քրմապետները՝ կարողացել են ոգտագործել առասպելները իրք ծննդաբերություն թե աստվածների և թե նրանցից «սերված» թագավորների ու իշխանների:

Հունական առասպելների աստվածները, վորոնց մըշտական բնակատեղին Հունաստանի ամենաբարձր լեռան կատարն եւ՝ Վոլիմպոսը (Թեսալիայում), վոչ այլ վոք են, բայց յեթե մարդկային, իսկ առաջին հերթին ցեղապետների կամ միապետների պատկերի ֆանտաստիկ անդրադարձումը: Վոլիմպոսականների կաղմակերպումը, ըստ յերևույթին, տեղի յեւ ունեցել «հունական միջնադարում»: Տեղին եւ շեշտել, վոր վոչ մի բան այնքան փայլուն չի ապացուցում այն միտքը, թե մարդն և իր աստծուն ստեղծողը և վոչ ընդհակառակը, վորքան հոմերական Վոլիմպոսը՝ Վոլիմպոսի բնիկները «հավիտենականությունից» չեն դալիս, ինչպես քրիստոնեյական աստվածը իր շքախմբով, վորի ճարպիկ սպասագորները կարողացել են այնպես անել, վոր համատացյալ հատերի համար նրա վոչ սկիբորը լինի հայտնի և վոչ վախճանը, վորպես բացարձակ, անվիճելի ճշմարտություն:

Հունական աստվածները, հոմերական հույնի հասկացողությամբ, առաջ են յեկել ժամանակի և տարածության մեջ և հետեւաբար նրանց տիրապետությունը հավիտենական չեւ: Հին հույների աչքում աշխարհիկ կյանքը ստորացման չեր դատապարտված և յերկնային թագավորությունը հանդասայան յերանավետ կայտն չեր հայտարարված, ինչպես քրիստոնեյականը: Ընդհակառակը, աշխարհայինը պաշ-



Աթենա Աֆինք տիտանների հետ (Արմենակ տիտանների դիմում)

Athena's struggle with the Titans.

Բօրբծ Աֆինք ստոպառակու.



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆ

տամունքի առարկայ յեր, իսկ յերկնայինը՝ մի տարտարոս, ուր վոչ մի հույն չեր կարող յերջանիկ համարել իրեն:

Հոմերական շրջանի հույնի վերաբերմունքը դեպի ուսանողերձյալ կյանքը շատ պատկերավոր արտահայտություն և գաել Հոմերոսի «Վոդիսական»ի մնջ, Յերը Վոդիսացը իր յերկար ճանապարհորդության միջոցին զեպի հայրենիք՝ պարտավորված և լինում իշխան Հաղեսի ստորերկրյա թագավորությունը, ուր տեղավորված եյին մեռածների ստվերները, և խոսում եւ Աքիլեսի ստվերի հետ, յերանի տալով նրան ստվերների վրա թագավորելուն համար, Աքիլեսը մի առանձին տենչանքով հիշում է իրական կյանքը և պատասխանում:

Թող, մի գովիր մահը այդքան, ով Վոդիսական քաջախոն:

Լավ ե, վոր յես հացի կարոտ՝ ազգատ մարդու սինլըքը
Վարձկան լինեմ, քան թե մեամ մեռեների թագավոր:

«Վոդիսական», Յերդ տասնմեկելորդ:

Աստվածների ծագման մասին յեղած հունական առասպեկտները շատ հին են և խօսում են հունական կյանքի նախապատմական շրջանից: Հունական բանաստեղծներից հայտընի, Հեսիոդոսը զետեղել և այդ առասպեկտները իր «Թեսօնանիա» պոեմում, ուր խոսում է տիեզերքի, և աստվածների ծագման մասին, «Թեսօնիա»ի առաջին մասը Հեսիոդոսը նվիրում է աշխարհի ստեղծագործության (կոսմոգոնիա) պրոցեսին, ի սկզբանե յեղել և Քառորդ, ապագա կյանքի խավար աղբյուրը, մի անկերպարան դրություն, ուր թագնված եյին տիեզերքի հետագա կազմավորման ու դարգացման սաղմերը, Քառուից են դուրս յեկել Գեան՝ յերկիրը, Տարտարոսը՝ ստորերկրյա անապատ-խորխորատը և սիրո միացնող ույժը՝ Երսուը: Նույն նախնական Քառուից են առաջացել յերկու ոյլ՝ «Եյակիներ», վորոնցից մեկը Երերոսն ե՝ նախնական խավարը և գիշերը, Սրանց միացնումից առաջացել են Ցելեսին

ու ծերեկը։ Գեան, բոլոր «եյակների» ծնող մայրը, ծնել և յերկինքը, իւռները և աինդերական ծովը՝ Պոնտոսը։ Յերկինքը բարձրացել է գեանի վրայից և նրա հետ բարձրացել են նախնական լեռները, իսկ Պոնտոսը խորացել և իր խորություններով տեղ - տեղ հասել Տարտարոսի սահմաններին։

«Թեոպոնիայի շարունակությունը աստվածների ծագման պատմությունն եւ, զոր անմիջական կառլ ունի տիեզերքի ստեղծագործության հետ, Տիեզերքը պատրաստ երդա մի անորդանական աշխարհ եր, Կյանքի սկիզբը աստվածները դրին, զորոնք առաջ բերելով ամրող սերունդներ, մարդկային կյանքը Վոլխմպոսի գագաթից ատրածեցին ամրող աշխարհի վրա։ Գեանից ծնվել և Ուրանը (Յերկինքը). և այս յերկուսի զուգակցությունից առաջ են յեկել տիտանների սերունդներ. Թրոնսոսից (ժամանակը) ծնվել և Դիմետրը, Հերան, Պոսեյդոնը, Հաղեսն ու Զեսը, Ուրանը մի տեսակ յերկյուղով եր նայում իր բազմաթիվ զավակների վրա ու ծնվելուց անմիջապես հետո, նրանց տանում պահում եր գետնի խորքերում։ Գեան անքում եր նրանց ծանրության տակ, ուստի և համոզում և Ուրանի վորդիներից մեկին՝ Թրոնսոսին սպանել հորը. միակ միջոցը անողոք դնապոտից աղատվելու համար, Թրոնսոսը սպանում և Ուրանին և ինքը գրավում նրա տեղը, Թրոնսոսը սակայն հավիտենական չեր, ինչպես և նրա նախահայր աստվածները. սրան սպանում և Զեսը, իր վորդին,

Առաջին աստվածները իրենց ծագութեան յերկնքից և յնըրկրից. զրանք տիտանների ավագ սերունդն եյին, զորոնք իրենց հերքին առաջ բերին կրտսեր աստվածների սերունդներու Ամագ և կրտսեր սերունդների միջև աեղի յև ունեցել դաժան պայքար տիեզերքի տիրապետության համար։ Կոփուլը յեղել և կատաղի, Վոլխմպոսի աստվածները մի կողմից, — պատմում և Հեսիոդոսի առասպելը, —

աստվածային հղուր տիտանները մյուս՝ խտացնելով մարտնչողների շարքերը, վայրագությամբ հարձակվեցին իրարդեմ՝ փոխադարձ վոչնչացման համար, կատաղի պայքարը շարժեց ամբողջ տիեզերքը. «Սոսկալի մռնչոց բարձրացրեց անսահման Պանտոսը, յերկիրը դողանջում եր, ցնցված հառաջում եր անհուն յերկինքը, անմահների ույժի հզոր գրոհից մինչև հիմքը յերերաց լայնարձակ Վոլիմպոսը»։ Ցընցման թափը, վասների ծանր դոփյունը, աներեակայելի իրարանցումը, զորեղ հարվածները հասնում եյին մինչև մռայլ Տարտարոսի խորքերը։ Այդպես նրանք հառաջանք բերող հարվածներ եյին տեղում միմյանց վրա, կովի կատաղի միջոցին Զեսը չի կարսղանում այլև զսպել իր ույժերը, լըցվում և սոսկալի զայրույթով, միանգամից Վոլիմպոսից և յերկնքից շանթեր արձակում, հուր ու բոց սփսում իր շուրջը, Բոցերի մեջ են լինում հսկայական անտառները. յերկիրը ամբողջովին յնուում ե, յնուում են նրա հետ և Ովկիանոսն ու անդնդախոր Պոնասոսը, Վորոտավլից նետերի և շանթերի շլացուցիչ փայլից կուրանում եյին ուժեղների աշխերը, Միաժամանակ բարձրանում եյին փոթորկոտ հողմեր, վոռնում, դողանջում, Վորոտն ու փայլակը, շիկացած նետերը, մեծն Զեսի խորտակող հարվածները հեծեծանք ու աղաղակ եյին առաջ բերում հակառակորդների բանակում, Վերջիւնը Զես հաղթանակում և և թշնամի տիտան - աստվածներին, բանտարկում հավիտենական խավարի մեջ, ուր միմիայն բորբոսն ու նեխումն և թագավորում...

Այսպես և տեղի ունենում աստվածների պայքարը, վոր վերջանում և Զեսի և իր սերնդի կատարյալ հաղթանակով։

Վոլիմպոսում կատարված «պալատական» հեղաշրջումից հետո, մռւտք են գործում նոր կարգեր. Զեսը դառնում է աստվածների պետը, Պոսեյդոնը կառավարում է ծովը, իսկ Հագեսը թագավորում է մեռածների ստվերների վրա՝ Տարտա-

բոսում: Զեսի կինը՝ իր քույրն և, Հերան, իսկ նրանց դավակներն են Մուսաները, Աթենասը, Պարսեթոնը, Ապոլոնը, Հերմինը, կազ Հեփեստոսը և այլն:

Ապոլոնը՝ Զեսի լրաբերը, դառնում և առանձին պաշտամունքի առարկա, վորի պատվին Դելֆիստոմ կառուցում են մի հոյակապ տաճար:

Զեսին հին հունական ցեղերը բերել եյին հյուսիսային Բալկաններից, իրենց նախկին բնակատեղից: Թանի վոր հույն ցեղերի տեղաշարժը նոր տերրիտորիա գրավելու համար տեսական պայքար ունեցավ բնիկների հետ և հազվական դուրս յեկավ, ապա նրանց աստվածներն ել պետք և պայքարի մեջ մտնելին բնիկների աստվածների հետ և հաղթելին: Զեսը հաղթեց և տիրացավ Վոլխմասին (ամենաբարձր լեռը Թեսալիայում) ու նոր կարգեր հաստատեց իր ոգնականներով հունական «ափեղերքը» կառավարելու համար:

«Հունական միջնադարը» (տերմինը գործածվում է, ինչպես ասել ենք, պայմանական իմաստով՝ հոմնբական շրջանի բնորոշման համար) այն դարաշրջանն և հունական սլատմության մեջ, յերբ «մեծ» միապետությունների տնկումից հետո ստեղծվել եր Փեոդալական-հողատիրական արիստոկրատիա:

Հոմնբական աստվածները ճշտորեն անդրադարձնում են հողային արխտոկրատիայի խղեռողդիան, և իրենց կազմակերպությամբ հիշեցնում են հունական Փեոդալիզմը:

Ցեղ այդ կարգերին համապատասխան հունական աստվածները ունեյին իրենց տերրիտորիան, նրանց իրավունքը տարածվում եր միայն սեփական հողամասի մըքա (այս թերը

²⁾ Ֆը. Ենցելու. «Կլասիկ խոհալիումից դեպի դիալեկտիկական մատեքիալիզմ»:

ողարտվում եր տվյալ տերը իտորիայի իշխանությունը, առաջ պարտված եյին նաև նրա աստվածները, վորոնք փոխադրվնելով հակառակորդ յերկրի՝ այսինքն հաղթողի տաճարը, վերջինիս աստվածների կողքին ստանում եյին ստորադաս նշանակություն:

Վոլխմազոսի աստվածները ղերծ չեյին մարդկային հատկություններից ու թուլություններից. Նրանք ապրում եյին, զգում, տառապում, վերապրումներ ունենում այնպես, ինչպես սովորական մարդիկ; Նրանք ունեյին ծնողներ, տոհմական ճյուղավորություններ, ունեյին իրենց պատմությունը, իրենց ապարանքները, ուր հաճախ մանր ու մեծ դավեր եյին լարվում աստվածների ու աստվածուհիների, միջնե, Առասպեկտների պատմածով, Վոլխմազոսի աստվածային ընակիչները անտարբեր չեյին դեպի մարդկային կյանքն ու յնքու յի՞ները. Պատմական մեծամեծ անցքերի վրա նրանք չեյին կարողանում հանգիստ նայել. հաճախ նրանք բաժանվում եյին խմբակցությունների և միջամտում պայքարող խմբերի կոխմաներին, Վոլխմազոսի բնիկները զբաղվել են քաղաքականությամբ, իրենց քաղաքական վարչագիծը համաձայնեցնելով ռազմական ու տիրատենչ արիստոկրատիայի քայլերին, յերբ զրության տերերը վերջիններս են յեղն: Բայց զորովհետեւ աստվածները հավիտենական չեն, ուստի յերբ արիստոկրատիային հաջորդում և դեմոկրատիայի տիրապետությունը, փոխվում ենաև աստվածների վարչագիծը:

Նախահայրերի կուլտը հոմներական շրջանում շատ ուժեղ եր. Ռինակ՝ Պատրոկլեսի թաղումը հույնների մոտ և Հեկտորինը՝ արոյացիների: Այդ կուլտի, պաշտամունքի շնորհիվ ուժնդ եր «արյան վրեժի» դադափարը: Սպանվողի արյունը հանդիսաւ չեր տալիս վաչ միայն նրա մերձակորներին, այլ և այն քաղաքին և անգամ պետությանը (Եգիպտի առաստելը և Սոֆոկլի նույնանուն վողբերդությունը), վորէ քաղաքացին եր սպանվողը, Նրա ստվերը անհանդիսաւ շր-

ջում եր, սինչև վրեժը չլուծվել էր արյունով։ Դեղարվեստական պատկերներով արտացոլել եւ այդ յերեսույթը Հոմերոսը իր «Ելիսական»ում (Պատրոկլեսի սպանությունը Հեկտորի ձեռքով և Աքիլլեսի վրեժը), Արյան վրեժ լուծելու նախանձախնդիր եր ինքը Վոլփիմպոսը Հոմերի դարաշրջանում։ Մինչդեռ հետագայում, յերբ փոխվեցին Հունաստանի հասարակական կարգերը (հաղթեց գնմոկրատիան), աստվածները սպանության համար այնու արյան վրեժ ոչնչին պահանջում, վորովնեան գեմոկրատական որենքը թույլ եր տալիս վոճրագործի դատը հանձնել դատարանին (Որեստի առասպելը և Եսքիլոսի «Ռեսպեյտան»)։

Զեար ահարկու աստված եր, բայց հազիտնական չեր, Պայքարով ձեռք բերած իշխանությունը պայքարով ել պիտի տար ուրիշին։ Ծեղ հասկանալի պատճառով, վորովնեան Զեսի սրբագործած կարգերն ու հասկացողությունները հանրապետական Հունաստանի շահերին այլևս ոգտակար չեցին, նոր կարդերի պահանջն ու համապատասխան հասկացողությունները նրան պիտի տապալեցին, հայտարարելով «մարդկության թշնամի»։ Ուստի և նրա զեմ բողոքով ու ցասումով հանդես և գալիս մարդկության բարեկամ Պրոմեթեուսը, վոր նախապես գուշակել եր ամենակարող Զեսի վախճանը (Եսքիլոսի տրիլոգիան՝ Պրոմեթեուսի շուրջը)։

Հասարակ մահանացուներից հունական աստվածները զանազանությում եյին միայն իրենց հակայական ույժով ու անմահությամբ։ Հին հույնը մարդկային շատ հատկանիշներով եր սժուկ իր աստվածների ցեղը. մի մայր բնությունից ենք ստանում մեր շունչը. ասել ե հունական բանաստեղծ Պինդարը իր ներբողներից մեկում, և այդ խոսքերով լիովին արտահայտն հին հույների կրոնական աշխարհայացքը, ըստ վորում «մարդիկ յեղել են մահանացու աստվածներ, իսկ աստվածները՝ անմահ մարդիկ»։

Չորրորդ դարի հույն մտածող Ծվճեմերոսը աստվածներին համարել ե յիշկրային թագավորներ՝ մահից հետո աստվածացրած:

Հունական դիցաբանությունը և նրա վրա խարսխված զեղարվեստական գրականությունը առաստ նյութ են տալիս պարզելու համար, թե ինչպես թագավորներն ու արիստոկրատ տոհմերը իրենց ծագումը աշխատում եյին անպայման կապել աստվածների կամ հաճախ ուղղակի Զեսի հետ Նրանցից շատերի մայրերը առասպելների մեջ ուղղակի սեռական հարաբերության մեջ են դրված Վոլխմապոսի այս կամ այն աստծու հետ, վորպեսդի գառնան «աստծու վորդի»։ Դա հարկավոր ե յեղել թագավորներին և արիստոկրատիային՝ ստորագաս խավերի, շահագործվող դանդվածների սանձը ձիգ ըսնելու համար:

Այդ միևնույն դրությունը պահպանվել է հունական դևոկրատական դարում, հունական առևտրական դասակարգի տիրապետության ժամանակ, վորի շահերը նույնպես պահանջում եյին պահպանել ստրուկների և աշխատավորների դասակարգային գիտակցության միագնումը,

Հակառակ դիցաբանական բացատրությունների՝ տիեզերքի, մարդկային կյանքի և սոցիալական հարաբերությունների մասին, հունական անթիք փիլիսոփայական միտոքը մեծապես փորձեր և արել խելացի, կոնկրետ դատողություններով բացատրելու ընության յերևույթներն ու հասարակական ձևերը, գտնելու նրանց առաջացման այն սկզբանական տարրերը, վոր լինի ընդհանուր բոլոր իրերի համար, վեց գար քրիստոնեյությունից առաջ հունական փիլիսոփայությունը արդեն զարգանում եր առանց աստվածների ոգնության, թեև պետական կրօնի դեմ փիլիսոփաները բացարձակ հանդես չեյին գալիք: Նման հանդինություննեցողները դատվում եյին, ինչպես դատվեց Սոկրատը,

վորովհետև նա «չեր հավատում այն աստվածներին, վորոնց հավատում եր պիտությունը»։ Աշխարհի նյութական նախահիմքը բացատրող փիլիսոփայական միտքը առաջ յեկավ ու զարդացավ հունական կուլտուրական կենարուներում, փոքրասիրական առաջավոր գաղթավայրերի քաղաքներում և Աթենքում։ Զարդացած առետուրը և քաղաքային արդյունաբերությունը այն ոլայմաններն ելին, վորոնք պահանջ ելին առաջացնում մի կողմից գործնական դիմավիճների և մյուս կողմից հաստրակական փոխադարձ հարաբերությունների համար վորոշ նորմաններ մշակելու։ Վերոհիշյալ կենարունները գարձոն հունական փիլիսոփայության և ուժատության որբանը։ Նրանց մտքի արտագրանքը հետապայտմ հսկայական դեր խաղաց մարդկային մաքի զարդացման պատմության մեջ, դարձավ բազմակողմանի ուսումնասիրության տարրերացման նպախայում։ Նա առավելագույն չափերով նպաստեց փիլիսոփայական ոլրորլեմների ճիշտ հարցադրմանը։ Նրա մշակած ուերմինուղղիան հսկայական դեր խաղաց լուրի դասակարգերի փիլիսոփայական սիստեմների մեջ։ Հունական մեծ փիլիսոփանների հարցադրումները մինչև այժմ ել խոչըն հետաքրքրություն են ներկայացնում, մանավանդ դիալիկտիկայի մշակման հետ կապված հարցերը։ Հունական փիլիսոփայական մտքի արգասիքներին, ասում են պերս, մենք ստիպված ենք դիմելու հաճախ, չնայելով վոր նրանց ծագման առաջին մոմենտները մեզանից հեռու յեն գրեթե յերկու հազար հինգ հարյուր տարով։

Հունական անթիք փիլիսոփայությունը, ըստ Անինի, ամփափված և հոնիսական դպրոցի, Հերակլիտի, Պյութագորի կողմանակիցների, սովետաների, Սոկրատի, Դիմոկրիտի, Պլոտինի, Արիստոտելի, առոյիկների, Եպիկուրի և նոր ոլլատոնիների մտքի արտադրանքի մեջ։ Տիրող դասակարգերը

այդ դարաշրջանում, մինչև հունական անկման շրջանը, շառագրպաված եյին զիտելիքների կուտակման և զարգացման խնդրում, Շնորհիվ գիտության զարգացման ցածր մակարդակի, վորը բնորոշվում է արտադրողական ույժերի և արտադրական հարաբերությունների զարգացման մակարդակով, զիտության դիֆերենցիային, նրա մասնագիտացումը տակավին դանվում է սաղմային դրության մեջ. Մարդիկ դեռ չեն հասել բնությունը անալիզի յենթարկելու գիտակցությանը, Բնությունը նրանց աշխատ հանդիսանում է իրքու առարկա խորհրդածությունների, Յեզ փիլիսոփայությունը հին Հունաստանում ունեցել է, ըստ Անիքինի, կմնկրեա զիտելիքների բնույթ:

Փիլիսոփայության այդ նախնական պարզ վիճակը, համապատասխան հասարակական տակավին ապարդ հարաբերություններին, թելադրել է հույն փիլիսոփաներին սուվորական, պարզ վրույցի բնույթ հազորդելու իրնոց գասախոսություններին, Յեզ դա, Թենի կարծիքով, տեղի յեր ունենում ծառաստանների հանգիստ ստվերներում, ուր փիլիսոփաների շուրջը հավաքվում եյին նրանց հետևող աշակերտները և հետաքրքրվող ունկնդիրները:

Դորձնականություն ու պարզություն մենք գտնում ենք նաև հունական արվեստի ու զրականության մեջ, Հունական թատրոնը տեղավորում եր իր մեջ յերեսունից մինչև հիսուն հազար հանդիսատես, Ըստ Թենի սրամիա արտահայտության, բնությունը իր վրա յեր վերցնում հունական թատրոնի գլխավոր ծախսերը. Ժայռոտ բլուրի լանջին, կեսաշրջանով հղկում եյին նստարանների տեղերը, ներքեւ՝ կենաբոնում կանգնեցնում բնմը, արձագանքի համար դնում խորաքանդակով զարդարված մի ահագին պատ, Թատրոնը լուսավորող յերկնքից կախված բնական ջանն եր՝ պայծառ տրեգակը, իսկ գեկորներն եյին՝ անդորր ու անխոռվ կամ

հուղվող ծովը՝ մի կողմից, լեռների խումբն ու բուսական հեռանկարը՝ մյուս կողմից:

Արգեստն ու զբականությունը թովչանք պատճառող իրենց նույներով, նույն պարզությամբ ու ներդաշնակությամբ են ոժոված: Այդ միջավայրումն են աստիճանաբար զարգացել զբական թե պարզ և թե բարդ ձևերը, ինչպես հողիքականն ու լիրիքականը, այնպես և դրամատիքականն ու արձակը, Յուրաքանչյուր ձև առաջ և յեկել պատմական անհրաժեշտությամբ, իբրև արտահայտություն հասարակական կյանքի վորոշ շրջանի հույղերի ու մտորումների: Յուրաքանչյուր ձև համապատասխան և իր ներքին բովանդակությանը, բայց վորուած յերկուսի սերտ շաղկատպն ու անբաժան հյուսվածքն և, վոր կաղմում և զեղարվեստական ստեղծագործության եյությունը, Զեի և բովանդակության այդորինակ հյուսվածքը հին հույները հասցըել եյին բարձր ներդաշնակության, վորով և նրանց զեղարվեստական զբականությունը հետազոտ սերունդների և յելլոպական ժողովուրդների համար դարձավ որինակելի, դարձավ դաստիան, կլասսիկ:

Բայց թնջ և անդրադարձել իր մնջ այդ զբականությունը Հույների պատմությունն ուսումնասիրելով, մենք կարող ենք իմանալ, թե ինչ շրջաններ են նրանք առլրել, վորպիսի եպոխաներ են հաջորդել միայնաց, վորպիսի խոշոր անցքեր ու հեղաշրջումներ են տեղի ունեցել նրանց հասարակական ու տնտեսական կյանքում: Սակայն շատ բան մեղանից հեռու և մեղ համար անհասկանալի կմնար, յեթե մենք չունենայինք անցած շրջանների առանձին մոռենաների կենցանի պատկերացումը իր ակտուալ թեմատիկայով: Գեղարվեստական զբականությունն և, վոր լրացնուած և այդ պակասը, նա յե, վոր հրապարակ և հանում տարբեր դարաշրջանների կենդանի մարդկանց, վորոնք դարերի խորքից խոսում են մեղ հետ, վորպես շնչավոր եյակներ, հանդես են

գալիս մեր առջև իրենց կենդանի գործերով, ողայքաբով, հակամաբառով յուններով, բազմապիսի խոհերով, բարդ վերապրութերով, տառապանքներով ու վշտով, ուրախ ու տիառը հոգեկան վիճակով, իրենց ձգտութերով և կյանքը համապատասխանորեն վերափոխելու փորձերով:

Հունաստանի պատմության հետ միասին նրա գրականությունն ել ապացույց և այն բանի, վոր հին հույնը, վորովն մարդկային տիպ, փոխվել և համաձայն պատմական շրջանների՝ ին իր արտաքին կենցաղով և թե հոգեկան աշխարհով, մտածելուկերպով, աշխարհաղղացողությամբ։ Հին հունական գրականությունն ու արվեստը ավելի ցայտուն ապացույցներ են տալիս, վոր այդ ժողովուրդը միապաղադդանդված չե յեղեւ ինչոքս բուրժուական հունագետները ճգնել են ապացույցներ Հակադիր դասակարգերը շահերի փոխադարձ հակամաբառությամբ միշտ ել պայքարի մեջ են յեղանձն միմյանց հետո Հոմերոսի «Իլիական»ից սկսած մինչև Արիատոֆանի կատակերգությունները, գեղարվեստական յերկերը անդրադարձրել են այդ հակամաբառությունը։ գառնակարգերի պայքարը տեղի յե ունեցել տիրապետողների ու մնշվագների միջև, շահագործողների և շահագործվողների, տերերի և ստրաւեների միջև։ Մինչև վեցերորդ և հինգերորդ դարերը ք. ա. հոդային-զինվորական արխառոկրատիան և ճնշել ճորտերին ու չարքաշ հոդապործներին, շահագործել ստրուկներին, իսկ հնատապայտում հանրապետական առևտրական դասակարգը՝ սեփականագույրէ խավերին, աշխատավոր դյուլացիությանը և մանավանդ ստրուկներին, Հին Հունաստանի սոցիալական ամենամեծ հակասությունն ու ախտներ ստրկական ինստիտուտը։

Յեւ յեմե անթիք աշխարհի հասարակության տնտեսական տիրող կարգերի հիմնաքարը սարկատիրություններ, ապա նա նոր արտադրողական ույժերի և արտադրա-

կան հարաբերությունների — առևտրական կապիտալի առաջացման հետևանքով, վորպիս արգասիք հասարակական հակասության, անխուսափելիորեն պիտի կործանումն ընթարելու սական» աշխարհին, մի աշխարհ, վորին դարերի ընթացքում սերնդեւ սերունդ սովորել են պատկերացնել իդեալական վառ դույներով և վորի խսկական պատկերը պարզել են միայն կոմունիզմի հիմնադիրները — Մարքսն ու Ենգելսը:

Բնդունված և առհասարակ հին հունական գրականության պատմությունը սկսել հոմերական շրջանից՝ «Էլիական» ովք և «Վողիսական» ովք։ Սակայն մի անխուսափելի հարց և կանգնում մեր առաջ։ «Էլիական» ու «Վողիսական» ընդարվեստական բարձր ստեղծագործություններ են և հունական կուլտուրական կյանքի մի ամբողջ դարաշրջանի վերաբերադրությունը, Կարող եք պատահել վոր արքային գեղարվեստական բարձրարժեք մի գործ հանգեսդար հանկարծակի, առանց նախնական դարպացման մի շրջանի ունենալու համ կարող եք պատահել, վոր կուլտուրական կյանքի մի ամբողջ դարաշրջան մինչև իր վերջալույսն ունեցած շիներ իր ձգումների, մտորումների ու հույզերի արտահայտիչները։

Պատախանը բացասական լինել չի կարող, Հունական գրականությունն ունեցել ե մինչհոմներյան շրջան, ուր արտահայտվել և հին հունական նախնական կուլտուրայի և ոլուստական դասակարգային հասարակության աշխարհայցքը, տենչերն ու խոհերը, այլև ֆանտաստիկ պատկերացումը հեռավոր անցյալի — ընության և հասարակական ձևավերի։

Աստվածների, կիսաստվածային աիտանների ու հերսաների շուրջը գոյություն ունեցող հունական առասպելների մասին մենք վերը խոսել ենք, իսկ տիտանների մասին յեղած առասպելների մեջ հայտնի յն նոր և հին աստ-

զամների փոխադարձ պայքարի առասպելը. Պրոմեթեուսը, զոր ըմբուտացել և «մարդկության թշնամի Զեսի» դևմ «ու յերկնքից դոդացել և արվեստի ու գիտության լույսը», հաղոսդելով այն մարդկությանը, վորի համար աստվածների պետից նա յենթարկվել և անողոք պատժի Հայտնի յե Արդունավորդների արշավանքի առասպելը՝ վոսկեգեղմը Կոլխիդայից բերելու մասին. առա և առասպելախառառն պատմությունը Տրովագայի կործանման և Թերեյի հիմնադիր Կաղմոսի մասին, այն Կաղմոսի՝ վորի սերունդներից մեկի հայտնի շառավիրներ սաշխարհի ամենադժբաղդ մարդը — Եղիս արքան; Հիշելով առասպելների և առասպելախառառն պատմվածքների մասին, չե կարելի չընդդեմ, վոր դրանք իսկապես միամի գեղեցիկ յիշեր են իրենց ամբողջությամբ, վորոնք հնտագայում մշակվել են հունական բանաստեղծների և դրամատուրգների կողմից՝ սկսուծ Հոմերոսից մինչև հունական դրականության անկման շրջանի՝ ներկայացուցիչները, իրենց գեղարվեստական խոշոր գործների համար:

Հունական հին դրականությունը առասպելախառառն դարաշրջանից հետո ունեցել և յերկու այլ շրջան. կլասսիկ, այսինքն գասական և աղեքսանդրյան: Առաջինը սկսվում է մոտավորապես տասներորդ դարից և հասնում մինչև չորրորդ դարը ք. ա., յերկրորդը՝ յերրորդ դարից ք. ա. մինչև քրիստոնեյական յեկեղեցու պաշտօնական տիրապետությունը, յերբ հասարակական, կուլտուրական բոլոր գործոնները վերջնականապես ընկան յեկեղեցու հովանավորության տակ:

Դասական շրջանի դրականությունը՝ դա հին հունական դրականության վոսկեղարն ե, յերբ հասարակական հարաբերությունների զարգացմանը զուղընթաց, դեմոկրատիայի տիրապետության որով, առաջ յեկան և զարգացան դրական բոլոր տեսակները, յերբ զիտության և փիլիսոփայության հետ առանձին թափով հրապարակ յեկան քնա-

ըերգուներ, դրամատուրգներ ու արվեստի մյուս ճյուղերի ներկայացուցիչներ, իրենց բազմաթիվ դեղարվեստական ստեղծագործություններով.

Հունական վասկենդարի, գլխավորապես հինգերորդ դարի ք. ա., մեծագույն քանդակակազործների անունները, Ֆիդիսի, Պոլիկլետի, Պրակսիտելի, Լիսիպփի և ուրիշների, իրենց ստեղծագործություններով մնամ են վորովս անջնջելի եղեր գեղարվեստի պատմության մեջ, Տասնյակ դարերի ընթացքում արվեստի կատարելություններ են համարվել նրանց քանդակները, «Սկավառակ նետողը», «Վոլիմալական Զետը», «Աթենաս կույսը», «Նիդակակիպը», «Նիկան», «Ապոքսիոմենը», «Հերմենը», «Աֆրոդիտեն», «Փարնեզյան ցուլը», «Միլոսյան Վեներան», «Միլոսյան Աղոլլանը» և այլն:

Հունական ճարտարապետությունը, հունական յերաժշտությունը, (վորը սերտ կապված և յեղել բանաստեղծության հետ), ունեցել են իրենց տաղանդավոր ներկայացուցիչները:

Դրական անսակների մեջ եպոսը (վեպը) հնագույնն է, վորունի զվարապետական դյուցազներգական ընույթ։ Դա զբական այն տեսակն է, վորի ծագման աղբյուրը պիտի վորոնել նահապետական հնագույն կենցաղի մեջ, յերբ միապատշաճ, միաաարր ժողովրդի կյանքում տիրողներն են, թագավորները, իշխաններն ու ցեղապետները, յերբ զորշ մասսայի վրա բարձրանում են նրանց առանձնակի կերպարանքը։ Առավելապես հովվական և յերկրագործ կենցաղի շըրջանում ժողովուրդը ապրում է միալար կյանքով, տիրողների ստեղծած բարոյական նորմերն ու հասարակական ինքնազիւտակցությունը ընական համարելով։ Այդոինի պատմական շրջանի դրական տեսակը առավելապես դյուցազներգական վեպն է, վորի մեջ յերպչի անհատականությունը

զրեթե բացակայում ե, իսկ բանաստեղծության առարկան իշխող հերոսն ե և պատմական վերևն խոշոր եպոպեա:

Դյուցազներգական վեպերի մեջ հայտնի յեն Հոմերոսի «Էլիխական» ու «Առողիսական»ը, Մյուսներից հայտնի յեն հնդկական «Մանաբարտառան» և «Ռամայան»ը, Ֆիրդուսու «Շահնաման», ոռւսական «Բրլինաները»՝ Ավյատագորի, Իլիա Մուցոմեցի և այլն, Ֆրանսիական «Ռոլանդի յերգը», գերմանական «Նիբելունգների յերգը», Ֆիննական «Կալեվալա», հայկական «Սասունցի Դավիթը» և այլն Բայց դրանցից վոչ մեկը Հոմերոսի պոեմների գեղարվեստական մակարդակին չեն համառում:

Դյուցազներգությունների մեջ հանդես են դալիս գըլիավորակնես պատմական կամ մտացածին անձնավորություններ, վորոնք անպատճառ թագավորներ և իշխաններ են. ըստ վորում համընթաց նկարագրվում ե տիրող դասակարգի կյանքը, թագավորների պալատը, զինվորական բարձր դասի կենցաղը կամ նույն դասերի ընտանեկան կյանքն ու սովորությունները: Հերոսները հանդես են դալիս պատմական վորեւն խոշոր անցքի փոնի վրա, վոր հաճախ պատմվում ե ավանդաբար, և այդ պատճառով պատմական ճշմարիտ անցքը հյուսվում ե լեզենդար, առասպելական զրույցների հետ:

«Էլիխական»ի մեջ պատմվում են Տրոյայի տասնամյա պատերազմի վերջին ամիսների անցքերը: «Շահնամե»ի մեջ՝ Իրանի և Թուրանի պատերազմները, «Ռոլանդի յերգ»ի մեջ՝ Լարլոս մնծի զորքերի և նրանց հրամանատար՝ ասպետ Ռուլանդի կրած պարտությունը արարների կողմից: «Սասունցի Դավիթ»ի մեջ՝ Մարա-Մելիքի և Դավիթի միջև յեղած մենամարտը և վերջինի հաղթանակը,

Դյուցազներգական նպոսի գլխավոր հատկություններն են պատմողական ձեր, գեղարվեստական պարզությունը: Պատմելու յեղանակը հարթ է, հաճախ մեծ, հանդիսաւ, միա-

միտ: Հերոսները սիրում են յերկար ճառել յերբեմն վերամբարձ վոճով, հաճախակի կրկնություններով, համեմատություններով, յերբեմն ել անցքերի ու դեպքերի ավելորդ մանրամասնություններով:

Եզրսի եյական տարրերն են նաև չափազանցությունը, հիպերբռոլիզմը, գերինական և հրաշալին ի գնմս աստվածների, հավերժահարսների, սրբերի, չար ու բարի վողիների, հերոսների ֆանտաստիկ կերպարանքների, նրանց ահռելի ու յժերի և այլն: Ցեղ եյականը այդ ամենի մեջ այն և, վոր պատմող կամ յերգող բանաստեղծը ինքը հավատում է իր յերևակայած գերբնական ույժերին ու հրաշալիքներին: Նրա մյուս հատկությունն եւ չափական ձեզ, վոր դանդաղ և ու ծանր, չին հունական և նրան հետևող հռոմեյական դյուցազներգությունները յերգվել են հեկզամետրներով՝ վեցշափյան վուտանավորներով:

Դյուցազներգական վեպը, վոր միենույն ժամանակ հերոսական և կոչվում, ժողովրդական բանաստեղծություն չե, Դա բարձր, տիրող դասակարգի, ռազմական արիստոկրատիայի բանաստեղծություն և, ուր յերգվել են նրա փառքը, մեծությունը, ձգութմներն ու հերոսությունը, և ուր արտահայտություն եւ գտել նրա սանձարձակությունը, տիրողի անզուսպ իշխանականությունը, ընչառաղցությունը, դիշատիչի վայրագ բնադրը, բարքերի կոպտությունը, ամեն մի ըմբոստացում ճնշելու և մանավանդ շահագործելու անզուսպ տենչը:

Հունական եպուը արիստոկրատիայի դրական ձեն և: Նա առաջ յեկավ արիստոկրատիայի ծաղկած շրջանում և դեպի անկում դիմեց, յերբ արիստոկրատիան յետ մզվեց պատմական ասոլարեզից:

Դյուցազներգությունները քնարի, տավիդի կամ բաժիռի նվազակցությամբ յերգվում եյին պալատներում՝ խըն-

ջույքներին ու՝ խրախճաններին, ուր բաքոսյան հեղուկը հոսում էր վայելքի ու մեղկության մեջ («Վողիօական»):

Դյուցազներգության հեղինակը անհայտ է մասմ, վորովինեաւ յուրաքանչյուրը այդ ստեղծագործություններից բարկացած և առանձին յերգմբից ու յերգախառն զրույցներից, յերգված զանտպան ժամանակներում, վորոնց հեղինակները բնականաբար բազմաթիվ եյին լինում, Բացի այդ, դրի առնված չինսլով, նրանք սերնդեսերունդ անցնուած եյին բերանացի, յենթարկվելով բազմաթիվ փոփոխությունների, յերբեմն նորանոր հավելումների՝ գեղեցիկ զարդարանքներով կամ աղավաղումներով: Գրի առնվելուց և վերջնական մշակման յենթարկվելուց հետո՝ նման ստեղծագործությունները այնս փոփոխության չեյին յենթարկվում:

Վերն է հունական մինչումերյան զրականությունը: Դրա պատասխանը գտնելու համար քիչ յեռանդ ու աշխատանք չեն գործազրել հունազետները, քըքընելով անթիք դրականության բոլոր հիշատակարանները, մանրազննին հետախուզությունների յենթարկվելով նաև հոմերական դյուցազներգությունը, չենց հոմերյան յերկու ստեղծագործությունները բազմաթիվ ակնարկներ ունեն այն մասին, թե հին հույնների մեջ դոյցություն են ունեցել մի շարք բանաստեղծական յերգեր, զրույցներ, այսպես կոչված պեաններունները, նվիրած Ապոլլոնին, Դիոնիսի շուրջը յերգվող ուրախ և տիսուր յերգեր, հարսանեկան հիմենեյներ և այն, չին հունական բանաստեղծությունը անբաժան է յիշել յերաժշտությունից: բանաստեղծությունները արտասանվել կամ յերգվել են կիրառի և տավիղի նվազակցությամբ, Դրական այդ շրջանի բոլոր ստեղծագործությունները կորել են, թողնելով հնատազա հույն սերունդների մեջ նրանց միայն աղոտ հիշատակությունը: Ավանդություններ են մեացել հունական պտղեղիայի նախահայր Վորփեսուի մասին, վորի յերաժշտական հմայքի շուրջը ավանդությունը հյուսել է

մի պատմություն, թե ինչպես նա իջնում և ստորերկրյա սասպածների Տարտարոսը և իր ձայնի հմայքով դուրս կորում այնուեղից իր կնոջը՝ Յեղիսիրեյին։ Այսպիսով Հոմերոսից գեռ շատ առաջ կենդանի յև յեղել մեծ հոչակ վայելող Վորովիսոսի անունը, ինչպես և նրա աշակերտ Մուզեոնի հիշատակը։

Մինչհոմերյան բանաստեղծության մասին վկայում են հենց Հոմերոսի պոեմները, վորոնք կազմում են գրական տեսական շրջանի պատկը։ «Վոդիսական»ի մեջ մենք հանդիպում ենք յերգիչ Դեմոդոկին, վոր Ալքինոս թագավորի պալատում (Վոդիսակի ներկայությամբ) «հուղիչ ու թախծովի» յերգել և Տրովադյախի պատերազմի հերոսների մասին, և «ամրասիրտ Վոդիսակի աշքերից անգամ» դառն արցունք խլիլ Հոմերոսի պատմներում կան մի շարք ակնարկներ, վոր իրենից առաջ յեղել են յերգիչներ ու յերգել հերոսների մեծազործությունները։ Հոմերոսը «Ելիական»ի մեջ հիշում և նաև Թամիր Թրակացի յերգչին, վորին «խանդու մուսաները» կուրացրել են, խլելով նրանից «աստվածային քանքարը», վորովհեակ նա հանդոնել եր պարծենալու իր տաղանդով ու կիֆառի վրա նվագելու շնորհով և դրանով շարժել մուսաների-դիցուհիների նախանձը»։

«Ելիական»ի մեջ այդ մասին կա հետեւյալ հատվածը։

... Մուսաները

Լուցըին իսուղու յերդը հոգում Թամիր Թրակացու,
Վոր ժամանեց Իջալիս, Յեղիսա անուն մարզու մատից,
Թանգի Թամիր պարծենում եր հաղթող լինել մուսաներին՝
Վահակաղըշն Արամազդի գուտըներին ասովածային։
Այսպես՝ սրանք կուրացրին, լուցըրին յերգելն ամեն
Յեզ արվեստը ընարերգուհի նրան խպառ մոռացրին։
«Ելիական», Յերգ յերկրորդ։

Վորքան ել դժբար լինի վորոշել մինչհոմերյան բանաստեղծության ընուշիթը, այսուամենայնիվ, ընդունելի յետյն միտքը, վոր հոմերական պոեմները չեյին կարող հանկարծակի ծնյած լինել այնպես, ինչպես Աթենաս-Պալլասը Զեսի զիլիից: Դժվար ե վորոշել սակայն, թե վորտեղ ե առաջին անգամ ձեւավորվել հունական վիրական բանաստեղծությունը, Հելիկոնի ստորոտներում, Վոլիմպոսի փեշերում, թե՛ Թրակիայում, մի յերկիր, վոր այնքան հոչակված ե յեղել իր յերգերով ու առասպելներով:

Հոմերոսի պոեմները զըված են հին յոնիական դիալեկտով (Փոքր Ասիա): Խառն եռլական ձևերի հետ, վորոնց մեջ հայտնարերված են հունական ամենահին ցեղերից մեկի՝ աքայեցիների բարբառի մնացորդները:

Հին հույների յերեակայությունը սակայն պատմական վոչ մի անցք այնքան զորեղ չե շանթել ինչքան Տրոյայի պատերազմը, Դահունական կյանքում փոխանցման մի խոշոր շրջան ե յեղել, յերբ տնտեսական պայմանների մզումով ժողովուրդը աղբում եր զաղութային տեղաշարժի տևական շրջան, ցըվելով մոտակա կղզիները, ապա Փոքր Ասիայի արևմտյան ափերը:

Հույների զաղթականությունը ավարտվեց Իլիոնի կործանումով, յերբ նրանք վերջնականապես տիրեցին Փոքր Ասիայի ափերին և հաստատվեցին մերձակա բաղմաթիլ կղզիների վրա: Տրոյայի պատերազմը, վոր տեղի յե ունեցել հունական պատմության հերոսական շրջանում, առաջ և ըերել բաղմաթիլ յերգիչներ, վորոնք իրենց ստեղծադրութական ֆանտազիայի համար նյութ եյին քաղում մեծ եղողքեայից: Ստեղծվում ե նրա շուրջը յերգերի աժրողջ ցիկլ՝ վոր միանգամից յետ և մզում այն բոլոր յերգասացությունները, վորոնք կրոնական և ծիսական պաշտամունքի կնիք եյին կրում իրենց վրա: Տրոյական պատերազմի հերոսներին յերգելիս, Հոմերոսը ընդգծում ե, վոր Ազամնմ-

նոնի, Աքիլլեսի, Վոդիսնսի և ուրիշ նման հերոսները հանրածանոթ են յեղել արդեն, «Նիխական»ում կան ակնարկներ, վոր բանաստեղծը յերգում է այն, ինչ «արդեն հայանի յերոլորին», Նման «ակնարկները ակնհայտնի ապացուցում են, վոր մինչհռմերական գրականություն յեղել է, և մեզ հասած յերկու պոեմները ներկայացնում են նախորդ շրջանի զարդացման բարձր աստիճանը:

ՀՈՄԵՐՈՍ,

ԻԼԻԱԿԱՆ ՅԵՎ ՎՈԴԻՍԱԿԱՆ

Ո՞յ Նը Հոմերոսը՝ յերկու անկրկնելի պոեմների ըստեղծագործողը, կամ նա, վորին տրադիցիան վերագրում և «Իլիական»ի և «Նոդիսական»ի կերտումը։ Դարերի շնթացքում կատարված մանրազննին հետազոտությունները, հունագենների դործ դրած ճիգը անկարող են յեղել բաց անել այն շղարշը, վորով ծածկված և բանասահղծի դեմքը։ Բացի այդ՝ Հոմերոսը հանդիսանում և արդյոք իրական կամ սրամական մի անձնավորություն, թե՛ հեղինակի անունը հետագա սերունդների յերևակայությունն և ստեղծել։ Հունաստանում առանց վորեն կասկածի Հոմերոսին են վերադրել յերկու պոեմների ստեղծագործությունը։ Հունական տրադիցիան նրան պատկերացրել և վորպես կույր յերգչի, վոր թափառել և քաղաքից-քաղաք, գյուղից-գյուղ ձեռքին ունենալով իր անբաժան կիֆառը։ Այնքան մեծ ու բացարձակ և յեղել Հոմերոսի նշանակությունը հին Հունաստանում, վոր հետագա ժամանակներում հունական յոթը քաղաք վիճել են իրար հետ՝ յուրաքանչյուրը իր քաղաքացին համարելով յերգչին։

«Վիճում եյին Զմյուռնիան, Հոռոդոսը, Քոլտֆոնց, Սալամինը, Քիոսը, Արգոսն ու Աթենքը Հոմերոսի ծննդավայր լինելու պատվի համար», ասում և հայտնի ավանդությունը-

Մինչև այժմ ել չի պարզված բանաստեղծի ծննդավայրի հարցը։ Դիտնականների վերջին կարծիքն եւ, թե Հոմերոսը ծնված պիտի լինի ասխական գաղութներից մեկում տասեռորդ կամ իններորդ դարում ք. ա., այսինքն Տրոյայի պատերազմից մի կամ յերկու դար հետո, մի ևսոխա, յերբ հունական փոքրասխական գաղութները արդեն հասել եյին իրենց ծաղկման բարձր աստիճանին։ Այդ շրջանը համարվում է հավանական, առավելագուստ այն պատճառով, վոր Հռմերոսը հիշում է ի միջի այլոց յեղիպատական Թերեյի հարբատության և բարզավաճման մասին, իսկ այդ շրջանում ճիշտ վոր թաղավորել և 22-րդ դինաստիայի հիմնադիրը Շաշանկ առաջինը, 966 թ. ք. ա.։

Ստկայն վորքան կցկոտուր են յեղել ու ազտա այս տեղեկությունները, նույնքան ավելի մեծ ծավալ են սաացել նրա անվան շուրջը հյուսված լեզենդները։ Հունական տրադիցիան վոչ մի կասկած չուներ Հոմերոսի անձնավորության նկատմամբ։ Ենթե մեղ համար «Խլիսկան» ու «Առյիսական» միմիայն գևարվեստական բարձրարժեք գրվածքներ են, հույները, ինչպես ասացինք վերը, նրանց վրա նայել են վորպես սուրբ գրքի վրա։ «Խլիսկան» և «Վաղիսական» հավերժացված եր Հունաստանի ազնվական դասակարդի հերոսությունը, սխրագործությունները, հազվանակները թշնամու վրա, անհատական արժանիքները, կորովը և այլն։ Այսուղ ել արդարացվում է տիրող դասակարդի տիրապետության պատմական իրավունքը վոչ միայն անցյալի, այլ և ապագայի նկատմամբ։ Նրանց մեջ բոլոր ժամանակների հույն տիրապետողները գտնում եյին «հունական աղղային գիտակցության» աղբյուրը։ Բոնապետ Պիլիստրոտի ժամանակ վեցերորդ դարում գիտակցական փորձ և արված, խմբագրելով Հոմերոսի պոեմները, դարձնել այն աղղային գիտակցությունը արթուն պահելու «սրբազան գիրք» և յերկրի շահերը տիրող դասակարդի համար ոտարներից և ներ-

քին ներհակ ու յժերի դեմ պահպանելու գործնական նուրբ միջոց։

Հոմերոսը նրանց աչքում բանաստեղծ չեր միայն, այլ նաև փիլիսոփա ու պատմաբան, որենսդիր ու կրոնական կուլտի ստեղծող, Ավանդությունը ասում է, վոր շատ հաճախ հունական՝ պետությունների միջազգային վեճերի լուծումը պիճողները գտնելիս են յեղել պոեմների մեջ։ Որինակ՝ Սոլոնը ապացուցելու համար, թե Սալամին կղզին ըստ որենքի աթենացիներին եւ պատկանում է պոեմներին։ Հունաստանում Հոմերոսի գրքերը հույն քաղաքացու կրթության, դաստիարակության զվարավոր աղբյուրն եր, տիրողների ձեռքին պրովագանդայի ամենահզոր զենքը։ Համապատասխանորեն գարդացնելու համար ապագա քաղաքացու ինքնաճանաչությունն ու գեղարվեստական ճաշակը, «Ելիական»ն ու «Վոդիսական»ը մանուկներին անդիր եյին անել տալիս։ Վոչ մի հանդմաս, վոչ մի տոնախմբություն չեր կատարվում առանց հատվածներ արտասանելու պոեմներից։ Աթենաս աստվածուհու պատվիրն նվիրված հանդեմների ժամանակ Աստիկեյում, որենքի թելադրությամբ, հրապարակորեն պետք է կարգային յերկու պոեմներն ել սկզբից մինչև վերջը, Յեղել են ռատպագների, ժողովրդական յերդիչների ամբողջ խըմբեր (հոմերիդներ կամ հոմերականներ), վորոնք հատկապիս նվիրված են յեղել այդ գործին։ Պլատոնը հիշում է Յոն աշաղանդավոր ռապսոդին, վոր հրապարակորեն, առանձին հանդիսավորությամբ արտասանելիս եւ յեղել Հոմերի պոեմները։ Մեծ վողեվորություն ու պաֆոս եւ ունեցել Յոնը իր զերը կատարելիս, «Տիուր հատվածները արտասանելիս նրա աչքերը լցովում եյին արցունքով, սարսափելի մասերում նրա դիմուի մազերը բիղւրիու եյին կանգնում։ Նրա ունկնդիրները վարակվում եյին և՛ զայրանալու, և՛ ապշելու, և՛ վողբալու տրամադրությամբ»։

Նետաքրքրական և Սոկրատի և Ցոնի հետեւյալ դիալոգը:

ՍՈԿՐԱՏ. Ցերը դու լավ ես արտասանում դյուցակներությունը և խիստ աղղում ունկնդիրների վրա, որինակ, Վոդքանսին յերգելիս, թե ինչպես նա ցայտում է շեմքի վրա, կանգնում փեսացուների առջեւ և թափում նետերը իր վոտների մատ, կամ Հեկտորի վրա հարձակվող Աքիլլեսին յերգելիս, կամ խղճահարության արժանի վորեւ ալատկեր Անդրոմաքեյի, Հեկուբեյի կամ Պրիամոսի մասին. — արդյոք չե՞ խանգարվում առողջ դասաղությունդ և քեզ չե՞ թվում, վոր քո հոգին բարձր վոգեվորության հասած՝ ներկա յե հենց այն դրուերի մեջ, վորոնց մասին դու զրուցում ես. լինեն այդ գործերը Իթակեյում թե Տրոյայում կամ այլուր:

ՑՈՆ. Ցերը յես արտահայտում եմ վորեւ խղճալի բան, իմ աչքերը լցվում են արցունքով. իսկ յերը սարսափելի ու սոսկալի՝ այն ժամանակ մազերս սարսափից բիղոքիզ են կանգնում և սիրտս սկսում ե տրոփել.

ՍՈԿՐԱՏ. Բայց դու գիտե՞ս, վոր ունկնդիրներից շատերին ես նույն դրության հասցնում:

ՑՈՆ. Շատ լավ գիտեմ, վորովհետեւ յես միշտ ըեմից տեսնում եմ, թե ինչպես ունկնդիրները հեկեկում են, սարսափից աչքերը չուում ե իմ զրույցի համապատասխան տեղում ապշահար լինում:

Այս գիտողը ցայտուն ապացույց ե այն բանի, վոր Հօմերոսի գրվածքները յեղել են ակառւալ, նրանք ոժաված են վարակիչ հատկանիշներով և շնորհիվ իրենց գեղարվեստական բարձր արժանիքների ու ներզործական թեմատիկայի կազմակերպել են թե արտասանողների և թե ունկնդիրների միաքն ու զգացմունքը:



Հոմերոս, նկարիչ Ա. Կոջոյանի

Гомер, худ А. Коджояна.

Homer, by A. Kodjoyan.



Պոեմների այդ հատկությունները անխախտ ելին դարձնում Հոմերոսի հեղինակությունը. Նրա անձնավորության դեմ խոսելը հանցանք եր, Նույնիսկ աղեքսանդրյան գիտնականներն ու բանաստեղծները, ինչպես, որինակ, նշանավոր Արիստարքոսը՝ ժամանակի լուրջ քննադատը, (3-2 դար ք. ա.) վորդնք շատ մեծ աշխատանք են գործ դրել պոեմների, ուսումնասիրության վրա, —և նրանց և պատկանում պոեմներից յուրաքանչյուրը 24 յերգի բաժանելու գործը, —ապա և Արիստոտելն ու Պլատոնը թույլ կտային քննադատորեն վերաբերվելու պոեմների այս կամ այն արտաքին կողմին, բայց ակնարկ անգամ ձգել յերգչի հիշատակի վրա՝ յերբեք:

Այդ վերաբերմունքը տրադիցիայով անցել և մինչև վերջին դարերը, յերբ 1795 թվին գերմանական լեզվագետ Վոլֆը հանդես յեկավ այդ տրադիցիայի դեմ իր մի ուսումնասիրությամբ՝ „*Prolegomena ad Homerum*“, պնդելով, վորչի կարող յերկու պոեմների հեղինակը մի անհատ լինել, Նրա կարծիքով, «Ելիական»ի և «Վաղիսական»ի հեղինակը սխալմամբ և Հոմերոսը համարվում։ Նա այն միտքն եր հայտնում, վոր մինչեվ 6-րդ դարը ք. ա. հունական ժողովրդի մեջ ցրված ելին «Ելիական»ի առանձին յերգերը Տրոյայի պատերազմի անցքերի մասին, յերբ աթենական բռնապետ Պիդիատրատի որով գրի առնվացին և առաջին անգամ մի զբանական ամփոփվեցին պոեմները։ Վոլֆի այս ուսումնասիրությունը մեծ աղմուկ հանեց պահպանողական բանասերների շրջանում։ առաջացավ հոմերականների յերկու հակառակ բանակի Նրանցից մեկը կանգնեց Վոլֆի տեսակետի վրա և պնդում եր պոեմների հավաքական ստեղծագործության վրա։ մյուսը՝ յերկու պոեմներն ել բացարձակորեն վերագրում եր Հոմերոսին, հետեւելով տրադիցիային։ Վորքան ել տաք յեղավ բանակախվը յերկու բանակների մեջ, կողմերից վոչ մեկը հաղթանակ չտարավ։ Թէ մեկի և թե մյուս

սի առարկությունները հավասարապես համոզեցուցիչ եյին հասարակ ընթերցողի համար։ Այս տաք բանակովիլը առաջցըրեց մի յերրորդ հոսանք, այսպես կոչված «հիմնական կորիզի թեորիան», վորի կարծիքով «Ելիական»ի բուն կորիզի հեղինակը անկանած հանճարեղ բանաստեղծ ովկորի յեղած լիներ, որինակ Հոմերոսը. իսկ նրա վրա բարդված մասերի հեղինակները ուրիշներն են, վորոնք դարերի ընթացքում ավելացրել են պատերազմի տարրեր և պիտի ըստ իրենց ժամանակի, ճաշակի և տրամադրության, Ուրեմն պոեմների առանձին մասերը ստեղծվել են վոչ միայն տարրեր պոետների կողմից այլ և տարրեր սերունդների պատկանող պոետների, Շատերը նըանցից ուղել են իրենց հայրենակիցների անունն ել հիշել և նրանց քաջությունը առանձնապես ընդգծել Հիմնական կորիզի վրա ավելացած նոր յերգերը հոմերագետների կողմից վորոշվում եյին կուլտուրական տաղըներ նշաններով—ըրոնզին և յերկաթի գործածությամբ, լեզվի տարբերություններով «կորիզի» և «շերտավորումների» միջև, զինական գործիքների ձևի զանազանությամբ, նկարագրված արտաքինով, տեղագրությամբ, հավատալիքների և սովորույթների տարբերությամբ։ Այս յերրորդ հոսանքը շատերին ե գոհացրել այն պատճառով, վոր յերկու բանակների հակասությունների ողբյուրը բացատրել ե ըստ ամենայնի տրամաբանորեն։ Պարզ եր բարորի համար մի գլխավոր հանգամանք, «Ելիական»ի և «Վանդիմական»ի ստեղծագործինու դարաշրջանում, 10-րդ համ 9-րդ դարերում, հույնները գիր չեն ունեցել, ուստի և անհնարին պետք ե համարել սի անձի կողմից նման մեծ, յերկնատոր դործի բովանդակությունը հիշողության մեջ պահելու հնարավորությունը։

Հոմերոսի անվան հարցով հատկապես զբաղվել ե ակադեմիկ Ն. Յա. Մարրը, իր «Կ ՏՈԼԿՈՎԱНИՅ ԻМЕНИ ГОМЕРА» աշխատության մեջ։ Մասը մանրադներն վերլուծության

և յենթարկում Հոմեր բառը, վորը հոմերագետներից վումանք աշխատել են հունարեն բառերի արմատով բացատրել իրեւ «յերդ ներդաշնակող», «կույր», «յերդիչ», «ծնորունի» և այլն, Հարեթական տեսության հեղինակը ապացուցում ե, վոր Հոմեր բառը դանազան ժողովուրդների մոտ (բասկերի — Ապանիտյում և վրացիների — մեզ մոտ) տարբեր ձևերով և դորժածովել և շատ հին պատմական արմատ ունի, վոր նշանակում և կույր, տպա և գրացարան, յերգի, բանասեղծ, նույնիսկ կախարդ ու ծագրածու, Սրանից մոտավոր մի յնպակացություն կորելի յէ հանել, վոր սա հատուկ անուն չե, այլ հասարակական, հավաքական, վոր տրվում եր յերգիշրանասանդներին, վորոնք կմոմ պալատական կյանքը արտացոլող և նրա հերոսների շուրջը յերդ հորինող լարձր դասակարգի պահաներ և յին կմոմ ժողովրդական աշուղներ, Համենայն գեղս Հոմեր բառը շատ հին ծագում ունենալով, իր բացաարօւթյունը կարող և զանել միմիայն հարեթական անության շնորհիվ:

«Ելիտական» վոչ այլ ինչ ե, յեթե վոչ Աքիլեսի պատմությունը, հրիմական կորիղը՝ «Աքիլեսի քենը»: Բայց մենք հանդիպաւմ ենք մի շաբաթ հակասությունների, վորովիսիք հաղթավ թե թույլ տրվելին մի հանճարեղ բանաստեղծի կողմից: Բանատուաղծը սկսում և յերգիլ Աքիլեսի քենը Ագամեմնոնի դեմ հետո համամատած մասին հնդոսի մորը, թե նա խիստ պատիժ կտտ հաւատական բանակի հրամանատարին (Ազամեմնոնին): Յերկրորդ յերգը բնականորեն պիտի առաջինի շարունակությունը լինել, մինչդեռ հաջորդ հինգ յերգը շեղվում են դըւխաւոր թեմայից: Բայցի այդ, աշքի ընկնող մի այլ հակասություն կա յերրորդ յերգի հետեւյալ հատվածում: Պրիամոսը՝ իմոնի թագավորը կանոնած և աշտարակի վրա և դիտելով հունական զորքը, Հեղինեյին հարցեր և տալիս հույն քաջերի մասին և սւզում և իրաղեկ լինել նրանց բարեմասնություն-

ներին։ Տարորինակ ե մանավանդ դա. պատերազմի տասերորդ տարին և, այն ել Իլիոնի պարիսպների տակ, և Պրիամոսը նոր ե միայն հարցնում Հեղինեյին հունական հայտնի քաջերի մասին, կարծես իննը տարվա ընթացքում նա հնար չուներ այդ անելու, կարելի յէ նման մի շարք հակառություններ ու անուշադրությամբ զրված հատվածներ միջ ընթալ։

Նույն տեսակետով պիտի մոտենալ նաև «Եղիսական»ին, վորի կորիզը «Վողիսեսի գերադարձն» և, իսկ արկածների պատմությունը ավելի ուշ հնարած, «Եղիսական»ի նկատմամբ սակայն այն յենթադրությունը կա, թե դա պրված ե «Ելիական»ից շատ ուշ, վորի հիման վրա արդեն յերկու պոեմները չեն կարող միենալույն հեղինակինը համարվել, «Ելիական»ը հույն արիստոկրատիայի հաղթանակի, նվաճումների, մի խոսքով հերոսական շրջանի արաւագրություն և, յերբ, ինչպես ասում ե ուսումնասիրողներից մեկը, այդ կյանքի արեգակը պայծառ եր և շլացուցիչ, իսկ «Եղիսական»ը՝ մայրամուտի, յերբ արեսի ճառագայթները կորացրել եյին իրենց կիզեւ զորությունը։ Դա կարելի յէ ընդունել այն իմաստով, վոր յերկրորդ պոեմը ոտեղծագործություն ե առեւտրական հարաբերությունների նախնական շրջանի, վորի հետագա զարգացումը թուլացում և անկում եր բերում արիստոկրատ դասակարգին։ Գեղարվեստական տեսակետից «Ելիական»ը անհամեմատ բարձր ե գույների վառանդրագարձումով, հնչյունների բարձր ներդաշնակությամբ։

«Մինչ գիտնականները գործ եյին դնում այնքան աշխատանք՝ փարատելու համար պոեմները ծածկող մշուշը, ընթերցող հասարակությունը չեր դադարում հիանալուց յեվրոպական բանաստեղծության մեզ հայտնի այս առաջին ստեղծագործությունների գեղեցկությամբ», — ասում ե կուռանը։ Ընթերցողի համար ամենակարևոր փաստը անկառիած պոեմների դոյությունն ե և նրանց մեջ վերաբրտագրւ-

ված վաղնմի կյանքի պատկերը։ Կնսեմանմը արդյոք «Խիւ-ական»ի դեղարվեստական արժեքը, յեթե հետազոտու-թյունները ապացուցելին, վոր Հոմերոսը յերբեք գոյու-թյուն չեւ ունեցել, վոր նա սերունդների յերեակայության արդասիք ե, կառ այն, վոր պոեմի զլիավոր կորիզը հան-ձարեղ բանաստեղծին ե պատկանում, իսկ ուրիշները հե-տապայում ավելացրել են առանձին եպիզոդներ և այլն։ Արա մասին յերկու կարծիք լինել չեւ կարող։

Գեղարվեստական վառ պատկերներով խոսելու բարձր կարողությունը Հոմերոսի մեջ շատ մեծ և ըաղմազան։ Բաղմաթիլ են զործող անձինք և ուրույն են նրանք իրենց զործողության շրջանակում։ Անորինակ հարուստ և ճոխ և բանաստեղծի բառապաշարը, մանավանդ «Խիւական»ի մեջ։ Համեմատությունները պատկերափոր և վառ։ Պարզություն և ուարդության մեջ խորություն։ Ռւնի եպսոսին հատուկ դան-դաղաշարժությունը ունի և մի տեսակ անդորր առարկայա-կանություն։ Չեւ խորշում կանգ առնել մանրամասնություն-ների վրա, կրկնողություններ և անում, վոր դարձյալ եպո-սի հատկանիշներից մեկն և։ Պոեաը ստեղծագործում և պո-հմերը, վագեսորված իր իդեալներով, միշտ բռնած իր դասա-կարդի դարկերակը, միշտ բարձր տրամադրության մեջ։ Նա խղեալականացնում և իր յերգած իրականությունը, վորով-հետեւ հավատում և իր իդեալներին, իդեալներ, վորոնք մար-մին և արյուն են դարձել նրա մեջ և վորովհետեւ իր վողջ կյությամբ պատկանում և իր սոցիալական հարազատ խըմ-բավկումներին։

Հոմերոսի պոեմները,—գրված ստեղծագործական լարված մաքի պաֆոսով, առատոքեն հորդում են հույսերի թափով, մարդկային հասարակության մանկությունը հիշեցնող նախ-նական միամտության հետ ներդաշնակ,—պարունակում են իրենց մեջ «հավիտենական գրավչություն» (Մարքս) և հա-յիտենական թարմություն։

Հոմերոսի ազգեցությունը շատ մնձ և համաշխարհային գրականության վրա։ Այդ ազգեցությունը սկսվում է հին Հունաստանում և անցնում Հռոմ։ Հոմերոսի դորեղ, կարելի յև ասել, հետապնդող ազգեցության տակ և գրել հռոմեյական նշանավոր բանաստեղծ Վիրագիլիոսը իր «Ենեյական»ը, վորը ուժեղ զարկ և տվել Հոմերոսի ազգեցության տարածմանը յևվրոպական գրականությունների վրա։ Տորկվածո Տասոսն գրել և իր «Ազատագրված Յերօսակմաք», Վոլտերը «Հենրիական», Կլոպչառկը «Մեսոփաղան», Խերասկովը «Ռոսսիադան» և միսիթարյան Արսեն Բագրատունին իր «Հայի Դյուցազնեց»։

Հոմերոսի պոեմները յևվրոպական գրականության մնջ մնձ հետաքրքրություն են առաջացնում զիմավորապես XVIII դարում, բուրժուական գրականության ուժեղացման շրջանում և դառնում են հատուկ ուսումնասիրության առարկա։ Ռուսական յերկու լրիվ թարգմանություն կա «Էլիփական»ի՝ Գնեղիչի (1829) և Մինսկու (1896), յերկումն ել բնագրից, և մի թարգմանություն ել «Վոդիսական»ի, վոր գերմաներենից թարգմանել և բանաստեղծ Ժուլովսկին։

Հոմերոսի «Էլիփական»ը ունեցել է հայերեն յերեք թարգմանություն, յերեքն ել հունարեն բնագրից. 1) Հ. Ա. Բագրատունի, Վենետիկ, գրարար, 1864 թ., 2) Հ. Յն. Թովմանյան, Վենետիկ, գրարար, 1843 թին, 3) Հ. Ա. Ղաղիկյան, աշխարհաբար, արևմտահայ բարբառով, Վենետիկ, 1911 թ., 4) Հոմերոսի «Վոդիսական»ը ունեցել է միայն մի թարգմանություն—Հ. Յն. Թովմանյանի, գրարար, Վենետիկ, 1848 թիվ։

Բնագրին հաբազատ և Ա. Բագրատունու թարգմանությունը, Ավելի ազատ և թարգմանել Յե. Թովմանյանը յերեկու պոեմներն ել Յեղել են նաև առանձին յերգերի կամ հատվածների թարգմանություններ գրարար և աշխարհաբար։

Արեւելահայ բարբառով՝ Հոմերոսը չե թարգմանված, բացի մի յերկու փոքրիկ հատվածներից:

Մեր առջեւ հանձին հոմերական պոնմների պատկերացված և մարդկային հասարակության պատանեկական շրջանի այն իրականությունը, գաղութային խոշոր շարժման եպօխան, յերբ տնտեսական ուժն ու ռազմական նվաճումները զլուկի եյին գալիս հերոսություններով և նորանոր նվաճումներ կատարելու համար անհրաժեշտ հնարագիտությամբ ու խորամանկությամբ, Աքիլեսը վորպես ուժեղ անհատականություն, վորպես Փիդիքական ույժի արտահայտություն, Վոդիսաւար—արկածախնդիր, քաղաքներ քանդակ, թափառական, ծովանեն, խուզարկու միտք: Անվեհներ Աքիլեսը, խորամանկ ու հնարագնտ Վոդիսաւար, և նրանց կողքին իրավազուրկ և պասսիվ, իսկ հույնների աչքում բարոյական ու առաջինի Պենելոպեն՝ դրանք հին աշխարհի այն իդեալներն են յեղեւ վորոնք դարձել են պաշտամունքի առարկա և հետապա շատ բանաստեղծների համար վոգեռության աղբյուր:

Յեվ սակայն յեթի վերոհիշյալ առաջինություններից հենց առաջին յերկուսը իդեալ և ճշմարտություն են յեղել հին աշխարհի տիրողների համար, ապա ինչ պիտի լինելին նրանք ճնշվածների ու շահագործվողների համար, Վճրքան թանկ են նստել հունական հերոսների «առաքինությունները», թեև ըմբռոտ, բայց շահագործվող թերսիտեսներին, և առհասարակ հերոսների մեծության պատվանդանը կազմող «անթիվ շատերին»: Այդ մասին հետո,

Հոմերոսի ստեղծագործությունը անմահ և նրանով, վոր նա իր հանճարի ուժով ընդգրկել և մի ամբողջ գարաշրջանու ընթացքում, հասարակական նույն հակասություններն են գոյություն ունեցել, ինչ նորագույն եպսխաններում, ուր մի կողմից վայելողների անսանձ եղորիզմը, մյուս կողմից՝ զրկվածների տառապանքն ու ցասումը հիմնված տնտեսական նոր

հարաբերությունների վրա, նախապատրաստեցին սոցիալական այն ընդհարումը, վորը ճակատագրական յեղավ տիրապետության մայրամուտը թևակոխող արիստոկրատիայի համար:

Յերգիք քենը, ով դիցուհի, Գելիսածին Աքիլեսի,
Վոր ըստը ցավիր աղետավոր բերեց այնքան Աքայնցոց.
Վոր շատ կորով դյուցազների դահապիքեց դժոխքն է վայր,
Ու լեշերը նըստեց ձգեց կեր շներին և ըստը թռչոց:
Կատարվեց կամքն Արամաղղի, և գժվեցին իրարու հետ
Ատրիդես՝ ըաշանց արքան և Աքիլեսն աստվածադարձ:
«Ելիական», Յերգ առաջին *):

Աքիլեսի քենը Ազամենմոնի դեմ՝ սա յե ըստ եյության «Ելիական»ի գլխավոր թեման, ինչպես ասել ենք վերը: Սակայն վերտեղից ե ծագել այս պատերազմը, վոր տասոը տարի յե տեսել և «սրբազն Խլիոնը» պաշարող հույները, չնայած իրենց գերազանց ույժերին, չեն կարողացել հեշտությամբ կործանել և կրակի ու թալանի մատնել այն: Վորոնք են այն «զրդապատճառները», վոր այնպիսի կատաղի վրեժինդրությամբ լցրին հունական թագավորների, իշխանների ու հերոսների սիրտը և զայրույթը սրտերում բերին Տրոյայի բարձր պարփառների տակ:

Հոմերոսի գյուցազներգության հիմքը հունական դիցաբանության զրույցներն են «Գեղեցիկ Հեղիների» առևվանգման շուրջը, վոր «մի կաթիլ մեղրի» նման պատճառ ե դարձել արյունալի պատերազմի, վորքի հանել ժողովուրդներ, առաջացրել անցքեր, վորոնք շանթել են միամիտ ռապսոդների բանաստեղծական յերևակայությունը:

Ի՞նչպես սկսվեց Տրոյայի տասնամյա պատերազմը համաձայն զրույցների, առառապելների, Հելլեսպոնդից դեպի հարավ, ասիական ափերին ձգված ե կապտագույն լեռների

*) Ելիականից և «Առողիսական»ից արված մեջբերումները գըտբարից աշխարհաբարի յե վերտենել բանաստեղծ և դրամտառուրդ Դիքենիկ Դեմիքեյանը.

վոլորապտույտ շղթան։ Ակամանդրոս և Սիմոիս գետակները վլուսդում են հարթությունը, վոր տարածվում է Իղա լեռնից մինչև ծովը։ Հարթության վրա ընկած բլուրների այսու այն խմբակները մի առանձին բազմազանություն են մոցնում իրենց փարթամ բուսականությամբ, վոր յերբեք չյօւնի կամ սառույցի յիրես չի տեսնում։ Բնության արտաքանչելի ծոցում բարձրանում եր «հռչակավոր Խլիոնը», վոր կոչվում եր նաև Տրովադա կամ Տրոյա։ Խլիոնը սրբազան քաղաք եր, վորովհետեւ «աստվածները իրենք եյին ոգնել նրա ամբակուռ պարիսպների կառուցմանը», Ապոլլոնն ու Պոսեյդոնն եյին նրա հովանավորները։ Նրանք չեյին նույլ տա յերբեք կործանելու այդ պարիսպները հասարակ մահկանացուներին, յեթե վերջիններին աջակից չհանդիսանային «ինքը Զեսը» (վերջին վայրկյանին) ու Տրոյայի թշրիմ մյուս աստվածները։ Թագավորում եր այդ քաղաքում ծերունազարդ Պրիամոսը, վորի որով Խլիոնը փարթամ ու բարգավաճ եր։ Հարևան իշխաններն ու թագավորները զարմանքով ու նախանձով եյին դիտում նրա հզորությունն ու հարստությունը և հաճախ հայցում եյին նրա հովանավորությունը, «Յերջանիկ եր Պրիամոսը իր բազմանդամ գերդաստանով», կորովի Հեկտորով, գեղեցիկ Պարիսով և իմաստուն ու հրաշագեղ Կասանդրա գուտարով։ Հովվական յերանելի ժամանակներում եյին ապրում թագավորի զավակները։ Պարիսը վոչխար եր արածեցնում ծովափնյա լեռների մշագողակար լանջերին, Մի անգամ, յերբ նա հանդիսատ եր առնում լեռան ստորոտում, սաղաթախիտ ծառերի ստվերներում և մեղմորեն յերգելով դիտում ու հիանում եր սրբադանքի հոյակառ կերպարանքով, հանկարծ նրա աչքին մի տեսիլ յերեաց։ Ինչվոր լուսավոր ամպ սրարշատ մոտեցավ նրան։ Մշուշը փարատվեց, և Պարիսի առջև կանգ առավ վոսկեփայլ մի կառք, վոր բերել եր յերեք աստվածուհիների, Դրանք Զեսից ուղարկված Հերան, Աթենաս-

Պալլասը և Աֆրոդիտեն եյին, վորոնք Պարիսից պատասխան պիտի ստանային, թե նրանցից վերն եւ ամենազեղեցիկը, Պարիսին բացատրեցին, վոր Պելոսի ու Թետիսի (Աքիլլեսի ծնողների) հարսանիքին, վոր տեղի ունեցավ Պելոնի անտառում, իուս աստվածուհին մոռացմամբ չեր կանչված, ուստի սա նախանձելով այս յերեքին և գժառւթյուն ձգելու համար նրանց մեջ, մի վոսկի խնձոր և պլորում յերեք դիցուհիներից ամենազեղեցիկի համար, չասելով թե վորն և դրանցից ամենից գեղեցիկը, Աստվածուհիներից ամեն մեկը ինքն իր կամենում ձեռք ձգել վոսկի խնձորը, բոլորից գեղեցիկը իուն համարելով, Լսելով բացատրությունը, Պարիսը շվարած կանգնած իր գեղեցկուհիների առջե, առանց իմանալու, թե ում աա գերազասությունը Յեզ ահա աստվածուհիներից ամեն մեկը տռաջ և գալիս իր խոստամեներով՝ Պարիսին իր կողմը թեքելու համար, Հերան, Զեսի քույրն ու կինը, ասում ե. «Յեզ քեզ կտամ իշխանություն, դու կտիրես ամբողջ Աստիային»: «Իսկ յես քեզ կտամ իշխանություն, դու կտիրես ամբողջ Աստիային»: «Յեզ ահա միանալու ամենալավագությունն ու յերջանիկը բոլոր մարդկանց մեջ»: — ասում ե Աթենասը: Ապա դառնում ե նրան Աֆրոդիտեն: «Վեչ իշխանություն և վոճ ել փառք կտամ քեզ, ով պատանի: բայց կտամ քեզ կանանցից ամենաչքնաղին»: Աֆրոդիտենը խոստումը ամենազուրեկանն իր Պարիսի համար և նա խնձորը տալիս ե նրան: Հենց նույն վարելյանին դիցուհիներն անհայտանում են իրենց թևավոր ձիերի վրա. Աֆրոդիտեն գնում ե ցնծագին, ներքուստ հրճվելով, իսկ Հերան ու Աթենասը՝ դայրացած, թե Պարիսի և թե Աֆրոդիտենը վրա:

Յեզ ահա մի գեղեցիկ որ Աֆրոդիտեն կատարում է իր խոստամը: Նրա ցուցմունքով Պարիսը գնում է Սպարտա՝ Ատրիդես Մենելավոս թագավորի մոտ և գտնում այնտեղ նրա կնոջը՝ Հեղինեյին, վոր ամենաչքնաղ կինն իր ամբողջ Հունաստանում, Մենելայոսը, առանց կասկածներ ունենալու,

հյուրասներ ընդունելություն և ցույց տալիս Պարիսին, ձենց առաջին հայացքից Պարիսը հափշտակվում է Հեղինեյի դեղեց-կությամբ և վորոշում նրան փախցնել Տրոյա, Յեզ մի որ, յերբ Մենելավոսը ճանապարհ և ընկնում Կրետե ներկա լինելու հանդիսավոր տոնախմբության, Աֆրոդիտեյի չարաբաստիկ խոստումը իւ կատար և ածվում, Գրավվելով Պարիսի դեղեցկությամբ, Հեղինեն վերցնում և հետո իր հարուստ ոժիաը և իր սիրեկանի հետ նավով ճանապարհում դեպի Տրոյա: Վրեժինդիր Հերան անմիջապես իմաց և տալիս դեպքի մասսին Մենելավոսին, Պարիսի ապերախտությունը սօսկալի դայրությ և առաջացնում Սպարայի թագավորի սրտում, և նա վճռում և անպայման վրեժինդիր լինել գայթակղիչ պատանուց: Յեզ ահա Մենելավոսը ոգնության և կանչում Մեքենի թագավոր և իր յեղրայր Ազամեմնոնին, Փիլոսի թագավոր Նեստորին, Գումարվում և թագավորների և իշխանների մի մեծ գողով, ուր Նեստորը բացարում և, վոր հանձին Մենելավոսի վիրադրանք և հասցված ամբողջ Հունաստանին, ուստի և զորեղ ու հեռավոր թշնամու դեմ պետք և սպառազինված արշավեն Հունաստանի բոլոր թագավորներն ու իշխանները, զորապետներն ու հերոսները:

Մի աներեակայելի խլրտում ընկալ ամբողջ Հունաստանում, բոլոր թագավորներն ու իշխանները վոտքի կանգնեցին, կռվող զորաբանակը հասցըին «հարյուր հազարի», սպառազինված նավերի թիվը՝ «հազար յերկու հարյուրի» և ապա արշավեցին Տրոյայի վրա: Կանգ առնելով Թենեղոս կղզու մոտ, վոր Տրոյայից բաժանված եր միայն մի ըարակ նեղուցով, թշնամու մոտ վոգիսնոին ու Մենելավոսին պատվիրակ ուղարկեցին՝ յետ պահանջելու Հեղինեյին և հափշտակված դրանձերը:

Յերբ սպարդյուն անցավ պատվիրակների առաջելությունը, այն ժամանակ հունական նավատորմիզը առաջ անցավ և ափ իջեցրեց իր դորաբանակը: Տրոյան պաշար-

ված եր յերեք կողմից, և պաշարումը պիտի տեսեր ամբողջ տարիներ, Քաղաքը պաշարված եր, բայց քաղաքի բարձր պարիսպները այնքան ամբակուռ և անմատչելի եյին, վոր հույները փորձ անգամ չարին գրոհով գրավելու այն։ Ափ քաշեցին իրենց բոլոր նավերը և բանակ դրին նրանց շուրջը, Այն ընդարձակ տարածությունը, վոր ընկած եր աքայեցիների (հույների) և տրոյացիների միջն, ծառայում եր կովի ասպարեզ թշնամու դորախմբերի համար։ Կովում եյին հատհատ, հաճախ նաև զորախմբերի հրամանատարները իրար հետ, վորոնք աչքի եյին ընկնում առհասարակ թե իրենց սպառապինությամբ և թե անհատական կորովով, կովում եյին նաև յերիվարների ու կառքերի վրա նստած։ Գլխավոր դենքը նիզակն եր, նետն ու յերկսայրի սուրբ։ Մարտիկի գլուխը ծածկվում եր սպառավարտով, ձախ ձեռին բըսնում եր վահան, կուրծքը ոլաշտպանում դրահներսվ, Հույները խմբերով դուրս եյին զալիս շրջակայքը, մտնում յերկրի խորքերն ու կողոպտում խաղաղ բնակիչներին։ Մանավանդ հոչակվեց այդ բանում Աքիլլեսը իր միրմիդյան զորախմբով։ Նա կողոպտեց տասնյերկու քաղաք ծովափում, տասնումնեկը՝ յերկրի խորքում, ձեռք ձգելով մեծ ավար, Հունական բազմաթիվ քաջեր հայտնի դարձան այդ տասնամյա պատերազմում։ սակայն հերոսներից ամենամեծը Աքիլլեսն եր։

Այսպես սկսվեց Տրոյայի պատերազմը Հեղինեյի պատճառով, վորի համար «Իլիոնի բարձր պարիսպների տակ այնքան գանայացի (հույն) հերոսներ ընկան»։

Պոեմները իրենց հիմքում անկասկած ունեն պատմական ստույգ անցքեր հեռավոր անցյալից, պարուրված յերեվակայական զրույցներով ու առասպելական պատմություններով։

Ամբողջ իննը աարի տրոյացիք չեյին հանդինում դուրս գալ իրենց պարիսպներից, ամբողջ իննը տարի նրանք վա-

իսնում եյին բաց դաշտի ճակատամարտից, վորովհետև հունական բանակը ուներ մի անվեհեր հերոս, և դա Աքիլլեսն էր իր քաջ զորախմբով, վոր սարսափ ու ան եր տարածում թշնամու շարքերում:

Յեզ ահա պատերազմի տասերորդ տարում, հանկարծ մի ճակատագրական վեճ և տեղի ունենում Աքիլլեսի և Ագամեմնոնի միջև, Վերջինիս հասցրած ծանր վիրավորանքը խորը դայրույթը ու քեն և առաջացնում Աքիլլեսի մեջ, պատճառ դառնում նրա հեռանալուն հունական բանակից, ծանր կորուստներ ու պարտություններ բերելով հույներին:

Տասերորդ տարվա վերջում կատարված դեպքերի — 55 որվա — նկարագիրն և տալիս «Իլիական»ը:

Յերգիք քենը, ով գիտուհի, Պելիստինի Աքիլլեսի,

Դոր բյուր ցավեր աղետավոր բերեց այնքան աքայեցոց:

«Իլիական»ի մեջ բանաստեղծը առանձին պաֆոսով յերգում և Տրոյական պատերազմի գլխավոր հերոսին «արագուոն ու քաջակորով» Աքիլլեսի զայրույթը «արքաների հայր» Ագամեմնոնի դեմ, նրա հետ կապված բազմաթիվ աղետներն ու սարսափները, վոր տեղում եյին հույների գլխին «ամպրոպային Զեսի կամքով»:

Քրիոի ապոլլոնյան քուրմի աղջկան գերի յեր վերցրել արքայապետ Ագամեմնոնը և չեր կամենում վերադարձնել չնայելով վշտահար ծերունու ջերմ թախանձանքին ու բերած թանկագին փրկանքին, Ագամեմնոնի այս վարմունքը զարթացրեց Ասպլոնի «աստվածային բարկությունը», և սա իբրև պատիժ՝ հույն զորքերին մահտարաժամ, ուղարկեց Այն ժամանակ արքայապետ Ագամեմնոնը ստիպված յեղավ վերադարձնել աղջկան իր հորը, բայց դրա փոխարևն խլեց Աքիլլեսին բաժին ընկած ստրկուհի Բրիզեիսին, վոր հմայիչ գեղեցկություն ուներ: Այդ բանից դայրացած Աքիլլեսը հրաժարվում և կոխվերին մասնակցելուց և թողնում հեռա-

նում և թագավորների խորհրդից։ Խորը վիրապորված, նու գնում և ծովի ափը, «դուքս և կանչում ծովի խորքից» իր մորը՝ ծովի ղիցունի Թետիսին և արցունքը աշքին աղերսում վրեմինդիր լինել հպարտ Ազամեմսոնից իրեն հառցրած ծանր վիրավորանքի համար։ Թետիսը միջնորդում և Զևսին պաշտպան կանգնել իր վորդուն, արժանի պատիժ տալ Ազամեմսոնին, պարաւություն տեղալ աքայեցիների դիմին և հաղթանակը շնորհել տրոյացիներին։

Հայր Ազամազդ, յեթե յերբեք անմահների ժողովում
Խոսք ու դործով ոգտել եմ քեզ՝ ուխտա կտուր արտ զուհ...
Ուժ տուր, կորով՝ արովացոց միջն այնքան ժամանուի,
Վոր իմ վորզուն կրկին փառքով կը մեծարեն աքեանց։
«Եղիական», Յերդ առաջին։

«Զևսի կամքով» բախտի անիվը դառնում ե. և հաղթել են սկսում տրոյացիք, հաճախ զրոհի դուրս դալով հունական պաշտող զսրքերի գլուխ, Տեղի յեն ունենում յնըկու կողմերի քաջերի մեջ մենամարտեր։ Մենելավոսը դուեմարտում և Պարիսի հետ, Այաքսը՝ Հեկտորի և այլն Թուլացող ու պարավող Պարիսին ու Հեկտորին «անտեսանելի ազատում են» Աֆրոդիտեն և Ազոլլանը, Կոփը քանի գնում սաստկանում ե. Ասաջ են դաշիս մի շարք քաջամարտիկներ, ինչորեւ յնըկու յեղբայր Աստրիդեսները՝ Ազամեմսոնին, ու Մենելավոսը, յերկու Այաքսները, կատաղի Դիոմենը, Վոդիսեսները, Տիֆաունեմը և շաա ուրիշներ։ Տրոյացիների կադմից կովում են Ենեյասը, Սարուեդոնը, Պարիսը և հերոսաբար մարտնչող Հեկտորը։ Կոփը ծավալվում եւ Ահեղ յերեվույթի վրա անտարեր չեն կարողանում նայել և վոլիմազուսի անմահները, վորոնք կռվի սկզբից բաժանվում են յերկու հակառակ խմբերի Զևսը, Թետիսը, Աֆրոդիտեն, Ազոլլանը, Աստրիդը հովանավորում են տրոյացիներին. իսկ Հերան, Աթենաս-Պալլասը, Պոսեյդոնը՝ հույներին Աստվածաշ-

րից վոմանք հաճախ «անձամբ միջամտում են» կորիմներին. ինչպես, որինակ, Աֆրոդիտին, վոր նույնիսկ վերք և ստանում կատաղի Դիոնիսի հարվածներից Զևսը «միաժամանակ ստիպված ե լինում արդելել աստվածներին»՝ միջամտելու պատերազմական գործերին, վորի հետեանքով պարտվող աքայեցիները փախուստի յեն դիմում մինչև իրենց նախիրը, իսկ նրանց հալածում ե Հնկառը Հույների կործանումը դառնում ե անխուսափելի. բայց գիշերը վրա յե հասնում, և կատաղի կոփը դադար ստանում: Տրոյացիք հըրճվում են րուրուած բազմաթիվ խարույկների շուրջը. իսկ Ագամեմնոնը հուսահատված խորհրդի յե կանչուտ ծերակույտին Նա պատրաստ ե վերադարձնել Բրիոնիսին, միայն բնե Աքիլլեսը կրկին մասնակցի պատերազմին: Պատվիրակներ են ուղարկում վերջինիս մոտ, վորոնք մուայլ դույներով նկարագրում են հույների կացությունը: Աքիլլեսը ցնցվում ե, տիրության քողը պատում և նրա յերեսը, բայց զայրույթը չի անցնում: Նա անդրդվելի յե: Հույները մոտ են վերջնական կորուստի: Վերջապես վորոշում են Աքիլլեսի մոտ ուղարկել նրա մտերիմ ընկեր Պատրոկլեսին, վոր սա աղերսանքով ու թախանձանքով իջեցնի հերոսի բարկությունը, շարժի նրա գութը:

Մինչդեռ այնուկան նստած լատուին՝ կովում եյին սասակապես, Հանդեղ պյուղազն Աքիլլեսին կանդնեց այնժամ Պատրոկլեն: Ձերմ արսամաւց թափում եր Նա իբրև մի խոր աղբյուրից, Վոր բղբում: Եր մինակուակ՝ բարձրակառաց ժայռեցից... «Ո՞գ Աքիլլես, հպորը հունաց, զո՞ւ քաջորի, թաջազարմ, Մի զայրանար, վոր լալիս եմ հունաց ցավերն անհամար. Դանդի ահա մեր յերբեմնի պյուղազները կորովին Նազիկութեան ոյմ պառկած նիզակունաց, նետահար. Արանց վերքին բազմազարման բժիշկներն են առանում հոգ, Ցեզ դու, Աքիլլ, մինչև հիմո քարացան ես, անամեջ... Ընիական, Յերդ տառնվեցերորդ,

Պատրոկլեսի արցունքը շարժում և հերոսի սիրտը, բայց նա չի կարողանում մոռանալ Ազամնանի հասցրած վիրավորանքը, ուստի համաձայնում և տալ Պատրոկլեսին իր զենքերն ու միրմիդյան զինվորներին և ուղարկում կովի: Պատրոկլեսի աքիլեսյան սպառագինությամբ հանդիս գալը սարսափի և տարածում թշնամու բանակում. նրանց թվում ե, թե արշավողը Աքիլեսն է, Պատրոկլեսին հաջողվում և տրոյացիներին հայտնի մինչև իրենց պարիսպները: Սակայն այդ ծանր կույում ինքը ևս ընկնում և Հեկտորի նիւդակի մահարեր հարգածից:

Պատրոկլեսի մահը ցնցում և Աքիլեսին, նա վաղբում և ընկերոջ կորուստը, վորի պատճառը իր հանցավոր անւզործությունն և համարում, նա անիծում և իր զայրույթը, աննշվում ցավից, մռնշում առյօւծի պես, զնանառարած պոկում դիմի փոշոտված մաղերը:

Այսպես խոսեց, և արամության տմազ մի պատեց Աքիլեսն,
Աճյուն մօխիք առաջ ափով և այն ածեց իր զվարին.

Ու մրոտեց շնորհատիկ իր յերեսը մոծիբով

Ու բուրավիտ իր ձորձերից հոտը կարեց նրանով:

Առա ընկապի գետնատարած իր հոսակովն հոկայի

Ու ոկտեց փետել անիտնու փուածը զանգուր մաղերի,

«Դիմական», Յերգ տասնութերորդ:

Այժմ արդեն Աքիլեսի ցավը փոխված և սարսափելի վրեժինդրության, նա անդառնալի կերպով վորոշել և սրախողող անել արոյացիներից շատերին և մանավանդ Հեկտորին, վոր Պատրոկլեսին սպանելուց հետո հանել եր նրա վրայից Աքիլեսի զենքերը: «Ի՞նչու համար եմ այսուհետեւ ապրում», բացականչում և նա և դիմում իր մորը՝ Թետիսին:

«Ել սիրա չունեմ, մայր իմ, առքել, տեսնել այլին արեւ-կյանք Ցեղ վոչ նայել մարդկանց վրա մինչև այնքան ժամանակ,



Արլիկը վայրում և Պատրոկլսի մահը

Ахилл оплакивает смерть Патрокла.

Achilles lamenting for Patroclus' death.



Անդրոմախեն նշմարում և Հեկտորի դիմ

Андромаха и тело Гектора, привязанное к колеснице Ахилла

Andromache and Hector's corpse attached to Achilles' chariot.



Յերբ վոր Հեկտոսը կը տապալվի իմ աշտեյից խոցվելով,
Կը առ Հոգին՝ Պատըոկլեսի վրեմն այսպես լուծվելով:
«Ելիական», Յերդ տանութերորդ:

Յեզ նա դիմում ե կովի դաշտը: Նրան այլմա չի հետաքրքրում Բրիգեիսը: Անհատական բավականության հարցը խապատ մոռանում է: Թետիսի միջամտությամբ Հեփեստոսը Աքիլլեսի համար պատրաստում է նոր զենքեր: Յեզ հերոսը ընկնում է կովի ամենակատաղի տեղը: Աքիլլեսը դարձել է մոնչող առյուծ, վրեժինդրության բոցը այրում ե նրա սիրուրը: Կոփովը սոսկալի չափեր ե ստանում, ամեն ինչ խառնվում է իրար: Զեսը այլևս չի արգելում աստվածներին մրցամտեն: Տրոյայի այս կատաղի պատերազմին մասնակցում և «ամրող արեղերքը»: «Անորինակ ձգտումով աստվածները ցած սրացան կովի դաշտը, կատաղի վայրագությամբ լցրին մարտնչող կողմերի, սրտերը, վորոտաց յերկինքը, ցնցվեց յերկիրը, զարնվեցին աստվածները, մի խնլազար պարի մեջ զարարվեց շրջապատը՝ և սրբազան իլիոնը, և հույների նավատարմը, և Իդա գետը՝ մռայլ ու խավար տարտարոսի հետ», Սոսկալի ջարդ ու կոտորած ե սփռում իր շուրջը Աքիլլեսի յերկստայրի սուրը: Մեռնում են բազմաթիվ տրոյացիք, ընկնում են Պրիամոսի յերկու վորդիքը: Ենեյան ու Հեկտորը հաղիվ են մաղապուրծ լինում ջնորհիվ հովանավորող տափածների, «վորոնք իրենք ևս մտնում են կովող հերոսների շարքերը»: Տրոյացիք դիմում են փախուստի և պատասպարզում իլիոնի պարիսպների մեջ: Աքիլլեսի հանդեպ գուրս ե գալիս միմիայն Հեկտորը: Ականջ չի դնում նա վոչ իր «վշտահար հոր»՝ Պրիամոսի թափանձանքին և վոչ ել «վողբացող կնոջ»՝ Անդրոմաքեյին, վօրոնց նախազգացումը չար բան եր գուշակում Հեկտորին, Դիպչում են իրար յերկու հերոսները՝ Աքիլլեսն ու Հեկտորը: Կատաղի կոփովը վերջանում է «աստվածանման Հեկտորի» ստացած մահացու:

վերքով, հերոսի, վորին «Տրոյայի ղավակները պաշտում եյին վորպես աստծու»։ Արյունաշաղախ և մահամերձ Հեկտորը, ընկած թշնամու վոտների տակ, աղերսում ե զաղանացած Աքիլեսին՝ կեր չդարձնել իր մարմինը շներին, այլ հանձնել տրոյացիներին, վոր պատշաճ կերպով այրեն իրենց հերոսի դիակը։

Այստեղ Հեկտոր վերջին շնչում այսպես խոսեց նվազաձայն։
Ծնողներիզ, օր արեւո՞ւ աղերսում իմ գոռքերդ ընկած,
Մի տանիք ինձ նազերը ձեր և մի ձգիք շներին կեր,
Այլ փրկանց առ ծնողներին վոսիին, ողինձը մեծապահձ,
Տուն ուղարկիր մարմինն իմ, առուր տվանդ իմ ծնողներին,
Վոր արովացից և արովունիք կրակը տան իմ խարույկին։
«Ենիական», Ցերդ քսանյերկորդ։

«Ասավածների զարթեցրած վայրագությունը», վրեժ-իսլամական կրակը Աքիլեսի մեջ՝ չմարեց Հեկտորի մահ-գան տակնապով։ Վայրագության հասած Աքիլեսին Հեկտորի աղերսը ավելի ևս զայրացրեց։

Նոյն խեթ-իներ Աքիլ նրան և վորոտաց ահեղաձայն,
«Մի փաթաթվի, շում, վառներիս, մի ծնողիս սիրույն խնորիւ,
Մարդ չպիտի մաս կենդան, վոր շներից պահն ըս դին։
Թռչունները քեզ ողիտ քցցեն, ու կեր գտանաս դու շներին։
«Ենիական», Ցերդ քսանյերկորդ։

Իր դժբախտ զոհին նա կապում է կառքին և անարգելով դիակը՝ թավալելով քրաշ տալիս Իլիոնի պարիսպների շուրջը և գեղղի հունական բանակատեղը։

Ցեզ Հեկտորի մարմնի վրա խիստ անհաճո բան կատարեց, Մակեց Զեղը յերկու վառքի կոճերիցը մինչ կրունեկներ։
Անցկացրեց նրանց միջով արջառի պինդ պարան-փոկեր,
Կոպեց աղա անվակառքին ու գումը թողեց քաշվի։
Անծագ աղա անվակառքին, զններերն հաղագ փայլակնացայտ,
Պինդ մարակեց նժույգներին, նժույգները զիլ ուղան։

Թաղվում եր դին, փոշու ամսում թռչում եյին մազերը սև,
Դլոյին հագում թաղվում եր վողջ՝ դեղեցիկը այն աննման...
«Ելիական», Յերդ քանյերկորդ:

Ահեղ պատկերը ցնցեց տրոյացիներին: Իր մազերը
միևառդ սպավոր մոր վողըն ու կոծը և վողջ աշխարհն եր
բռնելը, Վշտահար Պրիամոսի հեծկլտանքը «քարենրի դութն
անզամ շարժեց», և ծնողների անասելի վշտին սասնակցում
եյին իրենց լացով ու հասաչանքով բռլոր տրոյացիք.

Տեսավ բարձրից մայրը վորդուն, պատուց քողը եր պայծառ,
Մի կողմ նետեց, վետեց մազերն, ճիշ մեծապես արձակեց.
Հայրը ծերուկ հեկելում եր վողորմազին ձայներով,
Վողջ մազավարդն հասաչում եր, լցնում քաղաքը վորդերով:
Այնուն կական, վայնասուն եր, վերև, ներքե, ամեն անզ,
Կարծես հրակեղ վերջանում եր բազմաբրդյանն Իլիոն:
«Ելիական», Յերդ քանյերկորդ:

Իսկ Աքիլլեսը կատաղորեն շարունակում եր անարդանա-
քի յինթարկել Հեկտորի դիակը:

Ապա Պատրոկլեսի մարմինը թազելու ծեսը նա, Աքիլ-
լեսը, կատարեց մեծ հանդիսավորությամբ՝ «տասնյիրկու-
սպատանի տրոյացիներ նրա թաղման խարույկին այրելով»:

«Անպատմելի յեր ծերունի Պրիամոսի տառապանքը»:
Առօր վիշտը սրտին, նա գալիս և Աքիլլեսի բանակը, բերելով
հետը հարուստ բնծաներ, վոր կարողանա Աքիլլեսից աղեր-
սել վորդու դիակը, Վշտարեկ ծերունին ծնկաչոք թախան-
ձում և և համբաւրում իր վորդուն սպանողի ձեռքը»: Աքիլ-
լեսը զգացվում է և Հեկտորի դիակը հանձնում Պրիամոսին:
Լաց ու աղաղակներով տրոյացիք գինմավորում են հանուն
քաղաքի պաշտպանության հերոսարքը ընկած Հեկտորի
դիակը և ապա հանդիսավոր կատարում դիակիդումը:

Հեկտորի թաղման նկարազրությամբ վերջանում է
պունմը:

Յեթև «Խլիական»ով վերջանում են արոյական մեծ պատերազմի արյան ու սըածության պատկերները, ապա «Վոդիսական»ով սկսվում է «բազմահմուտ» Վոդիսնսի՝ Խլիանի կործանման հնարագետ ու խորամանկ հերոսի՝ արկածալից վերադարձի պատմությունը։ Յեթև «Խլիական»ը յերդում և հունական ֆեռագալիզմի, զինվորական-հողային արիստոկրատիայի ռազմական վոգին ու սիրագործությունները, ապա «Վոդիսական»ը վերարտադրում և նույն արիստօկրատիայի նոր գաղթավայրեր վորոնելու հանդուզն ձեռնարկությունն ու ձգտումը և այդ յերեսույթի հետ կապված ֆանտաստիկ պատահարները։

Հոմերոսի Վոդիսական»ը, վոր ընդդրկում և վերադարձի պատմության միայն քառասուն որը, սկսվում է բանաստեղծի միենույն դիմումով առ մուսան, հայցում և նրա ոգանությունը, վոր կարողանա յերգել Խթակեյի թագավոր Դոդիսնսի փորձություններով լի վերադարձը Տրոյայից հայրենիք։ Ամբողջ տասը տարի մարտնչել ե նա Խլիոնի պարիսպների տակ, իր խորամանկությամբ ու հնարագիտությամբ կարողացել ե վերջնականապես կործանել ու տիրել Խլիոնին, «կատարել ե իր հերոսական պարտքը Վոլիմպոսի անմահների հանդեպ», իսկ այժմ չի կարողանում հանգիստ ու անխոռվ վերադառնալ իր յերկերը՝ Պոսեյդոնի շնորհիվ, Խթակեյում Վոդիսնսին սպասում ե նրա հավատարիմ կինը՝ Պենելոպեն ու Տելեմաք վորդին, վոր արդեն պատանեկության հասակն և թեակսիսելու «Հավատարիմ ու անձնվեր» կնոջ մի իդեալ և Պենելոպեն, վորի շուրջը վիստում են գեղեցիկ կտրիճներ, վատնում Վոդիսնսի ունեցվածքը, խնճույքներ սարքում նրա տանը՝ ցանկանալով ամուսնանալ Պենելոպեյի հետ, թեև սա մերժում ե բոլորին և կսկիծը սրտում ամբողջ քսան տարի սպասում ամռւմնուն Մինչեւ Պոսեյդոնը, ծովի տասվածքը, անթիվ դժբախտություններ ե բերում Վոդիսնսի զլիսին, խորտակելով նրա նավերը, մատնելով ծովի կատաղի ալիք-

ներին. և այդ ամենը այն պատճառով, վոր սա հանդինել եր կուրացնելու Պոլիֆնմ ցիկլոպին, վոր Պոսեյդոնի վորդին եր, վերադարձին Վոդիսեաը ընկնում և Ոգիդի կոչված կղղին, ուր «բոլոր դիցուհիների դիցուհին»՝ «չքնաղ Կալիպսեն» իր հմայքի ուշցով պահում և Վոդիսեաին իր խորունկ կացարանում, նրան իր մշտական ամուսինը դարձնելու հույսը փայտակերպի:

Վոդիսեաի ռոջախի հովանավորն և Աթենաս - Պալլասը, վորը խսրհուրդ և տալիս Տելեմաքին ճանապարհ ընկնել և հունական քաղաքներում վորոնի Վոդիսեաին, Տելեմաքը այցելում և Փիլոսի թագավոր ծերունի Նեստորին՝ Տրոյական պատնըազմի հերսոնին, վորից իմանում և, վոր Վոդիսեաը հայրենիքի կարուտը սրտում դառն արցունք և թափում կալիպսեյի Շլուտավոր ոթևանում։ Ապա անցնում և Սպարտա՝ Մենելազոսի մոտ, վոր Իլիոնի անկումից հետո, նույնպես հաջող վերադարձել եր տուն իր Հեղինեյի հետ միասին։ Այստեղ դուշակ Պրսթեսուը պատմում և Տրոյայի պատերազմի հերոսների մասին, թե ինչպես նրանցից շատերը դժբախտ վախճան են ունեցել, մի քանիսը նույնիսկ առւն վերադառնարուց հետո, ինչպես, որինակ, Այաքսը, վորին կլանել և լայներախ ծովը, կամ Ադամեմնունը, վորին դավաճանորեն սպանել և նրա կինը՝ Կիթունաւարան իր սիրեկանի աջակցությամբ։ Վերջապես Կալիպսեն, աստվածների կամքով, թողնում և Վոդիսեաին վերադառնալ տուն, սակայն Պոսեյդոնը տակն ու վրա յե անում նրա նավը, ամբողջ յերեք որ ու դիշեր թողնելով նրան ծովի ալիքների հետ կյանքի և մահվան կուիլ մղնլու։ Աթենասն և, վոր այս անգամ ել փրկում և Վոդիսեաին և ձգում նրան մի անծանոթ յերկիր, ուր իշխում եր Թեաքրիսայի թագավոր Ալքինոսը։

Հոգնած, տանջված Վոդիսեաը գետնատարած քնած և ծովի ասիին, յերը նրան առաջին անգամ պատահում և Ալքինոսի աղջիկը՝ Նավակիքին։ Վոդիսեաին տանում և նա պա-

լատ խնջույքի, Հենց այս խնջույքումն եւ, վոր սրտառում յերգում եր Դեմոգոկը Տրոյական պատերազմի հերոսների մասին, վորոնց թվում և Վոդիսեսին: Լսելով իր մասին յերգը, նա չի կարողանում զապել արցունքները: Դեմոգոկը յերգում եր նաև այն, թե ինչպես Աքիլեսի մահից հետո՝ Վոդիսեսի խորհրդով հույները պարտված են ձևանում և շինելով փայտն մի ահաղին ձի, զապտնի տեղավորում նրա մեջ Վոդիսեսին մի խումբ զինվորների հետ, իսկ իրենք հեռանում Իլիոնի պարիսպներից: Տրոյացիք փայտն ձին պարիսպներից ներս են քաշում, առանց իմանալու նրա պարունակությունը, վճռում են թողնել այն Իլիոնի մեջ իրք և նշան հաշտության, Գրշերը գուրս են գալիս հույն զինվորները փայտաշեն ձիուց, բաց են անում քաղաքի դռները, վորից ներս են խուժում հույներն ու վներջնականապես կործանում Իլիոնը: Դեմոգոկը յերգում եր Տրոյայի անկումը, իսկ Վոդիսեսը զգացված արցունք եր թափում շարունակ: Ակքինոսը նկատում ե այդ և հարցնում ողի ե ինքը: Այն ժամանակ միայն Վոդիսեսը առանձին հանդիսավորությամբ պատասխանում ե.

Վոդիսեսն եմ ես Հայերայտն, աշխարհոչակ, խորագետ,
Փառքս յերկինքն ե, իթակ յերկիրս արևալույս և համեստ:
Անդ ներկա լյառն անտառախիտ, զեղաշխտակ, բարձրածայր,
Շուրջը նրա պար են բանել մերձ կղղիներ անհամար:
Քան հայրենիքն անուշ ի՞նչ բան...

Վոդիսեսն, Յերդ իններոց:

Ապա Վոդիսեսը իր ուղեկիցներով ընկնում ե «Ըլթուֆազոսների զարմանալի յերկիրը», ուր մարդիկ մեղրահամ լոթոս են հավաքում, վորից ուտողը մոռանում ե անցյալը, անվերջ ճաշակելով այն, մոռացության ե տալիս և մերձավորներին, և հայրենիքը: Մեծ դժվարությամբ նա կարողանում է զուրս հանել այդ յերկիրը իր ուղեկիցներին: Նա կապու-

տում և նրանց նավերի կայմին, վոր լոթոս այլնս չուտեն, թեև նրանք աղեբսում ու լալիս եյին:

Նույն ուղեկիցների հետ միասին նա ընկնում և ցիկլոպ ների, միակնանի հսկաների թագավորությունը, մտնում և Պոլիփեմ մարդակերի քարայրը, Վողիսևսին անդառնալի կուրսուտ եր՝ սպասում, Բայց իզուր չեյին հույները «հնարագետ» և աներկյուղը անվանել նրանու Զոհ տալով իր ընկերուներից մի քանիսին, նա հարըեցնում և Պոլիփեմին, կուրացնում, ապա աղատում իրեն ու ընկերներին: Վողիսևսն ընկնում և քամիների աստված Եոլի յերկիրը: Եոլը տալիս և նրան ծովով անփորձ գնալու միջոց. տալիս և մի լցված պարկ, վորի մեջ կապված եյին բոլոր քամիների հանգույցները, ճանապարհին ուղեկիցները կարծելով թե պարկի մեջ վոսկի և արծաթ կա, Վողիսևսի քնած ժամանակ բաց են տնում պարկի բերանը, և հանկարծ ծովը լցվում և քամով ու փոթորկով, ու նրանք նորից տարվում են հայրենի ափերից հեռաւ Ալիքները դուրս են շպրտում նրանց նավը Կիրւեյի կղզին, վորի կախարդ դիցուհին իր հմայքի ույժով մի տմբողջ տարի պահում է Վողիսևսին իր մոտ իրքեւ ամուսին: Վերջինս այդտեղից հեռանում է միայն այն ժամանակ, յերբ ընկերները հիշեցնում են նրան իր տունն ու ընտանիքը և ստիպում վերապառնալ հայրենիք, Կիրկեյի խորհրդով Վողիսևսը իջնում է Հաղեսի ստորերկրյա թագավորությունը, ուր գուշակ Թերեղիսը հայտնում է հոմանիների մասին, վորոնք շրջապատել են Պենելոպեյին ու կամենում են ամուսնացնել նրան իրենց ընկերներից մեկի հետ: Գուշակը հայտնում է Վողիսևսի ճակատագրի, ապա սպասվող աղետների, փորձանքների մասին և տալիս և համապատասխան խորհուրդներ: Այստեղ նա իմանում է նաև Ագամեմնոնի վողբերգական ժահվան պատմությունը, խոսում Աքիլեսի ստվերի հետ:

Վոդիսեսը անցնում է սիրենների կղզու մատով, վորոնց յերգի հմայքը կախարդիչ եր բոլոր անցորդների համար և վորոնց լսողությունը թովելով՝ գամում եր կղզու ժայռերին, Բայց նրան անպատճիժ աջողվում է լսել սիրենների յերգը, Այս փորձությունից հետո Վոդիսեսն ընկնում է մի առավել մեծ փորձանքի մեջ. Սցիլլա և Խարիբդա ծովի հրեշավոր ալիքների միջով պիտի անցներ նրա նավակը, Այդ հրեշներին կուլ են գնում նրա բոլոր ուղեկիցները, ազատվում և միայն ինքը Վոդիսեսը:

Այսպիս և պատմում Վոդիսեսը իր վերադարձը Ալքինոսին, համեմելով այն ֆանտաստիկ պատկերներով: Իր թափառությունը այս պատմությունը առանձին հետաքրքրություն և խղճահարություն և առաջացնում ունկնդիրների մեջ, վորից հետո Ալքինոսը հրամայում է փորձված նավաստիներով ճանապարհ դնել նրան Խթակե, Վերջապիս յերկար թափառելուց հետո հասնում է հայրենիք. բայց այստեղ նրան կռիվ ու պայքար և սպասում հոմանիների հետ, վորոնք լրբարար վատնում եյին նրա հարստությունը, հենց նրա տան մեջ խնճույքներ սարքելով ու Պենելոպեյին իրենցից մեկի տողագա կինը համարելով: Ուստի նա հագնում է մուրացիկի զգեստ և նախ գնում իր հավատարիմ հովիվ Յեվմենոսի մոտ ու ծալտյալ ապրում մի քանի որ, դիտելով աան ներքին անցուդարձը, Տելեմաքի հետ կազմում են միասին գործելու ծրագիր և գալիս են պալատ հոմանիների լրբությանը զերջ տալու համար, Վոդիսեսը լարում է իր հին ծանր աղեղը և մեկ-մեկ սպանում նրանց: Թաղաքի յերիտասարդ ազնվականների սպանությունը դայրույթ և ապստամբություն և առաջացնում սպանվածների աղղականների մեջ, բայց Վոդիսեսը նրանց ևս հաղթում է, ապա հաշտվում մնացածների հետ, ու նորից կյանքը մանում է իր խաղաղ հունի մեջ:

Մրանով վերջանում է «Վոդիսեսկան»:

Այսպես՝ հոմերական գյուցազներգության պարզ, մանկության միամիտ, պատկերավոր արտահայտությունների հե-

տեսը թաղնված և մի ամբողջ իրականություն իր բարդ յերեռույթներով։ Հերոսական շրջանը հանձին «Խլիական»ի և «Վ.ողիսական»ի վերաբռնադրված և արվեստի բարձր միջոցներով։ Վառ, փարթամ, ցայտուն պատկերներով իրար հաջորդում են յերեռույթներ տնտեսական և սոցիալական կյանքի. հաջորդում են քաղաքական խոշոր անցքեր, հանդես են բերվում անորինակ յեռանդով սեփականություն կուտակող արխտոկրատ գասակարգի կենդանի տիպարներ, վորոնք ասպարեզ են իջել պատմության անիվը գլորելու, իսկ խանգարող ույժերին անիվի տակը տրորելու համար։

Հոմերոսի դյուցազներգությունը հնարավորությունն և տալիս ընդհանուր դադարիար կազմելու պատմական այն շրջանի մասին, վոր գոյություն և ունեցել մեղանից 27—28 դար առաջ։

Հերոսական շրջանում, ըստ այս պոեմների, գործածական եյին յերկաթե բարդ գործիքներ, վորոնցով մշակվում եյին հողատիրական արխտոկրատիայի ընդարձակ դաշտավայրերը, կտրատվում եյին անտառներ։ Մետաղի արգյունարերությունը հասցըրած եր մեծ վարպետության. բագական և կարդալ պոեմում Աքիլլեսի համար Հեփեստոսի պատրաստած դենքերի մասին, վորպեսզի նկատենք վոչ միայն արհեստավորի ձեռքի վարպետությունը, այլ և բարձր արշեատի տարրեր—զինքերի վրա փորագրված զարդանկարները։ Յնթե հին արհեստան ու արվեստը հասած չինեյին ծաղկման վորոշ մակարդակի, Հոմերոսի պոեմը չեր ունենա Հեփեստոսի վարպետության նկարագիրը, ծարտարապետությունը նույնպես հասել եր հայտնի զարդացման։ Ալքինոս թագավորի պալատի ներքինը և արտաքինը ապացույց ե, վոր թանկարդին մետաղներից կերտվածքներ են յեղել այնաեղ, ինչպես վոսկեձույլ ջահեր պատանու անդրիով, վոսկեձույլ կենալատ գուներ, արծաթ շրջանակներով կահույք, վոսկեձույլ շներ շենքին կպած և այլն։ Ֆեոդալական Հունաստանի

բնորոշ պատկերներից և աշտարակներով, ատամնավոր պարիսպներով քաղաքների գոյությունը, ինչպես Խլիոնը, Նավերի, կառքերի, սայլերի և ուրիշ բազմաթիվ իրերի գոյությունը ինքնին ապացույց ե, վոր կուլտուրական համեմատարար բարձր մակարդակի հասած են յեղել հույները հոմերական շրջանում։ Այս ամենի հետ միասին պետք է հիշատակել նաև հօմերական եպոսի գոյությունը, վորպես բարձր նվաճում գեղարվեստի ասպարեզում։

Թվելով այս ամենը, Ենգելսը ավելացնում է. «Ահա ընդհանուր զծերով այն ժառանգությունը, վոր բարբարոսական շրջանի հույները բներեցին քաղաքակրթությանը» («Բնանիմի, մասնաւոր սեփականուրյան և պետուրյան ծագումը»)։

Տնտեսական կյանքի առաջնակարգ դրծոններից են յեղել անամնապահությունը և յերկրագործությունը։ Հողային ընդարձակ տարածություններ և հսկայական հոտեր կենտրոնացած եյին զինվորական-հողատիրական արխտոկրատիայի ձեռքին, Հույները ապրում եյին պարսպապատքագներում, վորտեղ առանձնապես աչքի յեր ընկնում տնտեսական անհավասարությունը տիրապետող փոքրամասնության և ազգաբնակության խոշոր մեծամասնության միջև։ Բաժանված մի շարք ֆեոդոլական միությունների, հունական պետությունները անընդհատ պատերազմի մեջ եյին միմյանց հետ՝ տերրիտորիայի և հարուստ ավարի համար։ Բացարիկ գեղքերում աջողվում եր նրանց միանալ արտաքին թշնամու դեմ։ «Խլիական»ից շատ ավելի ուշ կազմված Շվեյցարիան մեջ հողագործությունը նույնպես առաջնակարգ դրծոն է, բայց արդեն նշանավում է առևտորի առաջացման փաստը, նոր յերկրներ փնտրելու, նոր հարաբերություններ մշակելու անհրաժեշտությունը, Սակայն բարբարոսական շրջանին հատուկ միջոցներով,

Հերոսական շրջանում, ասում ե Ենգելսը, թե ազնտ ստըր-իությունը սահմանափակվում եր պատերազմական գերինե-րով, սակայն ներքին ստըրկության առաջացման բոլոր նշան-ները արդեն կային: Յեղերի միջն տեղի ունեցող առաջիւան պատերազմները այժմ վերածվել եյին ավագակային հարձա-կումների ցամաքի և ծովի վրա՝ անասուն, սարուկներ, դանձ, դանաշան ավար հափշտակելու համար: Յեզ սա համար-վում եր որինական ճանապարհով ձեռք բերված սեփակա-նություն (Ենգելս. «Բնանիմի, մասնավոր սեփականուրյան և պիտուրյան ծագումը»):

Վերջինի փայլուն ապացույցը տալիս ե «Առջիսական»ը:

Վողիսնաը, այդ «բազմահմուտ ու խորագետ մարդը», ընդունակ և դիտելու անծանոթ ժողովուրդների լյանը, հետաքրքրվելու նրանց յերկրի տնտեսական հնարավորու-թյուններով, վերագարձին, Խիոննը կործանելուց հետո, նա կանգ և առնում ցիկլոպների կղզում՝ տեսնելու համար, թե «Ի՞նչ ժողովուրդ և այնտեղ ապրում. վայրենի՛ յե արդյոք կամ կատաղի՛ իր բնույթով, թե դիտե, ինչ և ճշմարտությունն ու հագատը, սիրալի՛ր և, աստվածավախ, հյուրընկմլչ: Նրա աչքից չեն վրիսում անծանոթ յերկրի բնական հարստու-թյունները, ափերի հարմարությունը նավամատույցի համար: Յեզ դիտելուց հետո նա զտնում է, վոր կղզին ընդունակ և բացնելու ամեն բան ժամանակին և տալ առատ բերք կորե-կի, խաղողի և այն: Վողիսնաը սակայն առանց նպատակի չե, վոր կանգ և առել կղզում. ըստ իր սովորության, (ինչ-պես և բոլոր հույն իշխանների սովորության) ամենից առաջ նա կամենում է իժանալ՝ կարսղ և վորեն «նվեր», «պարգև» ստանալ այնաեղ. իսկ յեթե վոչ, չկամ արդյոք հարմարու-թյուն բացարձակ թալան կազմակերպելու:

Նոր յերկրներ փնտրող արկածախնդիր հերոսի համար արհամարհելի չեն նույն իսկ ծովահենությամբ զրադվելը: «Հարստություն կուտակելու» տեսչը թույլ եր տալիս մի-

ջոցների մեջ խարություն չդնել Վոդիսևսը, «արևային իթակեյի քաջահմուտ թագավորը», պարծանքով պատմում ե, թե ինչպես ինքն ու իր ընկերները արշավանք են գործել իսմար քաղաքի վրա, սպանել կողոպանել են ընակլիչներին, իսկ «Ապոլոնի մեծ քուրմը, Ելանթեյի վարդի Մարոնը, նույն իսմարում բնակվող», իր գլուխը աղատել և հարուտ փըրկանք տալով միայն այդ արիստոկրատ ավազակներին. «Իրըն նշան յերախտագիտության—ասում ե Վոդիսևսը,—մենք նրան և իր կնոջն ու վորդուն խնայեցինք, հարդելով նրա կոչումը, իսկ նա մեզ նվիրաբերեց թանկագին գինի. Խնձ վարձատրեց առանձին—տվեց յոթն ամրող տաղանդ բարձրությակ վոսկի»:

Պարզ տվեց բարձրորակ յաթը տաղանդ ձույլ վոսկի,
Տվեց բաժակ համակ արծաթ և տասներկու սափորով
Քաղցր հբաշեկ և անուշակ տնմահական թանկ գինի,
«Վոդիսական», ներդ իններորդ:

Մի այլ տեղ «Վոդիսական»ի մեջ նույն քաջահմուտ հերոսը կրեսացի իշխանի անունից պատմում ե, թե ինչպես ինքը քաջների խմբով «իննը անգամ արշավել ե արագաւուաց նազով ոտարերկոյա մարդկանց վրա, և աջողակ ե յեղել զործը. ավարի ընտիր մասը ինքն ե վերցրել, ոյնակով ել մեծ բաժին ե ընկել իրեն. այսպես մեծացնելով հարստությունը՝ նա դարձել ե ամենահարդիլի և զորեղ մարդը Կրետե կղզու բոլոր ժողովուրդների մեջ» («Վոդիսական», Յերդ տասնչորրդորդ):

Ցես ստ համարվում եր որինական ճանապարհով մեռք ըերված սեփականություն (Ենդելս):

«Ելիսական»ի զլխավոր հերոսը, քաջակորով Աթիլեսը նույնպես հավատացած ե, վոր յեթե զանձ և անտառւն չե աջողզում գտնել կամ առնել, ապա կարելի յե հավշտակել, «Ամեն ինչ կարելի յե կտնել կամ փախցնել,—ասում ե նա.

— պղնձել յեռատանիներ, պարարտ վոչխարներ և յեզներ, այլ վոսկերաշ նժույդիներ» («Իլիական», Յերգ իններորդ):

Իր նույնանման սխրազործությունների մասին պատմում և նաև «անվեհներ ձիավար» Նեստորը, հոմերական նշանավոր արխատոկրատներից մեկը, «Սպանելով Խտիմոնեռոսին, (Նեստորի յեղները փախցնող այդ հռչակավոր ելեյացուն), — պարծանքով պատմում են նա, — յես բազմաթիվ անասուն քշեցի իրու փոխատուցում... Շատ ավար հավաքեցինք մենք այն ժամանակ թշնամու հովտում, Յեղների հիսուն հաս, այդքան ել խողի յերամակ, այդքան ել վոչխարի և այծի հոտ՝ լայն արտաներում արածող, և հարյուր հիսուն արագավաղ մատակ ձիաներ, վորոնց հետեւց վաղում եյին հրանց մտուեկները: Ամբողջ գիշեր քշում եյինք նրանց դեմի Փիլոս քաղաքը («Իլիական», Յերգ տասնմեկերորդ):

Հողադործական մշակույթի դարգացմանը դուգընթաց ավելի մեծ նշանակություն եր ստանում հողային սեփակառնությունը, վորի հետևանքով զինվորական արխատոկրատիան հետզհետեւ գառնում եր հողատիրական արխատոկրատիա: Այդպիսիսի, այդ արխատոկրատիան իր մեջ միացնում եր անանատական ույժը և քաղաքական ու զինվորական իշխանությունը: Հողատեր արխատոկրատիայի արտերում աշխատում եյին ստրուկներն ու այն աղքատ զյուզացիները, վորոնք պարտական եյին իրենց աշխատանքի զգալի բաժինը բնութեածատերերին:

Արխատոկրատիան աեր եր հսկայական հոտերի՝ մանր ու խոշոր անասունների: Վերջինս իրեւ ավար մեծ արժեք ուներ: «Իլիական»ում ավելի մեծ տեղ ե բռնում անասնապահությունը, համարվում տնտեսության հիմնաքարը՝ հոգագործությանը հավասար, վորով միայն պիտի բացատրել թագավորների և նրանց վորզիների հովիսի լինելու փաստը (Պրիամոս թագավորի վորզին՝ Պարիսը հովիսի եր, Վոդիսեսի հայրը հողադործ, իսկ ինքը լաստանայ շինող և այլն):

Հոմերական նախնական շրջանում գեռևս աշխատանքը չեր արհամարհված տիրող դասակարգի կողմից։ Դա տոհմային կյանքի մնացորդներն եյին։ Պոեմները ակնարկներ ունեն այն մասին, թե ինչպես թագավորները, ցեղապետների անմիջական հաջորդները, աշխատել են ստրուկների և ճորտերի հետ միասին. միասին են մի սեղան նսաել և այլն։ Թագավորները կամ ցեղապետները գիտեյին և լավ կարասիք շինել, և զենք, և նավ, իսկ նրանց կանայք՝ գործվածքներ։

Հերոսական շրջանում, ըստ պոեմների, թույլ եր արհեստների զարդացումը, մասնագիտացում գոյություն չուներ։ Վարպետը արհեստանոց չուներ, նա ինքն եր գնում պատվեր տվողի մոտ, նյութեղենը ստանում և շինում ամեն բան։ Հյումնը տուն եր շինում իր բոլոր մասերով, փայտ եր կտրում անտառում, տուն բերում, կառուցում, նույն իսկ զարդարանք դնում։ Նա յեր արորի և նավի վարպետը նույն ժամենագիտի» վիճակումն եյին մյուս արհեստագորները, նաև այլ պրոֆեսիայի մարդիկ, ինչպես յերգիչը, պարողը, բժիշկը, գուշակը և այլն։

Տնտեսական-քաղաքական և զինվորական ույժը իր մեջ միացնող զինվորական-հողատիրական արխատոկրատիան պատմական այս եպօխայի յերկրորդ կիսում իր արգեն արտօնյալ դրությամբ, խստորեն հակադրում և իրեն ժողովրդական մասսաներին, համարելով նրանց ստոր, ցածր, վատ, վւատագույն (kakoj). իսկ իրենց-ինչպես բոլոր ժումանակների արտօնյալ դասակարգերը—ընտրյալ, աղնիվ, աղնվական, աղնվագույն (aristoj, agatoj), Աշխարհիկ իշխանությանը նրանք միացնում եյին հոգևոր իշխանությունը, համարելով իրենց աստվածներից սերված։ Հասկանալի յե, վոր այս պայմաններում ժողովրդական ներկայացուցիչների ժողովը, վոր ժառանգություն եր մնացել ցեղապետության շրջանից, առանձին նշանակություն ունենալ այլևս չեր կարող։

Տիրում եյին ընական անտեսության հատուկ փոխառարարությունները։ Հարստությունը, շուքը, փառքը կենտրոնացած եր արիստոկրատիայի պալատներում։ Քաղաքներու ու զյուղեր պատկանում եյին նրանց, նրանք կարող եյին բաժանել այն կամ նվերել, ինչպես, որինակ, Աղամեմնոնը, վոր Աքիլլեսին յոթ քաղաք եր նվերում, այդիներով, արոտատեղիներով («Իլիական», Յերգ իններորդ)։ Պալատներում աշխատում եյին տասնյակներով ստրկուհիներ, վորոնք կտորեղենն եյին գործում, կորնկ ծեծում ու տնային այլ տեսակի աշխատանք կատարում։ Խակ զուրաը, տնտեսության մեջ, հարստության ամենամեծ և անմիջական աղբյուրը, վոր հոսում եր դեպի պալատը, ստրուկների և ճորտերի աշխատանքն եր։

Յեզ թագավորների ու իշխանների պալատներում տիրում եր ճոխություն, խրախնանք, վայելք, իզուր չեր Տեղեմաքը, Վոդիսեսի՝ տղան, գործնական կարծիք հայտնում թագավորի վիճակի մասին, «Յեթե ինձ Զեսը իշխանություն տա, — ասում ե Տեղեմաքը, — յես հանույթով կընդունեմ։ Վատ բան չե թագավոր լինելը։ Նրա տանը շատ շուտ և հարստություն դիզվում։ («Վոդիսեսիան», Յերգ առաջին)։

Չնայած իր գասակարգային պատկանելությանը, հանճարեղ բանաստեղծի ստեղծագործական լայն թափը հնարագորություն և տալիս ցայտուն կերպով պատկերացնելու այն հասարակական բուրգի դոյցությունը, վորի պատվանդանը գորշ ժողովրդական զանգվածն ե, իսկ գագաթը՝ հանգիստ ու անխոռով վայելող արտոնյալ փոքրամասնությունը։ Ահա մեր առաջ հետանկարվում և հոմերական բովանդակ իրականությունը, վորի տիրական տարրերն են թագավորներն ու իշխանները, Ֆեոդալական արիստոկրատիան, Ֆիդիքական կաղմակերպված ույժի ներկայացուցիչները։ Թագավորն ու իշխանը իրենց յերկրի բացարձակ տերերն են։ Մեր առաջն և հունական աշխարհի տերերի ամբողջ գալլերեան։ Ազա-

մենառնը Միքենից, Մենելավոսը Սպարտայից, Նեստորը Փիուլոսից, Վոդիսենը Իթակեյից, Ալքինոսը Թեաքիայից, Դիոնիսը Արգոսից և այլն, Խնչպես մինչև մեր ժամանակների միապետությունները, հնագույն դարավանդների և նգնել են ապացուցել, վոր թագավորների և քրմապետների գերիշխանությունը բղիում ե ուղղակի աստծուց, վոր քրմապետը աստվածների եյակ ե, Աքիլեսը Թեակա աստվածուհու վորդին ե, Մենելավոսի ու Ազամեմնոնի ծագումը ուղղակի Զեսից ե, ուրիմ և ղերիշխողի աստվածային ծագումը չի կարող թույլ տալ դժգոհության նշույլ անդամ ունենալու նրա կամքի արտահայտության դեմ, վոր թագավորը հայր ե, ժողովուրդը նրա դավակը, քրմապետը աստծու փոխանորդն ե, ժողովուրդը նրա ստորադրյալ հոտը:

3:

ՊՈԵՄԱՆԵՐԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ— ԱՔԻԼԼԵՍ ՀԵԿՏՈՐ ՎՈՂԴՈՍԵՎՍ ՊԵՆԵԼՈՊԵ

Ամիլիեսը Հոմերոսի սիրած ու պաշտամ հերոսն է, մի հարսս, զոր հետապա զարերի ընթացքում իր տրամադրությաւններով ու պրաքինություններով հույների իդեալն ե յեղել, Աքիլլեսի պատկերը բանաստեղծը կնրտել է, ինչպիս տեսանք, տիրող դաստիարգից, սակայն իր սանդառործող զրծինայի մեղմացրել ու վորոշ ներդաշնակություն և հաղորդել հերոսի կերպարանքին, Հոմերոսը նրան տվել և մենություն, անդուսով կրքերի հետ հաղորդել և քնքշություն ու դպացմանքների նրբություն, Ռազմական արխստոկրատիայի ընչափաղց տենչերի կողքին դրել և ընդհանուր շահերի գիտակցություն։ Աքիլլեսը արխստոկրատ է, բայց վոչ ոժավոծ վերջինիս բոլոր բացասական գծերով։ Ընհակառակը՝ բանաստեղծը մարմնացրել և նրա մեջ այն ամենը, ինչ հաստուել և ժամանակի ազնիվ ու պատվասեր «ասպետներին»— հերոսներին։ Ճիշտ է, Աքիլլեսը նույնպես թալանում ու ավերում է, ինչպես բոլոր հերոսները, բայց նա չի յեկել իլիոնի պարիսպների մոտ հատկապես պատերազմելու նոպատակով։ Նու յեկել և «ընդհանուր շահեր» պաշտպանելու, Նա համարված է, զոր կռիվը ոքհասական է, զոր ինքը անպայ-

ման մեռնելու յեւ «Ըստհամուր շահը» սախապել և նրան թողանել իր խաղաղ ու յերջանիկ կյանքը, զոհել ամեն ինչ և կուրուստի մատնվելու գիտակցությամբ ու իրրե մի իդեալական ասպետ, մտել պայքարի մեջ իր յերկրի թշնամիների հետ։ «Իմ անձի առաջ վոչչոզ ել հանցավոր չեն տրոյացիք, — ասում են նա իր հակառակորդին՝ իշխանությունից կուրացած Ազամեմնոնին։ — վոչ մնկն ել նրանցից վճչ իմ ձիերն են հափշտակել, վճչ տավարը տարել և վճչ ել արաս և տրուրել, Մեղ բաժանում են անտառապատ լեռներն ու ծովի աղմկալից ալլօքները։ Աքիլեսը գիտակցում են, վոր ինքը տրոյացիների ամենազորեղ հակառակորդն են, վոր իրենից սարօսափում են բոլորը, բայց այդ գիտակցությունը չի թույլ տալիս նրան գոռողանալ, գառնալ բոնակալ և շավարի մեծ մասը սեփականացնելու, իր պահանջների մեջ նա համեստ եւ Յեվ յեթե նա ստիպված է պատերազմի տասերորդ տարին թողնել կոմի դաշտն ու առանձնանալ, չլսելով հայրենակիցների աղերսանքներին, ուշադրության չառնելով նրանց չաբաշար պարտությունը, դրա պատճառը, ըստ բանաստեղծի, արքաների պետ Ազամեմնոնի հասցրած ծանր գիրավորանքն եւ Աքիլեսի զայրույթը սահման չունի վոչ թե նրա համար վոր Ազամեմնոնը զրկեց նրան ավարի ու մասից, այն և գեղեցիկ ստրկուհի Բրիդեխիսից, այլ այն վիրավորանքն ու անպատճությունը, վոր հասցրեց բոլոր աքայնցիների։ — հույների առջև նրան ժողովուրդների հայրե դռուղ Ազամեմնոնը։ Խոլված հերոսը գնում և ծովափ և շալիքներից դուրս և կանչում իր գիցուհի մորը, վոր ոս վորդու սրտի հսկիծը վոլիմպոս հասցնի։ Աքիլեսը իր գանգատով հիշեցնում և մարդկության յանկությունը, յերբ հերոսները զառնալու արամադրություների խաղալիք, կարող ելին մանկան ողես լաց լինել, Մանսավանդ այն Աքիլեսը, վոր Տրոյայում հոչակվեց իր ասպատակություններով ու անխնա մարդասպանությամբ, ինչու բոլոր հունական

քաջերը, Ահա թե ինչպես և ներկայացնում նրան բանաստեղծը:

Բայց Աքիլլես արտասվելով դատվեց նստեց միայնակ Շեկ մով Նավի Ընդմանկ ափին Նայում եր նա շարունակ. Այնուհետ հեռու. իր համարդից իրա մորն եր աղերսում. ոԱլազ, մայրիկ, վոր վաղածեռ ծնար դռ ինձ աշխարհում, Գեթ վոլիմազյան Արամադող շուշ պարզեցր արժան ինձ. Ահա դուռդ Աղամաննոն ինձ անարգեց, անպատճից, ելեց ինձնից մրցանակը, արագ իրն կողովուստ:

«Ի՞նձական», Յեղի առաջին.

Իր զգացմունքների բռնկման ու արամադրությունների բարձրացման ժամանակ Աքիլլեսն անդուսպ եւ Յեթե նա լցված և զայրութափ, տպա այդ զայրութը անորինակ արտահայտություն և ստանում թե հույն Աղամեննոնի և թե տրոյացի Հեկտորի վերաբերմամբ հավասարապես Յեթե համակված և ընկերական սէրո բարձր զգացմունքով, տպա միենաւյն ուժգնությամբ կարտահայտվի այն, ինչպես Պատրուկիսի նկատմամբ, Յեղ յեթե Աքիլլեսի զայրութը Աղամեննոնի դեմ լիներ արգասիք հոմերական արիստոկրատիայի մի սովորական ընչափաղցության, խլված մի ստըրկուհու գոխարն յոթի առաջարկությունը Աղամեննոնի կողմից, նա չեր մերժի արհամարհանքով: Նա խստորեն մերժում և ընկունել բերված ընծաները, հրաժարվում և նույնիսկ Աղամեննոնի աղջկանից՝ «յեթե նույնիսկ իր գեղեցկությամբ նու հավասար լինի վոսկյա Աֆրոդիտեյին, իր գործվածքներում՝ լուսադեմ Աքենասին»: Այդպիս և նա պատասխանում Աղամեննոնի պատգամավորներին, Այդ զգացմունքը այնքան և խօսանում նրա մեջ, վոր մոռացած արտաքին բոլոր հանգամանքները, պատրաստ և հետանալ Տրոյայի ափերից: Բայց բավական և մի վաստ, մի վեպք, վոր Աքիլլեսի արամադրությունը հիմն ի վեր վոխովի, իր սիրելի Պատրուկիսը սպանվի և Տրոյայի հերոսի — Հեկտորի ձեռքով: Այդ

բավական ե, վոր նա կորցնի իր հոգեկան հավասարակրտությունը, Ընկերոջ մահվան լուրը խոր կսկիծ և առաջացնում նրա մեջ, նա դառնորին վողբում և նրա մահը, մոընչում ե, պոկում մազերը, ընկերական սերը արտահայտում բուռն, փոթորկալից ուժգնությամբ, մթնում և նրա աշքին ցերեկվա լույսը, և մերձավորի մահը մի նոր ցասում և դարձեցնում նրա մեջ, Վրեժինդրությամբ լցված նա նետվում և կովի դաշտը Այս, ինչ չկարողացավ անել պարտվող Ազամնմնոնը իր բազմաթիվ ընծաներով ու մեղայականով, չկարողացան անել չարաչար պարտվող հույները իրենց վողբով, արակ սիրելի ընկերոջ մահը, Աքիլեսը մի ակնթարթում միանում և հունական մարտիկներին. Նրան այլևս չեն հետաքրքրում վճչ Ազամնմնոնի արդարացումները, վճչ ընծաները և վճչ ել արդեն վերապարճած Բրեզեխաց Հաշիվները հարթված են. հերոսի զայրույթը այժմ արտահայտվում և միմիայն սոսկալի վրեժինդրությամբ, Այստեղ նա իր ամբողջ եյությամբ տարվում է մի զգացումով, լցվում զայրագությամբ, համանում կատաղի դադանի տատիճանին, նա դարձել և իր նոր արամազրության ստրուկը, աղբում և միայն Պատրոկլիսով. Նրա սիրառը լցված և ընկերոջ կորըստի կսկիծով, Կատարած վազում և տրոյացիների կողմը, բուռն գրոհով հարձակիվում Հեկտորի վրա, բռնվում նրա հետ մենամարախ և մահվան տագնապի հացնելով՝ զետին տապալում Տրոյայի հերոսակն Աքիլեսի վրեժինդրության ծարավը սակայն չի հաղենուամ հակառակորդի մահով. Աքիլեսը ընդունակ չեն նույնիսկ լսելու մահվան տագնապի մեջ թափալվող անոգնական Հեկտորի աղերսը, վորպեսզի իր դիակը շմերժի վերադարձն վշտահար Պրիամոսին «Չուր ես դու, շնչեն, փարվում իմ վոտներին և աղերսում հանուն ծնողներիդ բացականչում ե նա, — յեթե յես լսեյի իմ զայրույթի ձայնը, մասումաս կը պատառուեյի քեզ և մարմինդ հումհում կլափեյի», Յեղ կապում և հերոսի դիակը իր կառքին,

արագ քշելով կատաղած յերիվարներին Խլիոնի ողարիսպառների ջաւրջը, թրեսում և հերոսի այլանդակված մարմինը, Այս բայտական չեւ. նա պատրաստ և դիակը շնորին կնր դարձնելու, իսկ Պատրոկլեսի թաղման խարույկին վրա այրում և արայացի տառնյերկու ընտիր կտրիճններ, Այդպես և այս վրեժինողիր լինում ընկերոջ մահվան համար:

Աքիլլեսը սակայն իդեալական տիտղ և գարձել հին հույնների համար վոչ միայն իր ֆիզիքական մեծ ուժով, անզիններությամբ ու խստասրտությամբ, այլ և նրանով, վոր բանաստեղծը նրա մեջ զրել և մարմնականի հետ ներդաշնակ՝ դրական այլ հատկություններ. որինակ, նրա քնաքույշ վերաբերմունքը դիմու Պատրոկլեսն ու նրա հիշատակը, ապա և մեծահոգությունը ընկճած ու տառապյալ ծննդունի Պրիամոսի հանդեպ,

Հոմնը պուսի պակապորիչ և դառնում, յերբ ձերունի Պրիամոսի ազերսին միանում և և Աքիլլեսը, մոռառնալով և՛ իր վրեժառության զգացումը, և՛ յերդումը՝ վոր Հեկտորի դիակը անպատճառ շներին կերակուր կդարձնի:

Առաջ և հորն հիշատակով լացացրեց Աքիլլեսին,
Բոնեց Աքիլլ նրա ձեռը և բաղցրությամբ հեռացրեց:
Ցեփ յերկաւուր լույս և յին—ծերն հիշելով իր Հեկտորին՝
Լաց իր լինում թափակելով վոռների մաս Աքիլլեսի,
Իսկ Աքիլլես հորն եր վողքում, վողքում մահը Պետրոկլեսի,
Կականալիքը վողքից թնդաց նրանց հարկը մեծ վրանի:

«Ծիկական», Յերդ քսանչորորդ,

Դաման հերոսը այժմ նրբացած, մարգկայնացած՝ վերապարձնում և Պրիամոսին Հեկտորի դիակը և վորոշում ամբողջ ասսնյերկու որ չվերսկսել պատերազմը, հնարավորություն տալով տրոյացիներին վողքալու և հանդիսավոր թաղելու իրենց հերոսին:

Այսպես Աքիլլեսը իր հոգեկան և ֆիզիքական կարողություններով գարձավ հին հույների իդեալական հերոսը,

վոր ընդունակ և միաժամանակ կատարյալ լինելու թե սիրու և առելության և թե վրեժխնդրության մեջ, Այդ ախպէ ստեղծագործելիս Հոմերոսը չի խնայել դույն և ներկ, հղկելու համար այն կոպիտ գծերը, վորով ոժոված եր նրա հերոսը, և մեղմելու այն ծանր տպավորությունը, վոր ստացվում և հերոսի գաղանային բնագդների սանձարձակ արտահայտություններով:

Աքիլլեսը միջնադարյան ասպետների հեռավոր նախատիպն և, վորոնց հերոսությունը արտահայտվում եր հավասարապես՝ և ազադակային բոլոր տեսակի գործերով, և դեռ պի կնոջ պաշտամունքը ունեցած սանտիմենտալ քնքություններով:

Եթե «Իլիական»ի քինոտ հերոսը՝ Աքիլլեսը, ըստ բանաստեղծի, արոյացիների յերկերը կործանելու վոչ մի առիթ չգտնելով հանգերձ, նետվել եր կովի ասպարեզ, ապա պահմի յերկրորդ հերոս Հեկտորը, ըստ պոեմի, միանդամայն պարզ գիտակցում եր, թե հանուն ինչի յե մտնում պայքարի մեջ զաժան ու համառ թշնամու հետ Բանաստեղծը ըստ ամենայնի որյեկտիվ գույներով պատկերում և տրոյական հերոսի գեմքը, շատ դրական կողմերով ոժանելով նրան: Հեկտորը լիովին գիտակցում ե, թե վորպիսի անարդար գործ և հունական ընչափաղց, տիրաննենք թագավորների հարձակումը իր խաղաղ յերկրի վրա: Նա պարզ տեսնում ե, թե Բնչնակատադրական հարվածներ պիտի ընդունեն իր յերկրին ու ժողովուրդը, յեթե թշնամին վոտք դնե Տրոյայի պարիսպներից ներս: Խնչմե եյին հույները պաշարել Տրոյան, ինչմե եյին բանակ դրել Իլիոնի պարիսպների շուրջը և թալանի յենթարկում շրջապատի խաղաղ գյուղերը, Հեկտորը իրեն Տրոյայի հերոս, պարտական եր պաշտպանելու իր յերկիրը, ազատելու նրան կործանումից, վորովինետե, նա գիտեր, վոր «աստվածներից» մի քանիսի ոգնությամբ կտուցված Իլիոնի բարձրաբերձ պարիսպները մի քանի այլ

«աստվածների» ձեռքով կարող եյին հիմնիվեր կործանվել, Յեւ ինչպէս Վոլիմպոսի «անմահներից» վոմանք պիտի այդուրինակ անարդար գործ կատարելին։ Միթե արգիվացի Հեղինեյի պատճառով, Բայց չե՛ վոր Հունաստանի այդ ամենաշքնաղ կինը ինքն եր փախել Պարիսի հետ։ Չե՛ վոր ինքն եր հետը վերցրել իր թանկագին ոժիտը։ Ուրեմն ամեն ինչ դիտակցարար և փոխադարձ համաձայնությամբ եր աեղի ունեցել, և մանավանդ նպաստել եր այդ ամենին ինչը «սիրո զիցուհին» — Վոլիմպոսի ընիկ Աֆրոդիտեն։ Արդարությունը անշուշտ տրոյացիների կողմն եր. նախահարձակ եյին յեղել Պրիամոսի հարստությունը ազահարար տենչացող հույն թագավորները, Միթե Հեղինեն եր նրանց հարկադրությունը անշատ ավագություն էր. արդեն ապահում, իսպառ մոռանալով իրենց հավատարիմ կանանց, ինչպես թագավորներից ավագը՝ Ագամեմնոնը, խորամանկ Վուդիսնը և հենց քաջակորով Աքիլեսը։ Հեկտորը զգում եր, վոր կոիզը անհավասար և որհասական՝ իր յերկրի համար։ Նա համոզված եր, վոր «կալու յե մի որ, և Տրոյան կործանվելու յե. ընկնելու յե ալմոր Պրիամը և նիզակակիր Պրիամոսի ժողովաւրդը», Անպատվություն, փոքրոգություն կլիներ հերոսի համար կովի դաշտից խուսափել, անպաշտպան ու անողնական թողնելով իր աչքի առաջ կործանվող հայրենի քաղաքը։

Ի՞նչ կլիներ տրոյացի անպաշտպան կանանց ու տղամարդկանց վիճակը, յեթե նրանք բոլորն ել գերի ընկնեյին անգութ թշնամու ձեռքը, Դառն ստրկությունը պիտի լիներ նրանց բաժինը։ «Հենց նրանց համար ե, — ասում ե Հեկտորը, — վոր Հեկտորիս յերիվարները թոշում են դեպի կորիվ, ցրվում ամբողջ դաշտավայրը, իսկ ինքս տրոյացի հերոսների մեջ փայլում եմ իմ նիզակով, և հույս ունեմ զրանով վանելու ծանր ստրկությունը իմ յերկրից։ Հոգեկան տառապանք եր պատճառում հերոսին այն դառն վիճակը, վո-

րի մեջ պիտի ընկներ՝ Տրոյայի բազմաթիվ կանանց հետ՝ նաև իր Անդրումաքեն, վորի սիրտը արդեն նախազգացել եր Հեկտորի մոտալուտ կորուստը, Յեղ այն բոլոր ավերածություններից ու կոտորածներից հետո, վորին յենթարկվել են Անդրումաքեյի յոթը կտրիճ յեղայրները, զառամյալ հայրն ու մայրը, վորոնց վոչնչացրել եր Աքիլլեսը, Անդրումաքեն աղերսում և Հեկտորին մնալ Խլոոնի պարիսպների ներսը, չմտնել կատաղած թշնամու հետ պատերազմի, քանի վոր իրենց միակ զավակը՝ Աստիանաքսը՝ վորը և մնալու, իսկ ինքը՝ մի թշվառ այրի դառնալու, հաղթական դանայցիների յերկիրը ստրկության տարգելով։ Հեկտորի սիրտը ճնշվում և այն զիտակցությունից, թե հաղթողը անխօդունորեն պիտի ստորացնե ու շահագործե իր անփոխարինելի Անդրումաքեյին, վորովհետև ինքը արդեն դատապարտված և անժամանակ մահվան։ Դա ճակատագրի անողոք վճիռն և, Հեկտորն արգեն պատկերացնում և Անդրումաքեյի ապագա ծանր ստրկությունը և պատախատնում կնոջ աղերսին։

Կը զա մի որ, կը կործանվի Խլիռնը սրբազան,
Կը կործանվի իր տեղի հետ իմ քաջատեղ հայր Պրիամ...
Հասու քո վիշտն, Անդրումաք, յերբ վոր մի որ շարազեա
Կողոպտելով աղատությունը ու քաջ տալով իրա հետ
Քեզ՝ լալազին՝ պիտի տանի պղնձազգեսա Աքայցին։
Անդ Արգոսում պիտի լինեն ռուսը կնոջ ձեռքի տակ,
Զուր պիտի կրէս Մեսսեյսի կամ Հիսկերի աղբյուրից՝
Բանապատված տաժանելի և անողորմ կարիքից...
Այնժամ սիրտագ պիտի խացվի մի նոր ցավով աղեկեց,
Յեղ ամուսնուդ պիտի հիշես, վոր կարող եր փրկել քեզ.
Բայց թող մեռնեմ, թող տաշջուց մտնեմ շիրմի ձածկի տակ,
Նոր քան լացգ յես կլսեմ, քեզ կը տեսնեմ տռեանց

Ժլիտկան, Յերգ վեցերորդ:

Պոեմի սքանչելի կտորներից և Հեկտորի և Անդրումաքեյի հրաժեշտի պատկերը, վոր մեջ խոր զգացմունք, քըն-



Հեկտորի դին դիակիքումից առաջ
Тело Гектора перед сожжением. *Hector's corpse before its burning.*



Ալկինոսը Ալցինոս թագավորի մաս
Одиссей у царя Алькиноя. *Odyssesus with king Alcinous.*



քշություն ու նրբություն և դրել անմահ պոետը Հուզիչ տեսակցությունը վերջանում և նրանով, վոր դևի մարտի դու դաշտը շտապող Հեկտորը գրկում և ու ջերս համբուրում միակ զավակին և կնոջը, «ամենակարող Զամից և մյուս անմահներից աղերսնելով»՝ ոժտել Աստիանաքսին Փիդիքական ույժով՝ ու քաղաքացիական արիությամբ:

Կորովի Հեկտորից բաժանվելով, վշտահար Անդրոմաքեն՝ ճնշող զգացմունքը սրտին, հեկեկալով մտնում և տուն։ ուր սկսում են լալ նրա հետ տան բոլոր բնակիչները, և Տրոյայի մնագույն հերոսին վողը մտն դեռ նրա կենդանության որով, վորովինետե հաւոգված եյին, վոր նա չի կարող խուսափել «անխիղն դանայացիների վայրագությունից»։

Իդուք չեր տրոյացիների բարձրաձայն վողը և մերձավորների հեկեկանքը։ Հեկտորը նրանց աչքում մեծ եր մորուես պաշտպան Խլիոնի ներսը պատսպարված ժողովրդի, մեծ վորովես անձնադոհ քաղաքացի։ Յեվ ահա յերբ ընկնում և նա անհամասար կռվում, յերբ նրա մարմինը ծանր անարդանքի յի յենթարկում գաղանացած հաղթողի կողմից, Տրոյայի պատերը թնդում են ամբոխի վողը ու կոծից, նրա հառաջանքի ձայնից։

Վողը ժողովուրդն հառաջում էր, լցնում քաղաքն վողը-կոծով, Ամենուրեք մի այսպիսի կական, հեծծյուն, վայնասուն եր, Բաղմաբը յանում կարծես հրակեղ վերջանում եր։

Յեթե մենք Հեկտորին համեմատենք Աքիլլեսի հետ, կտեսնենք, վոր մարդկային գծերով ավելի հարուստ ե առաջինը, քան յերկրորդը, Զպիտի մոռանանք, վոր պոեմի հեղինակը հունական հերոսների յերգիչն ե, վոր նրա վերաբերմունքը դեպի հունական հերոսը՝ Աքիլլեսը զրեթե պաշտամունքի բնավորություն ունի, վոր, վերջապես, վորքան ել բարձր առաքինությամբ ոժտված լիներ Տրոյայի հերոսը,

այնուամենայնիվ, հունական յերգիչը միևնույն վոդեորությամբ չեր յերգելու հակառակորդ բանակի հերոսին։ Սակայն հանճարեղ դյուցազներգության մեջ քիչ չեն այնպիսի տողեր, վորոնք միանգամայն թեքում են ընթերցողի համակրությունը անձնագուն Հեկտորի կողմը։ Պոետը վորոշ առարկայական վերաբերմունք և ունեցել դեպի հակառակորդ արիստոկրատիան։

Հեկտորին բանաստեղծը ոժանել և նաև մեծահոգությամբ Խորապես ըմբռնելով կացության բարդությունը, գիտակցելով նրա եյությունը, Հեկտորը ակնարկ անզամ չի անում վորսե վիրավորանք հասցնելու Հեղինեյին, վորէ պատճառով և տեղի ունենում կարծանարար պատերազմը։ Նա ազնիվ և և արդարամիտ, նա վոչ միայն գժղոնությունն չի արտահայտում, այլև շրջապատողների հարձակումներից պաշտպանում և «Հարիքների պատճառ» կնոջը։ Հեղինեյի վողը ինքնըստինքյան մի փայլուն ապացույց և Հեկտորի այդ բարեմասնության։

Առաջերգողն առաջ յեկավ տիսուր վողբովն Հեղինեն։
«Ավաղ, Հեկտոր, իմ առաջերգից դու թանկաղին ամենեն,
Խշմաւ Համար Ազեթսանդրի անքախտ հարսը լինեյի,
Վոր նա բերեր ինձ Տրոյա, լավ չեր յես վաղ մեռնեյի,
Թան տարի յեկել եմ յես, թողել եմ առնեն հայրենի,
Յեզ չեմ լսել դեռ վոչ մի վատ կամ դառը խոսք քեզանից,
Թե առաջերից ու առաջերից մեկն ել վոր ինձ կատամբեր,
Կամ կեսուրս, — քանի կեսուրս ինձ հետ քաղցր եր նորս պես, —
Դու արգելում եյիր նրանց քո խելացի խոսքերով, —
Առա ինչու լոց եմ լինում կոկծալի մորմոքով։
Հիմա ինձ գոշ նվաճնում քեզ պես ընկեր շնաց,
Հիմա պիտի յես նշավակ դառնամ բոլոր արոյսնց։
Այսպիս առաց նա վողբարով, և ժողովուրդն հառաջեց...

«Ծիկական», Յերդ քառնշորոց։

Ազնիվ վերաբերմունք և նա ցույց տալիս նաև իր այն խոսքերի մեջ, վորով դիմում և Այաքսին կատաղի կուտրանձից հետո Նա ընդունակ և ամենատաք կովից հետո ընկերաբ բաժանվել իր վոխերիմ թշնամուց, ինչպես այդ անում և մերոնիշյալ Այաքսի հետ. «Պարնվեցին իրար հերոսները, սիրո կլանող թշնամությամբ վառված, բայց բաժանվեցին ընկերական փոխադարձ սիրով տողորված»:

«Ելիքականաի մեջ Հեկտորի պատկերը Հոմերոսը բոլորի և փայլուն պատկուի, ինքը տարվելով նրա բարեմասնություններով. Մարդկային գրական գծերի սեղմ, բայց ցայտուն վերաբարադրությունն և տվել նա հանձին Հեկտորի, վորով ավելի համակրելի յե դարձրել նրան, դուցե և անդիտակցաբար, սրածության ու արյան ժխորում գործող հույն բարբարոս հերոսների համեմատությամբ».

«Ելիքականաի հերոսները սժաված են անվեհերությամբ ու անձնազոհությամբ. յեթե Հեկտորը մարդկային բարձր հատկություններից մի քանիսի մարմացումն ե, իսկ Աքիլլեսը հունական այն հերոսն ե, վորի դրական գծերը ապագա հույն սերունդների աշխում իդեալ եյին համարվում,— առաջ և Վոդիտականաի կենդրոնական հերոսի՝ Վոդիսեսի մեջ մարմացել են միենույն դարաշրջանի առևտրական հույնի նախաձեռնող վագին, մտքի թորիչը, նոր մարդիկ ու վայրեր գտնելու համար կատարած զորոնումներն ու ճիգը, Վոդիտական սժաված և մտքի դարմանալի նկունությամբ, նա սրամիտ ե, հնարագետ և խորսմանկ; Նա ընդունակ է ամեն ակտակ փակուղիներից յելք գտնելու. Զկա մի դժվարություն, վոր նրա համար անելաննելի լինի; Նրա խելքի և նախաձեռնող վագու հետ կապված են նրան հատուկ շրջանայցողությունն ու զըռւշությունը; Նա հուսահատվել չգիտե. ուժեղ ե նրա մեջ ինքնիրեն զսպելու զգացումը; Իր յերկարամյա ուղևորությամբ ու բաղմաթիվ պատահարներով

Վոդիսնաը հիշեցնում եւ ծովեր ու աշխարհներ տեսած փոքրձագած վաճառականի, վոր ընդունակ և համակերպվելու բոլոր պայմաններին: Նրա սովորական զենքերից մեկն և սառնասրությունը՝ անգամ մահառիթ դժբախտության գեղագում, նաև խարերայությունը, վոր շատ հաճախ ազատում և նրան ծանր կացությունից, ծառայում նրա շահերին: Յերբ առաջին անգամ նա մտնում է հսկա Պոլիֆեմ ցիկլոպի քարայրը, ուր սա վոչխարների ահագին հոտ եր պահում, իսկույն ևեթ ըմբռնում է կացության բարդությունը: Նա չի հուսահատվում իր ուղեկիցների նման, տեսնելով թե ինչպես հսկան վայրկենապես հոշոտում, ուստում և ընկերներից մի քանիսին և ապա ժայռի ծանր բեկորով ծածկում ծածկում և վտանգի առաջն առնել բայց վոչ սպանելով մարդակեր հսկային: Վորովինեան այդ դեպքում նա ընկերներով ընդմիջության կիրակվեր այրում և հայրենիք վերադառնալու յերազը յերազ և կմար, Ցիկլոպը միակնանի յեր: Վոդիսնաը վճռում և կուրացնել նրան: Ամենայն զգուշությամբ ու սառնասրությամբ նա գինով արբեցնում և ցիկլոպին և ապա քնած միջոցին շիկացրած յերկաթը կոխում նրա աչքը, կատաղած մարդակերը, կուրացած, այլևս չեր կարող ահագին քարայրում գտնել համեղ, բայց վտանգավոր հյուրերին, ուստի վճռում և մի կողմ հրել գուան ահագին քարը և սպասել, թե յերբ նրանք ել կփորձնն դուքս գալ այնտեղից իր վոչխարների հետ միասին: Նստած քարայրի շնմքին նա ձեռքով շոշափելով իր բոլոր խոյերին մեկ-մեկ, հույս ուներ ճանկը ձգել ազատվելու փոքր անող մահկանացուներին: Այստեղ ևս չի կորցնում իրեն Վոդիսնաը: զույգ վոչխարներին իրար և կապում, նրանց փոքրին ամրացնում իր մարդկանց ու այդպիսով ազատում վողջ մնացածներին, ապա իրեն, միաժամանակ տանելով կույր ցիկլոպի խոյերից լավագույներին:

Ամենասրբություն ու համառություն և ցույց տալիս վաղիսեսը քարայրում, յերբ նրա աչքի առաջ հական կլանում և ընկերներին ծիշա և նկատված, վոր հաղիվ թե Հեկտորը կամ Աքիլիսը սառնասիրա նայելին այդ տեսարանին. հաղիվ թե զսովելին իրենց և անմիջապես չնետվելին հարգածներ. արյունուռշտ մարդակերին Վոդիսեսը սակայն լավ դիմեր, վոր յեթե այդպես զարվեր, կըկորչելին՝ և՛ ինքը, և՛ նրա բոլոր ընկերները Լավ եր ուրեմն կորչելին մի քանիսը, բայց աղատվելին մնացածները, Այշպես եւ արակ Վոդիսեսը և հասալ իր նողատակին.

Զարմանալի հնարադիտություն և որամտություն և ցույց տալիս նա մի այլ տեղում, յերբ նրա նաև պետք և անցներ սիրենների կղզու մոտով, Յերկու նպատակ ուներ այդանու Վոդիսեսը. նախ նա ուղում եր անպատճառ լսել սիրենների ոյութիչ յերդը և աղա անվտանգ անցների Միւրենների յերդը սակայն սարկացնող եր. Այնքան հմայիչ, կտիարդիչ եր նա, վոր լսողները չեյին կարողանում անտարբեր անցնել կղզու մոտով. Դյուլթված իշնում եյին ամի և հմայք ույժուի գամելում հավատենաղես, Վոդիսեսի մյում նազատակն եր՝ չենթարկել ընկերներին յերդի հմայիչ գայթակղության. զիտեր նբանց թուլությունը, Հնարագետ Վոդիսեսը գանում և միջոցը, սիրենների կղզուն մոտենալիս նա պատվիրում և ընկերներին պինդ կապել իրեն նավե առխատակամածին և աղելի ևս պնդացնել կապերը, յեթն ինքը աղերսի արձակել իրեն. Միւրենոյն ժամանակ ընկերների տկանշները խցում և մեղրամամով, վոր սիրենների դյուլթող ձայնը չկանո Այսպիսով Վոդիսեսը անպատիժ լսում և սիրենների այն յերդը, վոր չի լսել վոչ մի մահկանացու առանց յենթարկելու. հավիտենական քարացման:

Միւրենոյն շրջահայեցողությունը, սառնասրտությունը, նախայիս մոտածված ծրագրով վործելու ընդունակությունը

տեսնում ենք նրա մեջ այն ժամանակ, յերբ նա արդեն վոտք եր դրել իր հայրենի յնրկիրը և ականատես յեղել Պինելու պեյին կնության ուղող հոմանիների սանձարձակ գործերին Յեթե այստեղ ևս նրա փոխարեն Հեկտորը կամ Աքելլեսը լիներ, հազիվ թե նրանք ընդունակ լինելին համբերելու և անմիջապես չգնային տուն՝ վոչնչացնելու թե անսանձ հոմանիներին և թե զավաճան ծոռաներին, Վոդիսաւին հարկավոր եր իրազեկ լինել նախ իր տան ներքին կացությանը. նա չգիտեր՝ ով եր նրան հավատարիմ մնացել, սկսած ամենամերձավորից մինչև վերջին ստրուկը:

Չե՞ վոր անցել և ամրող քսան տարի այն որից, յերբ նա թողեց իր յերիտասարդ և դեղեցիկ կնոջը, վորին գայթակղեցնելու բազմաթիվ փորձեր եյին անում հոմանիները: Թողել եր Տելեմաք վորդուն, վոր իրեն այժմ գուցե իսկի շնանաչն յել, և ծառաներին, վորոնք գուցե իսպառ մոռացած լինելին իրենց նախակին տիրոջը: Նա պետք և իմանար այդ, Յեվ Վոդիսաւը նախամտածված ձեռնարկում և զործի. հաղթությամբ պատկում իր բոլոր փորձերը և ապա կրկին թագավորում իր յերկրում:

Վոդիսաւի մեջ յերկրորդ բնավորություն և դարձել ստախոսությունը. առանց ստելու նա չի կարող մթնացնել որը, վթրաեղ և սակայն մարդու այդ հատկության աղբյուրը: Անշուշա մի կօղմից անձնական շահի գերադասությունը, փոխադարձ հարաբերությունների շրջանակում տիրող կասկածամությունն ու անհավատարմությունը և ինքնառ պաշտպանության զղացումը: Վոդիսաւը վոչ վոքի վրա հաւաքատ չաւնի, ուստի և ստախոսությունը նրա սովորական զենքն և: Ստելը դառնում և սովորությունն, և Վոդիսաւը սրտում և հաճախ առանց վարեկ անհրաժեշտառթյան: Ստում և թե իբրև արտիստ և թե իրրե սիրող: Աթենաս աստվածուն հուն անգամ, վոր միշտ հովանավարել և Վոդիսաւին և նրա

ոջախը, նա խարում ե, հնարելով գանադան արկածների պատմությունն:

Վողիսնեսի պատկենը լրիվ չեր լինի, յեթե բանաստեղծը նրան չոժտեց հնտաքրքրութեալու, վորոնումներ կատարելու հառկառաթյամբ վողիսնը չի փախցնում վոչ մի առիթ իմաստալու համար, թե ինչ կա անծանօթ յերկրների ներսում և ինչ մարդիկ են ապրում այստեղ: Պումի այդ կետում անդրադարձն է ին հույնի նոր գաղղթավայրեր գտնելու, նոր վայրերի հնտատեսական կապեր հաստատելու ձգտումը, թայց այդ ձգտումը համենայն դեպս չեր ըղխում սոսկ ուսումնասիրական ծարավից այդտեղ ամենից առաջ դեր ելին խաղում յերկույթների գործնական հնտեսանքները: Իր բոլոր այլ հատկությունների հետ Վողիսնը զարմանալի ընչափեր եր, ուր ել վոր զնար, մի տեսակ ներքին մղումով նա սպասում եր, թե ինչպես կհյուրասիրեն իրեն և, վոր կարեղին և, ինչ ընծաներ կտան համաձայն ընդունված սովորության ինչպիս հոմերական բոլոր հերոսներն ու թագավորները, Վողիսնը ևս մեծ ձգտում ուներ ավար ստանալ, ուստերազմի միջոցին, իսկ առատ նվերներ ընդունելու՝ խաղաղ ժամանակ: Այդ տենչը նրան հաճախ վորովայթների մեջ եր ձգում:

Նման ոյն մարդու, զոր յերկար ճանապարհորդություններ և կատարում ու փորձվում, Վողիսնը հնտաքրքրական պատմություններ և անում իր տեսած յերկրների և ժողովուրդների մասին: Նա պատմում ե, թե ինչ սովորություններ ունեն իր տեսած մարդիկ և ինչ քաղաքական և բնաւանեկան կազմակերպություն, վորպիսի հարաբերություններուի են կապված իրար հետ, ինչ տնտեսական պարագաների մեջ են ապրում և այնու թայց այդ ամենը համեմված քանատառիկ պատմություններով, ուր եյական դեր և խաղում տառվելապես հեքյաթային առաջը, մի բան, վոր հատուկ և նովիքական ստեղծագործություններին:

Չնայելով սակայն նրա հետաքրքրությանն ու վորոնումներին ոտար յերկրներում, չնայելով նաև բոլոր այն գըֆրախառություններին ու խոչընդոտներին, վորոնք ամեն բուպե կանգնած եյին վոդիսեսի առջև, հայրենիք վերադառնալու տեսնչը նրա մեջ ամեններին չի մարում, նվիրական նպատակին հասնելու ձգտումը այնքան մեծ եր, վոր Պոսեյդոնի հարուցած տարերային խոչընդոտներն անդամ անկարող յեղան թուլացնելու «բազմահմուտ մարդու» յենանդը, ճիշտ ե, ծանր բոտեներին վոդիսեսը տիսրում եր ու մենության եր դատավարում իր անձը. ճիշտ ե, «հրաշագեղ կալիսենիշապարանքում առընթիս նա միայնակ նստում եր ծովի ժայռոտ յեղերքին ու արցունքը աչքերին. նրա կյանքը կաթիլ առ կաթիլ դանդաղ հոսում եր գեղի հայրենիքը ունեցած անմխիթար անձկության մեջ... Սակայն քանիշանի տնկամ նավարեկություններից մի հրաշքով աղատվելով, կրկին ձեռնարկել ե նաշխաշենության ու ճանապարհ ընկել զայրացած Պոսեյդոնի ալեկոծ ովկիանով, քանիշանի անգամ նավարեկլած, որ ու գիշեր տարվել ե նավից պոկված մի տախտակի վրա ծովի հորձանուտ ալիքներով ու մի կերպ աղատվել կատաղի ալիքներին կուլ գնալուց:

Ալքինոսի պալատում նա պատմում է նման մի դեպքի մասին.

Մըրկեց հյուսիսն այն ժամանակ, շնչեց Դիոս շանթարեր,
Մածկեց ամպով ծով ու ցամաք, պատեց յերկինք մուլթ զիշեր.
Տառանվեցին նավերը մեր, ու փոթորկից սաստկաղին
Պատառվեցին ծվեն-ծվեն ոռազատաներն անաղին.
Փաթաթեցինք անարեկված և վայր զըմնք նավի մեջ,
Աղա իսկույն նավը ուղղեցինք գեղի տփը մոտակա.
Ցերկու ցերեկ, յերկու գիշեր կացանք տիսուր, դժկամակ,
Մինչև յերբորդ ողը ծաղեց վոսկեդիսակն արեգակ:
«Նախական», Ցերգ իններորդ:

Այսպես՝ ովողիսականը արտացոլում և հույն արիստոկրաֆայի տերիտորիալ նվաճումների, նոր գաղթավայրեր վորոնելու փորձերը և նրանց հետ կասված բազմաթիվ արկածներն ու անակնկալ պատահարները:

Անցնենք այժմ պոեմների կանացի տիպերին, վորոնց մեջ ունեն ելու ոլեն իդեալական կնոջ պատկերն և յեղել դարերի ընթացքում անցյալի բազմաթիվ հին և նոր սերունդների համար:

Խոչ և ներկայացնում կինը սուհասարակ հոմերական պատմաշրջանում, Պոեմները արդեն ըստինքյան ապացույցներ են, չոր կինը՝ աղամարդու համեմատությամբ ամենահետին մակարդակն է յեղել մղված: Կինը այդ շրջանում, ինչպես և հետագա դարերում, միանդամայն իրավագուրկ եր իր ընտանեկան կյանքում և ճնշված: Հոգեպես և դիրքով հետու իր ամուսին տղամարդուց, նաև ավելի մոտ եր ստրուկտորին և իրավագուրկ մասսաներին: Ճիշտ է, յեղել են բացառություններ, ինչպես, որինակ, Արևոտա՞ն՝ Ալքինոս թաղավորի կինը, ուրին հաճախ խորհուրդի յեր գիրմում պետքան ծերակույտը, բայց մեզ հետաքրքրողը տիրուդ կացությունն է և վաշ առանձին բացառությունները: Ամուսնուկան կյանքում կինը տղամարդու ստորադաս աղախինն եր: Նա անմոռնչ պարտավոր եր հաշտ նայել նույնիսկ իր ամուսնու հարճի վրա և վերջինից ունեցած դավակներին պիտք և խնամելու և լավ վարդեր նրանց հետ, մնալով հավատարիմ իր ամուսնու: Յնթե հավատանք Արկոսովանին, անթիք հույնը փականքի տակ եր սղանում իր կնոջը և փականքի պահպանությունը հանձնում դռանը կապած մոլույան ջներին, կինը պիտք և հավատարիմ լիներ իր ամուսնուն անդրայման կերպով, մինչդեռ տղամարդը աղատ եր իր ամուսնուկան հարարերությունների մեջ:

Ենգելմը գրում է.

«Նոր ընտանեկան ձեւը իր ամբողջ դաժանությամբ մեր առաջ և յեկառամ հույսերի մեջ, Մինչդեռ, ինչպես Մարքոն և Նկատում, աստվածուհիները զիրքը զիցարանության մեջ պատկերացնում են մեղ մի ավելի ժաղ ժամանակաշրջան, յերբ կանայք ավելի ազատ և պատվավոր դիրք ունեյին, հերոսական շրջանում տեսնում ենք կնոջն արդեն տղամարդու գիրիշխանությամբ ու ստրուկների մրցմամբ ստորացած... Աղջիկները սովորում եյին միայն մանել, գործել ու կարել ամենաշատը նաև մի քիչ կարդալ-զրել նրանք համարյա փակված եյին ապրում և միայն կանանց հետ եյին նստում, վերկենում կանանց մասը տնից առանձնացած եք լինում վերին հարկում կամ տան հետեւ մասում, վորտեղ տղամարդիկ, մանավանդ ոտարները, հեշտությամբ մուտք գործել չեյին կարող և վորտեղ քաշվում եյին կանայք այն ժամանակ, յերբ տղամարդ հյուրեր եյին գալիս»:

Ցեմեր ուշադրությամբ խորանանք «Վաղիսական»ի բովանդակության մեջ, ուր բանաստեղծի պատկերացման առարկան նաև ընտանեկան խաղաղ կյանքն ե, կտեսնենք, վոր կինը ստորադաս և տղամարդուն, վոր նա կրավորական և զոչ միայն հասարակական-պետական կյանքում, այլև նույնքան ընտանեկան սահմանափակ միջավայրում։ Ցեմ այդ երեսությը բանաստեղծի աշխատ այնքան դրական և, վոր յերեսույթի կատարյալ արտահայտությունը նա համարել են իդեալ։

Պետք է լուս նավատարիւմ և անձնվեր կնոջ իդեալ և բանաստեղծի համար։ Բայց նա, ըստ բանաստեղծի, հանցանք կատարած կլիխներ, յեմեն համարձակվեր յերկրորդանգամ ամուսնանալ, յերբ տասնյակ տարի անցնելուց հետո շարունակ լուրեր եյին համարում Վաղիսեսի մահվան մասին։ Վաղիսեսը կարող եր չքնաղ ոգեցուհին կալիպսեյի կղզում, վորպես թե տիսուր որեր աղքակալ, հրճվել նրա

զյութող գեղեցկությամբ, կարող եր մի ամբողջ տարի մի այլ «զշցունուակ» կախարդիչ դրկում յերջանիկ ժամեր անցկացնել—իսկ Պենելոպեն, մնաւոծ կարծելով ամուսնուն՝ նույնիսկ իրավունք չուներ մտածելու յնըկրորդ անգամ ամուսնական մասինու համոզված պիտք և լինել, վոր յեթե Պենելոպեն այլորբինակ մի ընական և որարդ քայլ աներ, հաղով թե նա դրանից հետո իդեալ դառնար բանաստեղծի և հետազա սերունդների համար։ Պումի մեջ հաճախ և արձանադրվում վազիսեսի տիրությունը ստարության մեջ, բայց հանճարեղ բանաստեղծի դրիչը չեւ վախեցնել արձանադրելու իր հերոսի նաև այն դրությունը, թե ինչպես հմայիչ կիրկեյի հեշտանքի առագաստը իսպառ մոռացնել եր տվել Վոդիսեսին իր հայրենիքն ել, մոլիուանդ հավատարմությամբ սպասող կնոջն ել։

Ի՞նչպես և պատկերանում մեր յերևակայության մեջ, համուձայն պումի, Պենելոպեյի կացությունը իր տան մեջ նույն դորձն և կատարում, ինչ ստրկուհիներն ու ծառաները։ Նրա համեմատական արտօնյալ մինակը կայուն և այնչափով, վորչափով նա սիրելի յեւ և հնագանդ իր ամուսնուն։ Նրա անմեջական պարտականությունն և հսկել նաև ժիշտանքի և սարկուհիների աշխատանքը, դործերին հիշենք պումի այն պատակերը, յերբ Պենելոպեն փորձում և ընդհատեն յերգչի մի յերգը, վոր ախրությամբ եր լցնում նրա սիրտը՝ հիշեցնելով հույյների զժրախտ վերագարձը Տրոյայի կործանումից հետո,—Տելեմաքը միջամտելով ընդհատում և նրան ասելով։

Ի՞նչու, մայր իմ, — հականունց այսպես ուշից Տելեմաց, —

Աբուրում ես, վոր յերգիչը յերգե սրաով, համարձակ։

Տուն գործեր դու, ու ձեռք ու քա ձեռզգը ձն ու վոստայն,

Հորդոր կարու մեր աղախնոց, վոր աշխատեն մրաշնա։

Ներկմաքու բան չե խռովեն, տղամարդու գործն և դա,
Հիմու ել Բմ.—Ծող այսունեա, յե՞ս եմ իմ առն աերն հիմա:
«Վաղիսական», Յեշո առաջին»

Յեզ Պենելոպեն լուռ հնագանդվում ե վորդուն. հանդիմանությունն ընդունելով առանց ընդդիմախոսության-ժանում ե «իր մենության ոթյակը և դառնորեն վողքում իր վողիսնսի կորուստը»:

Տելիմսքի հանդիմանական խոսքերը բանաստեղծը «խորամիտ» և անվանում, միանդամայն ընդունելով, վոր իդիալական կինը չեր կարող այլ վարմունք ցույց տալ տանեցի տղամարդուն: Կնոջ վիճակը այս գնալքում առավել ծանր է այն տեսակետից, վոր նա նույնիսկ վորպես մայր, իրավունք չուներ հականառելու իր աղամարդ վարդուն:

Բաղմաթիվ են բուրժուական ուսումնասիրողների մեջ այնպիսիք, վորոնք կնոջ զրությունը հունական կյանքուն համարում են միանդամայն հավասար տղամարդուն, Պոեմների տված փաստերը սակայն միանդամայն հակոռակնեն առաջցուցում: Հիշենք Ազամեմնանի և Աքիլեսի վեճը, վոր տեղի ունեցած գերի բոնված Բրիգեիսի համար: Այդուղ կենը մասնավոր ավարի և սեփականության սուարկա յե. Նրան առնում-տալիս են այնպես, ինչպես ապրանք ու ընծառ Զայրություլ լցված Աքիլեսին կրկին իր կողմը թեքելու համար արքայապետ Ազամեմնանը բազմաթիվ ընծաների հետ իր յոթը գեղեցիկ աղջիկներին և առաջարկում նրան, ընծաներ և աղջիկներ իրքն հավասար արժեքի առարկաներ: Ազամեմնանը իր կնոջ՝ Կլիտեմնեստրայի կողքին ուղղում եր ունենալ գերի տարված կասանդրեյին, իսկ Աքիլեսը՝ Բրիգեիսին:

Հոմերական շրջանի կնոջ կոչումը ընտանեկան հարկի տակ՝ անհրաժեշտ անտեսության մի մասն եր կազմում: Նախնական ընական տնտեսությունը կյանքի շրջանակը

դրել եր նահապեատկան ոլբիմիտիզ, պարզ պայմանների մեջ, Այդ ըրջանի զվարավոր աշխատանքը յնրկրագործությունն ու խաշնարածությունն եր, Յեվ յեթե հույն վողիս և յերկրագործությամբ եր պարագում, տրոյացի Պարիսը խաշներ եր, արածացնում, Յեթե ընդունենք, վոր կուլտուրայի պատմության տեսակետից յերկրագործությունը զարդացման հաջորդ ետապն և խաշնարածությունից հետո, ապա Հռոմատանը կուլտուրապես ավելի բարձր ե յեղել Տրոյայից, Յերկու դեղքումն ել կինը ընտաննկան հարկի աղախինս և յեղել Խնչպես նահապեատկան-տռհմական կյանքում շինականների հետ թագավորները ևս զետին եյին հերկում կառ հովիթների հետ խաշներ արածացնում, այնպես ել նամիշտանների ու ստրկուհինների հետ թագուհինները թել եյին մանում, լիւացք անում ու գործվածքներ պատրաստում, Յեկմինչպես առաջինների համար հասարակական և քաղաքական կյանքի լայն ասպարեզ կար, վերջինները գուրկ եյին այդ առողարենդից:

Գեներալին տան տնտեսության վրա եր հսկում, գործում ստրկուհինների հետ, Հեղինեն նույնպես ձեռագործով եր պարագում, Ալքինոս թագավորի կինը՝ Արետան թել եր մանում, աղջիկը՝ Նավսիկայան իր ստրկուհինների հետ ծովի ափին լիւացք եր անում. Նույնիսկ «ասավալածուհիններից» կողման հավերժահարսը «ախորժալուր ձայնով յերգում եր, յերգում ու վոսկե մաքոքի առաջ նաշխան գործվածք պատրաստում».

Միննույն պատկերը ցույց ե արված պոեմում նաև Անդրսոմաքեյի վերաբերմամբ: Իր վերջին հրաժեշտը տալով Անդրսոմաքեյին, Հնկարըն ասում է նրան.

Տան գործիք գու, տուր աղախնոց զբազեցնեն իմ մանկան,
Դու յել հստիր, իլիկ պտտիր, հանգիստ գործիր քո վոստաց:
Շնիսական, Յերդ վեցերորդ:

Դառնալով Պենելոպեյի անհատական արժանիքներին սկսեց և դարմանալ նրա սեփական անձի արժանապահվության գիտակցության վրա։ Նրա այդ գիտակցությունը իր համապատասխան վերաբերմունքով դեպի շրջապատը պատկառանք և ներշնչում շրջապատողներին վորքան ել աներես, լողիրը լինելին վոդիսնեսի հարկի տակ խրախճացող հումանիները, այնուամենայնիվ նրանցից վոչ վոք չեր հանդընում անպատկառ վերաբերմունք ցույց տալ Պենելոպեյին։ Իր տառապանքը նա կարողանում եր դարպահողեն քողարկել ու հպարտ յերեալ դրսի աշխարհին։ Ճիշտ և, Պենելոպեյի դրությունը դարձել եր փափուկ՝ վոդիսնեսի տասնեւիննամյա բացակայության միջոցին։ Բացի դրանից նա զերծ չեր նաև կանացի բնությունից։ ամրող յերեք տարի նու հույս եր տալիս հոմանիներին, ասելով՝ «Պատանիներ, վոդիսնեսը այլևս կենդանի չե, և յես համաձայն եմ ձեզանից մեկին իմ ամուսինը ընտրել, բայց զսպելու համար նրանց սանձարձակությունը, պայման եր դրել, վոր կամումնանա այն ժամանակ, յերբ սկսված գործվածքը վերջացնի։ Մինչդեռ ցերեկով գործածը գիշերը քանդում եր, Ապա մի որ վոդիսնեսից հուսահատված, վերջին պահուն մի անդամ ևս «Աքրողիտեյի ոժտած զեղեցկությամբ փայլելով» նա իշխում է հոմանիների սրահը, նոր հույսեր տալիս նրանց շուտով ամուսնանալու և տպա, նրանցից «գեղեցիկ ընծաներ» ստանալով, հեռանում իր վերնատունը Թեղետ այդ ամենը արդյունք եր նրա հակասական դրության, մինչ բանաստեղծի ասելով, առանձնության մեջ նա ամրող գիշերներով վոդրում եր ամուսնու «անդառնալի» կորուստը։

«Ժամ և ստկայն, վոր յելինեմ վեր ու միայնակ պատկեմ անդ յեւ իմ անկողնում, վոր փաել եմ արցունց-թախծով յես դառնապես Այն սրվանից, յերբ վոր մեկնեց ամուսինը իմ յեղիելի Դեղի անլուք, որհասական պարիսպները իլիսնիւ։

Յեզ զերնատան իր անկողնում յերբ վոր այսպես միայնացավ՝
Նոզքաց այստեղ նա դառնազին Վոդիսնոմին իր անձիւլի,
Մինչև Պալաս նրա աշխին բերնց հանգիստ քուն քաղցրալի:
«Առջիսական» Ցերդ տասնիններորդ:

Ժամանակի ընթացքում սակայն հոմանինները ավելի
հանդոււդն եյին դարձել և Պենելոպեյին ստիպում եյին վըն-
սպիկան պատասխան տալ իրենց առաջարկին: Նրանք իմա-
ցան, վոր Պենելոպեն իր առերես խոստումներով միայն
ձգձգում ե ամուսնությունը. իմացան նույնպես ստրկուհի-
ներից մեկի միջոցով այն զաղանիքը, թե ինչպես Պենելո-
պեն ցերեկվա գործածը զիշերը քանդում ե: Կացությունը
բարդունքն եր նրա համար:

Սևփական շրջապատի միջնորդան անդամ զորեղացնում
իր գայթակղությունը, ստրկուհիներից և ծառաններից վոմանք
արդեն անցել եյին հոմանիներէ կողմը: Նրանցից Եվրինո-
մնն համոզում եր Պենելոպեյին «Էվացվել ու բուրավետ ոծա-
նելիքով ոծել այտերը», ապա զուրս գալ հոմանիների առջև,
վասնպի շատ անդուրեկան բան եր տիրապեմ և անհրապույր
յերևալ պատիկական փեսացուներին, Լցվել եր համբերու-
թյան բաժակը. Պենելոպեն այլևս հույս չուներ Վոդիսնոսի
վերապարձի վրա: Փորձում ե գործ դնել իր հնարապիտու-
թյունը, վոր վերջ տա անորոշ կացությանը: Նա բերում է
Վոդիսնոսի մեծ ազեղը և առաջարկում ե նրանց լարել այն
ու նշան դնել, պայմանով վոր արձակողներից ով կարողա-
նա նետը անցկացնել տասներկու ողակների միջով՝ նրան և
տառաջարկում Պենելոպեն իր ձեռքը, Վերջին քայլը վճռական
եր, Պենելոպեյի համար վիճակը ձգված եր: Յեզ նա այս ան-
դամ հանդիս ե գալիս հոմանիների առջև միանգամայն հա-
մարձակ, տասնց թաղցնելու իր արհամարհանքը դեպի անե-
րես, անկոչ հյուրերը: Նա դատապարտում ե նրանց, հայտ-
նում իր դժգոհությունը, նման ամուսնությունը համարե-
լով տաելի. պախարակում այն հանցավոր վերաբերմունքը,

զոր նրանք ցույց են տալիս գեղի Վոդիսևսի տան հարըստությունը Նա ասում է, զոր Վոդիսևսի տունը յերկրորդ ամուսնությունից հետո ևս մնալու յե նրա համար իրըն հայրենի հարազատ տուն, զոր նրա մտքի և սրտի հետ ընդմիշտ պիտի կապված մնա առաջին ամուսնու տունը, յերջանիկ անցյալի քաղցր հիշողություններով,

Այս տանից, ուր հարս եյի յես, չընող տանից այս հացալի,

Վոր և սնչուշտ չեմ մոռմնալ զոչ յերազիս, զոր հարթակի,

Այսքան թանգ ու նվիրական և յեղել Պենելոպեյի համար Վոդիսևսի անզան հետ կապված իր առաջին սերը,

Հանձին Պենելոպեյի բանաստեղծը տվել և քաղաքակը կը թուժյան արշալույսի կնոջ պատկերը, Կարելի յի ասել, զոր առանց Շվոդիսականայի մենք դժվար թե կարողանայինք գաղափար կազմել անթիք աշխարհի կանանց դրության մասին, նրանց ապրած միջավայրի և ներքին առողջության մասին:



Պենէլոպին քերում և Վադիսավսի աղեղը. անկյանում համամիմերի խմբայից
Пенелопа приносит лук Одиссея.
Penelope bringing Odysseus' bow.



Պենէլոպին նամաշում և Վադիսավսին
Пенелопа узнает Одиссея.
Penelope recognizing Odysseus.



ՀՈՄԵՐՈՍԻ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ԴԵՄՔԸ
ՅԵՎ ՀՈՄԵՐՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ԹԵՐՄԻՏԵՍԻ ԸՄԲՈՍՈՒԹՅՈՒՆԸ
ԱՅԴ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՅԱՆ ԴԵՄ

Վերջացնելով դլխամոյը «Հնբոսների համառոտ ընույթազիրը, այժմ մեղ հետաքրքրում ե կարևոր մի հարց. նախորդ դրախների յեղրափակման համար. մի եր Հոմերոսը վորապես բանասանեղծ, մվքեր և յին նրա ստեղծագործության առաջնական և վերջավես մեմ համար եր յերգում Հոմերոսը,

Վոր Հոմերոսը հունական տիրող դասակարգի՝ ժամանակի արխատոկրատիայի յերգիչ ե, զրա մասին յերկու կարծիք չի կարող լինել նա յերգում ե թագավորներին, իշխաններին, տիրող դասակարգի ներկայացուցիչ հերոսներին Բանասանեղծի դիմումը մուսային մի պերճախոս առաջույց ե զրան:

Դուք պատմեցեք՝ վճրը մեաց այն քաջերից հույնիշխան,

Կորիլի՛ յե խուժանն հիշել կամ համարել թվելի.

Իշխաններին կերգեմ միայն և հանդեսը նավերի:

«Ելլականն, Յերգ յերկրորդ:

Հոմնը յերգում և իշխաններին և թագավորներին; Նրա բոլոր հերոսները աիրող դասակարգից են, Զարմանաւի հարազատությամբ ընդունել և նա այդ դասակարգի հոգերանությունը իր բոլոր նրբություններով։ Իշխանների միջավայրը՝ նրա սեփական միջավայրն եւ Նրա վոգեսրության պաֆոսը բացառապես իր «աստվածազարմ» հերոսներն են իրենց բազմատեսակ գործողություններով, Սակայն վորքան ել որյեկտիվ, առարկայական վերաբերմունք ունենա բանաստեղծը դեպի այն միջավայրն ու մարդիկ, վորոնց պիտի անդրադարձնե և վորոնց հետ ինքը հոգեկան կապերով և կապված, այնուամենայնիվ նրա անհատական տրամադրություններն ու համակրությունները այս կամ այն կերպ յերևան են գալիս իր ստեղծագործության մեջ։ Նա հոգերանորեն կապված և իր հերոսների հետ, նրանց հոգեկան կյանքի բոլոր խորշերը թափանցել եւ, ուրախանում ու տիրում և նրանց հետ, հաճախ պաշտամունքի առարկա դարձնելով իր ամենասիրած հերոսներին, ինչպես Աքիլեսին ու Վոդիսեսին։ Նա հանդես է յեկել յերգելու ընտրյալներին, բայց վոչ «խուժանին»։

Դարելի՛ յե խուժանն հիշել կամ համարել թվելի,
Իշխաններին կերպեմ միայն և հանդեսը նազերիւ,

Ցեվ միթե բարձր միջավայրի բանաստեղծը կարող եր յերգել «խուժանի» տենչերն ու ձգտումները, բողոքն ու ցառումը, յերբ այդ խուժանը կարգին ժողովուրդ ել չեր նրա աշխում, Արքատոկրատ յերգչի համար մասսան միշտ ել արահամարհելի յե յեղել, ժողովուրդը ժողովուրդ չի համտրվել, այլ խուժան, անհասկացող, բութ, իներտ, ապաշնորհ խուժան...»

Ո՞ւր և իսկական ժողովրդական մասսան հոմերական դյուցազներզության մեջ, Կարելի յե համարձակ ասել, վորքանաստեղծը միանդամայն հավատարիմ և մնացել իր գըլ-

իսովոր նպատակին՝ թե «իշխաններին և յերգելու միայն», Հասարակական այդ պորշը, «անհերսպարան» զանդիածը նրա վոգեսրության աղբյուրը չեւ իսկ յնթե բանաստեղծը իր ստվար աշխատության մեջ մի քանի տող այնուամենայնիվ նոյնընէ և շխռութանին ու սրա լմրուստ ներկայացուցիչ թիրուսիանին, ապա դա իր սիրած ուժեղների պատկերը ավելի պարզ դժելու համար ն։ Ավաղների առջեւ այդ խուժանը ինչ-որ մի անկերպարան զանդիած եր ներկայացնում, նա շարժվում եր ազմկող ճանճերի նման, շարունակ յետ ու տուաշ անելով։ Նրա վոտների արոփյունից հուզվում եր հրապարակը, հողը տնքում և հեծում եր նրա շարժումից Առաժմանը խուլ գոռոց ու ազաղակ եր բարձրացնում, իսկ դյուցազն արքաների հլու սպասագորները սանձահրում եյին նրան, ոլահանջելով «լուռ մնալ ու ականջ դնել դյուցազուն արքաներին»։ Յեվ յերբ լուսնում եյին «խառնիծագանճ» ամրոխին, արքայապետ Ազամեմունը հրապարակ եր զալիս իշխանական գավաղանը ձեռքին, Մեծ եր զավաղանի ույժը՝ վորողես սիմվոլ բռնակալների տիրապետության, և սարսկե ամբոխը պատկառանքով խոնարհվում եր նրա ամենազոր կերպարանքի առջեւ։

Հօմերոսի բոլոր հերօսները թագավորներ ու իշխաններ են։ Յերկրի պատմական-կուլտուրական կյանքը ամրողվովին նրանց ձեռքին և կենտրոնացած։ Ժողովրդի բախտը նրանք են անորինում։ Տիրողների մշակած սկզբունքները ընդհանուրի համար ճշմարտություն եր, իսկ ճաշակը՝ գեղագիտության բարձր ըմբռնումը։ Հօմերական շրջանը՝ դա հունական հողային ռազմիկ արիստոկրատիայի վայելքի շրջանն է, Ռետախ, անհոգ, նովիկուրյան կյանքի հոգսերից ազատ՝ նրանք հերոսները։ Տնտեսական կյանքի հոգսերից ազատ նրանք ամբողջովին կլանվում են ռազմական մարզանքներով ու վայելքով, նրանք ձգտում են տիրելու ընդարձակ յերկիրների, ձեռքի տակ իրրե սեփականություն ունեն բազմաթիվ

ստրուկներ, վորոնք իրենց տերերի գոյության պատվանդանն են կազմում: Նրանք ապրում են փառանեղ պալատներում, վորոնք միամբ ճարտարապետական հրաշալիքներ են, Ալքինոսի պալատը վոչ այլ ինչ ե, բայց յեթե այդ տեսակ հրաշալիքներից մեկը: Պալատի շուրջը աիրող պերճությունն ու փայլը զարմացրել եր նույնիսկ Վոդիսևին: «Պալատի վորմները կարծես պղնձից լինելին շինված, իսկ նրանց պսակը «արփիափայլ պողպատից»: Պալատի դուռը վոսկուց եր կեցաված, իսկ շրջանակն ու շեմքը՝ արծաթից, Բարձրացող սանդուխքների յերկու կողմէն շարքով կանգնած եյին վոսկեճույլ շներ, վորոնք համարվում եյին Վոլխմպոսի ճարտարվեստ Հեփիստոսի ստեղծագործությունները: Պալատի ներսը Վոդիսևս տեսավ մի շքեղ լուսավորված սրահ, ուր վոսկեզոծ գանույքի վրա բազմել եյին յերկորի ծերակույափ անդամները իրենց թաղավորի հետ միասին: Նրանք ճաշում եյւն: պատանիների կերպարանքով վոսկեճույլ անդրիները ձեռքերի մեջ ջաներ բռնած՝ լույս եյին սփռում պերճ ու ընդարձակ դահլիճնում: Վոդիսևսի շվարած աչքերը ընկան լուսնի շողով պսպղուն պարտեզի վրա, վոր լի յեր ամեն տեսակ ծառերով: Դալարուտ սաղարթների միջից նշանարվում եյին թուղ, նուռը, ծիրան, տանձ ու խնձոր: Խաղողի վորթի կանաչ ճյուղերի վրա փայլում եյին շառագույն վոզկույզներ, Ածուների մեջ բռնում եյին պեսպես ծաղիկ ու բանջար: Գետնի միջից բղխում եյին յերկու սառնորակ աղբյուրներ, վորոնցից մինը ջուր եր հասցնում ապարանքին, մյուսը կարկաչանոս ընթացքով վոռողում պարտեզը: Հյուրույթին կամ սովորական խնջույքին ապարանքում սպասավորում եյին բազմաթիվ աղախիններ և ստրուկներ, վորոնք մանըկենների նման անխոս ու ամենայն հնագանդությամբ կատարում եյին տիրոջ հրամանն ու քմահանույքը: Արիստոկրատ միջավայրի փոխադարձ հարաբերությունները ևս զուրկ չեյին քաղաքավարական նրբություններից:

Յեթե բարձր կոչված խավերը իրենցից ցածրեցի նկատմամբ յիշել են կոպիտ ու վայրենի, ապա դրա փոխարեն քաղաքավարական դարմանալի նուրբ ձևեր ունեցին իրենց համաստ խավերի հետ վարժելու համար, Նույն պատկերը դիտում էնք Ալբինոս թաղավորի պալատում, ուր հունական բարձր խավերի ներկայացուցիչները քաղաքավարական ձեռվերսի են խօսում միմյանց հետ: Մշշաղրությունն դարձրեք վաղիսնոի վոդջույյահ ճատին, նրա նուրբ ձևերին, յերբ իր խավերը ուղղում ե թագուհուն՝ Արետային, Բատ ընդունված ուղորության, նա ամենից տռաջ գալիս վարդում ե թագուհու ձնիներին Նրա արտահայտության ձևերից ու կիրթշարժումներից կարելի յե յնզրակացներ, վոր նա արխստոկրաս ծագում ունեցող անձն ե:

Հունական արխատոկրատիայի եպիկուրյան և վայելքի շրջանի հետ և կատված նաև նրա միջավայրին հուսուկ արվեստի դարպացումը: Իրեւ հասարակական որենք պետք է հիշել, որ սևիսականաւատիրական պատմաշրջաններում գեղարվեստը ընդհանրապես զարգացման բարձր կետին է հասնում այն ժամանակը, յերբ միջավայրի տիրող դասակարգը իր պատմական հերթական յերթն և կատարում, հանգչում և ոիրապեսության և վայելքի մեջ: Հունական թաղավորների ու իշխանների, տիրող արխատոկրատների պալատաներն ու ապարանքները զարգարված են նուրբ քանդակներով ու անդրիներով, շնչքերը ունեն իրենց վորոշ ստիլը, վոճը, անդրադարձը վայելում են ժամանակի կուլտուրական բոլոր բարիքները, նաև զեղարվեստը, Յուրաքանչյուր պալատ,

յուրաքանչյուր ապարանք ունի իր ընարյալ յերդիչն ու նվազածուն, զորոնց պարտականությունն ե գեղագիտական հաճույքը պատճառել տերերին, Ալբինոսի պալատում Դեմոդոկի յերգիչն ու նվազածուն, ոժտված «աստվածացին» քանաքարով, պարտականություն ուներ իր նվազի հմայքով տերե-

ըին դվարճացնելու ճաշի և ընթրիքի ժամանակ, յերգելու թագավորների ու իշխանների անցյալն ու փառքը:

Գեղարվեստական նուրբ ճաշակի և ասպետական կիրթ ձեերի հետ սակայն բարոյական կասկածելի տատկեր ուներ արիստոկրատիանու թեսն նա հույն կնոջ բարոյական կյանքի ամենախիստ նախանձալինդիրն եր համարում իրեն, բայց ամեն տեսակի բռնի սահմանափակումներով կաշկանդում եր կնոջ աղատությունը. իսկ իրեն, ինչողես տեսանք, միանգամայն անպատճիսանատու յեր համարում, Միջավայրի տերն ու տնօրենը ինքն եր, ուստի կնոջ անտղատ, ստրկական միճակի կողքին նա կարողացել եր իրեն համար միանգամայն աղատ ընտանեկան պայմաններ ստեղծել Ամունական հավատարմությունն անհրաժեշտ եր և ընտական բացառապես կնոջ համար. Պենելոպեն, Կլիտեմենտարան և Հեղինեն պարապոր եյին անխախտ պահել իրենց ամուսնական որինական կապը, իսկ Վոդիսեն ու Ազամեմոնը աղատ եյին «համերժահարսերի» ու ստրկուհիների սիրային զգացումները վայելերու, վոդիսենը, այդ «հանճարեղ» ու քաջարի գործերովը հոչակված մարդը, տարիների ընթացքում հանդիստ ու անխոռվ հանդչում եր «գանգրահեր դիւցուհի» կալիպսեյի և «գեղգեղաձայն» կիրկեյի հեշտանքի ծոցում, թեսն բանաստեղծի ասելով, այս բազմահմուտ մարդը կալիպսեյի կղղում դիգերում եր հուսահատ, միշտ առանձնանում եր ծովափը, ծանր հոգոց հանելով, դեպի ծովը եր նայում ու դառնապես արտավում, բայց տաքիների ընթացքում լուր ու մունջ վայելում եր սքանչելի «դիցուհու» ամուսնական սերն ու գգվանքը Սրատես ու խորամանկ Վոդիսենի աչքից չեր վրիպել նույնիսկ այն հանդամանքը, վոր իր Պենելոպեն գեղեցկության ու իրանի քնքուշ կադամածքի տեսակետից չեր կարող հավասարութել կալիպսն «համերժահարսի» գեղանի կերպարանքին,

Տեղյան և քաջ՝ ինչ և քեզ մոտ Պենելոպեն իմ ուշիմ,
Դեղով-մնջոռի, Հկուն մարմառը ինչ կընասնի թռ կըսին,

Այդուն և ասում Վուկիսևը կալիալսէ յին։ Թաջ, ուշիմ,
հանգամանքից ոդամինը ընդունակ ճարպիկ մարդը գիտեր
դնահատել ու ոպտիկ շնադելի զիցուհու շնորհներով, իսկ
իր պատասխան հերոսի դնահատումների, իր հերթին գան-
դրաներ զիցուհին իր ժպարկեշտ ամուսինն և եր համարում
խորադիմ Վոդիսիսին։ Կալիպսեյի բուրավետ անձավում յոթը
տարի անցկացնելուց հետո, Լայնըտի հանճարող վորդին
ընկնում և մի ուրիշ ավելի զյութիչ զիցուհու գիրկը, վորի
մերկությունն ու հրապույրը իսպառ մոռացնել եյին տվել և
հայրենիք, և ընտանիք։ Հմայիչ կիրկեյի փարթամ ապա-
րանքի շքեղությունն ու զարդարանքը շլացրել եյին Վո-
դիսիսին։ Դիցուհու առարանքում առաջին անգամ նա ըն-
դանվում և կանացի փաղաքշական գրկախառնությամբ։
Կիրկեյի հոյակաղ պալատի համարժանքութիւն սպասա-
վորումը, զիցուհու քնքույշ վերաբերմունքը առ Վոդիս՝ վեր-
ջինիս աչքում առարանքը զարձրել եյին հարկ աննման։
ուր կախարդիչ կիրկեն հատուկ պատրաստված լոգարանում
ինքն եր անձամբ հկազդուրում ու անույշ յուղով ոծում
Վոդիսիսի «խոնջացած անդամները»։

Հքավիրեց ինձ լոգարան և լիցաց ինձ ստնում մի մեծ,
Ուս ու դլիս հեղ ածելով մինչև պնդեց իմ խոնջ մարմին։
Լիցաց, սնեց անույշ յուղով, մի պերճ բանկոն վրաս ձգեց,
Ասդ տարավ, բազմեցընց արծաթագում բարձրագաճին։

Այսպես և պատմում ինքը Վոդիսիսը։ Յեղ միթե ավե-
լի պերճախոս ապացույց և հարկավոր աղատ Վոդիսիսի և
կաշկանդված Պենելոպեյի զրությունների համեմատության
համար։ Յեթե բարդահնար Վոդիսիսը Շակամայից ընկել եր
չքնաղ կիրկեյի կախարդանքի մեջ, առա Պենելոպեն ել ամ-
րող յերեք տարի շվայտ սեղեխների գոյթակղիչ աղղեցու-

թյան տակ եր ապրում: Յեղ սակայն դարերի խորքից խռովող բանաստեղծը հավասար վերաբերմունք ունի զեպի իր արիստոկրատ հերոսն ու կինը, Մինչդեռ մեկի ամուսնական ազատ հարաբերությունները նա յերգում և տրամադրված, յերգում և թեթև, նուրբ պատկերներով, ընդ նմին ընդունելով այն միանգամայն բնական յերեւյթ, ընդհակառակը, մյուսի կաշկանդված դրությունը նա համարում է իդեալ:

Արդ՝ կիրկեյի աղարանքի մեղկությունն ու հեշտանքը այնքան և կլանում Վոդիսնսի անձնավորությունը, վոր նա, լսելով գիցուհու խոսքերը, վճռում է մնալ աշնտեղ:

Այս իմացանք, հազար կացանց, մի տարի անդ մացինք,
Խորտիկների ճաշի վրա անուշ բաժակ քամեցինք:

Այսպես և խոստովանում ինքը Վոդիսնսը Ավելի յերանելի դրություն չեր կարելի յերեսակայիլ ընչասեր ու արկածախնդիր Վոդիսնսի համար. համեղ խորտիկներ, քաղցրահամ գինի և հմայիչ կնոջ հեշտանքը... «Մենք թախծահար զուրս յիշանք նրա սիրուն պալատից», պատմում է նա Ալքինոս թագավորին:

Հոմերական արիստոկրատիայի ընորոշ կողմերից մնկնել ընչարադցությունն ե. «Ելիրական»ի հերոսները չեն կարողանում անտարբեր նայել ուրիշի սեփականության վրա: Սեփականության իրավունքի դաղափարը մինչև աղանությունն և ավարառությունն ե հասնում նրանց հասկացողությամբ: Նոր տերիտորիա, նոր հողեր գրավելու, հարուստ ավար ձեռք բերելու տենչը այնքան զորեղ և նրանց մեջ, վոր պատրաստ են տարիներով կռիվ մղել հակառակորդի դեմ, տապալել ու մինչև վերջին հնարավորությունը կողոպտել թշնամուն, Հոմերական հերոսներին ճանաչիլու համար պետք է զիտել նրանց գործերը. Գհրպիսի կատաղությամբ են հարձակվում իրար վրա ազարի բաժանման բոպեյին: «Հունական տոհմի միջից մեղ և նայում վայրենին և այն ել

միանդամայն ակնրախ կերպով՝ — ասում եւ Մարքսը, իր տղահության տեսչը հագեցնելու համար, որինակ, Ազամեմնոնը պատրաստ եւ մոռանալ ու մարդկանց, և՝ աստվածներին է Հին, բայց շատ դորժնական ճշմարտություն են համարել այդ հերոսները՝ «քաջնորի սահմանը՝ իրենց զենքն եւ սկզբունքը՝ Իրավունքը դորեւինն եր Յևի ժողովուրդների հայր Ազամեմնոնը մոլեգին հարձակվուա և Աքիլեսի վրա ու իրում նրանից Բրիդեխ գեղանի ստրկուհուն ասելով».

Իսկ այն չընազ Բրիդանույիբն ինքս իմ խորան տանելով՝
Յես իրում եմ մրցանակդ քո վրանը հասնելով,
Դոր քաջ ու ենակս, ին յես վորքան վեհ եմ քեզնից ու ավագ՝
«Ելիակուն». Ենք առաջին»

Ավագությունն ու նրա հետ կապված ֆիզիքական ույժը միայն կարող են արդարացնել ամեն մի բռնի սեփականացում ու ավարտություն։ Ազամեմնոնի և Աքիլեսի փոխորկեալից բացատրությունն ու փոխադարձ սպառնալիքը Բրիդեխոի համար հիշեցնում են յերկու կատաղի առյուծների, վորոնք մոնչալով պտավում են վորսի շուրջը՝ պատրաստ իրաբ հոշոտելու, Յեվ այս յերկու հերոսների ընչառապցության ու պահության պատճառով մեծամեծ տղեաներ կրեցին հույները Իլիոնի պարիսպների տակ։

Ընթե սեփականության տեսչը ավելի կոպիտ արտահայտություն և ստացել «Ելիական»ի հերոսների մեջ, վուվորովնեան այդ շրջանում տիրել եւ բարքերի խստություն, տպա «Նորիսական»ի հերոսները մասամբ մեղմանալով ու հզկվելով՝ ավարից ու հափշտակումներից անցել եյին «ընծանեաների», վոր նրանք անհրաժեշտաբար ստանում եյին իրենց հյուրընկալող իշխաններից ու թագավորներից։ Ընծանաւալը վոչ միայն նրանց սրտին «սիրելի» մի գործ եր, այլև պարտադիր բան, Վողիսան ընծաներ եր ստա-

նում իրեն հյուրընկալող «դիցուհիներից», Տելեմաքը՝ Տրոյայի պատերազմի հերոսներից, Ըստ յերևույթին, հյուրի համար վիրավորական եր համարվում ընդունելությունը, յեթե նա տանտիրոջից հեռանար առանց «ընծառ ստանալու»: Բայց վորքան թանգ եր նստամ առատորեն բաժանվող ընծաները հասարակ ժողովրդին: Ալքինոս թագավորը, շատ ընծաներ տալով Վողիսնսին, ավելացնում է. «ընծաների պատճառած վնասների դիմաց մենք մեղ կվարձատրենք ժողովրդից հարուստ հարկ հավաքելով»: («Վողիսնսին»: յերդ տասներորդ),

Հոմերոսի արխատոկրատ հերոսների մեջ սակայն մոչ մի գիծ այնքան վառ և բնորոշ արտահայտություն չի ստացել, ինչպես նրանց անդուսալ ու անսանձ իշխելասիրությունը: Դրանք բացարձակ բռնակալներ են, վորոնց ույժը իրենց սրի ծայրին եւ նրանց տիրապետությունը ժողովրդի վրա սահման չունի: Դրանք աշխարհի տերերն են, վորոնց շուրջը պետք եւ միմիայն ստրկությունն ու բացարձակ հնագանդությունը թագավորեն: Կարմղ եր սարուկ ժողովուրդը ըմբռատացման ամենափոքր արտահայտություն ցույց տալ: Նրան կհոշոտեյին, նրան գանալուծելով կլուցնեյին: Հոմերական ամբոխը մի լուակյաց ու հնագանդ ամբոխ եր, և նրա շահերը հակադիր եյին իր տերերի շահերին: Նրա վողբերդությունը սիփական շահերի գիտակցության բացակայության մեջ եր:

Լռակյաց ու հնագանդ եր ժողովուրդը, բայց լռակյաց ու հնագանդ չեր նրա հերոսներից մեկը՝ Թերսիտեսը, Աշխարհի տերերի և ստրուկ Թերսիտեսի ընդհարումը չպետք և պատերազմական մի աննշան արկած համարել:

Թերսիտեսը մեր աշքում այն պարսագիլի անունը չե, վոր դարերի ընթացքում, մինչև մեր որերը, հոլովվել և ստրկամիտ տիրասերների կողմից վորպես մի արհամարհելի անուն: Յեթե ներկա պատմական մեծ հեղաշրջման դարում

այդ հերոսի վրա կան նայողներ բացասական հայացքով,
առաջ այդ միմիսայն բուրժուական իդեոլոգիայի տենդենցիոզ
մուրակումն և ըմբռութ մարտիկի:

Ո՞վ եր սակայն թերսիտեսը, վոր հանդդնել և ըմբռս-
տանալ աշխարհի բացարձակ տերերի դեմ: Հավատանք
ո՞վ կամ համար հանճարեղ բանաստեղծին, վոր թերսիտեսը
մտամոր ու փիղիքական մի վոչնչություն եր: Հավատանք,
վոր նրա ըմբռստացումը առաջ եր յեկել ովախկոտությու-
նից ու չարանենդությունից: Ըեպ զարմանալի չեմ մի-
նե զարերի ընթացքում կուրորեն կրկնվող այն անհնդեք
կարծիքը, թե աշխարհ տերերի դեմ ըմբռստացող թերսի-
տեսը վախիկոտության և փոքրագության տիպար եւ Հանճա-
րեղ բանաստեղծը անկարող և յեղել սոցիալական այդ նշա-
նակալից ընդհարման հանդիպ լիակատար լուռթյուն և սառ-
նասրտություն պահպանել: Կարելի յն համարձակ ասել, վոր
Հոմերոսը իր ստեղծագործության մեջ վոչ վոքի վերաբեր-
մամբ այնքան կողմնապահ ու աշխառու չի յեղել, վորքան
թերսիտեսի: Բանաստեղծը իր յերկրորդ յերգի մեջ հանդիս
և յեկել արխատոկրախայի սպասավորի ամբողջ հոգերանու-
թյամբ թերսիտեսը, ասում եւ բանաստեղծը, հանդուզն լեզ-
վագ խոսում եր արքաների դեմ այն ժամանակ, յերբ բոլորը
լուս ու հնապանդ բոլորել եյին իրենց թագավորների ու
իշխանների շուրջը: Արքաների խարազանի հարվածներից
կորացած թերսիտեսի հանդուզն լեզու գործածելը բավական
եր, վոր արքայասեր բանաստեղծը նրան նկարագրեն ամե-
նամասայլ զայներով:

Շատ եր տաշխ մարտմ պահած իր խոսքերը խառնինադան:

Արքաներին դեմ—Հաւկառակ, ափեղցինոց ու խակամիտ...

Չեր տանշգած իլիոնում մարզ մի այլպիս ազեղատիպ:

«Նվազան»: Յերդ յերկը:

Հստ բանաստեղծի, խակ խորհուրդներով լի յե յեղել ըմբռստ ստրուկի խելապատակը միմիայն այն պատճառով, վոր նա հանգանել և «լեզվագարել» իրեն ստրկացողների դեմ:

Թշնամի յեր նա վոխերիմ Աքիլիսին և Վոդիսին,
Յեկ շարունակ հանդեսի մեջ պարագում եր նա յերկուսին
Յեկ որդ առա վեր կացավ նա Աղամեմոն դյուցադնի դիմ...

Յեկ միթե այս դեպքում քիչ բան և ասում բանաստեղծի վերաբերմունքը դեպի հու հն աղ ան դ խողապան Յեփեսուը (Վոդիսինի յերկարամյա խողապանը), վորին նա «աստվածատիպ խողապան» և անվանում... Մեծ բանաստեղծի համար միանդամայն տարորինակ նախապաշարմունքով ու ծաղրով և մոտենում նա ըմբռստ ստրուկի: Ֆիոլիքական պակասություններին.

Մի աշքը շիւ, մի վառքը կազ, լոգինգալին ման եր գալիս.
Մեղքը սապառ, ուսկը ծուռ, կուրքքը վլած, ընկած եր ներս-
Սրագաղմբ իր կոնդ գլխին հաղիկ ուներ բանի մի մազ,
«Ենիկական». Յերգ յերկրող:

Վորքան ել սակայն ճգներ բանաստեղծը նսեմացնել թերսիտեսի պատկերը՝ նրա արտաքինը այլանդակ ներկայացների, այնուամենայնիվ թերսիտեսը մնում և վորպես արքաների դեմ ըմբռսացող, տիրող կարգերը մարտկող, սոցիալական անտարդարուրյան դեմ բարսող: Նա դասակարգային գոխերիմ թշնամին և արքայապետ Ազամենմունի, «աշխարհավեր» Աքիլեսի, Վոդիսինի և նրանց գեմ «լուսանքներ թափող լրբենի», ինչպես վկայում ե ինքը բանաստեղծը:

Վմբռն եր գլխավոր պատճառը թերսիտեսի բողոքի և ցասման, Ամբողջ տասը տարի յե աքայացիք (հույները) ապարդյուն կոփիվ են մղում տրոյացիների դեմ Իլիոնի պարիսպների տակ: «Աստվածների հայր» Զեսը չի ողնում նրանց, և հույները անվերջ պարտություն են կրում կոփի դաշտում: Հուկատհատության և լքման աստիճանին են հասել հույները:

իդուր և յին հերոսները լարում իրենց ույժը, ի դուր և յին բերել թափել հույն ժողովրդի յերիտասարդ սերունդը կավի առաջարեզ, ուր անխնա կոտորվում եյին նրանք, չոգնած ու զաղրած ժողովրդի գալակիները՝ ռազմիկների հոծ բազմությունը՝ յերազում եյին շուտով վերադառնալ հայրենիք, ուր թողել եյին իրենց հարադատներին, Ինչպէս եյին յեկել նրանք Տրայտ Խոչ հույսերով, Բնչ տենչերով։ Միթե հադմէած Տրոյայից նրանք բաժին պիտի ստանային, Բոլորովին զոչ Հաղթության պտուղները պիտի վայելնյին բացառապես թաղավորներն ու իշխանները, Շաղնիլ ընտրյալները, իսկ ժողովրդին բաժին պիտի ընկներ միմիշայն անմիջի զրկանքներ։ Ընչաքաղցությունն ու ազահությունը չեր թույլ տալիս հերոսներին ձևոնունայն հայրենիք վերադառնաւ, ուստի և նրանք վճռում են նախ փորձել կովող մասսայի արամազդությունը, ճանաչել կովից խուասիողներին ու պատճել նրանց, ապա միայն շարունակել պատերազմը ինչ զնով ել լինի։ Արքայապես Ազամեմնոնը ժողով ե գումարում և մօայլ գույներով նկարագրելով կովի ընթացքը, խորհուրդ և տալիս պատրաստություն տեսնել հայրենիք վերադառնալու։ Ամրոխը, տուանց հասկանալու լարվող գաղաղրությունը, ուրախության ազաղակներով վազում և զեռի նազները, Բայց... այսանց բացվում և գաղտնիքը, և հերոսները Շատավածների ողնությամբ անմիջապես գավազանով ու խարազանով կարդի յեն հրավիրում «իզուր խուճապող խուժանին»։ Խեղճ «խուժանը», անգիտակից իր շահերին, վոշխարի հնազանդությամբ յենթարկվում և տերերի կամքին և լուր ու մունջ կրկին զնում բոլորում մեծասահա արքաների և իշխանների շուրջը, Յեղ ահա այս անամնական հնազանդության, ստրկական լրության մեջ հանկարծ բարձրանում և ըմբռոսա թերոսիսների հանգուցն կերպարանը, նա աներկյուղ հանգիս և գալիս բոլոր արքաների զեմ

և նրանց ազան ու պռոսդ պիտի արարքները ամենալիսուն
լեզվով պարսավում:

Ե՞նչ ես գժղոն գու արանջում, լինչդ և պակաս, ով Առքիդես,
Վրաններդ՝ լիթը պղինձ, վրաններդ՝ ընտիր կանայք,
Ենք ընտիրն ել ոյտ կանանցից՝ նախ և առաջ բերում ենք քեզ...
Ո՞վ ընչաքաղց, տենչում ես գեռ գուկու նոր գմբ...

«Իլիական». Յերդ յերկրորդ:

Կույր ու կարճամիտ պիտի լինել Թերսիտեսի ցուցց
տված դատափետման այս նշանավոր փաստից հետո ընդունակ
ամենազոր արքայապետի՝ նրան դարձյալ վախկոտ ան-
վանելու, Բայց դատապարտելով ու արքաների դեմ խոռնե-
լով չի բավականանում Թերսիտեսը. նա շեշտակի դիմում է
կովող հույների բանակին և բուռն թափով հրավեր կար-
դում մենակ թողնել ընչաքաղց ու յեսամոլ արքային իլիո-
նի պարիսների տակ ու վողջամբ վերադառնալ հայրենիք:

Չե՞ սազական իշխան մորդուզ, զորապլոխ այսպիսի բան,
Արքայական այս դորժերի գլուխն բերել շարիք այսքան:
«Իլիական». Յերդ յերկրորդ:

Յեփ սակայն յերբ նա իր հայացքը դարձնում է դեպի
ամբոխը և տեսնում նրա հանցավոր լուռմյունը, մի անգամ
ևս իր կրակոտ խոսքերով փորձում է շարժելու և սթափեց-
նելու նրան ստրկական թմրությունից:

Եյ, վոխեկոտնե՛ր, ամոթ և ձեզ. Աքայուհիք, վոչ Աքայցիք,
Յելե՛ց նստենք նավերը մեր և տուն գառնանց այժմ և իսկ:

Նրա այս կոչը հիշեցնում ե մեր հեղափոխության աբ-
շալույսի բոլշևիկյան կոչը դորքին, իմպերիալիստական պա-
տերազմի ժամանակ՝ լքել հանուն տերերի ստեղծած սպան-
դանոցի Փրոնտը և վերադառնալ տուն՝ տերերի հետ տանը
հաշիվ մաքրելու համար.

Ստրկամիտ ամքոխը սակայն թերսիտեսի ըմբռուտ կոչի հանդեպ քար լուսի յուն պահպանեց, և շահամոլ ու յեսա պաշտ արքաների զեմ ծառացող քաղաքական անդեներ մարտիկը դատապարտվեց ուժեղների չարաչար պատժին:

Իսովեյասիս նրա առաջ ցցվեց Հոմերոսի սիրած հերոսներից յերկրորդը՝ Վաղիսանը և իր ծանր գավազանի հարվածներու տնմիջապես լուսորդց ըմբռուտ ստրուկին: «Արքաների զեմ Համարձակվետ լիդվադարել, — գուաց նրա վրա հաղթանակամ Վաղիսանը, — սանձահարիք լնզուդ և գարձի խոսքերով մի հանդոնիր հուզել ամքոխը, իսկ յեթե դու, ով լիրը յեպեշտի, մի անդամ ևս հանդգնես խոսել նույն լիզվուի, ապա թող իմ զլուխը չմնա ուսերիս վրա, թող յես Տելեմաքի հայր չկոչվեմ, յեթե չըռնեմ քեզ, չմերկացնեմ ու ամենափայտակ ձեռք չթրենեմ մինչև մեր նախակայանը»: «Աստվածանման արքայի հարդածների տարափից սուրցավ զգաց Թերսիտեսը իր ստուարի մնջ, ու թշվառ մարդու աչքը բեց ընկան հորդ արցունքի կտթիլներ:

Ասոց ու իր գովազանով այնպիս գորկեց ումն ու կուզին, ուր Թերսիտես կծիչ դառավ, արցունք լցվեց շիլ ոչըներին: Յեզ վասկեղեն զավագանի այն հարգածից խորոյն և եթ Մի կոսուտական և արյաւճուտ ուսուցյ յելոք նրա մնջին: Ահարեկվեց, նոտեց Թերսիտես և արցունքն իր սրբում միայն, Ապուշնայաց ու այլանդակ աչքը չորս զին զրջում անձայն: «Ի՞նչական, Յերդ յերկրորդ:

Ահա այն սոցիտլական ընդհարման ցայտուն պատկերը, վար տառջին անդամ անդրադարձնել և հույն գրականության մնջ ծանոթի հնագույն նմուշներից մեկի մեջ:

Յեզ արդ, քննելով յելիրոպական քաղաքակրթության արշալույսին տեղի ունեցող ընդհարման այս փաստը տիրովների և շահագրքուղների միջն, կարող ենք ասել, վոր պրոլետարիատի բարձրացման ներկա պատմաշրջանում միայն Թերսիտեսի վրայից վերցված և «փոքրողության» ու

«Վախկոտության» քողը այնպես, ինչպես հոմնրական արիստոկրատ հեղոսների վրայից՝ իդեալականության թանձը ծածկույթը:

«Զիա այլևս մեն Պատրոկլը,
Վազի և վախկոս Թիգրիսներ»
(Նիլեր)

Դարերի այս անարդանքը, ուղղված ապստամբ թերսին հասցեյին, ստեղծել են աշխարհի տերերը, աշխատավոր դասակարգերին շահագործողները, վորոնց համար ատելի եյին ըմբոստ ստրուկները:

Այլարտելով հոմերական դյուցազններդության մտախն մեր ասելիքը, չենք կարող չընդդեմ նրա ստեղծագործական այն կորովը, վորով բանաստեղծը կարողացել և լայն ու խորը ընդդրկել իր հոգերանությանը և աշխարհայացքին հարազատ հերոսական դարաշրջանի բովանդակ իրականությունը, կարողացել ե տալ սոցիալական բարդ ընդհարումների, հոգեկան խոր ապրումների միամիտ, ստեղծայն վառ պատկերացումը պայծառ գույներով, արտացոլել ե մարդկային հասարակության մանկության կենդանի գործները, բանալով մեր առջե պատմական հեռավոր շրջաններից մեկի թանձը վարագույրը:

Հոմերական դյուցազններդությունները, վորպես կուլտուրական ժառանգություն, վորպես արվեստի անկրկնելի հուշարձան, պետք ե յենթարկվեն մարդարարության մանրազննին ուսումնասիրության, բազմակողմանի կերպով բացարելու համար այն գղժվար ըմբռնելից փաստը, թե ինչու «հունական արվեստն ու վիսերգությունը դեռ շարունակում են պատճառել մեղ գեղարվեստական հաճույք և պահպանում վորոշ իմաստով նորմայի և անհասանելի ախպարի նշանակություն» (Մարտի):

ՀԵՍԻՈՂՈՍ

ՀԵՍՈՒՈՂՈՎԸ ԽՐԲԵՎ ԽԴԵՈՒԼԳ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ:—«Ա Ե Խ Ա-
ՏԱՆՔՆ ՈՒ ՈՐԵՐ»Ը ՑԵՎ «ԹԵՇԿՈՆ Խ ԱՆ:— ՀՈՄԵՐՈՍԻ ՌՈՄԱՆ-
ՏԻԱԸ ՑԵՎ ՀԵՍՈՒՈՂՈՎԸ ՈԵՎԼԻՉԱԸ:— ՀԵՍՈՒՈՂՈՎԸ ՀՈՌԵՏԵՍՈՒԹՅԱՆ

ԱՐՔՈՒՐԸ:

Հետխոգոսի աշխատանքային պոեմը—«Աօլուտամբի ու
ուերը—Erga kai Ἡμεραι—զբգած և մոտ 2700 տարի
տառջ, յերբ նոր միայն հին Հունաստանում, սարկատիրու-
թյան անակառության շրջանակում, պատմական ասպարեզ եր
իշխէ առևտքական դասակարգը և, հենվելով գժգոն գյուղա-
ցիության վրա, սոցիալական խուզք բայց համառ պայքար
եր մզամ ռազմա-հոգային արխատկրատիայի դեմ:

Հին հունական գեղարվեստական զրականությունը և
հուսարկան դիառությունը անկասկած խոշոր բաց կու-
նանար, յեթե Հոմերոսի հերոսական դյուցաղներգությու-
նից հետո ստեղծագործված չլիներ ժողովրդական դանդաւծ-
ութիւն կյանքը մերարտադրող Հեսիոդոսի կենցաղային
պունդը:

Հետխոգոսը քաղաքացիական պոետիայի նախահայրն է,
գորից աղբվել են թե անթիք աշխարհի և թե յեվրոպական
պունակերր Առաջելապիս բարձր և գնահատվել Հեսիոդոսը
հելլենականության և հոսմենական կայսրության դարաշըմ-
շաններում, Անցյալի մեծ պոետներից՝ հոսմենացի Վիրգի-

լիուր, ազդվելով Հեսիոդոսից, զրել ե իր հայտնի «Մօսկակականի»ը:

Մարքսի արտահայտությամբ՝ մեծ թովչանք պատճառող հին հունական արվեստի զարմանալի հիշատակարաններից մեկն և գեմոկրատական բանաստեղծի աշխատանքային գրիլածքը, վորը չնայած խրատական բնույթին, դարերի ընթացքում պահպաննել ե իր համահունական նշանակությունը Հունաստանում և փոքրասիրական դադութներում: Հեսիոդոսի պոեմը զարմանք ե պատճառում վոչ այնքան իր գեղարվեստական մակարդակով, վոր չե կարող համասարվել Հոմերոսի բարձր արվեստին, այլ դասակարգային հակամարտությունը պատկերող իր բովանդակությամբ, վորով տոգորված և նա և ամբողջովին ուղղված դինվորականնողատիրական արխատոկրատիայի գեմ: Հեսիոդոսը մանր սեփականատիրության, տնտեսապես ուժեղ և միջակ գյուղացիության գաղափարախոսն և և յերգիչը, դրավատուում և աշխատանքը՝ հակառակ արխատոկրատ դասակարգի, վորը Հեսիոդոսի դարում, այն և հունական ֆինդալիզմի հարաբերությունների կազմակերպման շրջանում, սաստիկ արհամարհում եր աշխատանքը:

Պոեմի սոցիալական հավեցվածքը, աշխատանքի գըրվատումը, իրականության ռեալիստական վերարտադրությունը տևական հոչակ են հաղորդել նրա հեղինակին:

Հին հունական բանաստեղծ Հերսիոսին և վերագրվում այն ասպանագիրը, վոր գետեղված և յեղել Որխոմեն քաղաքի հրապարակում Հեսիոդոսի արձանի վրա: Վորպես բարձր գնահատանքի արտահայտություն այդ արձանը կանգնեցրել ե հույն ժողովրդական մասսան, Բանաստեղծ Հերսիոսը Հեսիոդոսին բնորոշում և վորպես իմաստության ուսուցչի: Յեթև Հոմերոսը հոչակավոր եր իրու հողատիրական դասակարգի հերօսական անցյալի յերգիչ, ապա Հեսիոդոսը հոչակվել և վորպես կյանքի իմաստը ճանաչող գյու-

դական մասսաների փիլիսոփիա-բանաստեղծի, Հոմերոսից հետո վոչ մի հույն բանաստեղծ Հեսիոդոսին համասար հոչակ չեւ վայելել Հունաստանում։ Դարեւի ընթացքում ամբողջ ուրունգներ անդիր են արել Հեսիոդոսի պոեմի հատվածները և մանավանդ առածի սեղմվածք ունեցող նրա բաղմանի տասացվածքները։ Դյուլացու աշխատանջին և առորյա կյանքին նովիրած պոեմում նա արտահայտել է հույն գյուղացու աշխարհայացքը։ Հեսիոդոսը որիցինալ է, ինքնուրույն, թեպետ նրա զբական ստեղծագործության վրա ևս ուժբարեառզ և հունական միջուգիայի անխուսափելի կնիքը։

Ո՞ւ եր Հեսիոդոսը, վորէ գոյության մասին յեղած աւելիկությունների մեջ կյանքն ու գործունեյությունը, բայց նրա պահմները հայանի չափով տալիս են դրա մոտավոր պատճերը։ Յեթև Հեսիոդոսին և Հոմերոսին համեմատելու լինենք վորպես բանաստեղծ-անհատների հենց իրենց զըրվածքներով, կտեսնենք, վոր առաջինը իր մասին ինքնակենուագրական բազմաթիվ տեղեկություններ և տալիս, մինչ յերկրորդը տէնարկ անգամ չեւ անում իր գոյության մասին։ Հոմերոսը որինկտիվ է, առարկայական, անշուշտ իր դասակարգի հասարակական հարաբերությունների շրջանակում, մինչ Հեսիոդոսը դրելու յեղանակով սուրբյեկտիվ, անհատական է։ Նա խոսում է իր անունից, արտահայտում սեփական մտքերն ու զգացմունքները, թարգման հանդիսանալով հարազատ դասակարգի սոցիալական ձգումների։

Հեսիոդոսի հայրը կիմացի յի, Փոքր-Ասիսյի դադութներից յեկած, պարապել և ծովագնացությամբ։ Աղքատությունն ու չարքաշ կյանքը, ինչպես ասում է Հեսիոդոսը, ստիպել և նրան գաղթել Բեռվարիա ու բնակություն հաս-

ապատել Ասկրում,—մի փոքրիկ դյուզ, վոր գտնվում եր «մուսանների բնակավայր» Հելիկոնի փեշերում։ Ասկրում նա պարապել և հողագործությամբ և անասնապահությամբ, իսկ նրա վորդին՝ Հեսիոդոսը, ապագա բանաստեղծը, վոչխար և արածացրել Հելիկոնի լանջերում։

ՅԵՐՐ և ծնվել և ապրել Հեսիոդոսը Այս մասին նույնպես ճշգրիտ տեղեկություններ չկան, Հունադիտությունը յենթադրում է, վոր Հեսիոդոսը պիտի ապրած լինի Յ-րդ դարում քրիստոնեյությունից առաջ։ Ավանդություններից մեկը Հեսիոդոսին ավելի հին և համարում, քան Հոմերոսին. մյուսը՝ վերջինիս ժամանակակից, Հույն պատմաբան Հերոդոտը և նրա հետ մի քանի բաններ համարում են ունեցել են այն համոզումը, թե Հեսիոդոսը և Հոմերոսը ժամանակակիցներ են և վորպես թե նրանց մեջ մի անգամ տեղի յեւ ունեցել զրական մրցություն։ Ավանդությունը պատմում է, թե հունական աշխարհի յերկու մեծագույն բանաստեղծներ հանդիպել են Խալկիդում խաղերի ժամանակ և միմյանց գետ մրցության դուրս յեկելի Պատկառելի ունկընդիրները, քննելով յերկուսի սաեղծագործությունը, իբր թե պատրաստվել են դափնյա պսակով զարդարելու Հոմերոսի դլուխը, յերբ հանկարծ Պանիդ անունով դատավորը հայտաբարում է, վոր հաղթության պսակին արժանի յեւ նա, ով յերգում է հողագործությունն ու խաղաղ աշխատանքը և վոչ թե պատերազմ ու մարդասպանություն խշախուսողը։ Յեկ Պանիդը վորպես թե հանդիսավոր կերպով Հեսիոդոսին և հանձնում մի ողնձյա յեռոտանի իրբեւ մրցանակ, վորը բանաստեղծը իր կողմից նվիրում է Հելիկոնի մուսաներին։ Ավանդությունը հետաքրքրական և վոչ վորպես բանաստեղծական հյուսվածք, այլ նրանով, վոր գրանորում և ժամանակակիցների և հետագա սերունդների վերաբերմունքը դեպի դեմոկրատական խավերի բանաստեղծը։

Վոր Հեսիոդոսը Հոմերոսի ժամանակակիցը չեւ և վոչ եւ վերոհիշյալ ավանդությունը վորեւ հիմք ունեցող, դրանում համոզված են զրեթե բոլոր ուսումնասիրողները։ Հոմերոսը ապրել և ու յերգել այն ժամանակ, յերբ իր տիրապետության գաղաթնակետին եր հասել հունական հողայինուագամիկ արխատակրատիան, յերբ վայելքի յերանելի շրջան եր ապրում հերոսական դասը՝ հայտնի իր պատերազմական գործերով՝ հարուստ՝ իր նվաճումների անբարի հեղուանքներով։ Անկասկած այդ շրջանում միայն կարող եր ստեղծագործված լինել Շիլականքի նման գեղարվեստական մի կատարյալ գործ, քանի վոր Նկատված յերեւույթ և, թե հասարակական դասակարգերի տիրապետության ու հաղթանակի շրջանները միայն հաղորդում են բանաստեղծներին ավելի վառ ու թանձր գույներ, ավելի կենդանի և լրիվ պատկերացումներ։

Հեսիոդոսը տարբեր շրջանի բանաստեղծ և, նրա ստեղծագործական շնորհըն ու վոգեորությունը միանգամայն այլ տասրկա՝ այլ որյեկտ և ունեցել Յեթե Հոմերոսը յերգում և ու զրվածում բացառապես տիրող դասակարգը, վոգեության աղբյուր ունենալով հունական ռազմասեր արիստոկրատիան, ապա Հեսիոդոսը յերգում և գյուղական աշխատավորին։ Նրա վոգեորության զրգիչը ծանր աշխատանքի ու զրկանքի յենթակա, բնության անհասկանալի ու յժերի առաջ անողնական հողագործն եւ, նա ապրել և մի ամբողջ գար Հոմերոսից հետո, ապրել և այն ժամանակ, յերբ թաղավորների ու իշխանների տիրապետությունը թեսակուխել եր իր անկման սկզբնական շրջանը, յերբ նրանց բացարձակ իշխանությունը յենթարկվել եր կասկածի ու քըննապատության, Աշխարհի սանձարձակ ու շահագործող տիրողներին հակադրվում եր աշխատանքի բեռան տակ ճընշված հողագործ ժողովուրդը, և ժամանակի նոր-նոր առաջացող ու քաղաքական իշխանության ձգտող առևտրական

դասակարգի հասարակական համակրանքն ու տրամադրությունը ուղղված ելին Դեմոսի կողմը: Ահա այդ փոխանցման շրջանումն և ազգներ ու գրել Հեսիոդոսը:

Պոեմից յերեսում ե, վոր Հեսիոդոսի մանկական առաջին տպավորությունները յեղել են ծանր աղքատությունն ու անգիրջ զրկանքները, Նրա ծննդավայրը՝ Ասկրը մի յետամեաց աղքատ գյուղ եր՝ դաժան բնությամբ, ուր ձմեռը «սաստիկ ցուրան և նեղել իսկ ամառը՝ խեղիչ տոթը»: «Աօխտանին ու ուետը գրվածքում մոայլ գույներով և նկարագրում բանաստեղծը իր ծննդավայրը, Յերբ հյուսիսային ցուրտ քամին, — ասում և նա, — սլանում անցնում և թրակիայի հարթություններով և իր դառնաշունչ հարվածներով սառցնում գետինը, հուզում, բարձրացնում ծովի գոռ ալիքները, այն ժամանակ տնքում ու հառաջում են ամբողջ յերկրի դաշտավայրերն ու անտառները: Կատաղի քամին արմատախիլ և անում բարձրաբերձ կաղնիներ ու յեղենիներ, փոթորկալից շոինդով յեռնային անդունդը թափելով նրանց, կննդանիները դողում են ցրախց, անտառի բնակիչները վազում են այս ու այն կողմը, ատամները իրար զարնելով և լիռնային խոռոչներում ու անձավաներում ապաստան վնասուելով, Մարդիկ ման են զայխ կծկված, սմբած, նրանք իրանում են ծերունիների նման, ծածկույթ վարոնելով ձյունի փաթիլներից:

Ազգելով տնտեսական աննախանձելի պայմաններում, Հեսիոդոսը շուտ և վայելի ծանր աշխատանքի դառնությունը, Նյութական զրկանքի հետ նա վազ ճանաչել է հասարակական կյանքում տիրող անարդարությունը, հետագայում միայն դառնալով միջակ հողագործ, Հոր մահից հետո Հեսիոդոսը պետք է իր յեղբոր՝ Պերսեսի հետ հավասար ժառանգություն ստանար, սակայն կաշտաւկեր դատավորների ոգնությամբ յեղբայրը յուրացնում է նաև սրա բաժնի մի մասը: Ասկրի դատավորները արխուուկրատ դասակարգից ելին և իրենց ձեռքին ունենալով

դասակարգի հասարակական համակրանքն ու տրամադրությունը ուղղված եյին Դեմոսի կողմը: Ահա այդ մոխանցման շրջանումն և ապրել ու դրել Հեսիոդոսը:

Պատմից յերեսում ե, վոր Հեսիոդոսի մանկական առաջին տարավորությունները յեղել են ծանր աղքատությունն ու անվիճ զրկանքները: Նրա ծննդավայրը՝ Ասկրը մի յետամեաց աղքատ գյուղ եր՝ դաժան բնությամբ, ուր ձմեռը ևսատիկ չուրսոն և նեղեն խակ ամառը՝ խեղդիչ տոթը: ԵԱՅԻՄԱՏԱԲՆ ու ուերել զրվածքում մռայլ գույներով և նկարագրում բանաստեղծը իր ծննդավայրը: Ցերք հյուսիսային ցուրտ քամին, — առում և նա, — սլանում անցնում և թրակիայի հարթություններով և իր դաշնաշունչ հարվածներով սառցնում գետինը, հուզում, բարձրացնում ծովի գոռ ալիքները, այն ժամանակ տնջում ու հառաջում են ամբողջ յերկրի դաշտավայրերն ու անտառները: Կատաղի քամին արմատախիլ և անում բարձրաբերձ կաղնիներ ու յեղնիներ, փոթորկալից շոխնդով լեռնային անդունդը թափելով նրանց, կենդանիները դողում են ցրտից, անտառի բնակիչները վարում են այս ու այն կողմը, ատամեները իրար դարնելով և լեռնային խօսովիներում ու անձակներում ապաստան պնտուելով, Մարդիկ ման են զալիս կծկված, սմբած, նրանք իրանում են ծերունիների նման, ծածկույթ վորոնելով ձյունի փաթիչներից:

Ապրելով տնտեսական աննախանձելի պայմաններում, Հեսիոդոսը շատ շուտ և վայելնել ծանր աշխատանքի դառնությունը: Նյութական զրկանքի հետ նա վազ ճանաչել է հասարակական կյանքում տիրող անարդարությունը, հետագայում միայն գառնալով միջակ հոգագործ: Հոր մահից հետո Հեսիոդոսը պետք ե իր յեղբոր՝ Պերսեսի հետ հավասար ժառանգություն ստանար, սակայն կաշառակեր դասավորների ոգնությամբ յեղբայրը յաւրացնում և նաև սրբ բաժնի մի մասը: Ասկրի դաշտավորները արիստոկրատ դասակարգից եյին և իրենց ձեռքին ունենալով

կառավարական պատշառներ, ի չարն ելին գործ դնում իրենց կոչումը՝ Պերսեսը զեղիս կյանք եր վարում մեծատունների հետ, մնուշ ընկերակցությամբ նա վատնեց իր բոլոր ունեցածը և կաշառակեր դատավորների վրա դնե, ով իր հույսը՝ գործում եր վախեցնել Հեսիոդոսին դատական նոր պահանջներ ներկայացնելու սպառնալիքով, Ասկրի իշխանավորները բանաստեղծին չեցին սիրում Նրա հանդուպն լիովի համար, Նրան նեղացնում և զիրավորում եր յեղբօր պահարակելի վարմանը Ռւստի մի զեղեցիկ որ Հեսիոդոսը թողնում և Ասկրը և անդապի փուլում նախակտ:

Հեսիոդոսի պունի խրատական տողերը ուղղված են նույն Պերսիսին, վորը իր ունեցածը կորցնելուց հետո, յեկել եր սպառնալիքում ազերում յեղբօրից, Հեսիոդոսը իր պոնձում փորձում և համոզիլ յեղբօրը՝ ձեռք դարնել հոգային տշխառանքի, առեղծնել մնավական անահտություն և ուրիշ մերից սպառնալիքուն չմուրալ:

Այսուղ դարձյալ այնանդաւթյունը լրացնում և Նրա կենուուրությունը մի պատմությամբ, թե ինչպես մի խումբ մարզիկ անհիմ մեղադրանք են բարդում բանաստեղծի վրա (վրապես թե քաղաքացիներից մնկի քրոջը անպատճելու համար) և Զեսի անունը կրող ուրբազան պուրակում» սպառնում նրան, Վանքի հետքերը կորցնելու համար հանցանդները բանաստեղծի զիակը նետում են ծովը: Բայց պլիինակը իրը թե յերեք որից հետո ափ են հանում զիակը հենց այն ժամանակ, յերը լոկրնացիք հավաքված ելին այնտեղ տոնակատարության համար, Դիակը ճանաչում են անզացիք և ժայռի մնջ քանդած զիերևմանում ամփոփում բանաստեղծի ամրմինց Հանցագորները բոնվաւմ են, իրենց արժանի պատճը ստանում. Նրանց նետում են ծովը, իսկ տները հիմանատակ կործանում: Հետագայում Հեսիոդոսի զիակը անզափախում են Որիունն քաղաքը, ուր և Նրա գերեզմանի վրա հայտնի տապանագրով արձան են կանգնեցնում:

Մարդու անհատական շնորհքը, տաղանդը հին հույսերը համարում եյին աստվածներից ուղարկված պարզե, Բնության ույժերը շնչավորված եյին նրանց յերեակայության մեջ, Ստեղծագործելու տաղանդը, նրանց հասկացողությամբ, մտրմնավորված եր բնության բարձրագագաթ ծոցում շրջող մուսաների մեջ, վորոնց ներշնչումով միայն մարդը տողորդում եր ստեղծագործական վողնորությամբ:

Հեսիոդոսի մասին «Թեոգոնիա»ում պատմվում է, զոր նա ներշնչվել ե բանաստեղծական ավյունով այն ժամանակ, յերբ «սրբազն» Հելիկոնի բարձունքներում շրջող մուսաները առաջին անգամ հանդիպել են նրան, ուր նա թափառելիս ե յեղել իր հովվական ցոււղը ձեռքին, Այնտեղ յեղել ե մի մռայլ աղբյուրակ, ինչպես ինքը Հեսիոդոսն ե ասում իր նույն պոեմի նախաբանում, վորի ջրում «սրբազն» լեռան բնակչուհիները՝ մուսաները՝ լողանալուց հետո, սովորություն ունեյին շուրջպար բռնելու թե աղբյուրակից շուրջը և թե Հելիկոնի բարձունքներում, ապա աներենույթ կերպով շրջելու։ Գիշեր ժամանակ գեղեցկահնչյուն յերգերով փառաբանում Զեսին, Հերային և բոլոր աստվածներին, Յնկ ահա մի անգամ, յերբ Հեսիոդոսը լեռան լանջերում վոչխար եր արածեցնում, մուսաները մոտենում են նրան և ասում. «Դուք—անգործ հովիվներդ գիտեք միայն ձեր ստամբասին ծառայել Մինչդեռ մենք, թեպետ գիտենք հորինել այնպիսի սուս պատմություններ, վորոնք նման են ճշմարտության, բայց յերբ ուղենանք՝ գիտենք ավետել նաև իսկական ճշմարտությունը», Այսպես են ասում նրանք և Հեսիոդոսին տալիս են մի դափնե դալար շյուղ, նույն վայրակյանին ներշնչելով յերիտասարդ խաշնարածի մեջ ստեղծագործական շնորհք, Ռւշագրավ ե այն, վոր դիցուհիները պայման են դնում, վոր Հեսիոդոսը փառաբանի աստվածներին, հայտնագործի ապագայի ճշմարտությունը և պատմի անցյալի փառքը, Այդ դիցուհիները զարժանալի անկեղծու-

թյամբ արտահայտում են աստվածներից «սերված» արիստակրատ դասակարգի ցանկությունը պունտի նկատմամբ, նրա խղեսրտղեան համապատասխան ուղղությամբ վերամշակելու նպատակով։ Նրանք պատվիրում են Հեսիոդոսին յերդել, ներրողներ աստվածներին նախենական տոմմը, նրանցից դույցած - արիստոկրատ «աստվածազարմ» և «աստվածամիպ» ներօններին՝ նրանց անցյալի փառքը. չմոռանալով նաև հիշել իրենց — մուսաներին՝ յուրաքանչյուր բանաստեղծական հյուսվածքից առաջ և հետո։ Սակայն «մուսաներին», ուստի աստվածազարմ» դասակարգի այդ «ագիտալրոպին»՝ Հեսիոդոսը ամրողութիւն չեւ յենթարկելել. վոչ միայն Վոլովմարոսի աստվածներին հավասար չեւ դրվատել նրանց, այլև ընդհակառակը, ամենայն խստությամբ մերկացրել և նրանց գիշատիչ կերպարանօք (անս համեմատությունը սովակի և ուրուրի, վորի մասին մի փոքր հետո)։

Պատմական տարրեր շրջաններում տարրեր ել վերաբերմունք և յեզել գնպի Հեսիոդոսը։ Ինքնաբագ, ինքնապարփակ, անանսապես ամուր պյուղացիության գաղափարիսս Հեսիոդոսը ստրուկների գոյության շրջանում համարվել և մանր պյուղացիության, նույնիսկ իլութների և ստրուկների բանասականք, Մեղ հասել են այսպիսէ բնորսանմենք. «Հոմերոսը թագավորների պունտ և, Հեսիոդոսը — ստրուկների»։

Հեսիոդոսի գեմքը այսպես և բնորոշում հունարան Պ. Վայցը. «Դործունյա և գործնական, ուննոր գանալու հակումով, բայց բժախնդրության հասած աղնվությամբ, անողոք իր խստարարու տուաքինության մեջ, միշտ առույգ դառսող, մերի նորմապաշարմած մինչև լիակատար անհնիւթեմություն, բնագործությամբ մաայլ ու զժկամ, ժողիան անդամ հեղնանքի ծալք և պահում իր մեջ. — ահա Հեսիոդոսը, վորը հիշեցնում է առողջ և պնդակազմ բույսի և վորը հնարավորություն չեւ ունեցել լիովին զարգանալու Բեովլտիայի

ծանը մթնոլորտում, Հեղիկոնի աղքատ լանջերում, Հեսիուդու ներբողել և աշխատանքը, շարապը և խորհությներ հոգագործության մասին, ծովադնացության, ընական պիտելիքների և աստղադիտության մասին։ Մանավանդ խորը ծանոթություն և ունեցել հին առասպելների, Հեսիոդոսի պոեմը աշխատանքի և առորյա կյանքի մասին անդիր անեւ ու պարտադիր եր գոլրոցի աշակերտների համար։

«Աժիատանին ու որեւը նրա դրական զլխավոր վաստակն ե, Հեսիոդոսի այս պոեմը գերազանցորեն ունալիստական է։ Յեզրոպական քաղաքակրթության վաղեմի անցյալի պատմության տեսակետից նա ունի շատ խոշոր արժեք։ Համերական շրջանից անցել եր մի ամբողջ հարյուրամյակ, թագավորների և միասպետական իշխանների տիրապետությունը յերերզի եր հիմնովին։ Հունական ցեղերի և աղողային հատվածների մեծ զաղթականությունը յերրողական հունատանում տառջ եր բերել տնտեսական և քաղաքական նոր ձևեր, Փոքր Ասիայի հոչակված թագավորական ցեղերը զրկվեցին բացարձակորեն տիրելու հնարավորությունից, Նահապետական կենցաղի մեջ մուտք եր գործել տնտեսական նոր տարր՝ առնտուր ու արդյունաբերություն։ Հարեվան կուլտուրական յերիշերների հետ հույները մշակում եյին յեռանդուն փոխհարարերություններ, Հերոսական շրջանի «յերանելի» անցյալը այլևս հմայք չուներ, վորովիհետև նրա սոցիալական շրջանակները դարձել եյին կաշկանդիլ, Փոխվել եյին տնտեսական միջավայրն ու սոցիալական կյանքի միավաղաղ պատկերը. փոխվել եր հասարակության զեղարվեստական պահանջի բովանդակությունն ու բնույթը։ Հերոսական շրջանին հաջորդել եր նորը, բայց, ինչպես նկատում ե հունագետ Շտուլը, տակազին չեր ամրապնդվեր Առնետրական դասակարգի առաջին քայլերը վասարեն արդյունք եյին առնետրի զարգացման շնորհիվ հույն ֆեոդալական հարաբերությունների աստիճանական քայլայման։

Դյուլգացիությունը պայքարի մեջ եր հողատիրական արիստոկրատիացի հևտու Ասկայն դա ակսված պըռոցեսի առաջին հոգուն եր, Դա վոխանցման մի շրջան եր, յերբ միջավայրի նոր պայմանների մզումով հասարակության մեջ տեղի յեր ունենում մաքերի խմբում:

Հետխողոսի գորը հունական պատմության այն ժամանակաշրջանն ե, յերբ բունաստեղծները վոչ թե ռոմանատիկ անցյալը պիտի յերդելին, այլ զորժնական ներկան, ունալիցանքը, զորը առըստմ եր պատմական բնկման մի շրջան:

Ի՞նչնի՞ եր բնարաշվում հունական պատմության այդ հոգինան:

Սացիալական վերին խավը Հետխողոսի դարաշրջանում հազարին արիստոկրատիան եր, ամփոփված ցեղային կաղմակերպությունների մեջ, իսկ զյուղական աղջորդնակության ամենամեծ մասը գտնվում եր ճորտային կախման մեջ կառիրավողութիւն մշակի զիճակում: Ազատ համարված գյուղացիության հասարակական տևակարար կշեռը աննշան եր: Անեսրական և արդյունաբերական (ժամանակի համեմատ) տարրերը դրեթե աննշմարելի եյին, քանի զոր ներքին անհաւաք առաջական թույլ եր զարդացած, իսկ արտաքինը դանովում եր վյաւնիկնեցիների ձեռքին: Թագավորների տիրապետությունը ընկել եր, պետական իշխանությունը անցել արիստոկրատիայի ձևոքը: Վերջինս զրավել եր վարչական, գառական և զինվորական բոլոր պաշտոնները և զեկավարվում եր դասակարգային նեղ շահերով: Այդ աիրող կացության մեջ, հիշված զարավելը ջինս սկսված սոցիալ-արևոտեսական հին կարգերի կազմալուծմանը մեծ զարկ են աըվել հետպհետե աճող անտեսական հարաբերությունները Արեւելքի հետ: Տնտեսական բնկման վառ արտահայտություններից մեկն եր, ինչպես ասացինք, հունական մեծ զաղթականությունը, զորի շնորհիվ առևտրական կենդանի կապեր ստեղծվեցին մայր յերկրի և հույն խոշոր ծովափնյա զաղ-

թավայրերի միջև Նոր հարաբերությունների հետևանքով առաջ ե գալիս սոցիալական ճշնաժամ, հետը ըերելով դասակարգային լարված պայքար, Առևտրի զարգացումը նախապատրաստում եր հողատեր աղնվականության անկումը: Հեսիոդոսի ժամանակը այդ յերեսութիւնը առաջին մոմենտն է, յերբ ճնշված գյուղացիությունը ներքին խմորումների սույտագնապ եր ապրում: Առևտրական աճող դասակարգը հակադրում եր իր շահերը հողային արիստօկրատիային, վարպետորնեն ողտագործելով ծայր աղքատության ու բարբարոս շահագործման յենթակա գյուղացիության դժգոհությունը. առևտրականների հիմնական շերտը հանդիս եր դալիս ժողովրդի—դեմոսի անունից:

Հեսիոդոսի պոեմում տեղ են գտել հասարակական այդ յերեք տարրերն իշ՝ արիստօկրատիան, գյուղացիությունը և ծովագնաց առևտրականը: Հեսիոդոսը իր ստեղծագործության միջ առավելապես ծանրանում է հողագործի անտեսական, սոցիալական և քաղաքական վիճակի վրա, Ցելք և ուղիներ փնտուելով գյուղացու համար, նա ըստուն հարձակում և գործում տիրող դասակարգի վրա և մասամբ միայն խասում ծովի փոթորկներին յենթակա վաճառականի մասին:

Հեսիոդոսի «Աշխատանին» ու ուերեւը գրված և եղիքական ձևով. սակայն նրա մեջ մենք չենք դանի հերոսական անցյալի վառ գույներն ու պատկերացումները, վորովհետեւ նրա շրջանը դասակարգի վայելքի շրջանը չեր, նա յերգում եր իր ճնշված դասակարգի ներկան, վոր լի յեր գործնական պահանջներով, այն ներկան, ուր հասարակական խոռնարհ խավերը տնտեսական անասելի պայմանների միջ եյին դեղերում: Համերոսի բանաստեղծությունը ինքնազմն արիստօկրատիայի համար եր, Հեսիոդոսի բանաստեղծությունը՝ հասարակ գործակորի համար: Հասարակական այս խավերը ծանր կացությունից յելք եյին փնտում: Այդ վա-

բոնումների արձագանքն եր Հեսիոդոսի բանաստեղծությունը՝ Բանաստեղծի նպատակն և ուղիղ նաևապարհի վրա դնել հարսանարվող դյաւդացիությունը, աղատել նրան մաշող թշվառությունից:

Հասարակական հակադիր ռւյժերի պայքարը նեռավոր անցյալում Հեսիոդոսի դիտակցության մեջ պատկերացնել ենուն վորովն հին և նոր ասավածությունների ընդհարում:

Հին Թրոնոսի դեմ՝ նոր Զեսը, իսկ այժմ ել Զեսի դեմ ըմբռսս Պրոմեթեուսը:

Հին Թրոնոսի անկումը ամենայն հավանականությամբ ֆանտասիական անդրադարձումն և նախահունական խոչոք միապետությունների անկմանն իսկ հունական ներգաղղողող ցնդների մզած հաղթական պայքարը սեփական միապետությունն հաստատելու համար՝ դա Զեսի հաղթանակն եր Զեսը հունական միապետության առաստեղական պատկերացումն է, Զեսը ոմազած և զաժան միապետի բոլոր հատկություններով:

Հեսիոդոսը ասավածապաշտ և, ավելի ճիշտ ատվածավախ, զնչ իր ունեցած սիրուց գեղի Զեսն ու մյուս աստվածները, զնչ այն դիտակցությունից, թե յեթերում ատրոդ յերկնույին ռւյժը մարմացած մարդասիրություն ե կամ արդարություն, այլ վարովինեան յերկյալ և սարսափ ունի նրանից: Գաեմի հեղինակը մի քանի անդամ շեշտում ե Զեսի անտղորմ լինելը, նրա վրեմինդրությունը և մարդկության նկատմամբ ունեցած թշնամական վերաբերմունքը: Մարդկությունը, Հեսիոդոսի ասելով, անքում և «աստվածներից տնօրինված մոայլ ճակատապրի» ծանրության տակ, Ամպրապային Զեսը իր բոլոր արբանյակների հետ միասին, հարածում և մարդկանց: «Մեծն ասավածները, — ասում ե Հեսիոդոսը, — թաղցրին մարդկությունից անունդի աղբյուրները: Խորամիտ Պրոմեթեուսի պատճառով աստվածների հայր Զեսը շանթեց մարդկությանը զաժան հոգսերով», Նա կա-

մենում և հավիտենական խավարի և թշվառության մեջ պահել մարդկանց, ի՞նչ եր սակայն արել առասպելական տիտանը—Պրոմեթեուսը, ըմբոստանալով անողորմ Զեսի դեմ՝ նա անցել եր մարդկանց կողմը, գողացել եր յերկնքից «աստվածային լույսը» և սնամնջ յեղեգնով բերել հանձնել մարդկանց Անորինակ գայրությով լցվում և Զեսը Պրոմեթեուսի դեմ և Վոլխմասի գաղաթից անեծք թափում թե նրա և թե բազմաչարչար մարդկության ոլխին,

Դու,—ասում ե նա Պրոմեթեուսին,—ցնծում ես, զոր լույսը գողացել ես ինձանից և հաղորդակից արել նրան մարդկությանը, բայց զիտցիր, վոր դա քո և հետագա սերունդների զլխին ծանր տառապանք կրերի Յնչ Զեսը՝ թունավորելու համար մարդկանց կյանքը, չարիք և ուղարկում նրանց, մի չարիք, վորին մարդկությունը ինքը պիտի փարի ամենամեծ սիրով...

Պրոմեթեուսին Հեսիոդոսը անվանում է «Յազելի» ազնվագույն վորդի», իսկ Զեսին պատկերացնում վորտես դաժանս, միմիշայն պատիժներ առաքող ույյժիր, Հեսիոդոսի ամրող համակրանքը անկասկած ըմբոստ Պրոմեթեուսի կողմն ե, Աստվածներից Հեսիոդոսը վոչինչ լավ բան չե սպասում առհասարակ։ Ընդհակառակը, ամեն դժբախտություն, նրա կարծիքով, յերկնարնակ անմահներից և ծրնչ գումաւ Հեսիոդոսի սպոեմում նման բնորոշումներ շատ կան, մանավանդ Զեսի նկատմամբ։ Վերն ե սակայն Զեսի ուղարկած չարիքը։ «Պանդորեյի լեգենդին» նվիրված հատվածում Հեսիոդոսը տալիս ե այդ չարիքի պատկերը։ Զեսը հրամայում ե հռչակավոր Հեփեստոսին ստեղծել մի այնպիսի սքանչելի գեղեցկուհի, վորի «զեմքը նման լիներ աստվածունիներին»։ Վոսկեծդդի Աֆրոդիտեն պետք ե պսակեր նրա գլուխը տառապանք ծնող սքանչելիքներով, մարմնական տենաչերով ու գեղազարդվելու ցանկությունով։ Արգոսասպան Հերմեսը պետք ե ոժտեր նրան ցոփ խելքով ու տնտեմաթ-

համեստմանը Աթենաս-Պալլասը պարզաբանքներով՝ ծածկեր նրա մարմինը, Մի խօսքով, աստվածները երենց համարական ուժերով պետք և ամեն չարիքով լցնելին մարդկանց կյանքը Յեր ամեն ինչ պատրաստ եր համաձայն Զեսի ցանկության, նորաստեղծ զեղեցիունուն նա տուիս և Պանդորե անունը՝ Պանդորեյի յերենային զեղեցւելության առել թաղնախած եր համամարդկային չարիքը, վոր Զեսից նախասահմանված եր բավանդակ մարդկության հաւաք, Պանդորեյին Զեսը Հերմենի միջոցով ուղարկում և Նովի միթեասի (Պրոմեթեուսի յեղբայրը) մոտ վորովս ընծառ թիւպնա Պրութեումը նախաղուշացրել եր սրան չընդունել յերբեք վայիմապականից վորեն ըստա՝ սահկանացուներին չարիքից զերծ պահելու համար, բույց նովիմեթեումը, ընդունելով Պանդորեյին իբրև ամուսին, փարեց չարին ու չարիքին, Այլ խօսքով չարիքը ծննիկ Զեսից և նովիմեթեումի միջոցով ծավալինց ամբողջ աշխարհում Աստվածներից պարդե ընդունելը դժբախտություն եր Թե առասդեմը և թե պուտի հնագիտակը չարիքի արմատը տեսնում են աստվածների մեջ:

Մարդկությանը, ըստ Հեսիադոսի, արդեն դաստորաբավոծ և հավիտենական տառապանքի ու չարիքի, աշխատանքի ու զրկանքի, վորոնք ուղարկվոծ են զերբնական ուժերի կողմից վորպիս պատիժ: Միշտ սակայն այդպիս չեղողի մարդկային ճակատագիրը:

Հեսիադոսի մոտայլ մաքերը բոլխում են նրա հասարակական ախտուր շրջապատից, Գյուղացիության և առնատրուկ ճնշված դասակարգերի ծանր վիճակը, արիստոկրատիայի սանձարձակ, լկաի վերաբերմունքը զեղի հասարակական վարի խավերը, դառն մտքեր եյին ծնում բանառեղծի մեջ: Չարիքի փաստական գոյությունը նա տեսնում եր շոշափելիորեն, բայց չզիաներ նրանց իսկական պատճառները: Դրանից ել առաջ եր գալիս նրա հուսահատությունը

ապադայի նկատմամբ, Անորոշ ապագան ու տխուր ներկան դրդում ելին Հեսիոդոսին իր հայացքն ուղղել դեպի հեռավոր անցյալը, յերբ և մարդիկ ապրել են ավելի լավէ, նույնիսկ յերանելի կյանք: Դա նահապետական դրուդացու փիւսոփայությունն ե, վորի տեսակետից անցյալը միշտ ավելի գրական ե, միշտ գրավիչ: Ամիսոսանքով են միշտ խոսել հայրերն ու պապերը անցյալի նկատմամբ, համոզված, վոր անցյալում ավելի հեշտ ե յեղել ապրելը:

Հեռու անցյալում, տառա և Հեսիոդոսը, ապրել են մարդիկ, վորոնք գերծ են յեղել չարից ու ծանր աշխատանքից, տանջող ու մահաբեր ցավերից... Սակայն յերբ կինը (Զեսի ուղարկած Պանդորեն) իր ձեռքով բարձրացրեց սափորի մեծ խումբ և աստվածներից ուղարկված աղետալի չարիքները շաղ տվեց յերկրի վրա, այն ժամանակ մարդկանց համար բացվեց տխուր հոգսերի մուայլ շրջան: Մարդկանց մեջ շըրջող չարիքները անթիվ ու անհամար յեղան: Աշխարհն այժմ լի յե չարով, լի յե նրանով և ծովը: Անցանկալի, անկոչ ցավերը որն ի բուն հետևում են մարդկանց, աղետն ու թշվառությունը տարածելով լոռության մեջ, վորովհետև ամենագետ Զեսը անըարբառ և ստեղծել նրանց:

Ի՞նչ և մնացել մարդուն: Միմիայն հույսը: Հեսիոդոսի հոռետես փիլիսոփայության մեջ առկայժող մի կետը ապագայի աղոտ հույսն ե: Տիրող սոցիալական անարդարությունը բանաստեղծը բացարում է կույր ու անողոք ճակատագրով: Մի կողմից մարդու անճարությունը բնության տարերքի հանդեպ, մյուս կողմից նրա սոցիալական անհավասարությունը, վոր անըացատրելի յեր այդ դարում՝ Հեսիոդոսին դարձրել ելին Փատալիստ և հոռետես: Ամեն ինչ այս աշխարհում տնօրինվում ե ի վերուստ, ուրեմն չարիքն անուղղելի յն Յեղ մարդկային անվերջ թշվառության առջև կանգնած Հեսիոդոսը իր տխուր ու հուփ մտորումներն ե անում: Ճակատագրից խուսափել չի կարող և վոչ մի մահկա-

նայում, ինչպես անկարող յեղան այլ անել Տըսյական պատերազմի հերոսներից շատերը, ինչպես նաև հայտնի նդիս արքան, մոր սպանեց հարազատ հորը և ողջեց հարազատ մոր անկողինը...

Սակայն ի՞նչպես և մարդկությունը հասել ներկա թըշ-վու վիճակին, Հեմիոդոսի ժամանակակից հույն ժողովրդի հասկացողությամբ՝ մարդկությունը իր բարոյական և նյութական դարդացման մեջ ունեցել և հինգ դարաշրջան, հաջորդական կարգով դեպի վատը թեքվելով:

Առաջին դարում առրել և մարդկության վոսկե սերունդը, վարը իր ծագումը ստացել և Վոլխմադոսի անմահներից: Այդ սերունը առընկ և Թրանոսի ժամանակ, ապրել և ինչպես տառվածները, անարաւում, առանց ծանր աշխատանքի ու հպատերի: Շերությունը չեր մոտենաւմ նրանց, ցընծությունն ու ուրախությունն եր միայն տիրում միշտ: Վուցանում ելին, վոչ հնձում: Բնությունը ինքն եր պահպանում նրանց զոյությունը իր լիսաւատ սեղանից: Այս յերշանիկ սերունդի մահը խակական մահ չեղամ, այլ մի թեթև թմրիր, վար տիրեց նրանց ու տարավ դեպի հավատենական յերանություն: Յեկ ահա այդ վասկե սերնդից հնատ սկսվում և մարդկային ցեղի տառինանական անկումը:

Ենթարկորդ սերունդը՝ զա արծաթ և սերունդն եր, վար գոչնչով նման չեր նախորդին՝ վճէ կաղմով և վճէ խելքով: Թշվառությունը այս սերունդից և սկսվում: Մանուկ հասակում այս սերունդի մարդիկ անողոր են ու անողնական, իսկ հասանությունը շրջանում թշվառ ու տանջվող, վորուինեակ ընդունակ չելին սահնձելու իրենց կատաղի բարքերը և անմահներին հարկավոր զոհը ստառցելու: Ռւսակ և Զեսը այս սերունդը ծածկեց հողի տակ:

Ապա Վոլխմադոսի անմահները ստեղծեցին յերբորդ՝ ողդնձեւ սերունդը, վարը իր հերթին նույնակես նման չեր նախորդին: Առ մի զարեղ և սարափելի սերունդ եր, վարի

գլխավոր հոգսերն եյին ռազմական դործերը, թշվառությունն ու բանությունը։ Նրա վոգին անընկանելի, յիր ինչպես աղողագատ՝ և՝ անմատչելի, և՝ անհազթելի։ Նրանց գործիքները պղնձից եյին և տները պղնձից, բոլոր աշխատանքները միմիայն պղնձով եյին կատարում, վորովնեակ այն ժամանակ դեռ չկար այժմյան սև յերկաթը, Բայց վորչափ ել նրանք սարսափելի և ահարկու չմնելին, սև մահը զրկեց նրանց փայլուն արեկ կենսատու լույսից։

Ցեվ ահա յնըր այդ սերունդը ևս ծածկվեց հողով, առաջ յեկամ մի նորը՝ չորրորդը, Հերուների սերունդն երսա, վոր իր նախորդից արդարամիտ եր ու բարձր Սակայն սրանց վոչնչացրին աղետալի պատերազմները, ահավոր ձակատամարտերը՝ վամանց յաթգարպայան թերեյում, վամանց Տրոյայում՝ «գեղագանգուր Հեղինեյի» պատճառով։ Այսուեղ նրանք գտան իրենց մահը, և Զեսը աշխարհի հեռավոր մի ծայրում տեղավորեց նրանց՝ հեռաւ անմահների յերանավետ բնակավայրից։ Նրանց վրա թագավորում և Քրօնոսը (ժամանակը)։ Նրանք ապրում են յերանելի էղղիներում հորձանուստ Ովկիանոսի մոտ, ոժտված անտրուում վողով, իբրև յերջանիկ հերոսներ։ Փարթամ ու բերրի դաշտավայրը Շտարվա մեջ յերիցս պարզում և նրանց պառաջներ, վորոնք մեղրի քաղցրություն ունեն։

Վերջին տօղերը զարմանալի հիշեցնում են հոմերական սոմանտիկ անցյալը, յերը նահապետական միապաղադ գորշ Փոնի վրա սանձարձակ տիրողներն եյին միայն յերեսում։ Չկար մասսայական ըմբուտացում, չկար բողոք ու ցասսում անզուսպ տիրողների դեմ։ Բայց մենք գիտենք, վոր անազատ ու սարուկ մասսան անխռո մշակում եր բերրի դաշտավայրեցը և իրենց տերերին տարեկան «յերիցս պարզեցում եր» այնպիսի պտուղներ, վորոնք մեղրի քաղցրություն ունեյին...

Իսկ այժմ—Հեսիոդոսի դարման Դաւին ու ծանր են այժմ ճամանակները, Հեսիոդոսի դարը յերկա թե դար եր՝ լցված առապանքով ու ցավերով, չարիքներով, անարդարությամբ ու թշվառությամբ և մասնաւում և Հեսիոդոսը,—ինչն յև աղբում հինգերարդ սերունդի մարդկանց մեջ, ինչն չեմ մեռել առաջ կամ մնանալ հետո... Վոչ ցերեկն են դաշտառամ ծանր աշխատանքն ու թշվառությունները և վոչ դիշերը, Փշացած և այս սերունդը, վոչ հայրն և սիրով ապրում իր վորդու հետ, վոչ վորդին հոր հետ, վոչ յեղբայրը յեղբայր հետ, վոչ բարեկամը հյուրի հետ և ընկերը ընկերոց, Անաղնիվ դամակները հրամարվում են կնքակրներ իրենց ծնորացած ծնողներին, գոտարում են պատրիլու նրանց, չար ու կատաղի հայնոցանքներ անշալով նրանց զլինին, Չեն ճանաչում ոյերկնային անխուսափելի հատուցման» ճնարաբարությունը, Այժմ ճշմարսությունը փոխարինվել է բառնցքով, Վոչ վոքի մեջ հարդանքի զգացում առաջ չե բերում վոչ յերդմատանը, վոչ արդարամիտը և վոչ բարեկիրար, Ավելի շատ սրիկան և չարապործն և արժանանում պատիի Վորանը ույժու և, այնուազ և և իրավունքը Աիզնն ու ամսիք շատառի բոլորովին կլիողնեն մարդկանց և կվերանոն յերկինքը, Մարդկանց կմասն միացն դաժան աղեանները:

Ահա Հեսիոդոսին ժամանակիցից կյանքի պատկերը, վոր նո յերկաթիկ դար և անդանաւմ:

«Բանության մորդիկ են որանք, — շաբունակում և նա, — անձնական վոխի պատճառով պատրաստ են տմբողջ սերունդներ կործաններ Աղաղակող նախանձը՝ առնլությունը աշքերին՝ շրջում և խղճանարության արժանի բոլոր մարդկանց մեջ, ցնծում ծալվարված չարիքների համար, վորոնցից չես վրկություն։

Սրանով Հեսիոդոսը ճնշված պյուղացիության դառն մասրամենքն և արտահայտում նա կողմանակից և անտեսապիս ուժեղ պյուղացու, նա պահանջում և ստեղծել այդպիսի

դրություն միմիայն աշխատավոր անքով, բայց զվոչ հափշտառկությամբ ու անարդարությամբ», Հեսիոդոսը լարված, զայրացած և թագավորների և ֆեոդալների դեմ, նրանց աշտուու դատաստանի դեմ: Նրա պոեմում լսվում են ատելության և սպառնալիքի ձայներ ժողովրդի իշխանությունը հափշտառկող ոլիգարխիայի դեմ:

— «Տառապում և մի ամբողջ ժողովուրդ Սակավորների անազնվության պատճառով, — բացականչում և Հեսիոդոսը զայրացած, — թագավորների, վորոնք արդարությունը չարամտորեն փոխարինում են անարդար դատաստանով»:

Իր հակակիշխանական տրամադրությունների մեջ բանաստեղծը այնքան և հետու գնում, վոր հանգնում և բացարձակ սպառնալիք ուղարկելու թագավորներին, ասելով.

— Զգույշ յեղեք, դհեք, ընծայակուլ (ձրիակեր, ամենակուլ) թագավորներ... խորհեցեք հատուցման մասին, վոր գալու յե...

Թագավորներին և իշխաններին նա բացարձակորեն համեմատում և գիշատիչ ուրուրների հետ, վորոնք հողոտում են մանր ու անողնական թռչունների մարմինը, իր անհատական զայրույթն ու սողութը սակայն, բանաստեղծի սեփական խոստովանությամբ, վոչ այլ ինչ և յեթե վոչ «գիշատիչ» ուրուրի ճանկն ընկած անգոր սոխակի նովոցը»: «Պատմմամ մի առակ թագավորների մասին, — ասում և նա, — թե վճռքան անխելք են նրանք: Ահա թե մի անգամ ինչ ասեց ուրուրը սոխակին, խրելով իր ճանկերը նրա մարմինը մեջ և տանելով նրան բարձր ամպերի միջուկ, Ցավագին ծվում եր սոխակը, ուրուրի ծուռ ճանկերի մեջ սեղմված: Գիշատիչը արքայաւար դարձավ նրան. «Թշվառական, ինչ ես ծղրտում. չե վոր յես քեզանից ուժեղ եմ. ինչ ուղում ես յերգիր, յես քեզ կտանեմ ուր կուզենամ, Կարող եմ ուտել քեզ, կարող եմ և թողնել աղաւ, Անխելք ենտ, ով կփորձի չափմել ուժեղի հետ»...

Հեսիոդոսը արտահայտել և այսաւեղ ոյցուղացու ասրսափը ամենազոր իշխաններից ու դատավորներից, վորոնք ոյցուղացու դատը անմնում է յին առանց որինքի իշխողները ասավածների նման անսողոք են ու դաման, նրանք ընդունակ են միայն չարիք և պատճի ուղարկելու:

— Վճյ այն խենթին, — յնդրակացնում և բանաստեղծը, — վոր կհամարձակվի կովի մանել ուժեղ թշնամու հետ, Զի հաղթի նրան, այլ ավելի կստորանան և խայտառակ կլինի:

Յետքարական հարաբերությունների կազմալուծման հետեւանքով խախտվել յիշին հասարակական նին նորմները, Հետիոդոսը մոայլ գույներով և նկարադրում իր ժամանակականից միջավայրը, այդ միջավայրին հատուկ համարելով պողությունը, կաշառակերությունը, ավաղակությունը, պորտարածությունը, անառակությունը, բարքերի անկումը, վորքերին գրկելը, ծերացած ծնողներին անպատվելը և այն:

Դժվար և յերիակայն ավելի խոր հոռետեսություն սոցիալական տիրող կարդերի վերաբերմամբ, քան այն, վորունեցել և Հետիոդոսը հաղարավոր ասրիներ առաջ:

Պետիմիդմը Հետիոդոսի մեջ անցողակի տրամադրություն չե, այլ աշխարհայացք: Սակայն այդ պետսիմիդմը ինքնասպանություն չե քարողում, հոռակարման յենթակա չե: Զեւնթափ, ունայնամիտ չե դառնում Հետիոդոսը նապատասա և ուայքարի մեջ մտնելու տիրող ույժերի գեմ, այսինքն թագավորների, հասարակական ավաղակների, կաշառակեր դատավորների դեմ: Բայց ուայքար՝ միմիայն մեղմելու համար այն առասպանքները, վոր բերում և մարդուն ծանր ու անարդար կյանքը: Նրա մարդումների ու հակաների առարկան լինելով աշխատավոր հողավործը, նա մի խղեալ եր փայփայում իր մեջ—թեթևացնել այն առանսական լուծը, վորի տակ անքում իր ճորտատիրության ու սորկատիրության շղթաներով կաշկանդված ոյցուղացին:

Հեսիոդոսը արմատական միջոց չունի գյուղացու, ուստի ժողովրդական մասսաների դրությունը փրկելու, ուստի պահանջում և ձգտել թեթևացնելու նրա թշվառ վիճակը, Նա դիմում և ամենից առաջ մարդկանց խղճին և արդարամտությանը, փոխադարձ հարաբերությունները կանոնավորելու, և սոցիալական անարդարության սրությունը նվազեցնելու նպատակով, Յերկրորդ միջոցը մարդավայել ապրելով՝ տնտեսությունն և, աշխատանքը, հողագործին ազահովություն ստեղծելու համար, Յերրորդը՝ յերկնային հարկն և, վոր խստորեն պահանջում է քրմական յերարխիան մահկանացուներից՝ հանուն «Վոլվումպարնակ աստվածների»։ Ուրեմն պետք ե լինել արդարամիտ՝ մարդկանց նկատմամբ, աշխատանքը դարձնել գոյության հիմք և հարկ գնարեն անողոք «աստվածներին», չգրգռելու համար նրանց փոխարքաների, յերկրային ներկայացուցիչների—քուրմերի բարկությունը, վորոնք սերտ հարաբերության մեջ և՛ն թագավորների ու իշխանների հետ։

«Աւշտամբն ու ուերեի մեջ Հետիոդոսը խստարար առաջնորդի խրատականությամբ խօսում և գյուղացու խելացի տնտեսության և բարոյական կենցաղի մասին, Նա մշակել և յուրոքինակ մի կողեքս, որենսպիրք, հյուսված խրատներով ու խորհուրդներով, հույն գյուղացիության համար, հիմք ընդունելով ժամանակի ժամանակից բարոյական գրական նորմերը։

Ըստ Հետիոդոսի, քանի որենքն ու արդարությունը բացակայում են, «միևնույն և, լավն ու վատը զանազանող չկա»։ միատեսակ և վերաբերմունքը և զեպի այս մարդը, վոր «աղերսողի հետ ոտոր և վարվում, և զեպի նա, վոր իբ յնորոք ընտանեկան առաջատն և պղծում, վորքերին զրբելում, ծերությունի ծնողներին ոլիրավորում»։

«Անարդարությունը ափելի յի վարձատրվում և ճանապարհ հարթում իրեն,—ասում և նատ—Մինչդեռ այստեղ, ուր

արդար դատաստան կա թե բնիկի և թե յեկվոր ուսարականի համար, ուր ճշմարտությունը վատնատակ չե գնում, — ոյնտեղ պիտությունը բարդավաճում է, բարդավաճում էն և ժողովուրդները, յերկիրը հեռու յե մնում արյունային ընդհարութերից, իսկ գեպի անկում գիմող իշխող դասակարդը սանձարձակ կյանք եր վարում, ոչկար որինք և արդարությունը, Յեկ վորովնետե չկար որինք, Հեսիոդոսը խրառում և մարդկանց զեկավարվել սեփական խզմով և արդար շահերի դիատակցությամբ: Բոնապետական յեսամոլական ուերաբերմունքին, վոր ցուցադրութ եր սանձարձակ որիստոկրատ դասակարդը ճնշված աշխատավոր սասաների նկատմամբ, Հեսիոդոսը հակադրում և ժողովրդական բարյական հասկացողությունները մարդկանց փոխհարարերությունների տեսակետից, Կյանքի հաստատուն հիմքը և յերկիրի ապադա բարդավաճումը նա տեսնում և ժամանակի հույն ժողովրդական մասաների հասկացած արդարադատության և աշխատանքի սկզբունքի մեջ:

Չարիք դործելը, — ասում և պոետը, — ոժվար բան չե կար և գեպի չարիք տանող ուղին, իսկ առաքինության ուղին յերկար և, բարձր ու կեռմաններով: Դժվար և միայն սկզբում Բայց յերը հասնում են զավաթը, ճանապարհը գառնում և հարթ ու թնթի, Լավագույնը բոլորի մեջ նա յե, ով ընդունակ և ինքնուրույն դատել գործի մասին և հախատենի հետեանքը, արժանի յե ալատվի և նա, ով լսում և ուրիշերի ոկատկար խորհարդը:

Հեսիոդոսը շատ և խոսում քաղցի մասին և համոզում անդուչ աշխատեն՝ խուսափելու համար սովից: Բանապետական քաղաքական պայմանները ավելի և յին նպաստում ճընշված դասակարգերի անտեսական կյանքի ծանրացմանը և բարդացնում գոյության կոփը մանավանդ հյուսիսային Հունաստանի անքերի շրջաններում, ուր ապրել և Հեսիոդոսը:

Աշխատիր անդադար, — խրախուսում և նա, — վոր քաղցը արհամարհն քեզ, իսկ Դեմետրը անդավաճան սիրե քեզ ու լցնի քո ամբարը բաղմատեսակ բարիքով։ Թաղցը — մըշտական ընկերն և ծույլերի, Զայրույթի արժանի յե նա, ով ապրում և արու մեղմի նման, վորը չե աշխատում, բայց ուստում և աշխատավոր մեղուների պատրաստած մեղրը։

Աշխատելը ամոթ չե, չաշխատելն և ամոթ։ Զզվելի յե ուորտարույթը։ Աշխատանքով կդառնաս ունուր և ծույլերի նախանձը կշարժես։ Ուրիշի ունիցածի վրա աչք մի տնկի, ևսիր խորհուրդ՝ սնունդիդ մասին մատծիր, Յեթե մեկը հարցստություն և դիզում բոնությամբ կամ իր ամազակային լեզվով, վորի միտքը խավարում և ագահ շահերի ձգտումից, կնշանակե ամոթը փոխարինվել և լրբությամբ։ — Նման մարդուն աստվածները ստորացնում են և կործանում նրա տունը։ Կարճատե և լինում այդպիսիների վայելքը, Պատմիր ծնողներիդ, վորոնք կանգնած են ծերության տիսուր շնորհին։ Խնայիր վորբերին։

Հեսիոդոսի համար նույնքան պարտադիր և յերկնային հարկատվությունը, վորքան և պետականը։ Այդ հարկատվությունը բղխում և գարճյալ անտեսական պետքերի հասկացողությունից։ Աստվածներից նա սպասում և ժամանակին անձրև, բերք, նա իր հույսը կապում ե բնության ույժերին և այլն։ Ուստի խրատում ե։ Աստվածների բարեհաճ տրամադրությունը քո կողմը թեքելու համար։ — ասում և նա, — զոհ մատուցիր նրանց։

Խնջույք ունենաս՝ հարևանիդ անպատճառ կանչիր։ Յեթե դժբաղդություն պատահի՝ առաջինը նա յե հասնելու կատարյալ ախտ և վատ հարեանը, լավը՝ զյուտու Յեթե հարևանդ լավ լիներ՝ յեզդ չեր կորչի։ Պարտքդ տուր լրիվ, փոխարդ վերադարձու հավելումով, վոր կարիքի դեպքում կրկին կարողանաս վերցնել։ Անմաքուր ոգուտից փախիրանմաքուր ոգուտը կործանարար ե։ Միրիր քեզ սիրողին։

Աղջիկը ովհասդին Չափաղին սի ողնիքը Ողջություն հասցնողի սիրար արախամում և իր բարի ողբերգիլ: Բայց մեկը յեթե ինքնակատ և մերցնում, յենթարկվելով անամօթության զգացմանընթին, թեկուղ վեշտրանը լինի քիչ դրանով նա մեր սիրուր ախրնցնում և, Աղուտ և տառա խոհիք դիմին, յերբ նոր ևս բացնէ ատկառը կամ յերբ հատակն ևս հասել արդին: բայց չափաղի յեղիք ատկառի կեսին: Երծացելիք յեխնայագությանդ, յերբ հասել ևս ատկառի հատակին: Ամենային նետ, առ յնիսկ յեղորորդ նետ զործ բանին վեհաների ներկայությամբ, Կատկանամառությանը և միամիտ վասանությանը հայտաբառապես կարծանաբար ևս Յեղիք զգույշ, ամենքին մի հաղատա, փախիք թեթևառիկ կանանցից և մի լոի նրանց հրապարազ զբույցը, խելքով զմիշցող կհանեն և ամրարդ կմարքեն:

Տիրող կացությանը սուր քննազատության յենթարկելուց հետո, Հետիոգասը անցնում և հողազորնի աշխատանքի կազմակերպությանը, վորի մեջ տեսնում և քաղցից ազգամիւրու միջջոցը, Մանրամասն թվում և աշխատանքի այս նորդուկան զործությանները, վորանք միայն ընդունակ են «Դնեմետի բոլոր զործները աջադ վախճանի հասցնելու» և ազգանելու: աշխատադին համտառին հետապնդող քաղցից: Հետիոգասը հրանենդում և հողազործներին՝ ժամանակին պատրաստ լինել գաշտ զուրս գալու: աշխատանքի, պատրաստել յեղները, զործիքը, հոտաղին:

Հենց վար Արենելքում ծաղի Ա.ալանդիսը—Ծուլ համաստեղությանը,—ասում և նա, —ձեռք դարկ հունձին, հենց վոր թեքիք գեղի մայրամուտ՝ մկնիք ցանդ: Դործիքներդ լիսին պատրաստ ունեցիք տանդ, վար սւրիշից չխնդրես: Ծեմեն մերժի բնչութեա պիտի աջողիս զործու թանկ ժամանակդ կանցնի և զու կինասս խաչընդուամած: Մի հետաձգի անելիքը վաղման, զատարի ևս մնաւմ այդպիսիների ամբողջեց:

Հեսիոդոսը հրահանգում է, թե յերբ և ինչպես պետք է կերկել, ցանել, մշակել և հավաքել. ինչպես պահել յեղներին, ունենալ շակված գութան՝ անգամ իր պահնատի մասերով, ապահովել սեղոնային աշխատավորներ և այլն, Մի ամբողջ ծրագիր ցանքսի և հացամթերման, Մտածված ազրուպրոպագանդա մոտ 3000 տարի առաջ, «Հենց վոր համառ և վարելու ժամանակը մահկանացուների համար, — շարունակում և նա, — յեռանդով ձեռք զարկեք աշխատանքի—բանավիր և արտատեր: Խոնավ և հողը թե չոր—վարիր անդադար, հանգիստդ մուացած: Տեղիցդ վեր կաց վաղ արշալույսին, վոր արտօ փարթամ աճի, Յեթե գարնանավարդ ամուռը վերստին վարես—չես խարվի. ցանիր քանի հողը վըլսրուն եւ կրկնավարը կազատի յերեխաներիդ աղետից ու կմխիթարեւ, Մանդաղդ սրիը առաջուց և գործազորներին վաղ զարթեցրու: Որվա աշխատանքի մի յերրորդը արշալույսին և կատարվում: Խուսափիր առավոտը յերկար քննւլուց, խուսափիր ստվերու տեղերից հունձի ժամանակ, յերբ արեից չորանում ու կնճոռտվում և մարմնի կաշինո Հանդըստի ժամանակ զնա նստիր ծառի ստվերին, ինը հացդ ու կտոր միսը, անհոգ խմիր գինին, ջրախառնելով այն, ապա յերեսէ գարձրու թարմ զեխյուռի հոսանքին, հայացքդ ուղղ զելով վճիռ աղբյուրի ջրերին: Յերբ կվերջացնես աշխատանքդ և պաշարդ տուն կրերես, իմ խորհուրդն եւ վնրցրու անտուն մի մշակ և մի անգավակ կին: Ձեռք բեր սրատամ մի գամփու, վորից ուտելիք չխնայես,—այն ժամանակ ողու չես վախենա ցերեկը քնող մարդկանցից^{*)}: Ապահովիր ջորու և յեղան տարվա կերը: Յեկ թող բանվորը հանգիստ տա իր սիրելի ծնկներին, յեղներին ել աղատի լուծից:

Հեսիոդոսը խորհուրդներ և տալիս նաև ծովագնացներին: Դա բնորոշում և առետրական հարաբերությունների

^{*)} Այսինքն դաշերից:

դարձացումը։ Յեթե Հսկորոսի Շնորհականը հռւնական առևտի առաջին քայլերի ուրուղին է, Հսկորոսի պունդը արձանագրում և ասեարի առաջնադաշտան վիճակը ուղարկույն ծովին հովիդրյա քաղաքներում, այլ և հռւնական ներքին դյուզներում Հսկորոսի ժամանակ հռւները ծովով ապրանք եցին առանում վաճառելու Նա խորհուրդներ և տալիս ծովադաց վաճառականներին, թե ինչպես իրենց պետք և պահեն ծովի վրա և աարժա մին յեղանակին հարժար և բաց ծովի դուրս դար Բայց Հսկորոսը ներքին Հռւնաստանի բնակիչներ, այսինքն ցամաքի բնակիչն և մեծ յերկյուղ ունի ծովից Նրա կարծիքով լավ և կանգնած լինել հաստատուն հաղի վրա, բան որորվել ալենկած ջրերում,

Այս ամենից հետո Հսկորոսը անցնում և ընտանեկան հարցին և կնոջ:

Ի՞նդհանուր առմամբ Հսկորոսը, լինելով գյուղացու գողափարախոս, ցուցազրել և դարերով սրբազնութեած անարդար վերաբերմունք գեղի կինը, թեարեւ դանազանություն և գնում լովի և վատի մեջ, Հսկորոսը ամուսնության վերաբերյալ ցուցմունքներ և անում, տանդ կին ըեր հենց վր հասնես հարմար տարիքի, Մինչեւ յերեսունը մի շատպիր, յերեսունից վեր՝ մի ձգձգի Աղջիկ առ կնության, վր հեշտ լինի նրան դաստիարակելը, Աշխատիր հարևանից աղջկանը վերցնել, ամեն բան նախատեսիր, վր հետ ծաղրի առարկա չդառնաս, Լավ կնկանից թանգ վաչինչ չկա աշխարհում, վասից ել առաստիւլիտ վոչինչ չկա աշխարհում Այդ անսուկ կինը կչորացնի ամենառութեղ տղամարդուն և ունմաժանուկ դերեզման կուզարկիւ

Նահապետական մեծ բնաւանիքի պատկեր չկա Հսկորոսի պունդում, Ի՞նտանիքի հոր մահից հետո հասունացած և ամուսնացած դավակիները բաժանվում են միմյանցից, բաժանում ժամանագությունը և անկախ ապրում իրենց կանոնց և յերեխաների հետ:

Տնտեսությունը փակ է, այսպես կոչված ոյքոսայիշ (տնային փակ տնտեսություն), Ամեն բան տանն և պատրաստվում և պատրաստվում մեծ մասամբ կանանց ձևորությունները մանում են, գործում, կար անում և ողնում վարի և հունականակի:

Հեսիոդոսի նկարազրած գյուղը աշքի յե ընկնում իր նախապաշարմունքներով և բնության յերեւութեանը վերաբերմամբ ունեցած նախնական հասկացողությամբ,

Այս և պոեմի ամբողջ բոլոնդակությունը, վորի մնջ, ինչպես վերը ասացինք, գերակշռող տարրը միտքն ու խրատականությունն եւ Հեսիոդոսը առաջնակարեն հրապարակախոս բանաստեղծ է,

Հոմերոսը իր պատմական շրջանի ամփոփողն եր, և նրանով փակվեց անթիք Հունաստանի հերոսական շրջանը, ինչպես քը իստոնեյական միջնադարը՝ հանճարենզ Դանաւյում։ Հեսիոդոսը փոխանցման պատմաշրջանի արտահայտիչ է։ Նոր յերեսույթը իր դարձացման առաջին շրջանում պետք է արտահայտվեր ամբողջովին, վոր անդրադարձնող բանաստեղծը հնար ունենար պատկերացնելու այն՝ նրա բոլոր իրական, թանձր ու վառ գույներով։ Հեսիոդոսի յերգած հոգագործները, ազատված միապետական կարգերից, ապրում եյին նոր բարձրացող դասակարգի (առաւրական) պատմուկան ասպարեզ գալու առաջին շրջանը, մի դասակարգ, վորը հետագա մերձավոր դարերում հին Հունաստանը պիտի վերածեր դեմոկրատական կարգերի։ Այդ վերջին դարերումներ, վոր ժամանակի բաղմաթիվ բանաստեղծներն ու դրամատուրգները վառ ու ցայտուն գույներով անդրադարձնեն արդեն ամբողջություն ստացած դարաշրջանի բարդ պատկերը։

Բացի իր գլուխ գործոց և Աօվատանեն ու սրերաից, Հեսիոդոսին են վերագրում բազմաթիվ այլ գրվածքներ, վորոնք անհետ կորել են, Հիշվում են դրանցից մի քանիսը,

ինչպես՝ «հանանց գուցակը», վորից վորոշ հատվածներ են մնացել, առաջ «Ենակամպոդիա», «Բիգանի խորհուրդներ», «Հերակլի պատերազմը նոյնինուի դիմա և այլն»:

Մեղ հասած պոնմներից յերկրորդն և նրա «Բնողության», „Theogonia“, վորի մեջ բանասանդը, ուղարկելով գոյացության ունեցող առասպելներից, կամեցել և ամփոփել տիրապերի սահղագործության և աստվածների ծագման մասին յեզակ և պիքական տարրեր ասացվածքներ, հազորդելով նրանց մի ընդհանուր համակարգություն:

Հեսիոդոսը չեւ կարողացել խռապափել դարերի խորքից նրան հասած այն տառապելական «ճշմարտությունից», թե ընտրյալ արիստոկրատիան իր ձագումը ստացել է ուղղակի աստվածներից, նւսաի և իր այս պոնմում վոչ մի բանով չեւ արաւացավում այդ «ճշմարտության» դեմ, թեև մյուս պահումը «աստվածազարմ» թագավորներին և արիստոկրատներին նմանեցնում է զիշատիչ կենզանիներին: «Թեսպոնիակի տուածին մասնին մասում Հեսիոդոսը խռում է տիեզերքի սանդադրծության (կամագանիա) մասին»:

Հեսիոդոսի կոսմոզոնիայի հիմքում զբված է Թաոսը, Դեյտն և Երսուր, վորոնք, ըստ հենակի, տիեզերքի գոյացության և հետազոտ դարձացման զիխավոր աղբյուրներն են: Հին հռոյնը, ինչպես բոլոր նախնական մարդկեկ, շնչավորել են բնաւթյան յերեւոյթները, հազորդելով նրանց մարդկացին հատկությունները: Հեսիոդոսի «Թեսպոնիակի Թաոսը, Դեյտն և Երսուր նախնական մարդու պատկերացումներն են բնության հիմնական երեսույթների, առասպելաբանական նախատիպն են տարածության, նյութի և շարժման պաղապարների Ըստ վորում տարբերացին շարժիչ ույժը հանդիսանում է Երսուր, այսինքն սեռական սանդադրծուող ույժը:

Հեսիոդոսը իր «Թեսպոնիակառը»^{*)} ավել և հունական

^{*)} Տե՛ս նրա բավանդակությունը սույն զբքի հՀ 25—26.

առասպելաբանության ամբողջական հյուսվածքը, Բանաստեղծի այս գործը ամբողջ դարեր ստեղծագործական աղբյուր և յեղել անթիք աշխարհի և յեվրոպական բազմաթիվ գեղարվեստագետների համար—գրողների, նկարիչների և քանդակակառքների, իսկ հին հունական գրականության և արվեստի համար, ինչպիս Մարքսն և ասում, «հունական դիցաբանությունը վոչ միայն հունական արվեստի զինարանն եր, այլ և նրա հողու»:

Ամփոփենք: Հեսիոդոսը ներկայացուցիչ և դադարարախոս հին հունաստանի գյուղական միջին սեփականատիրության: Կողմանակից և տնտեսապես ուժեղ ունեող գյուղացու Դրվատում և աշխատանքը, համարելով այն միակ յելքը տիրող աղքատությունից և քրոնիկական քաղցից: Նրա և Ալիսատանեն ու սրերը պահմը ուղղված և ժողովրդական ճնշված մասսաների թշնամու դեմ և ամփոփում և իր մնջ ցուցումներ գյուղական աշխատանքը ղեկավարելու համար: Դասակարգային թշնամին հողատիրական արիստոկրատիան ե, վորը մարմարամում և թե տնտեսական-քաղաքական և թե զինվորական տիրապետությունը: Նրա ստեղծած ունդիմը սանձարձակ բռնապետական ե, իշխողի կամայականությունը որենք եւ Պոեմում մնջ բերված գիշատիչ ուրուրի և սոխակի պատկերավոր առակը լիովին բնորոշում և շահագործող դասակարգի սոցիալական դեմքը: Իր ժամանակները Հեսիոդոսը նկարագրում է ամենամռայլ գույշներով: Որենքի, արդարության բացակայությունը: Աղքատի, չքավորի սոսկալի դրությունը, Նրա տարապանքը՝ տիրող պորտաբույծ դասակարգի լուծի տակ: Նրա տանջանքները՝ գոյության կովի ծանրագույն պայմաններում: Ակտիացած դասակարգին յերկնային պատուհաս և գուշակում Հեսիոդոսը իրեւ հատուցում:

Հեսիոդոսի նկարագրած կյանքը հատուկ և յեղել ամբողջ հունաստանին և արտահայտել և հույն գյուղացիու-

թյան փիլիսոփայությունը և գործնականը։ Դրա հետեւանագով նա զարձել և համահունական բանասանդժ, ապա հըսչակը տարածվել հետագա զարերում, հելլենականության ծավալման - այնքանողրյան և հոռվմնական զարաշրջաններում։

Հետիուդոսի և պոխան հունական հողատեր արհսառկրատիսայի քայլացյան սկզբուն և, ոյուղացիության միացման և առևտրական գոտակարդի պայքարի սկզբը՝ ցեղական արհսառկրատիսայի դեմ։

Հունական արվեստը իր նմուշներով զարմացնում և ամրող ՅՈ զար։ Այդ նմուշներից մնկը Հետիուդոսի «Աօխառանին ու ուեւան են»։

Ասսելով մարգկային հասարակության դրամիչ մանելության մասին, Մարքսը ասում և. «Ելինում են անկիրիչ յերեխաններ, բայց ծերի խելութությամբ, Հնադարյան ժաղովուրդներից շատերը ոլատկանում եյին այդ կատենզորիային։ Հույնները նորմալ յերեխաններ եյին նրանց արվեստի թուշանքը մեզ հանքը մեզ համար հակառական չե այն անզարդուցած հասարակական միջամբայրի նկատմամբ, վորից բազրոջել և այնու։

Բոլոր հնադարյան ժաղովուրդները, նրանց աշխատավոր զանդվածները, հույն ժողովրդի նման տառտալնել են զաման բանակալ թագավորներից ու սանձարձակ հողատիրականապմական արխտառկրատիսայից, ոյոյության ծանրագույն կախի են մղել, զմիաբությամբ են ձեռք բերել առարյա չոր հացը, քաղցել են, միշտ յեղել են կարստության մեջ, որ ու դիշեր զագար չեն ունեցել վարել ցանել հըսձել են և այն։ Բայց վաշ մեկը նրանցից չե տվել այնպիսի եղիքական ամրողջական ստեղծագործություն, թնձուղ խրառական տարրի զերակշռությամբ, վորպիսին և հունական «Աօխառանին ու ուեւան պոնեմը, վոր անզրագարձել և հեռավոր զարերի հողազարծի աշխատանքի ծանր պայման-

ները, դասակարգային հակամաբության պատկերը, արել աշխատանքի գովիճը և տվել ֆեռողուական հարաբերությունների թուլացման պայմաններում առաջացած անթիք աշխարհի առևտրական դասակարգի հանդես գալը:

Բարձրանալով համահունական պուետի մակարդակին, կանգնելով իր միջավայրի աշխատավոր խավերի տառապանքի հանդեպ և լինելով իր դասակարգի ակտիվ անդամը՝ Հեսիոդոսը չընկճվեց, ձեռնիժափի չընեռացավ ասպարեզից, այլ ճգնեց թեթևացնել աշխատավոր ժողովրդի տնտեսական ծանր դրությունը. Ընդգրկելով, ինչպես ամեն մի հույն, ճակատազրի բացարձակ ույժի գաղափարը, Հեսիոդոսը հասարակական անհավասար կյանքը անուղղելի համարեց, նրա վերացումը անհնարինու նրա կարծիքով, զըրկանքներով հյուսված աշխատանքն ու հոգսերը վերջ չպիտի ունենան մարդու համար:

Բայց քանի վոր մարդկային գոյությունը, ըստ Հեսիոդոսի, նույնքան բացարձակ անհրաժեշտություն և, վորքան նրա դառն ճակատագիրը, Ֆեում և համակերպվել այդ անհրաժեշտությանը, բայց միջոցներ վորոնել մեղմելու մաշված դասակարգերի վիճակը: Հեսիոդոսի դարը և իր դասակարդի սոցիալական դրությունը թելաղքեց նրան ընտրել վերջին ճանապարհը:

ԹԵՂՈԳՆԻԴԵՐ

(ՏԱՄՈՒՆՎԱԾ ՀՈՒՅԱՆ ԱՐԴԱՏՎԱԿՐՈՒՅԹԻ ՑԵՐԳՈՒՅԾ)



Հունական գաղթավայրի լայն տարածման հետևանքով
Միջերկրական և Աև ծովերի ավազանում, այլև առևտրի ու
արդյունաբերության դարդացման շնորհիվ հին Հունաստա-
նում առաջ յեկամ առնտրական դասակարգը, վորը աստիճա-
նաբար նվաճելով տնտեսական ասպարեզը, բնականաբար
պետք և ձգտեր քաղաքական իշխանություն ձեռք բե-
րելու, (վիցերորդ դար ք. ա.): Վարպետորեն ողուա-
գործելով դժուն դյուլացիության շարժումը ընդդեմ հողա-
յին-զինվորական արիստոկրատիայի, — դյուլացիություն,
վորը փողային անտեսության շնորհիվ ավելի ևս ծանր աըն-
տեսական ասպառալ եր ապրում, — առնտրական դասակարգը
իր շուրջը համախմբեց հին կարգերից դժուն բոլոր տար-
բերին՝ մանր ու խոշոր առնտրականներին, դյուլացիներին,
ստրուկներին և քաղաքի աղքան աղղարնակությանը: Իրաւ-
րից սոցիալապես առքեր այս խմբակցությունները ներ-
կույցնում եյին այն զեմուսը (ժողովուրդը), վորը իրեն հա-
կազրում եր արիստոկրատիային և միահամուռ ույժերով
պայքար մզում վերջինիս դևմ: Ձևականութեն յեղալ այնպիս,
ինչպիս Փրանտիական հեղափոխության ժամանակ՝ «յերրորդ
դասը» ընդգնել ֆեոդալական արիստոկրատիայի և թագա-
վորի:

Արիստոկրատիային տալակելու համար նրանք համե-
րաշին եյին, բայց պարզ եր, վոր ընդհանուր թշնամուն
տաղակելուց հետո շերտավորումը սուր կերպով պետք
է հանդես դար իր բոլոր սոցիալական հակասություններով:

Գյուղացիության վիճակը այդ դարաշրջանում, ինչպես հայտնի յէ, դարձել եր անտանելիք. նրա վողջ կյանքը կախված է վիճակի մեջ եր հողատեր արխտոկրատիայից, Շահագործումը հասել եր ծայրահնդ չափերի, Ընտրյալ դասակարգի պահանջները մեծ եյին, իսկ աշխատանքը նրանց աչքում արհամարհելի, Շահագործման դիմավոր աղբյուրը գյուղացիությունն եր Աթենքի շրջանում, որինակ, բերքի մի վեցերորդը մնում եր գյուղացուն, մացածը տրվում եր կարկածատիրոջը, Աղքատություն և հարկատվություն—ահա գյուղացիության բաժինը:

Ժողովրդական մասսաների դայրույթը հասել եր զադաթնակետին: Հաճախակի բռնկվում եյին զյուղացիական ազստամբություններ: Գյուղի և քաղաքի չքավոր մասսաների տրամադրությունը ուղղված եր յերկրի հին տեղերի դեմ, բոլոր գժգոն տարրերի բողոքի, պայքարի յեռանդը լարված եր արխտոկրատիայի դեմ:

Չնայելով այդ ընդհանուր գժգոնության, արխտոկրատիան չեր ել մտածում զիջելու իշխանությունը կամովին, քանի վոր իր ձեռքին եր կաղմակերպված զինվորական ուժը:

Ուստի և քաղաքական պատերազմը յեղավ տեսական ու արյունահեղ, Դեմոսի կամ դեմոկրատիայի հաղթանակը պլակվնց արխտոկրատիայի տապալումով, նրա աքսորով քաղաքներից և գույքի դրավումով:

Կատաղի յեր կորիվը, յերը մանավանդ փոփոխակի աջողության միջոցին արխտոկրատիային յերբեմն աջողվում եր կոտրել մասսաների գրոհը և վերստին գրավել իրենց քաղաքն ու կարմածները:

Քաղաքական տաղնապը վերջի վերջո վճռվեց հոգուտ գեմոկրատիայի, և առևտրական դասակարգը դարձավ գրության տերը, գրավելով թե անտեսական և թե քաղաքական դիրքերը, առանց հարկավ լիովին բավարարելու գյուղա-

ցիության պահանջները, աևզ տալու նրան քաղաքական իշխանության մեջ, առանց բավարարելու նաև քաղաքական մյուս խմբակցություններին—քաղաքի չքավոր մասսաներին և այլն:

Դաստիարակացին պայքարը արիստոկրատիայի և դեմոկրատիայի մեջի, տաշնի կրած պարտությունը, հասարակական հին հարաբերությունների կազմակերպումը առաջ բերեց համապատասխան գրականություն:

Մեզ հետաքրքրող տարկան այստեղ հունական գեղանոր մասսայական հարովածների տակ տապարիած արիստոկրատ բանասանդի այն մատիվներն են, վորոնք դարձանալի կերպով հեշտցում են մեր (ինարկե բովանդակությամբ և դադարիարներով միանդամայն տարրեր) պլույաարական մեծ հեղափոխության հնաևանքով սահմանից այն կողմ շպրտած բուրժուական բանասանդների մոտիվները:

Մեր խոսքը վերտքերում և հունական արիստոկրատիայի հայտնի բանասանդ Թեոդնիդեսին վորանս իր հարազատ գտակարդի աննշերի ու հույզերի արտահայտիչ Թեոդնիդեսը հանգըս և դալիս սպիտակական խորտակիած խմբակցությանների մոտիվներով, արտահայտնալով իր եղեղիքների մեջ ամենից տուաջ հարազատ դասակարդի վողքն ու գահամիջութը:

Թեոդնիդեսը աղքել և ու զարձել մուսավորապես 550-ական թվականներին ք. ա., Յենթագրում են, վոր նրա զործունեցության ասածին շրջանը զուղարիուլ և դեմոկրատ բանասանդ և քաղաքական զործիչ Սոլոնի զործունեցության վերջին առքիններին: Մեզ հասած նյութերի շատության կողմից Թեոդնիդեսը ավելի բախտավոր է, վորոնք սակայն բարոր անխափի նրանու չեն համարվում:

Բանասանդը արիստոկրատ և մինչև իր վոսկորի ծուծը Նա լցված է խորին առելությամբ զեղի հասարակ ժողովուրդը:

«Գինոց վռամերով արորի՛ հասարակ ժողովրդին, — առաւմ և նա, — անխնա ծակոտի՛ց նրանց սրածայր դագանակով, ձզմի՛ց նը-
րանց ծանր լուծի տակ»:

Բանաստեղծը «իրավունք» ուներ կատաղի զայրույթ զգալու դեպի դեմոկրատիան. վորովհետև ինքը յեղել և խո-
շոր կալվածատեր Մեղարում և հեղաշրջման ժամանակ կոր-
ցրել և ունեցածը, ապա աքսորվել հայրենի քաղաքից:

«Մեր բոլոր գործերը գնում են դեպի կործանում, — շարունա-
կում և նաև: — Պոկերով մեզ արված բաղդից, այդ ստոր մարդկանց
բանությունը, ազանությունը և ամբարտավան մեծամտությունը
մեզ ազետի մասնեցին:

Արիստոկրատական բոլոր արադիցիաները, բոլոր ար-
տոնությունները նրա աչքում հավիտենական սրբություն
եյին: Հունական և յերրորդ դասին տիրապետության որերը
բանաստեղծը համարում է բարոյական անկման մռայլ շըր-
ջան: Անկման դատապարտված դասակարգիրի անբաժան
հատկությունն և դա: Պատմական բոլոր դարաշրջաններուն
ել մի դարմանալի նմանությամբ նրանք կրկնել են, թե
իրենց դասակարգի տապարեզից հեռանալով աշխարհը ապա-
կանության ու լքման և մատնվում: Այսպես ել համոզված է
յեղել Թեոփնիղեսը իր դասակարգի հետ միասին Այդ արա-
մադրությամբ ել գրել և իր ելեղիաները: Միաժամանակ
պետք ի նկատել վոր Թեոփնիղեսի համար գեղարվեստը
ինքնամփուխ յերկույթ չե. ելեղիաների միջոցով նա կամե-
նում է արծարծել իր քաղաքական մտքերը արիստոկրա-
տիայի յերիտասարդ սերունդի մեջ, կազմակերպել նրանց
միտքը, նախապատրաստել հասարակական կարծիքը ընդ-
դեմ ժողովրդական տարրերի, ստեղծելով հարազատ կազմա-
լուծիող սոցիալական խաղերի մեջ ակտիվ արամադրու-
թյուններ:

«Եսով մարդիկ, ո՞ հիբնոս,—զիմում և նա յերիտասարդ արիստոկրատին, —յերբեք պիտություն չեն կործանում; Միայն որիկաներն են, վոր իրենց լրբությանը աղատություն են տալիս, ժողովրդի վոզին ապականում, անբարոյականացնում, զարձնում նրան անազնիվ գատափոր, միայն թե իշխանությունը կարողանան ձեռք ձգել ... Հավատա ինձ, վոր սառու մարդիկ ձգտում են ոգուս ժագել ժողովրդի կրքերի բորբոքումից, վորից և առաջնում և ապստամբությունը, քաղաքացիական պատերազմը և ամեն անսունկ տողականություններ»:

Թեոգնիդեսի ատելությունը սահման շունի դեպի դեմոկրատիան, վորը իր յերեկիւ ստրկական վիճակից դուրս դալով, այսոր դարձել ե իրականության տնօրինը:

«Ո հիբնոս,—արձյալ դիմում և նա, —ազնվություն կարելի յետովորել միմիայն ազնիվ գառակարգի մաս, մինչզեռ սառը զատեկարգերի հետ ունեցած շփումիցդ դու ինքը կկորցնես»:

Բանաստեղծը քարողելով ատելություն, միաժամանակ յերկյուղ ունի, վոր նոր կարգերը կարող են ավելի զորեղ լինել և ազդել յերիտասարդ սերնդի վրա, Յեկ ահա նա ամեն ջանք գործ ե զնում համոզելու յերիտասարդությանը, վոր սա հեռու պահի իրեն «ստոր» մարդկանց հետ փոխհարաբերության մեջ մտնելուց»:

«Ստոր մարդկանց մաս, ո հիբնոս, յերբեք չգնուա խորհրդից Թես ազնվականի մասու մով կարող ե քեզ խորհուրդ տալ ստորի մաս զնալու: Լավությանց փոխարձն գոհունակություն մի սպասի նրանից, Թու նույնն ե թե սերմը շաղ տառ ջրի սպիտակ ալիքների վրա...»

Դու կճանաչես առ արգահատելի մարդկանց հոգին, թե վորքան անհուսալի յեն նրանց: Նրանց հատուկ ե սուտը, կեղծիքը, խորամանկ դաշիքը: Նրանց հոգին անկուշտ ե: Բավական և մի ժողոք նեղացնես, առաջնա ըսլոր լավությունն կմտանան: Անցիք նրանց մոտով առանց կանգ առնելում:

Բանաստեղծի աչքում պրարի» և «առաջինի» բառերը հսկանիշ են աղնվական, արխտոկրատ հասկացողությանը, իսկ շչար» և «ստոր» բառերը (Կάկօյ) դեմոկրատ բառին, Բանաստեղծի համար անտանելի յեր նայել մ' իրականության վրա, ուր ժողովուրդը, վոր մի ժամանակ, ինչպես ինքն ե ասում, ովոչ դատաստանի, վոչ ել որենքների մասին հասկացողություն ե ունեցել, այլ ման ե յեկել իր դյուդական շորերով կամ այժի մաշված մորթով և խուսափել և քաղաքից, իբրև վայրի յեղիներուա, այդ ժողովուրդը այժմ տապալել ե իր նախկին տերերին և ինքն ե թագավորում յերկրում,

«Ասո, — զիմում ե նու գարձյալ, — մէջ կարող ե զիմանալ սրան, կիրնոս, զրանց հետ յերբեք բարեկամություն չանես, գործան ել դա քեզ համար ձեռնուու լինի»:

Թեոդնիդեսը խորհուրդ ե տալիս հոգով ատել ռայդ կոպիա ու չար մարդկանց, սակայն այդ ամենը անել գաղանարար, նա պատրաստ ե, ինչպես ինքն ե ասում, չիմել նրանց մե արյունը։ Իր մտքերը սակայն հրապարակ հանելը համարում ե վտանգավոր։

Սակայն միշտ նույն հակամարտ յեռանդը չե կարողանում պահպանել Թեոդնիդեսը։ Իրար հաջորդող հարվածների տակ հաճախ ընկնջում ե, և սկզբում խորհուրդ ե տալիս իր կիրնոսին համակերպվել ապա պաշարվում հոռետես մըտքերով։

«Թող քեզ որինակ ծառայի խորամանկ պոլիսը, — ասում ե նու կիրնոսին, — վորը ընդունում ե այն քարի կերպարանքը, վորին նու կպած ե Այսոր մի գույնով հանգես յեկ, վաղը մի այլ գերազայն իմաստությունը թելագրում ե — համակերպվից, և կիրնոսա։

Յերկյուղը վտանգելու թե իրեն և թե կիրնոսին, սակաւ մում ե նրան մեղմել իր բացարձակ պայքարը, զայել լեզուն, ընտրել միջին ճանապարհը,

«Մի վրդովզիլը համաքաղաքացիներիդ առաջ բերած դաժան և առանձիւթյան համար, իմ սիրելի Կիրնոս, զնու միջին ճամբով, ինձ նաման»...

Ամենն ինչ կորցնելուց հետո դառն պայմանների մեջ և ընկնում քանաստեղծը: Նրա այդ վիճակը հիշեցնում և մեր ժամանակի սպիտակ եմիգրացիային, վոր արգահատելի վիճակ և ապրում արտասահմանում:

«Անիծյալ աղքատություն, — բացականչում են նա, — ինչ ես այդպիս ովինդ կորել ինձ, Դադարի՛ր մեղ հետ բաժանելու այդ թշովակարությունը:»

Հուսահատ Թեոդնիդեսը իր գանգատը ուղղում է «ամենակարող Զևսին»:

«Միքելի Զևս, տիեզերքի տերն ես, ույժով ահարկու, ինչու հոգիդ թույլ և տալիս, վոր անազնիվները հավասար բաղդ ունենան ճշմարտությանը հատեղների հետ».

Անզոր բողոքը, ապարդյուն պայքարը խորին հուսահատության ևր մատնել Թեոդնիդեսին: Կործանված հարազատ դասակարգի վիճակը այլևս հույս չեր ներշնչում վերըսակն գրավելու սոցիալական նախակին դիրքերը: Յեկ բանաստեղծը լցվում և մռայլ հոռետեսությամբ, նրան թվում և, վոր յեթե կործանվեց արիստոկրատիայի հիմնած աշխարհը, ապա ամբողջ աշխարհը կործանվեց, վերացվեց «արդարությունը», «առաքինությունը», վոր կոչված եր պաշտպանելու արիստոկրատական Շի վերուստ հաստատված հասարակական կարգերը և այժմ այդ «լուսավոր» աշխարհին հաջորդում և խստաշունչ, դաժան, կործանարար քառսային մի իրականություն, վոր բերում և իր հետ հաղթանակող «ամբոխը»:

«Մահկանացուների համար չես յերշանկություն, յեղբակաց նում և Թեոդնիդեսը, — վորքան մարդ և լուսավորում արմը, բայց վոչ մեկը նրանցից յերջանիկ չեմ:»

«Հավագույն բաղդը մտնկանցուների համար—զա չծնվելին է: Բայց յեթե ծնվել ես, լավ և շուտով մանես Այիդը (Դժունը) և խոր գետնի տոկ գերեզմանում պառկեաւ»:

Հաղվագյուտ են մոմենաները, յերբ Թեոգնիդեսը փորձ և անում նախկին յեռանդով ծառանալու հանուն հին ռեժիսմի, հանուն դեմոկրատական կարգերի տապալման:

«Յես հիմայի յերիվար եմ,—որտեսում ե նա, —բայց անհուսող են անպետք և ինձ քաղաքացու մի ինչպես կուզենայի ոլոնաւ, կորել սանձը և վայր զըորել մեջքին նստած ձիավորին»:

Սակայն արիստոկրատիային տապալող «ձիավորը» շատ ամուր նստած եր «յերիվարի» մեջքին և վոչ մի ցանկություն չուներ բաց թողնելու սանձը:

Ցեղ ահա Թեոգնիդեսը, —նման ԽԱ դարում Փրանսիական արիստոկրատիայի անկումը վողրացող բանաստեղծ Շաթորրիանի, նման մեր հեղափոխության հարվածների տակ խորտակված բռւթուական-նացիոնալիստական պոետների, —ընկճված ու հոռետես, վողրում ե «յերանելի» անցյալը, վողրում ե իր դասակարգի անկումը և նրա պատմական դոյլության տիտուր վերջալույսը»:

ԻԼԻԱԿԱՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐ



ԹԵՐՍԻՏԵՍԻ ԸՐՈՍՏԱՑՈՒՄԸ

Այսպես կարդաց նա հրաման իշխանաբար իրա զորքին.
Ու վեր կացան զորքերն համայն՝ վրաններից ու նավերից,
Խուճապեցին դեպի արքան խառնագոչով, վորոտագին,
Վորպես ահեղ, հավերժագոչ ծովի ալիք շորնդալից,
Վոր ճողփում ե ժեռուտ ավին, թնդում անդունդն ամենաձայն:
Ու վերջապես նստուեցին, բոլորեցին շուրջ հանդիսի.
Թերսիտեսն եր այնտեղ միայն, վոր փընթփընթում անդուռ-
քերան՝

Շաղ եր տալիս մտքում պահած իր խոսքերը խառնիճաղանճ՝
Արքանների գեմ հակառակ, ափեղցփեղ խակ մարդու պես,
Վոր ծիծաղն եր շարժում միայն աքայեցոց հանդիսատես:
Զեր տեսնված Իլիոնում մարդ մի այդքան տգեղաղեմ.
Մի աչքը շիս մի վոտը կաղ, ման եր գալիս լընզլընզայենն:
Մեջքը սապատ, ուսերը ծուռ, կուրծքը փլած ընկած եր ներս,
Սրագագաթ իր կոնդ գլխին հազիվ ուներ քանի մի մազ:
Թշնամի յեր նա վոխերիմ Աքելլեսին և Վողիսին,
Յեվ շարունակ հանդեսի մեջ պարսավում եր նա յերկուսին:
Յեվ արդ ահա վեր կացավ նա Ազամեմնոն դյուցաղնի գեմ
Ու ճղավեց նրա գրա, թունդ դիպչելով նրան արդեն...
Թեպետ և անդ աքայեցիք լուր դայրացան նրա վրա,

Բայց նա այսպես թունդ գոռզոռաց Ազամեմոնն ոյլուցազնի
զեմ. —

«Ո՞վ Ասրիդես, Բնչդ և պակաս, Բնչ ես դժգոհ դու տրտնջում,
Վրաններդ՝ լիքը պղինձ, վրաններդ՝ բնափր կանայք.
Յեզ ընտիրն ել այդ կանանցից՝ նախ և առաջ քեզ ենք
բերում

Ամեն անգամ աքայցիքս, յերբ մտնում ենք մի նոր քաղաք:
Վոսկմու միջն և աչքդ ելի, վոր քեզ մի մարդ ձիահմուա
բերե նվեր Խլիոնից, իրըև փրկանք իր զավակլին,
Վոր կապելով մոտդ բերեր՝ յես կամ այլ վոք այս քաջերից,
Թթ մանկամարդ կին ևս տենչում, վոր նրա հետ սեր անես զու,
Վոր տոփությամբ պղծես նրան, դու զողունի մեղնից հեռուս
Զե սաղական իշխան մարդուդ, դորազլիսիդ այդպիսի բան,
Աքայական այս զորքերիս զլիին բերել չարիք այսքան,
Եյ, վախկոտներ, ամնթ և ձեզ, աքայուհիք, վոչ ո քայցիք,
Յելնք նստենք նավերը մեր և տուն զառնանք այժմ և իսկ:
Թողնենք սրան բազմահարուստ իր ավարը թող վայելի,
Վոր հասկոտնա՝ արդյոք իրեն անպետք ենք մենք, թթ
պիտանի:

Այսպես ձաղկեց Թերսիտեսը Ազամեմոնն աղղապետին:
Բայց վեր կացավ Թերսիտի զեմ Վոդիսեսը աստվածային,
Դնաց մոտը, նայեց խոժոռ ու սաստելով թնդաց վրան. —
«Ե՛յ Թերսիտես, դու լեզվագար, ճամարտակող ճղալաձայն,
Քաշիք լեզուգ չը հանդգնես արքաների հետ մանել վեճ.
Սանձիր լեզուգ, չը հանդգնես դարձի մասին այստեղ խոսել.
Թանի ստույգ զետ չը դիտենք այս ամենի վախճանն ու վէրջ՝
Անփմրձ պիտի հելեններս դառնանք մեր տուն, թթ վտանգված:
Ի՞նչ ես այժմեն դու պարսավում Ազամեմոնն աղղալարին,
Թե քաջերը դանայեցոց շատ պարզմեներ նրան բերին,
Վորի համար լիբրդ զքեզ, ըսոքուում ես ատյանի մեջ:
Բայց քեզ կասեմ, խոսքս նշան, այսուհետեւ յեթե ելի,
Դու զլիիցդ ափեղցիեզդ զուրս տաս այնպես, ինչպես հիմի՝

Թող զլուխս չը մնա ել կուռ ուսերին Վոդիսևսիս,
Յեվ այն որը ինձ այնուհետ չը կոչեն հայր Տեղմաքիս,
Թե չը ձևեմ պատառ-պատառ վերարկը եդ մինչեւ շապիկ,
Ամոթանքիդ ծածկույթն անգամ, և ատյանից լացացնելով
Դեպի տորմիդ քեզ չը ճամբեմ, խաղք-խայտառակ ձաղկել
աալով։

Ասաց ու իր զավագանով նրա կուղին այնպես զարկեց,
Վոր Թերսիտես կծիկ դառավի, շիլ աչքերից արցունք թափեց,
Խսկույն և յեթ այն վոսկեղեն զավագանի կուռ հարվածից
Նրա մեջքին ուռուց յելավ կապուտկած և արյունալից,
Ահաբեկվեց, նստեց Թերսիտ և արցունքն եր սրբում միայն,
Ապուշնայաց ու այլանդակ աչեր չորս դին պտըտելով,
Թե սիրտ չը կար, բայց աքայցիք լավ խնդացին նրա դրան,
Այսուհետեւ ասին մեկզմեկու ամենքն իրար մտիկ տալով.
«Հիրավի վոր, հետ աստվածներ, մեր Վոդիսևս լավ բան ըռնեց,
Վոր թե խելոք խորհուրդ տվեց, թե պատերազմ նա հարդարեց:
Խսկ հիմա յել մեր հույներիս գործ ցույց տվեց մի աննման
Յեվ մի ամուր սանձ ել դրեց լրբախոսին այս ժանարինան.
Ել այսուհետ սիրտ չի անի արքաների հետ հավասար
Վեճի մանել ու նախատել նրանց խոսքովն իր լեզվագար։»

ՀԵԿՏՈՐԻ ՀՐԱԺԵՇԸԸ ԱՆԴՐՈՄԱՔԵՑԻՆ

Հասավ Հնկտոր կորդականոնն ապարանքը իր գեղնցիկ,
Պտրեց իր տունն ու չը գտավ Անդրոմաքին լուսածաղիկ,
Զի նա առած իր քողազարդ նամիշտի հետ իր մանկիկին՝
Աղիողորմ կոծ եր անում այն քաղաքի բարձր բուրգին։
Կանգնեց Հնկտոր իր տան դռան ու հարցըց իր աղախնոց։
ՀԶեզ եմ, լսեք, ազախիններ, ստույգ տվեք ինձ պատասխան։

Ո՞ւր և մեկնել ապարանքից Անդրոմաքեն իմ լուսացայտ.
Արդյոք իրա տալերի մժտ, ներերի մժտ իր քողազարդ,
Յեվ կամ տաճմիրն Աթենասի, ուր և ուրիշ տրովուհիք
Դողոքում են հիմա ահեղ մեծ դիցուհուն վարսագեղիկ։
Արդ պատասխան տվից նրան հաղարապետ կինը իր տան-
«Թե պնդում ես իրավն ասեմ՝ ահա վոր քեղ ասեմ իրավն՝
Արդ իմացիր, վհչ քողազարդ ներերի մոտ, վհչ տալերի, —
Այլ նա գնաց դեպ բարձրաբերձ աշտարակը Իլիոնի,
Խմանալով վոր Տըովյանք աքայեցոց թափիցն ուժգին
Խորտակվել են ու նեղն են խիստ՝ պարիսպ վազեց նա
խենթի պես,

Յեվ դայակն ել հնաը գնաց՝ վերցնելով քո մանկիկին։
Այսպես խոսեց տան ստնտուն, և Հեկտորը թռավ տանից,
Անցավ կրկին նույն բարեշեն պղղոտաներն ու նույն ճամբան.
Մեծ վստանից արագավաղ հասավ գռներն Սկեական,
Զի նրանցից պիտի դուրս դար դեպի դաշտը բանակի դեմ,
Աստ ընդառաջ վազեց իր դեմ ամուսինը իր անձկալի,
Ստիռնի դուստրը նազիկ՝ Անդրոմաքեն լուսածի։
Բնակվում եր Ետիոնի այս անտառուստում Իպոպըլաք,
Յեվ Թերեռում Իպոպլաքյան անդ կիլիկյաց նա կապեց թագ.
Ահա սրա որիորդն եր կինն Հեկտորի պղընձազեն,
Վոր անդ նրան ընդառաջեց, նաժիշտին ել հետն առնելով,
Յեվ բերում եր նոտիշտն ահա՝ իր զրկի մեջ գուրզուրելով
Դողտը մանկիկը Հեկտորի՝ աստղի նման ճանանչալառ.
«Իսկամանտրիկ», կոչում եր միշտ իր մանկիկին Հեկտորն-
հայր,

Ուրիշները «Վոստան իշխան», քանզի Հեկտորն եր միմիայն,
Վոր վտանգված Իլիոնը պաշտպանում եր միանգամայն։
Նայեց Հեկտոր իր մատնկիկին ու լուռ ժպտաց նա հեղազին.
Մոտը յեկավ Անդրոմաքեն, քովը կանգնեց արտասվազին,
Բռնեց ապա ձեռը նրա, տվեց անունն ու այս ասաց.
«Քաջ սիրելիս, քաջությունդ կը կործանի քեղ անպատճառ,

Զե՞ս մեղքանում մատաղ տղիդ, չե՞ս մեղքանում թշվառիս ինձ,
Վոր պիտ անշուշտ վաղաժամիկ այրիանսամ յես քեզանից,
Թանիր վոր պիտ վրադ խուժեն, քեզ սպանեն աքայեցիք:
Զի թե այսոր անշնչացած դու տարածվես իմ հանդիման,
Ի՞նչ սկսովանք ել ինձ համար, — ինձ կը մնա ցավ ան-
վախճան:

Վո՞ն, չունեմ հայր, վոչ ել ունիմ յես աղեկեղ վրաբելի մայր,
Քանզի հորս գետին դլորեց Աքիլլեսը աստվածազարմ.
Թանգեց թերեն բարձրագուռն Կիլիկեցոց վոստանն ավրեց:
Բայց նտովնին սպանելով՝ զենքը չառավ, նա պատկառեց,
Յեկ զենքերովն հրաշակերտ նրան խարույկ բարձրացրեց,
Տիկ նրան նաև դամրան մի վայելուչ, վորի բոլորք
Նշղարիներ տնկեցին վողջ Զնսի գստերքն համերժական:
Յոթն թվով դաս մի յեղբարց իմ սպալատում կար գեղատար-
Մի որվան մեջ նրանք ամենքն իջան մոայլ դժոխքն ի վար,
Զի սպանեց նրանց Աքիլլն աստվածային և յերազոտն
Զյունաթյուրիկ վոշխարների և համրընթաց յեղների մոտ:
Իսկ իմ մորը, վոր կենում եր անտառախիտն իր հալովլաք՝
Թաշեց այստեղ իր գույքերով, իրքն գերի մի հասարակ,
Բայց և ապա ձգեց ազատ՝ փրկանք անբավ վերցնելով.
Նրան ել զարկեց հորս տան մեջ Արտեմիսը աղեղնասեր,
Հիմա, Հեկտոր, դու յես ինձ հայր, դու յես և իմ մայր
ինկելին,

Դու յես յեղբարյ, դու յես նաև ծաղկափթիթ իմ ամուսին.
Արդ զթա ինձ, մնա այստեղ բուրգի վրա մեր զղյակի,
Մի թողնի վորը քո մանկիկին և մի այրի՝ քո ամուսնուն.
Դասավորիր քո զորքերը թղենու մոտ այն վայրենի,
Ուր քաղաքն և դյուրամատույց և ուր պարիսպն և դյու-
րառիկ.

Թաջերն արդեն անդ փորձեցին իրենց դրոհը յերեք հետ՝
Այսաները, Ատրիդները, Իդունն ու քաջ Դիումնդ.
Թերևս այստեղ մի գուշակող հորձակումն և մատնանշել,

Կամ սեփական իրենց վոգին և գրոհներն այդ ներշնչելը։
 Պատասխանեց կորդականուն մեծն Հեկտոր և այս ասաց.
 Այդ ամենը, իմ սիրելի, մտածում եմ խորհում ինքս ինձ,
 Բայց յես սաստիկ ամաչում եմ տրովներից մեր զեհապղանծ,
 Ամաչում եմ յերկայնազգեստ տրովուհի զեհ կանանցից՝
 Յեթե ռազմից փախչեմ հիմա մի վատանուն վախսկոտի պես,
 Նաև սիրու դեմ և դրան, զի այդպես եմ սովորել յես՝
 Անցնել—գլուխ տրովներին ու դեմ գնալ ժանու թշնամուն,
 Պահել բարձր հորս փառքը, նաև փառքը միշտ իմ կտնզուն,
 Լավ զիտեմ յես, իմ հոգու մնջ նախըզդում եմ նաև այն,
 Վոր կը գա որ, կը կործանվի իլիոնը մեր սրբադան,
 Կը կործանվի իր ցեղի հետ Պրիամոսը իմ քաջազնատ.
 Բայց վոչ այնքան խոռվում և ինձ այդ վիշտը Տրոյայի,
 Վոչ ել վիշտը Պրիամոսի, վոչ ել իմ մորն Հեկտորեցի.
 Վոչ ել վիշտը յեղրայրներիս, իրենց խմբով քաջ և խիղախ,
 Վոր թշնամու սուսերներից պիտի ընկնեն նըանք փոշեթաղ.
 Վորքան քո վիշտն, Անդրոմաքն, յնըր մի տիրուր որ չարազնա
 Կողոպունլով աղատությունդ ու քաջ տալով քեզ իրա հետ,
 Քեզ՝ լալազին՝ առեանդի պղնձազդեստ աջայեցին։
 Անդ Արգոսում պիտի հինես ուսար կնոջ հրամանի տակ.
 Չուր ողիտ կրես Մեսսեյիսի կամ Հիպերի աղը յուրներից՝
 Բունազատուած տաժանելիք և անողորմ զառն կարիքից.
 Դուցե մնկն ել ասե այնանդ ազի արցունքդ տեսնելով.
 «Դա յե ահա կինն Հեկտորի, ամենից քաջ մարափեկի
 Տրոյացոց հերոսներից ահեղ ռազմում իլիոնի։»
 Այսպես կամե, և պիտ խոցվիս դու մի ցալով նոր աշնկեղ
 Ցեղ ամուսնուդ պիտի հիշես, վոր կարող նոր աղատել քեզ.
 Բայց թող մեռնեմ, թող առաջուց մտնեմ շիրմի մուլթ ծանկի
 տակ,

Նախ քան լացդ յես կը լսեմ, և կը տեսնեմ քեզ
 առնանզած։
 Այսպես ասաց չքեզն Հեկտորը իր ամուսնուն գորովացած

Յեվ իր ձեռքը ողարշեց մանկան՝ հայրական իր գիրելը
բացած,
Բայց հոր տհեղ էերպարանից մանուկն այնպես խիստ
զարհուրեց,
Վոր ճշալով ստնառւի ծոցում յերեսն իր թագցրեց.
Վախեց մանուկն իր հոր տեսքից, զեն ու զրահից սարսուլիք
Յեվ փնջեցը սաղավարտի, վոր ճոճում եր նրա կատարին,
Ժպտաց Հեկտոր, ժպտաց նաև մանկան մայրը հեղ մեծարու-
իսկույն հանեց շքեղն Հեկտոր փայլակնացայտ իր սաղա-
վարտ,
Դրեց գետին, զբկեց վորդուն և ձեռքի մեջ որորելով՝
Դարձավ այսպես մաղթեց Զեսին, աստվածներին մյուս՝
ասելով,
Մի Արամաղդ, և դուք, ով այլ Վոլխմապարնակ անմահ դիեր,
Արեք այնպես՝ տղաս ինձպես դառնա փառքը իրա յերկրի՝
Յեվ ինձ նման իր քաջությամբ դառնա տիրող միշտ
Խլիոնի,
Ունենա իմ զորությունս, և վոր նրա վրա նայելով,—
Յերբ ամենի պատերազմից հաղթանակով նա զառնա տուն,
Սպանելով ախոյանին, բերե ազարն նրա արյունոտ,
Վոր տեսնելով մայրը նրան՝ ուրախանա իր հեղ սրտում։
Ասաց Հեկտոր և իր մանկան կնոջ գիրելը նա գրեց յետ
Ժպտաց մայրը արտասվախառն՝ տղան ծոցում մոր բուրավետ։
Հուզվեց Հեկտոր տեսնելով այս, զորովեց նա իր ամուսնուն
Յեվ շոյելով նրան ձեռով, ասաց՝ տալով նրա անուն։—
«Մի, նազելի, մի տիրությամբ սիրող ինձ համար դու
համակի,
Զկա մարդ վոր, նախ քան որհասն՝ մռայլ դժոխքն ինձ
ուղարկի,
Զի կարող մարդ յերբեք փախչել, յերբ որհասը իր մոտենա,
Վոչ վախեկոտը և վոչ քաջը՝ յերբ ծնվել և մի անգամ նա,

Տուն դարձիր դռւ, առւր ակախնոց զբաղեցնեն սիրուն
մանկան,
Դու յիշ նստիր, իլիկ պլատաիր, հանդիստ գործիր քո ժիր
վոստայն:
Իսկ ուսդմական գործը բոլոր՝ թող վոր հոգաը լինի մեր այդ,
իլիսնում ծնված մարդոցս և թող հոգաը իմ մանավանդ:
Ասաց, դրեց սաղավարտը, իսկ Անդրսմաք գնաց զեզ տուն՝
Յետ նայելով ճամբին տխուր, առաստ արցունք շատ թա-
փելով:
Յեղ Հեկտորի հրաշակերտ առւն հասավ նա այսպես արագ,
Իսկ աղախնոց բաղմությունը խմբված գտավ իր հարկի տակ.
Բարձրացրեց սուդ ու կական, լացացրեց նա ամենքին. —
Վողջը Հեկտորն եյին սգում՝ սինչ նա կենդան եր տակավին.
Այնքան նրանք հույս չունեյին, վոր յետ դառնար այն
դռա մարտից,
Վոչ ել փրկվեր աքայեցոց անվանելի բազուկներից:

ԾԵՐՈՒՆԻ ՊՐԻԱՄՈՍԸ Ա.ՔԻԼԼԵՍԻ ՄՈՏ

Յեղ Պրիամոսն իջավ կառքից...
Թողեց այնտեղ իտեսսին, վոր պահպանե նժույզներին,
Ու մտավ ներս սթեանը, վորանդ զատված ընկերներից՝
Դասավ նստած Աքիլլեսին, Արամուղի սիրելիին.
Յերկու հազի քովը կային սղարաստ նրա ծառայության՝
Մինը քաջըն Ավտոմեդն եր, մյուսն Ալկիմը հէրսական,
Յեզ ընթրիքն ել վերջանում եր, դեռ սեղանը մնում եր բաց,
Վոր Պրիամոս այնտեղ մտավ ներս՝ աննկատ աշօից նրանց,
Փարվեց ծնկանն Աքիլլեսի, բռննց աջը արյունալի, —
Այն ահավոր՝ դահիճն ահեղ իրա բազում վարդիների:
Խաչպես մի մարդ իր յերկը մեջ մի որ դառնա արենապարու

Յեկ տագնապով ու ահարեկ փախչի յերթա ոռար աշխարհ։
Հանկարծ մտնի ճոխ մարդու մոտ, զարժանք բերե տես-
նողներին,

Այնպես ապշեց Աքիլեսը, յերբ տեսավ մեն Պրիամոսին,
Մյուսներն ել շատ ապշեցին ու նայեցին մեկզմեկին։
Իսկ Պրիամը Աքիլեսին այսպես խոսեց պաղատագին։—
«Ո՞վ Աքիլեսդ աստվածատիպ, հիշիր հայրդ իմ հասակի,
Յեկ ինձ նման զառամության դաժան շեմքին կանգնած հիմա,
Դուցե նա յել շրջապատված վոսոխներից իր դրացի՝
Չունի անձին մի զորավիդ, վոր յետ վանե աղետն ու մահ։
Բայց լսելով, վոր դու վողջ ես՝ պիտի խնդա ծերի հոգին։
Յեկ պիտ հուսա տեսնել վորդուն, յերբ Տրոյից դառնա
կրկին։

Բայց ավմդ ինձ, վոր Իլիոնում քաջ զավակաց եյի յես հայր։
Հիսուն եյին նրանք թվով, յերբ աքայցիք յեկան այս վայր։
Տասն և իննը մեկ մորից եր, մյուսները այլ կանանցից,
Նրանց շատի ծունկը ծալեց Արեսը այն բռնավայրագ,
Միայն մեկը մնում եր ինձ, պաշտպանը մեր ու քաղաքին։
Այն մեկին ել դու զարկեցիր, հայրենիքի այն մարտիկին։
Ահա այդ իմ Հեկտոր քաջիս համար եմ յես յեկել հիմա,
Նրա փրկանք անբավ ընծան բերել եմ քեզ արդեն ահա։
Մտիկ արա աստվածներին, հիշիր հորդ և ինձ գթա,
Նրանից շատ թշվառ եմ յես՝ և կրեցի այնպես վշտեր,
Վոր վոչ մի մարդ մահկանացու այս աշխարհում չեր տեսել
դեռ։

Տես ձեռն անդամ համբուրեցի, վոր սպանեց իմ զավակին։
Ասաց և հոր հիշատակով լացացրեց Աքիլեսին։
Բռնեց Աքիլ նրա ձեռը և քաղցրությամբ հեռացրեց։
Յեկ յերկուաը լալիս եյին—ծերն հիշելով իր Հեկտորին՝
Լաց եր լինում քավալվելով վոտների մոտ Աքիլեսի,
Իսկ Աքիլես հորն եր վողքում, վողքում մահը Պատրոկլեսի։
Յեկ վրանի հարկը թնդաց նրանց վողքից կականալիր։

Յեկ յերբ վոր շատ լացեց Աքիլ ու հանդարտվեց լիքը
սիրտն իր՝

Յատկեց աեղից և իր ձեռքով բարձրացրեց հետ ծերուկին,
Դթաց նրա ճերմակ զլխին և ալեոր նրա միրքին,
Յեկ այս խոսքերն ասաց նրան՝ արգահատալից իրա ձայնով.
«Հետ ծերունի, ճշմարիտ վոր տառապեցիր բյուր վշտերով
Յեկ բնչակն ուու սիրտ արիր գալ դեպի նավերն աքայեցոց,
Այն մարդու մոտ, զոր սպանեց քո բազմաթիվ կորով վորդոց.
Յերկաթի սիրտ ունիս անշուշտ, բայց յեկ նստիր այս
աթոռին.

Թեև ցաված սիրտ ունինք մենք, սակայն հանենք ցավը
սրտից,

Զի բնչ ոգուտ դառն ու ահեղ կանանցածին այս վողբերից:
Թշվառական մարդոց ճակտին այս են դրել անմահ դիք մեր,
Վոր միշտ մարդիկ ցավով ապրեն, իսկ անցավ են միշտ
աստվածներ:

Քանդի Զեսի շեմքի վրա կարասներ կան յերկու հիմա,
Յերկու կարաս այն տուքերի, վորի միջից բաշխում ենա.
Մեկի միջին բարիքներ են և չարիքներ մյուսի մեջ:
Մերթ տալիս ե Զեսն այնտեղից մեկին խառն չարն ու բարին,
Մերթ բարուն ե մարդ հանդիպում, մերթ ել չարին այս
աշխարհի:

Խսկ ում չարից ե տալիս նա՝ ցավերի յե սա միշտ բաժին,
Շրջում ե հար աստվածներից ու մարդկանցից արհամարեն-
ված.

Այսպես Պելին իր ծննդից բյուր պարզմով լիացրին,
Թագավորեց Միրմիդացոց փառք ու շուքով նա ճոխացած:
Թեպետ ինքն եր մահկանացու՝ առավ իրեն կին դիցունի,
Սակայն Զեսը ողարգեատուն հանդիպեցրեց նրան չարի.
Զի չունեցավ նա զավակներ՝ ժառանգ իրա իշխանության,
Այլ մի զավակ ծնվեց նրան, նա յել յեղավ բաժին մահվան.
Յեկ յես ահա անկարող եմ ծերությունը իր խնամել,

Թանի ահա Իլիոնում, հայրենիքիցս հեռու այստեղ՝
Յեզ քեզ, և քո զավակներին պատուհաս եմ նստած անեղ,
Յեզ լսեցինք, ով ծեր, յերբեմն ճոխ եյիր դու աշխարհներով
Յեզ կասպոսից մինչև Փոյուղ, ուր Մակարն եր յերբեմն
իշխում՝

Մինչև անծայր Հելեսպոնտոս իշխանությունդ եր տա-
րածվում,
Յեզ ճոխ եյիր ու բարգավաճ վորդիներով ու ինչքերով,
Բայց յերկնի աստղածները գլխիդ բերին այս մեծ
աղետ՝

Միշտ արյուն և ու պատերազմ քո քաղաքի շուրջն այսուհետ
Բայց համբերիր, և մի անվերջ հեծծիր այսպես հառաջելով,
Թանի վոր դու ոզուտ չունիս քո զավակին միշտ վողբալով,
Յեզ վոչ նրան այդ վողբերով կենդանացնել կարող ես դու.
Ու թերեւ հասնեն գլխիդ աղետներ նոր և ահարկու»;

ՊՐԻԱՄՈՍԸ ԻԼԻՈՆ Ե ՏԱՆՈՒՄ ՀԵԿՏՈՐԻ ԴԻԱԿԸ ՏՐՈՅԱՑԻՆԵՐԻ ՎՈՂԲԸ

Պրքմաղգեստ առավոտը լույս և սփռում աշխարհին,
Վոր Պրիամը լաց ու կոծով քշեց ձիերն Իլիոն.
Զորիներն ել տանում եյին դիակն ընկած Հեկտորի,
Զեր իմացել նրանց դալը դեռ վոչ մի մարդ, վոչ մի կին
Կասսանդրից շուտ, վոր նման և վոսկեղենիկ Աստղիկին:
Հենց Պերգամի բարձունքներից տեսավ հորը կառքի մեջ
Մունետկի հետ, վոր գտում եր դիակն յետքից բերելով՝
Ճիշ արձակեց ու ձայն ձգեց փողոցներում Իլիոնի.—
«Ով տրովացիք, տրովուհիք, արիք տեսեք Հեկտորին,

Վորին՝ ռազմից յետ դաւնալիս՝ ուրախ գնում եյիք դեմ,
Թանի վոր նա խնդություն եր քաղաքին և բանակին»,
Կոծեց, զլիին ժողվեց վոստանն, վոչ մարդ մնաց և վոչ կին—
Վողջ տներից դուրս վազեցին մեռելը բրի հանդիսին:
Նախ նազելի ամուսինը և մայրն արդո Հեկաբեն
Ընկան սայլին, ճիշ բառնալով դիի զլուխը գրկեցին
Ու փետեցին ծամերն իրենց, լաց յեղան և տրովացիք:
Ու այսպես ել ամբողջ որը մինչ արևը մտավ մայր՝
Անզուշտ քաղքի դռների մոտ պիտի լային վողբաձայն,
Թե չը գոչեր այն ամբոխին կառքից այսպես Պրիամ.—
«Ճամբա տվեք, կառքը անցնի, դին հասցնեմ յես մեր տուն,
Ապա այնտեղ ինչքան կուզեք գուք վողբացեք իմ վորդուն»,
Այս վոր ասաց՝ լսեց ամբոխն ու սայլակից յետ քաշվեց:
Ու աարան դին պերն արքունիք, քանդակ մանին զրեցին,
Շուրջը բերին վողբերգուներ՝ յեղերամայր կանանց հետ.
Վողը ասացին վողբասացներն ու կանայք ել կրկնեցին:
Անդրումաքեն ձյունածղին սկիզբ դրեց մեծ կոծին՝
Իր ձեռքերով զիրկընդիմառն ընկավ զլիին Հեկտորի:
«Վաղ արևոց հանգավ, ով քաջ, ու թողիր տանդ ինձ այրի,
Ի՞նչ կլինի վերջն այս մանկան, վորին կյանք ենք տվել
մենք»:

Անշուշտ հասակ չի առնի սա, նախ կը քանդվի իլիոն,
Վորովնետե ընկար, ով քաջ, դու վոր միշտ մեր քաղաքի
Գաշտապանն եյիր մանուկների, նաևս պարկեշտ մեր կանանց,
Քաշ կը տրվին դեպի նավերն ու նրանց հետ նաև յետ:
Յեզ գու, մանկիկ, ինձ հետ պիտի յերթաս յերկիրն վոսոխի,
Ուր բռնադատ աշխատանքներ պիտի տան քեզ անարժան,
Ուր ակամա պիտի շոյեմ բռնակալին այն դաժան,
Կամ թե բուրդից քեզ զայրագին մի հույն պիտի գլորի՝
Դառըն մահի քեզ մատնելով ի վրեժ արյան Հեկտորի,
Վորի ձեռքով սպանվել ե յեղբայրն, հայրը կամ վորդին—
Զի քո հայրը շատ հույների կրծել տվեց սև գետին.

ԶԵ զոր հայրդ ել քաջ ահեղ եր սպայքարի մեջ այս ռազմի,
Վորի համար ժողովուրդննը սուր են անուած գեռ հիմի:
Ավանդ, Հեկտոր, ծնողներիդ դու ձգեցիր սուգի մեջ,
Իսկ առավել ինձ յնդավ ցավ, ինձ, անրախտիս յեղկելի.
ԶԵ մնկնեցիր քո ձեռը ինձ, քո սկ մահվան մահիճից,
Վոչ ել խելոք, բարի մի խոսք կտակեցիր ինձ քեղնից,
Վոր արցունքով գիշերացերել գոնե յես միտ բերեյի։
Այսպես վողբաց ու հեկեկաց, կանայք վողբը կրկնեցին,
Յեվ Հեկարեն նրա վողբին կցեց վողբը տխրագին.—
«Հեկտոր, վորդի, վորդիներիցս դու ամենից սիրելի,
Վոր դեռ կենդան՝ դու թանգ եյիր աստվածներին Վոլիմապի,
Վոր մահվանդ որերին ել դարձյալ պաշտպան յեղան քեզ.
Թեև գերեց յեղբայրներիդ արագոտն Աքիլլես
Յեվ տանելով կղզիները՝ այնտեղ ծախեց բոլորին.
Տարավ Իմրոս, տարավ Սամոս, մինչև Լեմնեն անմատուց,
Միայն նա քո հոգին քաղեց սուր սլաքովն ահոելի,
Ու քաշ տվեց դամբանի շուրջ քո սպանած Պատրոկլի,
Վորին յերբեք այդ բանով ել նա չը տվեց հարություն,
Հիմա դու չես դեռ քայքայլած, ասես նոր յես զարկված
դուն,

Պառկել ես դու ապարանքում, Ֆերոսն ասես քաջագեղ
Վրադ հասել՝ խոցել ե քեզ դյուր խոցելի իր նետով։
Վողբաց այսպես, և ամենքը ձայնակցեցին մեծ վողբով,
Ապա յերբորդն առաջ յեկավ, տիտուր վողբով Հեղինեն.
«Ավանդ, Հեկտոր, իմ տարեզրերից դու թանկագինն ամենեն,
Ինչև համար Աղեքսանդրի յես հարսն անրախտ լինեյի,
Վոր նա բերեր ինձ Տրոյա, լավ չե՞ր յես վաղ մեռնեյի։
Թօան տարի յեկել եմ յես, թողել իմ տունն հայրենի,
Յեվ քեղանից չեմ լսել դեռ մի խոսք դառը և կամ վատ.
Թե տագբերես ու տալերես կշտամբել ե մինը ինձ
Կամ կեսուրս,— քանի կեսարս ինձ հետ քաղցր եր հորս պես—
Դու արգելում եյիր նրանց քո խելացի խոսքերով։

Հիմա ինձ վողջ Խլիոնում չմնաց քեզ պես բարեկամ.
Հիմա բոլոր տրովացոց նշավակ պիտ յես դառնամք:
Այսպես ասաց նա վողբալով, և ժողովուրդն հառաջեց:
Ապա Պրիամ ժողովրդին դարձավ այսպես ձայն տվեց.—
«Դե, զնացեք, արովացիք, ու փայտ բերեք խարույկի,
Մի վախենաք ամեննեին դարաններից հույների.—
Աքիլլեսը մեզ ճամբելիս խոսք և ավել նա ինձ մոտ,
Վոր չի կռվի, մինչև ծագե տասնեւերկու առավոտ»:

ՀԵԿՏՈՐԻ ԹԱՂՈՒՄԸ

Ասաց, խսկույն քաղաքի մոտ յեզ ու ջորի լծեցին
Ու գնացին, փայտ կարեցին անտառներում, դիզեցին:
Յեվ տասներորդ յերբ լուսաբեր առավոտը ծեղծեցեց,
Արտասվելով վերցրին դին քաջամարտիկ Հեկտորի,
Բարձր խարույկ պատրաստեցին, բոցը յելայի մինչ յերկինք,
Հազիվ ծագեց առավոտյան վարդամատն արշալույս՝
Դեպ Հեկտորի խարույկը մեծ ամբոխ յեկալ տրամահույդ
Յեվ խմբվելով՝ այրեցյալին սկ դինիով ոծեցին,
Հուրն հանգցրին և կրակից մնացածը մաքրեցին.
Ապա յեկան ընկերները և յեղբայրներն Հեկտորի,
Հավաքեցին ցաված սրտով նշխարները հերսոնի,
Արտասվելով ամփոփեցին վողջը վոսկե սափորում
Ու վրան ել ծիրանազույն քնքույշ մի քող ձղեցին.
Ապա սափորն իր աճյունով դրին խորունկ մի փոսում
Ու վրան ել հետո բերին ծանր վեմեր քաշեցին.
Հետո շիրիմ կանգնեցրին, շուրջը դրին պահակներ,
Վոր աքայցիք չը հարձակվին՝ ժամանակը չանցած դեռ.
Շուրջը շեղիք բերին լցրին ու յետ դարձան արոյցիք:
Յեվ քաղաքում կազմ ու կարգով հոգեհացի նստեցին
Պերճ պալատում Պրիամոսի, Զեսից կարգված արքայի.—
Այսպես շքով պսակեցին թաղումը քաջ Հեկտորի.

ՎՈԴԻՍԱԿԱՆ

ՀԱՏՎԱԾՆԵՐ

ԴԻՄՈՒՄՆ ՄՈՒՍԱՅԻՆ

Յերդիր Մուսա, այն մեծ մարդուն՝ խորագետին բազմահար,
Նոր իլիոնը քանզելուց յետ թափառական շրջեց յերկար,
Նոր այց գնաց շատ քաղաքներ, տեսավ մարդկանց վար-
քերն ու բարք,

Նոր վշտերում և ծովերում կրեց բազում նա տառապանք,
Նոր իր և իր ընկերների դեպ հայրենի դարձը հոգաց,
Բայց դուր յեղավ հոգսը նրա, չը հաջողվեց փրկել նրանց,
Թանզի նրանք յերկար ճամբին վոչնչացան բոլորովին:
Անմիտները ճաշակեցին վեհ Արեգի աստվածներին.

Սա զայրացավ, անհետացրեց որը նրանց վերադարձի,
Արդ այս մասին ասա մեղ բան, դուստր Զեսի, ով զիցուհի,
Խնձու համար ուրիշները մահից այդպես ազատվեցին,
Նողջ և կռվից, և ծովերից, վերադարձան հայրենի տուն,
Սա միմիայն բազմաթափառ տենչաց դարձին և ամուսնուն:

ՆԱՎՍԻԿԱՅԱ

Դնաց հոր մոտ Նավսիկայան և ժպտադեմ ասաց նրան.
«Հայրիկ, ասա, վոր բարձրագահ, արագանիվ կառքդ ինձ տան,
Շատ լվացք և տանը կիտված, տանեմ գետը լվանալու,

Սեծիդ մաքուր կը վայելե մեծերի մոտ յերևալու
 Հինգ վորդիքո՞յ յերկուս զուգված, յերեքն առույթ ու անպատճ,
 Ցանկանում են պարի գնալ շորեր հազած ջինջ ու ճերմակ.
 Այդ եմ հոգում միայն,—ասաց և իր հորից քաշվեց նա շատ
 Խոսել իրա հարսանիքից. սակայն հայրը հասկացավ այն,
 «Գնա, տատվ, չեմ խնայում քեզ վոչ ջորի և վոչ այլ բան,
 Կասեմ իսկույն ծառաներին, վոր մեր շքեղ կառքը բառնան»:
 Առաց, կանչեց, ծառաները բերին կառքը արագանիվ
 Ու լծեցին, և աղջիկը բերեց շորերն ընտիր, աղնիվ,
 Բարձեց կառքին, մայրն ել զրեց զամբյուղը մեծ կերակրով լի,
 Լիքը լցրեց այժի տիկը զինին անուշ, հրաշալի,
 Յելավ կույսը կառքի վրա, զրեց վոսկի իր յեղամանն
 Անուշ յուղով՝ վորով ոծե նաժիշտներին, նաև իրան,
 Առավ մարակն, առավ սանձերն, ձագկեց դաշտում ջորիներին,
 Վաղում, դոփում ու տանում են ձորձ ու նաժիշտ, հետն ել
 կույսին:

Հասան գետի հորդ հոսանքին, ուր կան անթիվ լոգարաններ,
 Ուր ջրերը արագահոս լվանում են ամեն կեղտեր:
 Տեղ հասնելով, հորդ գետի մոտ արձակեցին ջորիներին,
 Վոր արածեն սեղը անուշ Զորձը կառքից իջեցրին
 Յեզ ձգեցին փոսերի մեջ, տրորեցին վոտների տակ,
 Մինչև մաքուր լվանալով՝ պերճ փոեցին կարդով հստակ
 Շովի ափին, ուր խիճերը վողորկվում են ծովաջրում:
 Լվացվելով, յուզ ոծելով գետի ափին ճաշ նստեցին,
 Զորձերն ամեն ցամացեցին արեի բարկ վառ շողերից:
 Ու կույսը իր նաժիշտներով յերբ լիակուշտ ճաշակեցին՝
 Գնդակիսաղի յելան ապա՝ քողն հանելով գլուխներից.
 Տեղ Նավսիկեն լուսածդի կցեց ապա յերգն այնունետ՝
 Խնչպես հետքից Յերի-մանթի կամ զեպ զժվար յեռն Տայքետ
 Գնաց վորսի լեռնախաղաց Արտեմիսը վոսկեփքին,
 Վորսաց նետով վարազներին, արագավաղ յեղնիկներին:

Նրանց չորս դիմ խայտում եյին հավելու հարսներն անտառների,

Յեզ կետոնը դիմելով այդ՝ հրճվում եր այն կույսի պարից,
Վոր իր զլիսով և ճակատով բարձրահասակ եր ամենից,

Նաև իրա գեղովն էր վեհ նաժիշտներից իր սիրունիկ.

Այսպես աշխույժ, անհման եր նաժիշտների միջին նավսիկ:

ԱԼՔԻՆՈՍԻ ԱՊԱՐԱՆՔԸ

Մտավ տունը Յերեքթեյի, նրա պալատն այն ամրաշեն,
Մինչ Վողիսանս մոտենում եր Ալքինոսի ապարանքին.

Ու հեռացավ դեռ չը հասած նրա շեմքին պղնձեղեն—

Այնպես տունը ճաճանչում եր նման լուսնին, արեգակին:
Շեմքից դեպի խորքը նրա պղինձ եյին պատերն աստ-անզ.

Վոսկի գուներ դուռը փակում, արծաթ եյին դրսի դռներ,

Վերի շնմն եր արծաթաշեն, և վոսկի յեր մանյակի զարդն.

Պահակներ կան այստեղ ու անդ, վոսկի, արծաթ ձույլ
գամփոներ,

Հրաշակերտ Հեփեստոսի ձեռքով կերտած բոլոր բաներ,

Ծները այս պաշտոն ունեն՝ հսկել տունը Ալքինոսի,

Յեզ ամենքն եյին անման, չեն ծերանում ամեննեին.

Յեզ պատերի շուրջ յերկայնքով այստեղ ու անդ զահեր կռած
կանանց ճարտար ձեռագործի՝ ծածկոցներ կան վրան փուած:

Փեկացիներն ականավոր անդ են նստում խրախճանի,

Յեզ ձեռներին ջահ բոցավառ պատանիներ կային վոսկի,

Վոր զիշերը ճոխ սեղանին վառ լույս սփռեն վերնահարկից,

Հիսուն եյին աղախիններն, վորն աղում եր վոսկի ցորեն

Յերկանքներով, վորը ջուկնակ, վորն ել բռքն եր պտուտ
տալիս.

Պատվում են զողում արագ, ինչ տերեներ կաղամախի,
իսկ վաստայնը այնպես եր պիհնդ, վոր չեր ծծի կաթիլն յուղի,
վորչափ հմուտ՝ փեկացիներն ծովի մեջ են արագանավ,
Այնչափ Պալաս նրանց կանանց տան գործի մեջ հանճար
տվալ,

Դուքսը, մոտիկ արքունիքին, կար մի պարտեղ սքանչելի,
Զորս որավար, ցանկապատով ամուր պատած շուրջանակի,
Բարձր ծառեր գալարտգեղ կրում եյին նուռն ու տանձեր,
Զքնաղ խնձոր, քաղցրիկ թուղեր, հմուտ տնկած ձիթենիներ.
Զե պակասում, չե նվազում նրանց պտուղն հավերժելով՝
Վոչ ձմռանը, վոչ ել ամռան. միշտ փշում ե զեփյուռը հով,
Անդուլ շնչում, կեսը յեփում, կեսը հասցնում ե հետզնետ,
Ծերանում ե տանձ տանձից յետ և խնձորը՝ խնձորից յետ.
Խաղողից յետ խաղող գալիս, հետևում ե թուղը թղին:
Հենց նույն տեղն ել այդի մի կա բազմապատուղ և գինեվիտ,
Վողիույզների կեսն արեկող՝ չորանում ե արեկ տակ.
Կա վոր այգեկութի համար, վորն հնձանի մեջն են կոխում,
Վորն ել մատղաշ ատամ առնող, և հասնում են այլ տեսակներ՝
Մեծածաղիկ և գույնզզույն: Կային կրկին և աղբյուրներ,
Մին ծավալում պարտեղի մեջ, իսկ մյուսը գավթի տակով
Զինչ հոսում եր մինչ ապարանք, վորտեղից ջուր եյին
առնում:—

Այսպես եյին աստվածները սարքել տունը Ալթենոսի:

ՎՈՂԻՍԵՎՈ

ՅԵՎ ԻՐ ԽՈԶԱՊԱՆ ՅԵՎՄԵՌՈՍԸ

Այնժամ Վողիս թողեց ափերն ու շիտկվեց դեպ առապար
Ու զնում եր թավ անտառով՝ յելած դեպի լեռներ ու դար-
Ռեր ասելով Աթենասի՝ աստվածատիպն իր խոզարած

Ապրում եր ու հոտն եր հսկում Վոդիսակին հավատարիմ,
 Գտավ նրան բարձր արձակ իր գավթի մեջ դռան նստած.
 Տունն եր անգորը ու գեղաշեն, վոր չորս կողմից յերևում եր:
 Յեվ դա շինեց խողի համար, և արքան ել այդ չը գիտեր,
 Բան չը խնդրեց վոչ թաղուհուց և վոչ ել ծեր Լայերտոսից.
 Ժայռեր կտրեց, ինքը կերտեց, հյուսեց մի ցանկ սուր փշերից,
 Շուրջանակի գավթում տնկեց կաղնիների խիտ-խիտ ցցեր.
 Խշակի շինեց իրար կողքի, տասններկու խողաբներ,
 Ամեն մեկում եղ հիսուն խող պառակ-պառակ եյին հանգչում,
 Իսկ գրանը գետնախշտի արու խողերն հանգիստ ննջում,
 Թզով սակավ եյին դրանք (վոր հոմանիք ծախում եյին),
 Յեվ խողապանն ստիպված եր ընտիրներից որկել նրանց:
 Յերեք հարյուր հիսուն զլուխ այդ խողերից միայն մնաց:
 Գրանատիպ չորս գամփուներ յերամակին հսկում եյին,
 Յեվ չորսին ել խողարածը լավ սնում եր ինքն առանձին:
 Գունեղ յեղան մորթուց նաև տրեխներ եր այնտեղ շինում:
 Յերեք հովիզ ժողվում եյին խողը ցրված այստեղ ու անդ,
 Իսկ չորրորդին մեծ խողարածն ինքն եր տվել մի խող
 պարարտ,
 Վոր տանի տա հոմաններին վայելելու խնջույքներում:
 Հենց վոր տեսան Վոդիսակին, շներն հաջով դեմը յելան,
 Իսկ Վոդիսակ զգուշացած՝ ցուլը ձգեց գետնի վրան.
 Յեվ քիչ մնաց իր կալվածքում վողորմ վախճան պիտի գտներ,
 Բայց հովիլը վրա հասավ վայր ձգելով իր տրեխներ.
 Կանչեց սասառվ գամփուներին և դես ու գեն խոկեց նրանց,
 Բարեր նետեց նրանց վրա, և իր տիրոջն այսպիս ասաց.—
 «Քիչ եր ցավս, ով ծերունի, այս շներն ել մազ մնաց վոր
 Ցավ բարդեյին ցավիս վրա, այստեղ և յեթ քեզ հոշելով.
 Յես հենց նստած լաց եմ լինում իմ տիրոջը աստվածատիպ,
 Խորթ ու ոտար մարդոց համար խողերը այս պարարելով.
 Իսկ նա թափառ ոտար աշխարհ կարոտ և մի կտոր հացի,
 Յեվ մվ գիտե, կմ աակավին և տեսնելում և լույսն արեի:

Բայց մտնենք ներս, ով ծերունի, կը մոկես մի քիչ, կուտես
դու հաց,
Յեզ կպատմես՝ վորտեղից ես, ինչ բաներ են զլխովդ անցած։
Այս ասելով ընկալ առաջ խողարածը այն հյուրասեր,
Մտավ նեցնե, բերեց փուեց զետնի վրա փափուկ վոստեր,
Ապա փուեց նրա վրան և մի մորթի վայրի այծի,
Յեզ անկողին փուեց՝ բազմոց թանձր և լայն և հեշտալի,
Խնդաց Վոգիս այս վարմունքից, ապա ասաց հյուրընկալին.
«Յես կաղոթեմ Արամաղդին և մեծ խմբին աստվածների,
Քեզ հյուր զրկեն ում վոր կուղեսր, յերբ ինձ այսպիս
ընդունեցիր»։

Պատասխանեց Յեղմեն այսպես. «Հյուր, յերբեք ինձ չի վայելի՝
Թեկուզ քեզնից վատն ել հյուր դա՝ իմ հարկի տակ անշուր
լինի».

Թանգի բոլոր հյուր և աղքատ Արամաղդից են գալիս մեղ,
Յեզ հյուրույթը թեկուզ չնշին՝ սիրելի յն մեղ միծապես。
Բախտից լքված ծառաներիս միշտ ել այսպես վիճակն ե հեղ.
Միշտ թաքթաքուն զործ են անում, յերբ պատանի տերեր
ունենք.

Աստվածները, ավագ, մեզնից կողոպտեցին տիրոջը մեր.
Նա սերտ սիրով սիրում եր ինձ ու միշտ լիքն եր պահում
իմ ձեռն։

Ինչպես Զեսը, վոր բարեսիրա խնամում և իր ծառային,
Տալիս և տուն և կարասի, տալիս և և փարելի կին,
Վորի քիրուը Տիրոջ համար ինքն որհնում և միծն Զես։
Ինչպես և իմ քիրան որհնեց և աստ հովիզ կարգեց այսպես,—
Անշուշտ իմս ել այդպես կը լներ՝ թե ծերանար նա այս
տան մեջ,

Աղաղ կորավ, թող կուրանա Հնդինեյի զարմը յերնեկ,
Շատ քաջների ծունկը ծալեց, և իմ տիրոջ, վորը շքով
Աղամեմենի տանից գնաց՝ Տրոյի ռազմի լուրն առնելով։
Ասաց, իսկույն պնդեց զոտով իրա հաղած կապան տակի,

Յեղավ առա ու գնաց դուքս ոթևանը յերամակի,
Մորթեց յերկու խողածագեր, խանձեց, հոշեց, ապա շամփրեց,
Լավ խորովեց ու հենց տաք-տաք շամփուրներով առաջ բերեց.
Տվեց խորտիկն վողիսեսին, լավ համեմեց ճերմակ ալբով,
Խառնեց առա փայտե տաշտում անուշ գինին իր բաժակով:
Նստեց հանգեղ. ով հյուր, ասաց, կեր ծառայիդ այս

խորտիկից,

Քանի վոր այս պարարտ խողերն հոմանիներն են միշտ
խժում:

Ոհ, չը կա դուք այդ վորկորին, վոչ ել յերկյուղ աստվածներից,
Բայց դիքն արդար չարիքն ատում և բարին են մարդկանց
սիրում.

Դեռ Հնեներն ել ստար յերկրում Զեսի կամքով յերը
կողուղտում

Ու նազերը իրենց ալարն յերը վոր լցված դառնում են տուն,
Նրանք ել զեռ յերկյուղ ունեն իրենց զործի խիստ վրեժից,
Անշուշտ այդ զոր սեղեխները մի լուր առան ինչ վոր տեղից,
Լուրն իմ տիրոջ մե որհասի, կամ թե ինքը Զեսը հայտնեց,
Վոր տարփում են նրա կնոջ և չեն դնում տներն իրենց,
Այլ վորկրամոլ՝ նրա գույքն են ծախում հանգիստ շայլաբար
Ցեղ որենը մի կամ յերկու մորթած խոզով բավական չեն,
Բաժակներ են քամում անչափ, քանի տերս բազմահամբար
Կարողություն և գույք ուներ, վորչափ քսան դյուցազ չունեն.
Վոչ ցամաքում, վոչ իթակում, վորի թիվը յես քեզ ասեմ:
Տասներկու նախիր կա անդ, նույնչափ և թիվն ե հոտերի,
Նույնչափ խողեր՝ արոտներում, նույնչափ և հոտն այծերի.
Արածում են որանք ձեռքով վարձու և տան հովիթների:
Աստ տաօնեմեկ փարախներ կան, վողին այծերի համար
միայն.

Կղզու ծայրից արոտներն են և կան մարդիկ քաջ պահապան,
Ցեղ նրանցից ամեն մինը ուղարկում ե որը մի այծ,—
Լավ ընտիրներն իրենց հոտից՝ հոմաններին վայելելու:

իսկ յես այստեղ վերակացու ուահպանում եմ խողերն այս
Ռւ մեր խոզի յերամակից ընտափներն եմ զրկում նրանց»:
Մինչ պատմում եր՝ Վոդիսն անուշ ուստում եր ու խմում բրիլ
Յեվ նյութում եր իր սրտի մեջ հոսաններին վոխ ու չարիք:

ՊԵՆԵԼՈՊԵՆ ՅԵՎ ՀՈՄԱՆԻՆԵՐԸ

Դաւստրը Զևսի, լուսակն Աթեն ազդեց այնպես Պենելոպեն,
Վոր սա խաղ մի սարքե մրցման՝ ող ու աղեղ ու յերկաթի.
Յեվ սարքեց նա հոսաններին մահանրավեր խաղ մի մրցման
Յեվ որհասի սկիզբ դրեց նրանց համար Վոդիսի տան:
Սանդուխն յելավ բարձր աստիճան Պենելոպեն իր տան հարկի
Յեվ գիրգ ձեռով վեր կալավ նա ամուր դուան մեծ բանալին.
Վարպետորեն ու գեղեցիկ նա պղնձից եր ճարտարած,
Նաև գաստակ ուներ սիրուն փղոսկըրից վրան հագած,
Արդ գնաց իր նաժիշտաներով, առագաստը իրա մտավ,
Ուր մթերած պահած կային Վոդիսնեսի գանձերն անբավ
Վոսկի, պղինձ բազմապատիկ, և յերկաթի ճարտար գործեր
Յեվ լայնալին մեծ աղեղներ և փքինով լի կապարճներ,
Արդ յերբ հասավ ներս առագաստն Պենելոպեն գեղեցկավառ,
Յելավ կանգնեց կաղնու սեմին, վոր կերտել եր հյուսնը
ճարտար,

Վողորկել եր և հաստատել ուղղակշիռ, ճշգրտաղեղ,
Ու դըել եր բարավօրներ, զրանդիներ նաև շքեղ.
Արդ մտացավ Պենելոպեն, քանդեց լարը պինդ մանյակի,
Դրեց մեջը կուռ բանալին, հրեց նիզը մեծ փականքի.
Ու այն դռան զրանդիներն այնպես ճոխնչ արձակեցին,
Կարծես դաշտում նախիրի մեջ ցուլերը զիլ բառաչեցին:
Ու յերբ բացվեց դուռը հսկա բանալին թափը առած՝

Դժիսույն շքեղ ու հոյակապ՝ վերնահարկը յնլավ՝ գնաց,
 Ուր զգեստի դարաններում կային ծածուկ պինդ դարաններ,
 Յեվ նրանց մեջ պահված եյին անուշարույր պատմուճաններ:
 Մեկնեց ձեռը Պենելոպեն, պոկեց սեպից աղեղը մեծ
 Ու պատյանը նաև նրա լուսաճաճանչ նա վերցրեց,
 Նստեց այստեղ, ծնկան դրավ հիշատակներն այդ դյուրավի
 Ու լաց յեղավ՝ մերկացնելով լայնալինը իր արքայի:
 Ու յերբ հագուրդ առավ դժխույն իր կոծերից արտասվագին,
 Խջավ ղեպի հոմանները, վոր յերևա նրանց աչքին:
 Բռնած ուներ դժխույն ձեռին աղեղը կուռ և լայնալին,
 Հետը նրա և կապարճ՝ լի փքինով մահաթոփիչ.
 Հետեւից ել նաժիշտները տանում եյին իրենց ուսին
 Սակառը լի յերկաթ-պղինձ, մրցանքները մեծ Վողիսին
 Արդ յերբ հասավ չքնաղ դժխույն սրահը լայն հոմանների,
 Կանգնեց այսպես սղան մի շեմքին հրաշակերտ այն սրահի,
 Քողազարդված եյին տիկնոջ այտերը վառ մի շարոցքով,
 Յեվ կողքերին յերկու նաժիշտ վայլում ելին նրա շքով:
 Զայն արձակեց Պենելոպեն. «Լսեցեք ինձ, հոմանիներ,
 Վոր իմ տանը դուք ամեն որ ձեռնարկում եք դառնալու տեր,
 Վոր որնիբուն ձեզ տվել եք ինջույքներին մեծահանգես,—
 Լավ լիացեք իմ հարկի տակ, քանի չը կա ել Վողիսես:
 Զեր բռնության համար չը կա այլ պատրվակ մի գեղեցիկ,
 Քան վոր խւել մեկզմեկուց դուք ուղղում եք իմ հարսանիք,
 Ահա տեսեք, յեկավ հասավ որը մրցման ձեր բաղդալի.
 Յես դնում եմ ձեզ մրցելու աղեղը մեծ Վողիսեսի:
 Ով վոր ձեզնից հեշտ կը լարե աղեղն ահա այս լայնալին
 Յեվ քաջաձիք բազկի ուժով դնե փքին մահաթոփիչ
 Յեվ շեշտելով կանցկացնե տասնեմրկու ողի միջեց,
 Նրան փեսա ինձ առնելով՝ յես կը մեկնեմ այս պալատից,
 Իմ այս տանից, ուր հարս եյի, այս մեկ տանից իմ հացալի:
 Վոր և քնած պիտի հիշեմ յերազի մեջ կարոտալի»:
 Ասավ դժխույն և նույն ձայնով հրամայեց քաջ Յեվմեյին,

Վոր լայնալիճ նետն ու ողեր տանի և տա հոմաններին,
Ասավ Յեզմեն, տվեց նրանց,—բայց լալիս եր արտասվալի,
Լաց եր լինում և Փելիտոս, տեսնելով դենքն իր արքայի:
Ապուշ կտրեց Պենելոպեն և վերստին դարձավ նա յետ,
Վերև յելավ նաժիշտներով, իր Վոդիսին վողբաց թագուն,
Մինչ Պալլասը իր աչքերին բաշխեց հանգիստ անուշ մի քուն:

ՅԵՎՄԵՌՍԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Ասաց, փոեց կրակի մոտ հյուրի համար անկողին
Յեզ վոչխարիւայծի մորթում պառկեցրեց Վոդիսին,
Նաև ձգեց ծերի վրան իր վերարկուն հաստաքուրջ,
Այն վոր նաև ինքն եր հազնում ձմրան բուքին դառնաշունչ,
Հանգիստ առավ այսպես Վոդիս, և նրա շուրջն հովիմներ...
Միայն ծերուկ Յեզմենոսն եր, վոր չը պառկեց քննելու,
Զգուշացալ և շուտափույթ վեր կալավ նա իր զենքեր
Ու պատրաստվեց վոր դաշտ գնա՝ յերամակը հսկելու
Ռւրախացաղ, յերը վոր աչքով տեսավ ինքը՝ Վոդիսես,
Ինչպես իրան՝ բացակային հավատարիմ և Յեզմենու
կախեց սուրը խողարածը իր ամրակուռ ուսերից,
Հազար և թավ իր վերարկուն՝ մենակ պաշտպանն հողմերից,
Դրեց գլխին յերկարամաղ իր թավաբուրդ այծենին,
Ասավ սաքն իր սայրասուր՝ ահարկողը գողերին,—
Ու զնաց այնտեղ, ուր քննել եր իր խոզերի յերամակ՝
Հյուսիսային Բորյան քամուց պատսպարված ժայռի տակ:

ՄԱՆՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐԻ («Իլիուկան»ի և «Վոլխսական»ի հատվածներում)

ՄՈՒՍԱՆՆԵՐ—Հռուսական առասպեկտարանության մեջ արգելումի և դիտու-
թյանների դիցուէիներ—աստվածուէիներ.

ԴԻՑՈՒԷՆՆԻ—Աստվածուննի:

ՊԵԼԻՍԱՆԻՆ—(կամ, Պելեյոն). Պելիսուի վորդի—Աթելեսը:

ԱՐԱՅԵՑԻ—Հույս:

ԱՐԱՄԱՉԴՐԴՐ—Զեմ, աստվածների հոյրը,

ԻԼԻՈՒՄ—Տրոյա կամ Տրոյազա, Իլիոյի հիմնած քաղաքը:

ԱՏՐԻԴՆԸ—(կամ Ատրեյոն). Ատրիդեսի վորդի—Ադամեմնան և Մհեմ-
լամբու:

ՀԵԼԻՆ—(կամ Հեղինե). Մելնեալոս թագավորի կինը, փախազ Պարիսի
հետ Տրոյա, զանալով պատճռու պատերազմի:

ԴԱՆԱՅԵՑԻ—Հույս:

ԱԹԵՆԱԸ—Հռուսական առասպեկտարանության մեջ պատճերազմի, և հոգ-
լության աստվածուննի, նաև քաղաքների պաշտպան: Միաժամո-
նակ աստվածուննի՝ կանանց աշխատանքի և ձեռագործի, իոր-
մանկության և իմաստության:

ԴԻՇՈՒՄ—Հռուսական աստված:

ԴԻՇԻԹ—Հռուսական աստվածներ:

ՄԱԿԱՐ—Տրոյայի հիմնադրի՝ Իլիոյի վորդին, աքսորդից Տրոյակայից և
Լեսպոս կղզու վրա հիմնեց Միտիլին քաղաքը:

ՀԵԼԵՍՊՈՆՏ—Մե ծով:

ԿԱՍՍԱՆԴՐԱ—Պրիամոս թագավորի աղջիկը:

ԱՍՏՐԻԿ—Աքրոպիսե, սիրո դիցունի:

ՊԵՐԳԱԼՄ—Տրոյակի կրեմը, ուր տեղավորված եյին տաճարները և Պըխ-
մի վորդոց պալատները,

ՀԵԿԱԲԵ—Պըխամուի կինը,

ՎՈԼԻՄՊՈՍ—Ամենաբարձր սարը Թեսալիայում,

ՖԵԽՈՍ—«պայծառ», Ազոլոնին տրվող մակափըլը,

ԳԱՐԻՄ—(նաև Ազեքանաղբառ), Պըխամուի վորդին:

ՆԱՎԱՒԿԱԾԱ—Թեագիայի Ալբինոս թագավորի աղջիկը,

ԱՐԻՆՈՍ—Թեագիայի թագավորը,

ԱՐԵՏԱ—Ալբինոսի կինը,

ԳԱԼԼԱՍ—Աքենատ, տես վերելը:

ՀԱՅԵՐՏԵՍ—Վոդիսեսի հայրը:

ՏԵԼԵՄԱՐ—Վոդիսեսի վորդին:

ԵՅՌՈՋԱՆԻ—Եկուտանիները զարծածվում եյին անային անտեսության
մեջ. իսկ թանգարին մետաղից՝ տաճարներում և անյակներում
զրվում եյին իրրե զարդ:

ԱՐՏԵՄԻՄ—Կույս-տառվածուհի, Ազոլոնի քույրը, Ճննդարերության հո-
գանագոր, հոտերի և վորսի պաշտպան, լուսնի զիցուհի և վարսոր-
դուհի:

ԱՅԱՔՑԱՆԵՐ—Յերկու Հունական հերոսներ, հայունի քաջությաններով
Տրոյայի պատերազմում, մեկը Տելամոնիդի վորդի՝ հերոսներից ա-
մենաանլիները Աքիլեսից հետո, մյուսը՝ Ուլեյի վորդի:

ԴԻՈՍԵՑ—Առաջնակարդ հերոսներից:

ԳՐԻԱՄՈՍ—Տրոյայի թագավորը, հեկառի հայը:

ԱՄԳՈՍ—Հին հունական քաղաք:

ԻԴԱ—Տրոյայի բարձրագույն լեռը, Զեսի բնակատեղերից մեկը:

ՄԵՍՍԵՑԻՄ Յեւլ ՀիՊԵՐ—Աղբյուրներ Թեսալիայում, Աքիլեսի ճննդա-
գայրը:

ԱՐԵՄ—Պատերազմի տառվածը:

ՊԱՏՐՈԿԼԻՆԵՍ—Հունական հերոսներից մեկը, Աքիլեսի քնները, Հեկառի
ձեռքով սպանված:

ԹԵԴԻՄ Սովի զիցուհի, Աքիլեսի մայրը:

ՎՈԴԻՄՍԵՎՍ—Իթակեյի թագավոր:

ՊԵՆԵԼՈՊԵ—Վոդիսեսի կինը:

ԵՎԱՄԵՆՈՍ—Վոդիսեսի հաւատարիմ խողապանը:

ԹԵՐՄՈՒՏԵՍ—Աքաների դեմ ըմբռատացող աշայեցին:

ՔԲԻԶԵԼԻՄ—Քըիզի քուքմի աղջիկը, Ազամեմեռնի հարնը, պատերազմ-
կան գերի:

ՔՐԻԶԵԼՄ—Բըիղի քուբմի աղջիկը, Աքիլեսի հարճը, պատերազմական
 դերի,
 ԱՆԴՐՈՄԱԳՆ—Հեկտորի կինը:
 ԱՍՏԻԱՆԱԳՄ—Հեկտորի վորդին:
 ՀԵՓԵՍՏՈՄ—Կրակի և յերկաթագործական արվեստի առավածը, Զեսի և
 Հերայի կաղ վորդին, նրա արհեստանոցը զանգում եր Անմեռու կըդ-
 դու վրա, Միցիլիայում, Ետնայի խորքերում, վորտեղ նա աշխա-
 տելիս և յեղել ցիկոպների հետ:
 ՀԵՐԱ—Զեսի կինը և քույը:
 ՀԱԴԻԵՄ—Դժոխի, ստորերկրյա թագավորության առավածը:
 ՊՈՍԵՑԴՈՆ—Ծավի աստվածը:
 ԱՐԴՈՍԱԾՎԱՆ—ՀԵՐՄԵՍ—Վերջինս սպանել և հունական միֆոլոգիայի
 բազմականի հսկա Արքունին:
 ԴԵՄԵՑՐ—Հոգագործության դիցուհի:



ՃԵՔՍՊԻՐԻ

ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ՊՐՈՊԼԵՄԸ
ՅԵՎ ԱՏԵՂԵՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԿՈՒԹՅՈՒՆԸ

Մարտն ու Խնդիրսը Շեխավիրի մասին: — Շեխավիրյան
պատամաններ և Շեխավիրյան գրականությունը: — Շեխավիրի
դարաշաբանը: — Առևտական կապիտալը և Յեղիսաբեր քազու-
նու պալատը: — Պայման նամաշխառնային նեղեմոնիայի նամար
Անգլիայի և Սպանիայի միջև: — Դրաման և քատրոնը Շեխավիրի
ժամանակի:

Կարլ Մարքսին նվիրած հիշողությունների մեջ Պոլ
Հաֆարգը գրում եր, վոր Մարքսը գեղարվեստական գրակա-
նություն և հատկապես պոեզիա շատ եր սիրում, Եսքիլոսի
գրվածքները նա կարդում եր հունարեն լեզվով, Եսքիլոսին
ու Շեքսպիրին համարում եր մարդկության ստեղծած յեր-
կու մեծագույն դրամատիկական հանճարներ: Մանավանդ
շատ բարձր եր զնահատում Շեքսպիրին, մանրամասն ու-
սումնասիրել եր նրա գործերը, դիտեր նրա դրամաների
նույնիսկ ամենաաննշան գործող անձերին: Անգլիական մեծ
դրամատուրգը կատարյալ պաշտամունքի առարկա յեր Մարք-
սի տանը: Նրա յերեք աղջիկները անդիր դիտեյին Շեքս-
պիրի գրվածքները: Հայտնի յե, վոր յերբ Մարքսը սկսում
եր անգիր արտասանել շեքսպիրյան վորեն մենախոսու-
թյուն, նույնը շարունակում և վերջացնում եր նրա կինը:
1843-ից հետո Մարքսը, կամննալով կատարելագործվել ան-
գլիերնի մեջ, վորին նա մինչ այդ ել աղատորեն տիրում

եր, շնչառողից յան բոլոր հաստուկ արտահայտությունները նա հավաքում և դորոշ գասավորությամբ զրի յեր առնում:

Նույնպիսի գերազանց գնահատանքի առարկա յե յեղեղ Շեքսպիրը Ենգելսի համար: Բավական և հիշել Ենգելսի բուռն հարձակումը գերմանական գրող Ռ. Բենեդիկսի վրա, վորը հանգնել եր Շեքսպիրի մասին բացասական կարծիք հայտնել: Այդ մասին մենք կխոսենք մի փոքր ներքեւ:

Այս հանգամանքը պարտադրում և մեղ պատասխանել հետեւ յալ հարցին:

Ինչպէս գիտական կոմունիզմի հիմնադիրները այսպիսի բարձր վերաբերմունք են ունեցել դեպի մի դրող, վորը վերաբերադրել և կազմալուժվող ֆեոդալիզմի և ծագող կապիտալիզմի միջև ընկած շրջանը և իր դասակարգային գիտակացությամբ մտն ենդեմ արխտութիւնների արխտութիւնների արխտութիւնների մասին:

«Քաղաքանական բնադրասուրյան ռուրօ» գըրքում արվեստի վերաբերյալ նշանավոր հատվածից մենք արգեն կիսենք, թե ինչ բարձր կարծիք և ունեցել Մարքսը ինչպես հին հունական արվեստի, այնպես ել Շեքսպիրի մասին:

Մարքսն ու Ենգելսը առանձնապես գնահատել են Շեքսպիրին, վորովհետեւ նրա ստեղծագործությունը գեղարվեստական ունալիքմավազ ընդգրկում և կոնկրետ իրականությունը, պատմական թի ժամանակուկից, անդրադարձում իր կողոխայի կյանքը բոլոր կողմերով ու մեծ խորությամբ, առաջի և գործող բազմապիսի հերոսների հույզերը, ապրումները, կրծերը, նրանց հոգեբանությունը, պատկերում տարբեր, բնավորություններ նուրբ մշակումով, տիպերին հադորդում գերազանց հզկվածություն:

Մարքսի և Ենգելսի կարծիքով, անցյալում գոյություն ունեցող դասակարգերի անկումը, որինակ, ասպետականության անկումը, կարող եր տալ հարուստ նյութ գեղարվեստական հոյակապ ստեղծագործությունների համար, առավե-

լապես զողըներգական։ Յեկ Վելիքամ Շեքսպիրն ե այն հեղինակը, վոր խոշոր կտամբներով վերարտադրել և անզիական ֆեոդալական արիստոկրատիայի, նրա ասպետականության անկման վողըներգությունը, Բայց վոչ միայն ընկնող դասակարգի վողըներգությունն և անզրադարձրել նա, այլ և նրա մեր մասի Վերպարանափոխումը, անցումը դեպի ստեղծվող նոր հասարակությունը, ավելի ճիշտ՝ նա պատկերացրել և աղջուականության վորոշ շերտի բուրժուականացումը և բուրժուական դասակարգի յերեալը պատմական ասպարնզում։ Լինելով եպօխայի հասարակական հակասությունների կենտրոնում, Շեքսպիրը իր ռեալիզմով անդրադարձրել և հասարակական-տնտեսական յնրկու ֆորմացիաների տևական պայքարը, — ֆեոդալիզմի և կապիտալիզմի պայքարը, Ֆեոդալական արիստոկրատիայի անկումը նա վերապրել ու վերաբարձրել և իրքեւ վողըներգություն, վորովինու նա այդ դասակարգի գաղափարական արտահայտիչն և յեղել գերազանցալես, իսկ առևտրա-արդյունաբերական կազմակերպվող հասարակության առաջարկացման մեջ նա դիտել և նոր, թեալիտ անծանոթ և անհարազատ կյանքի կենտրոնակատրը, վորովինու իր առողջ ռեալիզմով նա չեր կարող անուշադիր անցնել նոր պայմաններում ստեղծված անցքերի ու յերկույթների մոտով։ Շեքսպիրի կերտած զեմքերի դալլերեան — եպօխայի բնորոշ և ցայտուն արտահայտիչներն են, իսկ նրա պատկերած անցքերը — պատմաշրջանի ետապներ։

Վորչափով վոր այն ժամանակվա Անգլիան ներկայացնում եր համաշխարհային կոնֆլիկտների կենտրոն, — ծովային պետություն դառնալու պրոցեսում, — Շեքսպիրը իր գերազանցորեն ակտուալ արվեստի մեջ ամփոփել և հսկայական ձգտութեր, հզորագույն կրթեր, գաղափարներով հագեցած պատկերներ։

Ծենելով Շեքսպիրի այս արժանիքներից, Մարքսն ու Մնակելով շատ խստապահանչն են յեղել զրողների նկատմամբ

առհասարակ. դրողից նրանք պահանջում են իրական հարաբերությունների ռեալիստական վերարափառություն, Պահանջում են, վորպեսզի գեղարվեստական դրությունը դադափարական խորությանն ու պատմական գիտակցական բովանդակությանը հաջորդի շեքսպիրյան կենդանի, աշխույժ ու հարուստ շարժումը, Այս պահանջը նրանք առաջարկել են Ֆերդինանդ Լասալին՝ վերջինիս դրած մի վողբերգության առիթով, մատնանշելով Շեքսպիրի վրա, վորն իր հերոսներին չեր դարձնում սոսկ այս կամ այն դադափարի ռուսորդներակառակը հերոսների կենդանի դործողությունից եր բղխում հեղինակի զեկավարող գաղափարը Ենգելսը ամենից առաջ պահանջում ե դեղարվեստական ռեալիզմ և հերոսների անհատականության հղկվածություն, միաժամանակ անհատականության պահպանումը: «Յուրաքանչյուր անձ,— դրում ե նա, —պիտք ե լինի թե տիպ և թե միաժամանակ անպայման վորոշ անձնավորություն»: «Իմ տեսակետով, — շարունակում ե նա, — ռեալիզմը յենթագրում ե, բացի դետալների ճշտությունից, տիպական բնագորությունների ճշգրիտ ցուցադրում իրենց համապատասխան պայմաններում»: Աղա. «Իմ նկատի առած ռեալիզմը ինքն իրեն հայտնաբերվում ե նույնիսկ հեղինակի հայացքներից անկախ», Յեթե Ենգելսի այս տեսակետը կիրառենք Շեքսպիրի նկատմամբ, պիտք ե ասենք, վոր հանճարեղ ռեալիստը, չնայած իր աղնվազնտական հայացքներին, զգաստ մոտեցում ե ցուցադրել իրական հարաբերություններին և մի ամբողջ շարք գեպի առաջա նայող հերոսներ ավելի:

Շեքսպիրին բարձր են գնահատել Մարքսն ու Ենգելսը, վորովինեաւ հանճարեղ դրամատուրգը ռենեսանսի շրջանի այն տիանական դեմքերից ե, վորը իր ստեղծագործական մեծ թափով, ցնցող վողբերգություններով ցուցահանել է յերկու եպոխաների գրանդիոզ ընդհարումը առմտրա-արդյունաբերական խիզախ դասակարգի սոցիալական դիրքեր

զրավելու պրոցեսի և ֆեռդալական արիստոկրատ էայլ-մեռնող տրադիցիաների ֆոնի վրա:

Խոսելով վերածնության դարաշրջանի մասին, Ենգել-սը դրում և հետեւալը. «Դա մեծագույն պրոդրեսիվ մի հեղաշրջում եր, վորպիսին մինչ այդ աւզրած և յեղել մարդկությունը, մի եղուսա, վորը կարիք ուներ տիտանների և վորը իսկապես առաջ բերեց տիտաններ մաքի, զգացմունքի և բնավորության, տիտաններ բազմակողմանի և զիտական, ժամանակակից բուրժուազիայի տիրապետությունը հաստատող մարդիկ ամեն ինչ եյին, բայց յերբեք սահմանափակ բուրժուաները Ընդհակառակը, նրանք տարված եյին իրենց ժամանակին հատուկ արկածախնդրությամբ... Այն ժամանակի մարդիկ տակավին գերի չեյին աշխատանքի բաժնաման, վորի բթացնող, այլանդակող ազգեցությունը մենք դիտում ենք այժմ նրանց հաջորդների վրա: Առանձնապես բնորոշ ե, վոր նրանք զրեթե բոլորն ել ապրում են իրենց ժամանակի բովանդակ շահերով, մասնակցում են դործնական պայքարում, կանգնում այս կամ այն կուսակցության կողմը՝ վոմանք խոսքով ու զրչով, վոմանք սրով, վոմանք ել թե մեկով և թե մյուսով, Այստեղից ել բղխում ե նրանց բնավորության կորով ու ուժը, վորը այդ մարդկանց դարձնում ե ամբողջական դեմքեր»:

Ենգելսի այս բացատրությունը միանգամայն հասկանալի յե դարձնում գիտական սոցիալգումի հիմնադիրների տված այսքան բարձր գնահատանքը Շեքսպիրին, Նրանց հիմնական աշխատաւթյունների մեջ բազմաթիվ անգամ հիշատակված են վերածնության շրջանի մեծ դրողները, վորոնց թվում պատվավոր տեղ ունի Շեքսպիրը, առանձնապես Մարքսի մոտ: «Գերմանական իդեոլոգիա» աշխատության մեջ նա բեջբերությունը և անում Շեքսպիրի «Արքենացի Տիմոն»ից դրամի եյության մասին: «Շեքսպիրը, — ասում ե Մարքսը, — տալիս և դրամի եյության գերազանց պատ-

կերացումը՝ Դրամին հատկանիշները «Ենքսպիրը ավելի լավ գիտեր, քան թիորետիկոս լինելու հավակնություն ունեցող մեր բոլոր մանր բուրժուաները»:

Հետաքրքրական հանգամանք և, վոր Մարքսն ու Ենդելսը սառնասիրոտ չեյին վերաբերվում անդամ Շեքսպիրի մասին լույս տեսնող քննադատականներին Մարքսը իր նամակներից մեկում, Ֆ. Ենդելսին գրած, հայտնում և իր վրդովմունքը Ռուգեյի բացասական վերաբերմունքի առիթով Շեքսպիրի նկատմամբ. «Անասուն Ռուգեն, —զրում և նա, —ապացուցել և Պրուտցի մոտ, թե «Ենքսպիրը դրամատիքական պոեմ չի յեղել» վրովինետև «փիլիսոփայական սիստեմ չև ունեցել»... (24/ХI 1858-ին գրած, հատոր 22, «Մարքս-Ենդելս»):

Իսկ յերբ զերմանական դրող Ռ. Բենեդիկսը, վորի անունը քիչ վերև հիշատակեցինք, իր լույս ընծայած մի գրքում փորձ և անում համեմատելու իր ժամանակի դրողներին Շեքսպիրի հետ և այն թեթևամիտ միտքն և հայտնում, թե վերջինս, այսինքն Շեքսպիրը, վորպես թե անհամեմատ ավելի ցածր և կանգնած տասնիններորդ դարի հատկապես յերկրորդ կեսի բուրժուական գրողներից, —Ենդելսը հետեւյալ զայրույթալից տողերով և բնորոշում այդ զրքի հեղինակին՝ Մարքսին գրած իր նամակում. «Սրիկա Ռոդերիխ Բենեդիկսը հրատարակել և գարշահոտւթյուն բուրող մի հաստափոր գիրք «շեքսպիրոմանիայի» մասին, վորով նա մանրամասն փորձում և ապացուցել, թե Շեքսպիրը չի կարող հավասարվել մեր մեծ պոետներին, անդամ նոր ժամանակի պօետներին; Խնչպես յերեսում և, Շեքսպիրին պետք և ուղղակի ցած զլորել իր պատվանդանից՝ նրա տեղը լայնետույց Ռ. Բենեդիկսին տեղավորելու համար. «Վիճակության կանանց» միայն առաջին ակտում ավելի կյանք ու շարժում կա, քան զերմանական ամբողջ դրականության մեջ, —զերջացնում և նա («Մարքս-Ենդելս», 24-րդ հատ.):

Բնորոշ և այս վերաբերմունքը, իսկ արտահայտված միտքը՝ շատ հատու, Մարգա՞ն ու Ենդելսը անհամեմատելիր մեծություններ եյին համարում դասակարգերի կործանման և վերելքի զրանողիող վողբերդական ջրվածքները մի կողմից և մեջնական սահմանափակ մտքի արտադրությունները՝ մյուս կողմից:

«Յեթև անցյալ դասակարգերի կործանումը, որինակ, ասպետականության, — պրում են նըանք, — կարող եր ըստ անդակություն տալ դեղարվեստական մեծագույն վողբերդական զրվածքներին, ապա մեջանականությունը, բնականորեն, չե կարող արագագրել ուրիշ վոչինչ, բայց յեթև ֆանատիկ չարության անզոր արտահայտություններ և սանչողանուական առակների ու ասացվածքների մի հավաքածու»:

Ամփոփենք, Սոցիալիզմ, կոմունիզմ կառուցող դասակարգի զրողներիը շատ բան ունեն սովորելու մտքի այն տիտաններից, ինչպես Դանտե, Անդրվանտես, Շեքսպիր, մանավանդ վերջինից, ինչպես մատնանշում են մարքսիզմի հիմնադիրները, սակայն այն իմաստով, վոր դա ընդորինակում չլինի, այլ քննադատական յուրացում, ինչպես իր ժամանակին արել են Մարգա՞ն, Ենդելսն ու Լենինը՝ հին կուլտուրական արժեքները յուրացնելիս:

Համաշխարհային գրողներից վոչ վոք իր ստեղծագործությունների շուրջը, բացի հոմերոսից, այնպես ահագին քննադատական և բազմակողմանի հետադուական զրականություն առաջ չե բերել, ինչպես Շեքսպիրը, Հաստատված և այն կարծիքը, վոր Շեքսպիրի գրական ժառանգության շուրջը ստեղծված գրականությունը իր ծավալով կարող է հավասարվել կուլտուրական վորեւ փոքր ժողովրդի ամբողջ գրականությանը:

Շեքսպիրը ունիվերսալ համաշխարհային գրող և, սեփականություն բոլոր կուլտուրական ժողովուրդների Յերկարգնդի վրա չկա մի քաղաքակրթված անկյուն, ուր նրա դրամաները մուտք գործած չլինեն, Յեղ այն դրականությունը, վոր կուտակված և նրա դրական գործների շուրջը, միայն անզիւդական չե. այդտեղ մաս ունեն այն բոլոր ժողովուրդները, վորոնք ճանաչել են Ոթելլոյին, Համլետին, Լիրին և Մակբեթին իրենց մայրենի լեզվով: Այնքան խոշոր և այդ դրականությունը և ցրված աշխարհի դանաղան մասներում թերթերում, ամսագրերում և առանձին դրքերում, վոր մինչև այժմ անկարելի յե յեղել հավաքել ու կարդավորել այն: Շեքսպիրյան մատենադրությունը կարողացել և միայն հիշատակել խոչըր ուսումնասիրությունները և առանձին հողմածները, վորոնք նվիրված են մեծ դրամատուրդի գործերին: Շեքսպիրյան ստեղծագործության հմայքը պատճառ և դարձել, վոր Յեղիբովայում և Անզիւայում կազմակերպվել են շեքսպիրյան գիտական ընկերություններ, հիմնվել մատենադարաններ, թանգարաններ՝ դրամատուրդի գործերն ու նրանց մասին յեղած բազմալեզու դրականությունը կենարունացնելու համար:

Նրանցից աչքի ընկնողներն են Գերմանական Շեքսպիրյան Ընկերությունը—Deutsche Sh. Gesellschaft, հիմնված 1865-ին, „Sh. Society“ 1841-ին, New York Sh. Society“ 1885-ին: Մյունիենում և Լոնդոնում հիմնվում են հատուկ Շեքսպիրյան թատրոններ՝ պիյեսները շեքսպիրի ժամանակվա ընմադրությամբ ներկայացնելու համար: Բրիտանական թանգարանն ունի Շեքսպիրի ան ա հատուկ բաժանմաւնք, ուր հավաքված ե ավելի քան 4000 անուն դրամատուրգին նվիրված գիրք: Բիրմինհեմում գոյություն ունի Շեքսպիրյան հատուկ մատենադարան, վորի 1904 թ. դրացուցակը պարունակում եր 11.000 անուն: Այդ թանգարաններն ու մատենադարանները, մանավանդ Բրիտանական մուզեյունն

ու Շիրմինհեմի մատենադարանը, Շեքսպիրին ուսումնասիրելու համար տալիս են շատ հարուստ նյութ։ Հավանական և այդ յերկու հիմնարկներում կուտակված պատմական ու դրական փաստաթղթերով միայն հնարավոր լինի լուծել Շեքսպիրի հեղինակության գարավոր առեղծվածը։

Շեքսպիրի դրվածքները թարգմանված են զրեթե բոլոր զրական լեզուներով։ Վոչ միայն յելլուպական, այլև ասիսէան ժաղովուրդները, գիր ու զրականություն ունեցող, անատարելը չեն մնացել Շեքսպիրի դործերին Նրա ժողովերդությունները մուտք են զործել ճապոնիա, Չինաստան, Ճապուստան, անգլամ Մալայան կղզիները, Անհնարին և թվել նույնիսկ լիակատար ժողովածուների հրատարակությունները, չհաշվելով դրամատուրգի առանձին դրվածքները։ Դրժմարին ու բարդ աշխատանք ե զործ դրված նրա պիյեսների թարգմանության համար։ Բավական և հիշատակել ուստի թարգմանիչներից Վ. Կրետչերին և Ա. Սոկոլովսկուն, վարոնցից յուրաքանչյուրը Շեքսպիրի ամրողջական գործը թարգմանելու համար յերեսուն տարվա աշխատանք և զործ դրել։

Շեքսպիրի բոլոր հետագա հրատարակությունների հիմքում գրված և առաջին նշանավոր հրատարակությունը 1623-ի ու folio-ն, վոր լույս են ընծայել հեղինակի ընկերուները՝ դերասաններ Հյումինգն ու Կոնդելը։ Այդ հրատարակության առաջարանը գրել և անդիմական հայտնի դրող Բնին Զոնսոնը, Շեքսպիրի ընկերը, բարձր զնահատելով նրա ստեղծագործությունը։ Ձևադրված պիյեսների թիվը 19 և Չնայելով իր պակասամոր կողմերին, ու folio-ն բարձրացնելք աղբյուր և Շեքսպիրին ուսումնասիրելու համար, Յնչ վորովնեաև շեքսպիրագիտների համար անմատչելի յեր գարձել այդ հազվագյուտ հրատարակությունը իր թանգության պատճառով (յեղած սահմանափակ որինակների արժեքը հասցընել ելին 25.000 վոսկի սուրբու), հետապայում նա բազ-

մաթիս անգամ վերահատարակվեց լուսանկարչական միջոցներով, վորանք իրենց կառարելությամբ աալիս են իսկականի լիակատար իլլյուզիան:

Ցնվ այսպիս՝ ամբողջ յերեք դար Շեքսպիրը դարձել է քաղաքակրթիւն ժաղովուրդների ուսումնասիրության, առարկան, և հսկայական աշխատանք և դործ գրվել պարզելու համար այն պաղանիքը, վորով քորդարկված և մացել մեծ բանառտեղծի անձնավորությունը:

Շեքսպիրի դրական մեծությունը պարզնելու համար վոչ միայն դրականազետներն են աշխատել, այլ և զիտական ուրիշ ճյուղերի ներկայացուցիչներ, Պատմաբաններ, իրավագիտներ, կրօնական կուլտի ներկայացուցիչներ, լեզվագիտներ, հոգեբաններ, քաղաքատանտեսներ, անգամ բուռարաններ ու կենդանաբաններ հատորներ են դրել Շեքսպիրի ստեղծագործության շուրջը: Հողերույժները դիտել են, թե ինչպես տասնվեցերորդ դարի գրողը դարմանալի նրբությամբ ու իրական գծերով անդրադարձել ե խելազար մարդու հիվանդադին արտահայտությունները (Աֆելիա, Լիր արքա): Արվեստագիտները, քննադատները, արձանագրել են, թե վարքան «զորեղ» և յեղել նրա հանճարի լույսը, վորով թափանցել ե նա մարդկային հոգու հեռավոր ծալքերը, և եղիւաղետներն ու բնադետները ավելի հեռուն են դնացել. առաջինները հաշվիլ են, թե Շեքսպիրի բառամթերքը վճրապիսի հարստություն և պարունակում, և գտել են, վոր Շեքսպիրը գործածել ե 17 հաղար բառ, և դա այն ժամանակ, յերբ 19-րդ դարի մեծագույն գրողներ դործածել են ամենաշատը 9 հաղար բառ: Իսկ բնադետները հաշվել են այն ծառերի ու բույսերի թիվը, վորոնց անուններ իրենց բնորոշ հատկություններով ու արտաքին պատկերով հիշել ե բանաստեղծը իր պիեյսների մեջ: Ինքնըստիւքյան հասկանալի յե, վոր քաղաքատանտեսներն ու հաստ-



Շեքսպիր, մասրիչ Ա. Կոդյոյանի (ըստ Դրոյշփուտի)
Шекспир, худ. А. Коджояна (по Драйшюту).
Shakespeare, by A. Kodjoyan (after Drotshaut).



բակաղետները պիտի առատ նյութ գտնելին այնտեղ իրենց ուսումնասիրությունների համար:

Այսպես ստեղծվեց շնչառիրյան պաշտամունքը, կուլտը: Այն քաղաքը, ուր ծնվել է (Ստրեգֆորդ) հռչակավոր դրամատուրգը, հետազայտմ գտնում և մի յուրահատուկ թանդարան, վորի յուրաքանչյուր անկյունը հիշեցնում և Շեքսպիրին: Այստեղ էտն բանաստեղծին նվիրված թատրոն, թանգարան, մատենադարան, ուր գետեղված են նրա անձի և ստեղծադրության վերաբերյալ նյութերը: Մինչև այժմ ել պահպանվել և Շեքսպիրի տնակը, վորտեղ ապրել և նա իր կյանքի վերջին տարիները: Ստրեգֆորդի վորոցների անունները նույնական շնչառիրյան են՝ նրա գրվածքները հիշեցնող: Պաշտամունքը այստեղ և հասնել, վոր պուտիտի անակին կից պարագը լի յե տյն ծաղիկներով ու ծառանքով, վորոնք հիշատակված են նրա գրվածքներում: Տուրիստների համար կառուցված հյուրանոցի համարները կրում են Շեքսպիրի հերոսների կամ պիեսների անունները, ինչպիս, որինակ, «Ոթելլ», «Ամառային գիշերվա» յերազ», «Ինչպիսի կուղնք» և այլն: Պահպանվել և այն Պահպանը, վորի վրա իրը նստած պարագելիս և յեղել աշակերտ Շեքսպիրը Ստրեգֆորդի դարոցում: Կենդանառության ժամանակ իր գնահատությունը չստացած Շեքսպիրը հետագա սերունդների կողմից, ավելի ճիշտ 18-րդ դարից սկսած, ինչպիս վերին տատցինք, դարձավ պաշտամունքի առարկա, վորի գերեզմանը անմենելու համար հնառավոր յերկրներից այժմ ել բազմաթիվ այցելուներ, առողիստներ են դալիս:

Բազմաթիվ բանաստեղծներ, արվեստագետներ, գիլիւստիաներ և ընթերցողներ այցելել են, ցույց տալով իրենց ակնածանքը հօգեկան կորովի առջև մի մարդու, վորի գեղարվեստական հանճարը ստեղծագործի և այնքան կենդանի հերուներ, ցույց տվել ինարկեն իր աշխարհայացքը

ողբեզմայսի, մարդկային ապրումների ու խոհերի այնքան խորը թափանցողություն:

Պաշտամունքի առարկած Շնօսպիրը սակայն, Սարենդիորդ զյուղաքաղաքի մէ կաշեվաճախ վորդի, ժամանակի սիստանմատիկ բարձր կրթությունից զարկ, լոնգոնի թատրոնի յերկրաբական դերասան, կարմիր եր կրնէլ այնպիսի սքանչելի վողբերդություններ, վորոնը մինչև այժմ ել ցնցում են հանգիստանենքին:

Այս առեղջվածը ավելի քան մը դար կանգնած և յեղել այն մարդկանց տառաջ, վարոնը շնօսպիրյան ստեղծառդրծությունը սարեդիորդցի Շնօսպիրինը չեն համարել:

Այդ մասին սակայն հնտեյալ պլութներում:

Նախ քան այդ հարցին անցնելը, համառատակի ուրավագենքը այն քաղաքական-սոցիալական վիճակի, վորի մնջդունդում եր Անգլիան Շնօսպիրի ժամանակի:

16—17-րդ դարաւմ Անգլիայի արտաքին յերևույթը դյուրամանական և գյուղացիական եր, բայց այդ յեղելույթի հետևը թագնված եր կատիառալիզմի տէներն վերնըք, նրա նախառավոր անման ժամանքը: Արագ կերպով դարձանալում եր արտահանումը, մանավանդ ըստեղենի: 17-րդ դարի սկզբում, Շնօսպիրի ժամանակ, արտահանումը հայտարար եր մենք միշտն ֆունտ ստերլինգի: Այն շրջանի համար իս խոշոր գումար եր հատարվում:

Նշանակալից եր այն, վոր առևտրական կարիստալի անումը համընթաց եր արշյունաքներական կատիառալի զարդացմանը, իսկ գյուղական անտեսությունը ընկել եր կապիտալիստական հունի մեջ:

Արտադրությունը դարձանալում եր աղջային մասշտաբը, աղջային պետական շրջանակում: Յեվ առ ավելի հիմնական եր դարձնում անտեսական նոր հարաբերություն-

ների ներքին բաղան Անվլիայում: Լոնգոնը այն ժամանակ ուներ յերկու հարյուր հազար ազգաբնակություն և հանդիսանում էր նոր հարաբերությունների խմբման կենտրոն:

Մասնագեղենի արտադրության դարձացումը պահանջում էր վոչխարաբուծության լայնացումը, և լենգլորդերը, անգլիական կազմածառերերը, ձեռնաու և յին համարում դործ ունենալ հողի մի քանի խոշոր կապալառունախառնությունների հետ, քան բազմաթիվ գյուղացիների:

Կաղինաւալիզմի դարձացման հետևանքով ստեղծված այս պայմաններում անզլիական լենգլորդերը, հողային ազնվականները բնականաբար խոշոր շահ պետք և ստանային իրենց ընդարձակ արոտատեղերից: Շահերի գիտակցությունը մոռացնել տղից նրանց ֆեռոդալական վաղեմի նախապաշտամունքը՝ արհամարհված առևտությունների համամամբ, և նրանք շատ համակերպվեցին բուրժուազիայի հաստատած նոր կարգերին: Այդ առիթով Ենգլիաը գրում եւ.

«Նրանց սովորություններն ու ձգութեաները ավելի շատ ըստ ըստ մուական եյին, քան ֆեռոդալական: Նրանց շատ լավ եյին հասկացել դրամի արժեքը և ուսցըրէ եյին հողային ունացը, դուրս քշելով կազմակեցներից հարյուրավոր մանր արինդատորների և փոխարինելով նրանց վոչխարներով: Հենրիկ 8-րդը մասսայորին նոր լենգլորդներ եր առեղծում բուրժուազիան խօսերից... Դրա համար ել անդշիտկան տարբառութատիան սկսած Հենրիկ 8-րդի ժամանակից վոչ միայն չե դիմագրել արդյունաբերության դարձացմանը, այլ, ընդհակառակը, աշխատել և սպազել նրանից: Մինեւոյն կերպով միշտ զանվել են խոշոր հողատերեր, վորոնք անտեսական կամ քաղաքական դրամապատճանով համաձայն են յեղել աշխատավոր ֆինանսական և արդյունաբերական բուրժուազիայի դեկադարների հետ» («Պատմական մատերիալիզմ»):

Այս յերեսույթի հետևանքով ստեղծվել եւ առևտուական ների մի ամբողջ շերտ, բաղկացած ազնվականներից, վարչունք խոշոր դեր են խաղացնել ներքին և արտաքին առևտությունների մեջ, մասնակցել Անգլիայի ծովային առևտությունների դարձացմանը:

Դա սկիզբն եր հողի կապիտալիութեացիայի, խոշոր հոգատերների հայտնի մասի բուրժուականացման, Գյուղաաընտեսության մուտքը կապիտալիստական հունի մեջ և հոգային փօնդի (վորով ողտվում եր գյուղացիությունը) անցումը խոշոր կապալառուների ձեռքը չարաչար հարվածում եր մանր գյուղացիության շահերին: Այս նոր իրականաւթյունը բուռն դժգոհություն եր առաջացնում գյուղացիական մասսաների մեջ. դժգոհությունը հաճախ վերածվում եր գյուղացիական ապատամբությունների, վորովինետե տընտեսական նոր կարգերը աղքատացման եյին դատապարտում դյաւդացիական ամբողջ բազմություններ, հողագուրի, թափառաշրջիկ դարձնելով նրան, հողը դառնում եր առևտորի տառրիկա, իսկ տանտրական ու արդյունաբերական կապիտալի ձեռք բերած նորանոր շուկաները տուիթ եյին դառնում ավելի ևս բարձրացնելու հողի արժեքը կամ կապահպատականը: Կալվածները հետզհետե անցնում եյին որամատեր առևտորականների ձեռքը, վորոնք նարպիկորեն ոգտագործում եյին հոդային արիստոկրատիայի շուայլ կենցաղը, պարագերի մեջ խճճվելը, առա նրանց կալվածները հեշտությունը սեփականացնում: Սաեղծվում եր այսպիսով ու առևտորի հոգատիրական նոր արիստոկրատիա հնի կողքին, հներից շատերին զցելով իր հունի մեջ, բայց հոդային նոր հարաբերությունների պայմաններում: Ֆեոդալական աղնվականությունը, առտիճանաբար սնանկանալով՝ իր խախտիոծ տընտեսական վիճակի վերականգնումը վնարում եր քաղաքում, աւր կյանքը սկսում եր բազմակողմանի դարդանալ, գեալի ինքը քաշելով յերկրի զանազան ծայրերից բազմություններ, աշխատանք ու բաղդ վորոնող աղնվականներին: Վերջիններից շատերը քաղաք եյին դիմում առևտորականների աղջիկների հետ ամուսնանալու և իրենց վիճակը այլպիսով կարգավորելու համար, Շեքսպիրի կոմեդիաներում պայծառ անդրադարձումն և դանել այդ յերեսութը: Հայտնի յե, վոր

Լոնդոնը այդ ժամանակ հռչակված եր իրբև Շհաբսնացուների տոնավաճառք:

Ծնակական այս նոր հարաբերությունների զարգացմանը նպաստում եր թաղավորական պալատը, մանավանդ Յեղիարքն թագուհու ժամանակ վորը մատ 45 տարի թաղավորել է, քանի վոր դա ձեռնառ յեր և պալատին և առևտրական բուրժուազիային, վորովնեան դրանով մի կողմից պալատը տպահովում եր իր դոյության նյութական հիմքը, սահանալով խոշոր տուրք բուրժուազիայից, մյուս կողմից զարգացող կապիտալիզմը կարիք ուներ կենտրոնացած ուժներ կապավորության՝ ընդդեմ ֆեոդալական արիստոկրատիայի կենտրոնախույս ձգտումների, ընդդեմ կաթոլիկ Հռոմի, կաթոլիկ պետությունների և այլն, Այս ժամանակաշրջանում (16-րդ դարի վերջում և 17-ի սկզբում) Լոնդոնում ստեղծվում են առևտրական խոշոր ընկերություններ, վորոնք իրենց ձեռքն են կենտրոնացնում Անգլիայի արտաքին առևտուրը, լայնացնելով առևտրի սահմանները մինչև Մուկովյան թագավորություն, մինչև Ամերիկա, Հընդկաստան, Չիններա և Մարոկկո:

Այս առևտուրը սկիզբ եր դնում և՝ կոլոնիալ գիշատիչ քաղաքականության (վորին մասնակցում եյին նաև անգլիական ծովահենները, ծովային ավազակները), և՝ կոլոնիացիայի, օրիաժամանակ նախապատրաստելով խոշոր ընդհարում միջազգային շուկայում այն ժամանակ առաջնակարգ մրցակից Սպանիայի հետ, Մուկային ճանապարհներին և միջաղղային առևտուրին տիրելու համար 1588 թվին տեղի ունեցած ընդհարումը Անգլիայի և Սպանիայի նավատորմը («Մեծ Արմադա») միջև վերջացավ, ինչպես հայտնի յե, հոգուտ Անգլիայի, վորով վերջինս հռչակվեց չծովի թագուհի:

Շեքսպիրի ժամանակ անգլիական պետական դրոշակը արդեն ծածանվում եր աշխարհի գրեթե բոլոր կողմերում:

Այդ դրոշակը ապահովում եր հսկայական հարստությունների մուտքն Անգլիա, ուր սակայն, հողադուրկ գյուղացիները քաղցից մոռնում եյին կամ դառնալով յերկրի նոր տերերի համար բանվորական ույժ, չարաչար շահագործվում:

Ենի ահա Շեքսպիլը ականատես եր ֆեոդալական արիստոկրատիայի կործանման այս պլոտիներին և բուրժուազիայի արագ վերելքին, մի պլոտին, վորը ընթանում եր սոցիալական սուլ ընդհարումների պայմաններում, Տիուր մայրամուտ եր ապրում անգլիական մի ժամանակ փայլուն արիստոկրատիան, տաղալիում եյին դարերով որբագործված կարգերը, իսկ նրանց փոխարինելու դալիս եյին մեծ դրամատուրգի համար նոր դասակարգի խորթ և անծանով մարդիկ, վորոնք մի տեսակ հոռետեսությամբ ու դայրույթով եյին լցնում արիստոկրատական մտածելակերպ ընդկըրկած բանաստեղծի սիրտը Բայց նա միաժամանակ տեսնում եր, վոր յեթե լորդերի հին Անգլիան սահմանափակվել և իր կղզիների մեջ, ուզա նոր դասակարգի Անգլիան առաջ աղօքային լայն քաղաքականության շրջանակ, վորը մի նպատակ ուներ միայն՝ դարձնել Անգլիան համաշխարհային պետություն: Այդ մեծությունը բերում եր նոր ու բազմակողմանի հարաբերություններ, շփման մեջ եր գնում Անգլիային բազմաթիվ ժողովուրդների հետ, առաջազրում համաշխարհային պրոլետարիատը, վորոնք պետք է անհրաժեշտորեն բարդ արտացոլում գտնեյին և դտան յերկրի մեծության հետ վերաճող հանճարեղ դրամատուրգի վողը բությունների մեջ:

Բուրժուազիայի հանդես դալը պատմական ասպարեզ, նշանավոր դարձավ նաև մի շարժումով, վոր հնատապայում լոյն ընույթ սահացավ: Դա պուրիտանների շարժումն եր, վոր սկզբում ուղղված եր կաթոլիկ յեկեղեցու դեմ, կաթոլիկ յեկեղեցին իր կառուցվածքով համապատասխանում եր ֆեոդալական կաղմակերպության և ծառայում եր արիստո-

կրատիայի շահերին ու իդեալներին, արգարացնելով նրա անստեսական և սպցիալական կարգերը։ Մինչդեռ պուրիտանական շարժումը ամբողջովին բղխում եր կապիտալիստական նոր կարգերի եյությունից։ Հասարակական կենցաղում պուրիտաները հայտնաբերում եյին ծայրահեղ ֆանատիզմ, անհամբերողություն, թշնամի եյին այն ամենին, ինչ կառը բաղ եր խանգարել կապիտալի կուտակման գործին։ Թշնամի եյին շռայլսւթյան, ճոխության, զվարճության, վորոնք կազմում եյին արիստոկրատ դասակարգին հատուկ արատները։ Ակնելով վորպես կրոնական շարժում 16-րդ դարի կեսներին, նույն դարի վերջում նա ստանում ե վառ քաղաքական գույն և անհաջո ուայքար հայտնաբերում արիստոկրատիային և պարագատի անզուսպ վայելքների դեմ, բոլոր տեսակին հասարակական զվարճությունների դեմ, թատրոնի դեմ, վորոնք վերջին հաշվով սպասավորում եյին տակավին տրագիցիաներով ուժեղ արտօնյալ դասակարգին։ Խնչպես հայտնի յե, Շեքսպիրի մանվանից յերկու-յերեք տասնյակ տարի հետո անզվիական թատրոնը ամեարտեց իր փայլուն շրջանը և խափանվեց պուրիտանների պահանջով, վորոնք արգեն պառլամենտում տիրող ույժ եյին կազմում։ Հայտնի յե նաև, վոր պուրիտանները իրենց քաղաքական պահանջները կենսապործել են քաղաքացիական պատերազմների միջոցով, 1648 թվին գլխատելով թագավորին, վոր բուրժուազիայի յերդ վյալ հակառակորդն եր։

Դիչ վերև մենք ակնարկեցինք, թե այլ եր պալատի քաղաքականությունը Ցեղիստարելի թաղուհու ժամանակ, Նա ձկառում եր իրեն յենթարկել թե արիստոկրատներին և թէ բուրժուականացած պառլամենտը։ Նա ձկառում եր բացարձակ իշխանության, փորձելով ոգտագործել առևտրական բուրժուազիայի դրամական կարողությունը, և ոգտագործում եր այն զիշատաիչ կերպով, Միաժամանակ նա հայտարարել եր իրեն անզվիական յեկեղեցու գերագույն պետ, իր

հակառակություններին հարկ յեղած դեպքում բանտ ձգելով ու զիստահելով՝ Բախտի բնը մամբ դահ բարձրանալով հնաց այս ժամանակ, յերբ առևտրական կապիտալը այդքան արագ նվաճումներ եր անում, հարստացնելով յերկիրը, Յնդիարեթի անշան հետ կաղվեց անդիական պատմության այսպես կոչված «վոսկեղարը»։ Յնդիարեթը էր հին և նոր յերկիրովագուների կողմից հռչակված եր մեծագույն հովանություն արգելունակության, ուշադապան հաստատուն բարքերի, հօյսարարված եր «կույս թագուհի», վորպես մարմացումն բարոյականության։

Անգլիայի ծովային պետություն դառնալու, առևտրի ու արդյունաբերության արագ աճման հետևանքով բնականորեն պիտք և զարգանար նաև նրա կուլտուրան, գիտությունն ու արվեստը 16-րդ դարի վերջում և 17-ի առաջին քառորդում հայտնի յեն դառնում նշանակոր գեմքեր գիտության բնագավառում, վորոնցից բավական և հիշել բնադրանսարք Բեկոնին, իբրև ճշգրիտ գիտությունների ներկայացուցչի, վորի անունը կապում են նույնիսկ շնորհիրյան դրամաների հետ («բեկոնյան հերետիկոսություն», այդ մասին հետո)։

Այդ միենույն ժամանակաշրջանում հայտնի դարձան այնպիսի զբանահարդիքներ, ինչպես Լիլի, Մաուր, Գրին, Քիդ—Շեքսպիրի նախորդներն ու ժամանակակիցները և առաջնական անդիական քարդացման լայն հունի մեջ մտավ նաև անգլիական թատրոնը, վորը մեծ ժողովրդականություն եր վայելում յերկրում, զիստավորապես լունդոնում։

Այսպես՝ կապիտալիզմի պատմական առարկան մանելը բնորոշվում է քաղաքական խոշոր անցքերով, դասակարգերի նոր տեղաշարժներով, պալատական հեղաշրջումներով, կամ տիրող իշխանական կլիկի գեմ լարվող դավադրություններով կամ քաղաքացիական կռիվներով ու զիստավումներով։ այլ և յերկրից դուրս կատարվող տնտեսական-առևտրական

նոր շուկաների դրավումով, հանգուղն արկածախնդիր ծով գաղնացրաւթյամբ։ Այս բարդ ու զիսապտույտ իրականաւթյունը հանդես եր ընթել հանդուղն, նախաձեռնող անհատներ, պայքարի մեջ ամրացած, կոփմած դմբքեր, քաղաքական գործիչներ, խոշոր նախատեր առևտրականներ, վորոնց նախները լողում եյին ովկիանոսներում անդիմական դրոշի տակ, ամանայուրիստներ, բուրժուականացող արխատոկրատներ, իրենց կենցաղով շուայլ ու անսանձ, բախտախնդիր ազնվականներ և ազահորն կապիտալ կուտակոր բուրժուաններ։

Վերահաս կապիտալիզմի այլ շրջանը, վոր մի կողմից իր շատ կողմնարդ տակամին կասղված եր ֆեոդալական արագիցիաների հետ, մյուս կողմից գենքի առաջան նայող վերածնության դարաշրջանի, ունահանջ եր զրել զրոյների, բանաստեղծների և դրամատուրգների առջև բազմակողմանի, բազմերանդ ներկայացնել իր, կյանքը թի գրականության մեջ և թի թատրոնական ընմէ վրա, Փոխանցման այլ յառաւն շրջանը պահանջում եր արվեստից վառ, ցնցույ արկածական պատկերներ, խոշոր դեմքերի, հերոսների հետ կապված դրամաներ, արյունային ընդհարումներ և այլն։

Անդիմական դրամատուրգրան, մասնավորապես շնչառվիրյան դրաման ու թատրոնը կոչված եյին բավարարելու եղութային այլ կատեգորիկ պահանջը։ Ժամանակի թատրոնական արվեստը, կրելով վերածնության դարաշրջանի կուլտուրական վերելքի ուժնդ աղղեցությունը, մի կողմից սահմանած եր տանել արխատոկրատ մեկնասների քմահաճ հովանավորությունը, մյուս կողմից պետք և պայքար մղեր ֆանատիկ պուրիտանների պահպանողականություն դիմ։ Սակայն թատրոն հաճախող հասարակությունը միայն ըարձր դասակարգի մարդիկ չեյին, այլ և քաղաքի մանր բուրժուական խավերը, արհեստավորները, մանր առևտրական-

ները, բանվորները, նավաստիներն ու ազգայի պրոֆեսիայի մարդիկ:

Թատրոնի այդ խայտարգնությունը, տարբեր դասակարգերի խավերից յնկած, անկատկած վորոշ սրբագրությունն եր մտցնում թատրոնական ողբենների մեջ: Դրամտառուրդները հաշվի ելին տոնում այդ հանգամանքը: ինչպես, որինակի, թին Զոնսոնը, այլ և ինքը Շեքսպիրը, վորոնց պիեսներում վորոշ ակադրաններ դրված են հատուկովնու հասարակ հանդիսատեսների հաշակին բավարարելու համար: Թատրոնական արվեստի մեջ դոյություն ունեցող յերկու ուղղություններից (ժողովրդական և ոպալատական) շեքսպիրյան թատրոնը գերազառություն եր տվիլ ժողովրդականին, վորը թեղեատ բալադանային շարժական ետապը վազուց եր անցել և հաստատվել քաղաքի արվերձաններում, բայց չեր կորցրել միջնադարյան դրամայի հայանի տարրերը: Վերածնություն դաշը աղաստորեն եր ընմը յիշելու հովանավորությունից, զուրս բերել նրան յեկեղեցական գամիլիթներից և ազատել հանդիսականի մեջ միստիկուրունական տրամադրությունն սանդնելու տխուր պարտականությունից: Բայց միաժամանակ միջնավարյան դրամայի հետաքա զարգացման շրջաններում ձեռք բերված բեմական լուրջ ու թեթև ժանրերի այն և վաղերդագրության ու լուրջ կոմոդիայի տարրերը, վորպես կուլտուրական հին արժենքներ, վորոշ ծառայություն մատուցին Շեքսպիրի ժամանակի դրամատուրգիային:

Շեքսպիրյան շրջանի դրաման պահպանում եր միստերիաների և մօրալիտենների ձևական հեռավոր աղջեցությունը, նրա մեջ անդրակարձումն եր գանում (նույնիսկ Շեքսպիրի դրամաներում), որինակ, չարի անձնավորումը դիվային անհատի մեջ (առաջ ռաստանային, այժմ Յափոյի և յայլն), գաֆան գործողությունների ցուցադրումը բեմի վրա, երկու ինքնուրույն սյուժեների զուգընթաց զարգացումը

մինոււյն վաղբերգության մեջ (ուշինակ, իբր արքայի և Դիտսաերի), գերբնական ուժերի կամ վողիների յերեսումը բնմի վրա (մհուկների և ուրուականի և Մակրերառմ, Համելուի հոր ուրուականը և այլն և այլն):

Ի՞նչ եր ներկայացնում անդվական թատրոնը իր բնամադրական միջոցներով Շեքսպիրի ժամանակ, մի դրամատուրգի, վորի պիմսները այնքան բարդ ու բազմակողմանի ընմադրություն եյին պահանջում, թատրոնը այդ ժամանակ յնդել և չափաղանց պարզ ու անհրատլույր՝ ներքին տեխնիկայի և արտաքին կառուցվածքի տեսակետից Լոնդոնի թատրոնները կառուցվում եյին թեմդայի ճահճուա ափին, շենքը փայտեղեն եր, չորս կողմից խրամատով շրջապատված: 16-րդ դարի վերջում թատրոնների թիվը Լոնդոնում 19-ի յիշ համում: Դիլանանական խմբերի գոյությունը հիշվում և թատրոնների կառուցումից մի դար առաջ՝ նրանք կազմվել են թափառաշրջիկ ձեռնածուներից: Միջնադարյան բնմի նախկին սպասավորների՝ միստերիաներում ընմ դուրս յեկող գերակատար քահանաների փախարեն այժմ հրապարակ եյին յեկել գերասաններ, վորոնց հռվանավորողները զվարճություն ոիրող զարաւականներն եյին: Բարձրասարիման հովանակոր ունենալը, ինչպես առաջինք վերը, դերասանական խմբերի համար անհրաժեշտ պայման եր, քանի վոր կառավարությունը աղատ պրոֆեսիա չեր համարում գերասանությունը. գերասաններին աքսորի յեր յենթարկում, իրըն շրջմալիկների, Յեղիսարեթ թագուհու ժամանակ գրեթե բոլոր պարատական իշխանավորները մի-մի գերասանական խումբ եյին պահում, պաշտօնապես այդ մարդկանց իրենց սպասավորների ցանկը մացնելով: Մինոււյն վիճակի մեջ ե յնդել դերասան Շեքսպիրը. սկզբում նա յեղել և կռմ կեյաթներին սպասավորող խմբում, իսկ 1604 թվից թագավորի պարատական խմբում:

Թատրոնները քաղաքի սահմաններից դուրս գտնվելով, մերձակցություն ունեյին պանդոկներին, հյուրանոցներին և հույնիսկ հասարակաց տներին։ Քաղաքացիք բողոքում եյին, յերբ թատրոնական շենքը փորձում եյին մատեցնել բնակելի տներին, վորովհետու թատրոն հաճախող հասարակությունը վերին աստիճանի անկարգապահ էր, աղմկահար, կավարար։ Ներկայացման որերին թատրոնների շուրջը այնպիսի իրարանցում եր տեղի ունենում և այնքան ժողովուրդ խռնվում մերձակա փողոցներում, վոր զրեթե ամեն շարժում նեղ ու կեղտու փողոցներում դաշտում եր։

Թատրոնները յերեք կարգի եյին—պալատական, մասնավոր և հասարակական։ Մասնավոր թատրոնները, ըստ յերևույթին, ազիլի «Ծնամիր» հասարակություն եյին ընդունում (մանր բուրժուական խավերը, բուրժուական ինտելիգենցիան և արիստոկրատական վորոշ տարրեր), իսկ հասարակականները՝ ստորին խավերին։

Լոնգոնի ամենահայտնի մասնավոր թատրոնը հռչակավոր վորոբերգակ գերասան Բորբեյջի թատրոնն եր, վոր կրում եր «Գլոր» կամ «Գլորում» անունը, հսկայական հաջողություն եյին ունենում նրա ներկայացումները, վորովհետեւ այդ թատրոնը ժամանակի յերկու մեծություններ եյին զարդարում։ Աեկը ինքը տաղանդավոր Բորբեյջն եր, մյուսը հանճարեղ դրամատուրգ Վիլիամ Շեքսպիրը, «Գլոր»ը կոսուցված եր թեմզայի ափին, մի ընդարձակ հրապարակի վրա։ Դա վեցանկյունի բուրգի ձև ունեցող ահապին փայտեղեն մի շենք եր, վորի միայն բեմն եր ծածկված կտուրով, իսկ պարաերը (par-teatre), ուր տեղավորվում եր հասարակ ամբոխը, բացողյա յեր, Գալլերեա ժամանակակից մտքով պոյություն չուներ, Պարտերը զուրկ եր ամեն հարմարությունից, չուներ նստարաններ, Հանդիսականները ամբողջ ժամանակ պետք ե վոտքի վրա մնային, Բեմը միացած եր ոթյակներին, վորոնք հատկացվում եյին պետական բար-

ձրաստոինան մարդկանց, արիստոկրատներին կամ ըուրժուական բարձր խավին: Բնմը պարտերից բաժանված եր յերկաթե ճաղերով: Թատրոնի դարպասի մրա ամբացված եր չերկուլնսի հակա արձանը, զլինին դրած յերկրագնդի կըոր խորհրդանշանը:

Ներկայացման որերին լոնդոնի վողոցներում,—գրում եւ նկարադրողներից մնկը,—մի սարութինակ շարժում եր նկատմում: «Անվանի մարդիկ»—լորդեր, աղնվականներ՝ քառամի կառքերով կամ ձիյերով, իսկ հասարակ զասը ցեխը արորենով,—ամենքը գիմում եյին դեպի թատրոն, ինչն եր պատճառը իրարանցման: Պատճառը Շեքսպիրի վողբերգություններին եյին, վորոնց համար հատուկ պատրաստություն եյին տեսնում թատրոնի տնօրենն ու քերասանական խումբը: Հաճախորդները ժամ առաջ շտապում եյին տեղ բռնելու: Վաղբերգության զլիսավոր դերը ինքը Բորբեյջն եր կատարում, վորի անունը միայն բավական եր խանդ ու վուգերություն ներշնչելու հասարակության: Տեղերի գները շատ եժան եյին, պարտերում մուտքը ընդամենը մի քանի կոսպեկ արժեր: Թանգ եյին միայն բնմի շուրջը բռնված տեղերն ու ոթյակները, ուր աղնվական Շընտիր» հասարակությունն եր նստում: Պարտերի հասարակությունը կանգնած եր, բնմինը մասամբ միայն նստած, վերսինետև նստարանների թիվը սահմանափակ լինելով, ուշացողները ստիպված եյին կանդնած մնալ պատերի մոտ կամ նստել խսիրների վրա և ուղարկ ու վատ յեղանակը ողարտերի բազմությանը չեր անհանդատացնում: անսանելի աղմուկի և իրարանցման մնջ վամանք կադին եյին կոտրում-ուտում, վոմանք խնձոր ու նարինջ, վոմանք ել դարեցուր խմում: Ներկայացումը սկսվում եր մոտ ժամը 3-ին ցերեկը, և հաճախորդներից շատերը, վորոնք վաղ առավոտից եյին յեկած լինում, ճաշն ել իրենց հետ եյին բերում: Տեղի համար հաճախ թյուրիմացություններ եյին ծագում և յերբեմն առւր ու դմբոցի

հասնում: Հասարակությունը անհամբեր եր. աղմկում, ցեխու զանազան իրեր եր շպրտում դեպի ընմի վարագույրը, վոր շուրջ սկսվի: Ներկայացումը: Բնմի «պատովազոր» հասարակությունը նույնութեա իր դրազմունքն ուներ. այստեղ թղթախաղով ելին դրազմում, ծխում, սրախոսում յերենն վարագույրի արանքից պարանքի հանդուզն բազմության հասցեյին խոսքեր շպրտում: Սկսվում եր անասնի աղմուկ. պարտերից դեպի ընմի ելին թոշում փառած խնձորներ, փայտի կտորներ, ցեխակույտ, վորոնք հաճախ պատում ելին ներքնարեմի էտավի վարագույրը: Նույն ձևով պատասխանելու մեջ յնին մասւ ընմի աղնվական ջահնչները,

Բայց յերշ մասնում եր ներկայացման սկիզբը, սպասավորը զուրս եր բերում մի տախտակ «կոնդոն» մակադրությամբ և նախաբեմում ամբացնում վարագույրին: Դրանից հետո միայն հասարակությունը հասկանում եր, ուր պործողությունը կատարվում և կոնդոնում: Բացվում և յերկուսի բաժանվող վարագույրը, և ուրիշ սովորակորներ ըսկը սում են զարդարելք ընմը. պատերից կախում են մի քանի գորգ, գորգերին ամբացնում ու կարտոն, խաչաձև սովորակ յերիզադով. դրանք «պատուհաններ» են: «Զարդարանքը» ցույց և տալիս, վոր գործողությունը տեղի յն ունենում սննյակաւմ: Առաստաղից ցած թողած ու կառը նշանակում եր՝ ժամանակը դիշեր և, Բնմի յետեկ մասում յերեացող բարձրությունը, ծածկված մի այլ կառը, սար և, պատշաճը ե, տախտակամտծ կամ կտուր, նայած թե պիեսը ինչի կարիք ունի: Այդուհանի ընմագրությամբ եր տեղի ունենում նեսնոյի և Զուլյետի հայտնի պատշաճը տեսարանը: Այստեղ եր նաև Մակրեթի ամբոցը: Այդ բարձրության յերկու կողմը դրված ելին ուրիշ կարտոններ. մեկի վրա ծառ և նկարած, վոր նշանակում և անտառ կամ պարտեղ, մյուսի վրա խաչ կամ գերեզմանաքար, վոր նշանակում և յեկեղեցի կամ գերեզմանատուն. նբանց կողքին դրված և մի սե-

դան. յեմեն սեղանի վրա թանաք և դրիչ լինի, ապա ընմը դատավորի առաջան և ներկայացնում, իսկ յեթե շեր և բաժտկներ—ուստի ուղղուի:

Տեմի աղքատությունը, ըստ յերեսույթին, հանդիսաւ տեսին չեղ ընկճում. նաև զինվում եր վառ յերեակայությամբ, և ըսմի վրա շարժվող 5—6 զինվորներին բանակի տեղ ընդունում, և զինվորական մի թմրուկի ձայնը պատեկերացնել եր տալիս Հուլիոս Կասարի, Կորիոլանուսի կամ անգլիական թագավորների ռազմական շարժումները:

Տեմը պատրաստ ե. ահա և զերասանները մեկը մյուս մի յետելից անցնում են ընմով, մտնում վարագույրի յետելով հազնելուու. Դերասանների մեջ վոչ մի կին չկա. բոլոր դերակատարները տղամարդիկ են, կանանց գերերը, նույնա իսկ Շեքսպիրի խղեալական քնքույշ կանացի ախպերի—Դեղդեմոնայի, Ռֆելիայի և Կորդելիայի վերերը կատարում ելին յերիտասարդ զերասանները Հանգես և գալիս զերասաններից մեկը, զլխին որակ դրած և արտասանում դրամայի նախնորդանքը. Աղմկող ու շարժվող բազմությունը վայրինապես լոռում և լարված լողություն դարձած հետեւում ներկայացմանը:

Այսպիս եր տեղի ունենում ներկայացումը Շեքսպիրի ժամանակի:

Չնայած նրա անհրապույր պատկերին, այսպիսի թատրում զարգացել ու բարգավաճել և անզլիական ունալիսաւական դրաման, զարգացել ու ընդմնավորվել և Շեքսպիրի հանճարը. Նման թատրում ծնունդ են առել այնպիսի համաշխարհային վողըներգություններ, ինչպես «Համլետ», «Ռիպելլա», «Մակբեր», «Ալիք արքա», «Հուլիոս կեսար», վորոնք ավելի քան յերեք դար համաշխարհային ընմից չեն իջնում:

Ենթ շեքսպիրյան հսկայական հանճարը ստեղծում և այնպիսի կուլտուրական արժեքներ, վորոնք դուրս գալու աղ-

գային շրջանակներից, դառնում են սեփականություն բուլոր կուլտուրական ժողովուրդների, դառնում ունիվերսալ:

Դառնում են առարկա խորը ու բազմակազմանի ուսումնասիրության՝ անդամ սոցիալիզմ ու կոմունիզմ կառուցող ոլորկատարիատի համար, մի դասակարգ, վորը քննադատութեն յուրացնելով դարերի խորքից մեզ նայող հանճարի գործերը, նրանց բարձր տարրերը ողտազործում և իր սոցիալիստական կուլտուրայի կառուցման համար:



Անգլիական թատրոնը Շեքսպիրի ժամանակ («Կոմայդ» թատրոնի նկարին տեսը, ըստ հայանդացի Դև Վիլսոնի, 1596 թ.)

Teatr vremeni Shekspira, 1596 г.

The theatre in Shakespeare's time, 1596.



2

Շեխապիրը իբրև արտանայթիչ վերածնուրյան դարաշեցանի: Շեխապիրյան առեղծվածի: Ո՞վ և Շեխապիրը: Շեխապիր և «Շախապեր»: Աստեղֆորդցի Շեխապիրի կենսագրուրյանը: Բեկս-նյան նմենափիկոսուրյունը:

Վիլիամ Շեքսպիրը թողել է զրական մեծ ժառանգություն, բովանդակությամբ խորը, ձևով կատարյալ Շեքսպիրյան ժառանգությունը կարելի յե բաժանել յերեք կարդի, Հոգեբանական դրամաներ, կոմիդիաներ և պատմական քրոնիկներ: Առանց քննելու այստեղ նրանց սոցիալական և գեղարվեստական արժեքը, մենք պետք են ընդգծենք առայժմ հետեւյալ հանգամանքը. յեթե իր զրական գործունեյության առաջին շրջանում նա գրել է պատմական քրոնիկներ Անգլիայի ազգային մեծությունը դրվատելու համար և արել ե դա վորպիս միազետական կարգերի ջատադրվ, ապա նույն շրջանում զրված փայլուն կոմիդիաներով ու վողբնրգություններով նա հանճարեղորեն արտահայտել և վերածնության դարաշրջանի բնորոշ կողմերը վորպիս արգասիք հասարակական յերկու հակադիր ուժերի միջև յեղած պայքարի—ֆեոդալական ազնվականության և առևտրական բուրժուազիայի:

Չնայած իր ունեցած սերտ կապերին անգլիական ազ-
նըմականության հետ, Նեքսողիրը, շնորհիվ իր ստեղծագոր-
ծական հանճարի հսկայական դիապազոնի, խորապես ընդ-
դրկել և նաև վերածնության հակաֆեոդալական իդեոլո-
գիայի վորոշ ուսարբերը: Խաչ եր վերածնությունը Անգլիա-
յում Նեքսողիրի ժամանակ, վորպես կուլտուրական շարժում:

Յերբ Անգլիան թևակոխեց փողային տնտեսության
շրջանը և առաջացան սոցիալական ու քաղաքական ասպառ-
քեղում բուրժուական նոր ձևեր, անթիք աշխարհի նկատ-
մամբ հետաքրքրությունն այնտեղ ընդունեց լայն ծավալ—
հետաքրքրություն դեպի հին հունական և հռոմեյական
գրականությունն ու արվեստը, պատմությունն ու փիլի-
սոփայությունը, վորոնք Անգլիա ներմուծվեցին Խտալիայի:
Արջոցով, նոր կուլտուրայի համար հին աշխարհում աղբյուր-
ներ փնտուելու ճիզը անշուշտ պատահական յերկույթ չեր:
Վերածնությունը արդյունք եր որյեկտիվ պայմանների,
տռաջին հերթին առևտրական կապիտալի զարգացման, վո-
րոնք հայտնի չափով համապատասխանում եյին անթիք
աշխարհի կուլտուրական ծաղկման դարաշրջանին, Միջնա-
դարյան վանական-ֆեոդալական կուլտուրան չեր բավարա-
շում բուրժուական նոր պահանջներին:

Այդ պատճառով ել հումանիստական ինտելիգենցիան,
իրեն ջատագով սոցիալական նոր շարժման, առանձին հե-
տաքրքրությամբ զիմեց հին աշխարհի կուլտուրական ժա-
ռանգության ուսումնասիրությանը: Սակայն բարձրացող
բուրժուական դասակարգի նոր կուլտուրան հին աշխարհի
կուլտուրական արժեքների պատճենավորումը չեր, ինչպես
պնդում են բուրժուական պատմաբանները: Հին կոթողների
մեջ նոր եպօխայի գործիչները փնտում եյին այն ձևերն
ու մեթոդները, վորոնք նրանց հարկավոր եյին իրենց ին ք-
նուրույն ստեղծագործությունը դյուքացնելու համար:

Այլ խոսքով անթիք աշխարհի կուլտուրական արժեքները նրանք քննադատորեն ողտագործում ենին իրենց պետքերի համար:

Վորոննք ենին վերածնության դարի կուլտուրայի այն հիմնական տեսնդենցները, վոր Շեքսպիրը այնպիսի գերադանց վարպետությամբ անդրադրել են:

Վերածնության դարում, մանավանդ նրա սկզբնական շրջանում, ֆեոդալական միջնադարի կուլտուրան յենթարկեց ամենատիստ քննադատության, դարձավ առարկա արհամարհանքի ու ծաղրի: Յեզի ինչպես նկարչության մեջ միջնադարյան հիմնադրության նկարիչները տալիս ենին մարմնեղ, կենսախինդ բուրժուաների կամ բուրժուականացած արիստոկրատների դիմանելարներ, այնպես ել դրականության մեջ մուտք և գործընթաց աշխարհիկ կյանքի թարմ հոսանք, մթնոլորտը լցուած կյանքը վայելող խավերի (իհարկե բարձրը խավերի) ուրախ հնչյուններով, արվեստի թեման դառնում և մարդք, սերը, վայելքը, աշխարհային կյանքի հետ կաղված բոլոր յերևոյթները, հակադրվելով այդ ամենը կաշկանդող յնինդեցուն, սխոլաստիկային, վանական-ֆեոդալական կուլտուրային:

Դարի այս յերեսույթները պայծառ արտացոլում են զանդ Շեքսպիրի կոմեդիաներում և դրամաներում, վորոնց մեջ հանդիս բերված հասարակաւթյունը դներադանցապես հին և նոր արիստոկրատներ են և բուրժուաներ:

Տնտեսական նոր հարաբերությունների հիմքով ստեղծվում են անհատապաշտական բարոյական նոր հասկացողություններ, վորոնք հակադրվում են յեկեղեցու միջնադարյան խրեալներին: Անհատը, աղատվելով յեկեղեցու հովանավորությունից, դառնում ե ինքնիշխան. Նրա անձկան բարեկեցությանը բարձր և համարվում ամեն բանից: Դա միանդամայն համազատասխանում եր բուրժուական

ինդիվիգուալիզմի պահանջներին, Զկա ընդհանուրի շահ. իր յեսը, յեսի վայելքը, յեսի զարգացումը դառնում ե ղեկավարող գաղտափար: Զգացմունքների, բնական ձգտութերի ազատությունը անհատի համար վեր և ամեն որինքից: Զորեղ անհատի կուլտը, նրա ձգտումը որինական ե, թեկուղ ընության և արյունային դրամաների, այլ խոսքով՝ զոհերի գնով լինի նրա ձգտման իրագործումը:

Չորեղ անհատականության, սահման չճանաչող ինդիվիգուալիզմի զեղարգեստական պատկերացումը վառ գույներով արգած և Շեքսպիրի գրվածքներում՝ հանձին նրա բազմաթիվ հերոսների, վորոնք իրենց անհատական ձգտումներին համնելու համար արգելք չեն ճանաչում, կանգ չառնելով իրենց շրջապատղներին զոհաբերելու գործի առջև:

Վերածնության բերած նոր կուլտուրան թափանցել և տիրող բարձր դասակարգերի մեջ՝ նոր աղնվականության, բուրժուական վերնախավի և բուրժուական ինտելիգենցիայի տակալիքն բարակ շմբաթի մեջ: Ժամանակի համալսարանները, դպրոցները կրել են այդ շարժման դորեղ կնիքը: Արվեստն ու Փիլիսոփայությունը, աղատվելով միջնադարյան յեկեղեցու բացարձակ գերիշխանությունից, ընդորկեցին հումանիզմը, կասկածի յենթարկեցին յեկեղեցական ճշմարտությունները մարդկային կյանքի «վախճանական» նույտակի վերաբերյալ:

Շեքսպիրի ստեղծագործությունները մարմնացրել են այդ յերևույթները, ցուցադրել նոր կուլտուրայի մթնոլորտով ապրող հասարակական կենցաղը, խոսքն ու գործերը: Նրա այդ գրվածքներում յեկեղեցու գերիշխանության հետքըն անգամ չկա անհատի վրա: Վողրերգություններից յերեսում ե, վոր համալսարաններն ու դպրոցները նոր մարդիկ են պատրաստում, նոր մտքերով: Այդ համալսարանների արդյունքն ե Համլետը իր մտքերով, կասկածներով, յերկամտությամբ, Փիլիսոփայությամբ, իդեալներով:

Անթիք գրականությունը, արվեստը, գիտելիքները, հին լնդուները դարձել եյին գերիշխող վոչ միայն դպրոցական կյանքում և համալսարանում, այլ և ինտելիգենցիայի շրջաններում: Հին Հռոմի անմիջական ժառանգութը՝ Խոալիան այն յերկիրն եր, ուր անթիք աշխարհի տրադիցիաները տակավին զորեղ եյին: Այդ պատճառով վերածնության գարում խոալերնը դարձավ բարձր դասակարգերի խոսակցական լնդուն՝ սալոններում և պալատներում: Հայտնի յե, վոր անզիւսական պալատում Յեղիսարեթի ժամանակ խոալերնը պալատական լնդու յեր, ինքը թագուհին այդ լիզով եր խսուած հանդիսավոր ընդունելությունների ժամանակ:

Անթիք արվեստի և գրականության այդ տիրող դրությունն եր, վոր Շեքսպիրի մի շարք կոմեդիաների ու վոդքարդությունների՝ նյութը վերցված է հումերական և հունական կյանքից:

Վերածնությունը ազատություն բերեց նաև աղնվական դասակարգի և բուրժուազիայի վերնախավի կանանց, աղատելով նրանց տնային աշխատանքից, Առաջ քաշեց կանանց կրթության հարցը, բայց վոչ մասնագիտական, այլ կուլտուրական ժամանցի համար՝ թեթև զրույցի արվեստի և գրականության շուրջը, կիրթ ձեռերի մշակման, քաղաքավարական կանոնների յուրացման և այն: Բայց զիսավոր նաղատակը՝ պահել կանանց, թեկուզ կրթված, իրեւ հաճույքի առարկա՝ մնում եր իր ամբողջ ույժի մեջ:

Շեքսպիրի կոմեդիաներում ըոլոր աղնվական կանայք ոժտված են վերածնության շրջանի վերը մատնանշված հատկություններով: Նրանք բարեկիրթ են, դիտեն վարել հաճելի ոլորւյց, վայելում են վորոշ ազատություն, սակայն հասարակական-քաղաքական կյանքում դեր չեն խաղում,

Վերածնության շրջանի անհատապաշտների, ինտելիգենտ գործիչների համար շատ բնորոշ եր արհամարհական

գերաբերմունքը դեպի ժողովրդական մասսան, դեպի հասարակ ժողովուրդը:

Ենքսպիրի վողջ փիլիսոփայությունը հիմնված է անհատապաշտության վրա, վորի համար գիտակից մասսա զայություն չունի, կա գորշ ամրոխ, մութ, անհասկանալի, ինքնազններով վատանգավոր:

Վերածնությունը ժողովրդական դանզվածների մեջ չթափանցեց, Մեշշանների, արհեստավորների և քաղաքի պրոլետարների համար հինը մնաց անփոփոխ: Տգիտությունը ու խավարը մասսաների մեջ թագավորում եր անխախտ: Ֆեռդալիզմից դեպի բուրժուական հասարակական կարգերի փոխանցումը մասսաների համար կատարվեց ռեֆորմացիայի միջոցով:

Ենքսպիրը այդ մասսաների մասին յերբեք չի խոսում, կամ խոսում է անտարելք կամ արհամարհանքով: Դա ըրդի խում եր վոչ միայն վերածնության դարաշրջանի վոգույ, ոյսինքն կատիտալիստական արշալույսը ավեառող դարի փիլիսոփայությունից, այլ և դրամատուրգի տիրող դասակարգին սպասավորելու գիտակցությունից:

Վերածնության դարաշրջանը, այդ «մնծավույն» պրայրեսից հեղաշրջումը (Ենդելս) անդրադարձնելու համար եպուխան կարիք ունենք դեղարվիստական հանճարեղ տիտանների, տիտան «մտքի», զգացմունքի և բնավորության, տիտանքաղմակողմանի և գիտնական» (Ենգելս):

Գեղարվեստական տիտանը յեղավ Ենքսպիրը:

Ենքսպիրի զրած պիեսների ընդհանուր թիվը 37 և, դրանց թվում նաև այն յերկու պատմական քրոնիկները՝ վորոնք բաղկացած են մեկը՝ յերկու մասից («Հենրիկ 4-րդ») և մյուսը՝ յերեք մասից («Հենրիկ 6-րդ»): Մեծ աշխատանք է դրծ դրված վերականգնելու համար շնչառիրյան դրամաների մոտավոր ցուցակն ու մասնավորապես նրանց գըրվելու ժամանակը, ինչպես և արտադրանքի հաջորդականու-

թյունը, Շեքսպիրի ժամանակ դրամաները չեյին հրատարակվում, վորպեսզի մրցակից թատրոնները չօգտագործեն կամ ի չարը գործ չդնեն ուրիշի աշխատանքը, Հեղինակի իրավունքի պաշտպանության հարց գոյություն չուներ։ Այդ և պատճառը, վոր Շեքսպիրի գրվածքների ժողովածուն առաջին անդամ լույս ե տեսել Լոնդոնում հեղինակի մահվանից 7—8 տարի հետո—1623 թվին։ Բացի այդ մի այլ դըմվարություն կա վորոշելու, թե վորոնք են այն պիեսները, վոր ամբողջովին մշակված են Շեքսպիրի ձեռքով։ Գոյություն ուներ այն ժամանակ կոլեկտիվ ստեղծագործություն, վորը տռաջ եր գալիս արագ զարգացող թատրոնի պահանջից՝ կարճ միջոցում ներկայացնելու պատվիրված պիեսը։ յերկու կամ ավելի հեղինակների հանձնարարվում եր պարագաստել սյուժեն և անմիջապես անցնել առանձին ակտերի շարադրության։

Շեքսպիրի պիեսներից մի քանիսի մեջ հայտնարերված և այլ հեղինակների աշխատակցությունը, ինչպես, որին նաև, «Տիտոս Անդրոնիկոս», «Հենրիկ 4-րդ», «Հենրիկ 6-րդ», «Պերիկլես», «Տիմոն Արենացին», «Հենրիկ 8-րդ»։ Հայտնական և համարվում Շեքսպիրի ժամանակակից մի քանի դրամատուրգների մասնակցությունը այդ գործերում, ինչպես Մարլոյի, Ֆլետչերի, Մեսսինջերի և այլն։ Յենթագրվում ենան, վոր յեղել են պիեսներ, վորոնք գրված են կոլեկտիվ կերպով Շեքսպիրի մասնակցությամբ, սակայն չեն մտել նրա գործերի ցանկը։

Շեքսպիրի դրամաների ժամանակագրական ցուցակը, ըստ Չեմբերսի (Chambers, W. Shakespeare, Oxford, 1930) հետևյալ պատկերն ունի։ Ժամանակագրությունը ապրութերկում ե 1—2 տարիների մեջ, 1) «Հենրիկ 6-րդ»—բաղկացած յերեք մասից—1590—92 թ., 2) «Ռիչարդ յերրարդ»—1592—1593 թ., 3) «Ախալների կոմեդիա»—1592—1593 թ., 4) «Տիտոս Անդրոնիկոս»—1593—1594 թ., 5) «Անտանձի սան-

ձահարումը»—1593—1594 թ., 6) «Յերկու վերանացիք»—1594—1595 թ., 7) «Սիրո անպտուղ նիզերը»—1594—1595 թ., 8) «Շուման և Զուլինեա»—առաջին խմբագրությունը 1594—1595 թ., 9) «Միջարդ յերկրացդ»—1595—1596 թ., 10) «Անառաջին գիշերվա յերազը»—1595—1596 թ., 11) «Զօն բազմվորը»—1596—1597 թ., 12) «Վենիսիկի վանառականը»—1596 1597 թ., 13) «Հենրիկ 4-րդ»—բազկացած յերկու մասից—1597—1598 թ., 14) «Զուր տեղը մեծ աղմուկ»—1598—1599 թ., 15) «Հենրիկ 5-րդ»—1598—1599 թ., 16) «Հուլիոս Կեսար»—1599—1600 թ., 17) «Ինչպես կուզեք»—1599—1600 թ., 18) «Տասներկորդ գիշերը»—1599—1600 թ., 19) «Համիլտոն»—1600—1601 թ., 20) «Վինձորյան կանայք»—1600—1601 թ., 21) «Տրոյի և Կրսսխմ»—1601—1602 թ., 22) «Գործի վերջն և գովիճին»—1602—1603 թ., 23) «Զափի տեղ չափ»—1604—1605 թ., 24) «Որելլո»—1604—1605 թ., 25) «Լիր արքա»—1605—1606 թ., 26) «Մակրեր»—1605—1606 թ., 27) «Անտոնիուս և Կիսապարտ»—1606—1607 թ., 28) «Կորիոլանուս»—1607—1608 թ., 29) «Տիմոն Արենացին»—1607—1608 թ., 30) «Պերիկլես»—1608—1609 թ., 31) «Սիմբելին»—1609—1610 թ., 32) «Զմեռային ներիար»—1610—1611 թ., 33) «Փորորիկ»—1611—1612 թ., 34) «Հենրիկ 8-րդ»—1612—1613 թ.:

Բացի դրամատիկ դրվածքներից Շեքսպիրը գրել և յերկու պոեմ՝ «Վենիեր» և Ադոնիս» և «Լուկրեցիա», առա սոնետների ժողովածու:

Շեքսպիրյան դրամաների հեղինակության հարցը, ինչպես ասացինք վերը, դարձել է առեղծված,

Դրական հանճարեղ արտադրությունների շուրջը ստեղծված գիտական ուսումնասիրությունը վճռական պատասխան չունի մինչև այժմ ոյն հարցին, թե ով է յեղել դրանց հա-

Mr. WILLIAM
SHAKESPEARES
COMEDIES,
HISTORIES, &
TRAGEDIES.

Published according to the True Originall Copies.



I O N D O N
Printed by Isaac Iaggard, and Ed. Blount. 1623

Անգլիական գործերի առաջին հրատարակության in folio-ի (1623 թ.)
տիտղոսաքերը

Տիտղոսաքերը in folio 1623 թ.



նաշված և անմիջելի հեղինակը։ Դրեթե մի դար գոյություն ունեցող շեքսպիրյան գիտությունը հաստատալեն չգիտե, թե ով է Շեքսպիրը։

Զարմանալի հանելուկի ի՞նչպես և յեղել, վոր կուլտուրապես զարգացած Անգլիայում, ուր գիտական ամեն մի նվաճում, արվեստի և գրականության ամեն յերեսույթ շեքսպիրյան զարացրջանում արձանագրվել և իր բնորոշ կողմերով, և հանկարծ կորչում և հետքը մի մարդու, վոր այդպիսի հսկայական զրական գործ և արտադրել, վորի նշանակությունը մեծ և յեղել և ե վոչ միայն իր յերկրի համար, այլ ամբողջ կուլտուրական աշխարհի։

Յեթե գիտությունը ոժվարանում և պարզել, թե ով է Հոմերոսը, յերկու անկրկնելի պոեմների հեղինակը, վորոնք ստեղծվել են մոտ յերեք հազար տարի առաջ, ու զեռ հասկանալի յեւ Բայց թե ով և յեղել Շեքսպիրը, վոր գոյություն և ունեցել ընդամենը յերեք հարյուր տարի առաջ, ինչ միջավայրում և հասունացել և հասարակական ու քաղաքական վիրապիսի ազդակների տպավորություններ կրել իր մեծագույն վողքերգությունները դրելիս, — այսորինակ մի խոշոր փաստի գաղտնիք մնալը կատարյալ հանելուկ և Այդ հանգամանքը շատերին ստիպել և պատահական չհամարել այդ փաստը։ Կան մարդիկը, մորոնց կարծիքով անկանած հատուկ ձեռնարկի, գիտավորյալ կերպով ձեռք տունված միջոցների արգասիք և յեղել զա։ Թե ով և Շեքսպիրը, «Հուլիոս Կիսարոի», «Համլետ»ի, «Կարիսմալուսի», «Մակբերոի հեղինակը», — ըստ յերեսույթին, ու անոք և մնար ծածկված մթության քողով։ Ավելի հեռուն ել են դնում նման մտածողները։ Նրանք գտնում են, վոր գոյություն և ունեցել հատում վճիռ ինչ-վոր քաղաքական խմբակցության կողմից։ Ինչ-վոր մարդկանց (բարձր խավերի) գրուպպայական շահերը վորպես թե պահանջել են կամ ստիպել են

գաղտնաիք դարձնել Շեքսպիրի անունը, վորի ծագումը իշխանական և և այլն:

Անգլիական գրականության այդ շրջանի պատմության այս բացն ե, հատկապես շեքսպիրյան ստեղծագործության նկատմամբ, վորը և առիթ և տվել և դեռ պիտի առ ապագայում բազմաթիվ յենթադրությունների ու նորանոր տեսությունների, Այսինքն՝ Շեքսպիրի մեծությունը բնորոշող ճշգրիտ, անվիճելի դոկումենտների և նրա ձեռագիրների բացակայության պատճառով:

Այդ բացը աղբյուր և նաև բազմաթիվ հակասությունների, Յեվլիբրյուսի հետչաւ Շեքսպիրյան դարաշրջանի ավելի քան յերկու հարյուր անգլիական գրողի կենսագրությունները կան, իսկ Շեքսպիրինը վոչ: Շեքսպիրի առաջին կենսագրականը գրված է նրա մահից 70—80 տարի հետո կենսագրականի աղբյուրը անկասկած յերեակայական շատ տարրեր ունի իր մեջ, չե հիմնված փաստական տվյալների վրա: Ճիշտ ե, ժամանակակիցները անցյալում հաճախ անընդունակ են յեղել գնահատելու տաղանդին, հանճարին, մանավանդ կուլտուրայի և դրականության պակաս դարպացման դարերում: Բայց այդ չե կարելի ասել Շեքսպիրի մասին: Վորպես կոմեդիաների, պատմությունների և վերջապես վորպես ցնցող վողբերգությունների հեղինակ նա հայտնի յե յեղել իր կենդանության ժամանակ: Նրա հարուստ, պատկերավոր լեզուն, սրամիտ դարձվածքները համարվել են որինակելի: Նրա դրվագածքների մի մասը ունեցել է մի քանի հրատարակություն հեղինակի կենդանի ժամանակ: Հայտնի յե նույնիսկ, վոր յերբ բժմադրվել է նրա «Հենրիկ 4-րդը», Ֆալստաֆի տիպը պիեսում այնքան մեծ զվարճություն է պատճառել Յեղիսաբեթ թագուհուն, վոր հեղինակը հատուկ պատվեր է ստացել նրանից դրելու մի նոր կոմեդիա և որամիտ, վառ ֆալստաֆին ցույց տալ կանանց շրջանում: Յեվլ Շեքսպիրը կատարում է Յեղիսաբեթի

պատվերը, զբում է «Վինձույան կանալ» կոմեդիան, Յեթե այսքան հայտնի և կոնկրետ և մի հեղինակ իր գործերով ու շփումներով, սիրված և արտադրանքով բեղմնավոր, ապա ինչու նրա կենսագրականը շանտօք և իր ժամանակին գրված լիներ և զրվածքների ձեռագիր որինակները պահպանված:

Տարոբինակ չե՛ այն արտառոց ժամանակ, վոր յերեսուն յաթը պիեսի հեղինակից չե՛ մասցել վոչ մի փաստաթուղթը հեղինակի ձեռքով զրած: Զկա Շեքսպիրի վոչ մի ձեռագիրը, չե՛ մասցել վոչ մի նամակ, վոչ մի թղթի կտոր, փառված կարելի լիներ գտնել շեքսպիրյան գաղտնիքի բանալին: Այդ տորիթով ճիշտ և նկատում Շեքսպիրի անձնավորությամբ զրադգող հեղինակներից մեկը, թե՛ Շեքսպիրը կարծես ապրել և զրամեքենայի գարում և կարիք չե՛ ունեցել սեփական ձեռքով զրելու իր հեղինակությունները:

Ավելի տարօրինակ չե՛ և բախտի հեղնանք, որ բրիտանական թանգարանում վորոնս սրբություն պահվում են «Վիլիամ Շեքսպիրի» կապալառուական կամ առուծախսի ոլայմանադրերը և մանավանդ նրա հայտնի կարկը «Վիլիամ Շեքսպիր» ստորագրություններով, իսկ մեծ զրողի ստեղծագործության փորեւ ձեռագիր-գրվածքը, կամ թերլուկ նրա վորոնս մեկ եջը կատարելապես բացակայում եւ:

Նույնօան տարակուսելի յե՛, վոր մահվանից առաջ մանրակը կտակ կազմողը, քանի վոր «Շեքսպիր» հեղինակը և կտակի տերը միևնույն ստորեղֆորդցին և համարվում, կարենոր չե՛ գտել հիշատակելու նույն կտակում իր զրող լինելու հանգամանքը, ակնարկ անդամ չե՛ անում իր զրական ժառանգության մասին: Այս զրքի հետեւյալ եջերում, ուր զետեղված կլինի այդ նշանավոր կտակը, մենք կտեսնենք, թե վորքան կասկածներ ընդունակ և նա ծնելու ընթերցողի մեջ, վորքան խորթ են հնչում նրա բառերը մեծ հեղինակի համար:

Տարորինակի և նաև այն, վոր բազմաթիվ դրամաներ գրած հեղինակի մահվան փաստը, — այն պրամաների, վորոնք նույն տարիներում անընդհատ ներկայացվուած եյին Լոնգոնի բեմերի վրա, — չե արժանացել արձանադրվելու Մթթւ կյանքից ընդմիշտ հեռանալիս չե հիշատակվել, գոնե յերկառդ մահազդով, հայտնի գրողի հասարակական նշանակությունը, քանի վոր ժամանակակիցների համար դա անծոնոթ մարդ չեր, քանի վոր նրա հռչակավոր «Դանեմատինց Համլետի» վօղբերգական պատմուրյումը՝ յերեք տարիվա ընթացքում յերեք տպագրություն և ունեցել — 1603-ին, 1604-ին և 1605-ին Լոնգոնում, նույն և մահվանից մի քանի տարի առաջ նոր տպադրությամբ, Այդ խնգրով զրադովդ մարդիկ կարծում են, թէ ինչ-ուոր մի ըլուրջ հանգամանք խանդարել և հանճարեղ հեղինակի դրական անվան հիշատակությանը, կարծես զիտակցորեն անհնատացված, վոչնչացված են նրա ձևադիր դրամաներն ու նամակները, կամ պահպած յոթ կողպեքի տակ...

Բրոկհառութ-Եֆրոնի հինգ հատորյան շեքսալիբրյան հրատարակության խմբագիր Ս. Վենդերովը, անզրդվելի պաշտպանը արագիցիայով հաստատված ստրենգֆորդցի Շեքսպիրի, իր հանգամանորեն գրած ուրվագծի մեջ Շեքսպիրի մասին մի տեղ այնուամենայնիվ տարակուսանք հարուցող հարց և տալիս. «Բայց ինչպես ներդաշնակել, — ասում ենա, — համաշխարհային թախիծն ու փշրված պատրանքները այն փաստի հետ, վոր «Համլետ» ստեղծագործմանը զուղընթաց Շեքսպիրը իրեն հատուկ շրջահայեցողությամբ և մանրակրկիտությամբ զբաղված և յեղել հողային նոր սեփականություն ձեռք բերելով: Ի՞նչպես, վերջապես, միավորնել մի դաղափարի մեջ «Արելլուար», «Չափի դիմաց շափեր», «Մակենքրեար», «Լիր արքա»ի հոյակապ հուսալքումը մի այնպիսի մանր և անմաքուր զբաղմունքի հետ, վորպիսին և

նույն տարիներում քաղաքային հարկերը կապալով դերց ներու փաստը (հինգներորդ հատոր, եջ 464),

Այս ակամա հարցին հեղինակը բավարար պատասխան չե կարողանում տալի Ընդհակառակը, ավելի յե խորացնում տրադիցիոն Շեքսպիրի հակառակորդների կասկածը, Նա փորձում ե ընդհանուր խոսքերով աղատվել ընթերցողի հետազա հարցասիրությունից, ասելով, վոր չպետք ե Շեքսպիր-մարդուն, Շեքսպիր-կապալառուին կամ վաշխառուին շփոթել Շեքսպիր-զեղարվեստագետի հետ։ Ուրեմն անբնական չե, յեթե պրոֆեսիոնալ վաշխառուի սրտում գոյություն ունենա համեմայան վիշտն ու թախիծը, վորով համակված ե յեղել հեղինակը բանդ դարձած աշխարհի հանգեպ։

Սովորություն ե գարձել Շեքսպիրի կենսագիրների համար կրկնել այն, ինչ հարյուր հիսուն տարի առաջ գրել և Զորջ Ստիվենս (George Steevens), Շեքսպիրի առաջին կենսագիրներից մեկը։

«Յեթե վորեն բան հայտնի յե Շեքսպիրի մասին, մի վորոշ աստիճան ստույդ,—գրում ե Ստիվենսը,—դա այն ե, վոր նա ծնվել և Ստրեդֆորդում Ավանի ափին, այնտեղ ամօւնացել և ունեցել յերեխաներ, գնացել կանգոն, ուր սկզբում դերասանություն ե արել, գրել պոեմներ և գրամաներ. ապա վերադարձել Ստրեդֆորդ, թողել և կտակ, մեռել և թաղվել։»

Վերջին յերկու դարերի ընթացքում կատարված գիտական աշխատանքը՝ պարզելու համար Շեքսպիրի կենսագրական մանրամասնությունները, ստեղծել ե մեծ գրականություն։ Այդ մանրամասնությունները հետո յեն գալընվել, հետազայտմ միայն ճոխացվել կենսագրականը Ստիվենսի 5—6 տողանի գրության հիման վրա, կենսագրության բաց կողմերը շատ հաճախ լրացնելով կենսագիրների յերևակայության ուժով, առանց ապացուցելու դերասան Շեքսպիրի կյանքի դեպքերն ու ստեղծագործական փաստե-

բէ ներքին կապը։ Յերևակայական փաստերի հետ սակայն ստրեգֆորդը կենսազրականը «հարստացրել» են նաև մի շարք տիսուր, մեր կարծիքով՝ Շեքսպիրի հետ կապ չունեցող փաստերով, վորոնք նսեմացնում են գրական շեղերներէ հեղինակի իմաստուն պատկերը։ Հրապարակ հանված նման փաստաթղթերով փորձում են ապացուցել, մոր Ստրեգֆորդի Շեքսպիրը լավագույն դեպքում յերկրորդական գերասան և յեղել, վորը վորոշ զումար դիզելուց հետո դարձել և կապարառու և վաշխառու։ և այդ մասին գրում են այնքան թեթև սրտով, կարծես դա մի բնական յերեւույթ լինի...

Ցեթե Շեքսպիրը չի ունեցել հատուկ կենսազիրներ իր կենդանի ժամանակ, կամ մահվանից հետո անմիջապես, չի թողել վոչ մի ձեռագիր և վերջապես չի արժանացել մի հասարակ հոգվածի՝ մեծ դրամատուրգի մահը ազդարարող, ապա դա չի նշանակում, վոր ժամանակակիցները նրա մասին վոչինչ չեն ասել Բայց այդ բոլոր տեղեկությունները կը կտուր են կամ ակնարկներ իրար հակասող։

Շեքսպիրի ժամանակակիցներից մեկը (նաև հակառակորդներից մեկը)՝ Ռոբերտ Թրինը, անգլիական տաղանդավոր գրամատուրդ և արվեստների մագիստրոս, հանդես է գալիս Շաքսպիրի դիմ կծու ակնարկներով։ Նա մեղադրում է նորանոր միայն յերեացող բանաստեղծ և բնական առաջին դրվածքը բնմաղբող Շեքսպիրին, վոր սա իր դրամայի թե սյուժեն և թե մանրամասները քաղել և ուրիշների գործերից և ներկայացրել իրան իր սեփականը։ Այդ այն ժամանակին եր, յերբ Թրինի աստղը մարել եր, նա մեռնում էր աղքատության մեջ, իսկ Շեքսպիրը իր «Հենրիկ Ե-րդ»ի յերարդ մասը բնմաղբոլ եր մեծ աղողությամբ, Ըստ յերեսույթին, հանգիստատեսները Շեքսպիրի մեջ արդեն նկատել եյին ապագա մեծ ըրամատուրդին։ Թրինը իր հարձակման մեջ յերիտասարդ հեղինակին հեղինանքով անվանում է շեք-

սցեն (shake-scene), այսինքն «ընմը թափահարող», ակնարկելով նրա աղջանունը — շեքս-պիք (shake-spear), զորնշանակում և «նիդակ թափահարող»։

«Զգիտես վորաեղից լույս ընկած ագռավը պճնաղարդվել և մեր փետուրներով, — զրում և Գրինը իր ընկերակից յերեք զբամատուրդներին, — վաղրի սրտով մտած դերասանական ծածկոցի տակ՝ նա յերևակայում և, վոր կարող և իրենից արտահյուսն սպիտակ վոտանավոր, վոչ պակաս, քան դուք, մինչդեռ դա ամեն տեսակ հանձնարարություն կատարող ման և (Johannes fac totum), բայց յերևակայում և, թե ինքը ամբողջ յերկրի միակ բեմ թափահարողն եւ,

Անկասկած Շեքսպիրի առաջին դրաման ինքնուրույն շատ քիչ բան եր պարունակում իր մեջ, վորի նյութը վերցված եր պատմական քրոնիկներից, սակայն Գրինի թունավոր հարձակումը Շեքսպիրի նկատմամբ անարդարացի յեր։ Շեքսպիրը 1592-ին դեռ ևս վոչ մի առիթ չուներ իրեն բեմ ցնցող համարելու։

Ցեզ Գրինի զքքույկի հրատարակիչ Չեթլը, հենց նույն Գրինի ընկերների ճնշման տակ, հետագայում ցավ և հայտնում, վոր առանց ճանաչելու հարձակման և յենթարկել հեղինակին, ակամա վիրավորանք պատճառելով նրան։

Չեթլի, (իբրև յերիտասարդ դրամատուրգի ժամանակակիցի) հետեյալ հայտարարությունը անկասկած խոշոր նշանակություն ունեցող փաստ և Շեքսպիրի վերաբերյալ։ Նա գրում է. «Յես հնարավորություն ունեցա համոզվելու, վոր նա հավասար չափով աչքի յե ընկնում իր թե համեստությամբ և թե դերասանական ձիրքով։ Բացի այդ շատ հարգելի մարդիկ դովեստով են խոսում նրա ազնիվ բնավորության և գրվածքների զեղեցիկ ճկունության մասին։ Սակայն պետք է ընդգծենք այստեղ, վոր թե Գրինը և թե Չեթլը իրենց ակնարկների մեջ Շեքսպիր անունը չեն դարձածում։ Ակնարկները անանուն են, բայց վորոշ։

Սրանք Շեքսպիրի դրական գործունեյության արշաւույսի յերկու վկաներն են, վորոնց տված տեղեկությունները անկասկած խոշոր նշանակություն ունեն, անկախ այն հանգամանքից, վոր նրանցից մեկը բացասական և Յերկումն ել վերաբերում են դերասան և դրամատուրգ՝ Շեքսպիրին, ուրեմն ստրեղֆորդյուն:

Հետազայում, 1598-ին, այսինքն վեց տարի հետո, մի այլ դրական-գիտական հեղինակ—Թեմըրիջի համալսարանի գիտական մագիստրոս Ֆրենսիս Միրեսը բարձր գովասանք է շռայլել Շեքսպիրի հասցեյին, իրեն դրամատուրգի: Իր կազմած աֆորիզմների գրքում „Palladis Tamia“ («Խմաստափրարյան գտնձարան») ի միջի այլոց զետեղել է հետեւյալ ընորոշումը.

«Ինչպես վոր Յնկֆորբումի հոգին շարունակում էր ապրել, ըստ հին հույների, Պյութագորոսի մարմինի մեջ, այնպես ել Ովկողիոսի քաղցր և սրամիտ հոգին ապրում և մողի քաղցրություն ունեցող Շեքսպիրի մեջ: Վորպես ապացույց՝ նրա «Վեներա և Ադրնիուսը, նրա Շևալիենցիան, նրա շաքարանամ սոնեաները (անտիպ, բայց իր բարեկառներին հայտնի): Ինչպես Պլառուսոն ու Սենեկան համարվում էն կոմեդիայի և արագեղիայի լավագույն ներկայացուցիչները լատինական դրականության մեջ, այնպես ել Շեքսպիրը լավագույնն է անգլիական գրողների մեջ, բնամական գրականության այդ յերկու տեսակների ասպարեզում եր կոմեդիայի ասպարեզում առաջույց կարող են համարվել «Յերկու Վերանացյի», «Սխալների կոմեդիան», «Սիրո ամոզուս նիգերը», «Միրո վարձատրված նիգերը», «Ամառային գիշերվա յերազը», և «Վենետիկի վաճառականը», իսկ վողբերդության ասպարեզում՝ «Միջարդ 2-րդը, «Միջարդ 3-րդը, «Հենրիկ 4-րդը, «Զօն բազավորը, «Տիտոս Անդրանիկոսը, և «Ռումին և Զուլիսացը: Ինչպես Եպիփու Ստոլն և ասել, վոր յեթե մուսաները կամենային խոսել լատիներեն, անպատ-

ևս Պլատոնասի լեզվով կիսունիշն, այնպես ոչ յէս ովհան տանու, վոր մռամաները անպահերեն խոսելու դեղքում, անորոշած կյուրացնեցին Շեքսվիթի նրբողնն հղիման լինուած:

Ֆրենոսիս Միրեսի այս գրությունը սակայն մոմանք կատականի տակ են առնեամ, յենթադրելով, վոր դա որհնեատական հատկան և Միրեսի զրցում և վոր զբախոսության հեղինակը ինքը Միրեսը չեր կարող լինելը Այս անոտիեան վոր յեն կանգնած Շեքսվիթյութլանդը թեուիսից կողմանից վուանք: Փաստական ավյաննը ինչորկի չունեն:

Ենթադրում են, թե Միրեսի դրաւմ ոյտ հատվածի ոհետեղման պատճառները քաղաքականն են: Այդ մասին օրիչ հնում:

Բայց նաև՝ Միրեսի կրօնական-փիլիսոփայուկան աֆորիզմների գրքում՝ միայն Շեքսվիթը չե հիշատակվուն, այլ մի շարք անպահական զրովների Ուրեմն սրբի հեղինակը նորատակ և ունեցել խօսելու ժամանակակից անգլիական զրուների ժամին, վարոնց թվուամ նուն Շեքսվիթի Բացի ոյտ՝ դիրքը լույս և ընծայել ինքը հեղինակը: Յնըկը ուր պատճառաբանությունն այն է, վոր հիշատակված ովինոներից մի քանիսը դեռ լույս չեցին տեսել մինչև այդ թվականը: Այդ պատճառաբանությունը նույնպես անհիմն է Պիեռները խաղացին են, ուրեմն հայտնի յեն յեղել: Յերբորդ պատճառաբանությունը՝ զուտ քաղաքական և և նու չե ժխտում գրության Միրեսին պատկանելը: Իբրև թե կոմս Շսսեցսի զավադրության նախորյակին ընդգեմ Յեղիսարեթ Թաղուանու Շեքսվիթյութլանդը, վորպես նույն դուվարության մասնակցող, հանդիս և յեկել իր Շնիչարի Զ-րդը ազիտացիոն դրամայով, ուղղված պալատի և թուգունու դեմ: Յեզ իբր պարտության կրելուց հետո, կամենալով իսկական հեղինակի (Շյութլանդի) հաջը կորցնել, ծսսեցսի կուտակ-

ցությանը համակրող հումանիստ Միքել դիտավորյալ զետեղել և այդ կտորը իր գրքում դերասան Շեքսպիրի անվան տակ, վորպեսզի դրանով կարողանա շփոթեցնել թագուհու վոստիկաններին և նրանց ուշադրությունը սրել ուրիշ կողմ...

Ցնթե այս յենթադրությունը ճիշտ և, այն ժամանակ ակամա մի այլ հարց և առաջանում. ապա ինչպես համաձայնեցնել այն փաստը, վոր հիշատակված պիեսներից մեկը «Հենրիկ 4-րդ»ը իր հոչակավոր Թալստավով, ներկայացվել և Յեղիսաբեթ թագուհու ներկայությամբ, վորը անձամբ պատվեր և ավել հեղինակին մի նոր կոմնդիս որենքու (տես վերևը այդ մասին): Կարելի՞ յեր այս պայմաններում խարել թագուհուն և նրա վոստիկաններին, կեղծ հասցե առաջարկելով նրանց: Պետք և յենթադրել, վոր 17-րդ դարում ել պալատական գաղտնի վոստիկաննությունը գիտեր գտնել իր թշնամիներին, ինչպես և տեղի ունեցավ դա Եսասքսի դադունի և բաց կողմանակիցների նկատմամբ, վորոնց թվում նաև Մյութլանդի:

Շեքսպիրին ուսումնասիրողները շատ ջանք են դրել ուսումնագործելու ամեն մի աննշան տեղեկություն, նույնիսկ անեկդոտի ընույթ ունեցող, պարզելու համար զբամատուրապի մասնավոր կյանքը, նրա անհատական ապրումների կապը ստեղծագործության հետ: Ինչպես, որինակ, իրավաբան Ջոն Մեննինեմի հիշատակարանում (գտնված 1830 թվին), վոր բովանդակում և գեղաքեր 1601-ից մինչև 1603-ի ապրիլը, պատմմած և այն մասին, թե թատրոն հաճախող տիկիններից մեկը սիրային ժամադրություն և նշանակում դերասան Բորբեյջին: Շեքսպիրը լսելով այդ, գերասանից առաջ ինքն և գնում ժամադրավայրը, ընդունում տիկնոջը, ապա արձակելով նրան, հայտնում ուշացած Բորբեյջին, վոր «Հաղթական Վիլհելմը Ռիչարդ յերրորդից առաջ և յեկել»: Այս և սրա նման չնչին փաստերը, իրարկե, չեն կարող

վորեն արժեք ունենալ շեքսպիրյան պըրորլեմի լուծման տեսահետից:

Հիշուտակիլած այլ կարգի փաստեցի մեջ կան այնպիսիք, վորոնք խոսում են ստրեդֆորդցի Շեքսպիրի դեմ: Մի քանի քիչ համոզիչ հիշատակություններ կան, վորոնք փորձում են հաստատել, վոր Շեքսպիրը ուսանել և մեմբրիջի համարականում, ուրեմն Շեքսպիրը Ստրեդֆորդից չե, այլ մէ ուրիշը—համարականավարտ մեկը: Հովի գրած ովկերապարձ Պարնասից կոմմոդիայում, վոր խաղացվել և նույն համարականում 1601 թվին,—գործող անձերից մեկը—ծաղրածուն—հեռույալ հայտարարությունն և անում բեմից, արաւակայտելով հեղինակի միտքը: «Համարականին պատկանագներից քչերն են լավ վատանավորներ գրում: Նրանցից սաստիկ բուրում և կամ գրող Ովկիդիոսից կամ Մետամորֆոպից, շատ են խոսում Պրոդերպինի և Յուպիտերի մասին: Բայց այստեղ ունենք մեր կոլլեգա Շեքսպիրին, վոր ամոթահար և արել բոլորին, նույն և թեն Զօնսոնին, Զար յերիտասարդ և այդ թեն Զօնսոնը: Նա ներկայացնում և Հուրացիուսին, վոր պահանճերին համեր և տալիս: բայց մեր կոլլեգա Շեքսպիրը հրամցրել և նրան լուծողական և զգաստացրել իր աղղեցությամբ: Մի հարց և ծագում անմիջապես: կարելի՞ յն ծաղրածուի խոսքերը փաստ համարել:

Այստեղ յերկու ակնարկ կա, վորին կարենոր նշանակություն են տալիս, առանց բավարար հիմքի, Ռյութլանդի կողմանակիցները: Նախ՝ Շեքսպիրը իրեն Քեմբրիջի համարւարանի շոշանավարտ («մեր կոլլեգա Շեքսպիրը»): Ներկայացրել կոմմոդիայի հեղինակ Հովն ել նույն համարականի շրջանավարտ և Յերկրորդ՝ իրեն գրող, հեղինակ սոնետների, պահնեների և դրամաների—բոլորն ել չափածո, Շեքսպիրը նույն դարավերջին արդեն գրավել եր գրականության մեջ առաջնակարդ դիրք, առաջնության գագնին խլել իր բոլոր

Կովսորդներից, Նույնիսկ հայտնի պատմ և դրամատուրգ Բեն
Ջոնսոնից:

Վերահիշյալ փաստից հինգ տարի առաջ, 1595 ին, Թեմ-
քրիջի համալսարանի տղադրիչ Ջոն Լեզարը լույս և ըն-
ծայում մի գիրք «Շեքսպիրիա» խորադրով, «Նովիլամ» ծո-
սեցին և սուրագրված Ռո. Կ. Ակդրնատառակը բոլոր

Այս գրքում հողինակը հիշատակում և այն գրողներին,
վլուսնը սովորել են Թեմքրիջի համալսարանում։ Դրանց հետ
Սովորություններ, Դանիիլը Մարտու և Շեքսպիրը, վերջինն անուանը
բաժանել են յերկու մասի—Shake-speare, բայսի Փերականաց-
կան իմաստը ընդունելով (ըստ Դամբրլոնի),

Թվում ե, թե կասկոծ չպեսք և լինի այն մասին, վոր
համալսարանին ապահանող գրողների նկատմամբ վորում
սխալ թույլ տար թե զրօնի հազինակը, վար նույն համալ-
սարանից ե, և թե համալսարանի ապարանի դեկադակը

Այս և նախորդ հիշատակությունների մեջ Շեքսպիրի
անուանը, ինչպես պնդում են հակառակորդները, գործածված
և իր կեղծանուն, առանց հայանելու խնկականը։ Մորելո-
ֆորդը Շեքսպիրի անուանը խնկական ե, բայց նա ուսանող
չէ յեղել Թեմքրիջի համալսարանում, վորովինուն ուսանող-
ների ցուցակում չկա նրա անուանը։

Ո՞վ և ուրեմն Շեքսպիր կեղծանվան անի թագնիան
անձնագորությունը—բանաստեղծը և պարերի մնեապույն
գրամատաւրոց։ Այս փաստերը մեր գլխավոր հարցին այսու-
ամենայնիւ պատասխան չեն ապահով։

Հին շնորհիքագետները, այսինքն նրանք, վորոնք
սորեղփորդուն համարում են հեղինակ շեքսպիրյան պրա-
կան ժառանդության, հրապարակ են հանել իրենց ուսում-
նասիրությունների միջոցով բազմակողմանի նյութ Մորելո-
ֆորդի և Լոնդոնի արխիվներից, վորոնք վերաբերելով Վե-
լիմամ Շեքսպիրին, սպառել չափերով չեն կապաւմ հեղի-
նակի անուան այդ համաշխարհային գրական ստեղծագոր-

ծությաւնների հետ, Ընդհայասամելը, հանված վասառաթղթերից մի քանի արամակօրին հակառակ յնպահացության համար են ուղարկործվում:

Վերև և արագիցիայով ընդունված ուղեղիցորդի Շեքսպիրի կենսագրությունը:

Շեքսպիրը ծնվել է 1564 թվին Սարհեղիորդ կոմքը իրեն քաղաքում, վոր գոտնվում և Ամոն կամ Նվոն գետի ափին, Երա կյամիքի այս կամ այն օրջանի մեծ մասը անհայտարան մեջ և: Բայց գարերի ընթացքում զբակի են կենսագրություններ, ուր փաստերի փոխարեն հաճախ կենսագրեների յնընտակայությունն է՝ զեր խաղացել, առաջնալազես հիմնվելով Շեքսպիրի գրամանների տվյած անսպառ աղբյուրի վրա: Կենսագրության պակասավոր և բաց մասերը լցրել են կումունիանների և վողբերդությունների արամագրած նյութերով, Վիլիամի հայրը Զոն Շեքսպիրը Սարենդիորդի ունեար քաղաքացիններից եր. Նրա ոլարտապմունքը կաշնվանառություն եր, վոմանց կարծիքով՝ մասվաճառություն: Զոն Շեքսպիրը քաղաքում վայելել և բարձր գիրք, վորոշ ժամանակ նույնիսկ վարել և քաղաքագլխի ոլաշտոն: Վորդին Վիլիամը սովորել և քաղաքի գիմնազիոնում: Առարկանների մեջ վորոշ տեղ ունեցել են հունարեն և լատիններեն լիդունները: Դպրոցում անցնում եյին հոռմնյական գրողների գործերից՝ Ովերդիսի, Հորացիոսի, Ցիցերոնի, Վիրապիլիսի: 14 տարեկան հասակում Վիլիամը ստիպված ե լինում թողնել ուսումը և ողնել հորը, վորովինետև վերջինի գործերը խանգարվել եյին: Վոմանք կենսագրեներից յենթադրում են, թե պատանի Վիլիամը հարեան զյուղերում ուսուցչություն ե արել և փաստաբանի մոտ գրագրություն: Ամուսնացել և 18 տարեկան հասակում, գեղջկուհի Աննա Հեսուսյի հետ, ունեցել յերեք զավակ, յնքեւար աղջիկ՝ Հուդիթ և Սուսաննա (կտակի մեջ հիշատակված) և մի տղա Համլետ անունով (մանուկ հասա-

կում մոռած), 1586 թվին Վիլիամ Շեքսպիրը ստիպված և թողնել Ստրեդֆորդը և բաղդ մորոնելու համար պանդիստել էր նորուն Ամենայն հավանականությամբ պանդիստելու պատճառը աղքատությունն ե յեղել. նրա վզին եր ձանքացած վոչ միայն իր ընտանիքի հոգմը, այլ և սնանկացած հոր վիճակը, Հեռանալու մի այլ պատճառ վորպես թե քաղաքի խոշոր կարվածատեր ու դատավոր Թումաս Լյուսիի հետապնդումն ե յեղել, Շեքսպիրի առաջին կենսագիրներից մեկը, Ռոբուն, իր հավաքած տեղեկությունների հիման վրա պնդում ե (գրամատուրզի մահվանից 70—80 տարի հետո), վոր Վիլիամը վորպես թե իր մի խոհմը ընկերների հետ գողունի վորսորդություն ե անելիս յեղել վերոհիշյալ Թումաս Լյուսիի անտառում, վորի համար և վերջինը խիստ պատասխանագության ե յենթարկում նրան և հալածութե 5—7 տարիների նրա կյանքը լունդում ծածկված և մրուրյան հոգով: Ցեզ դա առիթ ե տալիս բաղմաթիվ յենթադրություններ անելու, Վորպես թե նա զլուխ և պահել ամեն տեսակ ու աշխատանքուի, յեղել և ձիապան՝ թատրոնին կից, պահելով թատրոն հաճախող աղնվականների ձիերը, Զեռքի տակ ունեցել և վարձու տղաներ, վորոնք ճանաչված են յեղել իրքն Շեքսպիրի հավատարիմ մարդիկի: Հետադայում շնորհիվ իր ընդունակության, նա մուտք և գործուն թատրոն, ստանում բեմարդարի ողնականի պաշտոն, գաւանում զրաշար, կրկին մոտենում թատրոնին, այս անդամ հուշարարի ոլաշտոնով, ապա ստանձնում դիերեր, զառնում դերասան և թատրոնի դիերեկտոր ու փայտաեր: Վորպես դերասան նա հիշվում ե յերկրորդական դերերում, որինակ, Համետի հոր ուրիշականի գերում, կամ Աղամի՞ Շինչպես կուզեք կոմեդիայում: Բայց իր շնորհը նա ցույց և տվել այլ ասպարեզում: Նրա հմայքը զրական ստեղծագործության ասպարեզում արտահայտվեց հենց նույն 1592-ին, այսինքն լոնդոն գնալուց 5—7 տարի հետո և այնքան ու-

ժեզ կերպով, մոր նրա ժամանակակից գրող Ռոբերտ Գրինը, ինչպես ասել ենք վերը, հանդես յնիավ նրա դմաւ Սակայն Գրինը իր նամակով շեշտում եր Շեքսպիրի միաժամանակ դերասան, պրոդ և թատրոնի գիրիկտոր լինելու հանդամննքը։ Այսպիսի նյութական և հասարակական դիրք ստեղծելուց հետո, Շեքսպիրը վոչ միայն ազանովում ե իր ընտանիքը, այլ և վորովես թե դանազան դործարքներով և դրադվում, առելը ու հողաբաժիններ գնում, քաղաքի տուրքերը կուպալով վերցնում, բարձր տոկուներով փոխատվություն անում մասնավոր մարդկանց։ 1596-ին նա ընդունվում է անդամ լորդ Չեմբերլինի հովանավորության տակ դանութիւն դերասանական խմբի մեջ, իսկ Հակոբ առաջին թագավորի օրով (1604-ից) դառնում պալատական խմբի անդամ։

Շեքսպիրը Սարեդֆորդ և վերադառնում «Փորս» թատրոնը հրդեհի զան գնալուց հետո, 1613 թվին։ Մինչև այդ թվականը նա արգելու տվիլ եր իր դրական բարձր ստեղծադրությունները, գրել եր վերջին կոմեդիան՝ «Փորքիկը», վերջին չորս տարվա ընթացքում նա վոչինչ չե արտադրում, այսինքն լոնդոնից դուրս գալուց հետո։ Սարեդֆորդում նա աղքատ է իրքն կալվածատեր և զբաղվում բացառաշնուր անտեսական-դրամական գործերով։ Այդ գործունեյության պատճերը հայտնի չափով անդրադարձել ե նրա թողած կտակի մեջ։

Շեքսպիրը մեռել է 1616 թվին Սարեդֆորդում, 52 տարեկան հասակում, առանց վորեն հիշատակություն թողնելու իր գրական գործիչ լինելու մասին։ Նրանից վոչ միայն վորեն ձեռագիր-զրվածք չե մնացել այլ և ակնարկ անդամ չկա այն մասին, թե այդքան բազմաթիվ գրամաների հեղինակի մոտ վորեն տպագիր գիրք յեղել ե թե վոչ։ Վիլիամ Շեքսպիրը թաղված է Սարեդֆորդի յնկեղեցում, գերեզմանաքարի վրա հատուկ արձանագրություն կա։ «Չվըրդովիլ բանաստեղծի հանգիստը, չքրքրել նրա վուկորները»

մի բան, վոր բարձական կասկածների տակից և ավել հակառարքեղիորդյան թերթայի կողմնակիցներին (Բնեկոնի թերթայի պաշտօնաններին),

Բացեւից ամենախուօքը, մեր կարծիքով, նեխափիրի կյանքի 5—7 տարիների (և նկանամ) կատարյալ մրւոյամ մեջ լինելու փաստն է, վոր առիջ և տալիս շատ դրական և բացառական, նուև անհիմ յենթադրություններու վաճանք գտնուած նն, վոր նու աշխանայուրաններով և դրաշնած յերեր, թույլատոքնելի և անթույլատոքնելի դործեր կատարելու վաճանք ել դրական մենառություն նն տալիս:

Վելիսամ Շնչառպիրը, ովետք և յենթադրել, դուլով լուսաւն, զաւ չի ամենացրել այն նիմպ-լոր տարիները: Սակայն, ոչքախտապար, այդ մասին վոչինչ հայտնի չն, այսինքն չկան արձանագրված փաստեր: Վերջին յերկու դարերի ընթացքում կննասադիրները այնքան բան են ասեօ ի հարկե յենթադրաբար, այդ ասարիների մասին, վոր առաջին վայրելյան թվում ե, թե ամեն ինչ լրիվ և կննասադրության մեջ և պարզ, Գետք և ասեօ, վոր ամեն դրական յենթադրաբարը թղթամելի յն, յերբ խոսքը վերաբերդում և դրամաների խօսկան հեղինակ Շնեալիդին: Այդ գերգում, ինչ կասկած, միակ նիւ յենթադրությունը կլինի այն, վոր լունգոն գնալու առաջին պարմաններից մեկը համնարեղ յերիտասարդի կրծքում բորբսիող տեսչն եր՝ լայն նորիզոններ ընդգրիլու և անեղծագործելու:

Սարնդֆորդի ճղճիմ, վողորմելի շրջապատը չեր կարող գոհացում տալ նրա հոգեկան հետզհետե դորացող պահանջներին Հետամնաց անկուլառուրտկան գավառակը կսպաներ նրա մեջ գրական ամեն ստեղծագործական ընդունակություն կամ կմուկը այլ կողմ: Սարնդֆորդի միջին դպրոցն ավարտած, նախուկին ուսուցիչ, ընդունակ յերիտասարդի ձրգումը շարունակելու ուսումը միանգամայն բնական պետք և համարել, և նրա 5—7 տարիների շանհայտացումը հեղա

բացատրելու Այդ գեղագում առանց դժվարության կարելի յև պատճենքացնել այն աշխատանքը, վոր իմբնակրուքան, իմբնապարզման մքուս դործ և զբել յերիտասարդ Շեքսպի-
րը։ ԶԵ վոր նրա դրամաները շոշափում են ժամանակի բոլոր
ոլլորլեմերը, անդրադարձնում քաղաքական, սոցիալական
և անտեսական կյանքի բազմաթիվ կազմերը։ Ուրիշն յեթե
սարեկի բարդը Շեքսպիրն և այդ գործերի հնդինակը, պարզ
է, նակայական աշխատանք պետք և կատարվ լիներ նա մա-
մանուի կաւալեայի ամենաբարձր գաղաքը գրավելու նամաւ։

Իսկ այն փաստաթղթերը, վոր հանվել են արխիվնե-
րից՝ հոդուա ունդապարծող Շեքսպիրի չեն, (Հարց և՝ գրող
Շեքսպիրին վերաբերող ճշգրիտ փաստաթղթեր են գրանք),
Վորձնը են այդ փաստաթղթերը, վոր սոսկ նոտարական և
իրավաբանական գործարքային բնույթ ունեն։

1598 թ. ստերցիորդցի Շեքսպիրին զրված նամակնե-
րից մեկում Միջարդ Կիւնեյը, Շեքսպիրի առաջա փեսոյի
հայրը, խնդրում և փոխարինարար տալ իրեն յերեսուն
ֆունտ ստերլինգ Հետայալ թվին Շեքսպիրի հայրը, Զո՞ն
Շեքսպիրը, լորդ Մյութլանդի աջակցությամբ ստանում և
աղյօնական զրոշմ։ Այդ նույն թվականից մինչև իր կյանքի
վերջը, Շեքսպիրը, համաձայն իր անունով ստորագրված
պայմանագրերի, կապալազրերի, ստացականների, զրադված
և յեղել հոգեր և տներ գնելով, պարտատերներին դատարան
կանչնով, տոկոսով փոխատվություն անելով, պարտապան-
ներին անողարտանաշության համար բանտ ուղարկելով,
սնվական քաղաքի տուրքերը կապալով վերցնելով և այլն
և այլն։

Փաստաթղթերում հիշատակված գործերի մեջ և կա-
տարած գործարքներում շատ գծեր և իոդմեր կան, վորոնք
հիշեցնում են «Աննետիկի» փանառականական վաշխառու Շեյլո-
կին, Յեղ նշանակալիցն այն և, վոր այդ արարքները զու-
գաղիսլում են այն տարիներին, յերբ սանդազործաղ Շեք-

ողիքի միտքը լարված և յեղել կերտելով Համբետի, Ոֆելիայի, Ռթելոյի, Բրուտոսի, Դեղզեմոնայի, Լիրի, Կորուլինայի պատկերները:

Եեքսոլիրի կենսադիրներից շատերի մեջ աղելի մած տարակուսանք և տառացը եւ նրա թողած կտակը, ի՞նչպես թե, զարմանում են նրանք, բարոյական բարձր միջնուրառում ստեղծված շեղերների հեղինակը իր մահվան նախորյակին մի այլպիսի նղեմիմ հոգեկան վիճակ ցուցադրուի: Միթե նա կարիք չն զգացել գոնե ակնարկներու իր թողած հոգենոր ժառանդության մասին: Կամ մնում են յենթադրել, վոր կտակը զրվել է ուրիշների ձեռքով Եեքսոլիրի ծանր հիվանդության որերին:

Իր բովանդակությամբ անկասկած հետաքրքիր յերեվույթ է կտակը, և մենք կարևոր են համարում նրա այստեղ մնջբերումը: Հետաքրքիր և այն տեսակետից, վոր նա կազմողի ներքին աշխարհի աղքատությունն և հայտնաբերում, առանց հիշեցնելու դրամատուրգ և պոետ Եեքսոլիրին:

ՍՏԲԵԴՅԱՌԻՇԻ ՇԵԳՍԵՎԻՐԻ ԿՑԱԿԻՇ⁹⁾

(Մարտի) հունվարի 25-ին, Անդրիայի այժմյան մեջ՝ արքա Հակոբի թագավորության տասնչորրորդ տարում, Շոթլանդիայում նրա թագավորության 49-դ աարում, և մեր տիրոջ 1616 (թվականին):

Հանուն Հոր ամեն, Յես Վելիամ Եեքսոլիրս, Ուորրիք նահանգում Ավոնի վրա դանվող Ստրենֆորդից, աղնվականս, կամքովն աստծու, ունենալով լիակատար առողջություն և հիշողություն, թողնում եմ իմ այս վերջին կտակը և արտահայտում իմ վերջին կամքը հետեւյալ ձևով, այսինքն:

⁹⁾ Կտակից բնագրում չնշված բառերը այսանդ անվան են փակածիքի մեջ. իսկ բնդդժգած բառերը տպվում են շնորհառով:

աստղին, իմ հորին յես հանձնում եմ աստծուն, իմ արարչին, ակնկալնլով և անկեղծորեն հաջատալով, վոր միայն իմ պրեկիչ Հիսուսու-Թշիստոսի արժանիքների շնորհիվ յես կարող եմ դառնալ հայիստնական կյանքի մասնակիցը, իսկ մարմինս հանձնում եմ հորին, վորից նա ստեղծվել ե, նույնույն տալիս եմ և կտակում (վորուս և) աղջկանս Հուռիթին հորյուր հիսուսն ֆունտ ստեղլինդ անգլիական որինական պրամով, վոր պետք ե վճարվի նրան հիտեյալ ձևով, այսինքն՝ հարյուր ֆունտ ստ. մըրակնս նատուցում նրա ամուսնուկան բամբի, մի տարվա ընթացքում իմ մահվանից հետո, հաշվնլով մի ֆունտ ստեղլինդին յերկու շելլինդ տոկոս, վորը պետք ե վճարվի այսնքան ժամանակ, մինչև վոր հիշված 100 ֆունտ ստ. լիովին հանձնվի նրան իմ մահվանից հետո, իսկ մասցած 50 ֆունտ ստ. հիշատակված զումարից պետք ե վճարվի նրան այն գեղքում, յեթե նա իմ այս կտակէ կտակակտարնների ցանկության համաձայն առ բավարար ապահովություն առ այն, վոր նա իր օրոլոր կայքը և իրավունքը ները, վորոնք կանցնեն նրան ժառանգության կարգով կամ կտրվեն նրա ոգաբին իմ մահվանից հետո, կամ նրա ձեռքին դանվող այն կապալով հողարածինն իր պատկանելիքներով, վորը գտնվում և Ստրեգիորդում, հիշված Ավոնի վրա Ռուրիք նահանգում, հողարածին, վորը կազմում է Ռուռինալդուն կարմածքի մասը, ընդիւշ կհանձնի իմ Սուսաննա Հով աղջկանը կամ նրա ժառանգներին, Նույնպես տալիս եմ և կտակում վերոհիշյալ աղջկանս՝ Հուռիթին լիրկին հարյուր հիսուսն ֆունտ ստ., յեթե նա կամ նրա ժառանգներից մեկը վողջ լինի այս կտակը ստորագրելուց յերեք տարի հետո, միաժամանակ հիշյալ յերեք տարվա ընթացքում իմ կտակակտարները դարտական են վճարել նրան տուկուներ, վերը հիշատակված չափով իմ մահվան որից. իսկ յեթե նա մեռնի վերոհիշյալ ժառանգներում առանց ժառանգի, իմ կտակն ե տալ և կտակել այդ հարյուր

Քունատ սա. քիչ վերեւ հիշված դռամաբից իմ թոռանը՝ Յեղիսաբեթ կույն, իսկ 50 ֆունտ ստու կտակակատարները ովետք և պահեն իմ քույր Յոհաննա Պարոիի համար նրա ամբողջ կյանքի ընթացքում՝ յեկամուտը և առկոսները հիշյալ 50 ֆունտ սա. պետք և վճարվի հիշյալ քրոջ Յոհաննային, իսկ նրա մահից հետո այդ 50 ֆ. սա, պետք և թողնվի հիշյալ քրոջ դավակներին և բաժանվի նրանց մեջ հավասար չափում՝ Յեղին իմ վերոնիշյալ աշխատ հուզելը վողջ մաս հիշված յերեք տարին լրանալուց հետո կամ նրա ժառանգներից մնկը, իմ կամքն և, վոր իմ կտակակատարներն ու հոգաբարձուները այդ 150 ֆ. սա. ովելի արդյունավետ դրամներ համար առանձնացնեն նրա կամ նրա ժառանգների ուղարկուն

Նրամազգութար չպետք և արվի նրան (իմ կտակակատարների ու հոգաբարձուների կողմից), քանի նա ամուսնացած և և զանվուն և իր ամուսնու իշխանության ներքո. բայց իմ կամքն և, վոր նրան ամեն տարի տրվեն առկոսները նրա ամբողջ կյանքի ընթացքում, իսկ նրա մահվանից հետո հիշյալ դրամազգութար ու տոկոսները պետք և արվեն նրա դավակներին, յեղին այդպիսիք կունենա, իսկ յեղին չինեն՝ նրա կտակակատարներին և լիազորներին, յեղին նա վողջ լինի հիշատակված ժամանակամիջոցում իմ մահվանից հետո Յեղին ամուսինը, վորի հատ նա ամուսնացած կլինի հիշատակված յերեք տարին անցնելուց հետո կամ ուղիղ հիշեկա կտակով, և դա կճանաչվի իմ կտակակատարների և հոգաբարձուների կողմից, — իմ կամքն և, վոր հիշյալ 150 ֆ. սա. արվի այդպիսի ապահովություն ավելի հիշյալ ամուսնուն իր անձնական ուղարկություն նույնպես տալիս եմ և կտակում հիշյալ քրոջ Յոհաննային 20 ֆ. սա. և իմ ըուլոր հազի շորերս, վորոնք պետք և արվեն նրան իմ

մանվաճառից հետո մի տարվա ընթացքում, և յիս ցման կտակած էմ նրան Սարքեղի օրդուում գանձող տամա իր պատկանահնիքուն, մարտնութեան առջրում և, այս օրայի մանամի, վոր նա վճարի տարնեան հարկը 12 պենս Նույնային տալիս եմ և կտակած նրա յերեք աղաներին—Վիշիամ Գորդին, ...Գարզովն և Միջայն Գարդին հինգական Փ. ստ., վորը պետք ենրանց վճարուի իմ մահմանից հետո մի տարվա ընթացքում Այս պրամերն իմ հոգաբարձուների և կտակակատառների ձևուով ովետք և առանձնացվեն իմ մանվանից հետո մի տարվա ընթացքում, քրոջու համար ավելի տրպյանացնա դաշտնելու նպատակով, մինչև նրա ամուսությունը և ասկա հիշյալ դրամերը տոկոսներով ովետք և վճարել նրան: Նույնա տալիս եմ և կտակած նրան նիւյալ Յեղիարեր Հոլիմ յու բոլոր արծաթյա ամանեղննը, բացի իմ լայն առծարյա և վասիեզօն գավարիչ, վորն այժմ յիս ունեմ այս կտակը զրելու միջոցին: Նույնպես տալիս եմ և կտակած Սարեղի օրդուում աղքաներին 10 Փ. ստ., Պ. Թումաս Կոմիրին՝ իմ թուրը, և աղնական Ֆրենսիս Կոլինսին—Ռւուրիք նահանգի Ռւուրիք քաղաքից—13 Փ. ստ. 6 շիլ. 8 պենս, վորը պետք ենձարվել նրան մանվանից հետո մի տարվա ընթացքում Նույնպես տալիս եմ և կտակած (ոլ. Բիշարդ ամագ Տայլի քին, Համեստ Սաղմբին 26 շիլ. 8 պենս իրենց մատանի ունելու համար, աղնվական Վիլիամ Շնյուլդին 26 շիլ. 8 պենս մատանի գնելու համար, իմ կնքահայր Վիլիամ Ռւուրիքին 20 շիլ. (վոսկով). Ընկերներին—Զան Հեմմինգին, Բիշարդ Բորբեյջին և Հենրիկ Կոնդելին 26 ական շիլ. 8 պենս մի-մի մատանու համար, Նույնպես տալիս եմ և կտակած իմ աղջկանը՝ Սուսաննա Հոլին—Վարվեսզի նա կտրողանա ավելի լավ գործադրել իմ այս կտակը—այս գլխավոր կալվածքը կամ տունն իր պատկանելիքներով վերոնիշայի Սարեղի գործում, վոր կոչվում և «Նոր տեղ» ուր աղքան եմ այժմ, և յերկու կարլածը կամ յերեկու տուն

իրնոց պատկանելիքներով, վորոնք գտնվում են հիշյալ Սարեղիքորդ քաղաքի հենիկի փողոցի վրա, և իմ բոլոր դուերը, ձիանոցները, մրգատու ողարտեղները, արգիները, հողերը, տները և իմ ժառանգած բոլոր կայքերը, զորոնք իմ ձեռքին են և դիւ կարող են իմ ձեռքն անցնել, կամ վորոնք յես յենթադրում եմ ստանալ կամ ձեռք ըերել քաղաքներում, դյուլերում, գաշաներում և Ամոնի վրա դաշնավող Սարեղիքորդի հողերում, Ռիդարեղիքորդում, Բոջպատանում կամ Ռևլիսմբում կամ հիշյալ Ռւուրիք նահանգի վորյավեր քաղաքում, դյուլում: Նույնպես այն ամբողջ կարլածաքը կամ տունն իր պատկանելիքներով, վորանդ այժմ ապրում և վոնն Զոն Ռոբինսոն, վորը դանվում և կռնչոնում, Բէթֆրայրսում, Ռւորդուպի մօտ. իմ բոլոր մյուս հողերը, վարձու տներն ու բոլոր իմ ժառանգած այլ կայքերը, հիշյատանված կարլածները, բոլորը միասին վերցրած և ամեն մեկն առանձին, իրենց պատկանելիքներով յես կատկում եմ հիշյալ Սուսաննա Հոլին իրքն սեփականություն ցմահ, իսկ նրա մահվանից հետո վերը հիշյատակված կայքերը նրա առաջին որինական վորդուն և նրա որինական ժառանգներին արտկան զծով, իսկ յեթե այդպիսի ժառանգ չունենա, յերկրորդ որինական վորդուն և սրա որինական ժառանգներին արտկան զծով, իսկ յեթե այդպիսի ժառանգներ չունենա, յերրորդ որինական վորդուն, իսկ յեթե այդպիսի ժառանգ չի լինի, վերոնիշյալ կարլածքները պետք են մնան նրա չորրորդ, հինգերորդ, վեցերորդ և յոթերորդ որինական զավակներին հաջորդական կարդով և որանց ժառանգներին արտկան զծով հիշյալ ճ-րդ, ճ-րդ, ճ-րդ և 7-րդ նրա որինական վորդուն, նույն ձեռք, վորով մի փոքր առաջ սահմանավակված եր հիշյալ կարլածքների անցումը նրա առաջին, յերկրորդ և յարբորդ տղաներին և սրանց ժառանգներին արտկան զծով. իսկ յեթե այդպիսի ժառանգներ չի լինեն, վերոնիշյալ կարլածքները պետք են մնան վերև հիշյատակված իւ

Յուսանը՝ Հովհան և նրա որինական ժառանգներին արական զծոյլ, իսկ յեթե այդպիսի ժառանգներ չինեն, այն ժամանակ ընդունակ պեսաց և մասն իմ Վիլիամ Շեքսպիրին՝ անմիջական ժառանգներին, Նույնպիս այլիս եմ և կտակամ իմ կենոս յեկրոշդ և ակալի մաննակալը իր պարագաներով։ Նույնպիս տալիս եմ և կտակում իմ հիշյալ աղջկան՝ Հուղեթին իմ արծաթյա վոսկեղոն դավաթը։ Մյուս իմ բոլոր կարմածները, իմ սեփականությունը, կապալով վերըրած կալվածները, արծաթյա ամանեղենը, թանգադին քարերը և ինչ ել վոր գանձի՝ շարժական գույք, — պարտքերս և կտակածս վճարելուց և իմ թաղման ծախսերը հոգալուց հետո, յես տալիս եմ և կտակում իմ վեսային՝ աղջնվական Զոն Հովհան և իմ աղջկանս Սուսաննային, վորոնց յես կարգադրում եմ լինել իմ այս վերջին կտակի կտակակատար։ Յեվ յես խընդրում եմ և նշանակում հիշյալ Թումաս Ռյոսելի եսկվայրին և աղջնվական Ֆրենսիս Կոլլինսին լինել իմ հօգաբարձուները և վոչնչացնում եմ իմ բոլոր մինչև այժմ կազմած կտակները և հայտարարում, վոր սա իմ վերջին կամքն եւ և վերջին կտակը, ի հաստատումն սրա յես դրի իմ ձեռքը (կնիք) վերը հիշյած ամսաթվին և տարեթվին։

Վիլիամ Շեքսպիր

Վիաներն են՝ Ֆրանսիա Կոլլինս,
Թումիու Շոու,
Զոն Ռորինսոն,
Համետ Սադեր,
Ռոբերտ Ուաթկուտ։

(Կտակը հաստատված ե հունիսի 22-ին 1616 թվին)

Կարդալով այս կտակը, վոչ վոք չի ասի, վոր նա կազմել և աշխարհի մեծագույն բանաստեղծը. ընթերցողի մըտքովն անդամ չի անցնի, վոր սա «Համլետ»ի հեղինակի վերջին կամքն ե, վերջին խոսքը, կտակը ավելի շուտ հիշյ-

նույն և իր վողջ կյանքը կապիտալ կւուահենը, նվիրված վաճառականնի կամ նման մարդու հոսկրանություն վարդեպրած կալվածաների, բայց յերեւէ Շեյլոկի հեղինակի համարից դիմքը:

Իր հարստությունը—հողը, տները, այսինքը, ոչչ կարդի շենքերն ու զբումը նա կատկամ և իր աղջիկներին—Հուզիթին և Սուսաննային, դնելով նրանց տառջ ըսրդ պարբաններ, վարդեպրած պրամենը անմիջապես չափանին նրանց ձեռքը, չիշում և տոկոսները, ընդդում և, ին վարքան շիլինդ և պինս և կազմելու գումարի տոկոսը նոխառակառ և ժամանգների հասակա սերպի աղամարդ ներկայացուցիչներին համարյա մինչև յոթերորդ պարտը, բայց մասնաւմ և կազդի Կատկի մեջ կինը միքջին և աննշան տեղու և բռնում, նրան կատկամ և ցիրկորորդ անսակի մահճակալը, վարի վրա կինը տամնյակ տարբիներ քնել և զրահով արգեն ժառանչու տիրելու իրավունքը:

Կատկամ հիշված են զարմանալի մանրամասնություններ, մանմանից հետ մնացած իր զգմանները կատկամ և քրջը՝ Յոհաննային, առն ամանեղեններ՝ աղջիկներից մակին: Զի մուացիան նույնիակ թուրք, վոր թոշնում և «պարսկ թումաս Կոմքին»:

Բայց ոչք մանրամասնությունների մեջ չե հիշտատեկ վում յեկամուտի աղրյուրը դրական բործերից, վարժնց վորոշ մասը կը կնայի հրատարակությամբ լույս եր տեսել, մյուսները նույնութեա պետք և հրատարակին յին: Արժե հիշտատեկը վոր Շեքսպիրի Ժամանակ լույս տեսան արժեքավոր պործերը զգալի յեկամուտ ելին տալիս հեղինակներին: Նման կատկի մանրակրկիտ հեղինակը, վոր ամենայն մանրամասնությամբ հաշվում և իր թողնելիք կատիտալի տոկոսները շիլինդով և պինսով՝ կարմր եր զանց առնել յեկամուտի ոչք մշտական աղրյուրը և իր կատկի կարերից մեկը չհամարել:

Այդ փաստաթուղթը՝ կատել առիթ և տվել բեկոնականերին և առիթ և տալիս Ռյութլանդի կողմանակիցներին կասկածով վերաբերվելու ստրեղֆորդցու հեղինակ Մինելու հանգամանքին:

Կան սակայն պնդողներ, թե խիստ գործնականությունը հեղինակին չեր կարող խանգարել գրելու գերազանց զրամաներ: Մենք վերևն արդեն մնջերեցինք Շեքսպիրի կենսագիրներից մեկի՝ Ս. Վենդերովի այն կարծիքը, թե Շեքսպիր-մարդուն, Շեքսպիր-ճելեց-ին՝ չպետք և շփոթել Շեքսպիր-արվեստագետի, Շեքսպիր-բանաստեղծի հետո: «Բայց յերեւլիթին, —ասում ե Ս. Վենդերովը, — Շեքսպիր արվեստագետը ապրել ե իր առանձին կախարդական աշխարհում, անմատչելի բարձունքներում, ուր կյանքի ձայները չեն հասնում, ուր նրա զեղարվեստական իմացությունը ազատազրկում ե ժամանակի և տարածության պայմաններից»:

Ցերեսում ե, «վոր ինչ վոր մի նախապաշարմունք կաշէ կանգում և ոռւսական շեքսպիրագետին, և նա չի համարձակվում արմատական մեկնություն տալու յերեւլյթին և աշխատում ե միջին ճանապարհ գտնել՝ կոմպրամիսով հարցը փակելու համար»:

Ճիշտ է, հանճարեղ Պուշկինն ել և շոշափել այդ հարցը «Պուետա վերնագրով իր նշանավոր բանաստեղծության մեջ, սակայն մենք չգիտենք այնպիսի մեծ պրետների և գրողների, վորոնց մեջ զարմանալի «ներդաշնակությամբ» խաղաղ կենակցելին Համեմոն ու Շեյլոկը»:

Պուշկինը գրել ե.

Пока не требует поэта
К священной жертве Аполлон,
В заботах суетного мира
Он малодушно погружен;

Молчит его святая лира,
Душа вкушает хладный сон.
*И мож детей ничтожных мира,
Быть может, всех ничтожней он.*

Пушкин

Մուսական հանճարեղ բանաստեղծի խոսքերը մենք
տառացի չենք ընդունում ինարկեւ: Մենք գիտենք շատ գրող-
ների, նույն և համաշխարհային անուն ունեցող գրողների:
Կենսադրականներից, վոր նրանցից շատերի մասնավոր
կյանքը — ստեղծագործական ժամերից զուրս — հաճախ լցված
է յեղել գծուծ ու ճղճիմ բռվանդակությամբ, ապրել են մեշ-
չանական տափակ ու վողորմելի առորյայով: Սակայն մի
վայրկյան անգամ չենք կարող պատկերացնել, որինակ,
Դանթեյին, Պուշկինին, Բայրոնին, Լերմոնտովին, Միցել-
լիչին, Տոլստոյին կամ Դիկկենսին և շատ ուրիշներին, վոր
նրանք, անգամ ամենածայրահեղ չքավորության դեպքում,
ընդունակ լինելին նույնիսկ մտածելու այն շահամոլ արարք-
ների հնարավորության մասին, վորոնք վերագրվում են
հանճարեղ Շեքսպիրին: Կարմազ ենք պատկերացնել Դան-
թեյին, Մերգանտեսին կամ Պուշկինին միաժամանակ և՝ պո-
եի և՝ վածխառուի գերում, միաժամանակ հանճարեղ գրողի
և խեղճ պարտապանների կոկորդը անխնջորեն սեղմողի դե-
րում, Ռում մոքով կարող ե անցնել նման հանցավոր պատ-
կերացում այդ համաշխարհային գրողների նկատմամբ: Յե-
թե այդպես ե, ապա թի՞չ հիման վրա տարրեր, ավելի ճիշտ՝
բացառիկ մոտեցում ցուցաբերել հատկապես Շեքսպիրի նը-
կատմամբ միմիայն այն պատճառով, վոր նրա մասին նօգրիս
կենսագրական տեղեկություններ չկան կամ վարավնեսել մի այլ
անձի ծամր կենսագրականը մի վաղբերգական հարկադրանքով
բարձել են մեծ դրամատուրգի ուսերին:

Այդ տեսակետից մի՛թե քիչ բան և ասում գերեզմանոցի տեսարանը «Համլետում» Շեքսպիր-դրամատուրգը Համլետի բերանով հեղուում-ծաղրուում է գերեզմանոցում գըտնըլած այն գանգը, վորի տերը հողի սպեկուլյացիայով և ուսարապելի Այդ մասին հեղինակը հետևյալ խոսքերն եւ դրել Համլետի բերանը. «Այս մարդը գուցե իր որով մի մեծ կարժածատեր և յեղել, իր վարձարդիերով, գրավարդիերով, պարամուրնակներով, փօխանցումներով, յերկու յերաշխավորներով» և այլն և այլն:

Այս և պատճառը, վոր Շեքսպիրի գործերը ուսումնասիրողներից շատերը չեն հաշտվում այդ մտքի հետ և փորձում են այլ կարգի յեղակացություններ հանել, այն, վոր համաձայն մեջբերված դոկումենտների ևստրեգֆորդցի Շեքսպիրը՝ չեր կարող լինել շեքսպիրյան դրամաների ստեղծագործողը, Նրանց հեղինակը, պնդում են նրանք, մի այլ անձն ե, ոժոված հանճարով. Ժամանակի գիտությունները յաւրացրած, պատմական շրջապտույտի մեջ գործոն գեր կառարող անձ, բայց վորը հանգամանքների հարկադրանքով ստիպված և յեղել թերես կիսակիրթ գերակատար և ճարպիկ գործարարի ազգանունը դարձնել իր կեղծանունը:

Սարեգֆորդցու հակառակորդները գիմել են համառ գործումների, քրքրել անգլիական արխիվները, գանելու համար այն անձին, վորն իր բոլոր տվյալներով համապատասխաններ ստեղծագործող Շեքսպիրին.

Այսպիս և ստեղծվել է բեկոնյան հերետիկոսությունը, վորը մեծ անհանգատություն ու հուզմունք պատճառեց շեքս-

պիրագետներին։ Ապա առաջ յեկալ մի նոր տեսություն, վոր անսպասելի յեր շատերի համար, այն, վոր Շեխսպիրը Ռյաւրլանդն է։

Հակասարեղֆորդյան տեսության կողմնակիցների մեջ կան մարդիկ, վորոնք հիշատակված փաստաթղթերի և կտակի հեղինակի դրագետ լինելու հարցն անգամ կասկածի յեն յենթարկում։

Խնդիրը նրանումն է, վոր կտակի բոլոր հինգ ստորագրություններն ել զրված են այն մարդու ձեռագրով, վոր գրել ե կտակի բովանդակությունը։ Կտակ զրողը դրագիր կոլլինսն է, մյուս հինգ քաղաքացիների անունն ել նա յէ գրել։ Այդ հնգի մեջ ե Վ. Շեքսպիրինը։ Գրադեմոն եր վերջինը՝ մյուս չորս անգրագետների կողքին։ Հակառակորդներից վաճանք կտրուկ պատասխանում են, թե վոչ, թել մատնացույց են անում կտակի տակ զրված՝ ծայրը մի փոքր յերկարացված... միջակետի վրա, վոր սովորաբար գրվում եր «վասն անգրագիտության», ինչպես մեզ մոտ ընդունված եր նման պարագայում դնել խաչաձև նշան։

Կտակի վերջում չի ասված, թե կտակողը սեփական ստորագրությամբ ե վավերացնում իր կամքը, այլ ասված և հետեւյալը։ «Ի վկայություն սրան յես իմ ձեռը դնում եմ վերիը հիշված ամսաթվին և տարեթվին», Ուրիշ խոսքով չի ստորագրում, այլ ձեռք դնում, ձեռք քաշում, գծելով ընդունված պայմանական նշանը։

Նույն ձեի «սատրագրություն» վորպես թե սարեդ-ֆորդցի Շեքսպիրը թողել ե մի այլ փաստաթղթի տակ։ Այդ փաստաթուղթը՝ Շեքսպիրի ցուցմունքներն են դատարանում կազմված, վորի տակ վկան, Շեքսպիրը, դարձյալ ձեռք ե դրել, այսինքն դրել անգրագետներից դատարանի պահանջած պայմանական նշանը—բնորոշ միջակետը։

Շեքսպիրագետները ճգնում են բացարել կտակի տակ յեղած ստորագրությունը կտակողի հիվանդ դրությամբ։

Հակառակորդների կարծիքով, դա քննադատության չի դիմանում այն տեսակետից, վոր նախ՝ վերջին (յերկրորդ) կտակը գրված և ստորագրված և մահվանից մի ամիս առաջ, յերկրորդ, համաձայն առաջին կենսագիրներից մեկի (Ուորդի) հավաքած տեղեկությունների, վորպես թե Շեքսպիրը մեռնել և կոնդոնից հյուր յեկած իր ընկերների պատվին սարքած մի քեֆից հետո Ուորդի գրելով, նա այնքան ե խմել վոր նույն որերը «հիվանդացել ու մեռնել և ազբեցատենդից»:

Մյուս 5—6 փաստաթղթերի ստորագրությունները, վորոնք բոլորն ել աարքեր ձեռագրով են զրված, կիսադրագետ մարդու ձեռքով, և վոչ մեկն ել Շեքսպիր հնչյունատակերը չունի, այլ՝ Շեքսպիր, Շաքսպիր, Շաքսրիր և այլն։ Պայմանագրեր, կապալագրեր, գնված աների կայքագրերի տակ դրված ստորագրություններն ել չեյին կարող դրված լինել ստորագրողի հիվանդ ժամանակ։ Պարզ ե, այս տեղ ել մի վողքերգական թյուրիմացություն կա մեծ գրամատուրգի կենսագրության մեջ։

1597-ի մի փաստաթղթի մեջ հիշատակվում է, վոր ստրեղֆորդցի Վիլիամ Շեքսպիրը⁴⁾ Լոնդոնում բանակցություններ և վարում գնելու համար յեկեղեցական համայնքի հողարաժինը։ 1600-ին, համաձայն դատական մի ակտի, նա դատի յի կանչում Լոնդոնի բնակիչ վոմն Զոն Կլեյտոնին 7 ֆունտ ստ. պարտքը չմնարելու համար։ 1602-ին նա ձեռք և բերում Ստրեղֆորդի հարեւան գյուղի կալվածտեր — վաշխառու Կոմքից 107 ակր կալվածք։ Նույն տարվա վերջին նա դարձյալ ձեռք և բերում մի այլ հողամաս։ Իսկ 1603 թվին կապալով և վերցնում Ստրեղֆորդ քաղաքի տասանորդ՝ հարկը։ Հետեւյալ թվին դատական պատասխա-

⁴⁾ Գետք և շեշտել, վոր Շեքսպիր ազգանունով ուրիշ բնակելիներ ել յեղել են անդիմական պրովինցիաներում։

Նատվության և կանչում ստրեղֆորդցի չքավոր Ռոջերսին մի ֆունտ ստ. պարտքը չվճարելու համար: 1605 թվին վոճակության հետ ընկերովի կապալով և վերցնում վոչխարի բրդի շատասանորդ՝ հարկը և մի հոգամաս՝ հին Ստրեղֆորդի մոտ Ռեելկոմը և Բեշզոպտոն յերկու գյուղերին կից: 1606-ին դատ և սկսում ստրեղֆորդցի Աղդենբրոկի գնմ 7 ֆունտ ստ. պարտքը չվճարելու համար: Գործը տեսում և մի տարի, պարտապանը փախուստով աղատում և զլուխը հետապնդողից: Այս ժամանակը «Ենքսապիրը» դատի յև կանչում թումաս Հորնբին, վորը անզգուշություն եր ունեցել յերաշխավոր լինելու վերոնիշյալ պարտապանի համար: Յեզ վերաբերեա սա ևս դրամ չի ունենում, Ենքսապիրը նրան բանու և նետում, Այսպես մինչև 1616 թիվը:

Ընթերցողը արդեն նկատում է, վոր այն ժամանակը, յերբ «կապալառու Ենքսապիրը» դրազգած եր նման գործություններով, իսկական Ենքսապիրի ստեղծագործող հանձնարը լրացնում գերազանց գործեր եր արտադրում:

Վերջին տարիներս մի ձեռագիր հայտնաբերվեց, վորի հիման վրա ստրեղֆորդյան թեորիայի կողմնակից շեքսպիրագետները հաստատում են գերասան Ենքսապիրի միաժամանակ դրամատուրգ լինելու փաստը: Մի խումբ անզիական դիանականներ գտել են «Թումաս Մոռ» դրամայի ձեռագիրը դերասան Ենքսապիրի ստորագրությամբ: Պնդում են, վոր ստորագրության ձեռագիրը հիշեցնում և նրա մյուս ստորագրությունները, Սակայն, ինչպես հայտնի յե, ստրեղֆորդցու ստորագրությունները թվով 5—6, իրար նման չեն: «Բացի այդ, — ասում ե Վ. Մքրիչեն, — մենք չդիտենք ինչպես և գրել նա իր աղջանված մեջ չմտած տառերը, Յեթե անգամ հնարավոր լիներ աղացուցել, վոր «Թումաս Մոռ» պիեսի կամ նրա մի քանի տեսարանների հեղինակը գերասան Վ. Ենքսապիրն ե, ապա դա կապացուցեր միայն, վոր նա գրող-դրամատուրգ յեղել ե, բայց գարձյալ չեր ապա-

ցուցվի, վոր նա շեքսպիրյան պիեսների հեղինակ եւ,—այն ոլինաների, վորոնք մտել են բանաստեղծ ռԱ. Նեխսպիրը 1623-ի, (in folio) լիակատար ժողովածուի մեջ, վորանդ «Թուման Մոռ» պիեսը բոլորովին ել զետեղված չեւ:

Այս գյուտը անկասկած վորոշ բան ասում ե, բայց «գարերի գաղտնիքը» վերջնականապես չն լուծում, Յեղ այս «բացն» ե, վոր դժգոհներին ստիպում ե համառորեն շարունակել վորոնումները: Այդ վորոնումները արդյունք են այն կասկածների, վորոնք առաջ եյին գալիս շատերի մեջ ամեն անգամ, յերբ գտնվում եր Շեքսպիրին վարկաբեկող վորոն նոր փաստաթուղթ, վորոնում կատարողների մեջ ակամա առաջանում եր այն հարցը, թե կարմղ ե նման բացասական նկարագիր ունեցողը լինել հեղինակ համաշխարհային գըր վածքների: Առաջին կասկածողներից մեկը յեղել ե անդիքա կան ռոմանարիկ-բանաստեղծ Սամուել Կոլուիջը՝ «Լրիկական բալլադներցի և «Հիմն նավասու» հեղինակը, վորը բացար ձակ կերպով հայտարարում ե, թե ինքը անկարող ե հաշտ զել նման մտքի հետ.—կիսակիրթ, սանձարձակ, շահամու մարդը չե կարող լինել—պնդում ե նա, —հեղինակ շեքսպիրյան վողբերդությունների Կոլուիջը չի հավատում, վոր հետախուզումների հետևանքով ստացված նկարագիրը ճիշտ լինի Շեքսպիրի նկատմամբ: «Հնարավմը ե, վոր պիեսների հեղինակ համարվի, —հարցնում ե նա, —աննորմալ, տպետ, անբարոյական մեկը, ինչպես նկարագրում ե նրան ժամանակակից քննադատությունը... Միթե աստված ապուշներին ե ընտրում աստվածային ճշմարտություններ մարդկանց հաղորդելու համար»:

Նման կասկածներ պարզորոշ արտահայտվում եյին 19-րդ դարի առաջին կեսից սկսած: Նրանք առիթ եյին վառնում յեռանդուն վորոնումների պետական և մասնավոր արխիմներում, Այդ տեսակետից նշանավոր գործ կատարեցին «ընկօնյան հերետիկոսության» կողմանակիցները:

Մենք այստեղ ավելորդ ենք համարում թվել հակառակի գործանքը շարանը, վորոնցից վոմանք շատ սուր են գրել հարցը և սուր վորոշում տվել նրան, առանց հիմնավոր փառա աւենալու

Կավելացնենք միայն ամերիկական գրող և մտածող ծմբառունի յեղացությունը. «Ենքսպիրը—միակ կենսագիրն և Շեքսպիրի» Մենք իմանում ենք Շեքսպիրի ծնողների պատմությունը, նրա ծննդյան, ամուսնության, գրքերի լույս տեսնելու, նրա ժողովրդականության և մահվան մասին, և յերբ մոտենում ենք այդ գատարկախոսության վերջին, աեսնում ենք, վոր վոչ մի առնչություն չկա այդ ամենի և մարմնացած ասավածության միջև։ Դա միենայն և, թե կարգալով ժամանակակից «Պլուտարքոսին», կարդայինք բոլորովին մի այլ մարդու կենսագրությունը։

Համառ վորոնումների հետևանքներից մնկը, ինչպես ասել ենք, «բեկանյան հերետիկոսությունն եւ»։ Սարեղֆորդյան թեսրիայի յերգվյալ հակոռակորդների մի վողջ շարժում առաջ յեկազ Ամերիկայում անցյալ դարի կեսերին, վորոնք հոտուկ ռեֆերատներ, հորդածներ դրեցին, մեծահատոր ուսումնասիրություններ հրատարակեցին, ապացուցելու համար, վոր «Համլետի», «Ելիք արքայի հեղինակը կիսակիրթ, շահամոլ դերասանը չեւ Այդպիսին կարող եր լինել, նրանց կարծիքով, միմիայն դարի ամենալուսամիտ մարդը — Ֆենոսիս Բեկոնը»։

Եւզ այսպես ծայր տվեց «բեկոնյան հերետիկոսությունը»։

1856 թվին ամերիկունի Դելիա Բեկոնը հրատարակում է մի հոգված, վորով փորձում և ապացուցել, թե Շեքսպիր ստորագրությամբ լույս տեսած բոլոր գրվածքների հեղինակը վոչ թե Սարեղֆորդ քաղաքի բնակիչ Շեքսպիրն եւ, այլ մի խումբ գրողներ են, վորոնք ստեղծագործել են ժամանակի ամենահայտնի, բազմակողմանի զարգացման անը և

տաղանդավոր Թրենսիս Բեկոնի գլխավորությամբ, Հետազոտումն այդ միևնույն միտքը ավելի և խորացրեց իր մեծածավակալ զրքում, վոր կրում եր «Նեխայիրի պիեսների փիլիսոփայուրյան մերկացումը» վերնագիրը, Վերը հիշված անգլիական գրող նմերսոնը բարձր կարծիք ե հայտնել այդ զրքի ու նրա հեղինակի մասին։ Դելիս Բեկոնը անկանկած սժաված և տաղանդով և ունեցել է գիտական լուրջ պատրաստություն։ Սակայն ուսումնասիրելով Շեքսպիրի ստեղծագործություններն ու ժամանակի քաղաքական պայմանները, շտապել է հանել այն յեղրակացությունը, թե Շեքսպիր կեղծանվան տակ թագնված Թրենսիս Բեկոնը մի ամբողջ վողբերգություն ե ապրել և թե դա քաղաքական ինչ-վոր գաղտնիք ե պարունակում իր մեջ։ Եեթ վոր այդ գաղտնիքը Բեկոնն իր հետ գերեզման ե տարել, բառի իսկական իմաստով, Ամերիկունուն թվում եր, թե Սարեդֆորդի դամբարանում թաղված ե վոչ թե Շեքսպիրը, այլ դավադիրների ոլոկումնաները, վորոնց միջոցով միայն հնարավոր ե պարզել դարերի գաղտնիքը։ Այդ յեղրակացությունը նա անում եր Թրենսիս Բեկոնի նամակներում գտնված մի քանի ակնարկների հիման վրա։ Տարգած անվերապահ մտքերով, Դելիս Բեկոնը բնակություն ե հաստատում Սարեդֆորդում, նպատակ դնելով անպայման պարզել յերկու և կես դարերի շեքսպիրյան գաղտնիքը։ Պատմում են, վոր նա ամբողջ ժամերով նստելիս ե յեղել Շեքսպիրի գերեզմանաքարի վրա, մի անգամ ել փորձ ե արել բարձրացնելու քարը։ Ապարդյուն գործը հասցնում ե նրան հուսահատության, նա կորցնում ե իր հոգեկան հավասարակշռությունը, խելագարվում և 1859 թվին մեռնում հիվանդանոցում։

Դելիս Բեկոնի մահով խնդիրը սակայն չփակվեց։ Ընդհանուակը, նրա արծարծած միտքը ունեցավ իր սոլենանդ հետևողները, Հետազարեկոնականները ամբողջ հատորներ նվիրեցին Շեքսպիր-Բեկոնյան հարցին, մեծամեծ ջանք գործ

գրին զուգադրելու համար Շեքսպիրի դրամաներում արտահայտված մտքերն ու մ. Բեկոնի արծարծած զաղափարները գիտության ասպարեզում, Համեմատության դրվեցին յերկուսի առանձին դարձվածքները, բնորոշ արտահայտությունները, Ապացուցված համարվեց բեկոնականների կողմաց այն հանգամանքը, վոր այն ժամանակվա Անդիքան շեքսպիրյան դրամաներ գրելու ընդունակ միայն մի մարդ և ավել՝ հիշված Ֆրենսիս Բեկոնին։ Բացի այդ, յեթե իրավ Շեքսպիրը լիներ հեղինակ, ինքը Բեկոնը անպատճառ իր դրվածքներում կնշեն այդ մասին, քանի վոր նա աչքի ընկնող վոչ մի յերևույթ անուշադիր չեր թողնում։

Վերջապես գտնվեց մեկը բեկոնականներից, վորը հայտարարեց, թե ինքը հայտնագործել և այն շիֆրը, գաղտնագիրը, վորով իրը թե ոգտվել և Բեկոնը շեքսպիրյան ծածկանունով դրված իր դրամաների համար։ Մի ուրիշը հնարեց ինչ-վոր մի ցանց, վորը դնելով շեքսպիրյան» ձեռագրի վրա վորպես թե սաացել և—«Յևս Բեկոնս դրել եմ այս ձեռագիրը» և այլն։

Այս ամենը, իհարկե, վորեւ առնչություն չուներ հարցի գիտական ուսումնակրության հետ, մանավանդ գաղտնագրի և ցանցի «գյուղը», վոր թշվառ յերեսույթի տպագորություն եր թողնում։ Այս վերջին հանդամանքը մահացու հարված հասցրեց «բեկոնյան հերետիկոսությանը»։

Սակայն, ինչպես ասել ենք, շարժումը իր հիմքում մի դիմավոր նպատակ և ունեցել ապացուցել, վոր շեքսպիրյան վողբերգությունների հեղինակ կարող եր լինել ժամանակի միմիայն ամենաղարգացած մարդը, Փրանսերեն, իտալերեն և հունարեն լեզուներին տիրապետող, հին և նոր գրականություններին ծանոթ, բարձրագույն դպրոց ավարտած, իրավաբան և միաժամանակ պալատին մոտ անձնավորություն,

Կարհղ եր Բեկոնը լինել հեղինակ շեքսպիրյան ժամանակության։ Ավելի ճիշտ՝ կարելի յեր հնաբավոր համարել Բեկոնի հեղինակությունը։ Յեթև բեկոնականները դա միմիայն «հնաբավորություն» համարելուց այն կողմէ չանցնելին, ովոչ վոք նրանց չեր մեղադրէն Յեզ իրավ. մթքե Բեկոնի գիտական հարցերով զբաղվելը կարող եր արդեւք լինել նրան զեղարվեստով ել զրադիմելու։

Ո՞ւմ հայտնի չե, վոր գերմանական հանճարեղ պոհա և փիլիսոփա Գեոթեն միաժամանակ գիտնական և յեղել։ Համաշխարհային հռչակ վայելող «Ֆառուս»ի հեղինակը զրադիմել և կենդանիների և բուսական աշխարհի «մորֆոլոգիայով», իսկ Փիզիկայի ընապավառում ուսումնասիրել և գույների պլորելումը և դրել իր „Farbenlehre“ աշխատությունը։

Պախարակելի վոչինչ չկա այն ձգուման մեջ, վոր հայտնաբերել են բեկոնականները՝ գիտնական ֆրենսիս Բեկոնի մեջ վորոնելու շեքսպիրյան դործերի հեղինակին, «Գիտությունների վերականգնման», „Novum Organonum“ի հեղինակի մեջ, առանց հանցավոր լինելու, կարելի յեր յենթադրել նաև զեղարվեստական խոշոր ընդունակություն։ Սակայն յենթադրությունը դեռևս փաստ չե, Պետք ե բեկոնականները փաստեր ունենային իրենց յենթադրությունը կատ հիպոթեզը իրողություն հայտարարելու։

Գեոթեն, գիտնական լինելով հանդերձ, առաջին հերթին բանաստեղծ և յեղել, Մինչդեռ Բեկոնը հավասար տվյալներ չի ունեցել գիտության և զեղարվեստական գրականության մեջ։ Բազմաթիվ ուսումնասիրությունները ապացուցել են այդ։

Ֆր. Բեկոնը գիտական շատ աշխատություններ ե գրել, Յեղել և կանցլեր, Անգլիայի առաջին մինիստրը, շատ լավ ծանոթ և յեղել պալատական մթնոլորտին, մասնագիտությամբ իրավաբան։ Իրրե պետական առաջին մարդ, ճանա-

պարհութել և Յեվրոպայում, անցել այն յերկրներով, վոր պատկերված և շեքսպիրյան դրամաներում։ Այդ ամենը կարծես մոտեցնում և նրան Շեքսպիրին։ Սակայն Բեկոնի գրելու ձևը, նրա լեզուն միանգամայն հեռու յե շեքսպիրյան լեզվից, ոտար՝ վերջինի գրելու յեղանակին։ Շեքսպիրի գրչածքներում ել չի կարելի գտնել Բեկոնի լեզվին հատուկ դարձվածքներ և բնորոշ արտահայտություններ։ Ծիշտ ե, Բեկոնը նույնպես փորձել և գրել վոտանավորներ և նույնիսկ թարգմանել սաղմոսից հատվածներ, դրել և նաև ուսուպիական «Աւլանցիլաւն», բայց հենց այդ հատվածները, ավելի քան վորևել վաստաթուղթ, ապացուցում են, վոր նման լեզվով ու անպաճույն պատկերներով չի գրել Շեքսպիրը իր հոյակապ գործերը։

Բոլոր վաստերն ասում են, վոր Ֆրենսիս Բեկոնը չեղ կարող լինել և չի յեղել Շեքսպիրի գրչածքների հեղինակը։

3.

Նեխապիր - Ռյուքլանդյան ճիտօքնեզր: Ռյուքլանդը Նեխապիրը չե: Նեխապիրի դիմանկարի խնդիրը: Կիսանդրին: Գրական չար ցցանները:

Համառորեն շարունակվող վորոնումներն ու ուսումնականիրությունները ստրեղֆորդյան թեորիայի հակառակորդների կողմից հրապարակ հանեցին մի նոր հիպոթեզ, այն և, վոր շեքսպիրյան դրամաների հեղինակը կոմս Ռոջեր Մեններս Ռյուքլանդն է, վոր գրել և Շեքսպիր կեղծանունով: Այդ տեսակետը ծագեց Գերմանիայում:

Առաջին հեղինակը, վոր հանդամանորեն խոսել և Ռյուքլանդի մասին, վերագրելով նրան միմիայն կոմեդիաների և «Համլետ»ի ստեղծագործությունը, դա գերմանական գրող Ալֆորն և իր „Das neue Sakespeare-Evangelium“ («Նեխապիրյան նոր ավետարան») գրքում Ալֆորը շեքսպիրյան մյուս գործերի հեղինակ համարում և Շեքսպիրի մոտիկ ընկերներից մեկին—Սոութհեմփտոնին: Հետազայում հրաժարվելով այս հիպոթեզից, նա հրապարակ հանեց մի այլ տեսակետ: Վորպես թե այդ գրվածքների հեղինակը Ֆր. Բեկոնի կրտսեր յեղբայրն ե՝ քաղաքական գործիչ Անառն Բեկոնը, վորի թողած անավարտ վողերդությունները (1601-ին նա մեռնում է) իրը թե մշակել և հղկել և բանաստեղծ Բեն Քոնստոնը, Ալֆորի այս յերկրորդ տեսակետը հետևողներ չու-

նեցավ։ Մինչդեռ առաջինը գրավեց գերմանական մի այլ գրող՝ կ. Բլայրտը նի ուշազրությունը։ Իր «Խոկական Շեխսպիրը» գրքում նա փորձում է ապացուցել, վոր շեքսպիրյան բոլոր զրվածքների հեղինակը Ռոջեր Ռյութլանդն է, Սրան հետևեց գրականության պատմաբան բելզիացի Սելեստին Դամբլդոնը, վորը յերկու գիրք նվիրեց հարցի լուսաբանմանը։ Lord Rutland est Shakespeare և L'auteur d'Hamlet et son monde (ա. «Լորդ Ռյութլանդն և Շեխսպիրը» և բ. «Համլետի նեղինակը և նրա աօխարենք»)։

Դամբլդոնի գիրքը սենսացիոն էր, վորովհետև նրա կատարած նոր պեղումները արխիվային զրականության մեջ և հրապարակած լրացուցիչ փաստերը փորձում եյին ապացուցել, վոր Ռյութլանդի հիպոթեզը ճիշտ է։ Դա ունեցավ մի շարք հետևողներ։

Ռուսական դրականության մեջ նրան արձագանքեց 1916 թվին պրոֆ. Վ. Ֆրիչն, հատուկ հոգված նվիրեց հիպոթեզի հեղինակներին։ Ապա առանձին գրքով նա հրապարակ յեկավ 1926 թվին «Շեխսպիր» վերնագրով, ուր Ռյութլանդյան հիպոթեզի լույսի տակ վերլուծման յենթարկեց Շեքսպիրի մի շարք դրամաները։ Հատուկ գիրք և գրել «Շեխսպիրը Ռյութլանդն և վերնագրով դրականագետ Ֆ. Շիպուլինակին», վորը ամբողջովին կանգնած է Դամբլդոնի տեսակետի վրա, և այդ տեսությունն այլևս հիպոթեզ չենամարօւմ, այլ ապացուցված ճշմարտություն։ Հիպոթեզ և համարել նաև Ա. Խունաչարսկին իր ընդհանուր գրականության պատմության առաջին գրքում, վորանու նա հայտնում է այն միաբը, թե Ռյութլանդի հիպոթեզը ամենայն հավանականությամբ կհաստատվի, Յերկար ժամանակ այդ մըտքին չեր համոզվում պրոֆ. Կոգանը, ընդհանուր գրականության պատմության մի շարք գրքերի հեղինակը։ Առանձին հրապարակություն այդ մասին նա չունի։ Բայց կա նրա մի հոգվածը «Դրականության Հանրագիտարաններմ, նվիր-

ված անդլիական գրականությանը, վորտեղ մի կարճ ակնարկու հայտնում և Ռյութլանդ-Շեքսպիր տեսակետի ճշշտութելու հնարավորությունը, Հետազայում Ա. Լունաչարսկին կանգնեց հին տեսակետի վրա, լրելլայն անցնելով նոր հիմութեղի մոտով: Հրաժարվեց նրանից նույնպես Ֆրիչեն, ինչու Ռյութլանդի հիպոթեզը իրականության մոտ ելին համարում նրա կողմանիցները: Ի՞նչ փաստեր ունեյին նըստանք: Առաջին, կոմեդիաների և վողբերդությունների մեծ մասը ինքնակենսագրական առանձին մոմենտներ են պարունակում Ռյութլանդի ընտանիքի անցյալից և ներկայից, Յերկրորդ, զուգադիպությունները՝ մի կողմից Ռյութլանդի կյանքի և մյուս կողմից սոցիալ-քաղաքական դրամաների՝ բացատրվում են նրանով, վոր վերջիններիս հանճարեղ հեղինակը կանգնած և յեղնի քաղաքական խոշոր անցքերի կենտրոնում, վորպէս նրանց անմիջական մասնակիցը:

Ալֆոր-Բլայյրեյ-Դամբլոն, այս յերեք հեղինակները խոշոր աշխատանք են թափել հավաքելու փաստական տեղեկություններ, վորոնք կարծես ավելի նպատակ ունեն վարկարեկելու ստրեգֆորդցուն, քան հաստատելու Ռյութլանդի հիպոթեզը:

Ո՞վ և Ռյութլանդը,

Ռյութլանդների ընտանիքը շատ հին ծագում ունի: Նրանց նախնիքներն Անգլիա յեն յեկել ֆրանսիական նորմանդիայից Վիլհելմ Նվաճողի հետ, տասնմեկերորդ դարում, Նրանց իսկական անունը Մեններս Ռյութլանդ եւ Վերջինը իսկական անվան վրա ավելացել եւ շնորհիվ այս կալվածքի՝ «Կարմիր հող»—վոր Ռյութլանդների նախնիքը ստացել են տիրող դինաստիայից: Հետազայում (15-րդ դար) նրանք փոխադրվում են Լանկաշիրյան շրջանը, ուր տոհմական աժրոցի կարևոր անցնում եր շեքսպիրյան կենսագրության մեջ հիշատակվող հայտնի Ավոն (Ավոն) գետը: Այսաեղ ել մի դարմանալի զուգադիպություն կա: Շեքսպիրի ընկերնե-

րից մեկը, բանաստեղծ Բեն Զօնսոնը նրան անվանում է «Ավոնի քաղցր կարապ»։ բառեր, վորոնք կարող հյին հազարարապես վերաբերվել թե ստրեղֆորդում և թե Ռյուքալանդին։ Ավոն գետը անցնում և և՛ Բելֆորով՝ Լանկաշիրյան շրջանով, և՛ Ստրեղֆորդով՝ Յորքշիրյան շրջանով։ Մենաերս-Ռյուքլանդների տոհմը մի քանի անգամ հիշատակված և Շեքսպիրի գրամատիկական քրոնիկներում և կոմեդիաներից մեկում («Խնչպիս կուզեբ»)։ Այս հանգամանքը ընդգծվում և առավելապես այն պատճառով, վոր իրը Շեքսպիր-Ռյուքլանդը, ապրելով Անգլիայի ծովային մեծ պետություն գառնալու շրջանում, վոր արգասիք եր կապիտալիզմի հաստատմանը յերկրում, — իր հայրենիքի ամրացման և հետագա մեծության հնուավոր արժատները փնտռում եր արիստոկրատիայի մղած արյունոտ սլայքարի մեջ, ուր ներդրժական դեր են կատարել նաև իր ֆեոդալ նախնիքները։

Հիշատակվում ե, վոր Մենաերս-Ռյուքլանդների ամրոցը տարբերվել է մյուս ֆեոդալական ընտանիքներից իր կուլտուրականությամբ։ Ռյուքլանդները յերկրին տվել են բարձր կրթություն ստացած պետական և ղինվորական մի շարք գործիչներ։ Ուշադրության արժանի յե համարվում այն փաստը, վոր մինչդեռ զերասան Շեքսպիրի բնակարանում վորպես թե «զրքի հոտն անգամ չի յեղել», իսկական Շեքսպիր-Ռյուքլանդը իր տրամադրության տակ ունեցել և տոհմական հարուստ գրադարան։ Ամրոցի դահլիճները դարձարված եյին Ռենեսանսի շրջանի թանգագին յուղաներկ նկարներով։ Նկարների թիվը հավասար է յեղել ե 250-ի, վորոնց շարքում փայլել են մեծ նկարիչների կտավները, ինչպես Ռուբենսի, Կորրեջիոյի, Վան Դեյկի, Ռեմբրանդի, Ռյուքերի, Մուռիլիսյի, Պուսենի, Բասսանոյի և ուրիշների։

Շեքսպիրյան պրոբլեմի շուրջը յեղած հսկայական գրականությունը ուսումնասիրելիս շատ հաճախ հանդիպում ենք այն առարկության, թե ինչու վումանք ճգնում են ապացու-

ցել, թե Շեքսպիրը անպայման սեփական գրադարան ու պատկերասրան ունեցող ամրոցում ծնված արիստոկրատ պետք և յեղած լինի և չեն կամենում ընդունել, վոր հանճարեղ գրամաների հեղինակը կարող եր լինել դեմոկրատական ժագումով մեկը։ Այս հարցը դրվել է նաև ոռու մարքսիստ գրականագետների կողմից։

Անկասկած տարորինակ վոչինչ չկա, վոր Շեքսպիրը միջին խավերից յելած լինի (առևտրական կամ մանր ազնվականության), մանավանդ վոր անգլիական այդ մեծ գրողը ապրել և առևտրական կապիտալիզմի վերելքի հատպում և ունեցել տնօման երջանի (գտնվելով արիստոկրատական տակավին հղոր տրագիցիաների ազգեցության տակ) համապատասխան գտղափարախոսություն։ Տեղին և այստեղ հիշել վոր Մառլոն և Լիլին, յերկուսն ել շեքսպիրյան շրջանի տաղանդավոր գրամատուրդներ, յեղել են՝ առաջինը կոշկակարի վորդի, յերկորդը — պանդոկապետի։

Ծյութլանդի կողմնակիցները մանրամասն կանդ են առանում նրա կենսագրականի վրա, խնամքով հավաքում փառամերը և զուգազրում շեքսպիրյան գրամաներում պատկերված անցքերին և յերեսույթներին,

Ծոջեր Ծյութլանդը ծնվել և 1576 թվին Բելվուար տմրոցում, վոր գտնվում եր պատմական Շերվուդյան անտառում։ Կենսագրիները պնդում են, վոր Ծյութլանդ-Շեքսպիրի մանկությունը անց ե կացել այդ անտառում, ծաղկավետ բնության մեջ, «Ձննասեր, տպագործող մանկան վրա անջնջելի տուալորություն և թողել գեղեցիկ շրջակայքը»։ Այս բնորոշումով, իհարկե, վոչինչ չե փոխվում Շեքսպիրի կենսագրության մեջ, վորովհետև մանկական տպագործությունների մասին նույնը կարելի յե ասել նաև Մարեղֆորդում ծնված Վիլիամ Շեքսպիրի վերաբերյալ։

Ամբողի շուրջն ընկած գյուղերի կյանքը ընդհանուր առումով ծանոթ ե յեղել Ռյութլանդին, Նրա կենսագիրները կարծում են, թե այդ գյուղերը և նրանց մեջ պտավող հեքիաթներն ու զրույցները հարստացրել են Նրա ստեղծագործական ֆանտազիան, Նույնը ավելի մեծ չափով կարելի յե ասել Ստրեղֆորդում ծնված պատանի Շեքսպիրի մասին:

Տասնյերկու տարեկան հասակում Ռյութլանդին ուղարկում են Քեմբրիջ, Նախ գիմնազիայում, ապա համալսարանում ուսանելու Ավարտելով գիմնազիան, Նա մտնում է համալսարան, վորը չորս տարուց հետո ավարտում ե, ստանալով «արվեստի մագիստրոսի» տիտղոսը (magister artium), ինչպես սովորաբար ստանում եյին շրջանավարտները, Այդ գիտությունը նա բավարար չհամարելով, մտնում ե Ռքորդի համալսարանը և ավարտում իրրե իրավաբան,

Ռյութլանդը ավարտելով Քեմբրիջի համալսարանը, դուրս ե գալիս ճանապարհորդության (ինչպես մեծ մասամբ անում եյին ժամանակի արխատոկրատ յերիտասարդները). ունենալով նպատակ շարունակելու բարձր ուսումը, այցելում ե Ֆրանսիա և Իտալիա: Սակայն հիմանդրանով մալարիայով, վերադառնում հայրենիք, ճանապարհորդությունը տեսում ե մի տարի: Պազուայում նա հաճախում է տեղական համալսարանը 1596 թվին: Ուսումնասիրում ե փելլիսոփայություն, կատարելագործվում ֆրանսերենն և իտալերեն լեզուների մեջ: Վերադառնալով Լոնդոն, նա ընկնում է կոմս Շատերքսի կուսակցության ազգեցության տակ, վորի նպատակն եր խլել իշխանությունը Յեղիսարեթի կիսարութուական մինիստրներից և տեղը հաստատել հին Փետդալական ազնվականության ներկայացուցիչներին: Ռյութլանդը իր մտերիմ ընկեր Սոուահնեմպտոնի հետ մասնակցում է Յասեքսի ապատամբությանը, դուրս ե գալիս հրապարակ զենքը ձեռքին՝ հարյուրավոր ապատամբների հետ միասին:

Ապստամբությունը, ինչողես հայտնի յե, ծանր պարտություն կը եց, Կոմս Եսսեքսը գլխատվեց, իսկ Ռյութլանդը ներում ստանալով դատապարտվեց բանտարկության՝ իր յերիտասարդ կնոջ հետ միասին Տոռերի ամբոցում։ Յեղիսարեթի մահից հետո Հակոբ I-ը Ռյութլանդին ազատեց բանտից։

Ռյութլանդականներից վոմանք ավելի հեռուն են գնում։ Նրանք պնդում են, վոր ընտանիկան շրջանակում Ռյութլանդները ներքին գժողովություն եյին ապրում, Բանտից դուրս գալով Ռյութլանդը ապրում եր առանձնացած և արդեն հիվանդ։ Առաջնության իրավունքը բռնի ույժով խլելու համար վոճարագործ աղօքականը—նրա հորյեղբոր վորդին, վորդիս թե սպանել ե թե Ռյութլանդին և թե նրա յերիտասարդ կնոջը, վորը նույնպես մասն ե ունեցել քաղաքական անցուղարձի մեջ։ Վոճիրը տեղի յե ունեցել 1612 թվին։ Այժմյան Ռյութլանդների տոհմը վորպես թե սկիզբ ե տոել այդ վոճարագործ Ռյութլանդից։ Նույն ավյալների հիման վրա իրրե թե Ռյութլանդի մահից հետո «ստրեղֆորդցի վաշխառու և դերասան Վիլիամ Շեքսպիրը» Ռյութլանդների կողմից խոշոր վարձատրություն և ստացել կենդանի պահելու համար այն լեզենդը, թե շեքսպիրյան բոլոր գրվածքների հեղինակը ինքն ե, այսինքն իսկական Շեքսպիրը։ Բայց այդ այդ նրանք, Ռյութլանդները, իրը հայտարարում են, վոր վոչ վոքի չեն թույլ տա մոտենալու Ռյութլանդ-Շեքսպիրի ձեռագրներին և նամակներին (յերեկ այն պատճառվ, վոր վոչինչ չկա այդ արխիվում...)։ Չնայած այդ ամենին՝ Ռյութլանդի և նրա կնոջ պատկերները մինչև այժմ ել կախ են արված ամբոցի ամենապատվավոր տեղում։ Այդ հիպոթեզի կողմնակիցները պնդում են, թե Ռյութլանդը պարծանքի առարկա յե ամբողջ ընտանիքի և նրա հետագա սերունդների համար։

Նախորդ եջերում մենք արդեն առիթ ունեցանք ընդուժելու, վոր համաշխարհային հոչակ զայելող դրամատուրց պից վոչ մի ձեռագիր չե մնացել Կան յենթաղբաղներ, վոր շեքսպիրյան դարավոր գաղտնիքի բանալին գուցե մինչև հիմա յել պահված և Ռյութլանդների այժմյան պնդաճակատ հետնորդների գաղտնաբանում, Գուցե և «Համլետ», Շիրելլուի և այլ տասնյակ դրամաների ձեռագիր որինակները գտնվում են այդ գաղտնաբանում, վորոնք իրենց վրա կրում են վոճրագործի ձեռքով ընկած պոետի և նրա կնոջ արյան գարավոր հետքերը... և այլն և այլն:

Այս ամենից հետո հարց և առաջ զալիս, թե ինչու Ռյութլանդ—«Ենքսպիրը» պետք և աշխատեր ծածկել իր անունը, ի միջի այլոց, Ռյութլանդի կողմնակիցները հետեւյալ բացատրությունն են տալիս, Վորոյես թե արիստոկրատ գրողները, նույնիսկ հումանիզմի դարաշրջանում, իրենց սեփական անունով հրապարակ չեյին դալիս, մանավանդ դրամաներում կեղծանունով կամ անանուն հանդիս զալը դրականության մեջ և թատրոնում սովորական յերևույթ եր: Հայտնի յե, վոր պրոֆեսիոնալ գրող համարվելը ամութալի դործ եր արիստոկրատների ահսակետից: Մանավանդ հօնուրաբով ապրելու փաստը Միջնադարից մնացած այս վայրենի «արիստոկրատիզմը» շարունակում եր պահպանել իր գոյությունը իրրե հասարակական կարծիք, «Բանասանեղծներն ու բանաստեղծությունը,—ասում ե անզիական մի գրող իր գրքում (գրված 1589 թվին)—Պետտիննեմ կեղծանվան տակ թագնված, —արհամարհված են արիստոկրատուկան միջաւայընվում, պոետ բաւն արգեն ստորացուցիչ և համարվում:

«Ի՞նձ անձամբ հայտնի յեն շատ աղնվականներ,—շարունակում ե նա, —պալատականներից, վորոնք գրել են ուշադրության արժանի բանաստեղծական գործեր, սակայն կամ չեն տպագրել գրվածքները, կամ տպագրել են առանց հեղինակի անվան: կարծես դիտնական և արվեստ

սիրող լինելը խայտառակություն և ազնվականի համար, Մեր թագուհու եպոխայում (Յեղիսաբեթի) շատ կան աղոնվականներ—noblemen և gentileman—հենց նրա պալատում, վորոնք դրել են գեղեցիկ բաներ, և դա կպարզվեր, յեթե նրանց ստիլագործությունները դուրս հանվեյին և տպագրվեյին մյուսների հետ միասին» (Վ. Ֆրիչ, «Նեխապիր», 1926):

Այնքան «արհամարհական եր բանաստեղծ անունը», վոր նա պալատական արիստոկրատին կարող եր վարկարեկել և, ժամանակի բանաստեղծներից մեկի վկայությամբ, իրը խոչնորա լինել պետական բարձր պաշտոն ստանալու, Յեղ գրողներն ու գրամատուրգները (արիստոկրատներից) իրենց գործի տպագրությունը կամ պիեսի թևմագրությունը հանձնում ենին այդ ասպարեզների հետ վորեն տոնչություն ունեցող մարդկանց (յերկրորդական գրող կամ դերասան), վտրաձարում նրանց, հաճախ նրանց անունը հիմք ընդունելով իրենց կեղծանվան համարու Բայց դա կատարվում երայնողիս, վոր անվան կեղծ լինելը նկատելի մնա:

Եեքսոլիքի նախորդներից մեկը՝ անողիական գրող Գրինն ասում է. «Կան մարդիկ, վորոնք շնորհիվ իրենց հասարակական բարձր դիրքի և արժանիքի, չեն ստորագրում դրվածքները սեփական անունով: Նրանք համաձայնության են գալիս վորեն մի բթամիտ Բատիլի հետ (անտաղանդ պրետի անուն հռոմեյական բանաստեղծ Կատուլի վոտանավորի մեջ), վորպեսզի սա ստորագրի այդ վոտանավորները իր անունով. Այսօլիսով եշը դառնում է ինքնահավան, և նույնիսկ անգլիերենն կարգին գրել չիմանալով, ուղում և անպատճառ ինտերմեդիայի հայր հորջորջվել» (Վ. Ֆրիչ, «Նույն տեղ»):

Նույն անողիական արիստոկրատիայից և ծագել նրանությանը՝ Հետեւաբար այդ բանաստեղծ-գրամատուրգի կենգանության որով լույս տեսած դրվածքների վրա յեղել ե-

նրա կեղծանունը. այդ կեղծանունը դրված և անջատ այսպես—Shake-Spearer. Նույն ձևով և գրված 1623-ի լիակատար ժողովածուի վրա պոետի գրական կեղծանունը՝ Սարեդֆորդցու, «Գլորեի «կիսակիրթ դերասանի» անուն»: ու ազգանունը վոչ մի դոկումենտի վրա այդպես չեն գրած...

Յեթե այս բոլորին ավելացնենք այն քաղաքական պատճառները, վորոնց վրա շեշտում են ոյութլանդյան հիմութեղի կողմանակիցները, և վորոնց հիման վրա նստեքսի ապստամբությանը մասնակցած Ռյութլանդի գրվածքները, մանավանդ նրա քաղաքական պամֆլետը, իրը առիթ եյին դարձել վոստիկանական հալածանքի, ապա միանգամայն պարզ կլինի, թե «ինչու արիստոկրատ գրող և քաղաքական հանցանքի մեջ բռնված Ռոջեր Ռյութլանդը պետք է կեղծանունով հանդիս գար թե գրականության մեջ և թե թատրոնում»:

Ռյութլանդ-Շեքսպիրի քնարը, ասում են նրա կողմանակիցները, պետք և լոեր բանաստեղծի մահվան որից, այն և՝ 1612 թվին: Սարեդֆորդցու մասին գրված հատորների մեջ գիտնականները ուզեղ են մաշել գտնելու նրա չորս տարվա «լրության» գաղտնիքը. Այդ ըգաղտնիքը, այժմ գտնված եւ: Սարեդֆորդցին վոչ մի «առնչություն չի ունեցել» շեքսպիրյան ստեղծագործությանը. իր կյանքի վերջին չորս տարին (1612—1616) նա ապրել և այնպես, ինչպես մինչև այդ, այսինքն վոչինչ չգրելով:

Յեթե արիստոկրատաների կողմից այդ աստիճան արհամարհված եր բանաստեղծությամբ կամ հատկապես դրամատուրգիայով դրադվելը, ապա ինչմու լավագույն գրողներն ու դրամատուրգները (նույն և ազնվական բանաստեղծները) հարգանք և պատիվ եյին վայելում հասարակության մեջ, ինքը Յեղիսաբեթ թագուհին պարապում եր գրականությամբ, իսկ համալսարաններում (Քեմբրիջ, Ոքսֆորդ) առանձին յեռանդով սովորում եյին վոտանավոր դրելու

տեխնիկան, Կարելի՞ յև հավատաւ, վոր արհամարհված արվեստը ժողովրդականություն վայելեր և զարգացման փայլուն շրջան ունենար, Դուցե ճշմարտությունը այդ ամենի մեջ այն է, վոր արհատովկրատ գրողի համար ամոթալի յեր հոնորարով ապրելը, Կեղծանունով գրելը կարող է յերկու դրդապատճառ ունենալ. առաջին՝ քաղաքական, հասարակական և կենցաղային, յերկրորդ՝ անընդունակությունը քողարկելու միջոց:

Անուն վասարակած գրողը այլևս կարիք չունի ծածկելու իր իսկական գեմքը, թեկուղ շարունակի գործածել ծածկանունը: Յեվ դա հասրավոր ել չե, Վիլիամ Շեքսպիրը կամ նա, ով գրել է շեքսպիրյան դրամաները, դառնալով լոնդոնի հասարակության ուշադրության կենտրոն, նաև պալատին հայտնի թե իրքն գերասան և թե դրամատուրգ, կարիք ուներ և կարմղ եր թագցնել իր ով լինելը լայն հասարակությունից կամ պալատից:

Մանավանդ սոցիալական, քաղաքական կյանքում ակտիվ գրողը, կենդանի և առաջադեմ արվեստագետ քաղաքացին թերևս անպատվարեր համարեր թագնվել ուրիշների թիկունքի հետեւ:

Հարց է առաջանում. յեթե Ռյութլանդը մերկացված իր իրքն քաղաքական ապստամբ և դատապարտված իրքն պետական դավաճան, ինչ արժեք ուներ նրա դրական անվան դիմակավորումը: Վժըն եր կառավարության համար անհանդուրժելի. ապստամբ հեղինակի մերկացված սմերը իշխանության գեմ, թե նրա պատմական-դրամատիկական գեղարվեստական գործերը (այս գեղքում «Ռիշարդ յինգորդ»), վորոնց միշտ կարելի յեր որյեկտիվ մեկնաբանություն տալ, Զալետք է այնքան միամիտ կարծել Յեղիսարեթի մինիստրներին ու վոստիկաններին, վորոնց իրքեւ կարելի յեր խարել այն մանկամիտ հայտարարությամբ, թե այս-ինչ պիեսների հեղինակը յես չեմ, այլ այս-ինչ կե-

սապրագետ գերասանը, մսագործի, կաշեգործի վաշխառու վորդին։ Յեթե Յեղիսարեթի կառավարությունը հանցանքի վորևե տարր գտներ շեքսպիրյան գրական գործերի մեջ, նա անկասկած մեղադրականի մեջ արժանի տեղ կատկաց ներ նրան։ Մինչդեռ այդպիսի բան տեղի չեւ ունեցել։

Ենդ վերջապես, յեթե Ռյութլանդն եւ Շեքսպիրը, ինչը Հակոբ I-ի ժամանակ նա պետք եւ կոնսպիրատիվ ֆար իրքն գեղարվեստական գրող, յերբ նրա շնորհիլ եւ բանտից ազատվել ու արժանացել թագավորի հատուկ պարգևներին, Դանիա ուղարկվող պատվիրակության գլուխ նշանակվել, ապա պետական պատվավոր պաշտոն ստացել։ և ինչը հենց այդ ազատ ու անկախ տարիներում նա պետք եւ արտապրեր իր ամենապեսսիմիշտական վորդերգությունները և ինչը հատկապես իր հովանափոր Հակոբ թագավորից գաղտնի։

Ռյութլանդի հիպոթեզի կողմնակիցները գտնում են, վոր իրը նրա մի շարք վազրերգություններն ու կոմեդիաները արդյունք են նրա ճանապարհորդության և ստացած անմիջական տպավորությունների, «Յերկու Վետոնացիի», «Ռումեն և Զուլիս», «Անսանձի սանձահարում» ը, «Վենետիկի վանառականը» պատկերացնում են իտալական քաղաքների ու միջազայրի հատուկ կոլորիտը Պիեսների մեջ մանրամասներ կան՝ տեղագրական, հասարակական, առանձին դեմքեր, վորոնք վերարտադրվել կարող ելին, ըստ նույն տեսակետի, միմիայն ականատես հեղինակի կողմից։ Այս տեղ մուսացվում է, վոր Շեքսպիրը իր բոլոր կոմեդիաների և դրամաների այտում կերպը եւ հայտնի աղբյուրներից, ուր ե՛ տեղագրություն կա ե՛ կոլորիտ։ և այդ ամենի հետ գրողի ստեղծագործական բարձր յերեակայությունը։

Պազուայի համալսարանում ուսանող ժամանակ Ռյութլանդը հանդիպում է յերկու դանեմարքացի ուսանողների՝ Ռոդենկրանց և Գիլդենշտերն անունով։ «Համլիս»ի մեջ ճիշտ նույն անուններով են հանդես բերված այդ յերկու դեմքե-

բը, վորոնք, ինչպես հայտնի յե, չար մտադրությամբ եյին տողորված Համլետի վերաբերմամբ՝ վերջինիս խորթ հոր դադանի հանձնարարությամբ Դրա բացատրությունը կարող ե շատ հասարակ լինել: Շեքսպիրը շրջապատված եր արխառուկրատ համակրողներով ու հովանավորներով, դրանցից մեկն՝ եր Ռյութլանդը: Շատ ճանապարհորդած մարդուց շատ պատմություններ եր լսում Շեքսպիրը. և մարդկանց անուններ, և սովորությունների նկարագրություն, և արևիածններ, և այդ ամենը ոգտագործում կոմեդիանների ու դրամանների համար:

ՄԲԹԵ ՀՆԱՐԺՎՈՐ ՀԵՐ ՊԱ:

Այսուամենայնիվ արդարությունը պահանջում և առել վոր այդ տեսակետի մեր մարդասիստ կողմնակիցները, շատ հավանական համարելով Ռյութլանդին իրեւ շեքսպիրյան զրվածքների հեղինակ, հայտնել են այն միտքը, թե այդ հիպոթեզը գեռմա կարոտ և ավելի հաստատուն և անվիճելի տվյալների:

Այդ հիպոթեզի հեղինակներին մի այլ հիմնական հարց և տրմում. կարող եր Ռոջեր Ռյութլանդը, վոր մեռել և 36 տարեկան հասակում, լինել հեղինակ շեքսպիրյան վողբերգությունների և կոմեդիանների, Հակառակիորդները պարզապես պատասխանում են, վոր Ռյութլանդների ընտանիքում այդպիսի գրող լինելու մասին վոչ մի տեղեկություն չկա:

Ռյութլանդը 14-15 տարեկան եր, յերբ Շեքսպիրի առաջին դործերը արդեն հրապարակի վրա եյին, Ռւբենս Թում և յենթադրել, վոր առաջին վողբերգությունը նա (յեթե Ռյութլանդն և Շեքսպիրը) գրել և մանուկ հասակում և քսան տարվա ընթացքում՝ 37 պիես, 2 պլան և 154 սոնետ Յեթե այդպես և, ապա Ռյութլանդը աշակերտ ժամանակ գրել և մի շարք վողբերգություններ, կոմեդիաններ, սիրային սոնետաններ, յերկու պատմ, յեղել և «Գլոբուլա» թատրոնի գեղարվեստական մատակարարը, և տարորինակ կեր-

պով անհայտ մնացել իրքն գրող իր դպրոցական ընկերներին ու մանկավարժներին:

Իյութլանդի հիպոթեզը ճեղքվածքներ շատ ունի, նման յերևույթների առաջացումը շեքսպիրագիտության բնագավառում արդյունք և այն խոշոր բացերի, վոր ունի Վիլիամ Շեքսպիրի կենսագրությունը: Այդ բացերից մնկը ուրիշի ձեռքով ստորագրված կտակն ու մի շարք այլ գործարքային փաստաթղթեր են, վորոնք չեն համապատասխանում նրա հոգեկան-մտավոր բարձր մակարդակին ու սոցիալ-ետիքական հոգեկացողություններին:

Ցեղ քանի Շեքսպիրի կենսագրությունը, ավելի ճիշտ նրա ստեղծագործության կենսագրականը կմնա իր ներկա բացերով, շեքսպիրյան գործերի ծագման և հեղինակության հարցերի ուսումնասիրությունը կշարունակի իր ընթացքը, յերեմին-յերբեմն նոր հիպոթեզներ առաջ բերելով:

Մեծ գրականություն և ստեղծվել նաև Շեքսպիրի դիմանկարի շուրջը, Այնպես, ինչպես գյություն չունի նրա վորենե ձեռագիր գրվածքը, չկա նաև նրա պատկերը: Այն ժամանակ, յերբ վերածնության փայլուն շրջան ապրող անպլիական բուրժուազիան և բուրժուականացող ազնվականությունը կենցաղային անհրաժեշտություն եր համարում կտավի վրա տնմանացած տեսնել իր դիմանկարը հայտնի վարպետ նկարիչների ձեռքով, դարի ամենամեծ գրողը չի թողել իր պատկերը: Ժամանակի շատ զրոյների, դիմանականների պատկերները հասել են մեզ, բայց Շեքսպիրի պատկերը չկա: Բնական ե, վոր նման պայմաններում նետագա դարերում լույս ընկած բազմաթիվ «շեքսպիրյան» պատկերները կասկած հարուցելին: Շեքսպիրին վերագրվող դիմանկարները շատ են, բայց նրանք իրար նման չեն: Կատածի յէ յենթարկվում նույնիսկ գերեզմանի վրա դրված

կիսարձանը: Կան տվյալներ, վոր հարուստ ժառանգություն ստացած աղջկներն ու փեսաները անհրաժեշտ են համարել կանգնեցնել հոր կիսանդրին, բայց այդ կիսարձանը նույն դարի (17-րդ) 60—70-ական թվականներին հանվել և փոխարենը դրվել ուրիշը: Ի՞նչ արձան ե յեղել դա: 60-ական թվականներին (17-րդ դարի) Սարեղֆորդի ուշադրության արժանի զայրերը արձանագրող մի հեղինակ, այդ կիսանդրին ընդորինակել և տպադրել ե իր գրքում: Կիսանդրին հիշեցնում ե այն պրոֆեսիան, վորով զրադվել և Զոն-Շեքսպիրը (հայրը), — այն և մար և բրդի առևտուրը: Կիսանդրին իր առջև ունի բրդով լի պարկ, յերկու ձեռքը դրած պարկի մրաս, նույն դարի 60-ական թվականներին դրված նոր կիսանդրին նույն դիրքը պահպանել ե, բայց արդեն պարագաները փոխված: — պարկով լի բրդի փոխարեն դրված ե յերկար բարձ, վորի վրա Շեքսպիրը բռնել և մի ձեռքում գրիչ, մյուսում՝ թուղթ: Բայց ինչ ե ներկայացնում նոր կիսանդրին իր դեմքի արտահայտությամբ:

Լսենք արադիցիոն Շեքսպիրի կողմանակից Ս. Վենդերովին:

«Սարեղֆորդյան կիսանդրին, — ասում ե նա, — ներկայացնում ե խիստ պիհնդ կաղմվածքով մարդու գլուխ՝ ուռած և կախ ընկած դեմքի բութ արտահայտությամբ, մի կիսանդրի, վոր ավելի կսազեր Թալլուտաֆին»:

Թեպետ Ս. Վենդերովը հնուու յե կիսանդրու իսկությունը ժխտելու մտքից, սակայն պարզ և մի բան, վոր այդ կիսանդրին դրամատուրգ Շեքսպիրինը չե:

Մեծ դրամատուրգի և պոետի գործերի առաջին հրատարակությունը ինչպես վերն ասացինք, տեղի յե ունեցել 1623-ին in folio, պոետի ընկերների ձեռքով, նրա մահվանից 6—7 տարի հետո: Այդ հրատարակության մեջ զետեղված ե հեղինակի պատկերը բանաստեղծ Բեն Զոնսոնի մի վոտանազորի հետ միասին: Պատկերը գրավյուր ե, փորա-

գրողի անունը՝ Դրոյշհութ (Droishout): Վոտանավորի մեջ Զոնսոնը հայտնում է, վոր պատի գիմագծերը նկարիչը տվել է ճիշտ: Սակայն վոտանավորն ունի յերկմիտ տողեր, վոր սախում և ընթերցողին մտածելու բեն Զոնսոնն ասում է. «Այս պատկերը, վոր դու տեսնում ես այստեղ, փորագրված և ազնիվ Շեքսպիրի համար, Փորագրողը պայքարել և ընության հետ՝ դուքս գալու համար կյանքի շրջանակից»: Ճիթե նա կարողանար նույնչափ լավ նկարել պղնձի վրա նրա հոգին, ինչպես կարողացել և թագցնել նրա դեմքը, այն ժամանակ պատկերվածը կգերազանցեր այն ամենին, ինչ յերբեքց փորագրված է յեղել պղնձի վրա: Բայց վորովնեան նա չի կարողացել այդ անել, առաջ, ընթերցող, նայիր դու վոչ թե պատկերին, այլ նրա դրքին: Ինչու Բեն Զոնսոնը ընդգծում և փորագրիչ Դրոյշհութի շնորհքը, վորով նա կարողացել և «թագցնել բանաստեղծի գեմքը»: Փորադրող նկարիչն անգամ, կարծես, ոմենի ջանք գործ է դրել վարպետորեն «թագցնելու համար բանաստեղծի գեմքը», տալով միաժամանակ նրա «պատկերը»: Պոետ Բեն Զոնսոնը, Շեքսպիրի ընկերը, ինքը ևս իր վոտանավորի մեջ պարզ ակնարկ և անում մի «զարդարիք» մասին, վոր խորհրդագոր և և յենթակա չե հրապարակման: Մի բան պարզ է, վոր Դրոյշյութը Շեքսպիրի պատկերը փորագրել է, առնելով նրա դիմեր դիմակի տակ: Ենթանի արտացոլված են միմյայն գրամատուրդի աշքերը, մասցածը կարծես արհեստական և և անկյանք: Յենթագրվում է, վոր զա գերասանական հասարակ դիմակ և, սովորաբար հին-հունական և շեքսպիրյան թատրոններում գործածվող Շատ հավանական և, այդ ամենի պատճառը լինի այն, վոր Շեքսպիրի պատկերը նկարված չե յեղել:

Կիսանդրու տակ դետեղված և այն արձանագրությունը, վորով գրվածքում և մեծ մարդու նեստորյան իմաս-

տությունը, սոկրատյան հանճարը, վիրդիլյան արվեստը, Արձանագրության առաջին տողերը լատիներեն են.

Judicio Pyllium,
Genio Socratem,
Arte Maronem,
Terra tegit.
Populus maeret,
Olympus habet.

(Խմասառությամբ Պիլլիուս (Նեստոր), հանճարով Սոկրատ, արվեստով Վիրդիլիոս, (վորին) հողը ծածկում է, ժողովուրդը վաղբում, Վալիմայը ընդունում),

Հին կենսադիրները հայտարարում են, զոր կեսանորին զրված և գերեզմանի վրա 1623-ին:

Այսպես՝ չկա Շեքսպիրի լրիվ, վերջնականապես մշակված, ճանաշջած, ճշտված կենսադրականը, չկա պատկերը, չկա արձանը, չկա ձեռապիրը, բայց կան մեծագույն գրողի հանճարեղ գործերը:

Անցնենք նրա գրական կոնկրետ գործունեյությանը:

Առաջին շրջանում (1590—1595) Շեքսպիրը առավելապես զրադիել և փոխադրություններով և նմանողությամբ զրելով: Դա ընդհանուր յերևույթ եր շեքսպիրյան եպիխայում: Ընդունված եր պատրաստ սյուժեներ մշակելը: Միևնույն սյուժեն կարող եյին մշակել դանապան սրությունը և պրոզները: Ռեքիշների նման Շեքսպիրն ել ոգուվել և այդ իրավունքից և ժամանակակից զրողների սյուժեները սպառագործել: Հաջանական ե, սա յեղել և նրա ստեղծագործական շնորհքի դարզացման, զրական կուլտուրայի բարձրացման և մանավանդ վորոնութերի առաջին շրջանը: Այս շրջանի Շեքսպիրը մեծ մասամբ նախորդների աղղեցությունն և կրել: Այս շրջանի դրամաները—պատմական քրոնիկները

արյունային են ամբողջովին, ուր տակալիին ձեռքեր են կտրատում, լեզուներ պոկում, արյան լճակ դարձնում ընմը:

Շեքսպիրի գրականը այս պիեսներում կենդանի հոսանք մտցնելու փորձն ե. Նրանց մեջ վորոշ տեղ և գրավում նաև ժողովրդական տարրը, հասարակ զինվորների գրույցը, այլ և գործողությունը պալատից զինետուն, քաղաքից պահերազմի դաշտ փոխադրելու աջող փորձը:

Յերկրորդ շրջանի պիեսները ընդպրկում են 1595—1601 թ. թ. Այս շրջանում Շեքսպիրի տաղանդը հասնում է զարգացման բարձր աստիճանի Նրա ստեղծագործությունը անկախ և և ինքնուրույն թեպետ նա այստեղ ել ոգտվում և պատրաստ բազմազան սյուժեներից, բայց նրանց մեջ նա այնպիսի խորություն և մտցնում, վոր գրվածքը դառնում և մարմնացում կենդանի իրականության Բնորոշը գրական գործունեյության այս շրջանի՝ նրա մի շարք կոմեդիաներն են, վարոնք համակված են վերածնության եպոխայի կայտառ արամագրությամբ: Ծոմանտիզմ, համարձակ յերևակայություն, կենսուրախ փիլիսոփայություն, լիրիզմ, սրամտություն, գեղանկար պատկերավորություն, ստեղծագործական չնորհքի լայն թափ, ահա այդ պիեսների դիմավոր տարրերը: Հեղինակի հայացքը իրականության վրա տակավին աղատ և թեթև և, կյանքի բազմակողմանի փորձը բացակայում ե: Սակայն կոմեդիաներում վերարտադրված միջավայրը միանգամայն ներդաշնակ և եպօխային, ժամանակին: Անշուշտ, յերկրորդ շրջանի այս բնորոշումը մենք չենք անում բացարձակ իմաստով: Շեքսպիրը, չնայելով իր յերիտասարդ հասակին, կյանքի յերևույթների նկատմամբ միակողմանի տեսակետ չի ունեցել: Այս շրջանի գործերի մեջ մենք արդեն գտնում ենք վողբերգության շատ լուրջ տարրեր, վարոնք գալիս են հնչեցնելու բեմից կյանքի տիսուր ձայները: Այդպիսի ցնցող վողբերգություններից առաջինն ե նրա «Երամե» և Զուլիետը, վոր գրել և Շեքսպիրը 21 տա-

ըեկան հասակում (Ռյութլանդը գրած պիտի լիներ 15 տարեկան հասակում), Մի կողմից՝ սիրահարված պատանի զույգի կյանքի յերջանիկ մոժենտներն են ներկայացված՝ հեղինակի վերապրած բարձր տրամադրությամբ, սերը արտահայտված բուռն ու անխառն, աղատ ամեն նախապաշար-մունքից, ազատ՝ ցեղական, տոհմային, ընտանեկան հաշիվ-ներից և պատրաստ ամեն զոհաբերության։ Մյուս կողմից՝ սպանիչ արդելքներ թշնամի ընտանիքների կողմից, անհաղթելի և անողոք, Յեվլ մեռնում են յերկու ջանելները հասարակական վայրենի կազմակերպության հասցրած հարվածների տակ, մեռնում են կարոտով ու տանջանքով։

Այստեղից արդեն սկիզբ ե առնում Շեքսպիրի հոռեանությունը, վոր հետագա տարիներում քաղաքական և սոցիալական յերևույթների աղղեցության տակ ավելի խորանում եւ

Այդ յերրորդ շրջանն ե, վոր ընդգրկում ե մոտավորապես 1601—1609 թիվը։ Շեքսպիրի գրական գործունեյության այս տասնամյակը ամենաբեղմնավորն ե բոլոր շըրջաններից։ Նրա ստեղծագործական յեռանդը հասել ե գերադայն լարման և տվել հանձին հոգեբանական մեծ վողքերոգությունների գեղարվեստական ռեալիզմի սքանչելի նմուշներ, «Համետ», «Ռիբլո», «Մակբեր», «Լիր արքա»—այս շըրջանի գործեր են, վորոնք դեռ ևս չեն գերազանցված համաշխարհային անցյալ գրականության մեջ։ Շեքսպիրը հանճարեղ թափով խորասուզվել, թափանցել ե իր ժամանակի մարդու (գերազանցապես իրեն հարազատ դասակարգի) հոգու խորքերը, դիտել ու անդրադարձել ներքին հուզական աշխարհը, կրքերի և արտաքին ազդակների շնորհիվ տեղի ունեցող ընդհարումներն ու հետևանքները և իր ստեղծագործական բուռն եներգիայի ույժով ընդունակ գարձել կազմակերպելու հասարակական հույզերն ու մտքերը, նույն այդ շրջանի գործերի մեջ ար-

տացոլվել և վերածնության եպոխայի քննադատական գերաբերմունքն ու սկեպտիկ, հռոի տրամադրությունը, վորը անկասկած արգասիք և բանաստեղծի արխատոկրատամբու վերաբերմունքին դեպի համառորեն առաջացող նոր դասակարգը, դասակարգ՝ դրամի ու կշեռքի հաղթական զենքերով։ Կյանքը, ըստ Շեքսպիրի, ունի ծաղիկներ, վորի մեջ փեր կան թագնլած, ունի քաղցրություն, վոր թունավոր տարրեր և պարունակում իր մեջ, «Դանիան բանտ ե», դա նշանակում է վորդ աշխարհը բանտ ե, վորովհետեւ վատ են կարգերը, հարկավոր և փոխել այդ կարգերը, թշվառ են մարդիկ և այլն և այլն։

Չորրորդ օրջանը 1609—1612 թիվն եւ Կյանքի պայմարից ու քաղաքական ընդհարումներից հոգնած, շատ հաւաքառությունների հետ հաշտված, Շեքսպիրը պատրաստվում է հեռանալ կյանքից։ Այդ շրջանի զործերը ներկայացնում են մի տեսակ սինթեզ լավատես և հոռետես շրջանների։ Բայց նաև քան հեռանալը կարծես նա կամենում է թողնել մի կտակ. այդ կտակը նրա «Փորորիկ» եւ Միթթարանք կյանքի սարսափների հանդեպ, հանգստացնող որոր և յերաժշգառություն, նա իրեն զիշեր և համարում, անցնող ստվեր, և ապագա կյանքի համար որհնում և նոր յերիտասարդ զույգին։ Զգալով անժամանակ, բայց իր մոտալուս վախճանը, նա նույն «Փորորիկ» ֆեյերիայում սոցիալ-ռուտոպիան կան մտքեր և արտահայտում, ապա թաղում և իր «մողական» գավաղանը, այսինքն ստեղծադործական հանճարը, «զիտության գիրքը» նետում ծովի անդունդն ու դրանով աշխարտած համարում իր ստեղծադործական կյանքի ուղին։

4

Շեխապիրի նախորդները և ժամանակակիցները: Զօն Լիլլի:
Թումաս Քիլ: Ռոբերտ Գրին: Թումաս Նեթ: Գրիսոսֆեր Մառլո:
Շեխապիրի «Վեներա» և Աղոնիս: «Լուկրեցիա» պահմ-
ները: — Սոնիսները:

Գեղարվեստական մի խոշոր հանճար, վորպիսին եր
Շեքսպիրը, ունեցել է նախորդներ, Հնարավմբը և պատկե-
րացնել մի այնպիսի գրություն, վոր հանճարեղ գրողը ա-
նած, հզորացած լինի պրական-թատերական ամայության
մեջ, իհարկե, վոչ: Շեքսպիրը ունեցել է մի խումբ տաղան-
դավոր նախորդներ ու ժամանակակիցներ, և այդ գրական-
դրամատիկական տաղանդները ահազին աշխատանք են կա-
տարել հարթելու համար դրամայի բարձր դարդացման ու-
ղիները շեքսպիրյան եղանակայում:

Անգլիայի վերածնության դարաշրջանում, այսինքն
կապիտալիզմի զարգացման առաջին ետապում, անգլիական
թատրոնը իրապես ապրեց իր վերածնությունը: Նախա-
շեքսպիրյան շրջանում, ինչպես հայտնի յե, դրաման Ան-
գլիայում գտնվում եր իր նախնական, քառսային վիճա-
կում: Գեղարվեստական կողմը դրամայի միանգամայն աշ-
քաթող արված՝ հեղինակները առաջնակարգ եյին համա-

բում միջնադարյան նովելների ոգտագործումը պատմական քրոնիկների, արյունային դրամաների համար. պատմական պիեսներում նրանք պրիմիտիվ պատկերներով ցույց ենին տալիս հակամարտությունը ֆեռդալների և թագավորի կամ ֆեոդալական առանձին տների միմիանց դեմք Յեթե այդ պիեսները հեռու եյին գեղարվեստական հյուսվածքը լինելուց, ապա նրանց արժանիքն այն եր, վոր արտացոլաւ եյին, թեպետ կոպիտ զծերով, ֆեոդալական դարաշրջանի իրականությունը, ժամանակի բարքերին համապատասխանում եյին այդ դրամաներում հանդես բերված բեմական ուժեղ տեսարանները, ուր արյունը հոսում եր, պիեսի հերոսները գետին եյին տապարվում մեկը մյուսի հետեւից, բեմի վրա գրեթե կենդանի մարդ չթողնելով, Հեղինակները հատկապես ծանր տեսարաններ եյին հնարում, վոր թափահարեն դիտողին, ցնցեն նրա ջղերը, սարսափով համակեն նրան:

Անգլիական դրաման առաջին անգամ իր քառսային գրությունից դուրս յեկավ դրամատուրգ Ջոն Լիլի (1554—1606) շնորհիվ, վորը Շեքսպիրի նախորդներից մեկն եւ նա անգրադարձրել եւ անգլիական այդ դարաշրջանի պատմության փոխանցման շրջանը, ինչպես և Շեքսպիրը, Ջոն Լիլիին ժամանակի կրթված դրամատուրգն եր, բարձրագույն կրթությամբ, ուներ արվեստների մագիստրոսի տիտղոս: Լավ ծանօթ եր գասական գրականությանը և իր պիեսների համար ոգտավում եր հին աշխարհի սյուժեներից, Հայտնի դարձավ իր յերկու պիեսով՝ «Ալեքսանդր Մակեդոնացի» և «Կամպասպա» և «Ենթիմոն», այլ և «Եվգիուս» վեպով: Առաջին պիեսը իր հյուսվածքով մոաենում և շեքսպիրյան գրամային: Նրա մեջ հեղինակը կարողացել եւ գրամատիկական գործողությունը համբնթաց դարձնել կոմիքականին, ուր սրախոսություններն ու ճկուն արտահայտությունները հիշեցնում են Շեքսպիրի գրվածքների հատվածներ:

րը, մանավանդ կումեղիաներում։ Դրելու այս յեղանակը անպայման աղղմէլ և Շեքսպիրի վորոշ գրվածքների վրա։ Զո՞ն լիլին առաջինն և դործածել դրամայում արձակ տրամախոսություն, վորով զործող անձինք ստացել են ավելի իրական պատկեր։ Մյուս աչքի ընկնող հատկանիշը այն ե, վորհեղինակը աշխատում և դրամային հաղորդել ներքին միություն, համաշափերով նրա առանձին մասերը։ Դործողությունը զարգացնում և կենտրոնական դիմքի շուրջը, համարելով նրան շարժման առանցք։

«Եվրուեսա վեպը, բաղկացած յերկու մասից, իր ժամանակին շատ մեծ ընդունելություն գտավ անգլիական բարձր խավիրի մեջ, թափանցեց նույնիսկ Յեղիսարեթ թագուհու պալատը, Վեպի գլխավոր արժանիքը համարել են նրա փքուն վոճը, լեզուն, բառախաղը, համահնչյուն բառերը, նոխ համեմատությունները, մակդիրները, Յեթե վեպի վոճն ու լիդուն մոռեցնում եր նրան արխտոկրատիային, ապա բովանդակությունը հակադրվում եր նրան, Հեղինակը քըննաւուառեն վերաբերվելով արխտոկրատ յերիտասարդության դաստիարակչական միջոցներին, ընականորեն արտահայտում եր ողուրիտանական բուրժուազիայի տեսակետները։ Վեպի հարձակումները իտալական արխտոկրատիայի վրա, (ուր գնում եյին ուսանելու Անգլիայի աղնվական յերիտասարդները) կողմնակի կերպով հարվածում եյին հարադար արխտոկրատիային։ Ապրելով ֆեռողալիզմի անկման և կապիտալիզմի առաջացման պրոցեսում, Լիլլը համարվում և փոխանցման այդ շըջանի տիպական ներկայացուցիչներից մեկը։

Շեքսպիրի նախորդների մեջ աչքի յե ընկնում նույն դարավերջի դրամատուրգ Թոմա Քիպը, Նա հայտնի դարձավ իր «Սպանական վողբերգուրյունեռով», Զնայելով վորհիդի պիեսները մեծ մասամբ կրում են արյունային դրամայի բնույթ, տվյալ պիեսի կառուցվածքը նա դրել է մարդ-

կային կրքերի ու անհատական շահերի ընդհարման վրա, Նրա պիեսներից մեկը՝ «Միսեր Արդենի Վալբերգուրյունը» յերկար ժամանակ համարվել և Շեքսպիրի հեղինակությունութիւնու Քիղը գրել և նաև «Համլետի Վրեծը վերնագրով դրամա, վորը հետագայում ոգտագործել և Շեքսպիրը իր համանուն վողքերգության համար Շեքսպիրին վորպես նյութ են ծառայել «Սպանական վողբերգության» առանձին տեսարանները. Այս վողքերգությունը իր ժամանակին շատ մեծ հեղինակություն և վայելել. նա ունեցել և տասներկու հրատարակություն, խաղացվել և «Համլետ»ի, «Ռիելլու»ի և նման պիեսներին հավասար, դիմացել և մինչև թատրոնների փակումը (պուրիտանների հաղթանակի հետեւ վանքով): Քիղը խմբագրել և մի շարք պիեսներ. կան տվյալներ, վոր նրա խմբագրության բովով և անցել Շեքսպիրի «Ռոմեո» և «Ջուլետ» և «Տիմոն Արքնացիան», Քիղը՝ նման շեքսպիրյան ժամանակի շատ գրողների՝ արտահայտել և դեպի անկում դիմող ֆեոդալական արիստոկրատիայի գաղափարախոսությունը, միաժամանակ կրելով պատմական առողջապահ գրագող բուրժուազիայի ազդեցությունը: Նա համարվում է Յեղիսարեթյան դարաշրջանի առաջին ռեալիստը գրականության մեջ:

Խնչական Զոն Լիլին, այնպես և Քիղը (և առհասարակ շեքսպիրյան շրջանի մյուս գրողները) կրթված մարդիկ են, սովորել են Ոքսֆորդի կամ Քեմբրիջի համալսարաններում, կամ առևտրական դպրոցներում (ինչպես Քիղը), կրթությունը կրում եր կլասիքական բնույթ: Մանութ լինելով դաստիան գրական նմուշներին, նրանք աշխատում եյին գեղարվեստական ձև ու հյուսվածք տալու իրենց ընտրած նյութին, վորի շնորհիվ արյունային դրամաների կմախքը աստիճանարար գեղարվեստական մշակման եր յենթարկվում:

Շեքսպիրի նախորդն և նորեց Գրինը, վորը վախճանվել է յերիտասարդ հասակում, աղքատության մեջ, բոլորից մոռացված։ Հայտնի յե իր սուր ակնարկներով (իր տեղում հիշված ե) Շեքսպիրի դեմ Սովորել է Ոքսֆորդի և Քեմբրիջի համալսարաններում, ստացել «արվեստի մագիստրոսի» կոչում։ Բացի լիրիքական ըանաստեղծություններից և պատմվածքներից, Գրինը զրել է պիեսներ, վրոնցից ամենաժողովրդականը «Բնեկոն աբեղան» և և «Վեկֆիլդի դաւալին պահապանը»։ Շեքսպիրագիտ Ստորոտենկոն, վորի ուսումնասիրությունը Գրինի մասին զետեղված և անզիւական լրիվ հրատարակության մեջ իրեն նախարան, այսպես և ձեւակերպում նրա կատարած դերը։ «Այս, ինչ վոր արել և Մարլոն պատմական տրագեդիայի և դրամատիքական քրոնիկների բնագրավառում, նույնն արել և Գրինը ժողովրդական-ռասմանության դրամայում», Գրինի ստեղծագործության մեջ աչքի յե ընկնում նրա մի փորձ՝ պիեսի գործողությունը հյուսելու վողքերգության և կոմեդիայի տարերով։ Նրա գրվածքները ոժոված են հոգեբանական մոտիվներով և գծագրված են վորոշ բնագործություններ։ Առավել աջող են Գրինի կանացի ախանքը, վորոնց նա նկարել ե գեղագիտի վրձինով, որինակ ծառայելով Շեքսպիրին, Գիևսներից մի քանիսը անմիջական աղբյուր են յեղել Շեքսպիրի կոմեդիաների համար։ որինակ, «Սիմբելին»ի համար՝ «Բնեկոն աբեղան» և «Վեկֆիլդի դաւալին պահապանը», իսկ նրա «Պանդոսոս» նովելլը՝ Շեքսպիրի «Զմեռալին նեմաք»ի համար։ Այսպես Գրինը հիմնադիրն և ժողովրդական-ռասմանութիւն դրամային Այդ տիպի պիեսների հիմքում նա դնում և ժողովրդական կենցաղի պատկերներ և ժողովրդական ավանդություններ։

Շեքսպիրի ժամանակակից և նաև անզիւական զրող Թոմաս Նեսը (Nash), նույնպես Քեմբրիջի համալսարանը ավարտած, Քողաքական բազանդակություն ունեցող մի կո-

մեղիայի համար բանտ և ընկնում: Նա գրել է պամֆլետներ, յերգիծական զրվածքներ, վորով քննադատության ուժաղը յե յենթարկել լոնդոնի այն ժամանակվա կառավարսկական միջավայրը և մտավոր կյանքը, Հանգես և յեկել պուրիտանների գեմ, վորոնք դեպի թատրոնը թշնամարաք եյին արամազրված: Նեշին ե պատկանում կենցաղային ռեսուլիտական ռումանը անդլիական զրականության մնջ մըսցնելու առաջին փորձը: Նա գրել է նաև թատրոնի համար: Մառլոյի աշխատակցությամբ գրել է «Դիդոն» զրաման:

Շեքսպիրի ամենատաղանդավոր նախորդը Քրիստոֆիր Մառլոն ե, վորը յերիտասարդ հասակում մնուավ, չունենալով հնարավորություն լիովին արտահայտելու իր ստեղծագործական խոշոր կարողությունները, Ծնվել և 1564 թվին, յեղել և Շեքսպիրի հասակակիցը, մեռել 30 տարեկան հասակում, տաղանդի զարգացման ամենափայլուն շրջանում, Սովորել և Քեմբրիջի համալսարանում, ստացել «արվեստի մագիստրոսի» տիտղոս, յեղել և վիճակոր, կովել սուանացիւների գեմ, ապա դերասանություն արելու Ռժուված և յեղել բուռն ու դորեղ տեմպերամենտով, ստեղծագործական թափով, Սպանվել և մի վեճի ժամանակ: Գրել և բացի պիեսներից, թողել անավարտ և մանը բանաստեղծություններ: Նրա տաղանդը արտահայտվել և զրամատուրգիայի մնջ: Մառլոն վերածնության շրջանի առաջավոր դեմքերից եր, նրա մտքի թուիչքներն ու ստեղծագործության ժամանական չեյին հանդուրժում սխոլաստիկ մտածողությունը: Պայքարել և զրական տիրող ձեռքերի քարացման և շոշափված խնդիրների մակերեսայնության դեմ: Մառլոն սժուված եր փիլիտոփայական մտածողությամբ: Նա ձգում էր ընդգրկելու պրոբլեմները իրենց խորությամբ: Նրա վողքերգությունների հերոսները տուղորված են զորեղ կամքով, խոշոր պահանջներով, դեմոնականությամբ, զաղանիքների լուծման դերագույն լարման ուժով: Յուրացնելով դա-

ստկան՝ դրվածքների եյությունը, Մառլոն սակայն չդարձավ նրանց կույր հետևողը, ինչպես հետազա կնդե դասական ները։ Նա աշխատեց անկախ պահել իրեն, լինել ինքնուրույն, այսինքն ավելի մոտ կանգնել այն միջավայրին, վորի մեջ ապրում է ինքը։ Նա վոչ միայն փափոխեց անգլիական դրամայի բովանդակությունը, այլ և վերամշակեց նրա ձեռն ու վոճը։

Իր գրական գործունեյությունը Մառլոն սկսեց «Մեծն թամերլան» վողբերգությամբ, ուր առաջին անգամ ընդունված եր հերոսի հոգեբանությունը, գործողություններ վարող կիրքը։ Նրան հետաքրքրում եր դրամայի հոգեբանական կողմը և վոչ անցքերի հասարակ շարադասությունը, ինչպես սովորաբար հատուկ եր արյունային դրամաներին։ Նրա վողբերգության հերոսի՝ թամերլանի հոգեկան շարժման դրդիչները փառասիրության ու տիրապետության անհնչն եր, վոր արտահայտվում եր նրա գործողությունների մեջ։

Բացի այդ Մառլոն կերպարանափոխեց դրամայի գրական լեզուն, նրանից առաջ դրամաները գրվում եյին անպատճառ վոտանավորով և կաշկանդիչ հանգերսվ, վորի շնորհիվ գրվածքի միտքը, իդեան զոհ եր գնում չափին ու բըռնազրոսիկ արտահայտություններին։ Մառլոն սկսեց գրել հոսկանալի լեզվով։ Նրա լավագույն գրվածքը «Ֆառաւան ե», գրված համանուն լեզենդի հիման վրա։ Բայց Մառլոյի «Ֆառաւանը լեզենդի միջնադարյան մոլորված քրիստոնյան չե։ Նա Գեոթեյի ռացիոնալիստ գիլիսոփան ել չե։ Իր հերոսին նա հաղորդել ե վերածնության շրջանի առաջադեմ մարդու հատկանիշը։ Իր տիրապետությունը բնության վրա հաստատելու և մարդկային անհատականությունը գերազանցորեն արտահայտելու համար ե, վոր Մառլոյի Ֆառաւանը ծախում և իր հոգին սատանային։ Նրա Ֆառաւանի արժանիքը վոչ թե հերոսի դրամատիզմի մեջ ե, այլ լիրիքա-

կան թափի, վորը, ինչպես ասում ե պրոֆ. Մտորոժենկոն, չտեսնված կատարելություն ե համարվել իր ժամանակին։ Մառլոյի Ֆառատը դեպի սոցիալ-տնտեսական բարձունքները դիմող բուրժուազիայի անհատապաշտության արտահայտությունն ե, բնության ուժերին և սոցիալական աշխարհին տիրապետելու տենչի մարմնացումը։

Մառլոյի յերրորդ պիեսը «Մալիքացի ջնուդըն ե, վորի հիմական գաղափարը ընչաքաղցությունն ու վրեժիննդրությունն ե։ Շեքսպիրը անպայման ուստի կա և նրա այս պիեսով իր «Վենետիկի վաճառականը» գրելիս, Վաշինգտոնը, ընչաքաղցությունը, վորպես կիրք, ուժեղ արտացոլումն ու գտել Մառլոյի պիեսում։

Գատմական քրոնիկների հեղինակները բեմ եյին հանում անցյալից վերցրած վորևե անցքի չոր կմախքը, առանց ներքին շաղկապի և բնավորությունների զարգացման։ Մառլոյն ստկայն պատմական նյութից, ինչպես, որինակ, իր ժնդուարգ Յերկրորդը, կերտել ե գեղարվեստական մի ամբողջացած շենք, ուր հերոսների հոգեբանությանը և դրամատիկ դրության զարգացմանը հատկացրել ե առաջնակարգ գեր։ Մի խոսքով, Մառլոյի կատարած դործը անզիմական դրամայի զարգացման ասպարեզում շատ խոչըր ե։ Մենք ե այդ գերը նաև Շեքսպիրի վրա ազդեցւ աեսակետից։

Զի կարելի ուրանալ այն հանգամանքը, վոր յեթե վերջինիս, այսինքն Շեքսպիրի նախորդները հարթած չլինելին դեպի գեղարվեստական ուսալիղմը տանող ուղին, յեթե նրանք չվերացնելին դրամատիկական դրականության մեջ և թատրոնում տիրող գուեհկությունները և առհասարակ քառսային վիճակը, հազիվ թե Շեքսպիրը այնպես արագ բարձրանար ստեղծագործական սանդուխքով։ ավելի շուտ նա ստիպված կլիներ իր յեռանզի ամենամեծ մասը վատանել ու աշխատանքի վրա։

Շեքսպիրյան ժամանակի տաղանդավոր զբամատուրակաների խումբը իրենց արտադրանքով յեղան այն գետինը, վորի վրա զորացավ, աճեց, դարավոր արմատներ արձակեց Շեքսպիրը, իրեն դրական տիտանն:

Շեքսպիրը զրել է, բացի դրամաներից, յերկու պոեմ և առնետներ: Հավանական է, պոեմները բանաստեղծի առաջին գործերը լինեն և արդյունք ժամանակի հեղինակների անմիջական աղղեցության: Հետագայում, յերբ բանաստեղծը վերջնականապես յուրացրեց զբամատիկական պանդիան, այլև պոեմներ չդրեց:

Յերկու պոեմն ել—«Վեներա» և «Լուկրեցիա»—հեղինակը նվիրել է յերիտասարդ կոմս Սոուտհեմպտոնին, վոր հայտնի յի յեղել իրրե մեկնաս և հովանավոր պոեզիայի ու արվեստների կոմար առանձին հովանավորություն և ցույց տվել Շեքսպիրին, վորը արդեն անուն եր հանել իրրե տաղանդավոր բանաստեղծ և սկսնակ դրամատուրգ:

Շնորհիվ իր բարձր ընդունակությունների, Շեքսպիրը մուտք և ունեցել արխտոկրատիայի շրջանը, կազեր հաստատել մի խումբ յերիտասարդ արխտոկրատների հետ, ակնկալություններ ունենալով նրանցից, Նրա ձոնը կոմսին, զետեղված իր պոեմների ճակատին, ունի այնպիսի բավանդակություն ու ձև, վորպիսին ընական կարող եր լինել դերասան և բանաստեղծ Շեքսպիրի համար, բայց յերբեք վորյիվե արխտոկրատ գրողի Հենց այս հանգամանքը ամբողջովին խոսում և ստրեգֆորդցի Վիլիամ Շեքսպիրի սպահին: Կամ Ռյութլանդի համար վայել ձև չեր ձոնի մեջ շեշտված շխոնարհ ծառայիր՝ պատրաստակամությունը՝ հասցեյագրված իր նման կոմսին:

Բերենք մի հատված այդ ձոնից, վոր տպված և «Վեներա» և Ադոնիսը 1593-ին կոնդոնում,

— «Վեներա և Ազրենիս»ի Զոնը Սոռուհնեմպտոն հերցուգին, Նորին վողորմածության Հենրիկ Ռայլուսին Սոռուհնեմպտոն հերցուգին և Տիշֆելդի բարոնին, Զերդ վողորմածություն. յես գիտակցում եմ, վոր չափազանց հանդուզն ևմ վարվում նվիրելով իմ այս թույլ առղերը Զերդ վողորմածությանը... Աշխարհը անշուշտ ինձ կմեղադրի նման զուշեղ հենարան դանելուս համար, յերբ իմ բեռը այնքան թեթե եւ Բայց յերբ Զերդ վողորմածությունը բարեհաճ դանվի գեպի ինձ, յես զա կհամարեմ գերազանց պարզի և խոստում կտամ ազտազործելու իմ բոլոր ազատ ժամերը, անընդհատ աշխատել մինչև վոր Զերդ վողորմածության պատվին չգրեմ մի ավելի լուրջ ստեղծագործություն...

Զերդ վողորմածության խոնարհ ծառա Վիլիամ Շեքսպիր:

Յենթադրություն կա, վոր Շեքսպիրը իր երոտիկ պուեմերը գրել ե յերիտասարդ կոմսի մոր պատվերով՝ համոզելու համար կոմսին, վոր նա թողնի ամուրի կյանքը և ամուսնանա,

Ի՞նչ են ներկայացնում պոեմները.

Առաջին հայացքից յերեսմ ե, վոր «Վեներա և Ազրենիս» պոեմը վերածնության առաջին հոգերի (Անգլիայում) արտահայտություն եւ Մի շրջան, յերբ մարմնական կյանքի կիզիչ թափը առանձնապես վերերգվում եր թե բանասեղծության մեջ և թե թանձր անդրադարձում գանում որնեսանսի մերկանդամ նկարների մեջ։ Կասկած չկա, վոր Շեքսպիրը գտասական բանաստեղծների աղղեցության տակ ե յեղել, սակայն անուրանալի յե պոեմի բանաստեղծական հմտյթը. չնայելով ձգձգվածության, պատկերները հարազատ են ու թարմ, լեզուն պատկերավոր, ներգաշնակ։ Շեքսպիրի ուսումնասիրողներից մեկը նկատում ե, վոր վերսիշյալ յերկու պոեմները մղված են հետին մակարդակը շնորհիվ հան-

նարեղ դրամաների, վորոնց ստվերի մեջ անհայտացել են՝ նրանք սոնետների հետ միասին:

Պոեմի հիմքում դրված ե անթիք աշխարհի առասպել-ներից մեկը, վորը Շեքսպիրին նախորդող դարաշրջանում յինթարկվել ե բանաստեղծական վերամշակման: Շեքսպիրը դեղարվեստորեն վերարտադրել ե այն, ոնենով իր ժամանակի ընորոշ կնիքը և հաղորդելով նրան արխտոկրատիայի նաշակին համապատասխան կոլորիտ:

Աղոնիսի հասպույն առասպելի մեջ վերաբռնդրված ե ընության հավիտենական յերեսույթներից մեկը—բեղմնավորումն ու մահը, միմիանց հետ շաղկապված, բեղմնավորողը պատկերված ե վորպես փարթամ, գեղեցիկ պատանի, վորին հմայում և սիրս ու բեղմնավորման դիցուհի հշտարը կամ Աֆրոդիտեն-Վեներան: Առասպելի Ադոնիսը, կամենալով մալ անմահ, դիմադրում է սիրատոչոր դիցուհու հետապնդումներին: Սակայն խուսափել նրանից չե կարող. գայթակըզվում ե, բեղմնավորում և կյանք տալիս վերստին ծաղկող ընության (կամ մարդկային կյանքում—հաջորդող սերընդին), ինքը մեռնում: Պրօֆեսոր Զելինսկին դանում ե, վոր Շեքսպիրը իր պոեմը գրելիս, առասպելի նախնական դիմ պահպանել ե՝ Աղոնիսի մեջ դիմադրական ուժը անհատիկ գարձնելով: Շեքսպիրի «Վեներա և Ադոնիսը» մարմացումն ե հեշտանքի խելազար արբեցման, տոչորվող, բորբոքվող դգացմունքի:

Վեներան ե հեշտանքի մարմացումը. բուռն ձգտումով հետեւում ե նա վորսորդության գնացող պատանի Ադոնիսին, կամենում և գայթակղեցնել նրան և հաճույքի դրկում հանգչել ինքը: Վեներան կիրք ե Շեքսպիրի պոեմում, Ադոնիսը սիրո զգացմունք: «Հենց վոր կյանքում տամուկ հեշտանքը տիրապետեց, սերը յերկրից խսպառ վերացավ»,—ասում ե Ադոնիսը և փորձում տպատվել Վեներայի տռիական պահանջներից:

Աղոնիսը դիմադրում է, բայց այնուամենայնիվ մոռնում է, յենթարկվելով, վորսի ժամանակ, կատաղի վարազի հարձակման։ Շեքսպիրը փորձել է ցուցադրել պայքարը մարմարական խելագար կրքի և «աղլատոնական» սիրո մեջ։ Սակայն վերածնված անթիք սյուժեն, վերածնության շըրջանի պոետ Շեքսպիրի գրչի տակ ստացել է ժամանակակից բնույթ, և մարմնական աղատ զգացմունքը թանձր տարփանքի պատկեր ստացել.

Շեքսպիրը իր պոեմը վերջացնում է հոռմեյական բանաստեղծ Ովիդիոսի նման։ Սիրո գիցունին վրեժ է լուծում իր գժրախտության համար, «զարձնելով սերը թռւնավոր ծաղիկ»։ Միրո/անբաժան ուղենիցը թող տիրությունը լինի. շքախումբը՝ խանդը. սկիզբը՝ քաղցրություն, վերջը թախիծ... Թող լինի նա (սերը) խարեւա, կեղծիքով հյուսված, դավադիր։ Արտաքուստ մեզը, ներքուստ թույն մահարեր...»։

«Միրո վողբերգության» տարբերն ևն սրանք, վոր բանաստեղծը թեթևակի շոշափել և այստեղ, Տարիներ հետո, յերբ նրա հանճարը հասել եր զարգացման զագաթին, նա տվեց այդ վողբերգության ցնցող պատկերը։

Շեքսպիրի յերկրորդ պոեմը «Լուկրեցիա»ն և, 159։ թվին լույս տեսած և ձոնված նույն կոմմ Սոսւտհեմպտոնին, նույն «նորին վողորմածության» միենույն «խոնարհ ծտռա Վիլիամ Շեքսպիրից»։ Պոեմը նվիրված է ամուսնական հավատարմությանը և կուսությանը, նյութը հոռմեյական գրականությունից ե. Լուկրեցիան այդ գրականության հերոսուհիներից մեկը։ Սակայն այստեղ ել Շեքսպիրը իր ժամանակի դրոշմն և դրել պոեմի վրա, հոգերանական վերլուծության յենթարկելով հերոսի ներքինը, նյութը նույն սերըն և ու սեռը, վորը գործողությունների իրական շըրջանակի մեջ և առել Շեքսպիրը։ «Լուկրեցիա»ն առաջին պահմից տարբերվում է նրանով, վոր դերերը՝ աղամարդու և

կնոջ՝ փոխված են: Ցեթե առաջինում դիմադրողը տղամարդն էր, այստեղ կինն եւ Լուկրեցիան անկարող եւ մինչև վերջը դիմադրել ուզմադաշտից զողունի յեկած տոփոտ Թարգվիւնուսին, ամուսնու աղջականին: Վորպես հավատարիմ կին Լուկրեցիան սպասում եր ամուսնուն, վորը պատերազմի բաշտումն եւ Անողնական և ֆիզիքոպես թույլ կինը մահավան սպասնալիքի տակ թուլանում եւ Թարգվիւնուսը բռնարարութ և նրան, մահվան սարսափ մտցնելով նրա հոգու մեջ: Լուկրեցիան անձնասպանություն եւ գործում: Շեքսալիքը սակայն վոճրապործին ազատ չեւ արձակում: Հերոսը տանջվում եւ ներքին խայթից, ինքնազմատափետումից, ապա ստանուած իր պատիքը հասարակական դատաստանի միջուցով: Ամուսնական հարցում Լուկրեցիայի դատողությունները հիշեցնում են կնոջ տրադիցիոն ստրկալիճակը, վորը վերածնության դարումն ել վոչ մի փոփոխություն չկրեց: Բայց խնդիրը դրանում չն, Շեքսալիքի համար նման հարց գոյությունն չունեմ, կանացի բռնաբարված պատվի վողրերգությունն եւ պոեմի կենարոնական գաղափարը, և Շեքսալիքը թանձր պատկերներով տվել եւ զրա մարմարցումը:

«Լուկրեցիան գեղարվեստական արժանիքներով անհամեմատ բարձր եւ առաջին պանմից: Չնայելով վոր նրանք բանաստեղծի պատանեկական զրվածքներն են, բայց իր ժամանակին Անգլիայում մեծ աջողություն են ունեցել: Եվ ներւու և Աղօնիսը հրատարակվել եւ յոթն անգամ, և լոկրեցիան հինգ անգամ բանաստեղծի կենդանության որով:

Պոեմներից հետո Շեքսալիքի ստեղծագործության հետաքրքրական եջերից են նրա սոնետները, կենսադրական անդեկտիվ յուններից զուրկ բանաստեղծի և զբամատուրգի սուբյեկտիվ ապրումների տեսակետից անկասկած մեծ արժեք ունեն այդ սոնետները:

Շեքսալիքը ժամանակ սիրային սոնետներ զրվում եյին շատաշատերի կողմից: Դա զոտանավորի արհեստական մի ձև

եր, վորը շարլոն բովանդակություն ուներ և ընդունված չափու Զգացմունքի ջերմություն և ապրումներ՝ յերկրորդական եյին։ Ընդունված բովանդակությունը—տանջվող տղամարդը առնջող կնոջ հանդեսով։ Հուսազրող և հուսահատեցնող սիրո առարկան, Սակայն չկար դպացմունք, չկար սիրո տառապանք, Նշանակալից և, վոր Շեքսպիրի ժամանակ սոնետ գրողների թիվը 300-ե յեղել, Հայտնի յե, վոր դրանցից վոչ մեկը լիբրիքական բանաստեղծի կոչում չե ունեցել, Սոնետները լինում եյին և վոչ սիրային։ Վորսկես արիստոկրատ միջավայրի սալոնական բանաստեղծություն, սոնետները ավելի շուտ ներբողի կամ ձռնի բնույթ ունեյին։ Սոնետները նվիրվում եյին մեկենասներին, հովանավորներին, Ներբողվում եր նա, հովանավորը, ներբողվում նրա գեղեցկությունը և գրողի խոնարհ խորհուրդը՝ չկորցնել զուր տեղը այդ գեղեցկությունը, այլ դրոշմել այն սերնդի շարունակության մեջ, այսինքն ամուսնական ունենալ զավակներ և տալ այդ գեղեցկությունը զավակներին... Պոետական քծնանք բարձրաստիճան տիրոջն ու հովանավորին։

Շեքսպիրը, գրելով սոնետների մի ամրող ժողովածու (154 հատ), պարզապես տուրք և տվել իր ժամանակին, Մի մեծ շարք սոնետներում նա հիշում և սնորակ գեղեցկունուն, վորը տանջել և նրան, վորի հավատարմության մեջ նա համոզված ե յեղել, սպասել նրա յերջանիկ խոսքին, բայց տեսնելով, վոր անաջող են անցնում իր փորձերը, առանց խանդի և դժգոհության զիջում և սիրունուն իր հովանավորողին, յերեկ մեկենասուին։ ավելին։ նա հավատարիմ և մընում գեղեցկունու նոր տիրապետողին, համարելով նրան բարեկամ, Սոնետների մի այլ խումբ նվիրված են բարեկամին։

Շեքսպիրի սոնետները ուսումնասիրողներից մեկը այն կարծիքի յե, վոր բանաստեղծը, յենթարկվելով ընդհանուր շարլոնին, հետագայում նույնիսկ ծաղրի առարկա դարձնե-

լով ՇԱՌՆԵՑԱԳԱՎՈՎ» բռնված հնդինակներին, վոչինչ արժեքալոր չե արտադրեն, չե դրել նրանց մեջ մեծ ըանաստեղծին վայել խորը լիրէնդմ. 154 սոնետից հազիվ չորսը գըրված լինեն զգացմունքով, Համաձայնվել ուսումնասիրողի այդ կարծիքին, կնշանակե չնկատել այն հատուկ շեշտը, վոր դրել և շաբլոն սոնետների մեջ շեքսպիրյան տաղանդը: Այստեղ Շեքսպիրը վարվել և այնպես, ինչպես դրամատիկական քրոնիկներ գրելիս. վերամշակման յենթարկելով քրոնիկների նյութը, նա խորություն և մացքել նրանց մեջ, գործող անձանց հաղորդելով հոգեբանական մոտիվներ: Յնդ դրանով կենդանացրել պատմական սխեմատիկ քրոնիկները նույն աշխատանքը կատարել և սոնետների նկատմամբ: Քիչ չեն շեքսպիրյան սոնետների մեջ այնպիսիք, վորոնք ինքնակենսագրական տարրեր են պարունակում:

Խնքնակենսագրական են և ջերմ զգացմունքով գրված այն սոնետները, փորոնց մեջ բանաստեղծը արտահայտել և իր արհամարհված վիճակը և նրանից առաջացած թախիծը: Շեքսպիրը լինելով խոշոր դրամատուրգ և բանաստեղծ, թատրոնական արվեստին նվիրված սպասավոր, իր կաշվի վրա զգացել և բարձր խավերից կազմված ամբոխի արհամարհական վերաբերմունքը դեպի թատրոնն ու նրա սպասվորները, համարելով վերջիններին ծաղրածու կամ միւսու, կոչված միմիայն հայանավորող տերերի քմահաճույքին ծառայելու:

«Մարդկանցից մերժված, — զրում ե Շեքսպիրը իր սոնետաներից մեկում, — մերժված ճակատազրից, վողրում եմ յես իմ ախուր վիճակը, ապարդյուն աղերսանքով անհանգիստ անում յերկինքը և դիտելով ինքս ինձ՝ անիծում եմ իմ դառն բախտը»:

Շեքսպիրյան վշտի աղբյուրը նրա սոցիալական վիճակն եւ: «Ինչպես իր ներկով ներկարարը, իմ ճակատագիրը

խայտառակությամբ նշավակեց ինձ, ու խավարեց իմ ուղին», տուու և նա:

Նրա հայտնի սոնետը, վաթսունվեցերորդը՝ համլետյան դառն գանդաս և հուսահատություն եւ, «Բեղ եմ կանչում յես հոգնոտծ, և մահ, բացականչում և բանաստեղծը, — հոգնեցի յես տեսնելով պատիվը գետին տապալած, ծառայությունը փալասով փաթաթած, անմեղությունը ապականված, հավատարմությունը դավաճանած և ճշմարտությունը շղթաներով կաշկանդված։ Հոգնեցի տեսնելով աըիսմարներին դափնե պսակով պարծենցող, իսկ իմաստուններին անկման ու լոռության մատնված, յերկնքի սքանչելի պարզեց կույրերի կողմից ծաղրված և դատարկամիտ բամբասողների հաղթանակը չար»։

Ինչ ե այդ ամենի հանդեպ արվեստը, վորին սպասավորել և բանաստեղծը. դա մի վախկոտ, չնշին ուժ և «իշխանության գեսպոտիվմի հանդեպ»։

Յեղ պղետը, հոգնած ու հուսահատ, պատրաստ և հանդչել համբանական մոռացության գրկում։

Սոնեաները գրվել են զանազան ժամանակ. առաջին ժողովածուն լույս ե տեսնլ 1609 թվին, Մեր ակնարկան սոնեաները, համլետյան տրամադրությամբ համակված, գրվել են ըստ յերևույթին, նույն վողբերգության գրվելու տարիներում։ Ընդհանուր առմամբ սոնեաների մեջ նշարելի յեն անհատական այն տրամադրությունները, վորոնք ցայտուն ու խոր արտահայտություն են գտել նրա վողբերգությունների մեջ — սեր, խանդ, հուսահատություն, հիասթափություն։

5

Նեխավիրի դրամատիկական ժողովները, Անգլիայի մեծության պանծացումը: «Ռիչարդ յերկրորդ» և «Ռիչարդ յերրորդ» դրամաները, Նեխավիրի միապետական նայացքները:

Յեթև անգլիական դրամայի բարձր զարգացումը տասնամյակում դարձավ վերջին համար առաջնային տարրում և առանձնահատութեարդի առաջին տասնամյակում անխղելիորեն կապված է ընդհանուրապես առևտրական կապիտալի նվազումների հետ, ապա վերջինիս դրաման դիրքերը միջազգային շուկաներում, ավելի ճիշտ Անգլիայի ծովային պետություն դառնալու հանգամանքը, մասնավորապես առաջադրել ե դրամայի մի ժամանքը, վոր պատմական դրամատիկական քրոնիկի անուն և կրում, Պատմական այդ քրոնիկները բնորոշվում են զիմանքության կարճ տեսարաններով, ժամանակի, գործողության և տեղի միության բացակայությամբ, բազմաթիվ գործող անձներով, վողբերդական և կոմիքական տարրերի խառնուրդով, Այդ ժամանքի դրամաների հերոսները, վերցված անգլիական պատմությունից, թագավորներ են և ֆեոդալներ, վորոնք բաժանվում են յերկու կարդի: Առաջինը զորեղ անհատականություններ են, վորոնք իրենց ձգտումը զրավելու գերազույն իշխանությունը իրականացնում են հրովարտական պատմությունը:

ու սրով, վոանատակ տալով ամեն բան և ամենքին, անգամ ծնողներին, զավակներին, յեղբայրներին, յեթե դրանք խոչընդուած են ուժեղների վերելքին, Յերկրորդ կարդի հերոսները նույն դասակարգի կամազուրկ, թուլամորթ ու վայելքի անձնատուր անձեր են, վորոնք անինա կերպով հանգում են ճանապարհից ուժեղների ձեռքով և նրանց բաժինը բանան և ու կառափնարանը: Ըստ այդ դրամատիկական քրոնիկների, Անգլիայի «Ազգային մեծության» կերտողները յեղել են պատմական անցյալի ազգային հերոսները, հզոր անհատականություններ, թագավորներ, իշխաններ, վուրոնք տնցել են դաժան պայքարի ու արյան միջով:

Վերածնության դարի այդ անցման շրջանում անգլիական «ազգային մեծության» դրվատումը հավասարապես արտահայտում եր թե արիստոկրատիայի իդեոլոգիան և թե առևտրական կապիտալի տնտեսական-քաղաքական ձգտումները:

Շեքսպիրի գրած դրամատիկական քրոնիկների թիվը յոթն և՝ «Զօն բագավոր», «Միջարդ յերկրորդ», «Միջարդ յերրորդ», «Հենրիկ չորրորդ», «Հենրիկ հինգերորդ», «Հենրիկ ուրիշ»: Յենթագրում են, վոր վերջինը դրված ե ուրիշի աշխատակցությամբ,

Իր տեղում մենք արդեն ասել ենք, վոր անգլո-ապանական ծովային պատերազմը 16-րդ դարի վերջում պատկեց Անգլիայի համար մեծ հաղթանակով: Այդ հաղթանակի խոչոր բաժինը կազմակերպեց առևտրական կապիտալը, հանդես բերելով իր նյութական միջոցները և սաղմական կազմակերպությունը: Հաղթանակը անգլիական առևտրի համար բաց եր անում հսկայական հեռանկարներ համաշխարհային շուկաներում, վորով և հեշտությամբ բացարզվում և տիրապետող դասակարգերի մեջ առաջացած ազգային-քաղաքական արամադրության բարձրացումը, Անկասկած այդ

արտամադրության արձագանքը պետք և համարել Շեքսպիրի պատմական քրոնիկների յերևալը լոնդոնի թատրոններում:

Մենք համառոտ կանոք կառնենք «Ռիչարդ յերկորդ» և «Ռիչարդ յերրորդ» դրամատիկական քրոնիկների վրա, վորով մատափոր չափով ընորոշված կլինեն նաև մյուաները:

Ռիչարդ յերկորովին Շեքսպիրը պատկերացրել և վորով վայելքով տարված, իշխանությունը յերկնքի պարզե համարող թեթևամիտ անձ, վորը ժառանգական գահը ստացել և առանց գժվարության, առանց պայքարի, Շրջապատճեն կեղծ ու քսու մերձավորներով, նա վատնում և պետության հարստությունը և ապա իր վայելքի համար ապօրինի հափշտակություններ կատարում իրեն յենթակա հերցոգուներից Շեքսպիրի հերոսներից մեկը այսպես և բնորոշում նրան. «Այս քայլայումը պատերազմից չե առաջացել. նա (թագավորը) պատերազմ չե վարել այլ ստոր գործարքների միջոցով բաժանել և անվեհեր նախորդների սրով ձեռք բերած հարստությունը նաղադ ժամանակ նա ավելի յե ծախսել, քան նրանք պատերազմում: Յնիկ իշխանությունն ի չարը դործ դնող՝ իր մերձավորների նկատմամբ վոճիրներ գործելու համար, այլ և միապետության ուժեղացման գործին անտարբեր Ռիչարդ թագավորին Շեքսպիրը հակառագրում և նրա մերձավոր ազգական նոլլինը կին, վորը ոգտվում և աիրող խավերի ընդհանուր գժգոհությունից և ապատամբվում, թագը խլելով անարժան թագավորի ձեռքից: Ակախի, գործունյա նոր թագավորը նախ բանտարկում և նրան, հետո սպանել տալիս բանտում: Այլպիսով զորեղ ոնհատականությամբ ոժոված նոր միապետը գրավում է գահը Անդլիայի հետագա զորեղացումը ապահովելու համար:

Շեքսպիրի այս դրամայի շուրջը գրական խոշոր զրույցներ են յեղելք կապելով նրա զրգելն ու բեմադրվելը հեղինակի ժամանակակիցից ֆեռդալ նոսեքսի նախապատրաստած ապատամբության հետ ընդդեմ Յեղիսարեթ թագուհու: Մա-

նավանդ «Ռյութլանդ-Շեքսպիր» հիպոթեզի կողմանակիցների կարծիքով, պիեսը գորպես թե կոչված և յեղել պաշտպանելու ծասեքսի ծրագիրը՝ փոխելու Յեղիսաբեթի մինիստրներին, ուժեղացնելու հին արիստոկրատիայի քաղաքական կշիռ և վանելու բուրժուական անող ազդեցությունը, Յեղ ավելին. հեղինակը վորպես թե, մասնակցելով ապստամբությանը, առաջնորդվել և արիստոկրատական հանրապետություն հիմնելու գաղափարով։ (Առանձնապես Շիպուլինսկու գրքում «Շեքսպիրը Ռեբլենդն ե», էջ 116—120), Միանգամայն անհիմն յեղրակացություն։

«Եթիշարդ յերկրորդ»ում Շեքսպիրը, ընդհակառակը, շատ վորոշ կերպով կանգնած և միապետական տեսակետի վրա նա դատապարտում և թույլ ու անարժան թագավորին, բայց դրվատում և զորեղ կամքի աեր, հետևողական, արթուն թագավորին։ Սկզբունքով նա դեմ և արքայաւանության։ Շեքսպիրը, իր գրամատիկական քրոնիկները գրելիս, պարծանքով դիտում և Յեղիսաբեթյան շրջանի Անգլիայի հղորացման պրացեսը։ Անհիմն չե շեքսպիրագիտների այն կարծիքը, թե պիեսի հերոսներից մեկի բերանով ինքը Շեքսպիրն և ներբողում Անգլիայի մեծությունը, հետեւյալ մակդիրները տալով նրան։ «Հզոր արքայական կըդպի, մեծության յերկիր, Մարսի սիրած զահույթը, յերկըորդ Յեղեմ» և այլն։ Գրեթե դրախտ զարձած այս կղզին, — առում և Շեքսպիրի հերոսներից մեկը, — բնության ուժով դարձել և մի բերդ պատերազմի և ամեն տեսակ վարակի դիմ։ մարդկային յերջանիկ ցեղ, մի փոքրիկ աշխարհ, մի շքեղ գոհար՝ արծաթյա ծովի փայլուն շրջանակի մեջ առնըլված... «Որհնված աշխարհ, հարազատ յերկիր, մեր հայրենիք Անգլիա, վորն իր բեղմնավոր գրկում վորպես դայակ մնել և մեծացրել արքաներ՝ իրենց ծնունդով հոչակավոր, ուժով սպառնալի, վորոնց անունն ու սխրագործություննե-

բը թնդում են ամբողջ աշխարհում ի փառս քրիստոնեյության և ասպետության...»:

Կարելի՞ յե այս ամենից հետո ասել, թե այս պիեսը Շեքսպիրը գրել է, առաջնորդվելով հանրապետական (թե կուղ արխատոկրատական ռեսպուբլիկայի) գաղափարներով, որամայի դեկադարող միտքը դարձնելով միապետության ասպարալումը։

Պիեսում կտն պարզ ակնարկներ իուլանդական գյուղացիների ասպատամբության մասին, վարօնց Անգլիայի արքան պատրաստ և սրով ու հրով խելքի բերելու Գյուղացիներին նա անվանում և «կոպիտ և համառ իրենց ժթունաղլոր բների մեջ ապրող և այդ բներում հավիտենական թույն արտադրող»։ Արխատոկրատներից մեկը ժողովրդական մասսաներին «չար ամբոխ» և անվանում, վորոնք, նրա առելով, «պատրաստ են շան նման հոշոտել» իրենց տերերին։

Շեքսպիրը այս պիեսում, ցուցադրելով իր հետզհետե դարձացող հանճարը, անդառնզ մացրել և հոգեբանական խռություն, վորովհետև պիեսը տարբերվում և դրամատիկական պարզ քրոնիկից։ Նրա պիեսի գահազուրկ հայտարարված թագավորը վայրկենապես կորցնում և իր հմայքը, և այն բաղմությունը, վոր գեռ յերեկ նրանից պատկառում կամ սարսափում եր, այսոր նրա վրա հող և ժոխիր և ցանում։ Այդպես և ներկայացնում նրան Շեքսպիրը։ Ցերք գահազուրկը անցնում եր քաղաքի փողոցով,—ասված և պիեսում, «պատուհաններից աղբ ու փոշի եյին թափում նիշարդի զլիին»։ «Գաղանների վրա նա այլևս թագավոր չե—առյօն չե», այլ մի վազորմեցն անձ, վորը փոքրոգության, վոչնչության մարմնացումն եւ, Վրձինի մի քանի շարժումով դրամատուրգը ավել և ընկած արքաների պատկերը, վորը գարեր հետո, նաև մեր ժամանակներում, կրկնվում եւ, յերբ գահազուրկը, իր փառքը վերականգնելու հույսեր սնելով սրտում, արտաքուստ մնղմանում, ընկճվում եւ, ցույց եւ

տալիս իրեն պարզ կյանքի սիրահար, սկսած աստ և բահը ձեռքին աշխատել «ծաղկանոցում», վորովինեաւ նա իրքեւ թէ միշտ «ամեն բանից ավելի ծաղիկ և սիրել»...

«Ռիշարդ յերրորդը Շեքսպիրի այն պատմական պիեսներից է, վորոնք հեռանալի դրամատիկական քրոնիկներից, մտածնում են նրա հոգեբանական խոշոր վողբերդություններին։ Այստեղ Շեքսպիրը փորձում է իր հանճարի լավագույն թափանցել հերոսի հոգեկան բարդ շարժումների մեջ, տալով նրա կրքերի ու զգացմունքների աշխարհի պատկերը։ Այս վողբերդությունը իր ժամանակին ունեցել է ահազին ժողովրդականություն, և դրան նպաստել է վոչ միայն Ռիշարդ թագավորի պատկերի ճշգրիտ գծագրումը, այլև պատմական մի շրջանի գեղարվեստական անդրադարձումը։

Շեքսպիրը այս վողբերդության համար օգտվել է անգլիական պատմագիր (ավելի ճիշտ՝ տարեղիր) Հոլինշենդի քրոնիկներից, համարելով այն հում նյութի իր սունդագործության համար։ Հեղինակը այդ չոր նյութի վրա հյուսել է իր դրաման, մարմին և արյուն տալով կմախքին։ «Ռիշարդ յերրորդը գրելիս Շեքսպիրը ստրկորեն չե հետեւել վոչ դեռքերի ժամանակագրությանը և վոչ հերոսների լուսանկարչական ճշտությանը։ Հոլինշենդի միամիտ պատմությունից նա ստեղծել է մի վողբերդություն, վոր գարերի ընթացքում ցնցել և թատրոնի հանդիսատեսին։ Դա դրամատուրգի գերազանց գործերից չե իհարկե, ունի իր թերի կողմերը, սակայն կենտրոնական հերոսին և կատարված դեպքերի պատկերը այնքան թանձր գույներով և տրված, վոր անցած յերեք գարերը մոռացության փոշով չեն ծածկել նրան։

Վողբերդության գլխավոր հերոսը Ռիշարդ թագավորն է. հեղինակը իր վողջ ուշադրությունը կենտրոնացրել է նրա վրա, Պիեսի բոլոր գործողությունների ընթացքում թագավորը իր «սիրագործությունները» կատարում է առանց ունենալու գորեղ հակառակորդներ։ Հանդիսատեսը

դիտում ե, թե ինչպես դիմադրողները իրար հետեից ընկանում են իշխանություն տե՛նչացող թագավորի հարվածների տակ, Պիեսի դիմալոգի մի յերբորդը արտասանում է Ռիչարդը, «արյունոտ կացնով դեպի դահ քայլող այդ թագավորը, համարյա շարունակ դանվելով բեմի վրա,

Կարդալով Շեքսպիրի այս գործը, վոչ միայն մի պարզ յեղակացություն ենք հանում, թե հեղինակը միապետական ե, կողմանակից զորեղ պետության խելոք միապետի, այլ և նրա գործը որյեկտիվորեն մի անխախտ համոզում ե առաջացնում դիտողի կամ ընթերցողի մեջ, թե Բնչ վոճիրների բուն են թագավորական պալատները։ Նույն պիեսի հերոսներից մեկը—Յորքի հերցոգուհին ասում ե. «Իմ ամուսինը կործանվեց թագը ձեռք բերելիս, վորդոցը մեկ վայր, մեկ վեր չպրտելով, դժբախտություն և ուրախություն բերելով ինձ։ Հենց վոր վերջացավ պատերազմը, իսկույն վառվեց ընտանեկան գժուռությունների հրցենը. իշխողները վուշի յելան իրար դեմ, յեղբայրը յեղբոր դեմ, արյունը արյան դեմ։ Ո՛, դաժան խժությունների կատաղի հեղեղ, կանգառ քո անիծյալ չարագործության մեջ։ Ո՛, թաղ մեռնեմ յես, թող նոր չարագործություն ու նոր սպանություններ ել չտեսնեմ։»

Ահա սույնանման գործողությունների ընդհանուր ֆունի վրա բարձրանում ե Շեքսպիրի ստեղծած Ռիչարդ յերրողի վոճրատիպ կերպարանքը։

Ռիչարդը Շեքսպիրի բազմաթիվ հերոսների այն շարքին ե պատկանում, վորոնք կամքի անհողողող ուժով, առանց տատանման (հակառակ «համլետականության») իրականացնում են իշխանությունը դրավելու իրենց ձգտումը, չորս կողմը սփռելով վոճիր և մահ Ռիչարդը, ըստ հին տարեգրությունների, ոժտված ե Փիզիքական և բարոյական այլանդակությամբ, բայց զորեղ ե և ազգող իր անընկճելի կամքով և սփիական անհատական արժանիքների գիտակցությամբ։

Յելնելով Յորքի իշխանական տան շահերից, ընդդեմ հակառակորդ լանկաստերյան ֆեոդալների ու գահին տիրելու ձգառութենքից, Ռիչարդը իր քաղաքական նպատակներին հասնելու համար միջոցների մեջ վոչ մի խտրություն չի դնում: Նա իր մեջ տեսնում է յերկիրը զորեղ ձեռքով կառավարելու կարողություն և զգում տիրելու անհաղթելի տեսչ: Նրա յեղբայր Եգուարդ չորրորդը իր վորդիներով և մյուս յեղբայրը—Կլարենսը խոչընդունակ էն հանդիսանուած նրա ճանապարհին: Իշխան տեսնդով բռնված նա վճռում և մաքրել ինչ գնով ել լինի, իր վերելքի ճանապարհու: Դիմելով ամեն տեսակ վորոգայթների, մեկը մյուսի հետեւց նա վոչնչացնում և նրանց ամենայն սառնասրտությամբ: Վարձկաների ձեռքով սպանել և տալիս Կլարենսին, Ռել-սի Եգուարդին, սիրահար ձևանալով՝ իրեն և յենթարկում սպանվածի կնոջը—Աննային: Աննան յենթարկվում և նրա ներշնչման ուժին և անձնատուր լինում, թեպետ իր թեթև քայլի համար հետապայում չարաչաշ պատժվում: Յենթարկելով Աննային իր կամքին, Ռիչարդը շատ շուտով ծաղրի տուարկա յեղարձնում ու արտաքսում նրան պալատից: Այդպիսի մեծ հաղթանակ ձեռք բերելուց հետո Ռիչարդի անձնավորությունը ավելի հանդուգն և դառնում, Այժմ նա մեծ հավատ ունի իր ներքին արժանիքների վրա, ինչ-վոր ձգողական ուժ և տեսնում իր մեջ՝ հմայքի և կամքի: Կլարենսից հետո մնում են նրա յերկու մանուկները, վորպես ժառանգներ գահի: Կաշառված մարդասպանների միջոցով նա վոչնչացնել և տալիս այդ մանուկներին ել, Գահը դարձնում և թափուր և միակ թեկնածուն դառնում և ինքը: Բազմազան միջոցներով գործող Ռիչարդը այժմ փոխվում և առյերես և իր մարդկանց միջոցով նախապատրաստում «ժողովը» արամագրությունը: Մեծ խոստութենք և անում շըրջապատող ողալատականներին և մյուս աջակիցներին: Վերջինների մեջ առանձնապիս աչքի յե ընկնում Փեողալ Բուքին-

հեմը: Բայտ յերեսույթին, Ռիչարդի համար ամենն ինչ պատրաստ եր թագավորական գահը ընդմիշտ ժառանգելու, յերբ մեռած թագավորի ազգականներից մեկը՝ Ռիչմոնդը մեծ զորաբանակ և հանում անդիքական ափը և պատերազմ հայտարարում Ռիչարդին: Տեղի յե ունենում կատաղի կոխի, ուր կամքի ուժ և քաջություն ցույց տալուց հետո, ընկնում ե Ռիչարդը, վորով և կործանվում և գահի տիրապետության համար կառուցած նրա բարդ շնչը:

Այս զողբերգությունը գրելիս Շեքսպիրը ոգտագործել է նույն Հոլենշենի քրոնիկի մեջ տրված հերոսի արտաքին և ներքին նկարագիրը: Վորպես թի Ռիչարդը ծնվել և առամիներով, կծել և սովորել ավելի շուտ, քան ժաման, Դեմքով այլանդակ եր, ուսերից մեկն ավելի բարձր. չարանենգ եր, բայց սրամիտ: Վորպես զորավար՝ քաջ, հանգուցն և առատաձեռն: Կեղծող եր, գաղտնապահ և նենոց, Քաղաքական հաշիվների մեջ անխիղճ ու ստոր:

Շեքսպիրի Ռիչարդը ոժտված և զրեթե նույն հիմնական գծերով, Դա ցածրահասակ, ծուռ իրանով, չորացած ձեռքով մի սապատավոր այլանդակ մարդ և: Արտաքին այլանդակության գիտակցությունը շատ խորն և նրա մեջ: Այնքան խելացի յե նա, վոր ինքնախարեյությամբ չե աարվում իր արտաքինի նկատմամբ, ինչպես հաճախ Փիզիքական պակասություն ունեցողներից շատերը ցուցադրում են իրենց այդ թուլությունը:

Ռիչարդը գիտե և ամեն բոպե հիշում ե, վոր ինքը այլանդակ ե, վոր բնությունը «սոսկալի անարդարություն» ե գործել իր նկատմամբ: Ճիշտ ե, նա ոժտված և խելքով, սրամտությամբ և կամքի զորությամբ, բայց վոչ մեկն այդ հաակություններից չե ազատել նրան մարդկանց ծաղրից, անարգանքից, անզամ հալածանքից: Մանուկ հասակից նա զգացել ե բնության հասցրած ծաղրն ու վիրավորանքը, նրան չի սիրել նույնիսկ հարազատ մայրը: Նրա

սովորն անդամ շատերի ծիծաղն և շարժելու Շները հաշում եյին նրա վրա, հենց վոր յերևար փողոցում, վորովինետե սաստիկ եր կազում և շատ եր անշնորհք:

«ՅԵզ հասակով, և՛ կազմվածքով պատժված եմ յես,— ասում ե՞նա, —խարդախոված բնությունն այլանդակել ե՞նձ. անկատար, ծուռ ու ժամանակից առաջ են նետել ինձ այս տիեկոծ աշխարհը. կիսատ են շինել ինձ, որա համար ել կաղ եմ և զգելի, և շները հաշում են վրասի... Խնչով սպանեմ յես իմ ժամանակը. արեին կանդնած հետեւեմ իմ սովերին, մտածեմ, վոր հրեշ եմ. Ահա թե ինչնե, հույս չունենալով սիրահարությամբ վատնել որերս, անիծեցի յես մեր սնամեջ զվարճությունները և նետվեցի չարանենդ դործերի մեջ»:

Մազրն ու վիրավորանքը, վոր հասցնում եյին նրան պալատական միջավայրում, նախանձի ու վրեժի թույնով են լցնում նրա սիրտը: «Բնությունը, —շարունակում ե՞նա, —կաշառված ե յեղել իմ նկատմամբ. թե ե ինձ տվել նման չորացած ճյուղի, թիկունքիս դրել այս ահաղին սապատը: Յես զուրկ եմ իմ մոր նմանությունից: Մըթե հնարավոր և սիրել ինձ նմանին: Հիմար զառանցանք կլիներ այդ մասին մտածելը: Իսկ յեթե չկա ինձ համար այլ ուրախություն, քան տիրելն ու ննօնը, բազավորելը բոլոր նրանց վրա, վորոնք ինձանից գեղեցիկ են, ապա թաղի ձգտումը թող լինի իմ միակ տեհնչալի յերազը»:

Յեթե իշխանության ձգտելու գլխավոր դրդիչները քաղաքական եյին, ապա նրա ֆիզիքական այլանդակության շնորհիվ շրջապատողների (պալատում և հերցոգների աներում) ծաղրն ու վիրավորանքը ավելի պետք ե սրեյին հարաբերությունները, ավելի խորացնեյին նրա թշնամությունը իր ճանապարհին կանգնած արգելող ուժերի վերաբերամբ: Շեցսպիրը սրանով խորացրել ե Ռիչարդի դործողությունների հոգեբանական պատճառները:

Թագի տիրապետությունը այսպիսով Ռիչարդի համար դառնում է մի տենչալի յերագ, հալածող միտք, վորին նա պետք և համնի ամեն գնով։ Արքայական թագը նրա աշքին ստանում է կախարդիչ կերպարանք, նրա փայլը շացուցիչ, հրապուրող։ Սակայն նրան համնելու ճանապարհին կանգնած են կենդանի մարդկանց պարիսպներ։ Հուսահատվել, յերբեքք, Ռիչարդի անդրդվելի կտմքի առջև պետք և խորտակվեն բոլոր պարիսպները։ Մակրեթի նման նա շաղախում է իր ձեռքերը արյան մեջ, մի տարբերությամբ միայն, վոր Լեոդի Մակրեթի հյությունն ել Շեքսպիրը ամփոփել և Ռիչարդի մեջ, դարձել նրան ահազին յեռանդի տեր, իր մտքերի և զգացմունքների լիակատար զեկավարը։ Մակրեթի նման նրա մեջ ել զարթնում և խղճի խայթ, սակայն շատ ուշ, յերբ նա բազմաթիվ վոճիրներ և գործում և այնուամենայնիվ իր կործանումը դառնում անխուսափելի։

Ի՞նչ զործնական յեղանակներ և զործազրում Ռիչարդը իր նյութած վոճիրները զլուխ բերելու համար։ Կեղծիք, ստախոսություն, դավաճանություն, քամելեռնություն և մարդասպանություն,

Շեքսպիրի Ռիչարդը ընդունակ և ամենայն սառնաւսրությամբ արագ և վճռական միջոցներով չեղոքացնել և բացարձակ թշնամիներին, և՝ նույնիսկ անհիմն կասկած ներշնչող դժգոհներին։ Նրա համար այս կամ այն պալատականի կամ անվանի ֆեոդալի զորեղ և հեղինակազոր լինելը վոչ մի արժեք չունի։ Ամենաշնչին առիթով նրանք սրախողխող են լինում բերդի նկուղներում։ Խսկ նղուարդի յերկու սանուկների սպանությունը, վորը կատարվեց դարձյալ վարձկան մարդասպանների ձեռքով, Ռիչարդի զործած ամենածանր վոճիրն եւ Շեքսպիրի այդ տեսարանը խորապես դրամատիկական ե, Արյան մղձավանջը թագավորում և զոճագործի պալատում։ Ռիչարդն այնա հանգիստ չունի, նուղարձել և կասկածամիտ, ամեն կողմից հատուցում սպասե-

լով։ Պալատից դուրս գալիս նա զրահ և հաղնում, ձեռքը դրած սրի կոթին, պատրաստ պաշտպանվելու։

Վերևը մենք ասացինք, վոր նա Ռելախ Եղուարդին սպանելուց հետո, շատ շուտով տիրում և նրա գեղեցիկ կնոջ Աննային։ Իր պիեսի այդ կետը Շեքսպիրը դարձրել և պրորշեմատիկ և առիթ տվել բազմաթիվ քննադատությունների։ Ռիչարդի հանդպնությունը, և սիրային նրա բուռն բացարությունը Աննային այն ժամանակ, յերբ դեռ մնուած թագավորի (Աննայի սկսուրայրը) հուզարկավորությունը չեր վերջացել ։ Ըստ պիեսի, այնքան զորեղ, ազդու և անդիմադրելի յե դառնում Ռիչարդի դիմումը Աննային, վոր սրա ևս առցանցան սիրտը հալվում և առջորվող հերոսի առջե, և Աննան ընդունում և նրա առաջարկությունը։

Տարորինակ անակընկալ կա պիեսի այդ տեսարանի մեջ, վոր արհեստական և դարձնում պոտեկերը Ռիչարդը Աննային դիմավորում և թագավորի իշաղուան միջոցին, կանդնեցնում և սպերթը, մոտենում Աննային, համբերությամբ լսում նրա բուռն հարձակումները, ատելությունն ու արհամարհանքը, վերջապես զզվանքն ու անարգանքը՝ ուղղված նրա այլանդակ արտաքինին։ Յեվ ահա այս ամենից հետո անարգված Ռիչարդը իր շոայլած կրակոտ արտահայտություններով և հաղթանակով հանկարծակիի յե բերում թե ընթերցողին և թե դիտողին։ Հետաքրքրական և Ռիչարդի և Աննայի դիալոգը մինչև առաջինի հաղթանակը։ Լեզի Աննան զայրացած գոչում և. — և Յես կցանկայի մահացութույն թքել քեզ վրա»։ — Ռիչարդը պատասխանում և. — «Եթելի շրթունքներից թույն ծորալ չե կարող»։

ԱննԱ. — «Կորիք աչքից»։ Քո կերպարանքը վարակ ե ինձ համար»։

ՌիջԱՄԴ. — «Իմ աչքերը, վոր դժբախտության միջոցին ցամաք են յեղեք գեղեցկությանդ առջև կուրանում են արցունքից։ Դեռ յերբեք քնքույշ աղերսանքով յես չեմ դիմել

վոչ թշնամուս, վոչ բարեկամիս. իմ լեզուն չգիտե, թե ինչ ե փաղաքշիչ խոսքը... Լսիր, Լեղի Աննա, յեթե քո անխիղն սիրուը ընդունակ չե ներելու, ահա իմ սուրը, առ, հարվածիր, վերջ տուր մի հարվածով քեզանով լեցուն սիրաս: Մերկ կուրծքս դնում եմ քո առջև և ծնկաչոք մահ եմ քեզնից աղերսում: Աննան փորձում ե սրով հարվածել նրան, բայց հետո մի կողմն ե նետում այն:

Յեվ ահա այս ամենը վերջանում ե նրանով, վոր Ռիշարդը իր նշանի մատանին դնում ե Աննայի մատը:

Հուղարկավորությունը շարունակվում եւ Աննան դառնում ե Ռիշարդի կինը:

Ո՞վ իր Աննան, վոր այնպես հեշտությամբ սգերթը հարսանիք դարձրեց. չե՞ վոր նա վողբում եր նորերս սպանված իր ամուսնու կորուստը, այժմ ել դնում եր թագավորի (իր սկիսրայրի) դագաղի հետևից: Չե՞ վոր իր ամուսնու սպանությունը կատարված եր իր առջև կանգնած այդ չարագործի դավադրանքով, Ի՞նչը հեղաշրջեց Աննայի սիրու: Այս հարցի պատասխանը մննք չենք դտնում վաղբերգության մեջ: Շեքսպիրը չե պատճառաբանել այս տեսարանի անսակնեալը, և Ռիշարդի հաղթանակը մնում ե անհասկանալի, յեթե չասենք ավելին՝ անհավատալի: Շեքսպիրագետներից վոմանք տեսարանի այս անակնեալը բացատրել են Շեքսպիրի ունեցած արհամարհանքով դեպի կրավորական այն տիպը, վոր ընդունակ չե առողջ դատողությունը հակադրել կուրացած կրքին: Այդ մասսամբ ճիշտ ե, բայց հարցի պատասխանը չե: Մենք գիտենք, վոր Համլետի բերանով Շեքսպիրը արագիցիոն բնորոշումն ե տվել կնոջը առհասարակ: — «Նոչնչություն ե անունդ, կին»: Գիտենք Համլետի մոր պատմությունը, վորը ամուսնու մահվանից յերկու ամիս չանցած, «յերբ դեռ չեյին մաշվել այն կոշիկները, վորոնցով նա քայլում եր» նրա դագաղի հետևից, «համակ արցունք դարձած, ինչպես Նիոբեն», և նա դառնում ե

Համլետի հորեղբօր կինը, Գիտենք, վոր Համլետի ամբողջ զողբերգությունը հյուաված և այդ վոճրագործության շուրջը:

Ասդի Աննայի ամուսնությունը մասամբ նույն պատկերն եւ հիշեցնում: Այդ ամենը գիտենք, Սակայն դա չեղացարում և արդարացնում անակնկալը, Մեղ թվում և, թե տեսարանի անսպասելի լինելը պիտի թերությունն եւ ուրիշ վոչինչ, Գլխավոր թերությունն այն եւ, վոր Շեքսպիրը հաշվի չեւ առել պատմական փաստը Աննայի ամուսնության վերաբերյալ. ըստ Հոլինշենի, Աննան ամուսնում եւ Ռիչարդի հետ իր ամուսնու մահվանից յերկու տարի նետո: Յերկրորդ՝ քաղաքական հաշիվները վճռական դեր են խաղացել այդտեղ, քանի վոր Ռիչարդը ձգտում իր իր կողմը գրավել Աննայի ազգակից ֆեոդալական ընտանիքները:

Նման թերություններից զերծ չեն Շեքսպիրի գրական գործունեյության առաջին և յերկրորդ շրջանի զրամատիկական քրոնիկները. նույնիսկ նրա «Լիր արքա»ի առաջին յերկու տեսարանները աչքի յեն ընկնում իրենց անակընկալով,—յերր թագավորի և Կորգելիայի (հոր և աղջկա) խոսակցությունը այնպիսի տպավորություն և գործում, կտրծես նրանք առաջին անգամ են իրար հանդիպում:

Ռիչարդի և Աննայի անկեղծ սիրո մասին խոսք լինել չե կարող, վորովհետեւ անձնատուր յեղած կնոջը հետպայտմ, ինչպես ասել ենք, Ռիչարդը յենթարկում է կծու և շարախինդ ծաղրի:

Իր ունեցած զենքերը Ռիչարդը գործ և ածում առաջիկա գործողությունների մեջ, Սպանությունների ու վոճակների գնով գահը թափուր թողնելուց և իրեն միայն ժառանգ հոչակելուց հետո, Ռիչարդը կեղծության քող և առնամ իր զեմքի վրա, վոր իր սպասավորների ձեռքով նախապատրաստված ամբոխը աղերսանքով դիմի իրեն՝ ընդունելու թագավորական «ծանք կոչումը» և կառավարելու հոգատակ յերկիրը, Ռիչարդը այնպիս և պահում իրեն,

կարծես նրա համար այնքան ել հաճելի չե ունենալ իշխանական զավաղանը. կարծես նա համաձայնվում ե ընդունել այս, միմիայն զիջելով ժողովրդի թախանձանքներին:

Եեքսպիրը սկզբունք և գտղափար, այլ վոչ կենդանի տիպ ցուցադրած կլիներ, յեթե բացասական, դիվային Ռիշարդին մարդկային դրական գծեր հաղորդած չլիներ, չտար իրականության ճշմարիտ վերաբաղրությունը, խորը, բազմակողմանի, Ռիշարդը բարդ և իր հոգերանությամբ: Թեպես ուշ, բայց նա ընդունակ ե խղճի խայթ զգալու Հոգեկան ծանր տրամադրության, լքված մենակության ըոպեյին նրա յերևակայության մեջ որորվում են գործած վոճիրները, իր սրտի վրա զգում և ծանր մղձավանշ, վոր տանջում ու ճնշում ե նրա հոգին: Ռիշարդի լքումն ու ներքին պայքարը որինակ և ծառայել Շիլլերին: Նրա Ֆրանց Մոորի համար «Ավագակներ»ի մեջ: «Հուսահատությունը ինձ կը բծում ե, — ասում ե Ռիշարդը, — վոչ վոք չի կարող ինձ միմիթարել, սիրել, կմեռնեմ յես, և հավ ե իմ մահը վողբացողը»:

Ռիշարդը քաջ և և ընդունակ հերոսության, չնայած իր պակասավոր ֆիզիքականին, Հակառակորդի դեմ յելնելուց առաջ, նա կրակոտ ճառ և արտասանում, բորբաքելով իր զինվորներին թշնամու գեմ, միանգամայն վանելով իր սրտից սարսափին ու հուսահատությունը: «Թղճի մասին, — ասում ե նա, — վախկոտներն են միայն խոսում, ուժեղներին վախեցնելու համար: Ո՞ն, զեպի կրիվ, հավ անզիփացի աղջիկաններ. դեպի կրիվ, բրիտանական անվեհեր զյուզացիներ. առաջ, հավ հրաձիգներ, հարվածեցնք թշնամու սիրաը, ջարդեցնք նիզակները... սլացնք արյան լճակներով»: Յեզ Ռիշարդը նետվում ե կռվի ամենատաք տեղը, հարվածներ առվիս ու ստանում, սպանում թշնամու ասպետներից հնգին և ապա ինքն ել ընկնում հակառակորդի հարվածների տակ:

Ցույց տալով տիրապետության ձգտող անզուսպ արքաների կրթի սարսափները, Շեքսպիրը Ռիչմոնդին հանդիս և բերել զրամայում իրրեւ մարմնացում բարության և տռաքինության, Ռիչմոնդը Ռիչարդի հակառատկերն եւ Հաղթանակողը Ռիչմոնդն եւ, ուրեմն հաղթանակում եւ առաջինությունը, Այդպիս եր հարկավոր Շեքսպիրին, վորը միապետական լինելով, կողմանակից եր լավ, որինակելի միապետների իրապաշտ Շեքսպիրը սակայն իդեալական արքա չունի իր ստեղծագործությունների մեջ, Վհչ պատմական քրոնիկներում, վհչ իրականության մեջ այդպիսիներ նա չեղածել, Արքաների կյանքը վերարտադրող դործերում նա տվել եւ նրանց գերազանցապես մռայլ շրջապատի պատկերը, Այդպիս և յեղել իրականությունը: Իդեալական թագավորները թույլ ու անարյուն են գուրս բերված:

Շեքսպիրի այս վողքերգության մեջ, վորքան ել զակատարյալ նիմներ իր կառուցցածքով, ցայտուն կերպով հայտնաբերված են գեղարվեստական ստեղծագործական այն տարրերը, վորոնք նրա հետագա հոգերանական զրամաներում պետք եւ հասնեն հոյակապ բարձրության ու խորության:

6.

Դարաւորդանի դրումը ժեխավիրյան կոմեղիաների վրա և դրամատուրգի սոցիալական դիմքը նրանց մեջ։ Ազնվականուրյան պատկերը ըստ կոմեղիաների։ «Տասներկորդ գիշերը», «Ամառային զիշերվա յերազը», «Սիրո անոգուտ ճիզերը», «Անսանձի սանձահարումը» և վերջինի պրոլետի պրոնադագութ Սիայը։

Դրամատիկական քրոնիկների մեջ, ինչպես անսանգ, Շեքսպիրը իր միապետական հայացքներով ինդիվիդուալիստ, անդրադարձրեց անդիքական տիրող դասակարգերի այն տրամադրությունը, որը առաջացել եր իսպանական «մեծ նավատորմի» վաչնչացումից հետո, վորով հրմք եր դրվում Մեծ Բրիտանիայի միջազգային քաղաքական հեգեմոնիային։ Բուռն թափով կատարվող այդ վերելքը առաջին հերթին արգասիք եր առևտրական կապիտալի հաղթանակի, վորը տիրող հասարակական խավերի, նաև նրանց սպասարկող ինտելիգենցիայի սիրում լցնում եր առանձին պարծանքով։ Ներկա և ազագա մեծության գիտակցությունը հատուկ արտահայտություն ստացավ Շեքսպիրի պատմական դրամաների մեջ։ Իր աեղում մենք արգեն ասել ենք, թե ժամանակի մեծ անցքերը պատկերացնելու համար վհրպիսի պատմական ուղևորություններ և կատարել Շեքսպիրը և կյանքի բնչ շրջաններ ընդգրկել իր դրամատիկ քրոնիկնե-

ըռվէ Ներկա դեպքում մեղ պետք և հետաքրքրի այն հանդամանքը, վոր Շեքսպիրը, վորի հերոսների գալլերեյան գերազանցապես արիստոկրատական ե, պատմական անխուսափելիությամբ կոչված և յեղել դրվատելու առևտրական բուրժուազիայի համազործակցությամբ ձեռք բերված քաղաքական-պատմական նվաճումները։ Այստեղ Շեքսպիրը մեղ պատկերանում և իրրև խոշորագույն արտահայտիչը այն փոխանցման ռօջանի, յերբ տեղի յեր սևնենում մի կողմից արիստոկրատիայի վերասերման պրոցեսը, մյուս կողմից կապիտալիզմի վերելքը։

Շեքսպիրի համար նոր յերեսույթի միայն մի կողմն իր ընդունելի, վորը առանձին կամուրջով արիստոկրատիային կապում եր կապիտալիստական եպոխայի հետ. դա «արքայական վաճառականի» առաջացման փաստն եր («Վենետիկի վաճառական»ը), այսինքն առևտրական բուրժուազիայի բարձր խավերն եյին, վորոնք իրենց կենցաղով հիշեցնում եյին թագավորներին ու տոհմիկ արիստոկրատիային։ Շեքսպիրը, մեր կարծիքով, իր հիմնական ստեղծագործությունների մեջ բուրժուականացող արիստոկրատիայի և արիստոկրատացող բուրժուազիայի արտահայտիչն ե։ Յեթե իտալացի Դանտեն, Ֆր. Ենգելսի բնորոշումով, հանդիսանում է «միշնադարի վերջին պոետն ու նոր ժամանակների առաջին պոետը», ապա Շեքսպիրի մասին կարելի յե համարձուկ ասել, վոր նա վերածնուրյան նետ կապված նոր ժամանակների ամենամեծ պատճն ե։ Վաղբերդական ժռայլ գույներով անդրադարձնելով արիստոկրատիայի կործանումը, նա իր հայացքը չե շրջել դեպի միջնադարյան անցյալը, ուր անխուսափ թագավորել և ֆեոդալիզմը, այսինքն յետ չե նախել, կանգ չե առել նաև ներկայի վրա, այլ հանճարեղ թափանցողությամբ շոշափել և պրորեմներ, վորոնք նրա գործերը դարձնում են նոր դարերի սեփականություն։ Միաժամանակ՝ վերածնության մեծ սեալիստի զրվածքներում այդ

սլրոքիները ստացել են չափազանց բարդ արտահայտություն, անդրադարձին բարդ գունավորութներով ու կյանքի բաղմապիսի յերեսութների լայն ու խոր ընդգրկումով։ Այդ բարդությունը նկատելի յե վոչ միայն նրա մուայլ վողբերդությունների մեջ, այլ հայտնի չափով նաև պայծառ կումբիաների մեջ։

Անցնելով կոմեդիաներին, պետք ե ընդգծենք, վոր յեւթե Շեքսպիրը իր քրոնիկները գրելիս մեծ մասամբ յեղել և հետեւող և նմանվող իր տաղանդավոր նախորդների, կոմեդիաների մեջ նա հայտնաբերել ե գերազանց ինքնուրույնություն։ Այսուղ դրամատուրգը հումանիստի վրձինով անդրադրել և Ռենեսանսի փայլուն ու շքեղ շրջանը, կապված բացառապես վայելող դասակարգերի կյանքի հետ։ Հասկանալի պատճառներով նրա կոմեդիաներում չեյին կարող տրամադրում գտնել վերածնության շրջանի մութ կողմերը, այսինքն այն, թե ինչպես տիրող դասակարգերը գեպի տիրապետություն եյին գնում, վոտի տակ տալով ժողովրդական խավար, շահազործվող բազմություններին։

Իր կոմեդիաների մեջ տակալին յերիտասարդ Շեքսպիրը փայլել և հարուստ ֆանտազիայով, հրապուրող հումորով և անսպաս սրամտությամբ։

Նրա կոմեդիաների մեծ մասի վրա պարզապես նկատելի յե խուլական վերածնության ազդեցությունը, մի բան, վոր ընդհանուր եր պատմական այդ շրջանում գրեթե ամրող արևմտյան Յելքրուպայի համար, վորը թևակոխել եր կապիտալիստական զարգացման եպիխան։ Շեքսպիրյան կոմեդիաները հյումագած են այդ ընդհանուր ֆոնի վրա։ Նրանք անօքադարձնում են մի իրականություն, վորը աղատազըր-ված և միջնադարյան յեկեղեցական-ֆեոդալական կարգերի կապանքներից և մտել և փողային տնտեսության շրջանը։ Շեքսպիրյան գործող անձինք դուրս են ֆեոդալական նեղ կարգերից և չեն ճանաչում վանական կուլտուրայի հեղիւ-

նակությունը։ Վերածնության շրջանի ցայտուն, յեռանց կյանքի տիպերը Շեքսպիրի կոմեդիաներում սժոված են գործողության ձեռներեցությամբ, ունեն քննադատական վերաբերմունք զեղի շրջապատը։ Յեկեղեցու սրբազործած ճշմարտությունները այլևս հարգանք չեն ներշնչում։ «Հանդերձյալ կյանքի» պահանջներն ու կրոնական-ասկետական գաղափարները մոռացված են կամ մղված հետին մակարդակը։ Շեքսպիրի հերոսները, ընդհակառակը, լցված են կյանքում ապրելու, հրանվելու տենչով, հրապուրվելու նրա զեղեցկությամբ, վայելելու կյանքի և բնության բարիքները, նմանվելով այն Շնաթանոսներին», վորոնց համար ոտար և յեղեկ վերացական անդրաշխարհով զբաղվելու գաղափարը և վորոնք իրենց յերջանկությունը վորոնել են իրական աշխարհում։ Այս աեսանկյունից ե դիտել Շեքսպիրը շրջապատող իրականությունը՝ իր պիեսները զրելիս։ Պանծացնելով աշխարհիկ կյանքը, ծաղրի ու նշավակության և յենթարկում նա միշնադարյան իրականությունը իր մութ, հետամիաց կողմերով, կեղծող, ընչապաշտ, արտաքուստ սրբակենցաղ, իրապես անբարոյական տիպերով, Շեքսպիրի հանդես բերած տիպերն ու զործող անձինք կոմեդիաներում հիշեցնում են վերածնության դարաշրջանի նկարչության ստեղծած տիպերին, վորոնք միշնադարյան հյուծված ասկետների հակապատկերն եյին իրենց առողջ ֆիզիքականով, կըրպերով, ցանկություններով և առույգ ու կայտառ մարմարով։ Բուրժուական եպօխան պատկերազրող և նրա ճաշակի համապատասխան ներկերով նկարող Ռուբենսի ու նրան հետեղ Վան-Դեյկի կտավները իրենց բովանդակությամբ ու ընույթով ընդհանուր շատ գծեր ունեն Շեքսպիրի կոմեդիաների հերոսների հետ։

Սոսկ մարմարականի, սոսկ կենդանականի յերկրապատւներից մինչև անհոգ անտարբեր նուրբ եպիկուրյանները, ծանծաղամիտ, միամիտ քաղքենիներից մինչև համաշխար-

հային առեղծվածներ լուծելու ճգնող փիլիսոփաները իրենց հատուկ տեղն ունեն Շեքսպիրի ստեղծագործական գալլերեյում:

«Երածնության դարաշրջանի հատկանիշները ավելի ցայտուն գույներով կարելի յե գտնել Շեքսպիրի «Տասներկորդ գիշեր» պիեսում: Կոմեդիայի հերոսները՝ վայելող դասակարգից են, աղնվականներ, կյանքը նրանց համար յերջանկության, ուրախության, սիրո և զվարճության աղբյուր ե: Ուրիշները դատում են, սրանք ուսում, վայելում: Թե ով են զատողները, աշխարհի բարիքներով նրանց տունը լրցնողները, Շեքսպիրի պիեսում իհարկե չենք տեսնում:»

Կյանքի հոգսերից աղատ՝ Շեքսպիրի հերոսները սիրահարվում են, սրախոսում, կատակներ անում: Ծիծաղը հընչում ե ամեն տեղ, ուրախ ժամանց և տոնական տրամադրություն:

«Տասներկորդ գիշեր»ի կենտրոնական առանցքը նուրբ ու նկույն սերն ե՝ աղատ զողբերգական տարրերից: Կոմեդիայի հերոսների գործողությունը սիրո շուրջն և պարտվում: տերերի սիրային գործերին մասնակից են նույնիսկ ծառաները: Հերոս-հերոսուհիները կամ սիրում ու յերջանիկ են զգում իրենց, կամ սիրում ու ժամանակավորապես տանջվում, անձկության մեջ սպանելով տիսուր ժամերը, բայց յերեք տրագիմական վախճանի չեն հասնում: Ընդհակառակը, սիրոյին խաղերը վերջ ի վերջո պատկվում են ցանկալի վերջաբանով:

Շեքսպիրի այս պիեսի հիմքում դրված ե խոտալական մի նովելլա, հեղինակություն Մատթեոս Բանդելլոյի, վորը լայն ժողովրդականություն եր ստացել Շեքսպիրի ժամանակ, Նովելլայի սյուժեն մի հասարակ պատմություն և քույր ու յեղբայր յերկվորյակների, իրար այնքան նման, վոր անկարելի յեր զանազանել մնկին մյուսից, Նովելլայի բովանդակությունը հետազայում ուրիշ հեղինակների կող-

մից յենթարկվել ե բազմաթիվ փոփոխություններին Շեքս-
պիբը, սպավելով նույն սյուժեյից, իր հերթին մտցրել և
փոփոխություններ, ավելացրել ե գործող անձերի թիվը,
և վոր գլխավորն ե, խորացրել նրանց բնույթագիրը:

Ի Ամբիայի դուքս Որսինոն սիրահարված ե կալվածնե-
րի տեր գեղեցկուհի Ոլիվիային, վորը սակայն չի սիրում
նրան: Նոր միայն թաղած լինելով յեղբօրը, Ոլիվիան նույ-
նիսկ պատրաստ ե հրաժարվելու աշխարհիկ կյանքից և մե-
կուսանալ: Այդ մտադրությունը սակայն արդյունք ե ժա-
մանակավոր արամադրության: Նրա սառնությունը տան-
ջում ու տիսրեցնում ե դուքսին, դարձնելով նրա կյանքի
բոպենները անձկալի ու մելամաղձիկ: Դուքսը չի ուզում հրա-
ժարվել գեղեցկուհուն տիրելու մտքից: Նրա մոտ սպասավո-
րում ե նավարեկումից աղատված մի գեղեցիկ «աղատանի»
ծեղարիո անունով, վորի ձեռքով նամակներ ե ուղարկում
իր սիրո առարկային: Բայց աշխարհից «հրաժարվող» Ոլի-
վիան, հափշտակվելով «պատանուարասաքինով», բուռն կեր-
պով սիրահարվում ե նրան, կրկին և կրկին մերժելով դուք-
սին: Կար այդ ամենի մեջ մի գաղտնիք, վոր դժբախտու-
թյուն եր բոլոր շրջապատողների համար: Դա այն եր, վոր
սպասավոր «պատանի» ծեղարիոն աղջիկ եր և նրա իսկա-
կան անունը՝ Վիոլա: Նավարեկությունից հետո, կորցնելով
իր յեղբօրը, անվտանգ մնալու և յեղբօր հեաքը ավելի հեշտ
գտնելու համար նա հաղնում ե պատանու զգնատ և մանում
դուքս Որսինոյի մոտ իրքե սպասավոր: Բացի այդ նա ու-
ներ իր յեղբօր նմանությունը, անկարելի յեր զանազանել
մեկին մյուսից: Արտաքուստ «պատանի» Վիոլայի կրծքում
բարախում եր կանացի սիրտը, Վիոլան (նույնպես աղնիա-
կան ծագումով) սիրահարվում ե դուքս Որսինոյին: Առաջ է
գալիս մի բարդ կացություն, Վիոլայի տանջանքը խորս-
նում ե նրանով, վոր նա իրքե սպասավոր ստիպված ե դուք-
սի սիրահարական նամակները տանել Ոլիվիայի մոտ, լինել

միջնորդ իր սիրած տղամարդու և ոտար կնոջ սիջն, Գոբեծողությունը կոմեղիայում խճճվում է նոր անձերի հանդես դալով: Մտեղծված գրությունից բոլորին ել հանում է Վիուլայի յեղբայրը, Սերաստիանը, վորին կորած կամ խեղդված եյին համարում: Սերաստիանը պատահաբար հանդիպում է Ոլիվիային, սկզբում ընկնում թյուրիմացության մեջ, ապա ստանձնում և ծեղարիոյի դերը և վերջում համաձայնություն և տալիս ամուսնանալու Ոլիվիայի հետ: Յերբ պարզվում է թյուրիմացությունը, և դուքսը տեսնում է նրանց ամուսնացած, ինքը ևս վճռում է ամուսնանալ իրեն սիրող վիուլայի հետ:

Պիեսի բոլոր տեսարանները, ուր հանդես են գալիս դուքսն ու Ոլիվիան, Սերաստիանն ու Վիուլան, անցնում են աշխառյժ ու կենդանի, հերոսները պիեսի առանցքի շուրջը ստանում են անհրդ, անտրատում ու թեթև: Անհոգ ու ինքնադոհ գասակարդի կյանքի մի ցայտուն պատկեր և կոմեղիան: Նրա դլխավոր հերոսների սիրային ռոմանը տեղի յեռնենում իտալական գեղեցիկ բնության ծոցում, Դրանով հեղինակը իր դրվածքին ավելի բանաստեղծական բնույթ և հաղորդում:

Շեքսպիրի այս կոմեղիայում կան կողմնակի տեսարաններ՝ կցված զլխավոր սյուֆեյին, վորոնք, ամնայն հավանականությամբ, մտցված են կենդանություն ու ավելի շարժում հաղորդելու համար պիեսին: Շեքսպիրյան դրամատուրգիային անբաժան ծաղրածուն, Ոլիվիայի կալվածքներին կպած մի քանի պորտարույժ-պարագիտներ և պօւրիտան Մալվոլիոն աշխառյժ գործողություն են մացնում կոմեղիայի մեջ, պատճառելով դվարճություն:

Նովելլայի պարզ, անպանույն բովանդակությանը Շեքսպիրը իր վրձինի թեթև շարժումով կյանք ու խորություն և հաղորդել, յուրաքանչյուր գործող անձին տալով բնական վառ կերպարանք, Մենք զգում ենք դարեր առաջ ստեղծ-

ված այդ մարդկանց կենդանի շունչը, նրանք ապրում, գործում, շարժվում են մեր յերևակայության առջև, պատկերացնում ենք մի միջավայր, ուր կյանքը, վայելող տիրող ների կյանքը, խփում ե աղբյուրի նման։ Շեքսալիրի ստեղծագործության ույժն ե արել այդ. կերտելով իր սոցիալական միջավայրի կենդանի մարդկանց կենդանի պատկերը, նա ամփոփել ե նրանց մեջ հարազատ իրականության ընուրոշը, տիպականը։

Ճանաչելու համար հերոսներին մենք ընդհանուր կերպով կընդգծենք նրանց զլիսավոր հատկանիշները,

Կոմեդիայի զլիսավոր հերոսը դուքս Որսինոն եւ Նա պատկանում ե այն միջավայրին, ուր ամեն ինչ կուտակված ե ընտրյալների ու արտօնյալների համար։ Գոճ են ընտրյալները իրենց վիճակով, տեր են սոցիալական բոլոր բարիքների, չի հասնում նրանց ականջին հասարակական խոնարհ խավերի ցնցող իրականության ճիշը, Վերածնության հովերը նրբություն, ճկունություն, մոքերի վորոշ աղատություն են բերել նրանց, սեր գեղի գեղարվեստը, յերաժշգթյունը, Որսինոն այդ միջավայրի հարազատ զավակն ե։ Դա մի կուշտ ու ինքնազո՞ն արխատոկրատ ե, միշտ սպառող ու յերեք արտադրող, Սիրում ե կյանքը, կյանքի հաճույքը։ Նա ընդունակ չե խորը ապրելու իր ներքին աշխարհի վաղբերգական ցնցութերը նրա սերը ցավոտ չե։ մերժված անաջող սերը չի հուսահատեցնում, այլ թեթև մելամաղձով ե շղարցում նրան, իր միաթարությունը Ոլիվիայի մերժման հանգեց նա չի փնտում ծանր ու մաշտոց ինքնամփոփման մեջ, այլ ճգնում ե վիշտը փարատել յերաժշտությամբ ու գեղարվեստով։ Յերաժշտությունը շոյում ե թախծու գուքսի լսողությունը, զորպես հարավայրին մեղմ ղեփյուռ, վորը հմանուշակի ածուներից տանում ու ընրում ե արբեցուցիչ բուրմունք։ Սիրո զործերի մեջ զուքսը ավելի խոսքի մարդ ե, քան զործին Յերբ զպատանի» Վիոլան «խլում

և նրա ձեռքից դեղեցիկ Ոլիվիային, դուքսը մի վայրկյան կարծես թե պատրաստ ե վճռական գործողությունների գիւմել. սակայն դա սրտի բովեյական մի պոռթկում ե, վար ավելի խոսք ե, քան գործ: Նրա սերը հիմանդրու չե, վոչ ել ազետալի: Զեղազ Ոլիվիան, կլինի մի ուրիշը, հենց Վիոլան, վորը ամրողջովին նվիրված ե նրան, Ոլիվիայի փոխարեն նա շատ շուտով անդ տվեց իր սրտում Վիոլային:

Կանացի տիպերը կոմեդիայում հետաքրքրական են այն տեսակետից, վոր նրանց մեջ բանաստեղծը այնպիսի գծեր և գրել վորոնք ավելի լիամփոփ արտահայտություն են ստանում նրա մեծ վողբերգությունների մեջ:

Վիոլան և Ոլիվիան յերկու հակադիր տիպեր են: Առաջինը պատկանում ե Շեքսպիրի կրավորական տիպերի շարքին, յերկրորդը՝ ներգործական, Վիոլան ընդունակ ե սիրել սիրելով տանջվել մաշել իր կյանքը անխոս ու անտըրտունջ, սերը հասցնելով միմիայն մի վորոշ աստիճանի անձնագուհաւթյան: Նրա սերը յերազուն ե, նույնպես զուրկի վազբերդական շեշտից, ինչպես սանտիմենտալ Որսինյինը: Նա ականատես ե, թե ինչպես իր սիրած մարդը, դուքսը, միանդամայն անտարեր ե իրեն և համառորեն ձգուում է տիրել զեղեցիկ Ոլիվիային: Վոչ միայն այդքան. Վիոլան ստիպված է ակամա միջնորդի դեր կատարել սիրահարների մեջ: Նա պատրաստ է վորոշ զրկանք կրել, բայց յերեք չղիմել այնպիսի միջոցների, վորոնք ընդունակ լինելուն ծանը հետևանքով պատկելու նրա դործը: Սիրածի սրտի լարերը շարժելու համար նա պատրաստ է գործել քնքշությամբ ու անձնվիրությամբ: Պատրաստ է պաշտել նրան, նրա բնակարանի մոտ շինել իր խըճիթը «լալկան ուսիների ճյուղերից», նա յերգեր կորինի ու իր մերժված սիրո յերգերը կհնչեցնի գիշերային լուսության մեջ. սիրելիի անունով կղիւմի նա լեռ ու ժայռերին, վոր լսի նրանց յերեքինող արձագանքը, անվերջ կկրկնի նրա անունը յերկնքի ու յեր-

կրի միջն բնելած տարածության վրա, վոր կարողանա շարժել տնգութ սիրելանի դութն ու սիրաց:

Միանգամայն այլ բնութագիր և հաղորդել Շեքսպիրը Ոլլովիային, Ցեթե նա սիրում ե, ապա պետք և նաև սիրվի. նրա մեջ բորբոքվում ե վոչ միայն սիրելու, այլ և բուռն ցանկությամբ տիրելու տենչը: Միրո առարկան պետք է յենթարկվի նրան: Նա Վիոլայի նման կրավորական, վարանու չե. սիրո մեջ նա անձնվիրություն չի տեսնում. ամեն զնով պատրաստ է յենթարկելու իրեն իր սիրած առարկային. նենգություն, խորամանկություն, անպատիվ լինելու փորձն անգամ նա գործ կդնի, միայն թե հասնի իր տենչալի նպատակին: Մերը մի զգացմունք ե, վոր անկարեւիլ յե թազցնել: Միրո ջերմությունը, ըստ Շեքսպիրի, այս-քան զորեղ ե, վոր միշության մեջ անգամ փայլում ե կրակի նման: Մերը ստիպում ե զոհել թե անմեղությունը, թե պատիվը և թե ճշմարտությունը: Ոլլովիան Շեքսպիրի այն կանացի տիպերիցն ե,—վորոնց սիրո զգացմունքի զերակրշող տարրը մարդկային անզուսպ և անխորտակելի կիրքն ու ցանկություններն են,—վորոնց կրքոտ տենչը չբավարարվելու դեպքում կարող ե բուռն կերպով արտահայտվել վրեժինդրության, ցասկստ հարձակման և հաճախ ծանր տրավեդիայի մեջ: Կոմնդիայում սակայն յերևույթը այդ բուռն արտահայտությունը չե ստանում:

«Տասներկրորդ զիւերաի մեջ կա և մի այլ հետաքըրքրական անձնավորություն. դա Մալվոլիոն եւ Հանձին այդ հերոսի Շեքսպիրը հանդես ե բերել պուրիտանական շարժման տիպական ներկայացուցչին: Շեքսպիրագմտներից զոմանք արտահայտել են այն միտքը, թե գրամատուրդը անհատապես հակառակ տրամադրված լինելով ընդդեմ պուրիտանականության, կամեցել ե ծաղրել կրօնական շղարշունեցող բուրժուական այդ շարժուամը: Շեքսպիրը իր հերօսին վերցրել ե կյանքից:

Հազիր թե Շեքսպիրը այդ տիպը վերցրած լինի համեկանեա մի վողջ շարժում ծաղրելու համար. յեթե նման նպատակ ունենար, պեսք և յենթադրել, վոր նա կվերըլ-ներ շարժման իսկական ներկայացուցչին, Բայց նշմարտության մի կորիզ դրել և Շեքսպիրը այդ տիպի մեջ, Պուրիսանական շարժումը սոցիալական խոշոր յերևույթ եր, հակառված առնձարձակ ու զվայտ արխտոկրատիային։ Մարմույթին կոմեդիայում հայտարարում են պուրիտան, Նա չեսիրում վճչ զվարճություն, վճչ թատրոն, վճչ յերգ և վճչ յերաժշտություն, Նա դեմ և այն ամենին, ինչ հիշեցնում և աղնվականների կյանքի աղատ արտահայտությունը։ Նա խոսում և բարոյականության, ողահեցողության մասին, ոիրում և առանձնություն, փիլիսոփայական խոկումներ։ Նա հարձակվում և կոմեդիայի սրախոս ծաղրածուի վրա, դեմ և բաքոսյան սեղանի առաջ հնչող յերգեցողության, չե կարող տանել կերուխում սիրողների կատակներն ու յերգերը, Նրա համոզմաւնքները սակայն անհաստատ են, ինքը անհամեստ՝ մեծամիտ։ Նրան փորձության են յենթարկում, հիմարացնում են, և նա դառնում և խաղալիք շրջապատող կատակասերների ձեռքին։ Նրան նամակով հավատացնում են, վոր դքսունի Ոլիվիան սիրահարված և կամենում և ամուսնահալ նրա հետ։ Մարմույթն հավատում ե, և նրա յերեսից իսկույն ընկնում և պահեցողության և համեստության քողընա մոռանում և իր պահանջները ուրիշներից և անմիջապես սկսում և ծրագիրներ կադեմ ապագա ճոխ ու արխտոկրատ կենցաղի։ Ահա նա իրեն յերեակայում և Ոլիվիայի ամուսին, հարուստ ապարանքի տեր, թափշա բանկոնը հագին, նըստած պերն բաղկաթոռի վրա՝ արհամարհանքով նայում և իրենից ցածր մարդկանց, հրաժաններ որձակում իր բազմթիվ սպասավորներին և այլն և այլն...

Շեքսպիրը մերկացնում և Մարմույթին, դնելով նրան ծիծաղելի վիճակի մեջ,

Բայց Մարվոլիոն, պիեսի վերջում, նախ քան բեմից հեռանալը, սպառնում ե «ավաղակախմբին» վրեժինդիր լինելու թեթև նա պուրիտանների ծաղրանկարը լինելով հանգերձ մի զորեւ մասնիկ ուներ իր մեջ նրանցից, ապա նրա սպառնալիքը նշանակալից ե, վորովհետեւ ֆանատիկ պուրիտանները քաղաքացիական կովի ասպարեզ հանեցին, ընդամենը մի քանի տասնյակ տարի հետո, կըումվելի նման դեկավարի և բուրժուական սրով կարեցին անզլիական թագավորի գլուխը:

Շեքսպիրի յերիտասարդական ոռմանտիկ շրջանի կոմեդիաներից և Ելմառային զիօներվա յերազը, վորը, քննադատ Բրանդեսի կարծիքով, մի շեգեր և նուրբ քննարերության ու հաճելի կոմիզմի: Այստեղ սև Շեքսպիրը կրել ե իր նախորդներից մեկի ազգեցությունը, ոռմանտիկ բանաստեղծ Սպենսերի, սակայն ինչպես միշտ, հանճարի կնիքը դրաշմված և գրվածքի վրա: Պիեսի բաղադրիչ տարրերը յերեք են. անթիք սյուժեն, ժողովրդական ֆոլկլորը և արհեստագոր գերակատարների խումբը: Անթիք սյուժեն Շեքսպիրը վերցրել է Պլուտարքոսից կամ Զառւսերի «Քենցրբեյան ներկարներ»ից: Դրան հյուսել ե անզլիական ֆոլկլորը—ժողովրդական պոեզիան, հավատալիքները, յերգերը: Իսկ արհեստագորների խումբը իրենց ցածր կուտարական մակարդակով հանդես և բերված զվարճություն պատճառելու համար պայծառափայլ արխտոկրատներին:

Շեքսպիրագետներից վամանք այն կարծիքն են հայտնել, թե գրամատուրգը, ոգտվելով անթիք սյուժեյից, ըսունել և կեղծ կլասիկ գրականության ուղին: Որինակ, հերոսներին անվանում ե աթենացիներ, բայց իրոք նրանց տալիս ե անզլիական բովանդակություն: Սյուժեն հին-հունական անցյալից ե, սակայն նրա մեջ գրված խորքը ժամանակակից ե Շեքսպիրին, թեվ առ, չգիտես ինչու, համարվում ե էկեղծ դասական: Պետք ե այս արխայիկ հասկա-

ցողությունից հրաժարվելու Շեքսպիրի վոչ մի գրվածքի մեջ չկա այդպիսի տարր։ Հինգունական կամ հռոմեյական սյուժեներով զբելը՝ դա հին կուլտուրական ժառանգությունից ոգտվելու կամ նոր դասակարգի կողմից այն յուրացնելու մի ձև եր։ Հումանիստների հափշտակվելը անթիք աշխարհի կուլտուրական արժեքներով՝ պատճենավորելու հասարակ ձգտումից չեր բղխում, դա ուներ իր գործնական նշանակությունը։ Ոգտվելով դասական գրականության և արվեստի լավագույն նմուշներով, վերածնության շրջանի գործիչները մշակում, ստեղծում եյին իրենց դասակարգի սեփական կուլտուրան։ Այդպես ե վարվել նաև Շեքսպիրը։

Այս կոմնդիան դրելիս նա սգտվել ե նաև ժողովրդական ստեղծագործություններով, վորոնք գալիս են միջնադարյան ռոմանական անցյալից—բալլագ, հեքիաթ, հովվերդություն, ֆեյերիա։

«Ամառային գիեերվա յերազաի մեջ բանաստեղծի յերեվակայությունը թուիչքներ ե գործում հեքիաթային ֆանտաստիկ աշխարհը, անթիք աշխարհի սյուժեն հյուսում ե իր ժամանակի ժողովրդական հավատալիքների խորհրդանշաններով։

Կոմնդիայի մեջ բանաստեղծական շնորհը արտահայտվել ե առանց լարման ու ճիգի։ կարծես բանաստեղծը թեթև շտրիխներով ու գծերով ե նկարել բնության պատկերները և մոդական գավազանի անփույթ շարժումով դուրս կանչել հավերժահարսներին ու պարող վոգիներին։

Բանաստեղծի տրամադրությունը թեթև սիրային ե, յերազով, ռոմանատիկ։ Դործող անձերը շարժվում են խորհրդավոր վայրերում, բնության բազմապիսի խորշերում։ Մաղիկների, բույսերի բազմաթիվ անուններ ե հիշում Շեքսպիրը։ Միրիք հատվածների մեջ նրա անվանած ծաղիկներից, ինչպիս ասում են, կարելի յե ծաղկեփնջեր կազմել ու զգալ նրանց բույրը, Յերեսում ե, վոր պիեսը դրելիս բաւ-

նաստեղծի հիշողության մեջ զնրակենդանացած են յեղել մանկության վաղեմի ապավորությունները, յերբ նա, իրքն գյուղական մանուկ, բնության սիրահար, թափառում եր իր ծննդավայրի փարթամ շրջապատը, դիտելով բնության հրաշալիքները:

«Ամառային գիշերվա յերազ»ը Շեքսպիրը գրել և 1590-ին, ինչպես յենթադրում են, իր հովանավորներ կոմա Եսսեքսի կամ Լեյսթերի պատվին, ներկայացնելով այն Եսսեքսի հարսանիքից անմիջապես հետու Պիեսի սիրային և յերազային բնույթը շատ եր հարմարվում արիստոկրատ մեկնասի հարսանեկան տրամադրությանը:

Կոմեդիայի համառոտ բովանդակությունը հետեյալն և, Աթենքի թագավոր Թեզեյոսը կամենում և ամուսնանալ պատերազմում պարտված ամազոնների թագուհի Հիուզոլիտայի հետ և հարսանիքը շքեղ դարձնելու համար խնջույքի յե կանչում բոլոր աթենացի յերիտասարդներին Հենց այդ միշտոցին թագավորի մոտ և գալիս ծերունի Ծղեյոսը՝ զանգառավ իր աղջկա՝ Հերմիայի վրա, վոր սա հանդինում և հրաժարվել ամուսնանալու հոր ցանկացած մարդու՝ Դեմետրոսի հետ և սիրում և մի այլ յերիտասարդի՝ Կիզանդրոսին Հայրը պահանջում և պատճել աղջկանը, յեթե նրան չկարողանա համոզել թագավորը Հանուն աթենական որենքի հայրն ու թագավորը պահանջում են հնազանդվել կամ ընտրել յերկուսից մեկը՝ մահ կամ մննաստան, Մերը սակայն ուժեղ և թագավորի ու դաժան հոր դատաստանից, Նույն գիշեր Հերմիան և Լիզանդրոսը փախչում են անտառ, վորպես զիայնաեղից ել անցնեն Աթենքի թագավորության սահմանները,

Բայց Դեմետրոսին անհույս սիրում և Հերմիայի ընկերուհին՝ Հելենը, վորը խմանալով Հերմիայի և Լիզանդրոսի մտադրությունը, անմիջապես հայտնում է Դեմետրոսին, վորպես զի գեթ մի անգամ ել սիրածի հետ անցկացնի ժա-

ժանակը, Նրանք յերկուսով գնում են անտառ. դրանով Հեղենը կամենում ե իր ստորացման գնով մի զոհաբերություն արած լինել սիրած մարդուն, միայն թե լիներ նրա հետ, Դևմետրոսը ընդունում է Հեղենի առաջարկը, բայց չե հրաժարվում Հերմիային տիրելու մտքից:

Նույն անտառում Աթենքի արհեստավորների թատերական խումբը փորձեր ե անում մի սխեմատիկ պիեսի, վորը նա, սիրողների այդ խումբը, ներկայացնելու յև թագավորի հարսանիքի որը: Պիեսը նույնպես սիրահարների շուրջըն և պատվում, վորոնք մի վողբերգական դիպվածի պատճառով պիեսի վերջում անձնասպանություն են գործում, Պիեսի անունն և. «Երաբեկող վօղբերգություն Պիրամի և Թեսպի մասին»:

Այսակ են (անտառում) նաև անտառային վոգիները և նրանց թագավորն ու թագուհին՝ Որերոնն ու Տիտանիան, վորոնց աշխարհում ել նույնպիսի սիրային մի դրամա յև կատարվում: Անտառային վոգիների արքա Որերոնը կամենում և խիլ իր թագուհի Տիտանիայից նրա կրքի առարկա պատահուն և դարձնել նրան իր մանկավիկը: Թագուհին դիմագրում ե, Որերոնը կամենում և «խրատել» նրան, նա պատվիրում ե իրեն ստորագրյալ վոգիներից մեկին՝ գտնել իրենց հայտնի կախարդիչ ծաղիկը և քսել Տիտանիայի աշքերին քնած ժամանակի, վորպեսդի զարթնած բոպեյին նա առաջին պատահողին սիրահարվի: Արհեստավոր սիրողների խմբի ղեկավարի զլիին անտառային վոգին դնում և եշի գլուխ և ուզարկում թագուհու մոտ: Այդ վայրկյանին զարթնում և Տիտանիան և տեսնելով իր առջե եշի զլխով մարդուն՝ սաստիկ սիրահարվում ե:

Կախարդիչ միջոցը վոգիները գործ են դնում նաև անտառ փախած յերիտասարդների նկատմամբ. զարթնելով Դեմետրոսը և Լիզանդրոսը իրենց առջե տեսնում են Հեղենին, յերկուսն ել սիրահարվում են նրան:

թյուն սերմանելու հոգսը իրենց վրա յեն վերցնում բնության վողիները, անգամ քաղաքի արհեստավորները, ինչպես տեսանք, մտահոգված են հարգանք մատուցելու և դվարճություն պատճառելու յերկրի տիրոջը:

Պիեսի հարսանեկան զվարթ տրամադրությունը ավելի շեշտելու համար Շեքսպիրը մտցրել է յերկու այլ զույգերի ամուսնությունը (Դեմետրոսի և Լիդանդրոսի) և նոր տեսարաններ, սիրահար զույգերի դեմ ժամանակավոր արդելքներ հարուցելով, Բայց վերջում քոլոր թյուրիմացությունները աջող լուծում են ստանում, հանգիսականի մեջ ստեղծելով խաղաղ և ներդաշնակ տրամադրություն,

Հենց այդ ել պետք է լիներ արիստոկրատիային սպասավորող դրամատուրգի նպատակը,

Շեքսպիրը այս պիեսով հարկ եր տալիս նաև իր ամենամեծ հովանավորին՝ սիրո մեջ իրրև անմատչելի՝ Յեղիսարելիթ թագուհուն. «անտառային վոգիների թագավոր» Որերոնի բերնով նա ներբռում է «Արևմուտքում թագավորող զեղեցիկ վեստալունուն», վորին տիրելու ապարդյուն փորձ եր արել անգլիական կոմս Լեյստերը: Բայց, առված ե պիեսում, «վոտից գլուխ սպառազինված Կուպիդոնի այրող նետը ընկնում է «սառը լուսնի վրա» և մարում կուսական շողերի մեջ: Լուսինը այստեղ Յեղիսարելիթ թագուհու անձնավորումն եւ «Յեղ յես տեսա, —պատմում և Որերոնը, —ինչպես արքայական կույսը ազատ անցավ գնաց իր ճամբով և կրկին սուզվեց իր ջինջ մտքերի մեջ»:

Միապետական բանաստեղծի բնորոշ ներբռողը՝ ուղղված անգլիական պալատին:

Իդհալականացնելով և անմատչելի ներկայացնելով Յեղիսարելիթ թագուհուն իր պաեղիայում, Շեքսպիրը, ըստ յերեսութին, իր առաջին կոմեդիաներից մեկը զրելիս տա-

կազին չդիտելը, թե «արքայական կույսը» քանի անդամ եր ամուսնացել իր կյանքում:

Բայց մի բան պարզ եր յերիտասարդ Շեքսպիրի համար, այն, վոր սերը «կույր ե», խելաղար, շատ հաճախ վոչ մի պատվար չեն նաև աշում, ջնջում և տգնդության և զեղեցկության, արատավորի և անարատի սահմանները, առնմային և անդամ սասսայական տարրերությունները, ինչպես «Ծովմեռ և Զօւլիյնառում և Ըմբելլուսում, «Սիրահարները, ինչպես և խելագարները, — ասում ե Շեքսպիրը, — ոժտված են այնպիսի յեռուն ուղիղով, տարորինակ ֆանտազիայով, վոր հաճախ նրանց ճշմարտություն ե թվում այն, ինչ առողջ դատողությունը յերեք հասկանալ չի կարող: Խելագարը, սիրահարը և որոնտը կազմված են յերեակակայությունց: Մեկն իր շուրջը անթիվ «սատանաներ» և տեսնում, մյուսը — սիրահարը — կորցնում ե իրականության զգացողությունը և սևամորթ զնչունու դեմքին տեսնում Հելենի: (Հոմերոսյան. Ա.) դեղեցկությունը, իսկ պոետը (Շեքսպիրը ըստ յերեսույթին, նկատի ունի ռուսանոտիկ պահանջն) բորբոքված խենթությամբ մեկ գետին և ընկնում, մեկ դեպէ յերկինք սավառնում:

Սիրահարությունը թուլացնում ե ռեալ իրականության զգացողությունը, բայց նա ընդունակ և անձնազոհության, հերոսության: Այդ ցույց և տալիս Շեքսպիրը իր պիեսներում,

Շեքսպիրը դեմ ե բռնի ամուսնության, Եղեյոսի փորձերը բռնի ամուսնացնելու աղջկանը՝ հեղինակի կողմից համակրանք չեն վայելում: Բռնակալ հոր կողմն և նաև թագավորական որենքը, հնազանդություն կատ մահ, լավագույն դեպքում մենաստան՝ անհնազանդ աղջկա համար:

Շեքսպիրը կողմնակից ե ազատ ընտրության, և պիեսի հետագա բոլոր դործողությունները կատարվում են հոգուտ սիրող զույգերի, հոգուտ ազատ ընտրությանու Դաժան

հոր կերպարանքը այլևս չէ յերեւում պիեսի հետաշատեաւրաններում:

«Ամառային զիւերվա յերազքի մեջ հեղինակը դարձյալ յերկու կարգի կանանց և դուրս բերել. թույլ և ուժեղ կամքով, Մեկը Հեղենն ե, մյուսը Հերմիան. մեկի սերը ամբողջին հնագանդություն ե, պատրաստ անձնաղործության, մյուսը իր սիրածին տիրապետելու համար հանդուզն քայլերի գիտող, նույնիսկ ընդունակ հորից հրաժարվելու, ծնընդավայրից ընդմիջտ հնուանալու»:

Իսկ ինչ կարելի յե ասել կոմեդիայում ներկայացվող պիեսի և նրա դերակատար արհեստավորների մասին: Մեզ թվում ե, վոր այդ փոքրիկ պիեսում տվյալներ կան, վորոնք Շեքսպիրին իր սոցիալական ծագումով ավելի բնուրոշում են վորապես բուրժուական միջավայրի արդյունք, բան կում Ռյաւթլանգների Բելֆորյան ամրոցում ծնվածի:

Շեքսպիրը պարզ համակրանք ունի դեպի արհեստավորների խումբը, թեև քննադատորն ու ծաղրով և վերաբերում ինտերմեդիային: Ներկայացվող պիեսի անունը արդեն բնորաշ է. «Վոլբերգական կատակերգություն» և դաժանագույն մասն Պիրամի ու Թիսպի մասին»: Ցերիտասարդ դրամատուրդը այսանց վարպետորն ծաղրում և անգիսակոն հին պիեսների սխնմաաիզմը, նրանց հեղինակների ստրկական պատճենավորումը, հին թեմաների և անթիք նյութերի կազմա ուստագործումը: Բննադատում է արիստոտելյան յերեք միությունների անողայման գործադրումը և մանաւանդ հին աշխարհի հակատագրականության դադարի փոխադրումը անգլիական թատրոնական հողի վրա:

Անշուշտ ծաղր և նաև հասարակ արհեստավորներին գերասանի դերում դուրս բերելու փաստը: Սակայն հեղինակը մի տեղ պարզապես համակրանք և արտահայտում դեպի հասարակ մարդիկ, վորոնք հրադարակ են յեկել իրենց ուժերի չափով ըեմին ծառայելու: Ընդպծելով հանդերձ

նրանց անպատճաստ, անհամապատասխան լինելը բեմական գործի համար, Շեքսպիրը շեշտում և իր ներողամիտ վերաբերմունքը Թեզեյուս թագավորի բերանով. «Յերբ անզոր և ջանքը, ապա մաքուր աշխատանքը արդարացնում և գործի ակամա անաջողությունը»: Դրամատուրգը ուզում և ասել, վոր հասարակ արհեստավորների ջանքը նպատակին չ' հասնում, չտալով բարձր խաղ, բայց գովելի յե նրանց ձգտումն ու յեռանդը:

Նման վերաբերմունք դեպի կիսակիրթ, համեստ աշխատավորները հազիվ թե սպասելի յեր անզլիտական հին արիտակրատ ցեղի մի գրողից, վորը տակավին չեր անցել աշխատավոր խավերին մոտիկից ճանաչելու խորթ և անծանոթ հասարակական բովով:

Հոգուտ ստրենգֆորդցի Շեքսպիրի յեն խոսում նույնաղես ժողովրդական պարերն ու այն հարուստ ֆոլկլորը, վոր կազմում և «Ամառային գիշերվա յերազ»ի հիմնական նյութը:

Այս ամենը սակայն չե ժխտում այն տեսակետը, թե Շեքսպիրը հիմնականում մնում և իբրև անզլիտական բարձր խավերի, այսինքն արիտոկրատիայի դրամատուրգ (հոգատիրական թե առևտրական), նրանց ժամանակի հասարակական կաղմակերպության ջատագով, կաղմակերպություն, վոր յենթարկվել եր վերածնության շրջանի սրբազրության:

Ներկա կոմեդիան գրելիս Շեքսպիրը ապրել ե վերածնության արշալույսը, կյանքի մեջ փնտուել միայն լալ և պայծառ կողմեր, ոռմանտիկորեն վերապրել տիրող դասակարգերի հասարակական վայելքի շրջանը, առանց թափանցելու ժամանակի կարգերում թաղված սոցիալական հակառակությունների մեջ, վորոնք հետազայում նրան առատ նյութ՝ տվին մեծ վողբերդություններ գրելու համար:

«Ամառային գիշերովա յերազը վերջանում և բարի ելդիքի, զոգիների հոգատար վերաբերմունքով դեպի մարդիկ, Ելքերը ցրվում են ամենուրեք սեր և խաղաղություն տարածելու համար»: «Այժմ,—ասում ե Որերոնը նրանց, դաշտային ցողով շաղ տվեք բնակարանները և հավիտենական խաղաղություն ու յերջանկություն հաստատեցեք մարդկանց մեջ»:

Նույն դասակարդի միևնույն իրականությունն ու տրամադրությունները մենք զտնում ենք Շեքսպիրի մյուս կոմեդիաներում: Բնորոշ են «Սիրո անօգուտ նիզերը և «Անսանձի սանձահարումը», վորոնց վրա համառոտակի կանդ կանանենք:

Այս կոմեդիաների բովանդակությունն ու հյուսվածքը նույնպես ցույց են տալիս, վոր պատմական ասպարեզ մտած բուրժուական գասակարգի դրոհները տակավիին անմիջական վտանգ չեն սպառնում արիստոկրատիայի պալատներին և ամբողջներին:

Պերճանքը, շուշը, առատությունն ու լիությունը կատարելապես թագավորում են այնտեղ: Աշխատանքից ու առողյա հոգսերից ազատ, շրջապատված աղախիններով ու ծառաներով, Շեքսպիրի արիստոկրատ հերոսները միայն մի բանի մասին են մտածում—ինչպես վայելել լիառատ կյանքը: Ցեղ թագավորներն ու պրինցները իրենց պարագ ժամանուիլու համար սիրային խաղեր են սարքում, կազմակերպում են դիմակահանդեսներ, պար, յերաժշտություն և թատրոն:

Թեպետ «Սիրո անօգուտ նիզերը ունեն փաստական հիմք, և կոմեդիայի սյուժեյի համար հեղինակը ոգտվել է ֆրանսիական և խոալական փաստական աղբյուրներից, նյութը հարմարեցնելով անդիխական արիստոկրատ միջավայրին, Սակայն սյուժեյից նա ամենայն խնամքով հեռացրել և այն ամենը, ինչ ընդունակ եք մութ ստվեր ձգելու,

ախրություն կամ տհաճություն պատճառելու կոմեդիան դիտողներին:

Նավարբայի թագավորի և թագուհու հետ են կապված, որինակ, Բարդուղիմեսոյան գիշերվա կոտորածները, բողոքականների և կաթոլիկների, աղջկականության և բուրժուազիայի պատերազմները, վորոնք հանվել են սյուժեյից և փոխարենը մոցվել սիրային անմեղ խաղեր, անվերջ զվարճություն, հանդեսներ և այլն, չերոսների անունները փոխված են, բացառությամբ մի քանիսի:

Կոմեդիայի համառառ բովանդակությունն ե. Նավարբայի թագավոր Ֆերդինանդը իրեն մոտիկ մի քանի յերեսասարդների հետ վորոշում և «նոր հիմքերի վրա» գնել իրենց կյանքը, վերականգնել և վաղեմի կուսակցությունը և անդորր խորհրդածությունը: Թագավորը վճռում և մի վորոշ ժամանակ մացնել կյանքի մեջ խստություն և պահեցողություն, ինչը և իր հետևորդների խռամբը յերեք տարվա ընթացքում պետք և իրենց անձը յենթարկեն մարմարական պահեցողության, հրաժարվելով վորեն առնչություն ունենալու կանանց հետ Այդ նորատակով թագավորը հիմնում և մի «ակադեմիա», վորի անդամները կնոջ յերես չպետք և տեսնեն: Նույնիսկ վորոշ կանոններ են սահմանում ուստիվիքի և հանգատի համար: Սակայն այդ ժամանակ տեղի յեւ ունենում մի անակնկալ: Ծագավորի մոտ վորոյեն դիմանագիտական պատրամավորություն դալիս և ֆրանսիական պրինցուհին գեղեցիկ կանանց շքախմբավէ: Հասկանալիք յեւ միանգամայն, թե ինչ իրարանցում և մըսցնում գեղեցկուհիների յերեւալը արքայական Շահապատում, վորի «ճգնավորները» յերիտասարդ ասապիտները ելին:

Մոռացվում են ի հարկե պահեցողության կանոնները, կին չտեսնելու խստադույն ուրենքը: Առաջին վայրկյանից բոլորն ել սկսում են սիրահարվել, տղամարդիկ վոտանապորներ, սիրային սոնետներ են գրում ու զրկում իրենց

սիրո առարկային, կանայք յերազում են ու սեր վորոնում։ Յերկու կողմից ել անհեթեթ բաներ են անում, սիրային նամակները ուրիշների ձեռքն են անցնում, բացվում են սիրահարների գաղտնիքը։ Բայց սիրային արշավի ամենատաք ժամանակ հանկարծ լուր և համառմ, թե ֆրանսիական թագավորը, պրինցունու հայրը, վախճանվել է, և կանանց պատղամավորությունը պնտք և վերադառնա Ֆրանս սիրա, Ասպետներն ու գնդեցիունիները ատիպված են իրարից բաժանվել, թեպես ժամանակավոր, վորապեսդի հետո իրար հետ ամռանանան։

Խոացած դույներով պատկերել և Շեքսպիրը Ռենեանուի շրջանի փայլը արխատոկրատական միջավայրի, կանանց պաշտամունքը, գուննող, սրամիտ արամախոսությունը, յերբեմն ծայրանեղության հասած սնամեջ բանամրցանքը, վոր ավելի արդյունք և մըցողների Փանտազիայի, քան արամարանություն։ Այդ մըցանքի մեջ յետ չեն մնում ինչպես ազամարդիկ, այնպես և կանայք։ Նրանք բոլորն ել անդիր են արել ժամանակի անդլիական գրող Լիլիթի «Ծննդունես կամ առամտուրյան անտօնիան» վեպը, վորի նուրբ, նկան, փքուն և ծայրահեղորեն արհեստական լեզուն դարձել եր սիրականության անդլիական պաշտամական միջավայրի և աղնվականության։ Բացի այդ Շեքսպիրի այս կոմնդիան պարունակում և իր մեջ բաղմաթիվ առնեաներ, վորոնք տարրալուծված են զործող անձերի դրույցների մեջ։

Հետաքրքիր դեմք և պիհում սպանական կավալեր Դոն Ազրիանո զը Արմադոն, վորը շարունակ պատվում է պալտակ շուրջը, զվարճացնում և թաշավորին, ֆանտազյոր և, ծաղրածու։ Խոսում և մի լաղվով, վոր հատում և միայն սպանական տապեատկան վեհակի հերոսներին, Շեքսպիրը կծու ծաղրում և այդ կալալերի թեթևամատությունը, նրա փքուն լիդուն, զատարկ ֆրազները, Գլուխը քամիներով լցված այդ տապեատը սակայն բռնված և ծայրահեղ մեծամատությամբ։

Հպարտ իր ազնվական ծագումով՝ նա մեծ արհամարհանք ունի դեպի հասարակ մարդիկ, դեպի գյուղացիք, վորոնց բարբարոս և անվանում կամ ատելի և տղետ ամբոխ։ Իրականության զգացումից դուրի՝ նա ուզում է տիրապետել գեղեցիկ գեղջկուհի ժաքնետուին և այդ նպատակով հարկ է համարում ըստ ընդունված ձևականության սիրային նամակ ուղարկելու իր սիրո առարկային։

Թեև թեթևակի, բայց շատ ընորոշ կերպով Շեքսպիրը պատկերել է ուշացած ասպետի ախալը հանձին Արմադոյի, ծաղրել ասոցետական վեպերի սնամեջ լեզուն, թեթևամիսու ու բութ ասպետին, զորը ավելի լայն ու բազմակողմանի տրված և անմահ Սերգանանուի կողմից՝ «Դօն Կիլսու Լամանչեցի անկրկնելի գրվածքում։

Մենք կամենում ենք այստեղ բերել Դօն Աղրիանո ու Արմադոյի գրած նամակը իր «Դուլսինեային»—գեղջկուհի ժաքնետուին, Այդ նամակը բավական և ընորոշելու համար նրա «ասպետ» հեղինակին։

«Յերդվում եմ յերկնքով,—դրում է նա իր գյուղական սիրունուն, —միանգամայն անվիճելի յե, զոր դու գեղեցիկ ես, անկասկած ե, զոր դու հրապուրիչ ես, և ճշմարիտ ե, ինչպես ինքը ճշմարտությունը, զոր դու սիրուն ես։ Ո՛, զո՞ւ, գեղեցկությամբ գեղեցկությունը գերազանցող, հրապույրով՝ հրապույրը, ճշմարտությամբ՝ ճշմարտությունը։ Խղճա քո հերսու-վասսալին։ Արժանահարգ և կորովագույն արքա Կոֆեառուան իր հայացքն ուղղեց կործանիչ և անվիճելի մուրացիկ կնոջ—Զենելեփոնի վրա։ իսկ նա, թագավորը, իրավամբ այն մարդն եր, զորը լիակատար իրավունք ուներ ասելու՝ veni, vidi, vici, զորը ամրոխի լեզվով — ա, ատելի և տղիտագույն ամբոխ—նշանակում ե՝ յեկա, տեսա, հաղթեցի։ Եեկա՝ մեկ, տեսա՝ յերկու, հաղթեցի՝ յերեք։ Ո՞վ յեկավ։—արքան։ Ինչմէ յեկավ։—տեսնելու։ Ինչմէ տեսավ։—հաղթելու։ Ո՞մ մոտ յեկավ։—աղքատ կնոշ։ Ո՞մ աեսավ։—

աղքատ կնոջ: Ո՞ւմ հաղթեց.—աղքատ կնոջ: Հետևանքը—հաղթանակ: Ո՞ւմ կողմը.—արքայի: Ստրկացվողը՝ հարստացած, Ո՞վ և հարստացողը: Աղքատ կինը:—Անակնկալը—ամուսնությունը, Ո՞ւմ կողմից: Արքայի, Վհչ, յերկուսի կողմից: Յես—թագավոր եմ, վորովհատ այդ և ասում համնմատությունը: Դու աղքատ կին ես, և դա ապացուցվում ե քոցածր հասարակական դիրքով: Հրամայեմ, վոր սիրես ինձ: Յես այդ կարող եյի անել Բոնությամբ ձեռք ընելու քո սերը: Այդ ել կարող եյի անել Աղերսմէլ քո սերը: Հենց այդ կանեմ յես, Ինչով ես փոխարինելու քո փալասները.—դեղեցիկ զգեստներով: Թո վոչնչությունը.—պատվով, հարդանքով: Քեզ.—ինձանով: Այդպիս. սպասելով պատասխանիդ, պղծելով շրթունքներս վատներիդ վրա, աչքերս դեմքիդ վրա, սիրտու՝ մարմնիդ բռլոր մասերի վրա: Խորին ցանկությամբ պատրաստ քեզ ծառայելու, քո՝ Դոն Աղքիանո դը Արմագոս:

Մնանկության, ներքին վոչնչության հասած ազնվական զասակարգի ցայտուն արտահայտիչն ե այս սնապարծ «կավալերը», վորին արդեն անողորմ կերպով դուրս եղ քշում բուրժուազիան պատմական ասպարեզից: Շեքսպիրը, իբրև ունալիստ, մի քանի շտրիխով տվել ե կենդանի պատկերը այն զասակարգի ներկայացուցչի, վորին մեծ մասամբ կտպված և յեղել ինքը իր աշխարհայացքով ու հոգերանությամբ:

Այդ հոգերանությունն ու աշխարհայացքը թելադրել են Շեքսպիրին արհամարհական վերաբերմունք ցուցազրել պիեսի բաղադրիչ տարրը կազմող գյուղացիներին (քաղաքի արհեստավորների նկատմամբ, ինչպես տեսանք, նա ավելի բարեհոգի վերաբերմունք ե ցույց տվել):

Նրանք գուրս են ըերված այստեղ քթամիտ, կոպիտ, ագետ: Նրանց ներկայությունը ավելի ես ընդգծում ե արիստօկրատ զասակարգի նրբությունն ու արտաքին փայ-

լը Վոչ վոք չի կարող ժխտել դրամատուրգի իրավունքը՝ պատկերացնելու մարդկային ըթությունն ու տխմար կողմերը. բայց ինչո՞ւ անպատճառ հասարակ շամբոխից։ Շեքսպիրի համար սրամիտ, բնական խնլքով ոժտված դյուզացի դոյություն չե ունեցել Անտաշ, կոշա, վայրենի արարածներ ու masse, վորոնք ամենաշատը կարող են ծառա լինել տերերի մոտ, իրենց հավիտենական ըթությամբ դառնալով ծաղր ու ծանակի առարկա նույն տերերի համար։

«Անօանձի սանձահարումը» սկսվում է մի ջատ ընորոշ պատկերով։ Լորդը զվարճություն և փնտում նոր և վորսից վերադարձել և հանկարծ տեսնում և գետնի վրա գինետան առաջ ընկած մի հարբած մարդու, տեղական պղընձագործին, վորի անունն և Քրիստոֆեր Սլայ Լորդը անմիջապես վորոշում է զվարճության առարկա գարձնել պղընձագործին։ Նա հրամայում է սպասավորներին իսկույն ամրոց տանել նրան, հազցնել թանդաղին զիշերային դգեստ, ոլառկեցնել շքեղ ննջարանում, հարուստ անկողնի մեջ, շըրջապատել ծառաներով, վորպեսզի հարբած թշվառականը զարթնելով, կարծի թե յերազի մեջ ե, Լորդը հրամայում է զարդարել սենյակի ոլառերը դունեղ պատկերներով, սենյակը լցնել անուշ բուրմունքով, լվանալ հարբածի դլուխն ոծանելիքով, իսկ արթնացումը դիմավորել անսպասելի յերաժշտությամբ։

Զարթնում է Սլայը. լորդի սպասավորները հնազանդ կանգնած են նրա առջև, նրանց թվում նաև ինքը լորդը սպասավորի զգեստով, նրան դիմում են «Ձերդ պայծառափայլություն» տիտղոսով, կամենալով շշմեցնել հանկարծակիր բերված արհեստավորին։

Սլայը ճիշտ վոր յերազի մեջ ե, Դեռ յերեկ գինետան տիրոջ հետ վեճ ուներ, հարբել եր սաստիկ, փռվելընկել եր զինետան առջև։ Իսկ այսոր զարթնել ե շքեղ պալատի փառանեղ ննջարանում թերմաղ, թե իրականություն։

Ապաստավորները շրջադատել են նրան և կատարում են այն գերը, վոր թելադրել եւ նրանց լորդը: Նրանցից մեկը արծաթյա սկզբանով ծաղիկներ եւ բերում, մյուսը սափորով վարդեղուր՝ յերեսը լիանալու, յերբորդը սրբի, թանդադին զդուսուներ: խոսում են վորսի շների, նժույդների և կնոջ—լեզիի մասին, վորը իբր թե տանջվում և ամուսնու տեսկան՝ հիմանդրության պատճառով:

Գետը և այնողես անելը պատվիրում և լորդը սպասավորներին, վոր Սլայը հավատա, թե ինքը խելադար և յեղել և վոր նա Սլայ չե, վոր այդ ըոլորը զառանցանք և յեղել և վոր ինքը խելադան անվանի իշխան և,

Շեքսպիրի պիեսի նախարանից չի յերեսում, վոր լորդին աշջողված լինի վորեն չափով հավատացնելու Սլային, թե նա իրոք իշխան և և վոչ աքրեցող պղնձագործ:

Տպավորությունը տեսական գարձնելու համար լորդը սպասադործում և, նոր յեկած դերասանական խմբի ներկայացումը, վորը Սլայի ներկայությամբ խաղում և «Անսանձի սանձահարումը» կոմեդիան: Պիեսը վոչ մի առնչություն, ներքին կազ չունի նախերդանքի հետ:

Թե մեկը և թե մյուսը անսպառ զվարճության առարկա յեւ լորդի համար: Այս և նախերդանքի նպատակը:

Սոցիալական եքսպերիմենտի նույտակ չեւ ունեցել Շեքսպիրը, Սլային փոխազրելով լորդի պալատը, թեև լորդը յենթագրում է, թե մի գուցե աղքատ պղնձագործը շփոթի յերազը և իրականությունը, մեծ զվարճանք պատճառելով կուշտ արխատոկրատին: Յեթե նման նպատակ ունենար Շեքսպիրը, կարճ նախարանով նա չեր սահմանափակվի, այլ կխորացներ նյութը և կհասցներ նրան իր արամարանական վախճանին, ինարկե տալով յերեսույթի պատկերը իր դասակարգի աշխարհույացքի լույսերի տակ:

Մի բան պարզ է, վոր Շեքսպիրի տեսակետից բնական են աշխարհի այն կարգերը, վարոնք ստեղծում են մի

կողմից աշխարհի բարիքները վայելող լորդեր, մյուս կողմից մարդկային դեմքը աղճատող պայմանների յենթակա Ալայներ:

«Անսանձի սանձանարումը» փայլուն պիես ե, վորի մեջ կյանքը հորդում և ուժեղ ազբյուրի նման, թեպետ նրա գործող անձերը իրենց տիպական գծերով ու շարժումներով հասցված են չափաղանցության, սակայն հեղինակի հիմնական դադարիարը պահպանվել և իր հարաղատությամբ, առանց գոմեկացման:

Ո՞ւմ են սանձանարում: Յեվ մի և սանձանարողը: Տղամարդը սանձանարում և կնոջը առնասարակ. — ամսաբնը «զաստիարակում» եւ իր կնոջը մասնավորապես: Գործողությունը տեղի յե ունենում, ինչպես միշտ, աղնվական միջավայրում: Համառ, անդիջող աղջկանը հանդիպում և նույնպիսի համառ ու իրասած յերիասարդը, վորը կնոջը «խրամելու» դիտումով ամուսնության առաջին որդենից խստապաւյն պայմաններ և սաեղծում կնոջ համար: Յեվ կնոջ կամքը կոտրում ե, դարձնում նրան հնաղանդ: «Անսանձը սանձանարփում ե,

Վերն և այստեղ Շեքսպիրի տեսակետը կանանց և ամուսնության վրա, կինը պետք և անպայման հնաղանդ լինի, ամուսնուն: Միրո մեջ լինի հավատարիմ, նվիրված, համեստ Ամուսնանալուց հետո՝ մոռանա իր յեսը, մոռանա ծնողների տանը այս կամ այն չափով ունեցած իր ինքնուրույնությաւնը:

Շեքսպիրի կանացի տիպերը ոժտված են անսահման սիրելու բնույնակությամբ. սերը ամբողջովին լցնում է նըրանց կյանքը: Միրած աղամարդու հետ ամուսնանալու համար նրանք մոռանում են ծնողներին, քույր ու յեղբայրներին: Նման վճռական քայլ անելու համար նրանք ցուցադրում են զարմանալի կամքի ույժ և համառություն, Բայց հենց վար կապվում են սիրած տղամարդու հետ, կորց-

նում են ամեն ինքնուրույնություն, կամքի ուժ և վերած-վում մարմարացած հնագանդության։ Սերը դառնում է անձ-նազոհություն, կինը՝ ընտանիքի դիմագուրկ անդամը։

Յեզ կնոջ այս վիճակը Շեքսպիրի տեսակետից իդեալ է, վորին պետք է ձգտել և վորի խանգարումը կնոջ կողմ-ությ առաջ և բերում խիստ ռեակցիա տղամարդու մեջ։ Այդ ռեակցիան վողջունվում է Շեքսպիրի ներկա պիեսում։ Դա արտահայտվում է «անսանձին» սանձահարելու բուռն դոր-ծոզության մեջ։

Ճիշտ է, Շեքսպիրը շտու և մեղմացրել հին անդիխական և ընդհանուր դրականության մեջ գոյություն ունեցող նը-ման սանձահարման կոպիտ կողմերը։ Ճիշտ է նաև, վոր «անսանձ» կատարինելին (պիեսի հերոսուհին) բուռն կեր-պով սանձահարող Պետրուչիոն (պիեսի հերոսը և առաջնի ամուսինը) վոչ մի ֆիզիքական բռնություն չե գործադրում կնոջ վրա։ Ընդհակառակը, բավականանում է իրը թե «բա-րոյական» մնշումներով և իր շշմեցուցիչ միջոցները բացա-տրում ե գեղի կինն ունեցած «սիրո զգացմունքով»։ Բայց վերջին հաշվով Շեքսպիրի կոմեդիայում ցուցադրված բոլոր գործողությունները մի նալատակ ունեն։ Պրկել կնոջը ամեն իրավունքից, դարձնել նրան գիմազուրկ, յենթարկել տղա-մարդու կամքին, սրբազործելով նրա ստրկական վիճակը սոցիալական կյանքում։

Շեքսպիրի այս կոմեդիայում «անսանձ» կնոջ սանձա-հարման գործողություններին տրված է կատակի ընույթ, առաջացնելով անվերջ ծիծառ։ Ըստ յերեսույթին, այդ ե պատճառը, վոր պիեսը մինչև այժմ ել պահպանել է իր թարմությունը և վորոշ լուսարանությամբ շարունակում է բնմագրվել։

Շեքսպիրյան ևպիսայի վերաբերմունքը կանանց իրա-վունքի մասին անառարկելի սրարդությամբ ամփոփված են


պիեսի հերոսուհու՝ սկզբում անսանձ, հետո սանձահարված հատարինելի հետեւյալ խոսքների մեջ, վոր նա ուղղում է բոլոր կանանց:

«Թո ամուսինը—քո տերն ե, —ասում ե «խելքի յեկած» կատարինեն,—քո կյանքն ե, քեզ պահպանողը, քո զիսավորը, իշխողը, միշտ քո մասին հոգառվ լիցուն, ամենուրեք՝ աշխատանքի մեջ, ցամաքի վրա թե ծովում: Փոթորկի ժամանակ նա չի քնում, ասուչում ե ցերեկը, յերբ դու ոկտակած ես տաք անկողնում: Յեզ ինչ ե նրա պահանջը այդ ամենի դիմաց: Սեր, հնազանդություն և փայփայանք: Վարքան չնշին բան, Հպատակի պարտականությունը տիրողի առջև՝ ահա կնոջ պարտականությունը իր ամուսնու առջև: Յեթե կինը կռվարար ե, չար, կոողիս և անհնաղանդ՝ հանդեպ ամուսնու բարի կամքին, —նա ապստամբ ե, ուրեմն և արժանի մահապատժի՝ պետության դեմ բարձրացրած իր հանգուդն բռնտի համար: Ինչնեւ յե կինը ձգում ինքնիշխանության, յերբ նրա ճակատագիրը հնազանդությունն եւ:

Հիմասկան միտքը պարզ ե. կնոջ տնտեսական կախան վիճակը զիսավոր պատճառն և նրա թուլության և ստրկության: Եեքսպիրի հանճարեղ միտքը զդասսա ե. նա դործ չունի վոչ միստիցիզմի, վոչ եթ վերուստ կանանց անհավասար ստեղծելու և վոչ ել «Փիզիոլոգիական առանձնահատկությունների» հետ: Թո ամուսինը,—ասում ե Եեքսպիրը իր հերոսուհու բնըանով,—քո տերն ե, վորովհետեւ նա քո պահողն ու պահպանողն ե, ցամաքում և ծովում աշխատողը, գիշեր և ցերեկ ցրտին ու տաքին դիմացողը, Յեզ դրա համար ել նա քեզանից իրավունք ունի պահանջելու բացարձակ հնազանդություն: Ֆեղալական և բուրժուական տեսակետի ցայտուն արտահայտություններից մեկը կնոջ նկատմամբ:

Եեքսպիրի այս տողերից մեր սոցիալիստական հպայխայի մարդը բոլորովին հակառակ յեղբակացություն կանի:

այն, թե ինչից պետք և աղաստավորվի կինը ամենից առաջ, վոր դառնա ինքնուրույն, աղաս և հավասար: Ամենից առաջ նա պետք և ազատագրվի նենց այդ տնտեսական կախումից: Իսկ անտեսական անկախություն ձեռք բերելու իրավունք կնոջը չի տվել և չեր կարող տալ անցյալ դասակարգերից և վոչ մեկը: Ընդհակառակը, ավելի կաշկանդել են այդ դասակարգերը, ստրկության մնջ պահելով կնոջը, ընական համարելով նրա այդ վիճակը: Ազատագրել և կնոջը ողբութարական հեղափոխությունը և ապացուցել, վոր կինը կարող և հավասար լինել աղամարդուն թե արտադրության և թե պետություն կառավարելու մեջ:



Սնանկացած տասպետիւ տիպը:—Զոն Ֆալստֆը «Հենրիկ 4-րդ» և «Վինձորյան կանայք» պիեսներում: Բուրժուազիան «Վինձորյան կանաց» մեջ:

Փողային տնտեսության գարզացման հետևանքով Անդրիայում և Սպանիայում, սկսած 16-րդ դարից, առաջ յեկազմ հին տնտեսական և սոցիալական կարգերի—ֆեոդալիզմի կազմականութումը: Այդ կարգերի քայլայումից առավելապես տուժեց մանրատնտես աղնվականությունը: Քայլայման այս պրոցեսը շատ տեսական յեղավ, և սնանկացած աղնվականների մի տհագին հոսանք սկսվեց դեպի կենտրոնական քաղաքները, ուր առետրական կառլիտալը և մասամբ արդյունարերությունը դարձել ելին դրության տերը: Վաճանք նրանցից պաշտոնները դտան պալատում կամ պետական ապարատում, մյուսները մտան առետրական կապիտալի սանդած տնտեսական նոր ձեռնարկները, իսկ քիչ չելին նաև այնպիսիք, վորոնք իրենց գոյությունը պահպանելու համար մեծ ճանապարհների վրա թալանով զբաղվեցին կամ խոշոր քաղաքների տականքը կազմեցին:

Սնանկացած ասպետականության այս արագեցիան անդրադարձել և աշխարհի մեծագույն զբողներից մեկը՝

սպանացի Միգուել ուը Սերվանտեսը իր անմահ «Դոմ Կիլոս» ուղիւ,

Մանր ազնվականությունից յելած սնանկ «ասպետի» տիպը իր հանճարեղ վրձինով ուվել և նաև Շեքսպիրը հանձին իր Ֆալստաֆի, սակայն մի դանաղանությումը Մինչդեռ Սերվանտեսը մոտեցել և իր Դոն Կիլոսութին, դասակարգի հին ցնորժներով ապրող այդ հերոսին, ամբողջովին վերապրելով նրա վողբերգությունը, համազգալով նրան, մասնակցելով նրա դժբախտությանը։ Մյուս մեծ զբողը—Շեքսպիրը—նույն սնանկ «ասպետի» վրա նայել և արիստոկրատական բարձունքից, տալով նրա բացասական տիպը, միաժամանակ սակայն հայտնաբերելով բարեհոգի վերաբերմունք։ Շեքսպիրի գրվածքներում այդ «ասպետը» գարձել և քաղաքի հասարակական տականքի անդամը, գինետների մըշտական հաճախորդը, պորտարույժ և միշտ ուրիշի հաշվին ապրող։ Դա Ֆալստաֆն է, վորը սակայն իր մեջ կըսում և սեփական գառակարգից ժառանդած կուլտուրայի վորոշ տարրերը և վորին, այդ պատճառով, Շեքսպիրը ոժտել և անսպառ սրամությամբ և ամեն ինչ բացասադ կենսական փիլիսոփայությամբ։

Սերվանտեսի Դոն Կիլոսը ոժտված և մարդասիրական ձգտութիւններով, տողորված և անձնազոհության դադարիանով ու հանուն ճշմարտության պատրաստ և պայքարելու բոլոր թշնամի ուժերի դեմ, Սերվանտեսը ինքը, դեկլասե յեղած մի ազնվական, իր սոցիալական դրությամբ դեմոկրատ, լավ չեր ճանաչում արիստոկրատիային։ բայց նա, առլրելով աշխատավոր խավերի շրջանում, լիովին հաղորդակից եր նրանց կյանքին։ և դա յե հասկանալի դարձնում նրա վերաբերմունքը սնանկացած, խղճահարության և համակրանքի արժանի հերոսին ու նրա գործերի խղեալիստական վերաբռտադրության։

Մինչդեռ Շեքսպիրը լավ եր ճանաչում արխտոկրատիային, սիրաւ ու սպասավորում եր նրան, հասարակական մյուս դասակարգերի վրա, մանավանդ վարի խավերի վրա նայում եր կատկածանքով, և որա համար նրա ֆալստաֆը մանր աղնիական, մեփականությունից զուրկ, զուրս և ընթացած վրաբես մի միտոս, ծաղրածու, թեպիտ սրամիտ, լեզվով հատու Շեքսպիրի հանճարին հատուկ բաղմակողմանիությամբ և պատկերացված ֆալստաֆը, Այդ և պատճառը, զոր նա իր եպոխայի ցայտուն տիպերից մեկը լինելով, նրա անունը դարձել է հասարակ անուն, մակդիր, վոր կարելի յե բոլոր նման տիպերին հատկացնել:

Առաջարարացը, «Հենրիկ 4-րդ»ի այդ հաստապարանց եպիկարյանը, զորի համար կյանքի իմաստը մարմնական առաջ անունդն ե, կերակուրներով ու ըմպելիքներով լիցուն սեղանը: Ի՞նչ կա ավելի գայթակղեցնող ու հրապուրադ Զոն ֆալստաֆի համար, քան քաղցր դինին, ընտիր խորարիկները, ճարպոտ թռչունները և թուլակամ ու շուշ պարտիստ տիկինները: Բայց վճրքան սրամիտ և արագաշարժ և այդ մարմններ մարդը, վճրպիսի հնարագիտությամբ ու սրախոսությամբ և ոժաված նաև նաև անսահման ստախուած Յևալ այնքան տիպական և Շեքսպիրի ֆալստաֆը դրամայում, զոր համարձակ կարելի յե ասել՝ անզույն, անկատար կմասը «Հենրիկ 4-րդ» դրաման, յեթե ընթերցողի կամ դիտողի առաջ հանդես չդար անհոգ, անդարդ, սրախոս ֆալստաֆը:

Մինչդեռ դրամայի նյութը պատմական ե, և Շեքսպիրը սպավել և անզլիական հայունի քրոնիկներից, իսկ նրա անցալի հերօսներին ստեղծագործելիութ ակնհայտնի ճիշտ և զործ գրել, — Ֆալստաֆի տիպը, ընզհակառակը, դժոգրել և, վոգիուրության ազրյուր ունենալով բացառապես իրականությունը: Հիմք կա յինթադրելու, զոր Շեքսպիրը ֆալստաֆի տիպական գծերը վերցրել և կոնդունի «Ծովային աղջիկ»

կոչված գինետան Զեթլ անունով հաստամարմին հաճախորդեց, մի գինետուն, վորի պատվավոր հյուրերից մեկն եր նաև ինքը Շեքսպիրը զբական շատ ուրիշ գործիչների հետ:

Ֆալստաֆը միջնադարյան այն հասպետներից է, վարոնք ունեցածը վատնելուց հետո իրենց գոյությունը հապահովում ելին մեծ ճանապարհների վրա, կողոպտելով վողավոր վաճառականներին, վորապիսի յերեսույթ միջնադարում սովորական եր շատ իսկական ասպետների համար:

Ֆալստաֆը իրեն աղնվական և համարում և ասպետ, թագավորին ցեղակից, ցեղակից՝ այդ առաջին աղնվական ասպետին, վորապես այդպիսին նա սիրում և ապրել ու շաշլել, բայց աշխատանքի ընդունակ չե. ամենունեշատ միջոցը դոյությունը պահողանելու, դա անկասկած աղնվականներին հատուկ միջոցն և՝ պարտքը, թալանն ու եքսպրոպրիացիան, ֆալստաֆը դժգոհ և նոր ժամանակի կարգերից, վորոնք իր նման ասպետների համար կաշկանդիչ են. Ֆալստաֆի և իր դասկարգի քայլքայման մեծագույն պատճառը առևտրի և դրամի մարդկանց ընրած կարգերն ելին, վորոնց գեմ եր ինքը Շեքսպիրը, իսկ նրա հերոսը իրավունք եր համարում տորել այդ մարդկանց հաշմին՝ դրամը նրանց գրանից իր դրամանը փոխադրելով:

«Առաքինությունը այժմ ընկած ե»—ասում և Ֆալստաֆը. —Ժամանակները փչացել են. իսկական հերոսներին մնում և այժմ արջ ման ածել, իսկ խելովներին՝ ծառա դառնալ զինետներում։ Մարդկային մյուս հատկությունների համար, ըստ Ֆալստաֆի, վոչ մի ասպարեղ չկա, ըստ վորում փչացած և զուրս գալիս աշխարհը և վոչ Ֆալստաֆը։

Ֆալստաֆի ներքին և արտաքին աշխարհին զարմանալի ներդաշնակություն և հաղորդել Շեքսպիրը. վոչ մի ավելորդ դիմ նրա անձնավորության, վոչ մի ավելորդ քայլ շարժումների և վոչ ել ավելորդ բառ խոսքերի մեջ։ Առաջին դիմը, վոր աչքի յե զարնում, դա նրա ոռոր դատողությունն

և, անսպառ սրախոսությունը Նրա ամեն մի հանդես գալը՝ մեծ աշխատմություն և մացնում բեմի վրա; Առանձնապես ուշադրություն և գործում նրա տարորինակ արտաքինը, զոր ծիծաղ և հարուցում, Ֆալստաֆը առողջ, կենսութան և հայացած կուպլեկցիային՝ այսպիսի կենդանի բնավորությունը և աժամանակակից առաջանական արկածախոնդիր ձեռնարկությունների մասնակցելու բացի այդ յերբեք դլուխը չի կորցնում կունանց հասարակության մեջ: Լավ և կուշառատելը, կարդին խմելը սովորական և և անհրաժեշտ նրա համար, Վորքան ել կոռիւտ ու յնսական լինեն նրա մեջ վերոհիշյալ գծերը, բայց նրանք ըոլորն ել հարթվում են, դառնում են աննշան նրա խորունկ հումորի շնորհիվ:

Ֆալստաֆը մեծ հետարքքրություն և շարժել թագավորի վորդու՝ պրինց Հենրիկի մեջ, Յերիտասարդ պրինցը, հակառակ ծնողների կամքին, վոշարքավայնլ կյանք և վարում. Թափառում և դինեաներում, ընկերություն և անում Ֆալստաֆի նման տիպերի հետ, դիշերներ և անց կացնում այսպիսի տեղերում, ինչպիսին եր «Ասղի զլուխ» գինետունը: Նա, պրինցը, սիրում և կատակներ անել և լսել Ֆալստաֆի անսպառ սրախոսությունները, ծուղակներ սարքել նրան՝ զվարճանալու համար, գրություններ ստեղծել, վորդիսի առաջացնի սրախոսությունների նոր տարափ:

Ահա մի անզամ Ֆալստաֆը իր ընկերների հետ, պրինցի համաձայնությամբ, հարձակում և կազմակերպում փողավոր ճանապարհորդների վրա գրամ ձեռք բերելու համար: Դործին պետք և մասնակցեր պրինցը իր ուղեկցի հետ, վորը ժամանիր եր խաղը խաղալուց հետո գրամը վերադարձնել թարախածներին, վորի մասին Ֆալստաֆը տեղյակ չեր:

Այս տեսաբանում Ֆալստաֆի սրախոսությունները հոսում են հորդապատ ազրյուրի նման: մանավանդ, յեր պրինցն ու նրա ուղեկից Պոյնսը թագցնում են Ֆալստաֆի

ձին, կամենալով ծիծաղել հաստամարմին «ասպետի» վրա, յերբ նա ստիպված կլինի քաշ տալ իր մարմնի ծանրությունը դարուփունքով:

«Անիծյալ լինեմ, յեթե մեկ ել նման գողի հետ թալանի գնամ,—ասում ե Ֆալստաֆը, Սրիկան (Պոյնաը) տարել ե ձիս, թազցրել... ճիշտ եմ ասում, յես զեռ կարող եմ հոգիս փչել իրքն կարգին մարդ, յեթե ինձ չկախեն եղ պորտարույժին (Պոյնաին) սպանելու համար, Թող յես սովոր մեռնեմ, յեթե մեկ ել կողոպտելու գնամ: Ավելի լավ ե լինել կարգին մարդ և հեռանալ այդ սրիկաներից: Անճջ, յերբ գողերը անազնիվ են իրար հետ»,

Յերբ պրինցը առաջարկում է նրան պառկել և ականջ դնել տափին՝ լսելու համար, թե զալիս են արդյոք ճանապարհորդները, թե չե, Ֆալստաֆը պատասխանում է.

«Իսկ դու լծակիներ ունեմ բարձրացնելու ինձ, Սատանան տանի, Մեկ ել այդքան հեռու քաշ չեմ տալ իմ մարմինը նույնիսկ քո հոր գանձարկղի բոլոր դրամների համար»,

— Գնամ,—ասում ե պրինցին Ֆալստաֆը,—և կախովիր վարտիկիդ կապովը, վորը քեզ արված է իրքն թափաժառանգի: Յեթե ինձ վրա հարձակվեն, դուք կլինեք պատասխանատուն: Թող յես թունավորվեմ մի բաժակ խերես գինով, յեթե ձեր մասին չհորինեն ամենավատ տեսակի յերգեր:

Փողալոր ճանապարհորդների վրա Ֆալստաֆը հարձակվում ե, իրեն և ընկերներին յերիտասարդ անվանելով՝ ակնարկը, ըստ յերեւյթին, թագաժառանդին և վերաբերում:

— Քիչ ե ձեզ՝ հաստափոր սրիկաներէդ՝ կախելը, — գոռում ե նա անցորդ վաճառականների վրա: Ճարպուժլատներ... Մեզ յերիտասարդներիս ել հարկավոր և աղբել, սրիկաներ: Իսկ յեթե դուք յերդվյալ դատավորներ եք—ավելի լավ, ձեր դատաստանը կարգին կանենք:

Յալստաֆը իղուր չեր յերդվալ դատավորների անուշնը տալիքս. այլաղակների ու թալանչիների անողոք թշնամիներն ելին առևտրականներից և քաղքենիներից կազմված դատավորները։ Յալստաֆը առելությամբ միայն կարող եր հիշել նրանց անունը։

Պրինցը զոչ միայն ուշանում և գալ թալանի տեղը վճռական բողեյին, այլ և դիմակավորված իր ընկերոջ հետ, հարձակում և դործում Յալստաֆի և մյուս կողոպատիչների վրա ու խլում ճանապարհորդներից թալանած դրամները, թողնելով այն առավորությունը, թե իրենք նոր թալանչիներ են, այլաղակային խումբ։ Պրինցի նպատակն եր օռույց տալ Յալստաֆի վախեռոտությունը, ծաղընել նրան բոլորի տողեւ։

Յալստաֆը կատաղել և Տեսարանը փոխադրված և պինեսունն Առանց իմանալու, զոր իր վրա հարձակվողը որբինցն և յեղել, վերջինիս և մեղադրում իրենց կրած անաշողության համար, համողված, զոր յեթե պրինցը չուշանար, անշաւշա և կողոպատիչները չեյին կարող Յալստաֆից խլել դրամները։ Զայրացած Յալստաֆը հայրոյանքի կույտեր և ուղղում պրինցի հասցեյին։

«Սատանան աանի ձեղ պես վախեռոտներին, — ասում ենա, — Լայ! և զուլղա գործեմ, քան շարունակեմ այսպիսի կյանք վարել... Դնա քո ճամբով, ծերունի Յալստաֆ։ Մեսիր, ինչպես կուզես։ Զեա աշխարհում իսկական քաջություն, վաշ, աշխարհը անպետք և դարձել։ Ավելի շուտ կուզենայի ջուլհակ դառնալ, սաղմոս յերգել և նման բաներով զրադիվել... Յեկ սա զեռ թաղավորի վորդի յեւ թող իմ յերեսի վրա վոչ մի մաղ չմնա, յեթե յես քեզ վայաեւ սրովս չքշեմ քո թաղավորության սահմաններից, Յեկ դու դեռ Ռելսի պրինցն ես...»։

Յալստաֆի զայրացկոտ խոսքերը վիրավորում են պրինցին, զորը կամենում և սանձել անզուսպ ծերունուն։

«Վախեկոտ» մակդիրը սաստիկ դիպչում և պրինցին, և նա պատրաստ և նույնիսկ Փիղիկական գործողությունների դիմել բայց Ֆալստաֆը սրամիտ և հնարագետ Նրա զայրույթն ել ըողեյական եւ:

— Միթե յես քեզ վախեկոտ անվանեցի, — ասում և Ֆալստաֆը: — Անիծված լինեա, յեթե քեզ վախեկոտ անվանեմ, Բայց յես հաղար Գունատ վուկի կտայի, յեթե այնքան արագ փախչել իմանայի, վորքան դու...:

Պրինցը գործին անտեղյակ ձևանալով, պահանջում է պատմել անցքը, վորպես զի դվարճանա Ֆալստաֆի ստախոսությամբ: Յեզ ահա Ֆալստաֆը սկսում է պատմել մի շարք յերեակայական գեղքեր, թե ինչպես մի քանի տասնյակ մարդիկ հարձակվել են իր վրա, բայց ինքը այնքան քաջ և գտնվել, վոր մենակ զիմադրել ե, մի քանիսին սպանել, վսմանց վերավորել, մինչև անգամ իր սուրի շեղին ել ջարդել, ծռել ե:

Ֆալստաֆի անդուսպ յերեակայությանը սահման և գնում պրինցը, պատմելով իսկական յեղեղությունը և շարժելով ներկաների ծիծաղը:

— Իսկ դու, — ասում է պրինցը Ֆալստաֆին, — ինչպես արագ ու ճարպիկ եյիր փախցնում փորդ, և ինչպես հորթի նման բառաչում, աղերսում եյիր, վոր խնային քեզ...

Ամեն կողմից սկսում են Ֆալստաֆին պախտրակել Նրա ստախոսության և մանավանդ վախեկոտության համար: Հետո վոր Ֆալստաֆը սարսափահար փախուստ եր տվել դիմակվորված պրինցի և նրա ուղեկցի առաջ, յերբ սրանք խլում եյին նրանցից ճանապարհորդների դրամը:

Բայց միթե Ֆալստաֆը ընդունակ ե շփոթվելու, զլուխը կորցնելու, Նա ինքն և բոլորից առաջ ծիծաղում, «Լավ տղերք» անվանելով նրանց, ուրախ ե, վոր գրամները համենայն գեպս չեն կորել, ոտարի ձեռք չեն ընկեր: Հրավերում ե գինի խմել, ուրախանալ, քեզ անել: Ինչ վերաբե-



Ֆալստաֆը յև իր զինակիրը, զործ նկարիչ Նդեւարդ Գրիգորյանցիքի

Falstaff со своим пажем.

Falstaff with his page.



բում և իր քախուստին, նու հետեւյալ բացառը ուժիւնն և տալիս, վորին հետաքրքրությամբ ոպտառմ եյին շրջապատկիները:

— Յերդվում եմ յերկնքով, — ասում ե նա, — վոր յես բոլորիդ ել նաևաչնցի. ճանաչնցի ինչպես հարազատ հայր, ի սկզ ասուծու, լավ լսեցեք! Միթե յես կհամարձակվեյի սպանել գոհաժառանդ պրինցին: Միթե յես կռվի կրօնվեյի խելական պրինցի հետ: Դու լավ գիտես, վոր յես քաջ եմ, վորպես Հերկուլես, բայց չե վոր այսուղ պլխավոր հարցը բնադրի մեջ ե. առյուծը յերբնք չի գիտչի խելական պրինցին, Բնազրը մեծ բան ե. յես վախկոտ եյի ձեւանում հետեւլով իմ բնազրին: Արանից հետո յես ավելի լավ կարծիւքի կը ինեւմ թե իմ և թե քո մասին. իմ մասին՝ իրը քաջ տոյուծի, քո մասին՝ իրը քաջ պրինցի:

Թալսաամիշը դիտակցում ե, վոր թագաժառանգի այցելությունները գինետուն և ժամանցը տականքների հետ անվայիլ և նրա կոչմանը և մեծ դժոխություն և առաջացնում պարաւաւմ, խորհուրդ և տալիս պրինցին նախապես ուսարտառել այն հարցերի պատասխանը, վոր տալու յե նրան հայրը պարաւաւմ, Այդ հանգամանքն ել փորձում են կատակ պարձնել պրինցի ցանկությամբ և դիմում են քեմախաղի:

— Յեղիք իմ հոր տեղը, — ասում ե պրինցը — և հարց ու փորձի յենթարկիք ինձ իմ վարած կյանքի մասին:

— Պատրաստ եմ, — պատասխանում ե Թալստաֆը և ընդունում համապատասխան դիրք, — Թող այս աթոռը լինի իմ գահը, այս սուրը իմ գայիսոնը և այս բարձը՝ իմ թագը... Յեթե քո մեջ դեռ չի հանգել շնորհալիսւթյան կայծը, գու կտեսնես, թե ինչպես եմ յես շարժելու քո զգացմունքները: Թող միայն ինձ մի բաժակ խերես գինի տան, վորպեսզի աչքերս կարմքեն և այնպես թվա, թե յես լաց եմ յեղել: Յես պիտի խոսեմ զգացմունքով, վոչ պակտու գողեորսւթյամբ, քան Թամրիս արքան վողբերգության մեջ:

Յեսլ Ֆալստաֆը մտնում և թաղավորի դերի մեջ, իբրև «հայր» պրինցի:

— Հարրի, ինձ զարմացնում և վոչ միայն քո ժամանացը, այլ և այն հասարակությունը, վորի հետ գուշ շփվում ես, — սկսում ե նա: — Թեզիս յերիցուկը նույնքան շուտ և աճում, ինչքան շատ արորում են նրան, բայց ջանելությունը այնքան շուտ և մաշվում, ինչքան շատ նա ի շարն է գործ զրվում: Վոր դու իմ զավակն ես, զրանում ինձ համոզում են մասամբ մորդ հավաստիացումները, մասամբ իմ անձնական կարծիքը, իսկ տռավել՝ աչքերիդ անդգամ հայացքն ու վարի շրջունքիդ հիմարական կախվածությունը: Յեթե դու իմ վորդին ես, ապա ինչո՞ւ բոլորը մատնացույց են անում քեզ: Միթե որհնառատ արեմը կարող և զատարկաւորտ դառնալ և մոշ ուտելով զրազվել, Միթե անդիմական թագավորի վորդին կարող և գող դառնալ և խել զրամիքսակներ, Ահա մի հարց, վոր պետք ե դրվի այստեղ: Աշխարհում կա մի բան, Հարրի, վորի մասին գուշ լսել ես, վորը մեր յերկրում հայտնի յե կուպը անունով: Իսկ կուպը, հին զրոդների վկայությամբ, կեղառուում ե. նույն կերպ քո հասարակությունը կեղտուում և մարդուն: Յես այդ քեզ ասում եմ, Հարրի, վոչ հարրած վիճակում, այլ արցունքը աչքերիս, վոչ կատակով, այլ թախիծով, վոչ միայն խոռոշով, այլ և ցալող սրտով, Բայց կա քո հասարակության մեջ մի լավ մարդ, վորին յես հաճախ նկատել եմ, բայց չգիտեմ ինչպիս և նրա անունը:

ՊՐԻՆԾ ՀԵՆՐԻԿ, ԽՌԱՋԻՆ և նրա արտաքինը, ձերդ մեծություն:

ՖԱԼՍՏԱՖ: Դա մի աղղեցիկ և բավականաչափ գերմարդ է, ուրախ դեմքով, զուրեկան աչքերով և շատ ազնիվ ձեերով: Կարծում եմ, վոր նրա տարիքը հիսունի մոտ կլինի կամ գուցե վաթուունի, և հիմա միայն հիշեցի—նրա անունը Ֆալստաֆ է, Յեթե այդ մարդը թվում է անբարոյա-

կուն, ապա նրա միայն արտաքինն և այդպես. Նրա հայացքի մնջ արտացոլում և առաքինությունը: Յեթե ծառն խմացվում և պառուղով, ինչպես և պառուղը ծառով, ապա յես կարող եմ հաստատապես ասել, վոր Ֆալստաֆը լավ մարդ է: Նրա հասարակությունից մին խուսափիլ, մյուսներին վոնդիրտ Այժմ ասա ինձ, դատարկապերտ, մւր եյիր կորել ամբողջ ամիս:

ՊՐԻՆՑ ՀԵՆՐԻԿ: ՄԵՐԵ վայել և արքային այդպես խոսել: Այժմ դու կանգնիր իմ տեղը, իսկ յես կրտսեմ հորս տեղը:

Յեզ յերբ պրինցը, իր գերը կատարելիս, աշխատում և վարկարեկել Ֆալստաֆին, անվանելով նրան «յերիտասարդներին փչացնող», «սպիտակամորուս սատանա» և այլն, Ֆալստաֆը պատասխանում է, նույնպես կատարելով իր «սպիրինցի» դերը:

— Յեթե յես ասեմ, վոր նրա մասին (Ֆալստաֆի) ավելի վաս բաներ գիտեմ, քան իմ—սուստ ասած կլինեմ, ուոր նա ծեր ե, դժբախտաբար, վկայում են նրա սպիտակ մազերը, բայց վոր նա լինի, ներեցեք ձերդ մեծություն, անբարայականի մնկը, դա յես ժխտում եմ, Յեթե ինքես գինին շաքարով խմելը հանցանք ե, ապա ինձ ծանօթ հին բոլոր գիննելաճառները սատանայի բաժին կդառնան: Յեթե գեր մարդկանց պետք եւ ատել, այն ժամանակ մնում ե, վոր սիրտնաբենն Փարագոնի նիհար կովերի վրա: Վոչ, բարի թագավոր. գուրս արեք Պետոյին, Բարդոլֆին, Պոյնարին, Բայց ինչ վերաբերում եւ սիրելի Զելի Ֆալստաֆին, բարի Զելի Ֆալստաֆին, հայւատաբիմ Զելի Ֆալստաֆին, քաջ Զելի Ֆալստաֆին, և մանավանդ վորովհետեւ նա ծեր Զելի Ֆալստաֆին և—մի անջատեք նրան Հարրիից, մի խլեք նրան ձեր Հարրից: Վանդել հաստ Զելին, նշանակում ե վոնդիր վաղջ աշխարհը:

Այս ամբողջ դրույթը ցույց է տալիս, վոր Թալստաֆը իր զարգացմամբ և խելքով Շնչապիրի արքայական շատ հերսոսներից բարձր եւ Ընկած մինչեւ հասարակության հատակը», Ընկերակցելով տականքներին, նա սկարզորնն պիտակցում եւ, վոր պրինցը անվայել կյանք և վարում, անվայել՝ մի մարդու համար, վոր պատրաստվում և պատասխանառու կոչում ստանձնելու. Դիտակցելով միաժամանակ իր վիճակը, իր բալոր ասածներին նա հազորդում և հեղնանք և սկսածաիցիպմ: Չի հավատում վոչ արդարությանը, վոչ աղնվությանը:

Ի՞նչ և պատիվը, հարցնում և Թալստաֆը և պատասխանում. «Պատիվը՝ դա ներկած վահան և թագման հանդեսին», «Պատիվը՝ դա խոսք եւ ի՞նչ և պարունակում իր մեջ այդ խոսքը, ի՞նչ և պատիվը, Պատարկ ոգ, մով և արժանանում պատվիր Մեռնողը: Նա չի զգում, Վոչ: Նա լսում եւ Վոչ: Ուրեմն նա շոշափելի չի: Մեռելների համար՝ վոչ: Բայց դուցե նա կենդանի յեւ ազրողների մեջ: Վոչ: Ինչնու վոչ: Վորովինեաւ չարախոսությունը չի թույլ տալիս: Ցեթեւ այդպես եւ, նա ինձ հարկավոր չեւ:

Թալստաֆը վոչ վոքին չի հավատում: Բայց Թալստաֆին ել վոչ վոք չի հավատում: Իր սկեպաիցիղմով, յուրահատուկ նիհիլիզմով, ամեն ինչ ունայնությունն համարող տեսակեառվ և մանավանդ իր գործնական կյանքով, Թալստաֆը արտահայտում եւ իր դասակարգի կազմալուծումը, անկումը, նեխվածությունը, վորը ցույց է տալիս, թե ինչպես զանազան ճանապարհներով լուծարքի յեւ յենթարկվում դասակարգը՝ բարձրացող բուրժուազիայի հարվածների տակ:

Իր մասին Թալստաֆը ասում եւ, ներկայացնելով իրեն, վորպես ազնվականի. «Ենու կարգին եմ յեղել այն չափով, ինչ չափով վայել եւ ազնվականին. հայնոյել եմ քիչ, հասարակաց տներ հանախել եմ վոչ ազել քան քառորդ ժամը մի անգամ. պարտք եմ վճարել յերեք թե չորս անգամ. լավ եմ

ապրել վորոշ սահմաններում, իոկ այժմ ապրում եմ ըուտր սահմաններից դուրս:

Սրանով Ֆալստաֆը բնորոշում է թե իր աղնվական դասակարգին և թե իրեն, թե «վորոշ սահմանների» մեջ, և թե «բոլոր սահմաններից դուրս»:

«Հենրիկ 4-րդի թողած ուժեղ տպավորությունը ժամանակի անողիքական հասարակության վրա պետք և վերադրել բացառապես Ֆալստաֆին:

Իր աեղում մենք արդեն ասել ենք Յեղիսարեթ թագուհու Շեքսպիրին տված պատվերի մասին՝ զքել մի նոր պիես, Ֆալստաֆին պատկերացնելով կանանց շրջանում: Թե վորքան հաստատ և տեղեկությունը, զարերի ընթացքում կրկնվող, դժվար և ասել Բայց պարզ և մի բան. այն, վոր Ֆալստաֆի ախալը շատ և գրավիչ յեղել նաև պարտերի դեմոկրատական հասարակության համար, և հավանութեն նրանց պահանջներին հարմարվելու նորատակով Շեքսպիրը դրած լինի իր նոր պիեսը, վորի գլխավոր հերոսը Ֆալստաֆն է, իսկ միջավայրը բուրժուական:

Դա «Վ. Անձուրյան կանայք» կունդիան է, վորի մասին մենք արդեն գիտենք Ֆր. Ենգելսի այն կարծիքը, թե գերմանական ամրող զրականության մեջ չկա այնքան կյանք և կենդանություն, վորքան «Վ. Անձուրյան կանայք» կոմնդիւմ:

Այս պիեսում Շեքսպիրը Ֆալստաֆին դուրս և բերել սիրային արկածախնդրի գերում: Ֆալստաֆը իր գործողություններով հանգիս և գալիս միջին բուրժուազիայի շըրջաններում, հարուստ մեջանների հասարակության միջե Սնանկացած ուսպեաը վորոշել և շարունակել իր գոյցությունը, իրեւ պարագիտ, այս անգամ սիրուհիների հաշվին: Միաժամանակ յերկու ունեսոր կանանց՝ տիկինն Պեջին և տիկինն Ֆորդին սիրահարական նոտակներ և զրում միենալոյն բավանդակությամբ, կամենալով ինտիմ կտորեր հաստատել

Նրանց հետ, վայելելու համար նրանց թե սերը և թե դրամական միջոցները:

Կոմիդիան անդրադարձում և անդրական զավառական քաղաքի միջին խավերի կենցաղը, կոմիդիայի կմախաքը, ըստ սովորության, Շեքսպիրը վերցրել և ալտարաստ ազգյուրից, — այն և՝ խտալական նովելներից (Ֆլորենտինո, Թարլենան), բայց նրան կյանք ու շարժում հաղորդել անդմական իրականության կենդանի տիպերով:

Ֆալտափի սիրային ավանտյուրան, հակառակ նովելներում տրված գոհնիկ պատկերների, հանդիպում և միայն դիմադրության և չարաչար ծաղրի: Բուրժուական-մեջանական տիկինները, թեև շատ չարաճի, ցույց են տալիս ամուսնական անդրդվելի հայտարարմություն, մերկացնելով բոլորի առաջ հաստամարմին պազգոտ նոն ժուանի արարքները:

Մենք սակայն այստեղ կանգ չենք առնի նրանց մանրամասնությունների վրա:

Շեքսպիրը, ըստ եյության չինելով բուրժուական միջավայրի արտահայտիչ, բայց վորպես ռեալիստ և, վոր ամենազլավորն և, վորպես յնըկու ևպոխայի ճամբարաժանում կանգնած ստեղծագործող հանճար, վառ պատկերներով տվել և բարձրացող դասակարգի կյանքի տուանձին մոմենտները, ապրումները, մորալը, բուրժուազիայի և ազնվականության փոխհարաբերության մի քանի կողմերը: Այս ասելով մենք, իհարկե, նկատի չունենք միայն ունինական կանոյք կոմիդիան:

Զուդընթաց ֆալտափի և չարաճի մինձորուհների տեսարաններին, կոմիդիայում կատարվում և լունի ամուսնության մի թեթև փորձ, վոր նշանակալից և բուրժուաների և մնանկացած աղնվականների փախհարաբերության տեսակետից: Բուրժուա ծնողները իրենց աղջկանը՝ Աննային չեն կամենում ամուսացնել աղնվական ֆենտօնի հետ,

համարելով՝ նրան անհամառատասիսան։ Դեբաղասում են բուրժուային կամ բժշկին, վարո՞նց սակայն աղջիկը չի հավանում։ Զիջում են միայն այն ժամանակը, յերբ աղնվական փեսայացուն և աղջիկը կաղմակերպում են փախուստ և դադանի ամսունանում։

Դրամատուրգը, յելնելով շրջապատի իրական յերևություններից, հանդիէ և այն յեղբակացության, թե աղնվականությունը՝ հանձին հասարակական պարագիտ Ֆալստաֆի և հայրենական ժառանգությունը մատնած մենտոնի՝ մղվում և հետին ժակարտակը և նրա փոխարեն ասպարեզը բռնում բուրժուական հասարակությունը։

Շեքսպիրի գեղարվեստական տվյալներով մենք արդեն բնորոշել ենք և լավ ենք ճանաչում Ֆալստաֆին։ Հետաքըրպիր և ծանոթանալ նաև Ֆենտոնի հետ, վորը նույնպես սնանկացող աղնվականության ներկայացուցիչ եւ։

Ինչու միտանք Պեջը չի կամենում իր աղջկանը կնության տալ աղնվական Ֆենտոնին, վորը, ըստ յերևութին, իր կիրթ արտաքինով ու ձեռքով գրավիլ և աղջկա ուշագրությունը—վորովհետև բուրժուա Պեջը լավ և ճանաչում ուրիշ գատածը հեշտությամբ քամուն ավող աղնվականների բնույթը։ Պեջի այդ կարծիքը հայտնի յեն Ֆենտոնին, վորը Աննայի հետ խսուվիս հայտնում և հետեւյալը։

Ֆենտոնին ոնա ասում ե (ակնարկում ե Աննայի հորը. Ա.), վոր իմ ծագումը շատ բարձր և և իրը թե յես իմ շուայլությամբ քայթայել եմ նորս ժառանգությունը, իսկ այժմ ուզում եմ ձեր գրամներով գործերս կարդի դնել։ Բացի այդ նա զանում և ուրիշ արդելքներ—իմ առաջվա հիմարությունները, անբարոյական կապերը, և ասում, վոր յես քեզ կարող եմ սիրել միայն իրեն գրամագլուխ և վոչ այլ կերպ……։

Աննեն. Գուցե և ճիշտ և ասում նու։

Ֆենտոնին. Ո՞վ վոչ, յերդվում եմ այն յերջանկությամբ, վորին յես սպասում եմ յերկնքից։ Չեմ թագցնի քեղանից

վար քնն հետ նշանվելուս գլխավոր դրդապատճառը հորդ հարաբությունն և յեղել, բայց ավելի մոտենալով քեզ՝ համազվեցի, վոր զու աղելի թանգ ես, քան զոսկե դրամները...»:

Անկեղծ են դրամ փնտռող աղնվականի վերջին խոսքերը: Հաղիլ թե, Խսկական սեր ունեցող շնչսպիրյան հերանները այլ լեզվով են խոսում իրենց զգացմունքի առարկայի հետ. նրանք ներկայացնում են զգացմունքների մի ամբողջ հնաց, հրապարիչ քնչշության ջերմ արտահայտություններ:

Ֆենտոնի «հաղթանակը» մեր մարքսիստ դրականագիտ Ֆրիչեն համարում և սիմվոլ աղնվականության հադրախանակի, յեխնելով այն տեսակետից, թե Շեքսպիրը, լինելով արիստոկրատ («Ռոջեր Ռյութլանդը»), վոչ մի հիմք չուներ բուրժուազիայի բարձրացման պրոցեսը արտացոլել, ավելացվ արիստոկրատիայի կամ աղնվականության սնանկությունը:

Ֆրիչեյի այս յեղրակացությունը բղխում և մի կանխակալ դիտավորությունից. այն, վոր Շեքսպիրը արիստոկրատական ծագում ունի և անպատճառ Ռյութլանդն և, հետեարար պետք ե ստար Թօար նրան բուրժուաների կենցաղի պատկերացումը, այն բուրժուաների, վորոնց նա արհամարհում եր (այս տեսակետը Ֆրիչեն արտահայտել և, յերբ տակավին չեր հրաժարվել Ռյութլանդի հիպոթեզից):

Մեզ թվում ե, վոր Շեքսպիրը յերեսութներին մոտեցել ե վորպիս ուհալիստ և անդրադարձրել ե կյանքն այնպես, ինչպես նա կարող եր ըեկդին յերկու եպոխաների ընդհարման շրջանում ապրող մեծագույն դրովի մեջ. Իինելով արիստոկրատիայի կյանքը վերաբարադրող, Շեքսպիրը միաժամանակ չե հեռացըրել իր տեսողության դաշտից կյանքի ըսլոր տապարեղները համառորեն դրավող նոր դաստկարդի գործողությունները:

«Անենետիկի վանառականը» իրենվ առևետական խուօք
բութուազիայի կյանքի վերարտադրություն: — «Արքայական վա-
նառական» Անտոնիոն: — «աշխառու Շելլոկը: Բութաւական
կնոջ պատկերը նանձիմ Պորցիայի:

«Անենետիկի վանառական» առևտրական խոշոր բուր-
ժուազիայի սոցիալական կյանքի վերարտադրությունն եւ,
Շեքսպիրի այդ պիեսում արիստոկրատիան, վորպես այդպի-
սին, բացակայում եւ կոմմոդիայի զլիսավոր հերոսներն են.
«արքայական վաճառական» (բութուականացած աղնվա-
կան) իտալացի Անտոնիոն, խոշոր սեփականատեր, վաշխա-
ռու հրեյա Շեյլոկը և բութուականացած արիստոկրատունի
Պորցիան: Այս պերսոնաժներով գրվածքը միանգամայն
առրերջում և դրամատուրգի մյուս պիեսներից:

Գրվածքի առաջին եներն արդեն վկայում են, վոր
մենք գործ ունենք առևտրական կապիտալի հպոխայի հետ
Հանճարեղ դրամատուրգը նոր միջավայրի համապատասխան
նոր արտահայտություններ և գործածում, նոր բառամֆերք
մշակում: Այսուեղ չկան դրամատիկական քրոնիկների թա-
գավորներն ու իշխանները, չկա տոհմական ամրոցներում
ուրախ ու անդարդ կյանք վայելող արիստոկրատիան: Այս-

աեղ ասսղարեղ են դուքս յեկել հասարակական նոր տարրեր՝ տնտեսական-սոցիալական նոր հարաբերությունների շրջանակում:

Դիտեցեք շեքսպիրյան այս պիեսի լեքսիկոնը. — առևտական մեծ նավեր, «առաջաստները հպարտորեն ուղցրած», «կտազն թեսերով թեավորչած», ճեղքում են ծովեր ու ովկիանոսներ, ապրոնեներով բեռնավոր՝ լողում են գեղի հեռու աշխարհներ, դեպի տռևտական ըուկաներ: Բազմաթիվ փոքր առաջաստանավերի խմբում մեծ նավերը պատկառանք էն, ներշնչում, Աօխարենի զանազան կետերում նրանց համար կառուցված են նավամատուցներ: Նրանք բեռնում ու տանում են քանգազին զործվածներ, մահուդ, արբեում, կերպաս, նազվազյուտ մանվածներ ու նամեմներ, Նրանք զրավում են առևտրական շռւականներ հեռավոր կողոնիաներում, անսպաս հարստություն, կապիտալ կուտակելով: Սակայն առևտրականի համար ուղարկվող նավերը միաժամանակ աղրյուր են տանջող հոգսերի ու ապրումների. այդ նավերի հետ և նրանց տիրոջ—առևտրականի սիրտը, վորովհետեւ բազմատեսակ տպարանքներով բեռնավոր նավերը յենթակա յեն ընության ահավոր արհավիրքներին՝ ալեկոծ բաց ծովերում:

Սակայն Կեսարի այս մեծությունը մեզ չի ցույց տաւ իմ Շեքսպիրը նրա սեփական գործողություններով։ Դրամատուրգի նպատակն ե յեղել անդրադարձնել հանրապետական և միապետական արիստոկրատիայի պայքարը Կեսարի սովանությունից անմիջապես հետո, Միաժամանակ ցույց տարուի, թե ինչպես կողմերից յուրաքանչյուրը աշխատում ե իր կողմը թեքել ժողովրդական մասսաներին։ Շեքսպիրը Կեսարին հանդես ե բերում յերկուայի յերկուայի կարճ տեսարաններում, յերբ նա հայտնարերում ե իր նախապաշարմունքները, բնորոշում Կասիոսի բնավորության մի քանի զծերը, նախազգալով նրանից գալիք վատնզը։ Հակառակի Անտոնիուսի կարծիքի, Կեսարը իշխելամեր ե, տենչունի կայսերական գահին տիրելու, հաստատակամ ե, վընսական իր վորոշումների մեջ։ Արհամարհական ե նրա վեցարբմունքը գեպի շրջապատողները, խուլ և նրանց միջնորդություններին և աղերսներին Կեսարի հետ և Անտոնիուսը, հռոմեյական քաջ զորավարը, խելացի և խորամանկարիստոկրատը, հնոտապայում՝ տրիտումվիր։ Միջին մասսաների մեջ մեծ հաղինակություն վայելող Հուլիոս Կեսարին նա կամենում է անսնել իմպերատորը և ամեն բան անում ե պրահամար։ Յերեք անգամ Անտոնիուսը բազմության առջե առաջարկ ե անում Կեսարին՝ ընդունել թաղը, բայց վերջինը (հակառակ իր կամքի) ստիպված ե մի կողմ հրել այն։ Այդունս և վարդել նա, հաշվի առնելով բազմության տրամադրությունը, վօրը կատաղորեն ծափահարել ե, «գահի չընդգրություն», «անկաշառ», «անշահասեր» Կեսարին։ Անտոնիուսը շատ լավ եր հասկանում քաղաքական մօմենտը, ճիշտ եր

ըմբռնում բազմության հասունացած պահանջները, Այդ բազմությունը ներկայացնելիս Շեքսպիրը անկառկած տչօքի առաջ և ունեցել անդլիական առեւտրական բուրժուազիային և քաղաքի մանր բուրժուական խավերին, վորոնց շահերը պահանջում եյին պայքարել ֆեոդալական արիստոկրատիայի դեմ և պաշտպանել միապետությունը: Անտոնիուսի ճառը, վոր նա արտասանում ե Կեսարի դիակի վրա, մեծ բազմության ներկայությամբ, ստեղծագործական շեղյովը և: Նա համոզված ե, վոր սպանված Կեսարին պետք և հաջորդի մի այլ Կեսար, և դրա համար բավական ե մի փոքրիկ պրոպագանդ, վորպեսզի տատանվող տարրերն անդամ իրենց զենքը գարձնեն հանրապետության ձգտող արիստոկրատական ների դեմ: Յեզ Անտոնիուսը հասնում ե իր նպատակին, Հակակեսարյան արիստոկրատիայի դավագրությունը տապալվում ե. Հուլիոս Կեսարի տեղը բռնում ե Ոկտավիանոսը:

Շեքսպիրը միծ տեղ ե ավել Բրուտոսին: Բրուտոսը ոկզունքի մարդ և ամենից առաջ: Կրթված, դրստիարակված, ժամանակի խմաստափրությամբ պարապուղ: Անդառնալիորեն համոզված ե, վոր Հուլիոս Կեսարը ձգտում է խորտակել հանրապետությունը և նրա ավերակների վրա հաստատել կայսրություն: Գալիք պատմական վտանգը վերացնելու համար նա վարոշում և ֆիզիքալես վոչնչացնել Կեսարին: Բրուտոսի սիրելի բարեկամն եր Հուլիոս Կեսարը, Բայց հանրապետական «ճշմարտությունը» Բրուտոսի «ամենամեծ բարեկամն» եր, նրա սկզբունքն եր. *Amicus Plato, sed magis amica veritas* *), Քանի վոր Կեսարի համառ վերելքը գալիս եր խորտակելու այդ «ճշմարտությունը», առանա պետք և զոհվի Բրուտոսը ամեն բանից վեր և դասում «Հասարակական բարիքը», հասկանալով այն հարկավ իր

*) Պատունը ըարեկամս ե, բայց ավելի մեծ բարեկամն հշմարտությունն ե.

դասակարգային իմաստով։ Նրա անհատական սերը գեպի կեսարը մի կողմից և հասարակական պարտքի գիտակցությունը մյուս կողմից՝ ներքին ծանր պայքար եր առաջացրել նրա մեջ։ Բրուտոսը կովում եր Բրուտոսի դեմ, Նրա դասակարգը, կորցնելով շարունակ իր արտօնյալ դիրքերը պետական գերազույն իշխանության մեջ, միաուհության կողմից սահանում եր մահացու հարվածներ, «Այնպիսի որեր ենք ապրում, — ասում ե նա Կասիոսին, — և այնքան աղետներ եմ նախատեսում ապագայում, վոր ուրախությամբ գյուղացի կղառնայի, քան կուղենայի կրել Հռոմի ղափակ կոչումը։ Բրուտոսը ամուր ոկզբունքների հետ ունի քաղաքացիական արիություն, ազնիվ և, դեմոկրատական վորոշենդենցներով տոգորված, և դրա համար «ժողովուրդը նրան խորապես հարգում ե», ինչպես ասում ե Կասիոսը։

Համաձայնության գալով Կասիոսի հետ, Բրուտոսը դառնում է դավադրության հոգին, բայց և կորցնում հոգեկան հանգիստը։ Մանավանդ, յերբ մոտենում եյին որերը, յերբ սենատը կարող եր կեսարին կայսր հոչակելի Զե վոր այն ժամանակ ապստամբության ծրագիրը անկատար կմնար, Բրուտոսը ինդիվիդուալիստ ե. նա համոզված ե, վոր պատմության մեջ զնական դեր խաղացողը անհատն եւ Այդ պատճառով նրա ամբողջ պայքարը մի անհատի շուրջն եւ վերացավ կեսարը, ուրիմն, նրա կարծիքով, վերացավ խոչնդութը։ Յերեսութը ըմբռնում ե դերացականորնն, դրա համար նև պակասավոր ե նրա ձեռնարկի գործնականը։ Բրուտոսը, որինակ, սրբապղծություն ե համարում գաղափարակիցների ուխտը յերդումով ամրացնելու առաջարկը։ «Թող յերդվեն, — ասում ե նա, — վախկոտները, քուրմերը, թուլամորթները։ Բարձր իդեալով տոգորված համախոհները յերդման կարիք չպետք ե ունենան։ Նեղ ըմբռնելով ապստամբության իմաստը, Բրուտոսը կարծում ե, թե այդ

ահաղին քաղաքական ձեռնարկը պետք է սահմանափակվի մի մարդու արյունով:

Եերբ առաջարկվում է Կեսարի հետ միաժամանակ վերացնել նաև Մարկ Անտոնիուսին, Բրուտոսը դիմադրում և դրան: «Ավելորդ արյուն հարկավոր չե»—ասում են նա: «Ընդհանուր բարիքի համար մենք կարող ենք մի զոհ բերել բայց մսագործ դառնալը անարդանք ե: Մենք ըմբռստանում ենք Կեսարի վոզու դեմ, իսկ վոզու մեջ արյուն չկա, մ՛, յիթե Հնար լիներ անարյուն վոչնչացնել Կեսարի վոզին»: Բայց առանց արյան զօհի դա անհնարին ե: Ուստի կատարվում է սպանությունը սենատի ու ժողովրդի առջե, վորոնք հանկարծակիի յեկած և ահարեկված փախուստի յեն դիմում, Վերջին հարվածը հասցնում է Բրուտոսը, Հուլիոս Կեսարի սիրելին, վորին մեռնող Կեսարը արտասանում է նշանավոր գարձած խոսքերը. «Եել դժւ, Բրուտոս, դե մեռիր, Կեսար»: Ամեն ինչ վերջացած համարելով, Բրուտոսը տալիս է «աղատության և խաղաղության» լոգունգներ, և ապա միայն զնում ժողովրդի մոտ՝ հայտնելու սպանության պատճառնելիրը:

Քաղաքական անվեհերությամբ տողորժած Բրուտոսը սակայն միամարտության ու անփորձության մարմնացում եւ նա անընդունակ է հասկանալու, հակառակ կասիոսի, այն վատնզը, վոր կարող եր սպառնալ նրանց Անտոնիուսը: Բրուտոսը թույլ է տալիս նրան ստանալու Կեսարի գիշակը և զրուատման ճառ արտասանել խոնված բազմության առջե, այն ևս հեղաշրջում կատարողների բացակայությանը: Հեռատես ու խորամանկ Անտոնիուսը լրիվ ոգտագործում է իրեն շնորհված վայրկյանը և իր հռետորական տաղանդի ուժով ապստամբության հասցնում քաղաքացիներին և ուզարկում հրդեհելու հեղափոխականների տներն ու սպանելու նրանց զեկավարներին: Եեքսպիրի շեդյովրներից ե նաև Բրուտոսի ճառը,



Смерть Юлия Цезаря.

Հուլիոս Կեսարի մահ, գործ կիենից կառավարի
Death of Julius Caesar.



«Յեթե այս ժողովում,—ասում են նա, —կա կեսարի գեթ
մի իսկական բարեկամը, ապա յես պետք են նրան ասեմ.
Բրուտոսի սերը կեսարին պակաս չեն նրա սիրուց, Յեթև
այդ բարեկամը հարց տա, թե ինչնեւ Բրուտոսը զինվեց կե-
սարի դեմ: Ահա իմ պատասխանը յես այդ արեցի վճչ թե
նրա համար, վոր կեսարին պակաս եյի սիրում, այլ վարով-
հետև Հոռոմը ավելի եյի սիրում, Վերը լավ եր ձեղ համար,
կեսարին տեսնել կենդանին և մեռնել ստրմել, թե կեսարին
տեսնել մնուած, իսկ ապրել իրեն ազատ քաղաքացի: Վո-
րովիհետև կեսարը սիրում եր ինձ, դրա համար յես արցունք
ևմ թափում. վորովիհետև աջողությունը ժպտում եր նրան,
յես ուրախանում եյի. վորովիհետև անվներ եր, յես դգում
ևմ նրան. բայց վորովիհետև իշխելասեր եր, յես նրան սպա-
նեցի: Յես արցունք եմ թափում նրա սիրո համար, վորջու-
նում եմ նրա աջողությունները, պատվում եմ նրան՝ դոր-
ծած քաջությունների համար. բայց իշխելասիրության հա-
մար նա մահ ընդունեց: Ո՞ւր և այն ստոր արարածը ձեր
մեջ, վոր կամենում եւ ստրուկ լինել, Յեթե կա, թող պա-
տասխանի. յես միմիայն նրան վիրաւվորեցի: Ո՞ւր և ձեր
մեջ այն ցածհողի մարդը, վոր չե սիրում իր հայրենիքը:
Յեթե կա այդալիսին. թող պատասխանի. յես միմիայն նը-
րան վիրավորեցի: Յես ընդհատում եմ ճառս և սպասում
ձեր պատասխանինք:

Յեզ յերբ քաղաքացիների ամբոխը պատասխանում ե,
թե նման մարդ չկա իրենց շարքերում, Բրուտոսը հետեյալ
կերպ և վերջացնում իր ճառը:

«Հոռոմի յերջանկության համար յես մահացրի իմ լո-
յագույն բարեկամին. և այն սուրը, վոր խրեցի նրա մար-
մինը, պահում եմ, վորպեսզի նրանով ինձ ևս սպանեմ, յե-
թե դրան կարիք ունենա իմ հայրենիքը»:

Ազնիզ և մաքուր Բրուտոսը ճիշտ ե ասում, Պարտու-
թյունը նրան նահանջող չգարձրեց: Նա անհողողող մնաց

իր սկզբունքներին։ Համոզված եր, վոր իր հերսոսությունը հանուն ժողովրդական բարիքի յև և այդ հավատով ել զոհեց իրեն։

Այդպես և բնորոշում Բրուտոսին նույնիսկ նրա թրշնամին՝ Մարկ Անտոնիուսը, համարելով նրան «իսկական մարդ—քաղաքացի»։

Յեթե Բրուտոսը, լինելով ֆանատիկ հանրապետական, դուրկ և յեղել գործնական հեռատեսությունից քաղաքական թշնամիների նկատմամբ, ապա կասիոսը, ոժտված վճռականությամբ, ունեցել է շատ զգաստ վերաբերմունք դեպի իրերն ու մարդիկ։

Կասիոսը քաղաքական դավագրության գործնական դեկավարն է։ Նա հիմնավորում է քաղաքական այն ակտը, վոր պետք և կատարեն հանրապետության կողմնակիցները կայսերական գանի ձգտող կեսարի նկատմամբ։ «Լավ և շապանք նոք, քան դողանք մի մարդու առջե, վոր ամեն բանում ել մեզ նման եւ Մենք ծնվել ենք աղատ, ինչպես կեսարը. մենք միատեսակ ենք անվել, ձենովա ցուրտը մենք ել տառանում ենք այնպես, ինչպես նա... Այժմ նա դարձել եւ աստված, և խեղճ կասիոսը պետք է կորանա նրա առջե, յերբ նա բարեհաճի դլխի թեթև նշանավ նկատել նրանց։ Կասիոսին վրդովեցնում և այն ստրկականությունը, վոր արմատացած և մարդկանց մեջ և պատճառ և դարձել առանձին անհամաների աստվածացմանը։ «Պատճառը չպետք եւ աստղերի մեջ մորոնել, այլ մեր մեջ,—ասում ե նա. — մենք վոչնչություններ ենք ու թուլամորթներ», Միթե Հոռմը այնքան անտրպված, ընկած ե, վոր կարող և միմիայն մի կեսար ոնել։ Միթե նա ընդունակ չե ծնելու մեծ մարդկանց ամբողջ շաբաններ։ «Ո՛, Հռոմ,—գոչում և կասիոսը, —ունենալով քո մեջ միայն մի մարդ, գու դատարկված ես։ Նրա սրտում յեւ և գալիս ցասումը։ Նա դադար չունի. Կաղմակերպում ե դավադրությունը, համոզում և հոգով թուլացողներին։ Վճռել

և կմամ տապալել ցեղարեղմը, կմամ ընկնել սեփական սրի հարվածից: Լավ և մեռնել, քան տանել զեսպոտ—դիկտատորի լուծը:

Կեսարի սպանությունը պատմական մեծագործություն և համարում կասիոսը՝ «Կանցնեն դարեր,—ասում և նա,— և քանի-քանի անդամ մեր այս վեհ գործը ներկայացման առարկա կողառնա դալիք որերում, և մեղ տոկավին անծանոթ ազգների մեջ»:

Կասիոսը հեռատես և և զգույշ: Նա համոզված և, հռկառակ Բրուտոսի, վոր միմիայն Կեսարի Փիզիկական վերացումով գեսպատիզմը չի տապալվի, Ահա Անտոնիուսը, Կեսարի պաշտպանը և հանրապետականների այդ վոխերին հակառակորդը, Վատանը կանխելու համար նա առաջարկում և սպանել նաև Անտոնիուսին: Բայց ինչպես պիտինք, դրան սահմանի գիմազըրում և Բրուտոսը:

Յերբ Անտոնիուսը խորամանկությամբ կարողանում և ձեռք բերել Բրուտոսի վստահությունը և իրավունք ստանալ դամբանական խոսելու Կեսարի դիմակի վրա, Կասիոսը շեշտակի զնում և հարցը նրա առաջ: —Ինչուիսի քաղաքական դաշն ենք կնքել Անտոնիուսի հետ: բարեկամի՛ հետ գործունենք, թե աւարձենի՛ են մեր ճանապարհները:—Պատասխանից անկախ Կասիոսը հակառակ և նրա յերութին Կեսարի դագաղի առջև, վորովհետեւ լազ բան չե սպասում գլանից: Սակայն դիջելով Բրուտոսին, Կասիոսը ևս գործում և անուղղելի սխալ: Այդ սխալից ողտվում և թշնամին և վոչչացնում դավադիրների ամրող ձեռնարկը: Միամիտ հանրապետականների դավադրությունը վերջանում և նրանց խորտակումով:

Զարժանալի խորությամբ տղել և Շեքսպիրը Պորցիայի, Բրուտոսի կնոջ պատկերը: Խելացի, թախծոտ, սիրող Պորցիան զգում և, վոր իր սմութնու մեջ ինչ-վոր փոթորքի և տեղի ունենում: Նա մատհոգված և իր սիրած մար-

դու զինակով և տեսնում ե, թե ինչպես նրա ամեն մի քայլը ծածկված ե խիստ գաղտնապահությամբ։ Բրուտոսը, նըման պրոֆեսիոնալ հեղափոխականի, չե բացվում նույնիսկ իր հարազատների առջև։ Վորքան ջերմություն, վորքան թախիծ ու վողբերդական շեշտ կա Պորցիայի խոսքերի մեջ, յերբ նա համոզում և Բրուտոսին հայտնել իր սրտի ծանր դադատնիքը, վորք առնջանքի գրոշմ և զրել նրա ճակատին։

Պորցիան Շեքսպիրի կանացի այն տիպերից ե, վորոնք պատրաստ են ամեն զօնողություն հանձ առնել իրենց սիրած մարդու վիշտը թեթևացնելու, յեթե հարկ յեղադի անգամ կյանքը զոհնելու։ Վերածնության դարի ազատության շպառդ կնոջ հեռավոր նմանությունն ե Պորցիան։ Նա կամենում ե լինել իր ամուսնու գաղտնապահ ընկերը, լինել իրազեկ նրա ձեռնարկներին, ոգնել նրան, մասնակցել նրա ծանր ապրումներին։ Պորցիայի թախանձանքը սաստիկ հուզում և Բրուտոսին և նա բաց և անում դավադրության գաղտնիքը, Բրուտոսի կարծանումը չե կարողանում տանել Պորցիան և անձնասպանություն և զործում։

«Հօւլիոս Կեսար»ի մեջ շատ վորոշ տեղ և ըստում շամբախը։ Շեքսպիրը արխտակրատական հատուկ մտեցում ունի դեպի հաստրակական ստորին դանգվածները։ Բայց այդ մասին կխսսենք «Կորիզանուաց վերլուծելիս»։

«Կորիզանուաց Շեքսպիրի ուժեղ գրվածքներից մեկն ե, նրա հիմնական գաղափարը արխտակրատիայի պայքարն է ոլլերսի դեմ, Թանձը դույներով, խիստ պատկերներով։ Շեքսպիրը վերաբառադրում ե այն պայքարը, վոր յերկու ճակատով համառորեն վարում և արխտակրատիան ժողովրդական մասսաների դեմ։ Ա՛ հարձակողական և՛ պաշտպանողական, Դա միևնույն դասակարգի յերկու տարբեր թեսքի ստրատեգիան և «հաղարդվայան» ոլլերսին իր ազդեցության տակ պահելու համար։ Յերբ հարկավոր ե՝ նա գործում և ահարեւելման միջոցով, յերբ հնար չկա՝ դիջման ճանապարհով։

«Կորիոլանուսը դեմոսին ատող բռնակալների, Փեռդալականն սևակցիոն արխտուկրատիայի տենչերի ու նվիրական մտքերի անդրադարձումն եւ, Վողրերգության հերոս Կորիոլանուսը ամբողջական և վառ նախատիպն և նիշշեյան կան ներցուանշ—գերմարդու, իր անհաղթելի նողկանքով դեպի մարդկային «անթիվ շատերը»:

Կորիոլանուսը պլեբեյների դասակարգային անհաշաթշնամին եւ նու պատկանում և այն ազնվականների շարժին, վորոնք քաղաքական վոչ մի հանգամանք հաշվի չեն տունում և ողաարաստ են կործանվել, բայց իշխանությունից չերաժարվելու նա հակառակ և իր դասակարգի այն մարդկանց, վորոնք զգալով պլեբսի իրական ուժի չափը, զիջման ճանապարհն և բռնում իշխանությունը չկորցնելու համար։ Կորիոլանուսը որգանական ատելությունն ունի դեպի ժողովուրդն ու նրա տրիբունները։ Այլ մակրիքներ նա չունի նրանց վերաբերմամբ, քան «Չներ», «սրիկաներ», «անասուններ» և այլն։ Ողը ապահանված և այնտեղ, ուր շնչում և պլեբսը, Պատերազմի դաշտում՝ «նապաստակներ», յերկը հերոսների—աերերի նկատմամբ՝ միշտ յերերուն, տատանվող, յերեկի կուռքը նրանք կարող են այսոր տապալել, վոտի տակ առնել, տրորելու «Վեր իրավունքով, գոչում և Կորիոլանուսը,—զուք (պլեբեյներդ) խայտառակում և քաղաքում մեր փառավոր սինատը, վորը աստվածային իշխանության աջակցությամբ ձեղ սարսափի մեջ և պահում և արդելում միմյանց հոշոտելու։ Յեթի սինատը թույլ տա, արխտուկրատիայի ծայրահեղ թեր ներկայացնող կորիոլանուսը պատրաստ և վոչնչացնելու պլիբսի ձեռք բերած ըոլոր իրավունքները, Կորիոլանուսի ձայնը ուժիղ և հնչում, վորովհետեւ նա քաջ զորավար և և մի քանի անգամ աղատել և Հռոմը վոլոկյան ցեղի զործած կատաղի հարձակումներից։ Սակայն չնայելով նրա քաղաքական կարնատեսությանը և նրասակար դիրքին նույն արխտուկրատէայի շահերի տեսա-

կիտից, սենատը վորոշում և տալ նրան կոնսուլի կոչում։ Յել այսանդ և ահա, վոր գասակարգային մեծամտությամբ կուրացած արխատոկրատը, Կորիոլանումը, առաջին անգամ դպում և պղերսի ուժն ու իրավունքը, Կոնսուլ դառնալու համար նա պետք և կանգնի ժողովրդի առաջ, խոնարհարար իրազեկ դարձնի իր արժանիքների մասին, վորպեսզի ժողովուրդը տա իր համաձայնությունը, Պետք և Կորիոլանումը գլուխ իջնցնի պղերսի առջև կամ հրաժարվի կոնսուլ դառնալու մտքից։ Հեռաւես բարեկամների խորհրդով հպարտ արխատոկրատը, արհամարհանքը սրտում, սահմանած և ձայնել հայցել իրեն տանի քաղաքացիներից։ Թեպետ մեծ զժվարությամբ, բայց քաղաքացիք տալիս են իրենց ձայնը, գնահատելով նրա ծառայությունը թշնամիներին վանելու կործում։ Տալիս են և զզում, վորովհետեւ Կորիոլանումը չն հաշտվում այն մտքի հետ, թե իր դասակարգը պարագության ճանապարհին և, իսկ պղերսը՝ անհաղթելի ուժ։ Նա շարունակում է գործածել իր անսարքական բառերը ժողովրդուկան արիրուններին նա անվանում է «ժողովրդական յերախի կեղառող լեզվակներ», իսկ ժողովրդին՝ «կեղառու ուխա»։ Յել յերր կոչումի (կոնսուլի) հասաւաման հարցը դրվում և սենատում, արիրունները և ընտրողները, անուղղելի համարելով Կորիոլանումին, մերժում են հաստատել նրան այդ բարձր կոչման մեջ։

Ենքստիրը վոչ մի ներկ չի խնայել իր հերոսի պատկերը նշառեն նկարելու։ Մերժված Կորիոլանումը ավելի խիստ մակղիքներ և շպրտում պղերսի հասցեյին։ Իր դասակարգի հաշտվողականների քաղաքականությունը «ապականված» ու անբարոյական ամբոխի նկատմամբ նա համարում է կորստարեր և պատճառ «լմբուստության», խելառության և լրության։ Մանր վիրավորանք և համարում այն, վոր պղերեցներին տրված արտոնությունները սարսափի արգասիք են, վոր ունեցել և իր դասակարգը «ամբոխից»։

«Այնուեղ, —ասում ե Կորիոլանուսը, —ուր ծագումը, կոչումը և խմասությունը անդոր են ճշավող մեծամասնության առջև, այնուեղ չկա ճանապարհ խիլացիորեն կառավարելու, այնուեղ չկա կարդ... Վճռեցեք մի անգամից պոկել բաղման լեզուն, վորպեսդի նա չհանդգնի մնջել քաղցրահամ թույնութեաւ:

Յեզ յերբ ժողովրդական տրիբունների առաջարկով պլեբեյների ճշշման տակ սենատը վորոշում ե աքսորել Կորիոլանուսին Հռոմից, կառաղի արիստոկրատը անմիջապես անցնում է Հռոմի թշնամի ցեղերի կողմը (նույն վոլսկերի) ու նրանց հետ միասին արշավում իր հայրենիքից վրա: Վերքան հին և վերքան ժամանակակից և այս յերեսույթը, վորի անունն և ինտերվենցիա, Անցյալում բոլոր ընկնող դասակարգերը, կորցնելով իշխանությունը, դիմել են ազետական զավաճանության, ուար ուժերի ոգնությամբ արյան մեջ խեղդելու իրենց սփրեկի հայրենիքը և կորցրած իշխանությունը վերստին ձեռք ձգելու համար: Թշնամիներին վաճառված Կորիոլանուսին հաջողվում և պաշարել Հռոմը, և մնում եր մի բան ևս անել —համաձայն պայմանի սրի քաշել վողջ աղդաբնակությունը: Միայն վերջին վայրկյանին նա հրաժարվում է իր այդ գաֆան մտադրությունից, և դա այն ժամանակ, յերբ նրա ընտանիքը, մայրը, կինը, յերեխանները թախանձանքով դիմում են նրան խնայել անմեղներին և իրենց: Բայց իր նոր դաշնակիցներին զավաճանելու պատճառով նա ընկնում է նրանց սրի հարվածները տակ: Այսպիսի վախճան և տալիս Շեքսպիրը իր հերոսին, ըմբռնելով իր ժամանակի քաղաքական բուռն անցքերի եմասաւը:

Համամեթ և Շեքսպիրը Կորիոլանուսին: Վաչ: Չորրորդ դործողության վերջում վոլսկերի առաջնորդ Ամֆիդիուսը հետեւալ գնահատականն է տալիս Կորիոլանուսին, վարն արդեն անցել եր հայրենիքի թշնամիների բանակը: Մի

ժամանակ Մարցիուս Կորիոլանուսը, ասում ենա, հերոսարար ծառայել ե Հռոմին, բայց մինչև վերջը չե կարողացել մնալ հավասար բարձրության վրա։ Խնչմէ Հռոմի ժողովրդի աշխատմ նա զարձավ անընդունելի և վտանգավոր։ Խնչմէ ժողովրդը նրան արտաքսեց հայրենիքից, Դրա պատասխանը Ամֆիզիուսը փնտում ե նախ Կորիոլանուսի հպարտ մեծամասության՝ դյուրագրգիռ բնավորության, սենատի առաջունեցած անբարտավանության մեջ։ Զիջումների անընդունակ՝ անտեղի անարդանք եր հասցնում ժողովրդին։ «Խորհրդի նստարանների վրա սաղավարաը չեր հանում և աշխարհիկ գործերում պահում եր իրեն ինչպես մի զօրավար պատերազմի դաշտում։ Շեքսպիրի համար զաղտնիք չեր, վոր Կորիոլանուսի ամբարտավանությունը բղիում ե արտօնյալ դասակարգին պատկանելու նրա դիտակցությունից։ Պյուրագրդին վերաբերմտնքը գեղի պլերսը արդյունք և նույն գասակարգային հոգերանության։ ԶԵ վոր աշդպես ե պատեկերացված Կորիոլանուսը ամրող պիհսում։ Սակայն դրանով Շեքսպիրը պլերսի կողմնակից չե դառնուած։ Նա անհասկալոծ արիստոկրատ դասակարգին ե համակրում, սակայն կողմնակից ե խելացի դաշինքի հասարակական այլ խմբակցությունների հետ, կողմնակից և քաղաքական համաձայնության, վորոշ տակտով գործողությունների ու յելույթների մեջ հանդես ե դալիս պարզապես իրքն հռոմեյական (կամ անգլիական) վերադաս խավի կոպիտ սալդաֆոն։

Աճա թե իր վճր արատների համար նա դարձավ անմարտելի։ «Իսկ իր ծառայությունների մասին անընբջիւ խոսելու», ըստ Ամֆիզիուսի, «ա վոչնչացրեց նրանց արժեքը։ «Նա (Կորիոլանուսը) մոռացավ, — շարունակում ե Ամֆիզիուսը, — վոր մարդու արիությունը կախված ե միայն ընդհանուրի դատաստանից»։

Համաձայնողական տրիստոկրատների դերում Շեքսպիրը հանդես և բերել կորիոլանուսի մորը՝ Վոլումնիային և ազնվական Ազրիապային, արիստոկրատիայի դաստկարգացին փաստաբանին Նրանց զրույցներից կարելի յե հանել այն յեղբակացությունը, թե արիստոկրատիայի բոլոր զիջումները արդյունք են ողերսի քաղաքական աճող դորության և արիստոկրատիայի աստիճանական թուլացման, ժամանակավոր դաշինք կնքելով ժաղովրդական խավերի հետ (արհեստավէորների, առևտրականների, գյուղացիների), նրանք համոզված եյին, վոր գերակշռող դերը քաղաքականության մեջ դարձյալ իրենց և վերապահվելու և վորոշ ժամանակից հետո գուցեն թե կարողանան ողերսին ընդմիշտ վտարել պետական գեկավար մարմիններից։ Վոլումնիան համոզում և վորպուն—կորիոլանուսին արտաքնապես խոնարհուել ողերսի առջեւ և ընդունել կոնսուլի կոչումը։ «Պավակս, դադամկս։ գու նախաձեռք քեր իշխանությունը, ասլա մաշիր այն, ինչպես պահանջում ե հարկը։ Այսինքն կեղծիր մինչև իշխանավոր դառնալը, հետո մուրճդ իշնցըու ստոր քամբոխի» զլիսին «Ի՞նչմեւ յես դու ժամանակից առաջ մտքերդ հայտնի դարձնում թշնամուդ... Թաջությունն ու խորամանելությունը անբաժան ընկերուհիներ են... Զես կարող թշնամուդ առջև խոնարհություն գործ դնիլ... Գնա, ժողովը ոք առջեւ կանգնիր խոնարհ ու բաց պլառվ... Յեթե հարկ լինի՝ ծունկ իջնցըու, մարդու շարժումները ավելի յեն պերճախսոս, քան բառերը։ ավելի ուշիմ են տգետների աշքերը, քան ականջները... Գնա, ասա պլեբեյներին, վոր դու նրանց դորավարն ես, վոր կովի դաշտում մեծանալով, հեղությամբ ոժտվել չես կարողացել և վոր այդ պակասավոր կողմովդ ե, վոր ժողովրդին անհաճո յես յերեացել Իօկ այժմ իրրև թե սիրելով ժողովրդին, պատրաստ ես փոխվել և անել այն, ինչ արդարացիորեն ցանկանում են քաղաքացիները...»։

Վարքան նուրբ և քաղմակաղմանի յեւ վերաբռնը բել
Շեքսպիրը ընկնող դասակարգի շղաշինքայինց քաղաքակա-
նության գավառիր մեխանիզմը Արտաքին հանդիսավոր-
ություն, վորի տակ թագնված և որած պատրաստ դա-
շույնը Վոլումնիտն միանգամայն համամիտ և Կորիոլանու-
սին, վոր ալեքսանյերը շարժանի յեն կախաղանի և խա-
րույկից, բայց խելամտություն ունի ըմբռնելու, վոր նման
միջոցների ժամանակը դեռ հասունացած չեւ:

Մենանիուս Աղբիոպան, նույն տեսակնետի պաշտպա-
նը, խորին տաելություն ունի դեպի ժողովրդական զանգ-
վածք, վորին նա սոտոր ամբոխաւ և անվանում, բայց դիտե
զապել իրեն և կեզծել: Խոսելով քաղցից տառապող քաղա-
քացիների հետ, նա պրոդագանդ և մզում՝ ըստոքը ուղղել
յիրկնքի գեմ և վոչ պետության: Զեր դադանակները բարձ-
րացրեք ամենակարող յերկնքի վրա, խորհուրդ և տալիս նա:

Աղբիոպան ունի պլեբսի հետ խոսելու հատուկ ձևեր.
մերթ խրատում է, մերթ համոզում և մերթ, սկսվելով հար-
մար առիթից, վախեցնում և շնորհի սպառնական ուժով:
«Ով Վոլումնիա, —դիմում և Աղբիոպան Կորիոլանուսի մա-
րք, —դու ճիշտ ասացիր. յեթե չիներ ընդհանուրիս (արիս-
տոկրատիայի) ոգուտը, յեթե չիներ ծանր ժամանակների
անտանելի վիճակը, յես յերբեք չեյի համոզի Կորիոլա-
նուսին զիջումներ անելու ստոր ամբոխին, այլ ծանր զբան
հագած յես ինքս ուժի կողմեյիք»:

Պերսի ահարկու ուժից սարսափում են Աղբիոպան և
նրա համախոհ արիստոկրատները: Եերբ Կոտպիտուլիումի
առջև Կորիոլանուսի և քաղաքացիների միջև տեղի յեւ ունե-
նում ընդհարում, և արիբունները հրամայում են ձերբակա-
լել հարձակված ըմբռստին, արիստոկրատներից մեկը, նախ-
էին զորավար, շատ նշանավոր խոսք և առօս Կորիոլանու-
սին: «Այստեղ կովելու տեղը չեւ Միայն անմիտները կարող
են փորձ անել սեփական ուսերի վրա պահելու կործանվող

շնչարը՝ Գնամ տուն, քանի ամբոխը չե թափվել՝ ամբարտակները քանզամծ կատաղի հեղեղի նման»:

Բնորոշ և Շնչաղիրի արտահայտած այս միտքը, թէ ոմիայն անմիտները կարող են փորձ անել սեփական ուսերի վրա ուանելու կործանվող շենքը։ Դա ֆեռգարական արխտակրատիոյի շենքն եր, վոր Շնչաղիրի սրատես աշքերի ամջի կործանվում եր։

Յեթե վողը երդության արխտոկրատ տիպերից անցնենք ժողովրդական տրիբուններին և «ամբոխին», ապա հայտնարկած կլիննեղ հնաւեյալը. վորքան պայծառ են դժաղրիված տիրող գաստիարդի առանձին դեմքերը, այնքան աղոստ ու ընդհանուր են ժողովրդական ներկայացուցիչները։ Պէտք է սատր և Շնչաղիրին և արհամարհնելի մեծություն։ Ժողովուրդը նրա աչքում տմօրի, անկերպարան մասսա յեւ Շարժման մեջ՝ տարրերային, ահարկու։ Նո տատանվածող և իրեկ ժամացույցի ճոճանակ։ Հաստատուն պատվանդան չունի։ Այսոր վոտնահարում և այն հերոսին, զորին յերեկ գարձրել եր պաշտամունքի առարկա, Շնչաղիրը, իհարկե, նորատակ չե դնում ողարդելու, ինչու յեւ այսպես լինում և ինչ ամբոխ և դա։

«Ճուլիսս Կեսար»ի ամբոխը յերեկ ծափահարնել և Պոմպեոսին, այսոր ծափահարում և Հուլիսս Կեսարին։ Ավելի ես ծափահարում ե, յերբ Կեսարը հրաժարվում և թաղից, թեազնա հրաժարվում առերես։ Ամբոխը Կեսարի դեմ չե, դեմ և թաղին, վոր կարող և ծանձել Կեսարի զլուխը, Կեսարի սպանությունը ցնցում և բոլորին։ Վողը ամբոխ են տղամարդիկ, կանայք և յերեխաները, վողը ամբոխ են այնպես, կարծես թեն աշխարհի վերջն եւ։ Սակայն ըստ նույն վողքերպության հնաց վոր ընկնում և Կեսարը և ուժի տերը պատաստ են Բրուտոսն ու Կասիոսը, «ամբոխը» (Քաղաքացիները) իսկույն անցնում և նոր իշխանավորների կողմը, սուր գաբավածքներ ուղղելով Կեսարի հասցեյին։ «Կե-

սարը, — ասում ե քաղաքացիներից մեկը, — իշխանասեր դեռպոտ եր». «Կեցցե Բրուտոսը, կեցցե, կեցցե»: Ամբոխը այժմ ծափահարում ե Բրուտոսին, պատրաստ և նրան ձեռննըի վրա տուն տանելը արձան կանգնեցնել և նույնիսկ կեսար դարձնել: Ավելի շեշտելու համար ամբոխի հարավոփոխ, տատանվող դրությունը, Շեքսպիրը նրան յենթարկում է մի նոր փորձության: Այս անդամ Բրուտոսի թշնամի Անտոնիուսի հետ, վորը հարմար առիթ գտնելով, ոգտագործում ե կեսարի դիակը, տաղանդավոր ճառով իր կողմը թեքում նույն ամբոխին: Այժմ նրա, այսինքն ամբոխի աչքում ոչկա ավելի աղնիվ մարդ Հռոմում, քան Մարկ Սնտոնիուսը, և չկան ավելի մեծ վաճագործներ, քան Բրուտոսն ու Կասիոսը: Յեզ լարված «ամբոխը» դնում և մահվան դատավճիռ կարդալու նրանց ոլխին և այրելու նրանց տները:

Ա. Շեքսպիրի «ամբոխը» շնորհուած Կեսարաւում,

Սակայն տարրեր ե ամբոխը «Կորիոլանուսում», Յեթի ցեղարիզմի և հանրապետական արիստոկրատիզմի արանքում ներկայացրած ամբոխը հարափոփոխ ե, ուստի զողում անցնելով ցեղարիզմի կողմը, ապա արիստոկրատիզմի և պլեյսի պլայքարի շրջանում նա ալելի ակտիվ ե ու սոլանալի:

«Կորիոլանուսի ամբոխի շարժիչ ուժը, ոնայիտ ըանաստեղծի կարծիքով, միայն հացն ե և խաղաղության հարցը. զուցե մասամբ նաև կովիտ զվարճությունը—Panem et Circenses-ը: Շեքսպիրի հանդես ըերած պլեյբյօդագագացիները անդեմ են. նրանք համար 1-ն, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ քաղաքացիներ են: Անուն չունեն: Մտահոգված են հացով և հացի համար պատրաստ են ապատամբիլել: Հեղանանքով են խոսում արիստոկրատիայի «ազնվության» մասին և կատաղորեն ատամ կրնտացնում, տեսնելով նրանց կուշտ մարմինները:

Սակայն այդ ամենի հետ միասին Շեքսպիրի մեջ կոխութ գրական գիծ. պետք ե խոստավանել, վոր գեղարվես-

տական սմալեղմը հարկադրել և դրամատուրգին մի քանի ուժեղ շարիխավ պատկերացնել, թեպետ աղոտ ու անկատար, ամբոխի ընդհանուր վիճակը: Շեքսափիրը չէ խորանում ավյալ սացիալական յերևույթի, ժողովրդական մասսաների հացության մնջ, բայց նա շատ համարձակ բարձրացնում և վարագույցը մի ծայրը:

Հենց առաջին անսարքանում «ամրոխը» սաստիլ գըրադըռյած և դասակարգային գոռոսդ և անսփրա թշնամիների գեմ: ամենից ավելի նայում Մարիցուս Կորիոլանումի դեմ: Դադանակներով ու ցիցերով դինքած ամբոխը դուրս և յեկել փողոց հաշիվ անսնելու այն դասակարգի հետ, վորը նրա գիտակցությամբ իր կրած տառապանքների գիխավոր պատճառն և, Տեսնք թե ինչ լիդլուի են խոսում պլեբսի մարդիկ, «Զքավորներին ազնիվ չեն համարում, — ասում և նրանցից մեկը, — աղնիվ են միայն արիստոկրատները, Նրանք լիացած ևն մինչև կոկարդը, իսկ մենք կարիքի մեջ ենք: Թողիրենց ավելարդ ունեցածի մի մասը տան մեզ, մենք նրանց շշնորհակալություն» կհայտնենք այդ վողորմածության համար... Նրանք սիրում են նայել մեր լլար կերպարանքին և տառապանքին: Իրենց քաղցր կյանքով նրանք գոհ են, Դեպի մրեմ, քաղաքացիներ... Զարությունից չե, այլ սովորեամ անում իմ այս կոչը»:

Ցասումը պատրաստ և պոռթկալ, Դադաքի մյուս ծայրն ել վոտքի յե կանոնել: Նախապարաստվում և ապստամբությունը, թեպետ տիրող իշխանությունը գիտե, վոր աղքատների համբերությունը մեծ և լինում: Դրան առաջին քաղաքացին պատասխանում ե. «Թող այժմ իմանան, վոր մեր ձեռքերը դեռ չեն թուլացած»: Ուղորտունիստ ազնիական Ազգիպայայի այն հարցին, թե «ինչմեւ յեք ինքներդ ձեզ աղեաի մատնում», ամբոխի ներկայացուցիչը տալիս և հիտեյալ հակիրճ պատասխանը. — «Մենք արդեն աղեաի մեջ

ևնք», Այսինքն՝ Բնչ ունենք կորցնելու, բացի մեր շղթաներից: Քաղաքական հեղաշրջման նախորյակի խոսքեր:

«Մենք,—ասում ե մեկը նույն ամբոխից,—սովործ ենք, իսկ նրանց ամբարները բերներերան լրված են հացաւ: Նրանց գրած որենքները պաշտպանում են միմբայցն վաշ-իառուներին: Ամենայն որ վերացվում ե վորեն որենք, վոր նեղացնում ե հարուսաններին: ամենայն որ հնարիվում ե նոր որենք չքավորներին ճնշելու Ցեղեն մեզ չի կործանում պա-տերադմը, ապա կործանում են նրանք և պատերադմից ել վաստ: Անա թե ինչպես են սիրում մեղ հայրենիքի հայ-քերը»:

Մի հետաքրքիր մոմենտ ել կա Շեքսպիրի այն աւ-սարանում, թե ինչպես զրկված ամբոխի ուշտությունը այլ կողմ թեքելու հոմար նույն Աղքիոլուան թեթև դիմկու-սիայի մեջ և մանում կավելու պատրաստ քաղաքացիների: հետ ու ծանր ու բարակ հեքիաթ պատօմում:

Միծ առարկայնություն պետք ե ունենա աիրող գա-սակարգերի գրողը, վոր նման պարզ ու ճշմարիտ բառերով անդրադարձնե հակառակորդ դասակարդի վիճակը Շեքսպի-րի ամբոխը տատանվող ե, խարվող, բայց նա միշտ ակախ է և միշտ պատրաստ ե իր վուների տակ արորելու առելլի-տերերին: Նա նման է ապստամբված ստրուկների:

Շեքսպիրի մի քանի ոլինսներում մենք հանդիպում ենք այն մաքի կրկնությանը, թե հարուստները իրենց ավելորդ բաժինը ունետք ե տան չքավորներին: Ըստ յերե-վութին, աղաղակող անարդարության հանդեպ լուռ մաս չկարողանալով, սոցիալական կացության սուր կողմերը մեղ-մելու միակ միջոցը Շեքսպիրը դա յև համարել ունեսորի և ավելորդից մի մասը տալ չունեորին:

Ժողովրդական արիբուններին Շեքսպիրը ներկայաց-նում ե վորպես զեմագոգներ, վորոնք միմիայն մի դեր ու-նեն: զրգուել ամբոխին արիստոկրատիայի դեմ: Բրուտոս և

Արկինիուս զաւրս են բնը ված վոչ իրան ժողովրդական անվախ տրիբուններ, այլ զաղտնի զավեր լարող և կրթեր բորբոքող նրանք կարծես խուսափում են բաց ճակատով հանգես զալու սենատում ու հրապարակներում, խուսափում են քննադատելու դասակարգային թշնամիների արարգները, կազմակերպելու իրենց ժողովուրդը։ Վոր արիբունները ճիշտ են բացատրում իրերի վիճակը իրենց քաղաքացիներին, դա անկառակած եւ Բայց նրանց պակառում և քաղաքացիական անվեներությունը։

Այդանոց Շեքսպիրը անուշայման վրիպնի եւ, Յեթէ արիբունները գեմադոգներ են, իսկ ամբոխը առաջուրենքող տարրերային մի ույժ, անընդունակ սխստեմատիկ և համառ պայքարի, ապա ինչպես և պլերսը հինգ արիբուն մացրել ողնատկուն վերին ապարատի մեջ և ինչպես և վորոշ սահմանների մեջ սեղմել արիստոկրատ դասակարգի գործոն տարրերին։ Այդ յնընությթը պատկերացման առարկա չեն յեղել Շեքսպիրի համար։ Այդ պատճառով ել անհասականալի յի, թե ինչպես կորիուլանուսին արտաքսող պլերսը իր առաջնորդներով անընդունակ եւ պառնում կազմակերպելու հզոր դիմադրություն պետական դավանան ու ինտերվենտ կորիուլանուսի դիմ։ Այդ ինչպես եւ, վոր իր հեռավոր խոռվ մռնչյունով անդամ արիստոկրատիային ահ ու դողի մեջ պահող պլերսը թուլամորթ արիբուններ և ուղարկում և ինքը վատանգի բուղեյին մկան վախկոսություն ցուցադրում։

Դասակարգային մոտեցումը Շեքսպիրին չեն թողել ժողովրդի ընտրյալներին ել բաժին հանել անվեներություն, հերոսություն, պատասխանատվության գիտակցություն և այլն։ Մյուս կողմից՝ պարզ և մի բան։ Շեքսպիրը սքանչելիորեն ճանաչել եւ տիրող խավերի մտքի և հուզական աշխարհի բոլոր խորշերը, ապրել են նրանց հետ, վերապրել նրանց անցյալն ու ներկան։ Մինչդեռ պլերսը ոտար ե յեղել նրան, անծանոթ նրա մտածողությանը, նիստ ու կա-

ցին և դործելու յեղանակին։ Դրա համար ել նրա գրվածքներում թե քաղաքի թե գյուղի վարի խավերը կամ բացակայում են կամ անգույն են։

Հռոմեական վողբերգությունների շարքին ե պատկանում «Անտոնիոս և Կիեսպատրա»ն, վորի նյութը հեղինակը դարձյալ վերցրել ե նույն հոչակավոր Պլուտարքոսից։ Այս վողբերգության մեջ ել լայն ե հանճարեղ դրամատուրգի ստեղծագործական գիտակազո՞նը, վերնագրելով գրվածքը «Անտոնիոս և Կիեսպատրա», կենարոնում դնելով նրանց հարաբերությունների կրքու «յեգիպտական դիշներները», Շեքսպիրը լայնորեն շօշափում ե պետական-քաղաքական հրատապ խնդիրներ, կապված Հռոմի քաղաքական պրորկումների հետ, արիուժիիրների ներքին դավերի ու կոփմների, Ոկտավիոսոսի վարած քաղաքական վարքադիր, այլև Հռոմի արևմտյան և արևելյան յերկրամասերի վիճակի հետ։

Անտոնիոսը արումվիր և, Հռոմի յերեք գեկավարներից մեկը, Հռոմի տաղանդավոր զորավարը, վոր մեծ հարթակներով պատկել ե իր գլուխը, ամբողջ տեղիտորիաներ միացնելով Հռոմին։ հայտնի յե Հռուցոս Կեսարին մաստուցած իր ծոռայություններով, հայտնի նաև իրրե վիժեցնողը Բրուտոսի և Կասիոսի ազստամբության Նվաճելով արևելյան բաղմաթիլ յերկիրներ Հռոմի համար, նու համառում ե մինչև Յեղիպտոս, Նեղոսի ափերը, բայց այստեղ հանդիպելով Յեղիպտոսի Կիեսպատրա թագուհուն, Հռուցոս Կեսարի նախկին սիրուհուն, հմայվում ե նրա զմղեցկությամբ, անձնատուր լինում իր իրքերին, անկարող պոկվելու հեշտասեր յեգիպտոսու սիրային հրապուրանքներից, Տիրապետելով արևելքին և նկատելով յերիտասարդ Կեսարի (Ոկտավիոսոսի) ձգտութեանը դեպի միահեծանություն, Անտոնիոսը ամրացնում ե իր դիրքերը հավատարիմ լեզեաններով և հրաժարվում յենթարկվելու Կեսարի ցուցմունքներին։ Մակայն ամուր նստելով Յեղիպտոսում, նա ավելի ու

ավելի: յև անձնատում լինում արնելյան մեղկության, հետքնեռեն կորցնելով ռազմական մարդու ունակությունները: իր գեմ և լարում կնասարին, վորի հետեանքով նրանց մեջ տեղի: յեւ ունենում պատերազմ: Բայց սեփական նավատորմի ու զորականների դավաճանությունից հետո Անտոնիուսին վոչինչ չեր մնում անել, քան անձնասպանությամբ վերջ տալ իր կյանքին: Անձնասպանություն և զործում նաև կլեսպատրուն:

Վոր Շնքսպիրը իր հերոսներին շունչ ու կենդանություն հաղորդելու համար զույն ու ներկեր վերցրել և իր ժամանակակից անդիիական պետական-քաղաքական գործիչների կյանքից, աչքի առաջ ունեցել հասուլ դեմքերի բնորոշ կտղմերը, նրանց գործելու հասարակական շարժառիթները, մտքերն ու հույղերը,—դրանում յերկու կարծիք լինել չեւ կարող: Հանձին հռոմեական վաղբերդությունների ներքութիւն զուտ պատմական պիեսներ չեւ տվել, ինչպես առել ենք արդեն: Նրանք արդյունք են քաղաքական սուր շահագրդությունների, այն ժամանակի Անգլիայի հասարակական կարծիքը մեծապես զբաղեցնող՝ արիստոկրատիայի, բուրժուազիայի և մանր բուրժուական պրոբլեմների շուրջը: Այդ դրդապատճառներով և մոտեցել մեծ դրամատուրգը հռոմեական վաղբերդությունների նյութին և վերցրել և հատկապես անցյալի այն շրջանները, վորսնքիրենինց քաղաքական շարժումների, դասակարգային փոխհարաբերությունների քնույթով ավելի մոտ են յեղել 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի առաջին տասնամյակների անդիմական պատմական իրականությանը:

Ընդգծելով հանդերձ այդ հանգամանքը, մենք բոլորովին ել համամիտ չենք բելգիացի Դամբլոնի և նրա ոռուսական հետեանզների, մանավանդ Շիպուլինսկու այն բռնազբուսիկ մեկնարանություններին, թե «Կօրփուանուաշը Սսանքսի արտացոլումն ե, իսկ «Անտոնիուս և Կլեսպատրուն» մեջ դար-

ձյալ նույն նստեքոն և՝ «քաջամարդակիկ», կրթված և հրապառքիչ Անտանիտուսի հոռոմեական ղղեստում՝ պարուրված։ ոյլին իրը Յեղիսաբեյթ թագուհին՝ «Նեղոսի պառակ ոճի», ոյն և Կլեոպատրայի պատկերն եւ, Ոկտավիանոս Կեսարը— Յեղիսաբեթի մինիստր Խորելոտ Սեսիլն եւ այլն Այստեղ ել պարզապես զղացվում և այն ընդհանուր դիմը, վոր վարել են ոյութեանդյան հիպոթեզի ֆանատիկուսները։ Դա ոյն եւ, վոր նրանք ճգնում են Շեքսպիրի գնդարիվնական որյեկտիվումը վերածել ծայրահեղ սուրյեկտիվութիւն։ Պետք է վերջապես հասկանալ, վոր շեքսպիրյան պիեսների և նստեքուր դա անգլիական մեղ հայտնի նստեքսի անհատական պիեմագիծը չեւ, Յեթե այդպես լիներ, մենք կունենայինք մի ռովորական ապստամբ ֆեոդալի պատկեր, Ապստամբ Նստեքին Շեքսպիրը տնկասկած աչքի տուած ունեցել և իր բարդ ու բազմակողմանի հերոսին կամ նման հնորուներին ստեղծագործելիս, Յեթ այդքան միայն Բացի այդ, Միթև «Կորիոլանուս» նույնպես արտացոլումն և նստեքսի։ Զել վոր Ռյութլանդ-հիպոթեզի կողմնակիցները պնդում են, վոր նստեքսի ապստամբության քաղաքական նպատակները ունեցել են նաև հակամիտպետական տենդենցներ, վորոնց մարմացումը կյանքում առանց գեմոկրատիայի հնարավոր չեր, իսկ Կորիոլանուսը Զել վոր նա ժողովրդի վոխերիմ թշնամին եր, դեմոկրատիային առող, իսկ իր ազնվական դասակարգի ֆանատիկ նեղմիա ողաշտականը։ Յեթե նստեքսի կուրիանուսը դեմ եր Յեղիսաբեթի «լուսավորյալ արսուլուտիզմին», վորը արտահայտում եր Անգլիայի առևտրական բուրժուազիայի շահերը, և ապստամբության ուժով ուզում նր վերականգնել իր դասակարգի բացարձակ իշխանությունը, ապա դա առաջադիմ յերևույթ եր, թե հետադեմ ինչ չմզ են բացատրում ոյութլանդականները իրենց համակրանքը նստեքսին։

Իսկ այն միտքը, վարպետ թե Շեքսոլիբը Սևղիսարենին կըսովատրայի մեջ և ամփոփելու թվում և, թե ու կատարյալ գաղին և նեռոպոտամն հռչակված և յեղել իր գեղցկությամբ. Նրան հանգիստող տղամարդիկ կանդ եցին առողութ նրա հրապարիչ արտաքինի առջև կարդացեք «Անտանիոս և Կիլիոպատրա»ի մեջ Ենորարրի նկարագրությունը՝ Նրա զեղեցկության և հմայքի ժամանությունը Անտոնիուսին. Նա վերջինի հետ միաժամանակ անձնասպանություն և դործում ընդամենը 33 տարեկան հասակում։ Իսկ Յևղիսարենիք, Շեքսոլիբի ժամանակ զա մոտ յոթանառուն տարեկան պատագ էր, յերբ հանդիպեց արտաքին չունեցող Վերն և նմանությունը։ Դուցմ թե այն, որ յերկուսն ել թուգուհի յեն յեղել... Մնամ և դարձնալ, թե վճրտեղից են այդ «նմանությունները»։

Անցնենք վորքերգության պիտավոր հերոսներին։

Անտոնիուսի մեջ Շեքսոլիբը մարմնացրել և դմալի անկում գործող բաստվածների վերահաս աղջամուղջը—սուբեկտ եղօք. Կամ ավելի ճիշտ՝ «Հերոսների» աղջամուղջը։ Յերբ պանծալի անցյալով հերոսները կամ իշխանությամբ ինքնառ պետական գործիչները սկսում են հայտնարերել մեղեկ հակումներ—հեշտանք, գինի, զվարճություն, ապա նույն վայրկյանից սկսվում և նրանց տիրապետության մայրածութը, մթնշաղը։ Յերբ Մարկ Անտոնիուսը, Հոռմի ճանաչված առյուծը, Կեսարին համասար արիումմիւրը, վարում եր պետականուազմական գործերը Հուլիոս Կեսարի հետ, մնաք տկանատես ենք նրա անընդհատ վերելքին։ Մանավանդ ահալիս Կեսարը պատրաստ, յերբ հռչակավոր ազիտացիայով իր կողմը զբավից Հոռմի քաղաքացիների բաղմությունը և նըրանց տարբերային գրոնը ուղղեց Կեսարի թշնամի Բրուտոսի և Կասիոսի դնմ, մնաք դործյալ տեսանք նրա քայլերը ուղղված զեղի աիրապետության պաղաթը։ Մակայն,

յերբ նա Հռոմի աշխարհակալական դրոշի տակ ձեռք բերեց Աղքակիքը, զրեթե առանց զիմադրության, ընկալ նրա մադկության պերճ աշխարհը, սուրբ դնելով Կենողատրայի ամուսական առաջատարի տոշն, այլ և իր վողջ եյտությամբ առարալուծվեց նրա կանացի հրապուրանքների մեջ, յերբ կմնարոնական Հռոմի բարոր խասաւմներն ու պարզեները այլեւ ընդունակ չեղան պոկելու նրան յեղիսղառուհու «զերպայծառ ապարանքից», —ահա այդ ժամանակվանից մենք աենառամ ենք, թե ինչպես արագ մկանում և թեքմեն նրա առաջը հասմեռական յերկնակամարի վրա, Անտոնիուսը ինքը խստառվանում և, վոր «յեղիսղառուհուն նա կապված և սրաի թեկերով» և նրա «հոգու վրա իշխում և նու», վորի «մի նշանը բավական է (Անտոնիուսի համար) տասվածների կամքն անպամ խախանելու», «Դու զիտես, —ասում և նու յիշեալաարային, —վոր կրքերով աարդա՞՛ պարտվել և քո տաջև իմ սուրբ»:

Անտոնիուսը իր նոր կացության մեջ փորձում է կյանքի նոր փիլիսոփայություն հայանաբներել Նա գտնում և, վոր կյանքի խասաւը իշխանության մեջ չեմ միայն, «Բոլոր թագավորությունները հոդ են ու մոխիր, —ասում և նա, —և աղտոտ հողը համասարապես կերակրում և անսառուն ներին և մարդկանց... Թող կործանվեն ընկարձակ կայսրության կամարները, Այստեղ և իմ աշխարհը», Այստեղ—Արեւելում, Բայց միաժամանակ նա դիտե, վոր իր մեղկ կյանքի ամուլ տարիները անթիվ աղեաներ են ըերեւու իր դիմին, Նախ Հռոմը, վորպես կայսրության ղեկավար կենարոն, հետզհետեւ ստոչում եր իր յերեկվա հերոսից, համարելով նրան կորած՝ յեղիսղառական կախարդուհու որդիաների մթնալորտում: Յերկրորդ՝ Ակաավիանոս Կեսարը, ոգավելով Անտոնիուսի բացակայությունից, քաղաքական աշխայժ գործունեյության եր ծավալում իրեն կայսր հաջակելու համար: Նրա փորձներ՝ ծառայեցնելու Անտոնիուսին

իր նալատակների համար անաջող անցան շնորհիլ արևելյան ըգնչուհու։

Բայց Անտոնիուսը ըգնչուհուն «(այդպես եյին անվանում էլեռպատրային Հռոմում) ամբողջովին չեր հավատում, նա դիտեր նրա անցյալը, դիտեր նրա փառասիրությունը, նրա ձգտումը մնալ թագուհի, ինչ զնով ել լինի, դիտեր նաև, վոր հանուն այդ նալատակի նա ողատրաստ ե նոր պարծարք կտառաշել Հռոմի միակ իշխանավորի՝ Ոկտավիանասի հետ»։

Վերջին վայրկյանին միայն, յերբ կեսարի լեզեռններն արգեն ծննծում եյին Ալեքսանդրիայի դաները, և կենողատրան փորձում եր իմանալ կեսարի մտադրություններն իր վերաբերմամբ, պատրաստվելով անցնել նրա կողմը գրական պայմաններ առաջարկվելու դեպքում, Անտոնիուսը վճռում և մահվան ողատժի յենթարկել «գորդանան» յեզիպտուհուն Թորամանկ թագուհին անմիջապես գտնում և փրկվելու միջոցը. նա փակվում և տոնմական գամբարանում իր յերկու հավատարիմ աղախիների հետ և լուր ուղարկում Անտոնիուսին, թե ինքը արդեն անձնասովանություն ե գործել։

Պատերազմի բաշտում պարտված, պարտված իր սիրուհու և վաղը նրդական վախճանով, Անտոնիուսը վերջ և տալիս իր կյանքին հուսալքված ու մենակ Նրա քաղաքական և տերիտորիալ նվաճումները անցնում են Ոկտավիանոս կեսարին, վորը Պոմպեոսի և Անտոնիուսի մահից հետո վերջնականապես հարթել եր ճանապարհը դեպի կայսրություն։

Շեքսպիրի կենողատրան յեզիպտական հայտնի Պաղամեռուների վերջին շառավիղն հ, վերջին թագուհին, վորը, ըստ յեպիպտական ընդունված կարգերի, ամուսնացած եր հարազատ յեղբոր հետ, իսկ սրա մահից հետո դարձել եր իր յերկրորդ յեղբոր կինը. Խնջնուրույն, իշխելասեր, իր ձրգառամերի մեջ համառ, յեզիպտական գահը չկորցնելու համար նա քաղաքական կապիտալ եր դարձրել նաև իր գեղեցիկ

արսացինը և սիրային հրապույթները։ Հռոմի իշխանավորության հերթով ընդունել և նա իր ամօւմնական առաջատար՝ Հռովտու կեսարին, դարձել նրա սիրուհին, վորից ունեցել և մի դավանել, անվանել նրան կեսարիոն, ապա վարել և Պատվեսոի ազագ վորուն, ամենից հետո Անտոնիուսին, վորի հետ կենակցությունը յաղել և ակական, ունենալով նրանից յերկարյակներ։ Նրա գեղեցիկ արագինը, գերող ձայնն ու վարչիքակերպ հասմեական պիտուրի աշքում դարձել ևն նրան հմայող «սիրեն» ու մեկը մյուսի հնուերց անցել նրա սիրեկանների շարքը։ Ենքողիրը վերաբաղրել և միմիայն Անտոնիուսի հետ նրա ունեցած հարաբերությունները, Անտոնիութուսը նրան ազանովել և յերկու ըան՝ Յեղիպասի անեկախությունը և իր կինուկցությունը։ Իսկ կենոպատրայի հարաբերությունների բնույթը կախում ուներ այդ յերկու շանից։ Առանց մեկի՝ մյուսը կօրցնում և իր լրիվ նշանակությունը,

Գուցե միայն հաշվին և դեկամարտմ Կենոպատրային։ Այդպես ել չե։ Ենքողիրը չե բացասում նրա իսկական հափշտակիչ սերը գեղի Անտոնիուսը, Ենորաբրը, Անտոնիուսի մերձավոր ողնականը, այսպես և ընորոշում կենոպատրայի սերը։ Ենրա կրթերը հյուաված են մաքուր սիրո նըրբազույն թելերից, նրա հառաջներն ու արցունքը չե կարելի քամի ու ջուր համարենի Դա այնպիսի վոճորիկ և ու մըրբիկ, վորոնք անծանոթ են սրացույցին։ Յեշ իրավ. Ենորաբրի բնորոշման ապացույցներ Ենքողիրը տալիս և այն բուռն աեսարանում, յերը ժամանակավորապես Հռոմ դնացած Անտոնիուսից լրաբերը տեղեկություն և բերում նրա ամուսության լուրը Ոկտազիանոսի քրոջ հետ։ Կենոպատրային կայծակնահար և անում լուրը, բորբոքվում ե խանութը, նա նման և խելագարի. «Թող Նեղոսի ջրերը հեղեղն Յեղիպասուր, թող բոլոր քարի մարգիկ ոճ դառնան», — գաշում և նա կատաղորն։ Ամրող ժամանակ կենոպատրայի

մաքի, յերևակայության ու դրույցի առարկան Անտոնիուսն է: Անկասկած դրդիչը միմիայն սերը չե, այլ և աւրիշ կարողի հաշիվները. յեթե չվերապառնա Անտոնիուսը, չե՞ վոր դադանան սիրուեկանի հետ պիտի կորչի նուև թագավորական դաշը, զորովնեակ կենարունաձիո հոռմը ձեռում և Յեղիաւասը միացնել հոսմեական կայսրությանը առանց պատճենյան տոհմի: Մինչդեռ Անտոնիուսը խոստացել և «գարձնել նրան թագուհի ամբողջ Արևելքում», Յեղ խոստումը կատարել և, քանի ունեցել և իր ձեռքում հոսմեական հղոր լեզիոնները:

Կընպատրան փորձել և փոխել իր վերաբերմունքը, յերբ խախտվել և այդ յերկու սկզբունքի հավասարակցությունը, Այդ պարագայում գերակշռել և հաշիվը կը սովորաբան պատրաստ և բանալու իր առաջասարը հոսմեական նոր իշխանավորի առջև: Անտոնիուսի տիրապետաթյան խախտվելու առաջին վայրկյանից Շեքսպիրը կը սովատրային ներկայացնում և վորպես մի կնոջ, վորը արգեն բանակցություն և վարում ուղարկված սուրհանդակի հետ՝ Կեսարին անձնատուր լինելու պայմանների մասին: «Բարի սուրհանդակ, — դիմում և կը սովատրան, — զու մեծ կեսարին կանս, վոր յիս քո միջոցով համբուրում եմ հաղթական ձեռքը, պատրաստ եմ թագս ունել նրա վոտների աակ և ծունկ իջեցնել նրա առջև: Նկատելով նրա դադանի մտադրությունը, Անտոնիուսը գոչում ե. «Մարդած եմ յետ. ո զու, յեգիալտական կեղծավոր հոգի, զու չարանենք կախարդուհի... վորպես իսկական գնչուհի, զու քո կեղծ խաղերով դատարկեցիր սիրառ, Այս բոլորն իհարկե չափազանցություն և Շեքսպիրը կը սովատրային դուրս և բերել յերկուն: Իր խորտակվող նավը փրկնելու համար նա դիմում և կեսարին, բայց յերբ դա չի աջողվում, այլ ընդհակառակը, Հոռմում նրան սպասում և հրապարակական անարգանք ու ծաղր, նա պատրաստ և հետեւվելու անձնասպան Անտոնիուսին, վորի մահը ցնցող ապա-

վորություն և թողնում նրա վրա, Նա կանխում է կեսարին, մորը կամենում է վաղջամբ Հռոմ հասցնել Կլեոպատրային իր յերկու նվիրված աղախինների հետ՝ ցույց տալու համար Հռոմի փողոցներում իր վերջին պատերազմում ձեռք ըերած կենդանի տրաֆեյները։ Մինչև կեսարի միջոցներ ձեռք առնելը, Կլեոպատրան կարողանում է վերջ տալ իր կյանքին։

Ոկտավիանոս կեսարին Շեքսպիրը չե դարձրել իր իշխանութեան հերոու, Սակայն նրան նվիրված մի քանի ասդերի մեջ անգամ կա հանճարի շունչը։ Յեր այդ ե պատմութը, վար զդացվում և կեսարի յուրաքանչյուր խոսքի մեջ համառ կամքի ուժը, նրա խելքը, յերկաթե տրամարանությանն ու սառը հաշխիլը։ Ամբողջովին կլանված պետական գործերով՝ նա թողնում է կենտրոնացած մարդու տպավարությունն, Զե սիրում ուժերը վատնել կերուխումի ու սին զվարնությունների մեջ։ «Բարձրագույն» խնդիրները չեն հաշտվում նման թեթևամտության հետ», — ասում ենաւ Համարելով իրեն Հռոմի պատմական առաքելության կրողը, նա հայտարարում ե. «Մենք լնտրված ենք ամենակարսղ աստվածների կողմից»։ Նրա խոսքը համապատասխան է գործին, Թեպես Շեքսպիրը քիչ և զբաղվել Ոկտավիանոսով, բայց զդացվում ե, թե ինչպես նրա այս հերոսը հաստատուն ու համառ քայլերով բարձրանում է վեպի դիկտատուրական-իմպերատորական աթոռը, հենվելով Հռոմի առեւթա-ստրկատիրական վերնախավերի վրա։

Այսպիս. իր հոռմեական զողբերգությունների մեջ Շեքսպիրը տվել է ժամանակի Անգլիայի քաղաքական բարչ հարաբերությունների սինթեզը, շոշափելով արիստոկրատիայի և առևտրական բուրժուազիալի հասարակական ընդհարումների պրոբլեմը, տալով միաժամանակ վառ պատկերված հերոսների հաղերանական վերլուծությունը։



Կլեոպատրա. Կիսանուրայի ժամանակ, գրքի համար Մայասի.

Death of Cleopatra.



Եմասիրի ստեղծագործության ամենաբեղմնավոր տօջանք
և մռայլ նուեստառությունը: — «Համիես»: — Համլետի նախատի-
պը: — «Համիես»ի սկզբնական աղբյուրը: — Ժամանակակից անց-
ները: — Ծյուրլանդը: — Համլետը յիշելու եպոհիամերի բնդիարման
կենսաբնում: — «Համիես» արդյունք օճխայիրյան եպոխայի կուլ-
տուրական բարձր մակարդակի: — Համլետի օջապատօղները:

Դրամատիկական քրոնիկներին և կոմեդիաներին ստեղծա-
ման կենսուրախ տարիներին հաջորդում ե Շեքսպիրի դրա-
կան գործունելյալթյան ամենաբեզմազոր շրջանը: Դա «Համ-
իես», «Հուկառ», «Կառարաք», «Միքլուս», «Էլիք արքա» և «Մակ-
բեր»ի շրջանն է, յերբ բանաստեղծ-դրամատուրգի գեղար-
ջեստական հաճճարը հասել եր զարդացման բարձր աստի-
ճանին, ընդլայնվել նյին նրա զիառդության ու բմբոնո-
դության սահմանները, յերբ նա խորասուզվել եր ժամանա-
կի սոցիալ-անտևական կացության համապատասխանող փի-
լիստիայության մեջ: Շեքսպիրի հասուն շրջանը սակայն
զաւգադիպում ե նրա հոռի և մռայլ տրամադրությանը, վո-
րով համարված եր նրա վողջ եյությունը «Համլետ»ից սկսած
մինչև «Տիմոն Արենացին»:

«Համլետ»ի մասին խոսելիս, կրկե՞ն անդամ հարկ ենք համարում ընդգծել դիտական սոցիալիզմի հիմնադիրների այն միտքը, թե անցյալ դասակարգերի կործանումը կաբող և նյութ ծառայել մեծադույն վաղբերգական ստեղծադորությունների համար։ Շեքսպիրը դիտել և ֆեոդալական արիստոկրատիայի կործանման պրոցեսը, ալրել «ասպետականության» տիտուր մայրամուտը, մի ողբոցնսս, վորը իր վոլորապտույտի մեջ խորասույզ եր անում դարերով սրբագրծված հասարակական կյանքի ձևերը, վորոնց կործանումը ավելի սուր արտահայտություն եր դաշնում գրականության մեջ, քան նրան հաջորդող նորի հիմնավորումը։ Տասնվեցերորդ դարի վերջում այդ պրոցեսը Անգլիայում տվելի խորացել եր։

Իր կոմեդիաներում Շեքսպիրը ցուցադրեց հին արիստոկրատիայի անկախ և անհօգ կյանքը, վորն այժմ ակնհայտնի կերպով գլորվում եր թեք մակերևույթով։ Անգլիական թենեսանսի յերկրորդ շրջանն եր դա, յերբ փողային կապիտալիստական, առևտրա-արդյունաբերական տնտեսական նոր կարգերը քանդում եյին հին դասակարգի ամրոցային-պալատական-աստիտական անդորրը զոյության հիմքերը, մռայլում վաղմի կենսուրախ կյանքը և նրա առջև բաց անում նոր հոգսերի ու մտահոգությունների դուռը։

Նոր կացությունը (Յեղիսաբերիթ թագուհու մահվանից հետո, XVII դարու սկիզբը) արգասիք եր այն պայքարի, վոր մղում եր բուրժուազիան ֆեոդալական արիստոկրատիայի և Յակոբ I թագավորի քաղաքականության դեմ, վորովհետև վերջինս իր հարկային դիշատիչ քաղաքականության սուր կողմը ուղղել եր առևտրական կապիտալի դեմ, աշխատելով թուլացնել վերջինի քայլայիչ արշալը ֆեոդալական հին կազմակերպությունների վրա, Յեղիսաբեթի կառավարությունը նույնպես պաշազիտական ֆինանսական քաղաքականություն եր վարում առևտրական կա-

ոլիսալը հարկատվության յենթաքէնլու համար, բայց նա դանի, պայտատի նյութականը և քաղաքական կշիռը ամբառ պնդելու և ֆեոդալների կենտրոնախույս ձգտումները սահմանականի չափով պաշտպանում եր կապիտալիզմի զարգացումը:

Ցերք Թյուդորների տան վերջին շառավիղ Յնդիսաքնթին հաջորդեց Ստյուարտների դինաստիան, հանձին Յակոբ առաջնորդ, վերջինս արդեն բացահայտորեն հենվեց Անգլիայի հողագործական հետամնաց կոմսությունների և կաթոլիկության վրա, զորեղ պայքար ծավալնով բուրժուազիայի և ոլուրիտանականության զեմ, Կալվարը անընդհատ պայքարի մեջ եր պառլամենտի հետ, ուր բուրժուազիան ակտիվ դեր եր հատարում, Զորեղացող բուրժուազիան նախապատրաստում եր հնդափոխություն, վորը պեաք և հասունանար ընդամենը մի քանի տասնյակ տարուց, Պատմական արք շրջանը մեծամեծ անցքերի մի շրջան յեղաղ, մի ասպարեզ սոցիալական-քաղաքական ընդհարումների, արյունային դրամաների ու վաղբնրությունների, վորոնք կատարվում եյին աբրոգների վերին խավերում:

Մյում կողմից զա բուրժուազիայի կուլտուրական ուժերի անընդհատ կուտակման շրջան եր, վորն իր վառ արտահայտությունը գտավ ժամանակի վիճակության, գրականության, դրամատուրգիայի մեջ և գերազանցորեն կրեց հումանիստական կնիք, ժխտեց հին վանական-ֆեոդալական ավառընեւությ, ամեն ինչ յենթաքեց կտուկածի, հիմնավորելով իր սկնպտիկ վերաբերմունքը անցյալը նկատմամբ:

Արխտակերատիայի և նրան հակադրվող գասակարգի սոցիալական կյանքում կատարվող հեղաշրջումը, նրանց հոգերանության մեջ տեղի ունեցող բեկումները Շեքսպիրը դիտում եր իր ստեղծագործական աշտարակից, տեսնում ու վերապրում սիրած դաստկարգի քայքայման նախանշանները, համակվում խորին տիրությամբ: Սեփական աչքով նա

անսնում եր ու իր վողջ եյտեթյամբ զգում, թե ինչպես սոցիալական նոր հակասությունների անողոք պայմաններում արխտության իրար հետեւից կորցնում և իր քաղաքականության մեջը մյուսի հնատեւից կախաղան կամ բանտ են ուղարկվում նույն դասակարգի գիմադրող փայլուն դեմքերը:

Այդ կացությունն ու մի շարք քաղաքական կոնկրետ անցքեր, վարոնց մասին կիսունքը քիչ հետո, խորապես աղղել են Շեքսպիրի վրա և համակել նրան մռայլ տրամադրությամբ։ Մոտ քառասուն տարեկան եր Շեքսպիրը այդ ժամանակը, լիակատար հասունություն շրջանը թեսկոխած, թե սուր դիասոդությամբ և թե իր կյանքի հարուստ փորձառությամբ հասկացել եր իր ժամանակի հասարակության հակասությունների, բնույթը, ըմբանել հարադատ վերնախավերի հոգեկան աշխարհը և իշել մարդկային կրթերի ու դործերի ներքին դրդիչների խորքը։ Շեքսպիրի աչքուտ կարծեն այն վոշինչ չեր մնացել կայտառ ու կմնանքը իւսնեսանախց։ Աշխարհը կորցրել եր իր հմայքը, կոմմադիաներամ ցուցադրված զգարդ կյանքը, խինդն ու ուրախությունը կարճատե մոմենտներ և յեղել, վորոնք վորպես մի ժամապարանք, վորպես ոի ամառային դիշերի յերադ հովի նման անցել կնացել ևն նրա սահղծագործության առաջին և յերկրորդ շրջանների վլայով։

Շեքսպիրը շատ լավ հասկացել եր, վոր իր շուրջը յերկացող մարդկային նոր խմբավորութների և նոր ոկայմանների մղումով անհայտանում և իր սիրած հերոսների աշխարհը, վոշինչանում, կործանվում են բանաստեղծի վայրինյած իդնալները։ Փոխանցման այդ աննդրա շրջանության հիմքերը կրցըել եյին իրենց ուժը, իսկ նորը գեռ չեր ձեւավորվել։ Կյանքի բոլոր յերևույթներից ստացած տպավորությունները Շեքսպիրին այժմ ներկայանասմ են միմիայն իրենց մութ գույներով։ Բոլոր լավագույն

մարդիկ, ըստ բանաստեղծի, անխուսափելի անկան են դատապարաված և բոլոր գրական յերեսույթները՝ խորտակման: Հատությունը, չարանենդությունը, կեղծիքը, ոև ապերախտությունը, զավաճանությունը հաղթող են հանդիսանում, վորպիսի պայմաններին զոհ են դնում բոլոր անմեջներն ու միաժիշտները, լավահաններն ու իդեալիստները, ճակատացրական հարվածով վոչչանում են անմեղ ներդաման, ժիամիտ միջելիտն, ժերունի լիրն ու թշվառ Գլուստերը, անձնազոհ ու շիատակ Կորդելիֆան («Էլիք արքո»), սկզբում լավատես ու կենսուրափ, ապա անհաղթելի վշտի ծանրության տակ ճնշված Համլետը: Յեզ Շեքսպիրը իրար հետեւից արտադրում և իւր նշանակվոր վողբերդությունները, վերոնց մեջ ցայտուն արտահայտություն են դոնում ժամանակի արամազդրության հնաւ հյուսված նաև իր սուրբեկալի ապրումներն ու կերպառուները:

Յնքնիդա կենսամանը ու կայտառ ձգտումը դմտի կյանքի հաճույքները, ուրախ ծիծաղը անհայտանում են նրա դրվածքներից. նրանց փոխարեն այժմ վողբերդությունների մեջ զերսկառում են յերկմտությունն ու թերահավատությունը, հոգեկան ճնշումն ու հոռեահսությունը, Շեքսպիրի այս շրջանի վերջին գրվածքներից ե, թիև անկատար, «Տիմոն Արքայից», վորի մեջ տիրող արամազդրությունը ծայրահեղ հոռեատեսությունն ե՝ միզանարուսիայի, մարդատեսության և կյանքի ժխտման համարով:

Այսպիս Շեքսպիրը իր հերոսների գալլերեյայսվ վառ ողատէկում և շրջապատի սոցիալական միջավայրը, միլիտարիզմ, անդրազարձրում հարադար գասակարդի և հին կարգերի փլուզումը, համարելով դա անկումն ամբողջ աշխարհի, Մի արամազդրություն, վոր բացարձակորեն ախող և մոր հիշած տասնամյակի վողբերդությունների մեջ (1601—1609):

«Համեսեցը այդ տրամադրությունների խռացած որպահայտությունն եւ»

Նախ քան արդ մեծաղույն վաղըերդությունը գրելը, Շեքսպիրը ստեղծել է Համլետի հետավոր նախատիպը՝ տաղորված նրա հուետես արամադրությամբ, Դա ժաքն և «Ինչպես կուզեիք կոմեդիայում: Թաղաքից խռափող, քաղաքի ժխորն ատող ազնվականներից մեկն ե դա, վորի քաղաքամերժ արամադրությունը ամբողջովին բղխում ե իր դասակարգային վերաբերմունքից դեպի համառորնն ըարձրացող ըուրծուազիան, Թաղաքի տերը առետրականն ըուրծուազիան եւ և ազնվականության ըուրծուականացող մասը: Ծագը ատում ե այդ ժխորը, վորովնեաւ դա իր նոր տղամուկով ու շարժուամով անախորժ դիմունանս և մտցնում հին կենսուրախ արիստոկրատիայի ստնդած կյանքում և սպառնաւմ ե մինչև վերջը քայքայել նրա ներգաշնակությունը»:

Ժաքը քաղաքական պայքարի հետևանքով ստիպված և առլել անտառում իրքն աջսորական և չի կամենաւմ վերադառնալ քաղաք նույնիսկ այն ժամանակ, յերբ այդ հասրավորությունը նրան տրվում եւ լավ և համարում աղըել՝ ծառերի ու կենդանիների հետ, քան մարդկանց ոթշնչառ և աշխարհը, — ասում եւ նա, — «վարակլած եւ նա, աղտոտ և նրա մարմինը: Նրա հետ համաձայն ե բաղդակից մյուս արիստոկրատը, դուքսը, վորն ասում եւ. Ո՛ոկ մենք չենք դժբախաը այս աշխարհի մեջ. համաշխարհային այս մեծ թատրոնը ունի տեսիլներ այնելի վշտալից, քան այն, ինչ վոր մենք խաղում ենք»: Նույն պինսի յերրորդ արիստոկրատը (Որլանդո), հաշածված իր յեզրորից, խորին հասածածնքով հիշում և հին աշխարհը, հին յերանելի ժամանակականները, արիստոկրատիայի տիրապետության փայլուն շրջանը, մանավանդ հին հարաբերությունները տիրոջ ու ծառայի մեջ, իրենց տան նախակին ծերունչ ծառային նա առում եւ. «Մ'հ, բարի ծերուկ, ինչ լավ ե յերեսում քո մեջ»

այն տոկուն ծառայությունը նախկին աշխարհի, յերբ մարդ աքնում եր վոչ թե զարձի համար, այլ պարագանության, որու այս դարս մարդ չես, յնը բոլորը ձգտում են միայն բարձրանալու և հենց վոր հասնում են իրենց փափագին՝ նույն բողոքին վերջ են տալիս իրենց պատրաստակամության: Յերանելի յեր աշխարհը, «յերբ ծառան մինչեւ վերաշնչը հետևում եր իր տիրոջը հավատարմությամբ ու նշարտությամբ» (Աղամ, նույն պիեսում):

«Ճիշտ ինձ իրավունք հայտնելու իմ մաքերր, — բացականչում և ժամանքը, — և յես կմաքրեմ մեկ ծայրից մինչև մյուսը այս վարակված աշխարհի աղոտու մարմինը, յեթե համբերությամբ ընդունեք իմ գեղը»:

Շեքսպիրյան հերոսի այս խոսքերի մեջ հնչում ե Համեմատան դատավճիռը «բանդ» դարձած աշխարհի մութ ու մասալ կողմնորի, անթիվ ճեղքվածքների մասին: Շեքսպիրի հոռեսես մաքերը աշխարհում տիրող վատ կարդերի նկատմամբ ցրված են նրա մի շաբք մյուս վողբերգությունների մեջ:

Հայտուն և այդ տրամադրությունը մանավանդ նրա սոնետներից մեկի մեջ (ՅԵ-րդ): Այդտեղ արտահայտված են բանասահղթի հոռահատ մտքերն ու հույզերը, Բրանդեսի կարծիքով, այդ վոտանավորի գրվելու առիթ կարող ելին լինել նաև պալատի շուրջը տիրող ցածր բարքերը: Այնտեղ թափակորում եր «բարձրաստիճան» քծնանքը, կեղծավորությունը, շողոքորթությունը, պնակալիցությունը, յերկերեսնությունը: Այդ ամենը տեսնում եր և ոշոշափում պալատական գերասան Շեքսպիրը: Հանճարեղ դրամատուրգը, իբր գերասան, նշանակված եր պալատական ծառաների ցուքակում, և նրա վրա արքայական սիրամարդները անկապած նայում ենին իրրե պալատական ծաղրածուի վրա:

Լքված պոետը հետեւյալն ե գրում այդ սոնետում. «Քնզի իմ փմում, ող մահ, հոգնած, ուժաթափ: Տեսա վոտնակոխ

արդիած պատիմը, լաթերով ճածկված վաստակը, պղծված անմեղությունը, գավաճանված հայտառմությունը և շրջաթաների մեջ՝ ճշմարտությունը, Տեսա հիմարներ դափնե պատակով պարծեցող, և իմաստուններ լուսթյան դատավարաված, յերկնային հանճարը՝ կույրերից ժաղրված և բութչարախոսների չար հաղթանակը Տեսա արվեստը բռնակալի իշխանությունից ահաբեկված, և թշվառ անմտության մեծամիտ դիմքը, և վոսկու ուժը, և կործանիչ կլքերը. և բարությունը չարության ձեռքին զերիս...

Խոսելով «Համլետ»ի մասին, պիտք և ընդունենք, մաս Շեքսպիրի բեղմնավոր գրական շրջանի որոշերից վեչ մեել չունի այն հոչակը, ինչ դարերի ընթացքում վայելել և նա: «Համլետ»ը կուլտուրական անցյալի համաշխարհյին: այս կոթողներից ե, վորի մասին յերեք դարերի ընթացքում բաղմաթիվ ուսումնասիրություններ են գրվել. այն գրվածքն ե, վորս անհատապաշտ պուտների ամբողջ սերունդներին ամար վորմարության անսպառ ազրյուր և յեղել, մորը և նրա սոցիալական նշանակությունը, վորովհետեւ Շեքսպիրը նրա մեջ անդրադարձրել է վերածնության շրջանի բովանդակ իմաստը, անդրադարձրել յնրկու եղոխաների նամառաբաժանի վրա կանգնած և բարձր ինտելեքտով ոժոված մարդու մոքերն ու ազրումները, ժխատումներն ու ոկտիալությունները:

Մեծ և նրա արժեքը համաշխարհյին դրական սենդծագործությունների շարքում, վորովհետեւ Շեքսպիրը զեղարվեստական գեղեցիկ ձեւ սքանչելի նըրությամբ հյուսել և մի խոր բովանդակության հետ: Այդպես են ճանաչել ոյն և զնահատել Մարքսն ու Ենդելսը, Շեքսպիրի հանճրի բարձր դնահատողները:

«Համլետ»ը պերճախոս ապացույց և բաղմիցս արտհայտված այն մտքի, թե գեղարվեստական ստեղծադրության զնահատանքի չափը չե միմիայն նրա ինչպես գրած

լինելը, այլ և ինչը ինչպես գրված։ Վորքան մեծ և ստեղծագործողի տաղանդն ու հանճարը, նույնքան խոշոր և նրա ստեղծագործության գեղարվեստական-հասարակական արժեքը, նույնքան մեծ և լայն են նրա թափանցողության, դիտողության, ըմբռնողության և վերաբռտադրման շնորհքի սահմանները։ Այդովիսի գրվածքներն են, վոր դաքերի ընթացքում պահպանում են իրենց թարմությունը, դառնում ընթերցանության, գիրք տեսական ժամանակաշրջանների համար, արձագանքում ժամանակի այս կամ այն զաղափարներին ու կենսազգացողությանը, միաժամանակ որինակելի դառնալով գրական գերազանց անխնիկայի տեսակետից։

Այդ և պատճառը, վոր մի «Խիստան» կամ «Համլետ» միտնպամայն այլ մակարդակ են գրավում գրական աշխարհում, քան անակըսոնյան կամ ստվիտական բանաստեղծությունները կամ թեկուղ կերմոնտովի «Մծիրիւն», չնայելով վոր յերկու պարագայումն ել գրվածքները անպայման բարձր գեղարվեստական են։ Ի՞նչպես և գրված «Համլետ»։ — Բարձր արվեստով ու գեղեցիկի։ — Ի՞նչպես և գրված «Մծիրիւն», — նույնպես բարձր արվեստով ու գեղեցիկ։ — Բայց ինչ և գրված մնելի և մյոււսի մեջ վմբն և ամելի լայն կյանք ու իրականություն ընդգրկել վմբը ավելի խորն և թափանցի իր ժամանակի տվյալ դասակարգի հոգեկան շարժումների մեջ, հետևաբար վորի մեջ ավելի խորն և ու ծագալուն բռվանդակությունը։

Պատասխանը պարզ է։ «Մծիրիւն» չե կարող հավասարվել «Համլետին», վորովհետև Համլետի հոգեկան աշխարհի մի մասնիկն են միայն այն շարժումները, վորովհ Մծիրիի ներքին կյանքի ամբողջ բովանդակությանն են կազմում։

Անցնենք «Համլետին», Շեքսպիրի այս վորպերգությունը առաջին անգամ լույս ե տեսել 1803-ին Լոնդոնում։ Ցերկորդ տարբերությունը կատարվել և հաջորդ թվին, լրացված և մշակված։ Լրացումներն ու մշակումը կատարվում

և հեղինակի ձեռքով։ Առաջին տարգրությունը ունի հետևյալ յերկար խորագիրը։ «Դանիայի պրինց Համեսի վազրերդական պատմությունը։ Դրեց Վիլիամ Շեքսպիրը նույն ձեռք, ինչպես ներկայացրել են այն մի քանի անգամ նորին մեծության ծառաները (գերասանական խումբը) լոնդոնում, Քեմբրիջի և Ոքսֆորդի համալսարաններում և այլ տեղերում։ Իսկ յերկրորդ փոփոխված տպողրության խորագրի մեջ ավելացված ե, վոր Շուլյա և ընծայված վերստին իսկական բնագիր ձեռագրից և ծավալը կրկնակի մեծացված։ Լոնդոն, 1604»։

Շեքսպիրի բոլոր դրամաների նյութը յնդել և այս կամ այն պատմական քրոնիկը կամ վորոնել լեզենդ, ավանտյուրան, և նովելլի, վորոնց վրա հյուսել և դրամատուրգը իր վողքերդությունը կամ կոմեդիան։

Անհրաժեշտ և նկատել, վոր ինչպես հունական առասպեկտարանությունից առաջացավ Հին հունական դրամատուրգիան, հրապարակ հանելով այնպիսի համաշխարհային դրամատուրգների, վորպիսիք եյին նոթիլոսը, Սոֆոկլեսը, Եվրիպիդեսը, այնպես ել հին և միջնադարյան լեզենդների հիման վրա ստեղծվեցին Շեքսպիրի (նույն և նրա եպոխայի բազմաթիվ դրողների դրուերը) մեծագույն վողքերդություններն ու կոմեդիաները։ «Համեսեաը գրելիս Շեքսպիրը ոգովել և միջնադարյան սկանդինավյան մի հին լեզենդից՝ սպանված հոր վրեժը լուծող Ամեստի մասին, վոր գրել և Մաքոն Գրամմատիկում անօւնով մի դանիացի 12-րդ դարում, իսկ Փրանսիական պատմագիր Բելֆորեն նույն լեզենդը փոխագրել ե Փրանսերենի Վորպես մի հում նյութ, վորպես մի անկատար կմախք՝ լոգինդը Շեքսպիրի ձեռքում շահնչ ու կենդանություն և առնում, անդրադարձնելով պատմական յերկու շրջանների ընդհարման տրագեդիան։

Լեզենդի և վողքերդության միջև յեղած տարբերությունը հայտնաբերելու, այլ և ընդզեղելու համար այն, թե

մի հում ու անմշակ նյութ, մի ոլարդ ֆարուշա վճրակիսի գեղարվեստական հյուսվածք կարող և դառնալ ուժեղ տաղանդի կամ հանճարի ձեռքում, բավական և կարդալ Շամլաքի նախնական նյութի պարզ ըրվանդակությունը⁴⁾: Գրամմատիկուսի պատմածը դրամատուրգի համար ծառայել և իրուն չոր ու դատարկ անոթ, վորի մեջ նա դրել և բարդ ու խորը բավանդակություն, համապատասխանորեն դարձացնելով և ձեր, որվածքի անոթը, կմախքին տվել մարմին և արյուն: Նրա Համլետը այլնս առասպելական Սկանդինավիայի բիբր ու վայրենի հերոսը չե: Շեքսպիրը լեզենդի հերոսին տվել և ժամանակակից բնույթ, Նրա Համլետը նոր ժամանակի մարդ և, բարդ իր հոգեբանությամբ, Հասկանալի յե, վոր այս վողբերգության հերոսը, ինչպես յենթագրում են անհատապաշտները, սոսկ հեղինակի՝ Շեքսպիրի պատկերը չե: այլապես սա կլիներ լուսանկարչական դրու, թե ուստի բարձրածեք: Բայց այդպես չե: Այդ կտևսնենք մի փոքր ներքեւ:

Ժիտել «Համլետ»ի մեջ հեղինակի սուրյեկտիվ ապրը կլինի չափազանցություն: Շեքսպիրի անձնական ապրումներն ու տրամադրությունները անկասկած վորոշ գեր խաղացել են այլտեղ, Սակայն պնդեմ, թե դա սոսկ ավտորիուդրաֆիկ գրվածք և, կլինի թյուրիմացություն և սխալ:

Մյուսթլանդի տեսության կողմանիցները այդ տեսակետից շատ են հեռու գնում: Յելինելով «Մյուսթլանդ—Շեքսպիր» տեսակետից, նրանք պնդում են, վոր Համլետը ինքը Մյուսթլանդ—Շեքսպիրն և, պարատի գեմ կոմս Նսսեքսի կաղմակերպած ապսամբության մասնակցողը, Յակոբ I

⁴⁾ Անգլիայի թորգմանությունը Բելֆորեյից կատարել և դերասան Վերոն Շեքսպիրը: տես նրա «Շեքսպիր յեկ իր համեստ վայրերուրյան ուրբաւը և մնադառաւրյամերը»:

որով բանակց աղասիված և նույնիսկ Դանեմարք ուղարկված՝ վորովիս պատգամավոր անզիստական կառավարության կողմից։ Նրանք յենթադրում են, վոր Ռյութլանդը Սսսեցսի և ընկերների գլխաւոման շամեցուցիչ տպավորության տակ կամեցիլ և ինքնասպանություն զործել, բայց իրը բաղդակից կնոջ շնորհիվ հրաժարվել և այդ մաքից, ստկայն ընկել մտաւանջության մեջ, հիսոթափութել կյանքից, տառապել իր անհատական անզորության գիտակցությամբ։

Յեզ այս ավյալները բավական են յեղել այդ աեսակնախ վրա կանգնած քննադրաներին՝ Ռյութլանդ—Շեքսպիր—Համիլտ խնդիրը լուծված համարելու, և «Համիլտոն» իր վոդքերգություն, բացարձակորեն սուրյնեալի, ինքնակենսապրական զործ հայտաբարելու։ Յեթի «Համիլտոն» գրված լիներ այնպիս, ինչպես յենթադրում են այդ կարգի քննադրաները, այն դեռքում մենք վազմերգություն, վորովիս դրամատիքական գրվածք, չեյինք ունենա։ Լուսնենայինք համիլտյան խոստավանություն (ԽՈՎԵՃԵ)։

«Համիլտոն» ինչպես և Շեքսպիրի բոլոր կոմեդիաներն ու վոդքերգությունները, զեղարվենատական որյենէտիվիդմի գիրագույն արտահայտություն են, իր մեջ ունենալով նաև հեղինակի անհատական տպրումներն ու խոհերը։

Յեթի առհասարակ ամեն բան կարիչ յեն յենթադրել տաեղծվածային Շեքսպիրի վերաբերմամբ, ինչն չենթադրել, վոր «Համիլտոն» գրելիս գրամատուրգը Ռյութլանդին և ի նկատի ունեցելի նրա Դանիա գնալը, իր պատրամավոր, այդ մասին վերջինիս արած պատմությունները իր ընկերների և Շեքսպիրի շրջանում, իրեն ցույց տրված ընդունելության, կեր ու խումբ, Սլսինորի մասին և այն և այլն։ Մի խոսքով վարդած լիներ ճիշտ այնպես, ինչպիս վարվել ե Սսսեցսի արագմեդիայի հետ։

Շեքսպիրի «Համիլտոն» անհատական կյանքի հիշատակարան չե, նա հեռաւ յե հեղինակի ինքնակենսապրությունը

լինելուց, «Համլիտ»ը գեղարվեստական ռեալիզմի բարձր ստեղծագործություն է, Յեթև նա դուրի չե հեղինակի անձնական, սուրյեկտիվ տարրից, ապա ու այն չափով, վոր չափով յուրաքանչյուր որյեկտիվ գրող մտցնում եւ իր գըրվածքի մեջ իր անձնական տարրը, իր հումակրանքն ու հակակրանքը, պահպանելով հիմնականը՝ դասակարգային հոգերանությունը։ Յեթև Համլիտի դատողություններն ու անֆլեքտիվն անհատական, սոսկ շեքսպիրյան հն յենթադրովում, ասլու դրա պատճառը պիտի այլ տեղ վորոնելու Շեքսպիրը զեղարվեստական հանճար և և վորովես այդպիսին նա իր հոգեկան աշխարհում տարբարութել և տիրող իրականության բազմաթիվ հերոսներին, Վերջիններիս վերաբրումներն ու հույդերը, նրանց գործողության զրդիչները ամելի խիտ և թանձը են բեկվել դրամատուրգի մեջ։ Շեքսպիրը նույն միջազիայի արգասիք ե, ինչ Համլիտը, նրան հասուկ և համլիտական վերաբերմունքը դեալի արտաքին աշխարհը։ Իր «հոգեշանությամբ ու մտածելակերպով նա պատկանում և այն խավերին, վորոնք հասարակական նորութերի ճնշման տակ պատմական ասպարեզից յետ եյին մղվում։ Տիրուր ներկայի հանդեպ ապահայի տննչերն առ մարած համարենալով, այդ խավերը լքվում եյին, հուսահառվում, դառնադես համարում մարդկային հասարակության բուժնդահել էյանքը, անիմաստ ու ունխորհուրդ դանելով նրա հարատելու ձգտումը։

Շեքսպիրը հասկացել ու ճանաչել և իր ստեղծագործական յերևակայության առջև սրբություն հերոսին, նա տեսնում և նրա կերպարանքը մամանակի հասարակական կյանքի ամենաբարձր մակարդակի վրա, համազգում նրան իրեն անդամ հարազատ կոլլեկտիվի, խորապես ըմբռներով իր հավաքական հերոսին անող իրականության եյությունը։

«Համլիտ»ը զբեկիս խոշոր ազդեցություն են գործնէ Շեքսպիրի վրա և ունդանի հասարական-քաղաքական կյան-

քի մի շարք յերեսւյթներ ու փաստեր, վերջիններիս հետ
կապ ունեցող վողբերդական անցքեր։ Արիստոկրատիայի
կազմակերպման և բուրժուական արշավի հետ կապված հա-
կասությունները պարարտ հող եյին ստեղծում սոցիալական
և քաղաքական դրսւանների, վարոնք զգայուն բանաստեղ-
ծին ու գրամատուրպին համակում եյին հիասթափությամբ
ու պեսսիմիզմով։ Շեքսպիրի հանճարի ամենաղարդացած
չրջանը դուզադիպից կոմս Յսսեքսի զինված աղստամբու-
թյանը Յեղիսարեթ թագուհու դեմ։ Դա քաղաքական մի-
խոշոր անցք եր, վոր արձանագրում եր անդինական աքսո-
ւուտիզմի վայքարի փաստը լնողեմ ֆեոդալական արիս-
տոկրատիայի։ Ապստամբ Յսսեքսը, Սոուահեմպտոնը, Ռյութ-
յանդը պատկանում եյին հին արիստոկրատական տոհմերին,
վորոնք հանուն իրենց գաստկարգային տիրապետության
ոլայքարի գրոշ եյին պարզել Յեղիսարեթ թագուհու դեմ։
Հայտնի յե, վոր առետրական բուրժուազիայի պաշտպանած
քաղաքական ձեերից մեկը այսպիս կոչված «լուսավորյալ
արսույուտիզմ» և, վորպիսին եր Շեքսպիրի ժամանակ Յե-
ղիսարեթի պալատը, Ռեքենի պայքարը ավելի խոր պատճառ
ուներ, քան կարծում եյին շատերը, և նրանց թվում Գ.
Բրանդեսը, ներկայացնելով այն իրրե պայքարը Յեղիսարե-
թի յերկու սիրենաների միջև՝ Յսսեքսի և Ռոքերտ Սեսիլի։
Կոմս Յսսեքսի այդ փորձը—զենքով խլելու իշխանությունը
հակառակորդ բանակից և Յեղիսարեթից և վերահաստատե-
լու արիստոկրատիայի հեղինակությունը պալատում—ձա-
խողվեց. Յսսեքսը իր յերկու հարյուր ութսուն ապստամբ-
ներով պարտվեց, դատի հանձնվեց ու գլխատվեց, Անցքը
ցնցող տպավորություն թողեց արիստոկրատական խավերի
մրա, վորոնց թվաւմ նաև Շեքսպիրի, վորի հովանավորներն
են յեղել նույն կոմս Յսսեքսն ու Սոուահեմպտոնը։ Ապշս-
տամբության փաստը Շեքսպիրին պատկերանում եր վորպիս
պայքար, ուղղված նենդ ու բռնակալ միտհեծանության դեմ,

մորը հաշվին չեւ ուզում առնել աբխասոկրատիայի քաղաքական ու դիմուրական փայլուն գործիչների ուժն ու փորձը:

Բայց այդ Շեքսպիրին հարազատ դասակարգի ընտանեկան յերկու դրամաները դարմանալի կերպով հիշեցնում են Համլետի անձնական պատմությունը, ինարկեալ արտաքին կողմից միայն «Համլետ» գրելիս հեղինակը կարծես նույն խոհներն ու ապրումներն եւ ունեցել իր ընկեր-հովանավոր նաև քսի գլխաւուն առիթով, ինչ Սոֆոկլեսը իր մտերիմ բարեկամ «վոլիմուսական» Պերիկլեսի գահավեժ անկման՝ իր հոչակավոր «Ադրիպ արքան ստեղծագործելիս» Վորոշ նյութ և մատակարարել նրան պալատական-ընտանեկան դրամաներից հետեւյալը, Հայտնի Մարի Ստյուարտը ամուսնացած եր յերկու անդամ, բայց դադտնի հարաբերություն ուներ մի յերրորդի հետ՝ կոմս Բոսվեյլի: Մարիին տիրելու համար հանգուդն կոմսը սպանում է նրա ամուսնուն՝ լրդ Դերնլեյին և շուպով ամուսնում կնոջ հետ: Հասարակությունը վաղուց եր կասկածում Մարի Ստյուարտի վրա Դերնլեյի կենդանության ժամանակ, բայց հաստատ ապացույցներ, Մարիի անմիջապես ամուսնանալը մարդասպանի հետ՝ ակնհայտնի դարձրեց կնոջ մասնակցությունը վոճրին: Մարի Ստյուարտի վորդին՝ Յակոբը ընկնում է նույն վիճակի մեջ, ինչ Համլետը Բրանդեսի ասելով, շուլանդյան ապստամբության ժամանակ զտնվել է մի դրոշակ, վորի վրա նկարված և յեղել Դերնլեյի դիակը՝ կողքին ծնկաչոք Յակոբը, վոր յերկնքից վրեժ է պահանջում, Յակոբը սժուկած և յեղել Համլետի համանման շատ գծերով: Ունեցել է նույն աստանվող բնավորությունը, սիրել է գիտությունն ու արդիստը, մանավանդ բեմը: Իսկ Դերնլեյը, Յակոբի հայրը, յեղել է գեղեցիկ տղամարդ, մինչդեռ նրան սպանող Բոսվեյլը ունեցել է այլանդակ կերպարանք, ինչ պես Համլետի հորեղբայր Կլավդիոսը:

Մյուս փաստը՝ դա կոմս Եսսեքսների ընտանիքում հաստարված վողբերդությունն և Եսսեքսի (գլխատված Եսսեքսի հայրը) հանկարծակի մահից հետո նրա կինը անմիշ ջապեռ ամուսնանում և կոմս Լեյսթերի հետ, վորը սիրային կապ և ունեցնել կոմսունու հետ դեռ վերջինիս ամուսնու վողջ ժամանակը։ Ենքսալիրի որոք բոլորը համոզված են յեղին, վոր Եսսեքսին թունավորնել և Լեյսթերը Յեղ Եսսեքս հայրը վորապես թի մահվան բոպիյին հայտնել և վորդուն, թի ինքը մի ստոր դավիի զոհ և Յերիտաստրդ Եսսեքսի նամակներն անդամ հետազայում յենթարկելի են ուսումնասիրության, ուր համեստական յերկտությունն ու հոռետեռությունը յերկար ժամանակ մաշել են նրա սիրտը։

Ենքսալիրը ոգտվել և այդ ընտանիքան դրամաներից, սահայն նրա «Համլիթը» այդ անցքերի լուսանկարը չեւ։ Նրա զեղարիկնուտական հոյակապ տիսլի բաղմաթիվ կողմերից մեկն և միայն այն, ինչ կարող եյին տալ նրան վերօնիշյալ դրամանըը։

Ենքսալիրի մրա դորեն աղղեցություն և սւնեցել ժամանակի սկզբանիկ միլիսուփիայությունը, վանական-ֆեոդալական կուլտուրայի հումանիստական քննադատությունը, և այդ աղղեցությունը մտա արտահայտություն և գտել նրա «Համլիթառում» Հայտնի յեւ, վոր յերեսոյթների, փաստերի մերլուծությունը խիստ զարդացած նը Համլետի մեջ և պատճառ դարձել նրա դանդաղկության, անշնուականության։

Բաղմաթիվ քննադատաների համար պարզ չեւ այն, ինչ յեր դանդաղում Համլետը իր վճռական քայլի մեջ, յերբ հորեղբոր վոճրագործությունը աղացուցված և ինչ յեր նա շարունակ խորհում, փիլիսոփիայում, յերբ հարկավոր եր անմիջապես զործել։ Պատասխանել այս հարցին՝ կնշանակե պանել վողբերդության ծանրության կենարոնը և լուծել համլետականության առեղծվածը՝ վոչ միայն մարդու անհատական, այլև հասարակական կյանքի վողբերդ ըրջանների



Պետրոս Ադամյանը Համլետի դերում (1850—1891)

Армянский трагик Петрос Адамян в роли Гамлета (1850—1891).
Armenian tragic actor Petros Adamian in the rôle of Hamlet
(1850—1891).



ահսակետից, Բայց այդ հարցին պատասխանելու համար ամենից առաջ պետք է ճանաչել Համլետին իր պատմական միջավայրում, գտնել նրա ապրումների, մտքերի և գործուղությունների հասարակական դրդիչները:

Համլետը, ինչպես և ինքը Շեքսպիրը, յերկու դարաշրջանների ընդհարման վկաներն ու մասնակիցներն են. կործանվող Փեղալիդմի և բարձրացող կապիտալիզմի: Յերկու աշխարհների, յերկու դասակարգերի ընդհարման վողը բերդությունը գեղարվեստական վառ անդրադարձում է գտել Համլետի ապրած դրամայի մեջ, վորպես մի պայծառ ֆուկուսի: Համլետի գասակարգը անցյալին է պատկանում. Նա նահանջում է դեպի տիրապետություն քայլող բուրժուազիայի առջև: Իր անալիզով, իր քննադատությամբ Համլետը այլին չե պատկանում Փեղալական միջնադարին, չե արտահայտում վանական-ավատական աշխարհայցքը, թեպետ չի ազատազրված լիովին: Նա նայում է ապագային, բայց անսորոշ է նրա հայացքը և յերկուղած: Մարքսիստ քննադատներից մեկի աղող ձևակերպումով Համլետը վերջինն է հին աշխարհում և առաջինը—նորում. նրա համար արդեն կործանված են հնի հիմքերը, բայց տակապին չե ստեղծված նորի պատվանդանը,

Համլետը հանճարեղ յերիտասարդ է, Նա ոժաված է իրերի և յերեռույթների խորին թափանցողությամբ, Նա չե բավականանում մարդկային կյանքի արտաքին մակերեսի ձանաչողությամբ: Շեքսպիրը նրան ոժտել է մտքի լայն ու խորը թափով: Համլետը մի հայացքով ընդունակ է ընդդրկելու յերեռույթները իրենց ներքին հակասություններով: Իինելով չափաղանց զգայուն, դյուրապգաց, նա միաժամանակ ունի բարոյական նուրբ զգացմունք: Մաքի խորության, ինքնասանալիզի հետ ունի հարուստ յերեակայություն: Վորպես Դանեմարքայի իշխան, գահաժառանդ, նա

ստացել և զի՞նվորական գաստիարակություն, դիտե տիրապետական զենքին, սուսնը մարտիք ժամանակ (Լայերտի հետ) ցույց և տալիս դիրադանց վարպետություն. բայց զենքն ու դի՞նվորական փառքը չի յեղել նրա նպատակը, Ռազմանիկովական խոշոր արժանիքներով ստոված Համբետը նվիրված և համալսարանական զրադառնություններին: Նա սովորել և վիրտուոսիքի - համալսարանում, ուր զասախոսել և մի ժամանակ Վերածնության դարի հոչակավոր փիլիսոփա, բարձրացող բուրժուազիոյի անհողողող գաղտնաբարախոս Զորդանո Բրունոն, ուր Լյուտերը, իր հայտնի թեղիններով, խիզախորեն հանդես և յեկել միջնադարյան ամենակարող պատականության դիմ, ուր տիրանենդ նվիրատեսառնության շենքին տրվել են խորտակիչ հարդածներ, Համբետը, տարիներ սովորելով այնտեղ, յենթարկվել և հումանիստական միջավայրի աղդեցության, նրան աղելի հարազատ և համալսարանը, քան որպատական վոճրապատ կյանքը: Համբետի մենախոսություններից կարելի յե յեղբակացնել, վոր նա ծանօթ և նաև ֆրանսիական հոչակավոր փիլիսոփա հումանիստ Մոնթենի «Փորձերին», նրա սկեպտիցիզմին: Համբետը արտահայտում և մտքեր, վորոնք հիշեցնում են Մոնթենի քննադատությունները, ուղղված վանական-ֆուզդական ավտորիտետի կողմից քարոզվող բացարձակ ճըշմարտությունների դիմ, մարդկային մտքի սահմանափակ և զգացմունքների խարուսիկ լինելու մասին: Համբետի մտքերը բղխում են Մանթենի սկեպտիցիզմից, թեպետ զդույշ, յերկյուղով, և ընդհանուր տեղիներով, սակայն որյեկտիվություն ուղղված ֆեոդալական-յեկեղեցական քարացած ճշմարտությունների դիմ, միջնադարյան տվատական կուլտուրայի դիմ, ուրեմն հոգուտ բուրժուազիան գաղափարախոսության, հոգուտ նրա նոր կուլտուրային:

Յեթև հումանիստական դարաշրջանի արշալույսը բնուրոշվում և հումանիստների յեռանդուն հարձակումով յեկեղեցու հեղինակության ու նրա ձևակերպած բացարձակ ճշշմարտությունների վրա, վորոնք տողորշած ելին այն վառ հույսերով, թե քննադատական մաքի ուժով հնարավոր և հեղաշրջել հին իրականությունը՝ ապա գարավերջի անցրեց, կաղըւած քաղաքացիական կրիվների հետ, ցույց տվին, զոր բույժուազիայի ողայքարը ֆեռությունի դևմ ընթանում և բարդ ու դարտուղի ճանապարհներով։ Բուրժուական հետապնդմ շերտերը հանճախ անցնում ելին կաթոլիկական-արիոտիկաական և ակալիցիայի կողմը, մինչ բուրժուականացած ազնվականությունը գնում եր առեւտրական կապիտալի ուղիներով։ Ասցիալ-քաղաքական այս միջավայրի արգասիք եր ակիակտիցիոնը, վոր ամեն ինչ համարուա եր հարաբերական, ովայնանական, մարդկային միտքը սահմանափակ, նրա ճիշդերը յերկաթե շղթայով կաշկանդված։

Համլետը այդ միջավայրի հարազատ դավակն է, նրա որոտահայտիչը, նրա վիլիստիան, իսկ Շեքսպիրը նրա հանձնարեղ և սրբակափ ստեղծագործողը։ Շեքսպիրի Համլետը իր քննադատությամբ ու սկիակտիցիզմով անկասկած քանուում եր միջնադարի սեակացիոն և սխոլատիկ վիլիստիայության շենքը։

Վիատենքնբնիքում Համլետը ձեսք և ընթել գիտություն և արվեստի նուրբ հասկացողություն, նա ունի կիրթ ճաշակ, քննադատող, վերլուծող խելք։ Համլետը նաև բանասեղծ է, նա վուանավորներ և զրում։ Պալատում ներկայացվելիք «Դոնզազ» պահնուրյօնը գրամայի մնջ լրացրիչ 12—16 տող հատկած և զետեղում ուժեղացնելու պիեսի վորոշ տենչվենցը թագավորին ծուղակը ձգելու նպատակով։ Համլետը հիշտակարան և պահում անցքերն ու մարդկային արարքները արձանադրելու համար։

Գեղարվեստի և թատրոնի մասին նա լուրջ դիտելիք ներ ունի, Լավատեղյակ և թատրոնական անցքերին, ծանոթ և ժամանակակից ռեպերտուարին, ճանաչում և դերասաններին, հիշում նրանց խաղը։ Նրա ցուցանքները առաջին դերակատարին՝ ապացույց և, վոր նա կողմնակից և գեղարվեստական ռեալիզմին, ինչպես ինքը Շեքսպիրը. Նրա կարծիքով բարձր զնահատանքի արժանի յե այն պիեսը, վորն իր մեջ պարունակում և ըլավ գասավորված տեսարաններ, նույնքան բնական, վորքան ճարտարությամբ կազմված։ Հեղինակը պետք և ոժտված լինի չափի զգացումով, պետք և առ կյանքի իրական պատկերը։

Համետը գյուրազգաց, կրքոտ, տպավորված, շուտ վագեորվող յերիտասարդ և. բնավորությամբ շիտակ, ուղղամիտ. վեհանձն և, հեռու ամեն տեսակ արկածախնդրությունից ու խարդախությունից, ինչպես բնորոշում և նրան նույնիսկ կավղիոսը։ Յեվ յեթե նա, կավղիոսը, «հայտնապես գատաստան չե արել Համետաին անհայտացնելու նպատակով», ապա դրա պատճառը «Դանիայի ամբոխն և», վորից հենց նույն կավղիոսի առելով «Համետը խիստ սիրված եր», ուստի և նրա մահապատիժը կարող եր ոժքախտ վախճան ունենալ թագավորի համար։

Մինչև Վիտաենքերգից հայրենիք վերադառնալը, Համելետը տոգորված և յեղել ապադայի վարդաղույն յերազներով։ Մինչև կյանքում ընդհարվելը, մինչև մելամաղձուա ու հոռետես դառնալը, աշխարհը նրա աչքում յեղել և մի շքեղ կերտվածք, իսկ մարդը այդ աշխարհի սքանչելի պսակը։ «Ի՞նչ ճարտար ստեղծագործություն է մարդը, — բացականչում և Համետը, վերքան աղնիվ և իր դատողությամբ, ինչ անսահման են նրա ձիրքերը, վորչափ ընտիր ու զմայլելի յե նա իր պատկերով ու շարժումներով, գործի մեջ նման հրեշտակի, հասկացողություններով՝ աստծուն։ Տիյեղերքի զարդը, կենդանիների կատարելատիպը։ Սակայն

յերբ ընդհարվում և բիրտ իրականության հետ, նա ընկճավում, հուսահատվում ե, աշխարհը նրա աչքում տառապանաքի վայր և գառնում, իսկ ընության «պսակ» մարդը՝ «փուշու այդ յեթերային գոյացումը»՝ մի վողբերգական վոչնչություն։ Ճնշող տպավորություն և թողնում նրա վրա այն ծանր վոճիրը, վոր կատարվել և նրա սեփական հարկի տակ. Համեստի բացակայության միջոցին հայրը սպանվում և իր հարազատ յեղբոր՝ Կլավդիոսի՝ ձեռքով։ Սակայն ավելի սարսափելին այն եր, վոր վոճիրը կատարվել եր Համեստի մոր գիտությամբ և պասսիդ մասնակցությամբ, Համեստի վիշտ ու թախինը ավելի յև խորանում, յերբ նրա մայրը տժուանու մահից հետո անմիջապես ամուսնանում և յեղբայրասպան Կլավդիոսի հետ, հանձննելով վերջինին Համեստի հոր «իմադն ու պատիզը»։ Համեստի սիրտը լցվում և վրեժինողության գոյացումով. նա կամննում և վոչնչացնել վաճառպործին, յերբ վերջնականապես համոզվի, վոր սպանողը հորեղբայրն է. բայց միտաժմանակ համոզված ե, վոր վոճիրը դրանով չե վոչնչանալու, Կատարված սպանությունն ու գտվաճանությունը նա այնու մասնավոր փաստ չե համարում. դրա մեջ նա տեսնում է մի ամրող յերևոյթ, մի ընդհանուր չարիք, իր գժրախտությունը՝ մի մասնիկը ընդհանուր դժբախտության, վոր համատարած և բովանդակ աշխարհում։

Աշխարհն ու կյանքը կորցնում են Համեստի աչքում իրենց հմայքը։ Լքված ու ճնշված, նա գոչում ե. «Ի՞նչ տաղակալի, ունայն ու վողորմելի յեն թվում այս աշխարհի վայելչությունները»։ Մանավանդ մոր վարժունքը ավելի յև վիրավորում նրա սիրտը Ռով եր նրա մայրը։ Մի կին, վորին ամսամինը այնքան ջերմ և սիրել վորին պաշտել ե այն սատիճան, վոր չե թույլ տվել անգամ այերկնքի հողմերը շփեն նրա զեմքը անքնքույշ կերպով։ Յեզ ահա այդ կինը իր ամուսնու յեղերական մահից հետո հանկարծ նետում

և «արնասպիզծ հեշտանքի մահիճը», «վուչնչության և անունդ, կին, — բացականչում և Համլիացու — Մի կարճ տմբիս միայն. և դեռ չեն մաշված այն կոշիկները, վորոնցով տանում եր նու իմ խեղճ հոր մարմինը դերեզման դնելու, ինչը արտասուրդարձած, վորպես մի նոր նիորեն... և արդեն պատկված: Ահ, չմը արտորանքու:

Բնդիանրացնելով պալատում բուն դրած չարիքը, Համլիաց կանգնում և յերկընարարների առջեն. «Ո՞նել թե չինել»: Ահա վորն և զիշավոր խնդիրը:

«Վա՞րն և Հոդեածու տվելի ազնիվ,
առնել գու բախտի պարսացարմը և ոլացնե՞ցը,
թե՞ զենք վերցնել օտակ ու վշտերի մի նոյնի ընդունեմ,
և դիմացքելով վերջ տալ բուրբնու»:

Զինյել ում դիմ, զիմադրել ու վերջ տուլ ձւմ: Առաջին հերթին թագավորին, ու այնուհետև «բոլորին»: Սուկայն Համլիաը բարդ և իր հոգեբանությամբ. նա այն անմիջական մարդը չե, վոր փաստերը բազմակողմանի չստուգած դինք բարձրացնի մարզու վրա: Նա սույ շարժող, նիզակ մտնող ասողեաններից չե. նա մտքը մարդ և, փելիստիք յե, և նրան չի կարելի վօրենի համեմատության դնել Աաքսոն Գրամմատիկուսի բիրտ Ամենալի հետ, վորը ընզունակ եր պալատի սենեկապետին սպանելը մարմինը մաս-մաս արած թափել խոզերի առաջ: Բայց այդ Համլիաը մի վորեն փաստի հետեւ ամբողջ յերեւոյթ և տեսնում. սեփական դժբակությունը նըւա համար մի ուրիշում յե, վորից նա նայում և շամբողջ աշխարհի ցամկերի վրա: Նրա հիտոթափության աղբյուրը միմիայն իր մերձավորները, միայն պալատը չեն: Առաջին մեծ ընդհանումը սովորեցրեց նրան խորը նայել կյանքի վրա:

Համլիաը պատրաստ և սպանել թաղավորին, բայց վերջնականապես համոզված չե, որ նա յե մեղավորը: «Ի՞նձ

պետք են ավելի հաստատուն մրաստերք — ասում են նայ Վարդանց են նրա Շմաստերքը. զրսի շնուկները և հոր ուրիշականը Շշուկներով դեկավարչել չեր կարող նա, իսկ ուրիշականին համար հարկավոր եր մինչև ուղեղի ծուծը լցված լինել միջնադարյան նախապաշտամունքով: Համեմետը վերածնության մարդ եր և ակնալտիկ: Նա և՛ հառատում եր և՛ կասկածում: Ուրիշականը — զա ավելի շուտ իր կառկածն եր, զրսում պատող շնուկների յերեակայական անդրադառումը: Նրա կարծիքով, յեթե ներկայացման ժամանակ թագավորի դեմքին չնկատվի սպասվող անհանգըստությունը, «առա այն վոգին», ասում են նա Հորացիոյին, ովոր մենք՝ տեսել ենք՝ մի չար վոզի յեն, բայց վոչ իր հոր ուրիշականը, Նույնը կրկնում և նրան մայրը. «Դա քո ուղեղի դարբնածն ե միայն, — ասում ե նա Համեմետին, — այդպիսն անմարմին դոյցություններ ստեղծենիու մեջ յերեակայությունը շատ ընդունակ են:

Համեմատի մելամաղձությունը և սկնալտիցիոմը ավելի ուժ եր ստանում սեփական կամքի թուլության չափազանցված դիտակցությունից: Նա իրեն անընդունակ և համարում վորեն դործ կատարելու Դա ինարկն չափազանցություն եւ Յնի նախանձով և նայում ուրիշներին, հենց այն դերասանին, զօրի «յերեսը մի շինծու պատմությամբ, կրքի մի յերադով... հուզմունքից վառվում ե, արտասուք աչքերում, ցնցում գեմքի վրա, ձայնը կերկերված...»: Յնի այդ բոլորը մամ համար, — բացականչում և նայ Հեկմերի համար, Ասկայն «Հեկուրը նրա լինի», Ապա Բնչ կաներ նույն դերասանը, յեթե Համեմատի նման «կրքերը հուզելու պատճառ ունենար», «Արցունքի հեղեղով նա ամրող բեմը ջրառույղ կաներ, ունկնդրաց ականջը ահապոր պատմությամբ նա կնոշուեր: Անակ յես, — ասում ե նա ինքն իրեն, — թույլ կավյա զանգվածով մի թշվառական, յերազող Զոնի պես,

դատիս անտարբեր, պապանձմած՝ չեմ կարող խոսք առելք....

Կամքի թուլության գիտակցությունը կատարյալ տառապանք և պատճառում նրան։ Հաճախ փորձում ե թողնել յերկմտությունը և շուտով գործի անցնել, սակայն վճռական բոպեյին միիդն ու խոհականությունը՝ նրան «յերկշուա» են գարձնում։ Նրա դանդաղկոտության պատճառը տիրող ընդհանուր չարիքի մեծությունն ե մի կողմից, իսկ իր ուժերի աահմանափակ լինելը՝ մյուս կողմից։ Համլետի մեջ շատ և զարգացած ինքնաանալիղը և ինքնազանակոծությունը։ Նա վոչ միայն անխնան յե իր վերաբերությամբ, այլև, ինչպես ասացինք, շատ ավելի յե շեշտում իր կամքի թուլությունը, քան իրապես կա այդպիսին նրա մեջ։ Անկասկած գատողություններն ու վերլուծությունները դանդաղկոտ են գարձնում նրան, դրապեցնելով միաբը, բայց պետք և ընդգծել վոր չեն զրկում նրան վճռական քայլելը անելու ընդունակությունից, նա դանդաղում ե վոչ թե այն պատճառով, վոր ընդունակ չե վորեն գործ կատարելու, այլ վորովնեակ կամենում ե չարիքն ու չարագործին ամեն կողմից մերկացնել, Համլետը ավելի խորհող ե, քան գործող, սակայն նա մի շարք խոշոր ապացույցներ և տվել վճռական լինելու ուրվականից ճշմարտություն կորզելու համար նա պատրաստ ե գաճավեժ լինել ժայռից։ Նա մի ակնթարթում սպանում ե Պոլոնիուսին, կարծելով վոր իր և մոր բացատրությունը գաղտազողի լսողը թագավորն ե. Հրաժարվում ե իր անհատական յերջանկությունից՝ զգացմունքից գեպի Ռֆելիան։ մահվան ե գատապարտում իր զեմ չարիք նյութով Գիլդենշտերնին և Մողենկրանցին, վերջում սպանում ե Կլավդիոսին և ինքն ել ընկնում մինամարտում։

Ոժտված լինելով մասնավոր չարիքի հետեւ հասարակական յերևույթ տեսնելու ընդունակությամբ, Համլետը իր ւլինել-շլինել մենախոսության մեջ բարձրանում ե մինչև



Դերասանուհի Սիրանուշը Համլետի դերամ (1862—1932)
Армянская актриса Сирануш в роли Гамлета (1862—1932).
Armenian actress Sipranush in the rôle of Hamlet (1862—1932).



սոցիալական անարդարության գիտակցությունը, Համլետը այդ տեսակետից ի հարկե բացառություն չե Շեքսպիրի ստեղծագործությունների մեջ։ Սոցիալական մոտիվների մակարդակին համառում և նաև նրա կար արքան։

Իր գժրախտության պրիզմայով Համլետը տեսնում է անկումը այն աշխարհի, ֆեոդալական-արիստոկրատական աշխարհի, մորի հետ նա կապված և բազմաթիվ թելերով ու շահերով։ Այդ աշխարհը ամեն կողմից ճեղքված է ստացել, և Համլետը տեսնում է ու դատավիետում այն կան քննադատներ, նույնիսկ մարքսիստ, վորոնց կարծիքով, Համլետը (ուրեմն նաև Շեքսպիրը), մռայլ գույներով ներկայացնելով իր հասարակական միջավայրը, վոչ մի պրոցրեսիվ գեր չե խաղում։ Ենթե Համլետը ի տես իր կործանվող դասակարգի վողբար այդ կործանումը, վորպես մի ներդաշնակ իրականություն, և իդեալականացներ այն անցյալը, յերբ ֆեոդալական արիստոկրատիան ինքնիշխան եր, միահեծան, ինչպես արել են ռեակցիոն ռումանտիկները, այն ժամանակ մեր յեզրակացությունը կլիներ ուրիշ։

Շեքսպիրի Համլետը խորապես գիտակցում է, վոր Դանեմարքայի թագավորի պալատը վոճարագործության բուն ե, «Դանիան բանտ ե», «աշխարհն ել բանտ ե», և որինավոր քանտ, վորի մեջ կան արգելանոցներ, փակարաններ, նկուղներ. իսկ Դանեմարքան ամենից վատը։ Նա շնորհուած աշքերով տեսնում և «աշխարհի նախատինքն ու մորակները», «ըլունապետների անիրավությունը, գոռով մարգկանց անարգանքները, արհամարհված սիրո գալարումները, որենքների ձգձգումները, պաշտոնյաների անզգամությունը» և այլն և այլն։ Համլետի այդ տեսակետը բաժանում է նույն վողբերգության աննշան գործող անձերից մեկը—Մարցելոն, վորն ասում ե. «Մի բան փոել ե Դանիայում»։

Համլետը իր ոպպոզիցիոն վերաբերմունքով դեպի հին արիստոկրատական - պալատական աշխարհը այնքան եր-

տարբերվում իր դասակարգի մարդկանցից, վոր վոճրագործ թագավորի ասելով, «նա (Համլետը) շատ սիրված և անմիտ ամբոխից»։ «Անմիտ ամբոխը» Դանիայի ժողովուրդն եր, վորի սրտին ավելի մսախկ եր հին աշխարհի քննադատությունը։ Դա այն «ամբոխն» եր, վորի մասին Համլետը գերեզմանոցում հետեւյալն ե ասել Հորացիոյին։ «Յերկույթի բերք տարուց ավելի յե նկատում եմ... վոր դյուդացու վունամատը դիպչում և պալատականի կրունկին և նրան ցայ պատճառում»։

Այս ամենը դիտողը և իր հարազատ միջավայրը հեղնանքով պատկերացնողը, թագավորի «ուրբատղան» անձը ծաղրի յենթարկելը, անզորության ու մանավանդ անկման հետեւնք չե, ինչպես յենթազրում և նույինովը «Գրական Հանրագիտարան»ում (հատ. 2-դ)։

— «Պարարա թագավորը, — ասում ե Համլետը թագավորին, — և նիհար մուրացկանը անսակառեսակ կերակուրներ են. յերկու կերակուր, բայց մեկ սեղանի համար... Մարդկարող և ձուկ վորսալ հենց այն ճինուով, վոր մի թաղավորի միան և կերել, և ուտել այն ձուկը, վորը նույն ճինուով և կերակրվեաւ»։

— «Ե՞նչ ես ուզում ասել դրանով՝ հարցնում և թագավորը»։

— «Վոչինչ, — պատասխանում ե Համլետը, — միայն ցույց տալ ձեզ, թե մի թաղավոր ինչպես կարող և ճամբարդել մուրացկանի աղիքի միջով»։

Բացի թագավորի կոչումը, իբրև «աստվածընտիր» միապետի, վարկարեկելուց, այսուղ Համլետը բացարձակապես հակակրոնական, աթեխտական միտք և տրտահայտում։ Համլետը «հոգուն» այլևս տեղ չե տալիս, ինչպես զա ամենից առաջ կաներ միջնադարյան հավատացողը»։

Համլետը շարունակում ե.

«Միթե չե կարող յերևակաւությունը պատկերացնել, բե Ալեքսանդրի (Ալեքսանդր Մակեդոնացու) ազնիվ փոշին ինչ շավզով և անցնում մինչև վոր ծառայն մի տակառի ծակը խցելու... Ալեքսանդրը մնուած, Ալեքսանդրը թաղվեց. Ալեքսանդրը փոշի դարձաւ, փոշին հող և, հողից կավ են շինում. ինչու Ալեքսանդրի մարմնից շինմած կավով չի կարելի դարեցրի տակառը խցել»:

Անդ հետարը մնուած, հող դարձած,
Մի պատէ ծերտի նա ծեփող դարձած.
Այս հողը, վորից ոռըսում եր աշխատն,
Զմեսմա բուքից ետէ իցող դարձած:

Նույն յերգիծանքն ու հեղինանքը կալվածատիրոջ մասին «իր զրավաթթվերով, վարձաթթվերով, պարտամուրանակներով, փոխանցումներով, յերկու յերաշխավորներով ու սահանալիքներով»— ըննաղաառաթյուն չե՞ նույն սոցիալական միջամխրի՞ւ

Այս ամենից հետո թնջողես և պատկերանում մեր առջև համեմատը իր հանճարեղ սանդօպութողի հետ միասին:

Համեմատը անկման դատապարտմած արխտոկրատ դասակարգի զավակ և, բայց նրանից խորթացած, նրան հակադրված, գելլասն յեղած: Ընկնելով յերկու եպոխաների ընդհարման ֆոկուսի մեջ, նրա ներքին աշխարհը արտահայտում և փոխանցման շրջանի վաղբերգություններից մեկը, նրա մեջ արմատախիլ չեն յեղել և միանդամից չեյին կարող լինել հնի ուժնող տարրերը, ինչպես և բացարձակութին աիրող դառնալ չեյին կարսող արշամող նորի իմակերտափառները: Արտաքին ազդակների, հակասությունների ճընշման տակ Համեմատը ապրում ե ներքին հակասությունների տաճող սլայքար, ինչպես հումանիստներից շատերը:

Նա հավատացող ե, ինչպես հումանիստներից շատերը, բայց նրա հավատը արդեն խախտված ե, նա չի կարողանում աղտատաղրվել «ամենուրեք» կոյսություն ունեցող մա-

խախնամության» գաղափարից, բայց հակառակ միջնադարյան ժարդու, հանդերձյալ կյանքը նա «անհայտ յերկիր» և անվանում, ովորի սահմանից վոչ մի ուղենոր չեն վերադառնում։ Նրա հավատը խախտել եւ սոցիալական հեղաշրջվող իրականությունը կապիտալիզմի գրոշի տակ, այդ իրականության տենդենցիները արտահայտող նոր փիլիսոփայությունը, վոր ավանդել են նրան Վիտտենբերգի համալսարանում, բայց ամրող ջովին չեն տիրապետել նրան, վորովհետեւ նա փոխանցման շրջանի մարդ եւ Պահանջել Համեմությունը, նույն և Շեքսպիրից, «պայքարել կամ հանուն ֆեոդալիզմ հզորության կամ հանուն առևտրական բուրժուազիայի նոր իշխանության», ինչպես անում եւ դա նույն «Գրական Հանրապիտական»ի Համլետ հոդվածի հեղինակը, մենք համարում ենք արդյունք խոշոր թյուրիմացության գու նշանակում եւ չթողնել փոխանցման համար վոչ մի յելք։ Շեքսպիրի համեմտյան քննադատությունը, յերկմտությունը, սկեպտիցիզմը, — այդ ամենը անկման եպոխայի քննադատական ռեալիզմի արտահայտություններից և կողմերից մեկն եւ Դա մտքի, գաառողության պրիմատի հաստատումն եւ միջնադարյան յնկեղեցու բացարձակ ճշմարտության հանդեպ։

Շեքսպիրի «Համլետ»ը մի գեղարվեստական հազվագյուտ փաստաթուղթ եւ, վորը բացատրում է ֆեոդալական որբիսուկրատիայի անկման, կազմալուծման ողբոցիսը և լուսաբանում սոցիալական նոր Փակառըների (առևտրական բուրժուազիայի) ներխուժման հետևանքները։

Համլետի հոռեանությունը նույն հոգվածում («Գ.Տ. Հանրապիտ») ընորոշված եւ վորպես ավարտված աշխարհայացք վորպես թե Շեքսպիրի հերոսը իր վողջ պեսսիմիզմը ուղղում եւ «բարու» վրա։ Բարություն չկա և չի կարող լինել։ Մինչդեռ «չարբիքը» իրը թե նա համարում է հավիտինական։ Նման մոտեցումը սխեմատիկ եւ Զի կարելի Համեմտին, վոր մի հայտնի եպոխայի գեղարվեստական տիպ եւ, չեզու-

քացնել իր սոցիալական կոնկրետ միջավայրից և խոսել նրա մասին վերացականորեն։ Խաչմատը յեր չարիքի գաղափառով տարված Համլետը Վորովինետև այդ միջավայրի կոնկրետ պայմանները այդ միտքն ելին թելաղբում հերոսին։ Վարդապետի հասարակությամբ եր շրջապատված Համլետը, ովքեզը ելին նրա հակառակորդները, Մարդասովան, յեղբայրապան թագավորը, նրա գործակից թագուհին՝ Համլետի մայրը, կեդեավոր, շողովորթող և վոնրամիտ պալատականներ, վորոնք յերկիրը դարձրել են «բանդ», դարձրել վայր «ըըռնապետության», անարդանքի և հարստահարության։ Այս «բանչելի» յերեսույթների կոնկրետ ողակում կարմի եր Համլետը չհամակվել թախիծով, չտուգորվել պեսսիմիզմով։

Յեթի հակառակը լիներ, Շեքսպիրը Շեքսպիր չեր լինի, նա մեղանչած կլիներ գեղարվեստական ռեալիզմի դևմ, իրականության պատկերացումը խորն ու քննադատական չեր գառնա այդ մեծ գրվածքում։

«Ժամանակը իր շավզից դուրս և սայթաքել», —ասում է Համլետը և ավելացնում՝ «միթե ինքը ծնվել և նրան իր տեղը դնելու, Ֆեոդալական կործանվող աշխարհի փառությունը նրա աղջեցությունները վերացնելու կոչումը նրան չեր տված։ Ծիշտ այնպես, ինչպես «համաշխարհային թախիծը» կրող բայրոնական և մերձ-բայրոնական հերոսներին չեր տված հեղաշրջել իրենց կողմից մերժված իրականությունը, վորոնց ոպովիցիոն դիրքն ու խոսքը սակայն ունեցան խոշոր հասարակական նշանակություն։

Լինելով հավաքական խտացած տիպ, Համլետը համամարդկային, ունիվերսալ տիպ չեւ նա, ինչպես մինչեւ այժմ գրված բոլոր գեղարվեստական ստեղծագործությունները, գասակարգային եւ Մենք այդ տեսանք վերենի վերլուծությունից, Սակայն Շեքսպիրը այնքան բազմակողմանի ու խորն և ընդունել իր հերոսին, վար նրա գրվածքն ստացել և մի սիմվոլի կերպարանք հասարակական նման շրջաննե-


ըի համար, յերբ հավաքական տիպեր, խմբավորումներ կանգնած են լինում սոցիալական յերկրնտրանքի տոջե—«լինել ինչ չինել», առանել դու բախտի պարսաքարթը և ոլաքները, թե դենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ և դիմադրելով վերջ տալ բոլորին....»

Համեստի յերկրնտրանքը վերջացավ մենամարտով, ուր նա սպանեց թագավորին, խոցեց Լոյնրտին ու ապա ինքն ել ընկայի:

Վողրերգության մեջ խոշոր տեղ են բռնութ Համեստի և Ոֆելիայի հարաբերությունները: Խռովթյամբ անցնել գրանց մոտով չի կարելի, Արքում եր արդյոք Համեստը Ոֆելիային: Յեզ տոհառարակ ընդունակի եր նա սիրելու: Այսպիսի հարց առլիս են միակողմանի և սխնմատիկ քննադրաները: Տուրդեներ իր շնորհած կիսամատ ու Համեստը մեջերատում ժխտում ե այդ սիրո զայությունը: Անտարակույս Համեստի գլուխոր նպատակը սերը չեր կամ ամուսնական խաղաղ կյանքը: Պարտքի գիտակցության առաջ նա զոհեց իր անձնական յերջանկությունը: Սակայն միթե այդ հանդամանքը թույլ ե տալիս ժխտելու Համեստի սերը: Տուրդեների կարծիքը միակողմանի յէ, և Պատրոս Աղամյանը, Համեստի տաղանդավոր դերակատարը, իրավունք ուներ պնդելու հակառակը, իր սիրած հերոսի զգացմունքների արտահայտիչ հանդիսանալով: Համոզվելու համար՝ սիրմամ եր արդյոք Համեստը թե վոչ, պետք ե դիմել վողրերգությանը ամենից առաջ: Յերկրորդ գործողության առաջին տեսարանը պերճախոս աղացույց և Համեստի սիրո, վուշի ներքին տանջաղ լուսության պատճառը անընդունակ և յեղել հասկանալու պարզամիտ Ոֆելիան: Համեստը Ոֆելիային սիրում եր Շավելի քան քառասուն հաղար Լայերտներ», բայց նրա վրա ծանրացած ցավը այնքան խոշոր եր, վոր անձնական յերջանկությունը պետք ե նսեմանար նրա տոջե: Ոֆելիայի պատմելով մենք իմանում ենք ոյն շխոր

ու սրբաճմլիկ հառաջները, վոր արձակել և Համլետը իր սիրած աղջկա առջե, հառաջներ, վորոնք Շկարծես ջարդում ու փշում եյրն նրա վողջ կազմը և մարեցնում կյանքը։ Անկասկած Համլետի մնջ հուսահատություն եր առաջ ընդում այն, վոր Ովկլիան անդիտակցաբար գործիք և գարձել թաղավորի և իր մոր ձեռքում ի մնաս Համլետին Դրանով պետք և բացատրել մասամբ նրա դյուրագրգիռ վերաբերմունքը գեղի Ովկլիան և դեպի կանայք առնասարակ։ Բայտ Տուրգինեսի, Համլետը սիրել չե կարող, վորովհետեւ նա չափաղանց յեսասեր և և դրաղված միմիայն իր անձնավորությամբ։ Այս կարծիքը պետք և հիմնովին սխալ համարել, զորովհետեւ նրա հիմքը սխալ յենթադրությունների, վրա յե հյուսված, Յեթե Համլետը միմիայն իր մասին խորհուրդ լիներ, ել ինչմեւ ովհուի աշխարհում տիրող քառսի մասին մտածեր, ինչմեւ սեփական դժբախառությունը առիթուար նրան ընդանրացումներ անելու, անզամ սոցիալական անարդարության մասին դառնությամբ խոսելու։ Փոխանակ աշխարհի խախտված հարմոնիայի վրա մտածելու, միանգամից վերջ կտար հակառակորդին, կխաղաղացներ իր վրդովված հողին և կկարգավորեր իր անհատական կյանքը, ինչպես արագ Սաքսոն Գրամմատիկուսի միջնադարյան Ամլետը միշտ և, Համլետն ել զլուխ բերեց վրեսինդրության ակտը, բայց ինքն ել զո՞ւ գնաց այդ ակտին, նախ քան այդ ակտը նա ներքին ծանր փոթոքիկ ապրեց, հրաժեշտ ավելի տենչերին ու կյանքին։

«Համլետը փոխանցման շրջանում (Փեղալիղմից գեղակի կապիտալիզմ անցնող) առաջացած հակասությունների վառ արտահայտություններից մեկն ե, վորի մեջ Շեքսպիրը ամփոփել և ընկնող դասակարգի մայրամուտից զլուխ բարձրացնող և նոր հորիզոններ վարոնող դեկլասն յեղած հանճարեղ Խարդու վողբերդությունը։



«Որելու»: Միջավայրը:— Խանդը և եզրիզմը սիրո մեջ:— Վողբերգուրյան ներռուները. Որելո. Յագո. Դեգլեմոնա. Նմրիլիս:— «Որելու»ի կտորուցվածքը:

«Որելու»ն Շեքսպիրի հոգերանական խոշորագույն գործերից մեկն եւ Վողբերգության կենտրոնական գաղափարը խանդի զգացմունքն եւ, վորի պատկերացումը այնքան խորն եւ ու բազմակողմանի, վոր Շեքսպիրից հետո չաս տաղանդների փորձերը՝ խորանալու նրա մեջ չեն տվել վոչինչ ամենի, քան Որելուն Ամիելի ճիշտ, չեն տվել այն, ինչ տվել եւ Շեքսպիրը. Ոթելու բատը հանրածանոթ եւ. համաշխարհային գրականության մեջ և վողբերգությանը ծանոթ մասսանեցի կենցաղում նա դարձել եւ հասարակ անուն՝ խանդի եյությունը արտահայտելու համար:

Շեքսպիրը իրեւ մեծ ռեալիստ թափանցել եւ ոյդ տվերիչ զգացմունքով կլանված իր ժամանակի և դասակարգի մարդու հոգերանության մեջ, տալով նրա վառ, հուղարկան պատկերը Վողբերգությունը վերարտադրում եւ խանդից ծնված հարակից հոգերանական պրոցեսսների հյուսվածքը, ընդունակ ապացուցելու, վոր նախնական շրջաններում մարդու մեջ բիոլոգիական ծագում ունեցող այդ բնագդը վնասի հոգերանական բարդություններով եւ շեր-

տավորված շնորհիվ պատմական հասարակական պայմանների: «Որելլուն համոզիչ և և ցնցող, վորովհետև Շեքսպիրը հանճարի ուժով կարողացել ե մերկացնել իր հերոսների ներքին աշխարհը, դնել այն մի ամբողջ շարք տղթակների տակ, հետևել նրա զարդացման ընթացքին, լարորատորային գիտնականի նման յենթարկել այն անալիգի ու սինթեզի, անդինելի իրական դարձնելով գլխավոր հերոսի հոգեկան շարժումները»:

«Որևէլլահի գրական աղբյուրը իտալական մի նովելլ, առանվեցերորդ դարսւմ գրված, հեղինակություն Զերալդի Չինթիոյի: Շեքսպիրը ողավել և նրա կմախքի մի մասով: Պատմվածքը միամիտ կառուցվածք ունի, հերոսը կիսավայրենի մի աֆրիկացի յե, վորը յենթարկվելով Յագոյի չարախոսությանը և գրգված խանդից սպանում և իր կնոջը նույն Յագոյի ոգնությամբ: Սպանությունը կատարում են միասին, անմեղ կնոջը ծեծում են ավտովվ լցրած գուլպայով, վորի հարվածների տակ Դեղգեմոնան ընկնում և անշընչացած: Վոճիրը ծածկելու համար Ոթելլոն ու Յագոն կնոջ գիտելը դնում են անկողին, զլուխը վիրավորում, առաստաղի մի մասը քանդում կնոջ վրա ու ապա հայտարարում, ուոր կինը զոհ և գնացել դժբախտ պատահարի: Ոթելլոյի վախճանը նովելլում և Շեքսպիրի վողբերգության մեջ նույնպես տարբեր եւ Առաջինում՝ Յագոյի մատնությամբ նրան տանում են Վենետիկ, դատի յենթարկում, բայց նա ուրանում ե իր մասնակցությունը Դեղգեմոնայի սպանության մեջ: Այնուամենայնիվ նրան դատապարտում են աքսորի, ուոր Դեղգեմոնայի ազգականները նրան սպանում են: Հետագայում Յագոն ել մի այլ վոճրափորձի առընչությամբ յենթարկվում ե ծանր տանջանքի, վորի հետանքով կոտրվում ե նրա վողնաշարը, և նա մեռնում է չարաչար մահով»:

Շեքսալիրի ու Ռելլու տարբերվում և Զինթիոյի պատմվածքներից, ինչպես աղամանով քարի հասարակ ըեկորից։ Նույնիւստի պատմած դեպքերը Շեքսալիրը շաղկապում եւ ընական սպակներով, ավելորդը դեն ձգում, պակասը լրացնում, ընավորությունների զարգացումը հասցնում իրենց տրամարտնական վախճանին և վողբերդության կենտրոնական դադափարին հաղորդում անկրկնելի խորություն։

Վողբերդությանը տրված և միանգամայն ժամանակակից ընաւյթ։ Դործողությունը զարգանում է Վենետիկի հասարակապետության մեջ։ Դա առևտրական կապիտալի վաղեմի կենարուններից մնկն ե, վերածնության և հումանիտարկան շարժման որրանը։ Պատմության տենդագին մի շրջան, Առևտրականների հանրապետությունը զենքով ճանապարհներ և հարթում շուկաներ գրավելու համար և զենքով պաշտպանում արդեն գրաված վայրերը (պատերազմը Կիպրոս կղզու համար)։ Միջավայրի գործիչներն ու պետության զեկավարներն են՝ դուքսը և սենատորները, բուրժուականացած աղնվականներ, բարձր զինվորականներ, սպաններ, Վերջիններին թվումն և Վենետիկի մամլր Ոթելոն, իր քաջություններով հայտնի զորավար, վորտարինների ընթացքում մեծ ծառայություններ և մատուցել հասարակապետությանը իր հաղթություններով թշնամու վրա։ Վենետիկի կիրթ պայմաններում մավրը հղկվել նրբացել ե, վորքան դա հնարավոր իր մի զինվորականի համար, վորը սենատի հրահանգով անընդհատ տեղափոխվելիս և յեղել իր դորքով պատերազմական մի Փրոնտից մյուսը։

Միջնադարյան կապանքներից աղատագրվող այդ միջավայրը, կապիտալիզմի արշալույսին, տակավին շատ բան ուներ հնից մնացած, նա աղատ չեր միջնադարյան նախառուաշրմունքներից։ Աննատոր Բրաբանցիոն, Դեղդեմոնայի հայրը, հակատում և կախարդությանը, մեղադրելով այդ բանում մավրին։ Հումանիզմի, Ռենեսանսի դպրած դարում

կենը իր ցանկացած ազատությունը չեր վայելում. միաէ նվաճումը թերեւ այն եր, վոր նրա ամուսին ընտրելու իրավունքը որենքով թույլատրելի յեր (Դեղդիմոնիայի ամուսնության հարցը Վենետիկի Սենատում), թեպետ առորյա կենցաղում դա համարում եյին ըմբռատություն ազգի կողմից. Միրածի հետ ամուսնանալը, հակառակ ծնողուների կամքի, աղատություն չեր, այլ պայքար աղջկա կողմից: Տիրող կարգերը շատ ցածր ասախճանի վրա եյին պահում կնոշինքնաճանաչությունը: Այդ եր պատճառը, վոր կենը իր ամուսնուն այլ կերպ չեր ճանաչում, քան տեր, հրամայող, իսկ ինքը ճնազանդ և նրա կամքին յենթակա արորած: Վենետիկի սենատորները անկասկած կպաշտպանեյին Դեղդիմոնայի հորը՝ Բրաբանցիոյին, յեթե Ոթելոն հասարակապետության համար անփոխարինելի ուժ չլիներ:

Ասետրական կապիտալի դարգացման յեռուն շրջանում կարիյերիզմը, ամեն միջոցներով վեր մազլցելու տենչը տիրող եր շատերի համար: Այդ միջավայրը հրապարակ և կաղմակերպող ուժերի կողքին նաև արկածախնդիր մարդիկ, աֆերիստներ, ինտրիգաններ, վորոնք և առաջինը՝ լինելու համար պատրաստ եյին խանգարողների և մրցակիցների կոկորդը կտրել (ինչպես Յազոն):

Ենքսպիրի վորքերգության մեջ ցրված ակնարկները միջավայրի նկատմամբ մեզ թույլ են տալիս պատկերացնելու մոտավորապես այս ժոնը, վորի վրա ծավալվում են պիեսի գործողությունները:

Վենետիկի ծերակույտի անդամ Բրաբանցիոյի աղջիկը՝ Դեղդիմոնան սիրում և մավր Ոթելոյին, վորը Վենետիկի հօտսարակապետության քաջ զորապետն եւ, Ոթելոն իր մղածքազմաթիվ պատերազմների մեջ ունեցել և վտանգավոր պատահարներ, ընկել դաժան պայմանների ու դժվարությունների մեջ, կրել շատ զրկանքներ, բայց այդ ամենը պսակել և ուղարկան նշանավոր հաղթանակներով: Նա տե-

սել և շատ յերկիրներ, զանազան ժողովուրդներ, և այդ առմենը այնպիսի պատկերավոր ու տպավորիչ լեզվով եղատամել սննատոր Բրաբանցիոյին, Դեղքեմոնայի ներկայությամբ, վոր շուտ ատղավորվող ու նըրազգաց աղջիկը գրավվել ու բուռն կերպով սկընէլ և թխամորթ զորագետին: Հոր արգելքներից խուսափնելու համար Դեղքեմոնան փախչում և Ոթելլոյի մոտ և դադանի կերպով կատարում ամուսնության ծեսը Դեղքը ցնցում և Բրաբանցիոյին իր անակնկալությամբ ու անախորժությամբ, զորովհետեւ արխատոկրատ ծերունին յերբեք չեր ցանկա գեղեցիկ Դեղքեմոնային կնության տալ մի մավրի: Նու դիմում և Սենատին, կամենալով պատժել Ոթելլոյին, համոզված, վոր իր այնքան ընտրություն անող աղջիկը չեր կարող առանց կախարդության անձնատուր լինել մի սեամորթի, վորի դեմքին նա մի տեսակ յերկյուղով եր նայում: Բարձրագույն ատյանում բացատրություն են տալիս Ոթելլոյն ու Դեղքեմոնան, վորից ակնհայտնի յե դառնում ամուսնության փոխադարձ համաձայնությամբ լինելը: Մյուս սենատորները դուքսի հետ միասին գտնում են, վոր հակառինական վոչինչ չե կատարվել, քանի վոր աղջիկը ինքն և ցանկացել: Բրաբանցիոն դառնացած հաշտվում և ծանր իրողության հետ: Հասարակապետության պահանջով Ոթելլոյն հենց անմիջապես, ստացված տեղեկության համաձայն, ուզարկվում և երարքունքի հարձակողական արշավանքին դիմադրելու Դեղքեմոնան չի կամենում մնալ առանց Ոթելլոյի: Ոթելլոյն ճանապարհ և ընկնում առաջուց, իսկ իր «հավատարիմ» ոֆիցերին՝ Յագոյին հրամայում և ամեն հարժարություններով բերել Դեղքեմոնային Կիոլրոս, իր կնոջ՝ Ամբիկայի ընկերակցությամբ:

Զույգը յերջանիկ և կղզում, ուր սազմական դործողություններ այլևս չկային: Բայց մի չար գե տակն ու վրա յե անում նրանց կյանքը: Այդ գել Ոթելլոյի «հավատարիմ» գրոշակակիր Յագոն և, Գալով Կիոլրոս, սկսում և նա հյու-

սել փորձանքի վոստայնը՝ Դեղպեմոնան իր գեղեցկությամբ ու գալոմունքավ հմայել և բոլոր շրջատառողներին՝ կասիոյին, Ռողը իզոյի մուտքային, նրան տեխչում և նաև Յազոն։ Բայց Յազոն այլ հաշիվ ես ունի Ռթելլոյի հետ նա զայրույթով և լցված, վոր Ռթելլոն դանց և առել իրեն՝ լեյտենանտ ընտրելիս և այդ ուաշտոնը հանձնել և «անփորձ» կասիոյին։ յերկրորդ՝ Յազոյի մեջ մի կասկած և աճում, թե Ռթելլոն մի ժամանակ իրը թե հանցավոր հարաբերության մեջ և յեղել իր կնոջ՝ Եմիլիայի հետ Յազոն ուզում և աիրանաչ Դեղպեմոնային և դրանով լուծել իր վրեժը, իր նորատակին հասնելու համար նա գործիք և ընտրում ըոլոր շրջապատշներին, վենետիկի կարճամիտ աղջևական Ռողը իզոյին, վորը ինելառի ողես ձգուում և տիրանալու Դեղպեմոնային, Յազոն համոզում և սպանել կասիոյին, վերսիկետն, նրա կարծիքով, Դեղպեմոնան կդիրագասի ավելի գեղեցկագել կասիոյին, քան ուրիշին, Յազոն կասիոյին արրեցնում և դինով և կռիվ ձգում յերկու յերիատասարդների մեջ։ Կառսիոն զինու ազգեցության տակ դուրս և զայիս կռվելու և հասցնում կղզու նախկին կառավարիչ Մոնթանոյին, Վրա յև հասնում Ռթելլոն և անմիջապես պաշտոնագուորկ տնում կասիոյին, Ռւշը դաշտոց հետո կասիոն շվարել և կատարված իրուության հանդեպ։ Յազոն խորհուրդ և տալիս նրան անմիջապես դիմել Դեղպեմոնայի ուղանության, վորի միջնորդությունն ամուսնու առջև վճռական նշանակություն կունենա կասիոյի համար։ Կասիոն դիմում և Դեղպեմոնային, և այդ հանգամանքը հարմար տոիթ և դառնում Յազոյի համար՝ միամիտ մավրի հոգում կասկածի թույն ներմուծելու։ Վարպետորեն դաստիլուած գիպվածներով Յազոն բորբոքում և Ռթելլոյի խանդը, նա հայտապնում ե, վոր արտաքուստ անմեղ ձևացող Դեղպեմոնան անումոթ կնրապով դավաճանում և Ռթելլոյին և իր ամուսնական առաջաստը պղծում կասիոյի հետ։ Ավելի խոր աղջելու հա-

մար Յաղոն զուգադրում և սկամորթ մավրի կերպարանքը գեղեցիկ և նրբակազմ կասիոյի հետ, շնչոելով, վոր Դեղդեմոնան անշուշտ դերադասում և յերկրորդին Ոթելլոյի խանդարիած յերեակայության վրա ավելի ևս ազդում են Յաղոյի հնարած ցինիկ պատկերները «դավաճանող» Դեղդեմոնայի և շշնացող Կասիոյի նկատմամբ։ Այդ բոլորի վրա ավելանում են միամիտ Դեղդեմոնայի դիմումները Ոթելլոյին, վոր նաև ներողամիտ լինի դեպի Կասիոն և վերադարձնի նրան իւյտենանոտի պաշտոնը Կատարդած դեպքերն ու Յաղոյի ներշնչումները բավական եյին, վոր հավատացող ու պարզամիտ Ոթելլոյին խանողի բորբոքման ու կատաղության հասցնելին։ Շոշափելի ու հանցանքը վերջնականապես ապացուցող «փաստը» թաշկինակի պատմությունն եր, վորը բավական եր, վորպեսզի Ոթելլոն ջղային ցուցումներից ու դալարումներից հետո վճռեր խեղդամոհ անել «անբարոյական» Դեղդեմոնային։

Միևնույն դիշեր Յաղոն մահավորձ և կատարում Կասիոյի դեմ, իսկ հոգեկան հավասարակշռությունը կորցրած մավրը խեղդամահ անում անմեղ կնոջը, չանսալով նրա սիրո ջերմ արտահայտություններին ու յերգումներին, թե նա անմեղ և գոհ և գնում սոսկալի կասկածի, Դեղդեմոնայի սպանությունից հետո պարզվում է ամեն ինչ, Յաղոյի կինը Եսիլիան պատմում և թաշկինակի դեպքը, ապացուցելով վոր իր ամուսինը ստոր դավադրություն և կազմել անմեղ կնոջ դեմ, իսկ վայրենի Ոթելլոն գաղանարար սպանել նրան։ Կատարված տրագեդիայի տուած Ոթելլոյի սրտում անդի յե ունենում ավերիչ փոթորիկ։ Անկարող տանելու սիրելի կնոջ կորուստը, նա ինքնասպանություն և դործում։

Թեթև վերավորված Կասիոն հայտարարվում և կառավարիչ կիպրոսի, իսկ Յաղոն ձերբակալվում ու դատապարտվում և ծանր տանջանքներով մահապատժի։

Այսպես. Ոթելլոն սիրում եր Դեղդեմոնային: Դեղդեմոնան դարձել եր նրա պաշտամունքի առարկան: Դեղդեմոնան անմեղ եր: Կասկածի հիման վրա Ոթելլոյի սերը փռխարկվեց խանդի: Խանդը արտահայտվեց ինքնամոռաց կատաղությամբ, և անսահման սիրող Ոթելլոն սիրուց բղխող զգացմունքի մզումով խեղդամահ արեց միանգամայն անմեղ Դեղդեմոնային:

«Որելլուն գեղարվեստական ռեալիզմի սքանչելի նմուշներից ե. կյանքը, խակական ռեալ կյանքն ե, վոր իր ճըշմարիտ արտահայտություններով արտացոլումն ե գտել վարդերգության մեջ, Ռեքեմն թնջախս մոտենալ մարդկային կյանքի այս իրական փաստին: Ոթելլոն սիրում եր, Սաստիկ սիրելուց նա սպանեց իր սիրո և պաշտամունքի առարկային: Սերը, ընդունված ե ասել, անձնազոհություն և Դրա գերազույն արտահայտությունը Ռոմեոի և Ջուլիյետի վողբերգությունն ե,

Բայց սերը ունի մի այլ կողմ, վոր թագնված և մարդու ներքին հեռավոր ծալքերում և յերեան և գալիս հաճախ ամենաշնչին պատճառներից և փոթորիկ տռաջ բնրում: Սերը նաև յեսական ե, կամ ավելի ճիշտ՝ սիրո մի կողմը անձնազոհություն ե, մյուսը յեսականություն. սիրո զգացմունքը յենթարկվելու, տիրապետվելու, տենդենց ունի իր մեջ, խանդի զգացմունքը՝ յենթարկելու, տիրապետելու:

Ետանդի մեջ անկասկած խիստ զորեղ արտահայտություն և գտնում սեփականության գիտակցությունը: Խանդի զգացմունքի խորքում այդ բնազգն ու գիտակցությունն ե նըստած. ըստ յերեսոյթին, այդ զգացումը առաջ ե յեկել և զարգացել մասնավոր սեփականության ինստիտուտի ծագման հետ զուգընթաց: Ոթելլոն Դեղդեմոնայի վրա նայում և վորովես իրեն պատկանող մի սեփականություն, վորի հետ նա կապված ե իր հոգեկան հյուսվածքի բոլոր թելերով:

Այդ սեփականությունից զրկվելու (ուրիշին անցնելու) սաբուսափը Ոթելլոյին կարող էր հասցնել այնտեղ, վոր նա կամ կասիոյին սպաներ, կամ Դեղդեմոնային և կամ յերկուսին միասին, նայած հանգամանքների դասավորության, կասիոյին կսպաներ, յեթե Դեղդեմանտյին խնձոր փորձը (յեթե այդպիսին տեղի ունենար) միմիայն նրա կողմից լիներ, տռանց յերկուստեղ համաձայնության: Դեղդեմոնային սպանեց, վորովհետև սա վորպես թե գավաճանել եր: Յերկուս սին ել կսպաներ, յեթե հանցանքի վայրում բռներ նրանց: Համենայն դեպո ինչ վոճիր ել զործեր, սիրո սեփական առարկայից (թեկուղ պաշտելի) զրկվելու դրդապատճառից պիտի գործեր:

Սպանություն՝ սիրելուց: Կարող են առարկել, թե սերը տեղի յեր տվել ատելության, ուրեմն սպանության դըրդապատճառը սերը չե, այլ ատելությունը: Ինչպէս ատելությունը պետք եւ արտահայտվեր անպատճառ մարդասպանությամբ: Սոսկ ատելությունը կարսդ եր հաբարերությունների սուր խղումով ել սահմանափակվել: Ուրեմն ինչու պետք եւ Ոթելլոն սպաներ Դեղդեմոնային, վորին դեռ մի քանի որ առաջ պաշտելի յեր համարում, և այն անկեղծորեն:

Ոթելլոյի խանդը, ուրեմն, սովորական ատելություն չե: Նրա խորքում նստած և անկասկած վաղեմի սեփականության զգացումը, առանց գուճիրկ բացատրություն տալու նրան, վորովհետև այդ զգացման արտահայտության կոմպլեքսը բարդ եւ:

Վերտեղից եղա, Մայրական իրավունքի, մատրիարքատի, տիրապետության ժամանակ չե յեղել տղամարդու կամ կնոջ այսպիսի չափականության: Գիտակցություն: Նա ծայր և առնում մատրիարքատի աապալումից հետո, յերբ ընտանիքի տերը դառնում և տղամարդը:

Մարդու և կնոջ սիրային հարաբերությունը սոսկ սեռական, սոսկ բիոլոգիական խնդիր համարողները անկարող ելինեն որատասխանելու այն հարցին, թե ինչնեւ Ոթելուն սպանեց Դեղզեմոնային։ Թող չլինի Դեղզեմոնան, լինի Ռուդալինդան, լինի Ջեսսիկան կամ մի ուրիշը։ ԶԵ վոր բիոլոգիայի պահանջը շատ հասարակ է, պրիմիտիվ, նույնքան որիմիտիվ, վորքան պրիմիտիվ և նա ամեն մի չորքուանու համար։

Բայց մարդը անասուն չեւ Յեվ այստեղ է, վոր խընդիրը բարդանում է։ Յեվ զրա համար նրա նախնական, բիոլոգիական եյության զրա նստել են բարդ եմոցիաներ, լինելով արդյունք պատմական-հասարակական կյանքի դարավոր զարգացման։

Խանդը, վոր, մեր կարծիքով, սեփականության դպացմունքից և բղխում, բարդացել և պատմի, անարդանքի, խարժածության, ամոթի և այլ հասկացողություններով։ Կոմունիզմի կարգերում կատարելապես ազատազրվոծ կինն ու տղամարդը, ազատ ընտանեկան դարավոր հաշկանդումներից և հին հոգերանության հեռավոր անկյուններում ազրող մնացորդներից, — ասում ենք, կոմունիզմի կարգերում խանդը աստիճանաբար կվերանա մարդու և կինոջ ինտիմ հարաբերությունների աշխարհում։ Կա վոլխաղարձ սեր, ուրիշն առըսում են միասին, չկա՞ ազատ և կինն ել, տղամարդն ել։

Սակայն Ոթելոյի վարմունքը բացատրություն և պահանջաւմ, վորովհետեւ նա մեր կենցաղում տակամին դեր և խաղում։

«Կնոջ հավատարմությունը, — ասում է Ֆր. Ենդելսը, շոշափելով ընտանիքի հարցը հեռավոր անցյալում, — ուրեմն նուև յերեխաների հոր հավատախությունը ապահովելու համար կինն անպայման մատնվում է տղամարդու իշխանու-

թյանը. յեթե տղամարդը սպանում և իր կնոջը, նա դրանով միայն իր իրավունքն եւ զործադրում։

Այս վիճակը առաջ և յեկել մայրական իրավունքի տաղակումից հետո, այսինքն յերբ հաստատվեց մասնագոր սեփականությունը, վորը մեր. Ենդեմը համարում և «կանացի սեռի համաշխարհային պարտությունը», «Ծղամարդը իր ձեռքն առաջ նաև տան զնիավարությունը,—ասում և նա, —կինը ստորացվեց, ստրկացվեց, դարձավ լոկ նրա ցանկությունների հարճը և յերեխա ծնելու գործիքը կնոջ այդ ստորացված վիճակը, վոր բացարձակորեն յերեան և գալիս հատկապես հույնների հերոսական շրջանի և ավելի ևս դասական շրջանի ժամանակ, հետզհետեւ գեղազարդվել և ու կեղծիքով սքողվել, տեղատեղ նաև ավելի մեղմ ձև ընդունել, բայց իսպառ չե վերացել»^{*)}։

Ահա վորտեղից և դալիս տղամարդու գերիշխանությունը կնոջ վրա, կնոջ ստրկական վերաբերմունքը դեպի իր ամուսինը նույնիսկ Շեքսպիրյան եպոխայում, յերբ նրա հերոսուհիները զիտակցորեն «աւեր» և «հրամայող» են անվանում իրենց ամուսիններին, Այդ գերիշխանության հետ և կապված սեփականության դգացումը կնոջ նկատմամբ, վոր մարմին և արյուն դառնալով տղամարդու մեջ, դարերի ընթացքում նա փոխազդել և կնոջ վրա, և այսպիսով խանգիբ դգացումը դարձել ընդհանուր թե տղամարդու և թե կնոջ մեջ։ Ավելի, ինարկե, բուռն ու վայրենի՝ տղամարդու մեջ։

Ոթելոյի մեջ այդ դգացումը անկատկած մի աստիճանով ավելի զորեղ և արտահայտվում, քան ուրիշների, այսինքն ավելի, քան վոչ մավրերի ու վոչ-աֆրիկացիների մեջ։

^{*)} Ֆր. Ենդեմ. «Ընտանիքի, մասնակոր սեփականության յիշ պետարյան ծագումը». Պետքառ, Յերևան, եջ 64, 1932.

Ահա մեր առաջն և Շեքսպիրի Ոթելոն:

Ոթելոն ուղղամիտ, պարզամիտ մի մավր և թեպետ յերկար ժամանակ և տպրել յեվրոպական միջավայրում, բայց նրա հոգեկան կյանքը ոտար և մնացել յեվրոպացու հոգեկան բարդությունից, նա ուղմիկ և, իր կյանքի խոշոր մասը անց և կացընել պատերազմի դաշտում, անվերջ կորիներում, ունեցել և աղետալի ձախորդություններ, թշշնամու ձեռքը գերի յե ընկել, ծախվել, փրկանքով աղատվել կրկին զրավել զորավարի պատվավոր դիրքը, Դաման, բիրտ սկայմանները վրանապատ դաշտերում չեյին կարող կոշտ դժեր չմացնել նրա ընավորության մեջ, «Կոշտ և խսութիւ մեջ,—ասում և նա Սենատում զուքսին, իր դատը պաշտպանելիս, —և խաղաղության փափկատուն վոճից իսպառ անրաժին... քիչ բանի մասին կարող եմ խոսել այս լայն տշխարհից: Յեկ այդ պատճառով դժվար թե դատիս հրապույր ընծայեմ»:

Նա ջերմ կերպով սիրել և Դեղղեմոնային, ամբողջ եյությամբ կապվել նրան: Հանձին Դեղղեմոնայի նա դաել և իր նվիրական զգացմունքների արձագանքողին, մի ընկերակցի, վոր ընդունակ և հասկանալու իրեն նվիրված մարդու բոլոր ապրումները: «Նա ինձ սիրեց իմ կրած տանօջանքների համար,—ասում և Ոթելոն, —իսկ յես սիրեցի նրան իր ունեցած կարեկցության համար», Ոթելոյին քաջ հայտնի յեր, վոր Վենետիկի յերիտասարդներից շատերին մերժել և Դեղղեմոնան իր ձեռքը և ընտրել կյանքի ընկեր մի մարդու, վորի դեմքին մինչ այդ նա յերկյուղով և նաւյել: Դեղղեմոնային նա սիրում և ամբողջ հոգով, նրանից չզրկվելու համար նա պատրաստ և դոնել իր կյանքը: անշափ հավատ ունի դեպի այդ կինը, բարձր և գնահատում նրա մեղմ ու հեղահամբույր ընավորությունը: Յերեակայել անդամ չեր կարող, վոր բարոյական մաքրությամբ ու անսուհանան աղնվությամբ Դեղղեմոնան կարող և ընդունակ

լինել դավանանության։ Սակայն Ոթելլոյի հավատը սաւրանվում եր նրա բոլոր շրջապատողների վրա յել։

Ոթելլոն ազնիվ քնավորություն ուներ, բայց դյուրաբորոք եր, շուտ բռնկվող Մարդ ճանաչելու մեջ նա ընդունակ չեր։ Յագոյին սկզբից մինչև վերջը նա պարկեցտ ե անվանում, և դա այն ժամանակ, յերբ այդ գարշելի սպան տմեն տեսակ սրիկայություն թույլ եր տալիս Ոթելլոյի և Դեղդեմոնայի նկատմամբ։

Յագոյի դարձետությամբ սարքած ստոր դավը կասկածի մի կայծ ձգեց Ոթելլոյի մեջ, և վերջինս հավատալով նրան, կորցրեց հոգեկան անդորրությունը... Կասիոյի դեպքը վոչ մի հետանք չեր ունենա, յեթե չինեյին Յագոյի թօնավոր ներշնչութեաը։ Դեղդեմոնայի միամիտ, պարզ միշնորդությունը կասիոյի պաշտոնը վերադարձնելու նկատմամբ ովհափ ունենար դրական հետեւանք և խնդիրը սպառվեր։ Յեւ իրավ։ Ոթելլոն խոստանում ե կատարել Դեղդեմոնայի խնդիրը, ասելով. «Սքանչելի արարած, Թող կորչի խո հոդին, յեթե մի բոպե անգամ դադարեմ քեզ սիրելուց և յեթե դադարեմ՝ քառսն ու խավարը թող պատեն ինձ»։ Ոթելլոյի սքանչացումն ու սիրո այս թափը սակայն խայթում ե Յագոյին, և դավը նոր ուժ ու տենդ ստանում։ Յագոյն վերավորական, սպանիչ ակնարկներ և անում վորպես թե դավանանորեն խարված ու անարգված Ոթելլոյի պատճի շուրջը. Պարզամիտ, հավատացող Ոթելլոն հավատում ե «ազնիվ» ու «ողարկեցտ» Յագոյին։ Սկսվում են կասկածից ծնված տանջանքները. առաջ և դալիս խանդի զգացումը։ Ոթելլոյի կասկածամությունը, ծնված խանդից, անրաժան և նրա վճռողականության հետ։ Յեթե կասկածը ամենափոքր փաստով ամրապնդվեց, տպա նա պիտի վճռական քայլ անի։ Այդ և տսում Ոթելլոն Յագոյին։ Սակայն այդ զբույցը փաստական ապացույցի մասին տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ գեռ ավերիչ խանդը իր թունոտ մա-

կարդը չեր դրել նրա մեջ։ Շրջասկատողների սքանչացումն ու սիրահաճո ընորոշումները Դևզգեմոնայի նկատմամբ Ոթելլոյին չեն հուղում։ «Վոչ վոք ինձ խանդոս չե կարող դարձնել, — նկատում ե նա, — ասելով, թե կինս գեղեցկուհի յե, սիրում ե ճաշ, ընկերություն, ազատ խոսում ե, զիտե լավ յերգել, նվազել, պարել։ Դնողնմօնայի ոեփական վերաբերմունքն ե, ստարացումը, վոր կարող ե տակն ու վրա անել նրա հոգին։ Ահա ինչիցն և սարսափում Ոթելլոյն «Վոչ, Յագո, — ասում ե նա. — պետք ե կասկածից առաջ մի բան նկատեմ, կասկածից հետո՝ ովետք ե հաստատեմ, իսկ հաստատելուց հետո՝ թող դուրս կորչի իմ հողուց և խանդը և սերբ։ Սակայն պարզամիտ Ոթելլոյն, վոր մի վայրկյան առաջ չեր ուղում կասկածել անդամ իր կնոջ մըրա առանց հաստատված ապացույցի, աննկատելի կերպով ընկնում ե չարախոս Յագոյի աղջեցության տակ, նրա խոսքերը ընդունելով իրեն փաստ, Յագոն անմիջապես հիշեցնում է Բրաբանցիոյի խոսքերը, թե հորը մոռացող կինը ընդունակ կլինի մոռանալու նաև իր ամուսնուն, վորով առիթ և տալիս Ոթելլոյին ընկնել ավելորդ մտահոգությունների մեջ։ Յագոն ճիշտ և հասկացել Ոթելլոյի թույլ կողմը. «Մավրը այնքան պարզ ու բարեհօգի մարդ ե, — ասում ե նա չարախնդացորեն, — վոր ամեն մի աղնիվ ձևացովի՝ աղնիվ և համարում. նրան կարելի յե թեքել ամեն կողմ այնպես, ինչպես հիմար ավանակի։ Նա ըավական և համարում Ոթելլոյի սիրու պղտորելու համար ասել հետեյալ յերկոմիտ խոսքերը. «Ուրեմն հիմա ազատ կարող եմ անձնիվրությունս ու սերս ցույց տալ... յես դեռ չեմ խոսում ապացույցներից. աշքներդ բացեք ձեր կնոջ վրա... Ենս չեյի ուզի, վոր ձեր վեհանձն ու ազնիվ սիրաը իր բնածին բարության համար շահագործվի...», Ոթելլոյի պատասխանը, թե նա «ընդմիշտ յերախտապարտ ե» Յագոյին, արդեն ապացույց ե, վոր ինքը ամբողջովին դարձել ե սրիկայի ձեռ-

քին դործիք, Ոթելլո՞ն փորձում և աղատվել նրանից, մասնավանդ իր բուռն սերը դեպի Դեղդեմոնան, անհերքելի ապացույցների պակասը, Դեղդեմոնայի անկեղծություն արտահայտող արտաքինը վորոշ չափով զսպանակ եր նրա համար: «Ցեմին համոզվեմ, — ասում ե նա, — վոր ըազնս վայրիացել ե՝ թեկուղ իմ սրտի լարերից լինեն նրա կապերը, զարձյալ սուլելով կարձակեմ նրան դեպի հողմն ի վար, գնաթող կրկին իր բաղդը վորսաւ: Ցեմ մի վայրկյան կարծես փորձում և գանել Դեղդեմոնայի համար արդարացուցիչ հանդամանքներ: այն, վոր ինքը «արդեն իշխում ե ծերության ձորը՝ թեպետ վոչ շատ», վոր ինքը սկամորթ ե և շատ բանով ստար՝ ուրիշ դաստիարակություն ստացած յերիտասարդ կնոջ համար: Բայց դա ինարկե նրան չե հանգըստացնում: Խանդը ամուր նստել ե նրա մեջ և անընդհաա կրծում ե նրա միտքը: «Մեկ մտածում եմ, — ասում ե նա Յաղոյին, — վոր կինս ամեն ե, մեկ վոր անմեղ չե, մեկ մտածում եմ, վոր զու պարկեշտ ես, մեկ վոր պարկեշտ չես, Ապացույց պետք եւ նրա անունը, վոր Դիանայի դեմքից անքիծ եր, այժմ մրուտ ե, այժմ սկ ե ճիշտ իմ դեմքի պնա... Պետք ե համոզվեմ...»:

Յագոն ամեն բոզե պատրաստ ե «համոզելու»: Ցիւնիկ ակնարկներով նա աշխատում ե շարունակ բորբոքել մամիչի ուղեղը: Նա գիտե, վոր խանդը՝ ուղա այն ճիշտաղն և կանուչ աչքերով, վոր ինքն ե ստեղծում այն կերակուրը, վորով մնջում եւ: Ցեմ ավերիչ զգացման հուրը ավելի սաստկացնելու համար նա ստիպում ե նրան պատկերացնել Դեղդեմոնային կասիոյի հետ անկողնում, պատմում ե լրբարեն, թե այդ մասին ինքը կասիոն հայտնել ե իրեն, իրը և մտերիմ ըարեկամի Ցեմ խանդի թույնը արագությամբ կատարում ե իր ներգործությունը: Ոթելլո՞ն, տարված իր կասկածներով, առանց վորսե ապացույցի, հնարավոր ե համարում դավաճանությունը, վորովհետեւ գեղեցիկ ու յերիտա-

սարդ Դեղդեմոնայի համեմատությամբ ինքը մի սևամորթ, տգեղ, հասակն առած տղամարդ եւ և անընդունակ «քաղցրախոսելու», ինչպես Վենետիկի աղնվական ասպետները: Նա անիծում եւ այն ամուսնությունը, վոր տղամարդուն փոքր իշխանություն անդամ չի տալիս տիրելու կնոջ բովանդակ զգացմունքներին, կրքերին: «Ավելի լավ կլիներ, — տուում ե նա, — ապրել իրեւ դորա՝ բանտի խոնավուցյան մեջ, քան կասկածել, թե այն կուրծքը, վորին դու սլաշտում ես, իր մեջ թաղցնում ե ուրիշի սիրո մասնիկը»: Թեև կասկածն ու խանդը «աղնիվ ու պարկեցա» Յագոյի շնորհիվ փոթորկում են Ոթելոյի սիրոք, բայց նա զգում ե, վոր ապացույցները պակասում են, ուստի նա նման զրույցներից մեկի ժամանակ բորբոքված՝ բուռն կերպով հարձակվում ե Յագոյի վրա, սեղմելով նրա կոկորդը և պահանջելով՝ կամ հրաժարվել կյանքից: Յագոն զգալով հնարավոր վասնդի մեծությունը իր վերաբերմամբ և տեսնելով, վոր շատ հեռու ե գնացել և նահանջի մասին մտածելն անդամ արելուրդ ե, վճռում և դնալ մինչև վերջ: Նա հնարում ե թաշկենակի պատմությունը: Ոթելոյի առաջին նվերը Դեղդեմոնային՝ մի ասեղնադործ թաշկինակ, — վոր ստացել եր մաքրը իր մորից, վորպես թանգագին ավանդ, վորպես թալիսման, — Յագոյին աջողվում ե գողանալ Դեղդեմոնայից (Եմիլիայի միջոցով) և պրովոկացիոն կերպով նետել այն հասսիոյի սենյակը, Այս «ապացույցը» լցնում ե Ոթելոյի խանդի բաժակը: Պղտորված գիտակցությամբ և ծայրահեղորեն դրգոված, նա պահանջում է կնոջից իր թաշկինակը, և դա այն ժամանակ, յերբ անտեղյակ Դեղդեմոնան միամտորեն շարունակում եր խնդրել ամուսնուն՝ ներել հասիսյին, քանի վոր Ոթելոյն բազմիցս սպավել ե կասիոյի սիրալիր բարեկամությունից: «Ճուր թաշկինակս... թաշկենակս... թաշկինակս, — զժռում ե Ոթելոյն և անկարող զըս-

պելու ներքին հրդեհը, կատաղած թողնում և Դեղղեմոնացին հեռանում Ոթելլոյի միտքը մռայլվում, կուրծքը յեռում և սև վրեժինդրությամբ, «Անհուն դժոխքից բարձրացիր և դուրս նետվիր, սև վրեժինդրություն» — բացականչում և նաև «Սիրո պատկն ու գահը» նա այժմ փոխարինում և անզուսպ չարությամբ, Խանդի կույր կիրքը արագորեն լափում և Ոթելլոյի սիրտը, Պարզ ե, թե ինչու այս բոլորից հետա Յագոյի ցինիկ պատկերացումները Դեղղեմոնայի և Կասիոյի «Հանցագոր» հարաբերությունների մասին Ոթելլոյին ձգում ևն ջղային դաշարումների մեջ և ուշաթափ անում նրան:

Յագոն վոչ մի վայրկյան չե հեռանում նրանից, վորուսպի չխորտակվի իր կառուցած նենգության շենքը: Մուլուցնած Ոթելլոն այժմ հանդիս և գալիս իրեն իսկական մի վայրենի, մի բոցավառ աֆրիկացի, զուրկ փաստերը վերլուծելու տարրական շնորհքից:

Սկզբից մինչև վերջը անզույշ, մինչև վերջը «միակնանի» անխտիր բոլոր շրջապատողների նկատմամբ, նա չունեցավ և ընդունակ չեր ունենալու այնքան զգաստություն, վոր գեթ ուրիշների միջոցով քրքրեր Յագոյի վորոգայթի հիմքերը: Նա ուզում եր «համոզվել», բայց իրական փաստեր վիճակներու դիտակցություն չուներ:

Հանձին Ոթելլոյի Շեքսպիրը տվել և Համլետի ճիշտ հակապատկերը: Մեկը—Համլետը—պահանջում և ապացույց ներ, փաստերի ստուգում, և դանդաղում ե, վորպեսզի սխալ չգործի: Մյուսը—Ոթելլոն—սւզում և համոզվել բայց ստույգ և անստույգ փաստերի մեջ խարություն դնել չգիտե, զուրկ և համլետյան խոհականությունից: Ոթելլոն շտապում և հանել իր վճիռը Դեղղեմոնային սպանելու, բայց միննույն ժամանակ հուսահատված ե, լքված, հողու մեջ զգում և անհուն դատարկություն: Առանց Դեղղեմոնայի կյանքը նրա համար կորցնում և իր արժեքը:

Յեմե յերկինքը, — տառւմ և նա, — ուզեր փոքձել ինձ պատռւնամներով
տմնեն տեսակ ցավ ու անարդանք տեղար մերկ զլխիս,
խորասուզեր ինձ մինչև շրթունքս աղքատության մէջ,
գերության տար ինձ, և վերջին հույսս պատրանք դարձներ, —
դարձյալ իմ հոգու մի խորշիկի մեջ
յես համբերության մի փոքրիկ կաթիլ գտած կլինեյի.
Բայց վայ. ինձ դարձնել մի անշարժ արձան,
վոր անարգանքի ամբողջ աշխարհը
իր գանգաղաշարժ մատովը ցույց առ, —
լով յես զրոն ել կանգութեյի:
Բայց այնաեղ, ուր սիրոս ավանդ եմ դրել,
ուր կյանք եմ դրել, և առանց վորի ինձ մահ և սպասում.
այս իսկ աղքյուրը, վորից ըղիում և կյանքիս հոսանք,
ինձ համար այլևս պետք ե ցամաքի,
կամ թե պահի այս վորտես մի ճանին զաղիք սողունի,
վոր այնուզ զուգին և սերունդ ընթան. —
գունառմիր այստեղ, ով համբերություն,
ով դու վարդաշուրթ մատաղ քերովը,
և մռայլ դարձիր — ինչորս զժոխը:

Այս հատվածը մենք բերինք մատնանշելու համար, թե
վարքան բարդ ե ներկայացրել Շեքսպիրը խանդով բորբոք-
ված Ոթելլոյի հոգերանությունը, վորքան հարակից զգաց-
մունքներ ու պատկերացումներ շերտերով նստում են նրա
գիտակցության մեջ ու ստեղծում վողբերգական դրություն։
Յեկ այդ բարդության մեջ վարքան կաշկանդում, վարքան
նախապաշարմունք ու բրտություն կա:

Ոթելլոն դավաճանորեն խարված ե համարում իրեն,
Հանձին Դեղղեմոնայի նա վոչ միայն մի սոսկ կին և կորց-
նում, այլ այն անփոխարինելի հոգեկան անոթը, վորի մեջ
նա դրել ե իր սիրտը, կյանքը և առանց վորի նա պետք ե
մահ ընդունե. վոտնահարված ե համարում իր պաշտամուն-
քը, անարգիված հավատը, Այժմ նրա ներքին աշխարհին
տիրում ե սպանիչ դատարկություն, դատապարտվածի խոր
անձկություն։

Այդ ապրումների ժխորում Ոթելլոն կատարում և իր վաճիրը՝ Սպանվում և անմեղ Դեղդեմոնան, սիրո վերջին խոսքներն անգամ ուղղելով ինքնամոռացության մեջ ընկած ամօւնուն: Այժմ և խակապես ամեն ինչ քառս դառնում Ոթելլոյցի համար: Կորցնելով Դեղդեմոնային, նա կորցնում և իր դոյցության իմաստը, ինչու ապրի: Յեզի իրավ. Ոթելլոն իրեւ սոսկ մի վայրենի ու չար կմնար մեր աշքում, յեթե այդ ըուրարից հետո չունենար նման ծանր վողբերգության ապրումներ: Վաչ միայն դործած վոճիրը, վորպես այդպիւ սին, հուսահատեցրել և նրանու Անմեղ կնոջը սպանելուց առաջացած խղճի խայթը չե միայն, վոր նրան ստիպում և զրկվել սեփական կյանքից: Դեղդեմոնան նրա սրբությունն իր, «Յետ սիրում եմ նրան, —ասում և նա, —այլապես ամեն ինչ քառս եւ: Յեզի ահա այդ սրբությունն այլևս չկա. կարգած և սիրո աղբյուրը, խանդի մանգաղով պոկլած և դեռափիթիթ վարդը, Ոթելլոյի կյանքը դարձել և մի մռայլ խառնաշխոթություն: «Գրեցեք նրան (սենատին), —ասում և վենետիկի ներկայացուցչին Ոթելլոն՝ Դեղդեմոնայի տակառին տաք դիմակի տաջե, —վոր յես մի մարդ եյի, վոր սիրում եյի խելազարի պես, սիրում եյի բոցավառ սիրով. վոր հեղաւթյամբ խանդոտության չեյի հասնում, բայց հասնելով նրան՝ այլևս սահման չեյի հանաչում: Գրեցեք, վոր յես այն հիմար հնդիկի նման՝ զեն ձգեցի մարգարիտը, վոր իր տեսակում ամենաթանգաղինն եր իմ ամրող յերկրում, վոր այժմ իմ արցունք չիմացող աչքերից արցունքը հօսում և նույնքան առատ, վորքան խեժը Արարիայի ծառերից: Գրեցեք այդ ամենը և ավելացրեք, վոր յես մի անգամ Հալեպում, տեսնելով վայրենի մի արաբի, վորը հասարակապետությանը հայհոյելով՝ ծեծում եր մի զենետիկցու, ըռնեցի այդ թլիատիված շան կոկորդից և խրեցի նրա սիրու այս սուրս՝ ահա այսպես: Յեզի սուրը խրում և իր սիրաբ:

Դեղղևմոնայի գալաճանության կասկածը Ոթելլոյին ստիպել եր հրաժեշտ տալու և՛ հոգեկան անդրբռնթյան և ոլտտերազմին, և ձիաների խրինջյունին, և զենքի շառաշին», Բայց նրա իրական կորուստով, այսինքն Դեղղեմոնայի սպանությամբ, Ոթելլոն հրաժեշտ պետք և տար նաև իր կյանքին:

Ոթելլոյի պատկերը կերտելիս Շեքսպիրը վերցրել է այդ տիպը վերջինիս միշավայրի բազմակողմանի պայմանակերում: Հանճարեղ շտրիխներով նա տվել է իր դասակարգի հասարակական-ընտանեկան կոնֆլիկտի պատկերը, հերոսների ընդհանուր մտավոր-բարոյական մակարդակը, նըրանց հոգեբանությունը, և այդ բարդ յերեսույթների շրջանակում՝ Ոթելլոյի կերպարանքը, վորը լիարյուն և, խորը, բազմակողմանի:

Ի պատիվ Շեքսպիրի՝ նրա Ոթելլոն, չնայելով իր սեփամորթ ծագման, ավելի բարձր բարոյական նկարագիր ունի, քան յեփրոպական քաղաքակրթության ներկայացուցիչները նույն պիեսում: Շեքսպիրը այնպես և կերտել իր Շլրելլոն, վոր թվում և, թե նա նպատակ ել չունի վորեւելոցիալական խնդիր գնելու. թվում և, թե նա կամենում է միմիայն տալ ճշմարիտ իրականությունը թանձր գույներով, գույների բոլոր յերանգներով, Յնգրակացությունը թողնում և ընթերցողին կամ վողբերդության դիտողին, Յուրաքանչյուր եպօխա իր դասակարգային իդեոլոգիայով սեփական բացարությունն և տվել պիհսին: Մեզ համար Շեքսպիրի այս վողբերդությունը մնում և վորպես խիստ այժմեական գործ Խորհրդային բնմազրողը ի միջի այլոց կարող և հետեւել մի նպատակի: ցույց տալ թե վարն և այն սոցիալական կազմակերպությունը, վոր ծնում և Ոթելլոներ և սպանում նըրանց:

Դիտեցեք այժմ Յակոյին, վորը նույնպես համաշխարհային գրական հանրածանոթ տիպ եւ, Շեքսպիրը նըրան դուրս և

ըերել վորովես մարմնացումն չարանենգության և ստորության Բայց ոժաված և խելքով, սուր դատողությամբ և կարուի լեզվով։ Նա ևս իր չափով և չափում բռլորին, ինչու ուն Ոթելլոն, բայց նրա չափը զգվելի չափ է, նա չե հաշվառում մարդկանց, սառը և համարում անխտիր բռլորին. ազնվությունը հիմարություն անվանում, Ստոր կարծիք ունի և՝ իր կնոջ՝ Նմիլիայի մասին, և՝ Դեղղեմոնայի, և՝ Ոթելլոյի, և՝ Կասիոյի։ Թերահավատ և, հոռետես՝ կյանքի նկատմամբ, ստորհոգի՝ իր շրջապատողների նկատմամբ։ Արդյոք մեզավոր և Դեղղեմոնան. դա նրան քիչ և հետաքըսաքրություն. բավական և, վար նա վատ, հոռի կարծիք ունի բռլոր մարդկանց մասին, Յեթե այսոր Դեղղեմոնան մաքուր և անսեղ և, մտածում ե նա, վաղն անկամակած պիտի վոխվի, զավաճանի մավրին ու անձնատուր լինի գեղեցկադեմ Կասիոյին։ Միթե անհնարին բան եւ

Յազն զարմանալի վարպետություն ունի խոսքով ազգելու մարդկանց վրա։ Իր մի քանի խոսքերով նա զրեթե խենթացնում և Բրարանցիոյին, վորին տակավին հայտնի չեր իր աղջկա՝ Դեղղեմոնայի զաղանի ամուսնությունը Ոթելլոյի հետ։

Դեղղեմոնայի կողմից մերժված Ոթելլիգոյին նա գըրպառում և ծերունի Բրարանցիոյի և աղջկա դեմ, յերբ հայտնի յև ղաւնում, վոր մավրի հետ և ամուսնացել Դեղղեմոնան։ «Վնա,—ասում ե նա Ոթելլիգոյին,—դուրս կանչիր աղջկա հարք, ղարթեցրու քնից, և հետո ընկիր մավրի հետեից. լեղի դարձրու նրա բերկրանքը. խայտառակ արա փառցների մեջ, Գրգուիր աղջկա ազգականներին... կանչիր սարսափի շեշտով և անազոչով...»։

Սահման ե նրան գոռալ ամբողջ ուժով, խել ինքը կատարյալ հավար և բարձրացնում. — «Զարթիր, Բրարանցիո, հնեց, գճղ, գռղ, գմղ. մտիկ տուր տանդ, և աղջկանդ, և քահներիդ. գճղ, գռղ և յնկել... Ամհթ քեղ, վեր կաց,

վերարկուած հաղիբ. սիրտդ պատռել են և հոգուզ կեսը փախոցին, տարել են. հենց այս բողեջիս մի սև պառագ խոյ ցատկել և ճերմակ զառնուկիդ վրա ու խեղղում և նրան իր գրկում։ Մթության մեջ արտասանվող այս խոսքերը ասեղի նման ծակոտում են շշկված ծերունու սիրտը։ Ծերունուն ավելի պատռհասելու համար, Յագոն շարունակում է մթության մեջ. — «Ենչպես յերեսում և, դուք կկամենայիք, վոր ձեր ազջիկը դուգակցություն ունենար արարական յերիվարի հետ, և դուք խրինջացող թուներ ունենայիք, արագավազ ծիաները ձեր յեղայրները լինեյին, իսկ յարդաները ձեր յեղրորդորդիքը։ Յեզ յերը շշմած ծերուկը հարցնում և, թե ոչ և այլտեղ գոսում, Յագոն նույն կարուկ և ցինիկ յեղանակով շարունակում և. — «Յես մի մարդ եմ, վոր յեկել եմ ձեզ հայտնելու, թե ինչպես այս բողեջիս ձեր ազջիկն ու մավրը միասին յերկիթիկունք կենդանու պաակելը ևն ներկայացնում»։

Իր ճիշտ բնութաղիքը Յագոն ինքն և տալիս «Եմ բնավօրությունն և այլպես, —ասում և նա, —ամեն բանի մեջ յնս միայն վատն եմ վնատում. կասկածների հիման վրա յես հաճախ սաեղծում եմ դոյցություն չունեցող հանցանքներ։ Մի այլ տեղ նա ասում և Ոթելլոյին. «Բայց ազաշում եմ... գուցե սխալ են յենթադրություններս. և պետք ե ասեմ, թե մի ախտ և դա իմ բնության մեջ՝ հանցավոր բաներ տեսնել ամեն տեղ. և իրավ, հաճախ կասկածուածքս միտքս մեղք ե համարում բաներ, վոր մեղք չենք։ Սակայն Յագոյի այս խոսանվանությունը անհնականք և անցնում խանդից կուբացած Ոթելլոյի համար։

Յագոն անսիրտ եգոխատ ե. Նբա համար մարդկային կյանքը, բացի իր սիփականից, վոչ մի արժեք չունի Նա կամենում և ստանալ Ոթելլոյից լեյտենանուի պաշտօն և դրա համար պատրաստ և նույնիսկ վոչնչացնել կասխոյին։ Նա վորոշել և պատճել Ոթելլոյին, վորին նա ի միջի այլոց

կասկածում եւ իր կնոջ հետ անցյալում ունեցած իրք հանցավոր հարաբերության մեջ, և դրա համար կաշխատի ձեռք ձգել Դեղդեմոնային: Իսկ յեթե դա չհաջողվի, այն ժամանակ նա մի այսպիսի թակարդ կլարի, վոր մի անգամից կվաչչացնի իր ճանապարհի վրա կանգնած թե Ոթելլոյին և թե Կասիոյին, չի խնայի նաև Դեղդեմոնային, վորի անմնպատճյանը նա չե կասկածում, Ոթելլոյի և Կասիոյի դեմ լարմած և Յագոն, վորովհետեւ համոզված ե, վոր իր արժանիքի համեմատ Ոթելլոն չե վարձատրել նրան, իսկ կասիոն բանել և նրա տեղը:

Յագոն քննադատող խելք ունի և մեծ թափանցողություն: Այդ բանը նա ինքը գիտակցում եւ և այդ գիտակցությունն առավել չար ու վատ և դարձնում նրան: Իր առավելություններով հանդերձ, նա մնացել է վորպես ստորին պաշտոնյա: Իր ասելով նա ըաղմաթիվ ծառայություններ և մատուցել մավրին, քաջություն և ցույց տվել ուզամի դաշտում: այնուամենայնիվ Ոթելլոն նրան լեյտենանտ չե դարձրել, այլ զիջելով կողմանակի մարդկանց միջնօրդության՝ պաշտոնը տվել և կասիոյին, վորը ըստ Յագոյի, տվելի շուտ հաշվետար ե, քան զինվորական: Յագոն հոռեանս և կյանքի նկատմամբ, վորովհետեւ կյանքում ռառաջիններին յերկրորդները չեն հաջորդում, այլ կյանքի մեջ հայտնի դիրքեր զրավողը անընդունակներն են: Զկա անհատական արժանիքի գնահատություն, այլ կա տիրողների անձնական տրամադրությունն ու քմահաճույքը: Այս բոլորից հետո կարմազ եմ յես հարգել մավրին, հարցնում և Յագոն Ռուգրիդոյին:

Յագոյի հոռեանտեսությունը կյանքի նկատմամբ ըղխում և նրա անձնական նեղ շահերից, և դրա համար եւ լինելով կյանքից դժգոհ և ընդհարվելով նրա պակասավոր կողմերի հետ, նա չե հասնում սոցիալական անարդարության գաղափարին: Վորպես նոր բարձրացող գասակարգի հասարակու-

թյան անդամներից մեկը, նա համոզված է, վոր ռամենքը սեր լինել չե՞ն կարող»։ Մառա լինելը անխօսաւիելիուրուն է։ Բայց յերկու տեսակ են ծառաները։ Կան ծառաներ—ասում ե Յագոն, վորոնք ստրկորեն մաշում են իրենց կյանքը տիրոջ գուանը, ծառայում ռափանակի պես՝ լոկ կերի համար», իսկ ծերության հասակում փողոց շպրավում, նման ծառաների թշնամին ե Յագոն։ «մարակել պետք ե այդ տեսակ պարկեցած ծառաներին», բայց կան ուրիշներ, վորոնք պաճուճմիւծ հակառարմության տեսք ու ձևերով՝ սրաով իրենց են միայն նոյիրված։ Այդ կարգից ե ինքը Յագոն։ «Նրան (մավրին) ծառայելով, ասում ե նա, յես ինձ եմ ծառայում, լոկ շահիս համար. յես այն չեմ, ինչ յերեսում եմ, ձիշտ ինքնարնորոշում։ Յագոն արտաքուստ այն չե, ինչ վոր ե ներքուստ։ Արտաքուստ նա պարկեցած ազնիվ ե և նման մարդու համբավ ել ունի, իսկ ներքուստ չարիք նյութող ե իր զոհերի համար, վորոնց բնավորությունը զարմանալի վարպետությամբ ճանաչել ե, Կապիտալի կուտակման շրջանի անխօսափելի ե բնորոշ ախալերից ե Յագոն, դիշատիչ և եղոխստ։

Յագոյի կարծիքով, չկա սեր, չկա Շմարդավարություն, «առաքինություն», «լավություն» և նման հարաբերություններ, Աերը նրա հասկացողությամբ զուտ բիոլոգիական յերեսույթ ե. անասնական մակարդակին հավասար, «Աերը, — ասում ե Յագոն, — արյան տոփանք ե և կամքի թուլություն», Անկարելի բան ե, վոր Դեղդեմոնան յերկար շարունակե մավրին սիրել։ «Թունդ կպավ մավրին, թունդ ել պոկ կգա»։ Այդ նրա համոզմունքն ե, ոչենց վոր մավրի մարմնից կշտանա, ինքն իր ընտրությունը սխալ կհամարե. փոփոխություն ե պետք, փոփոխություն։ Դեղդեմոնան զեղեցկություն ե, իսկ «գեղեցկությունը պետք ե գործածիք»։

Ի՞նչ ե «բարի անունը».—հարցնում ե Յագոն։ «Անուն ասածը մի անմիտ խաբեյություն ե, վոր հաճախ շահվում ե

առանց արժանիքի և կորչում և առանց հանցանքի: Դուք վոչ մի կերպ ձեր անունը կորցրած չեք լինի, յեթե ինքն ներդ կորցրած չհամարեք այնք:

Յազնն ցինիկ և և վավաշոտ: Մանավանդ, յերբ խռովում և Դեղդեմոնայի մասինու Փորձել և մոտենալու Դեղդեմոնային, բայց գունչը խաղողին չև հասնելու Վկոչինչ չի կարող սիրաս հովացնել, —ասում և նա, —մինչև նրա հետ (մավրի) հաշիկս չփակնեմ. կնոջ աեղ կնիկա, Կասիոյի և Դեղդեմոնայի մի մուլորական քաղաքավարական հրաժեշտի ձեռք սեղմելու մեջ նա տեսնում և հանցավոր հարաբերությունն ու Շերս բություն, ձեռքս վկա, —ասում և նա. —զու առաջարանն ե և մութ նախերգանքը վկաի ու խենեց մտքերի... Կեղուոտ մաքնի, Ռողբինզո. շնոր այս փոխադարձ մտերմությունները ճամբա յեն բաց անուամ, անմիջապես յետեից գալիս և զըւխավորը, մեծ մարզանքը —մարմանական վերջարանը... ։ Ութելլոյի մասին խոնելիս նույն ցինիկ պատկերացումներով և հիշում Դեղդեմոնային, «Ոթելլոն իր խելքն ու միաքը տվել և իր կնոջ հատկություններին ու շնորհքներին, և բան ու գործ չունի, բայց յեթն նրանց դիտելը զննել և պաշտել»...

Մի վայրենի հրճվանք և դպում Յազնն, յերբ չարիք և նյութում ուրիշների համար: Լինելով հոգերան, նա շատ նուրբ յեզանակներ և գործադրում դոհին իր կողմը թեքելու, նրա վստահությունը ապահովելու և ապա իր մահացու հարվածը հասցնելու համար: «Տեր իմ, —զիմում ե նա Ոթելլոյին, նրա սիրաը թունավորելուց առաջ, —դուք դիտեք, վոր սիրում եմ ձեզ: Ու սկսում ե նախ թեթև կասկածներ հայտնել կասիոյի մասին, բայց անմիջապես ավելացնում ե. բրայց աղաչում եմ... զուցե սխալ են յենթագրություններս: Յեկ յերբ նկատում ե, վոր Ոթելլոյի հուզվող սիրաը մի փոքր հանգստանում ե և խանդը բորբռքելու հնարավորությունը թուլանում, իակույն ավելացնում ե. «Բարի անու-

նը, ազնիվ տեր, մարդու... և կնոջ համար ամենից ազնիվ գոհաբն և հոգու. ով վոր քսակս գողանա՝ քիչ բան գողացած կլինի... բայց ով անունս շորթե՝ մի բան կշորթե, վոր բնավ գողին չի հարստացնի, բայց ինձ կաղքատացնի».

Այսօանը բավական եր, վոր Ոթելոն անհանգտություն զգար, վիրավորվեր սրտի խորքում, սկսեր կնոջ վերաբերմամբ մութ կասկածներ սնել և պահանջնել Յագոյից «Հայտնել իր մտածումները»:

Յագոն արդեն զգում ե, վոր թույնի առաջին կաթիլը թափել ե, Յեվ վորպես թե խնայելով տիրոջը ավելացնում ե. «Ո՛հ, տեր իմ, զգույշ խանդոտությունից... վողորմած յերկինք, փրկիր խանդոտությունից իմ բոլոր տահմը»: Յեվ այսպես իր «լարորատորական» աշխատանքի ամբողջ ընթացքում Ոթելոյի վրա Յագոն մի քանի անգամ զիմում է նրան. «Տեսնում եմ, վոր այս խոսքը ձեղ մի քիչ հուզեց»... «Տեր իմ, տեսնում եմ վոր վրդովված եք»... «Շատ աղաչում եմ, վոր ներսող լինեք այսքան սաստիկ ձեղ սիրելուս համար...»: Յագոյի այս թեթև «նահանջները» ավելի ելին զրդում Ոթելոյի հետաքրքրությունը, ավելի խորացնում նրա վերքը. Նրա մեջ այդ գծի արտահայտման գերադրական աստիճանը ոկտոք և համարել այն տեսարանը, յերբ Ոթելոն ծունկ և չոքում ու յերդվում սպանելու Դեղնեմոնային, Յագոն ել անմեջապես ծունկի յե գալիս ու յերդվում «իսարված տիրոջ» պատիվը պաշտպանելու... Յագոն արդեն հրճում ե իր հաղթանակով. Ոթելոյին խանդից կուրացըել ե, մեկը մյուսից ավելի ցինիկ պատկերներ շարելով Ոթելոյի առաջ՝ Դեղնեմոնայի «գավաճանությունը» շեշտող: Այժմ նա իրավունք և համարում ավելի հանդուզն խոսելու իր «սիրելի» աիրոջ հետ, Յերբ վերջինը պահանջամ և առաջույց, Յագոն բացականչում ե. «Կհրատեղից ձեղ համար աղացույց բերեմ. Յեկուզ այծերից ավելի տակոտ լինեյին նրանք, կապիկներից տաք, ջեռյած գայլերից ա-

վելի կրքոտ... դարձյալ չեք կարող ձեր աչքով տեսնել: Բայց այդ միջոցն ել դանում և թաշկինակի շնորհիվ և համոզում Ռթելլոյին ասելով, վոր եասիոն «ձեր կնոջ հետ քանից պառկել և արդեն և պառկելու յի դեռ»:

Միմիայն խոսքերով չե բավականանում Յագոն: Նա միաժամանակ գործում եւ Դավադը ություն և սարքում կասիոյի կյանքի դեմ, վերավորում նրան, իրար դեմ և հանում նրան և Ռողբիդոյին, վորից սպանվում և վերջինը՝ Գողանում և Դեղէմոնայի թաշկինակը, դադտնորեն ձգում այն կասիոյի սենյակը, անորինակ յեռանդով դրամ և կորզում տխմար Ռողբիդոյից՝ Դեղէմոնային իրը նրա ձեռքը ձգելու համար, իսկ Ռթելլոյին դարձնում մարդասպան և ինքնասպան:

Ի գուր չե, վոր Շեքսպիրի գըշի տակ անմահացած ստորհոդի, վոճրագործ և պրօվոկատոր Յագոյի դերը կատարող խոշոր դերասանների շուրջը ամրողջ անեկդոտներ հն պատմվում, վորոնց հիմքում անկասկած վորեն փաստ կա թաղնված: Պատմվում ե, որինակ, թե ինչպես թատրոնի հանդիսականներից մեկը, մի սպա, խորը աղդզած հանճարեղ դերասանի Յագոյի խաղով, ատրճանակ և արձակում դերակատարի վրա: Մի ուրիշ գեղք տեղի յե ունենում տեսրիկական մի քաղաքում, ուր «Ռթելլոյի ներկայացումից հետո իրը թե հասարակությունը խոնդում և թատրոնի մուտքի մոտ, վորպիսողի հաշիվ տեսնի Յագոյի դերը իսաղացաղ դերասանի հետ: Այլ և պատմվում և վորպես իրողություն, թե ինչպես մի անգամ քեմի վողբերգությունը վերջանում և դերասանի խսկական վողբերգությամբ: վորպես թե հանգիստականը սպանում և Յագոյի տաղանդավոր դերակատարին, Սպանողին անմիջապես Լինչի դատաստանին են, յենթարկում և թաղում դերասանի կողքին միննույն դերեղմանում, իսկ դամբարանի վրա զետեղում հետևյալ արձանա-

գրությունը. «Խոկական դերասանին և խոկական հանդիսականին»...

Յազոն խտացումն և կրկնակի չարագործության, վորովնետն սժաված և խելքով ու թափանցողությամբ, նա դերադանց վարպետ և իր հոգին թագցնելու, ուրիշինը թափանցելու, Յեվ հասկանալի յե, թե ինչու խելքն ու թափանցողությունը ավելի յեն ծանրացնում ու զիվային դարձնում կանխամտածված վոճիրը:

Այդ զրական հատկություններն ավելի յեն սրուժ չարության գործիքը. հասարակ դանակը խիրուրգի ձեռքին փրկարար միջոց և, բայց ավաղակի ձեռքին սպանության գործիք...

Դեղումոնան Շեքսպիրի սանդազործած կանացի այն տիպերից և, վորոնց նա իդեալական և համարում: Հեղահամբույր, սիրազեղ, սոմանտիկ. Նրա արաւաքին գեղեցկությունը միանգամայն ներդաշնակ և ներքին բարեմանություններին, բարեմանություններ, վորոնք ժամանակին նույնական իդեալական են համարվելու Դեղումոնայի հայքը մեծ և վեհեաբիկի յերիտասարդների շրջանում, բայց նա չել յենթարկվում նրանց զգացմունքների ազդեցության: Դա մի բնավորություն և, վոր մի անգամ սիրելուց հետո, թըվում և թե, ընդմիջու կկառչի իր սիրած առարկային, Շեքսպիրը առանձին սիրով նկարագրում և նման կանացի տիպերը: Դեղումոնան անուշադիր և թողել շատ աղնվական յերիտասարդների առաջարկությունը և ամբողջ հոգով սիրել Ոթելլոյին: Սևամորթ մամլիին նա տվել և իր սիրաը: Ինքը չափաղանց կանացի՝ զորեղ մղում և ունեցել զնալի առնական ռազմիկ Ոթելլոն, իր մեղմությամբ, սիրալիք վարմունքով նա բոլոր շրջապատողների համար յեղել և համայիշ, իսկ իր սիրուն յերգով նա ընդունակ և սասանուար չի կատաղությունը, ինչպես ասում և Ոթելլոն, նրա մյուս զծերն են հնագանդությունը, ներողամտությունը, ներողամտությունը,

անձնաղոնությունն ու անչափ բարությունը։ Նա սովորել է հնագանդ լինել ծնողներին մինչև ամուսնանալը, իսկ ամուսնանալուց հետո՝ ամուսնուն, Շեքսպիրի սիրող կանայք բույրն ել քնքուշ են, ոռմանտիկ, նվիրված, հնագանդ իրենց ամուսիններին, հնագանդ մինչև ստորկության աստիճան։ «Իմ աղջնիվ հայս», — դիմում և Դեղդեմոնան իր հօրը՝ Բրաբանցիոյին սենատորների խորհուրդում, — յիս ձեզ եմ պարտական կյանքում ու կըթությամբ, և կյանքս ու կըթությունս սովորեցրին ինձ հարգել ձեզ, Դուք իմ հրամայղն եք, հայր իս, և մինչև այստեղ յիս ձեր աղջիկն եմ։ Բայց ահա սա յի իմ ամուսինը. խնդրում եմ իրավունք տաք ինձ հավատարիմ լինել մավրին, իմ տիրոջը այնպես, ինչպես հավատարիմ եր ձեզ մայրս, յերբ բաժանվեց իր հօրից։»

Հոր այն առարկության դիմաց, թե Դեղդեմոնան առանց կտխարդության չեր կարող անձնատուր լինել մավրին, վորի դեմքին նայելիս սկզբում զազրանք եր զգում, մննք ունենք Դեղդեմոնայի հետեյալ բացատրությունը. «Ցես Ոթելլոյի հոգու մեջ, — ասում և նա, — տեսա նրա յերեսը, և նրա փառքին ու հերոսական շնորհքներին նվիրել եմ հոգիս ու բազուա... Սիրաս սիրեց նրա ռազմական դործը, շարունակում և նա։ Ցես չկամենալով յետ մնալ պատերազմի գաշտ ուղարկվող Ոթելլոյից, նա խնդրում և սենատին չթողնել նրան տանը՝ «իսպաղության մեջ ապրող ցեցի նման»։

Սիրած աղամարդուն գնալու համար Դեղդեմոնան Շեքսպիրի մյուս կանանց նման գնուական եւ Մեր ժամանականերին հատուկ գնուականությամբ նա իր հօրը կատարված փաստի առաջ և դնում։ Համորված, վոր հայրը՝ սենատոր Բրաբանցիոն յերբեք չեր համաձայնվի միակ աղջկանն ամուսնացնել սեամորթ մավրի հետ, փախչում և հոր տնից և զաղտնի ամուսնանում։ Մինչև այստեղ նա դնուական եւ իր այս քայլի մեջ ինքնուրույն։ Բայց այն վայրկյանից,

յերը նա վոտ և դնում ամուսնու շնմքից ներս, նա իր գըլ-խին ընդունում և նոր տներ», վորին պարտական և հնա-ղանդ լինել մինչև մահ: Ամուսնական հնազանդությունը Դեղիմոնայի համար այնքան բնական անխուսափելիություն և, վոր նա պատրաստ և, և գիտակցորեն, անտրու-տունջ ու անժոռունչ տանել ամուսնական խաչը: Այսուղ Դեղիմոնան գառնում և ծայրահեղորեն պաստիվ: Նա բոլո-րովին կորցնում և դիմադրելու ընդունակությունը: Չնա-յած իր միանգամայն անմեղ լինելուն, չև կարողանում մի-ջոցներ փնտռել անիրավ դաւերի դեմ բողոք բարձրացնե-լու, Անմեղ և և միամիտ: Կյանքի դառնություն զեռ չև տե-սել, գնուահաս և և անփորձ: մարդկանց չարության մասին զրեթե գաղտփար չունի: Ոթելլոյի խանդուսության պատ-ճառները նրան հասկանալի չեն, իսկ Յազոյի խարդախ գործերի վրա չի կասկտծում:

Շեքսպիրը կուտակել և այդ անոգնական և կատարե-լաղես մենակի կնոջ շուրջը ահազին արգելքներ: Նրանք խանդարում են ճշմարտությունը պարզելու, Դեղիմոնայի վորերության ամենամեծ պատճառն այլուղ և Դիտեցնք նրա շրջապատողներին: Ոթելլոն իր անզուսող խանդուսու-թյամբ և Յազոն իր վոճրապարտ սրիկայությամբ: այդ յեր-կուսն արդեն բավական են խորտակելու: համար նրա կյան-քը: Իսկ Ամիլիան, վոր նվիրված և նրան, սկզում ստորա-գույն դեր և խաղում Դեղիմոնայի կյանքում, ողողանալով նրանից Ոթելլոյի թաշկինակը և գողունի հանձնելով այն Յազոյին: Կասիոն ել, թեպետ անուղղակի կերպով, իր ան-վերջ դիմումներով Դեղիմոնային՝ բորբոքում և կրակը, ա-ռանց մտածելու, վոր յետեի դռներով՝ Ոթելլոյից ծածուկ՝ Դեղիմոնային այցելելը կարող եր կասկած առաջացնել մավրի մեջ:

Միամտություն շրջապատողների վերաբերմամբ և ծայ-րահեղ կրամորականություն սպառնացող վատնզի հանդեպ,

ահա բնորոշ դիմքը Դեղղիմոնայի: Բավական ե, վոր նա սիրում և Ոթելլոյին և իր անմնջության գիտակցությունն ունի. մեացածը նրա համար յերկրորդական եւ նույնիսկ ըաժանմինու դեպքում նա կշարունակի սիրել նրան: Այդ ամենից հետո ինչ հիմքեր ունի ամուսինը խանդիլու և վայրենի զայրույթ արտահայտելու: Նա խորը վերավորանք և զվում շանառակեց խոսքի համար, վոր դրգոված բովեյին Ոթելլոն շպրտում և նրա յերեսին, Ավելի ծանր անարգանք և սատանում, յերբ խանդից կուրացած ամուսինը ապատակում և նրան ստար հասարակության ներկայությամբ: Յեզ սակայն վոչ մի հակադրող քայլ, վոչ մի բողոք, վոչ մի հակահարդած: Յեզ վարդիսի միամտություն. վերտվորված Դեղղմոնան իր ծանր խոհերն ու սրտի ցավը պատմում և տփորձված ու «ոլարկեշտ» Յազոյին ու նրան խնդրում մեղմել Ոթելլոյի զայրույթը իր գեմ, Դա բավական չե. նա սկսում է ինքն իրեն մեղադրել առանց հաշիվ տալու, թե ինչու համար: Բայց մի ճիշտ ինքնարնորոշում և անում. ոյերը ինձ ստատամ են, մանուկ ևմ դառնումք:

Յերբ Նմիլիան, խղճահարզելով թշվառ կնոջ վրա, ասում ե, թե ավելի յերջանիկ կհամարեր Դեղղեմոնային, յեւթե ոա խսկի պատահած չլիներ մալրին, Դեղղեմոնան պատասխանում ե. «Այդ մտքիդ համաձայն չեմ. այսպես ջերմ սիրել եմ նրան, վոր նրա զայրույթի բանկումն ու կոպատւթյունն անգամ ինձ համար գրավիչ են ու սիրելի...»: Այս արդեն Դեղղմոնայի սիրտն ու հնաղանդությունը անհասկանալի ծայրահեղության և հասնում: Նա սառրանում ե, վոտնատակ դնում, Ոթելլոյի վայրագ գոռոցները լսելով հյուրերի առաջ, լուռ ու անխոս կանգնում մեղապարտի պես, ապա ամուսնու հրամանով սենյակից դուրս ընկնում, արժանապատվության դգացումը խեղդելով իր մեջ: Վրդովեցուցիչ հնաղանդություն, կատարյալ ստրկական վիճակ, կնոջ անհատականությունը, արժանապատվությունը վոտնակոխ

արված, վոչնչացված։ Այդ վիճակը խիստ ցայտուն արտահայտվում ե Դեղքեմոնայի մեջ այն ըոպեյին, յերբ մոլեգնուծ մայլը խեղդաման եր անում նրան, զիտակցելով հանգերձ իր անմեղությունը, նա բողոքի խոսք անդամ չի առում, կարծես միանգամայն բնական ու արդարացի լինելը կատարվող վոճիրը իր վերաբերմամբ։


Բարոյական մաքրության հետ Դեղքեմոնան ոժոված է նաև անհուն բարությամբ։ Նա չեր կարող մերժել կասիոյի խնդիրը, յերբ սա, զղջալով իր արածը, ոգնություն եր հայցում Դեղքեմոնայից։ Նրա համար կասիոյի խնդիրը մի գործ եր, վորին ընթացք տալը իր վրա բարոյական պարտք եր դնում կասիոյի հարցը պիտի լուծեր միմիայն Ոթելոն, իսկ սրան համոզել կարող եր Դեղքեմոնան, Խրնճը նրան պիտի անհանգստացներ, մինչև զլուխ չըերեր իրենից կախված այդ հասարակ գործը։ Միաժամանակ նա զիտուկցում եր, վոր «այսպիսի պարագաներում մարդիկ սովոր են իրենց մազգը թափել փոքրերի գլխին, թեև մեղավոր լինեն մեծերը»։ Ինչ խոսք, Դեղքեմոնայի չնշին խնդիրը առանց վորին թյուրիմացության ոլիտի լուծեր Ոթելոն, յեթե Յաղոն այնպիսի նենգությամբ չթունավորեր դյուրահավատ, իանդոտ ու անզուսպ մավրի սիրտը։

Եմիլիան, Յագոյի կինը, Դեղքեմոնայի հակապատկերն է, Նա կապված չե իր ամուսնուն, ինչպես Դեղքեմոնան։ Միրուց չե, վոր ապրում ե ամուսնու հետ, այլ վորպես հարկադրանք։ Սեր չունի, բայց վախունի ամուսնուց։ Նա պատրաստ ե դավաճանել ամուսնուն, յեթե վարձատրությունը խոշոր լինի, Հասարակ բան ե համարում դա և վոչ հանցանք։ Տղամարդկանց և կանանց անհավասարության և դրա անարդար լինելու պարզ զիտակցությունն ունի նա։ Յեթե կինը դավաճանում ե ամուսնուն, մեղավորը տղամարդիկ են, «Յեթե կանայք նամըից շեղվում են, — ասում ե նա, — ամուսիններն են միայն մեղավոր»։

Othello, last scene.

«Офелло» - последняя сцена

Отелло, последняя сцена.





Իր զբույցի մեջ Դեղղեմոնայի հետ՝ Նմիլիան տալիս ե կաշկանդված կնոջ գրության պատկերը, ի՞նչպես են վարսվում տղամարդիկ: Նրանք ուներ գանձը, —ասում ե Նմիլիան, —տանում թափում են ոտար գողերի մեջ», զրկում են մեզ աղատությունից, բռնկվում հիմար խանդից, ծեծում են կանանց, կրնատում սնունդը և դրանով պատժում, Թող լավիմունան ամուսինները, շարունակում ենա, վոր կանայք ել մաղձ ունեն, վոխ ունեն, զգացմունքներ ունեն, քաղցրն ու թթուն զանազաննել գիտեն: Տղամարդիկ թողնում են իրենց կանանց ու դնում են ուրիշների մոտ: Ի՞նչն ե պատճառը. զվարճասիրությունը, ցանկությունը, թուլությունը, —հարցնում ե Նմիլիան, «Լավ! մենք ցանկություն, զվարճություն, սեր, թուլություն չունենք, ինչպես տղամարդիկ: Թող լավիմանան, վոր «յեմե մենք վակ ենք անում, նրանց վատվարքն ե մեզ այդ սովորեցնում»:

Ահա կանանց հարցի եյությունը Շեքսպիրի ժամանակ. կենդանի բողոք կնոջ անհավասարության դեմ:

Սկզբում Նմիլիան, ինչպես ասացինք, վաս դեր եր խաղում Դեղղեմոնայի նկատմամբ, գողանալով Դեղղեմոնայի թաշկինակը Յագոյի պահանջով, «Ոթելլոն նրան (Դեղղեմոնային) յերդվեցրել ե, վոր լավ պահպանե» ասում ե Նմիլիան, —«իմ տիրուհին այնպես սիրում ե այս հիշտակը», վորովհետեւ «մավրի առաջին հիշտակն ե» և այլն: Այս ամենը գիտե Նմիլիան: Անդամ այն ժամանակ, յերբ այդ չարաբաստիկ թաշկինակը սկսում ե վտանգավոր դեր խաղալ Դեղղեմոնայի կյանքի դեմ, և այդ նկատում ե Նմիլիան. և յերբ Ոթելլոյի աղաղակներից շշմած Դեղղեմոնան դիմում ե Նմիլիային՝ չե տեսել արդյոք թաշկինակը, —նա բացառական պատասխան ե տալիս, վախենալով նենդավոր ամուսնուց: Յեկ միայն այն ժամանակ ե բաց անում գաղտնիքը, յերբ մավրը գործել եր վոճիրը—խեղղամահ արել

Դեղդեմոնային։ Այժմ միայն, թշվառ կնոջ դիակի առջև, նա մերկացնում և Յագոյի դարչելի մեջենայությունները, թաշկինակի ողատմությունը, աղմուկ բարձրացնում Ոթելլոյի զլախին՝ սապուշ մարդասպանան անվանելով նրան, անարժան՝ Դեղդեմոնայի նման աղնիվ կին ունենալու։ Սակայն այդ ամենը նրան աջողվում և անել սեփական կյանքի զնուի։ Յագոն սկզբում փորձում և լուցնել կնոջը և տուն ուղարկել բայց ապարդյուն։ այն ժամանակ կատաղորեն հարձակվում և սպանում ե նրան բոլորի ներկայությամբ։

«Որելլուն կառուցելիս Շեքսպիրը իր ստեղծագործական ֆանտազիայի առջև ունեցել և սոցիալական հարազատ միջավայրի ռեալ իրականությունը, կենդանի մարդկանց, նրանց առորյա գործողությունների խոտացումը, հոգեկան շարժումների դրդապատճառները և նկատի ունեցել հատկապիս այն բնավորությունները, նրանց զդացմունքներն ու կրքերը, վորոնք տվյալ միջավայրում կարող ելին արտահայտվել այնպիս, ինչպես նրանց վերարտադրել և դրամատուրգը, և վոչ այլ կերպ, Վողրերգության կենտրոնական դևմքը Յագոն և, վորն իր ձեռքին և պահում բոլոր գործող անձերի զապանակը, Վողրերգության փոքրաթիվ հասարակությունը իր ամբողջ կազմով նրա թունավոր փորձելը/որյեկտն և, վորոնց շուրջը և վորոնց միջոցով նա հասնում և զաղելի նպատակների։ Պիեսի գրամատիզմի ձյունագունդը, սկսած առաջին դործողությունից, զլորվում և ուլեռնանում Յագոյի ջանքերով, իր տակն առնելով նաև զլորողին։

Շեքսպիրի բազմաթիվ քննադատներից վոմանք հարցեն տալիս։ միթե Ոթելլոն չեր կարող ստուգել փաստերը և հաշիվ տեսնել Յագոյի հետ։ ինչու Դեղդեմոնան չստիպեց կատարել ստուգումը, չպահանջեց անմիջապես կանչնել կասիոյին, վորպեսզի տեղն ու տեղը պարզեց, ոթյուրիմացությունը։ ինչու վերջապես բոլորն ել յերեխաների ողեա

միամիտ են շարժվում Յագոյի շուրջը և, մինչև արյունային կատասարութը, համարում նրան պարկեցած ու աղնիվ, զիւմում նրա խորհուրդներին և այլն, ՄԲթե մինչև վերջը չեցերում մարդը, այն ել այդքան հրեշավոր իր չարագործությամբ։

Յեթե այդ «ինչուաները հենց առաջին վայրկյանից որատասխան ունենային պիեսում, ապա դրաման կվերջանար վողքերգության կեսին. ճիշտ այնպես, ինչպես դա լինում և կյանքում, յերբ նյութվող չարիքը խորտակվում և կես ճանապարհին։ Սակայն այդպիսի վերջարան տեղի յեւնենում այն դեպքում, յերբ փորձության մատնվածները միամիտ չեն, զգաս հեն, հեռածես են։ Նման պարագայում նենդության կծիկը շուտ և կտրվում և նախապատրաստվող մահառիթ ընդհարման ծրագիրը տապալվում իսկ յերբ Ոթելլուները, Դեղքեմոնաները և նրանց հետապնդող փոքր ու մեծ Յագոները ընդհարվում են կյանքի նեղ փողոցում, և առաջինները, անփորձ ու միամիտ, իրենց բախտը և նվիրական աշխարհի գաղտնիքը վստահում Յագոներին, ապա նրանց վողքերգական վախճանը գառնում և անխուսափելի։

Վորակս մեծ հոգերան, Շեքսպիրը իմացել է, թե վարպիսի ողայմաններում, իրեն հարազատ սոցիալական միջաւայրի վարդկանց և բնչի ընավորությունների ու ընօրոշանհատականությունների կյանքում կատարվում են կամ հնարավոր են նման վողերգություններ։ Այդ և պատճառը, վոր հոգրացունչ հոգինակին աջողվել և դարերի համար պատմել այդ «վողբագին անցքը» և պատմել «սրտով վողբագին», Այդ և պատճառը, վոր նրա սեալիզմը դառնում և առաջնակարգ, պարունակելով իր մեջ ձգող խորություն։

«Որելլուի մեջ Շեքսպիրը մարդկային տիպերն ու ապրումները կենդանազրել և գերազանցորեն վտառ ու բնական դույներով։ միջավայրի հոգերանությունը վերաբաղբել դեղարվեստական ճշմարտությամբ, զործողությունների զար-

դացումը և հերոսների հոգեկան շարժումների վուփոխությունը արտահայտել ստեղծագործական բարձր լարվածությամբ։ «Որելլսան տեսարաններ ունի, ուր ամեն մի արտահայտություն, ամեն մի բառ, ամեն մի աննշան շարժում, ձայն, հառաչ, անդամ պառազան հագեցած և խորին տրագիդով, վորի շնորհիվ յերեք հարյուր տարի կյանք ունեցող այդ պիեսը մինչև այժմ ել շարունակում է հուզել հանդիսականին։

«Մակրեր»:—Նրա առանձնահատկությունները վարպես դրամատիկական գրվածք:—«Վանրի» և «պատճի» քանձար պատկերացումը:—Վողբերգության ներօսները. Մակրեր. Լեղի Մակրեր:—Բնուրյունն ու վճռւկները:—Շեխսպիրի ներօսների մասնելու ընդունակությունը:—Վո՞րն և դրամատուրգի յելքը այս մռայլ պիեսում:

Համաշխարհային գրականության մեջ չկա մի պիես, ուր ունենա զործողությունների այնպիսի սրընթաց զարդացում, ինչպես Շեքսպիրի «Մակրեր»ը. Դեպքերի հախուսն թափ, պերսոնաժների գեղարվեստական նուրբ հղկվածություն, դլախավոր հերոսների հոգեբանության խոր վերլուծում, սեղմ, զտված մասերի ներդաշնակ համաշափություն, —և այդ ամենը գերազանց վարպետությամբ հպատակեցրած պիեսի կենտրոնական իդեային, —ահա այն հատկանիշները, վորոնք վողբերգությունը դարձնում են բացառիկ:

«Մակրեր»ը զերծ և շեքսպիրյան մյուս մի քանի պիեսների արհեստական կողմնըից, ուր դեպքերի ու զործողությունների շատ սուր փոխանցումը (ինչպես «Ռոմեո» և Շուլիետը, «Վենետիկի» վաճառական»ի և ուրիշն. մի քանի տեսարաններում) յերբեմն կտակած և հարուցում նրանց ճշշ-

մարտանման լինելու մասին Շեքսպիրյան եպոխայի զբեթէ բոլոր պիեսները, նույն և Շեքսպիրի գործերի մեծ մասը ազատ չեն սրախոսական մարդանքից, վորը իր ծայրահեղության մեջ աննկատելիորեն վերածվում և մնամենջ բառախաղի և թուլացնում գլխավոր գործողության տպավորությունը:

Այս բոլորից զերծ ե «Մակեբերը», յեթե չնաշլենք դռնապանի տեսարանը (2, 3), վորը դրված և շատ դուսու շրջանակի մեջ և թեպետ չունի անմիջական կապ գրամայի գարդացման ընթացքի հետ, բայց, ըստ յերեսույթին, նորատակ ունի մեղմելու նախորդ տեսարանի ծանր տպավորությունը:

«Մակեբեր»ի նյութը Շեքսպիրը վերցրել և մեղ հայտնի Ռափայել Հոլինշեդի (16-րդ դար) գրքից, վոր կրում և «Տարեգրաւրյուն Անգլիայի, Նորլանդիայի և Խոլանդիայի» վերնագիրը: Պատմական դետչերի այդ միամիտ, հեքիաթային չյուրածածքը անսպառ աղբյուր և յեղել շեքսպիրյան թևմաների համար, Նրա պատմական քրոնիկների նյութը դարձյալ այնտեղից ե քաղլած, ինչողևս նաև «Ռիչարդ յերկրորդ» և «Ռիչարդ յերտորդ» վողրերգությունների, Ռդավելով այդ գրքից, Շեքսպիրը յերբեք քննադատական վերաբերմունք չեն ունեցել այնտեղ նկարագրված պատմական դեպքերին և ժամանակադրությանը. և առանց ստուգելու կրկնել և նույնիսկ նրա վրիսպակները:

Հոլինշեդի մակրեթյան նյութը զբեթե ամբողջութիւն ոգտադրելած և Շեքսպիրի կողմից, մի քանի եյական վուգություններով ու հավելումներով, գորոնք անհրաժեշտ ե համարել դրամատուրգը իրական յերեսույթների ունեմ չմեղանչելու համար: Սակայն ինչ և նշանակում Շեքսպիրի համար «նյութը ամբողջովին ոգտագործել» ըառնըի իմաստը: Այդ նշանակում ե, վոր դրամատուրգը սպառել և նրա սյուժետային նյութը, Բայց այնտեղից դուրս կորդած ուրականկարներին նա տվել և շունչ, կենևանություն, ներշնչել

թե նա ինչպես և աստծուց խնդրում, ոյզ ինըը գիտե.
բայց տարորինակ ախտավոր մարդկանց
խիստ քստմնելի, չի ուսուցըներով և պալարներով
նա բժշկում և վզից մի գոռէն զբոշմ կախելով
և սուրբ աղոթքներ արտասանելով. և զեռ ասում են,
բռնիչ այս շնորհը նա ովտակ թուղնի իր հաջորդներին.
բացի յեղակի այս զորությունից
նա ունի նաև մարդարեսական յերկնատուր շնորհը
և զեռ շատ ձիրքեր, վորոնց խմբված են գաճի շուրջը,
ապացուցում են, թե որինյալ և նատ.

«Բարի» և արքան, ուրեմն և որհնյալ և նա, որհնյալ
և նրա պալատը, որհնյալ են և այն «Ճիրքերը, վորոնք
խմբված են նրա շուրջը»,

Իսկ «վատ» թագավորը: «Վատ» թագավորին Շեք-
սպիրը պատմում և վոչ իբրև հակառակորդ միապետության,
այլ վորպես իսկական խստաբարու մոնարխիստ, վորպես
պաշտպան միապետական «խելամիտ կարգերի»:

Կարսդու եր Շեքսպիրը արդարացնել արքայասպան
Մակրեթին: Հանճարեղ զրամատուրզը նրան պատիժ և սահ-
մանում հենց այն վայրկյանից, յերբ նա, Մակրեթը, առա-
ջին անգամ ձեռքը մնկում և դաշույնին՝ որինական թա-
գավորին սպանելու համար:

Անդուսպ ձգուումը դեպի իշխանություն Մակրեթին
դրդում և դիմել արքայասպանության: Բարի, բայց թույլ
միապետ Դունկանի հանգեց հաղթական զորավար և վա-
սասեր Մակրեթը իրեն ավելի արժանի յե համարում դա-
հին, Աջակից ունենալով թագուհի դառնալու տենչով բըռ-
նված իր կնոջը, տանջող տատանումներից հետո իր վերել-
քի ճանապարհը նա հարթում և վոճիրներով: Շեքսպիրը
Մակրեթին գուրս չի բերում վորպես մի հասարակ վոճրա-
գործ: Նա ոժուում և նրան մարդկային շատ զրական հատ-
կություններով: Նույնիսկ յերբ նրան ամբողջովին կլանում
և իշխանության տենչը, ծանր կասկածների ու տանջանք-

ների գնով միայն վճռում և կանգ չառնել միջացների առջև։ Առաջին ծանր վոճիրը նա կատարում է լեռի Մակրեթի անմիջական աջակցությամբ, մորթելով իր տանը հյուրասիրվող քնած ծերունի Դունկանին։

Յեղ այստեղ ե, վոր Շեքսպիրը, վորապես հոգերան և սուցիոլոդ, իր յերկու հերօսի ներքին աշխարհը դարձնում է մի տեսակ լարուրատորիտ, հանճարի լալտերով մուտք գործում նրանց հոգեկան կյանքի խորշերը, վերլուծում նրանց ներքին դրդիչների փոխազդեցությունը արտաքին բուռն գործողությունների վրա։ «Վոճիր» և «պատիժ», այս յերկու յերեւույթը Շեքսպիրը անխղելի յե դարձնում, «պատժի» աղբյուրը վոճրագործի ապրած անխուսափելի տադնապն ու մղձավանջը համարելով։ Յեղ վորքան մեծանում ու ծանրանում և Մակրեթի վոճիրը՝ դահը ամրացնելու համար, այնքան խորանում և նրա ներքին պատժի չափը։ Պատիժ՝ ավելի ստատիկ, քան դրսից յեկած ֆիզիքական պատիժը, Մակրեթը շրջապատի աչքում «արքայական մարդասպան» և նման բոլոր բռնակալների՝ դասնում և ծայրահեղորեն կասկածամիտ, իր շուրջը տեսնում միմիայն դավադրություն, Դրա հետևանքով ավելի յեն ուժեղանում Մակրեթի խստությունները, կատարվում նորանոր վոճիրներ։

Մակրեթի սրի հարվածից փախուստով աղատված աղնջական Ռոսը այսպես ե նկարագրում յերկրի վիճակը.

Ավագ, խեղճ յերկիր, վոր ստոսափում և ինքն իրեն նայել,

և վոր չե կարող մեր մայրը կոչվել, այլ գերեզմանը.

ուր ժայիտ չկա վոչ վոչի զեմքին,

բացի այն մարդուց, վորն այս ամենից բան չի իմանում.

ուր ճիշ ու հառաջ, վոզը ու գայնասուն պատում են ողը,

սակայն անցնում են աննկատելի.

ուր ըուռն կոկիծը առողյա վիշտ ե.

ուր յերը Շնչում և մեռելազանգը,

վոչ վոք չի հարցնում, թե ում համար ե.
ուզ բարի մարդկանց կյանքը խամբում և
պակված ծաղկի պիս...

Մոայլ և յերկրի վիճակը Մակրեթի աիրապետության որով: Հալածվող գալլի նման նա առանձնանում է իր Դուռնոինեյն ամրոցը և այնտեղից շարունակում կատաղի պայշքարը՝ ապստամբվելու պատրաստ ֆեռդալների ու ազնվականության դեմ, զորոնց նա անխնա սպանում և և գույքը զրավում իր ոգտին:

Այս տեսական վոճրագործությունը թունավորում է և Մակրեթի և նրա նենդ կնոջ կյանքը, յերկուակն ել մատնում կոշմարային տագնապի, կեզին տառապում և սոմնամբուլիզմով ու մեռնում, իսկ Մակրեթը փորձում է դաժանության մեջ գտնել իր փրկությունը:

Արտաքին ուժերի միջամտությամբ ու ապստամբ ֆեռդալների աջակցությամբ Դուռնկանի վորդուն աջողվում և վոչնչացնել Մակրեթին ու զրավել հոր գահը: Նոր թագավորին Շեքսպիրը տալիս և զրական նկարագիր, յերկրին ձնշող մղամբանջը վերտցած համարում և, հետևաբար, «բարոյական խախտված որենքը» վերականգնված:

«Մակրեթ»ի մեջ արտացոլվել է ժամանակի սոցիալական և քաղաքական պայքարի խտացած մթնոլորար, ուր ապրել ու գործել և Շեքսպիրը: Արտացոլվել են գահի ու քաղաքական գիրքերի շուրջը տեղի ունեցող արյունալի դեպքերը՝ «լուսավորյալ արսուլյուտիզմ»ի և հին ֆեոդալական արիստոկրատիայի կատաղի ընդհարումները, «Մակրեթ»ի նյութը միջնադարյան և, բայց Շեքսպիրը նրան տվել է ժամանակակից բնույթ: Նրա հերոսները իրենց ըացառիկ բնավորություններով, ներքին կասկածներով, հակասություններով ու խոներով, շեքսպիրյան եպոխայի անգլիացիներ են:

Հարազատ իր ռեալիզմի սկզբունքներին, Շեքսպիրը իր հերոսներին վերցնում է իրենց վողջ սոցիալական մի-

ջավայրող, վերտարապրում նրանց բազմակողմանի ազդակ-ների շրջանակում, տալով տիպականի ու անհատականի ամ-բողջական հյուսվածքը:

Նրա հերոսները վողքերդական են, անկման դատա-պարտված տիտանների հատկանիշներն ունեն, կռվում են որհասական արջի նման և տապալվում հղոր ճակատամարտ-ների մեջ, չին ասպետականության անկման պրոցեսում կադաղաբժած հերոսները ամելի թանձր գունավորում են ստոցել Շնքուիրի գրչի տակ: Սոցիալական խոշոր կոն-ֆլիկտների հերոսները ավելի զորեղ ու հերոսական են պատ-կերացվել, քան առողյա կյանքի մարդիկ:

Ահա Մակրեթը:

Շոթլանդիայի զորեղ և հաղթական ֆեոդալը:

Իր հասարակական միջավայրի բնորոշ արգասիքը, Հղոր հակումներով ու կրքերով: Տենչեր ունի «առաջինը» լինելու, նախապահարմունքներ ունի նույնքան թանձր, հավատում և վողիներին, վորոնք գուշակում են նրան «իշ-խանական» յերկու տիտղոս՝ համապատասխան կալվածքնե-րով, առաջարական դահ: Բայց վոչ յերջանիկ կյանք: Վողը նրա գույքը յանանի մի հուկներ հանդես ըերելով, Շնքա-պիրը սակայն իր հերոսների գործողությունների հիմքում դնում և միմիայն իրական շարժառիթներ և հոգերանորեն հիմնավորում են այս:

Մակրեթը վհուկների ներշնչումով չե վոր ստանում և իր տիտղոսները ռեալիստ չեր լինի Շնքսպիրը, յեթե նման սիովորներով լուծեր զեղարվեստական խնդիրը: Նրա Մակ-րեթը Դունկան արքայի կողմից պարզեւառվառմ և բացա-ռապես իր հաղթական արշավանքների համար ալատներազմի դաշտում, Նրա զորավարական ընդունակությունը և անհա-տական անվեհերությունը, կարելի յե ասել փրկել են Դուն-կանի դահը կործանումից: Վճռական հաղթանակները սա-կայն շացնում են ինքնավատահ ու փառասեր Մակրեթին:

Նա յերազում և «ամենից մեծ տիտղոսի մասին». Նրա սրայի մեջ առկայժում ե թագի տենչը, Յերկու տիտղոսը նա համարում ե «ասխերգանք՝ իր թագադրության պերճ արարվածին», Բայց բնչպես և հասնելու գահի բարձրության։ Չե՛ վոր ճանապարհին խոշոր արգելքներ կան։ — կենդանի յե թագավորը, թեեւ թույլ, բայց թագավոր և, Միակ միջոցը՝ նրա բռնի վերացումն ե, ուրեմն՝ «արքայասպանություն»։ Այստեղ Մակրեթը կանգ և առնում։

Թեպես Մակրեթը համեստ չե և նրա «վճռականության բնածին ծաղիկը» չե թոշնում «մտածության գժգույն յերանդից», բայց ահեղ վոճրագործության առջև նա հայտնարերում ե յերկյուղ և տատանում։ Այստեղ Շեքսպիրը մերկացնում է հերոսի ներքին աշխարհը, խորանում նրա հոգեկան հեռավոր ծալքերի մեջ և հանճարեղ շարիխներով վերարտադրում եյականն ու բնորոշը։ Մակրեթի փառակարությունը զուգընթաց անում ե մի գիտակցություն, թե իր մեջ գոյություն առած «մարդասպանության անրջանքը» նրան թիվում և «ահուելի մտապատկեր» և փշաքաղ անում մարմինը, սարսափելի մտքից ոգլխի մազերը ցցվում են և հանդարտ սիրտը հակառակ բնության սաստիկ խփում և կրծոսկըներին։

Հակասական մտքերը տանջում են ուղեղը, նա փընտռում ե իր ապագայի առեղծվածը լուծելու ավելի հեշտ ճանապարհ, թողնելով «բերմունքին»։ Նա գառնում է ֆատալիստ, բայց դա, իհարկե, մոմենտ ե միայն։ Նա ասում է.

Եեթև ըերմանքն ուղում ե, վոր յես թագավոր գառնամ,
շաս լավ. բերմունքը կարող ե բնշնին թագ ընծայել ինձ,
առանց իմ ջանքի։

Մակայն Մակրեթին չեր տված ինքնահոսով թագավոր դառնալ։ Նա գիտակցում ե այդ, Մակրեթը, վոր նախապաշարված և վհուկներով, համատում վոգիների գուշակու-

թյուններին, իր ճակատագիրը այնուամենայնիվ չի հանձնի «բերմունքին»։ Նա շատ լավ գիտե, վոր հետևանքի հասնելու համար պետք է իրական դործ կատարել։ Դեպի գահ տանող յերկու ճանապարհ կար նրա առջև։ առաջինը՝ յեթե նրան զահաժառանդ նշանակեր ինքը Դունկանը, յերկրորդ ճանապարհը՝ գահին բռնի տիրելն եր։ Առաջին դեպքում Մակրեթը թերևս սպասեր «բերմունքին», Բայց վորովհետեւ Դունկանը անսպասելի կերպով իր ավագ վորդուն և հայտաբարում գահաժառանդ, այդ վայրի յանից Մակրեթի գիւտակցությունը մռայլվում է, բորբոքվում յերևակայությունը։ Հաղիվ թե այլևս իր բախտը բերմունքին հանձնե։ նա դոչում է։

Աստղեց, ծածկեցե՛ք ձեր վառ բոցերը,
լույսը շտեսնի ան, խոր իղձերու..

Մակրեթին պակասում է մի զորեղ դրդիչ, հրահրող նրա փառասիրական տենչերին, վորպեսզի անմիջապես հաղթահարի իր ներքին ձայնը և զիմի գործողության։ Շեքսպիրը այդ պակասը լրացնում է հանձին Լեղի Մակրեթի, վորը դառնում է հղոր զորավիզ ամուսնու վործին։

Մակրեթին տանջող կասկածները, խղճի խոռու բողոքի ձայնը սակայն մի անգամից տեղի չտվին Լեղի Մակրեթի համառ ստիլմունքների առջև։ Շեքսպիրը նման հոգերանական ճեղքվածք չեր թույլ տա իր վողբերգության մեջ։ Այդպես վարդում են իրենց հերոսների հետ միմիայն անդոր հեղինակները։ Կասկածներն ու տատանումը շարունակում են կրծել Մակրեթի ուղեղը։ Նոր մաքեր ու պատկերացումներ են պաշարում նրան, նո կանգնած է յերկընառանքի առջև։ անմը այդ վճռական, ճակատագրական քայլը, վոր կարող է հղի լինել ծանր հետեւանքներով։ թթ նահանջել յեղեռնի ահավոր կերպարանքի առջև, Մակրեթի «լինել-չլինելու» ապրումները տարբեր են համլետականից և տեսական չեն ու չեյին կարող լինել։

Մի կարևոր հանգամանք. հանդերձյալ կյանքից յերկուուղ չունի Մակրեթը: Դա ինքնին մի ապացույց ե, վոր Շեքսպիրի հերոսը Հոլինշեդի միջնադարյան Մակրեթը չե, այլ վերածնության դարաշրջանի, կապիտալիզմի արշալույսի մարդը:

Մակրեթը խորհում ե.

Ենթե սպանությունն իր հետևանքը ցանցել կամենար և ավարտումով արգյունքը ստանաբ, յեթե այս հարգածն ամբողջը լիներ, և սկիզբ, և վերջ, գեթ այսուեղ միայն, հենց ժամանակի այս ծանծազուտի և տփի վրա, — համեմքայալ կյանքը փռվյը շնչիմք անի:

Ենթե հանդերձյալ կյանքը հոգս չե պատճառում Շեքսպիրի հերոսին, — վոր շատ նշանակալից յերկույթ և հեղինակի աշխարհայացքը բնորոշելու տեսակետից, — սպամտատնջության խոշոր առարկա յե դատաստանը այս աշխարհում:

Մակրեթը շարունակում ե.

Բայց միշտ այդպիսի պարագաներում
հենց այսուեղ յեմեր դատապան կա մեզ.
մենք արյունանեղ դասեր ենք տալիս,
վորն ուրիշները, յերբ սովորում են, յետ են տալիս մեզ.
Հովանարածեն արգարությունը
մեր թունավորած բաժակի հյութը մատուցանում ե
մեր իսկ շատրքերին:

Մակրեթը յերկուուղ ունի քաղաքացիական կուվից. վախենում ե, վոր իր վոճիրը առիթ կտա վոտքի յելնելու Դունկանի մերձավորներին և իր (Մակրեթի) «թունավորած բաժակի հյութը» իրեն մատուցանելու, Պայքարը կարող և պայքար հարուցելի Մակրեթը համոզված չե, վոր սպանությունն «իր հետևանքը ցանցել կարենա և ավարտումով արդյունք ստանա»: Նրա կասկածները խորն են ու հիմնա-

վոր։ Հատուցումը, յեթե վոչ անխուսափելի, գեթ հնարավոր եւ,

Մակրեթին տատանման մեջ և դնում մանավանդ այն հանդամանքը, վոր Դունկանը, մեծ շնորհներով նրան վարձատրելուց հետո, հյուր և յեկել նրա մոտ մի գիշեր անցկացնելու։ Նպատակովի նա դիտակցում եւ, վոր ծերունի թագավորը պետք է կրկնակի պաշտպանություն մայելի իր հարկի տակ։ Ծերունուն նա ճանաչում եւ վորակես բարեմիտ, մեղմ իշխանագործ, վորի սպանությունն ամբողջ յերկիրը պիտի համարեն դաժան, վայրենի զործ, առաջացնելով անսախընթաց բողոք ու ցասում...

Սակայն հակասական մտքերի ժխորից կրկին բարձրանում և ովեր խոյացող փառասիրության կիրքը, վորը տիրելով նրա վողջ եյությանը, գոհացում և պահանջում։ Այսաեղ կրկին հանդես եւ գալիս իշխելասեր ամուսնու հոգին լավ ճանաչող լեղի Մակրեթը և իր այրող խոսքերով հրահրում նրա փառասիրական հսկայական տենչը։ Նա քայլ առ քայլ հետապնդում, անընդհատ ըորբոքում և ամուսնու վառ ցանկությունները. և զերջիւկերջո Մակրեթը նրա ճընշման տակ կատարում և իր վոճիրը։ Յերբ ծերունի թագավորը ընթրիքից հետո, զոհ իր այցելությունից հանդիսան նշջում և յերբ թագավորի թիկնապահները, լեղի Մակրեթի ջանքերով գինովցած ու քնարեր հեղուկ ընդունած, ծանր խոսմփում եյին հարևան սենյակում, լեղիի գործնական աջակցությամբ Մակրեթը մորթում և Դունկանին։ Մորթում և թիկնապահների դաշույններով, իսկ կինը արյունոտում և նրանց գեմքն ու զգեստները, վորպեսզի հանցանքը բարգվի նրանց վրա։

Վոճիրը գործելուց հետո ավելի յեն խորանում Մակրեթի տանջանքները «Արածիս մասին սոսկում եմ խորհել», — ասում ենաւ—Քնած մարդուն սպանելով, «Մակրեթը սպանեց, սպանեց քունը, Մակրեթը այլևս չպիտի քնի»։

Այն քաջ անվեհեր ուազմիկը, վոր թշնամու կատաղի ջոկատների առջև չգիտեր ինչ և նահանջը, այժմ ամեն շուշկից սարսող ե դարձել, իր արյունոտ ձեռները դիտում ե սարսափով. պարմի և արդյոք,—ասում ե նա շվարած— Նեպտոնի ամբողջ ովկիանոսը անհետ լիւանալ արյունն իմ ձեռքից:

Սարսափը փոքրողի յե դարձնում Մակրեթին, Հանցանքը բարդելով «արյունաշաղախ» թիկնապահների վրա, վորոնք դեռ ուշքի չեյին յեկել Լեղի, Մակրեթի տված քնարեր դեղից, Մակրեթը կատաղորեն հարձակվում ու պարատականների աչքի տոջե սպանում ե անմեղ մարդկանց: Արդարանում ե նրանով, վոր ծանր վոճրի տպավորության տակ վորպես թե իրեն զսպել չե կարողացել:

Սպանելով Դունկանին, Մակրեթը իր դեմքը ծածկում ե թանձրկեղծիքով, իր կնոջ հետ «վողըրում» ե սպանվածի «յեղերական» մահը, «վողըրում» ե պալատական հասարակության առջև: Լեղին նույնիսկ ուշաթափ ե լինում:

Այս տեսարանը Շեքսպիրը այնպես ե պատկերացրել. կարծես, նրա յերկու հերոսներն ել ծանրապես ապրում են վիշտը: Յեզ վոչինչ զարմանալու չկա այստեղ: Նրանք անկասկած մեծ վիշտ եյին ասլրում, բայց դա վոճրին հաշջորդող ներքին այն «պատիժն» եր, վորը վողըրգերգական խոր գրոշմ եր դնում նրանց սրտի վրա: Նրանք պրոֆեսիոնալ ավագակներ կլինեյին, յեթե ծանր մտքեր ու դժան ապրումներ չունենային կատարված յեղեռնից հետո, Շեքսպիրը լավ ե ճանաչել մարդկանց հոգեբանությունը:

Մակրեթը զգում ե, վոր գահին ապորինի ճանապարհով տիրելը ծանրագույն հոգսերով ե լցնելու նրա սիրաը: Նման գահը հաստատուն չե, Ռևմերի գերազանց լարումն է պահանջում անակընկալ փորձություններից գահը զերծ պահելու համար:

Արքա լինելը գեռ ևս վաշինչ է.
ապահով լինելը՝ ոյս և խնդերը.—

ասում և նա:

Կարհղ և նա ապահով զգալ իրեն, յերբ բոլորը նրան
արքայասպան են համարում, բայց լոռում յերկյուղից դըրդ-
ված: Նրա ուղեղը զադար չունի ծանր կասկածներից. շըր-
ջապատղների մեջ նա տեսնում և միմիայն արյունաբրու-
թշնամիներ և մի պահ նրանց առջև նկուն դառնում: Այդ-
պիսի վայրկյաններին զվարին դրածը համարում և «անպը-
տուղ մի թաղք, իսկ ձեռների մեջ՝ ամուլ գայիսոն», Բայց
այդ պահերը փոխվում ելին դահը անփորձ պահելու գործ-
նական աշխատանքին:

Մակրեթը վանում և մութ ու մոայլ մտքերը, յեր-
կյուղն ու տատանումը, ու զճուում կուիել ամենի դեմ: Յեկ-
ծայր են առնում նորանոր վաճիքներ, վորոնց զոհ ևն գնում
նույնիսկ կանայք ու, յերեխաներ: Մակրեթը, կատարելով
ամենամեծ սպանությունը, յերկրորդականների առջև մեծ
մտատանջություն չունի: Այժմ նա ինքնուրույն և վեղի
Մակրեթը հոգեկան հիվանդության պատճառով այլևս մաս-
նակից չե ամունու հետազա յեղեռնապործության: Մակ-
րեթի մեջ այժմ խոսում և անզուսպ բռնակալը, վորն իր
դաժանությամբ մահ և սփառում շուրջը: Բայց վորքան մե-
ծանում և ու ծանրանում նրա հանցանքը, այնքան խորա-
նում և նրա ներքին անհանգստությունը: Յուրաքանչյուր
վոճրագործությունից առաջ նրան թշում և, թե դա վեր-
ջինն և: Մակայն շարքը չի վերջանուա, վորովհետև թշնա-
միներն աճում են հազարզլիսանի գեր նման: կտրված զվարի
տեղ նորն և բսնում: Նրան թվում և, թե ինքը Շոձին չան-
գուել և և չե սպանեց: պետք և սպանել Թագավոր և, բայց
ուստում և իր հացը յերկյուղով, քնում և «սարսափելի
մղձավանջներով» ու յերանի տալիս մեռյալներին: «Լավ և

լինել մեռյալի ժոտ», — ասում ե նա, — քան թե շանգաղար ցնորքների մեջ՝ միշտ պրկված մնալ հոգեկան գմվար տանզարանի վրա»։ Հեղձուցիչ համարելով շրջապատող մթնոլորտը, նա դիմում ե կեղի Մակրեթին. «Ո՞հ, կարիճներով լցված ե հողիս, սիրելի իմ կին»։ Կասկածամությունն ու տանջող խիղճն ե այդ կարիճը, վոր թունավորել ե նրա վողջ եյտաթյունը։

Ավելի թանձր պատկերացնելու համար Մակրեթի հոգեկան վիճակը, խղճի «անմարելի խայթը», Շեքսպիրը նոր թագաղբաված արքայի խնճույքին, լորդերի ներկայությամբ, արքայական աթուին նստեցնում ե նույն որը սպանված դորավար Բանկայի ուրվականը, վորի տեսքը հանցավոր Մակրեթին հայուցինացիայի յե մատնում։

Այսպես՝ քայլելով իր զոհերի արյան լճակով, դառնում ե դաժան ու վրեժխնդիր, զզվելի դեսպոտ, վորից սարսափում են բոլորը, խուսափում պալատում յերևալուց։ Նա մնում է մենակ, առանձնանում իր ամրանիստ ամրոցում ու այնաեղ շարունակում իր արյունոտ դավերը։ Մակրեթի մեջ խոսում եր ինքնապաշտպանության ընալոցը, նա չեր կարող չխմանալ, վոր իր դեմ դադանի դավեր են լարվում տուժող ու գժգոհ ֆեռդաշների կողմից, և վոր յերկիրը պատրաստ ե ապստամբվելու։

Մակրեթը պաշարված ե և նախապաշարված։ Պաշարված ե ամրոցում, վորպես դազանը զանուակում։ Ամբողջ յերկի դևմ նա մենակ ե, բայց դիրքերից չե նահանջում։ Նախապաշարված ե իր ապադայի նկատմամբ, վօրուինետև վհուկներն ասել են, թե «կնոջից ծնված վոչ վոք չե կարող Մակրեթին վերք տալ» և ասել են, վոր «Մակրեթի համար պարտություն չկա, մինչև Բիրնամի մեծ անտառը վեր չբարձրանա» Մակրեթի ամրոցի վրա։

Քայլ առ քայլ հետևելով հերոսի ապրումներին, Շեքսպիրը գիտում ե, թե այդ ամենը իրական ինչպիսի ազդակ-

ների տակ և կատարվում, իրերի տրամաբանությունը Մակրեթին հասցնում և այնտեղ, վոր նա իր յենիչերիների ձեռքով սպանել և տալիս ամենալոյալ ֆեոդալներից մեկի— Մակրութի կնոջն ու յերեխային, միայն այն պատճառով, վոր Մակրութի ներկա չե յեղել Մակրեթի խնճույքին ու դրհմինդրությունից խուսափելու համար փախել և Անգլիա:

Իրերի լոգիկան ապստամբությունն եր:

Այստեղ Մակրեթը անխորտակելի կամք և զարմանալի քաջություն և ցուցաբերում ապստամբ յերկրի դեմ ու մենակ դուրս դալիո ճակատելու, նախապես վճռելով, վոր յեթե հազմանակ չեղավ, ապա պետք ե մեռնի ողբահով ու դենքավիք: Մենամարտի մեջ ընկնում և Մակրութի հարվածից:

Մույլ պատկերների հզոր շնչով և սաեղծագործել Շեքսպիրը իր հերոսին: Խորանարդ շրջապատի մարդկային ամենի կրթերի անդրադարձման մեջ, հանճարեղ որրամատուրը համակված և յեղել նույնքան մույլ պեսիմիզմով: Մակայն անհույս չե այդ պեսիմիզմը, Գտնում ե նա յելք, Այդ մասին քիչ ներքեւ:

Դառնանք Լեղի Մակրեթին:

Դաժան և Շեքսպիրի հերոսուհին, Մակրեթին թե վոճրագործ և թե թագավոր նա յե դարձնում: Դվարավոր վոճրագործը նա յե, Տպավորվող, խորհելու և խոճի խայթ դգալու ընդունակ, փառասեր ու սնոտիսապաշտ Մակրեթը ունեցել և տատանումի այնպիսի մոմենտներ, յերը ժամանակին առջած ազդու խոսքը կարող եր վճռական հետեանք ունենալ նրա հետագա գործողությունների համար: Ազդեցիկ Լեղիի նախազգուշացնող խոսքը այլ կողմ պիտի թերքեր Մակրեթի ուժն ու յեռանդը: Բայց Լեղի Մակրեթը ինքն եր տենչում թագուհի դառնալ, տառապում եր անզուսդ փառասիրությամբ: Յեկ նա իր վճռական ազդեցությունը գործ գրեց Մակրեթի վրա ուղած ուղղությամբ:

Եեթե Շեքսպիրը Մակրեթին ստեղծագործելիս այս կամ այն չափով հեղիեղուկ տարր ե մտցրել նրա տիպական գծերի մեջ, շնորհիվ տատանումների, ապա Լեդի Մակրեթի տիպը դարձրել ե ավելի վորոշ:

Լեդի Մակրեթը իշխելասեր, փառասեր և և վճռականությունների մեջ խտրություն դնել չե կամենում: Գահին համենելու համար նա փնտում ե կարճ ճանապարհ, ունի գործելու անխորտակելի կամք: Ամուսնուն նա համարում է բարության մարմնացում («քանզի նա այնպես լի յե մարդկային բարության կաթով»—ասում ե նա Մակրեթի մասին): Սրանից կարելի յե յեզրակացնել, թե վիրապիսի դժանությամբ ե լցված ինքը և ինչ տմարդի գործերի ընդունակ: Նա կշտամբում ե Մակրեթին, վոր նրա մեջ ռազմականում ե չարությունը: Դրանով անկասկած նա իրեն և բնութագրում: Կարդանք նրա հետեւյալ խոսքերը, վոր ողարդ լինի, թե ինչ կնոջ հետ գործ ունենք.

Յեկեց վողիներ

գուք, վոր մանառենդ մտածումներին սպասարկում եք, սեռափախնցեք ինձ: լցրեք ինձ դանդից մինչև գարշապար ամենավայրադ անողությունը: Բանձրացրեք արյունա, փակեցեք իմ մեջ ամեն անցք ու մուտք դեղի դիություն, վարպեղի խզնի վոչ մի մերադարձ շխախտի իմ ժանեալ մտադրությունը...

Նա վտարում ե իրենից այն, ինչ կանացի յե: մեղմություն, խղճահարություն, դյուրազգացություն: Նա պատրաստ ե սպանել իր մեջ կանացի սեռը, միայն թե հասնի ուն տենչերից իրադրումանը, Նա դիմում ե վոպիներին.

Յեկեց կանացի իմ ստիճաներին
և փոխարկեցեք իմ կաթս մաղձի,
ով սպանությանն սպասարկուներ...

Յեկ, թանձը զեշեց
և փաթաթիք քեզ ամենամթին դժոխքի ծխող,
վոր սուր դանակը ինքն ել շահենե իր ազած վերբը,

վաչ ել յերկինքը՝ խավարի քողից արտահայելով
մորուած՝ շինադ տառ:

Լեզի Մակրեթը կրկնակի Մակրեթ ե. Նա ունի նույն
ունի իղձերը, բայց չունի Մակրեթի տատանումները: Այս-
քան զորեղ և նրա մեջ «ձգտումն առ իշխանություն», վար
նա նույնիսկ մասն և հանում Մակրեթին և իր անհողղողու-
թամբով խոյանում նրա վրա: Նա ամուսնուն ներշնչում և
վճռականություն, դիտե նրա թույլ կողմերը, պահանջում և
կեղծիքով ծածկել դեմքը՝ տատանումների և վհատության
դավանան նշանները քողարկելու համար:

«Մակրեթը գրված և «Որելլօսից հետու Լեզի Մակրե-
թի դեմքը գծադրելիս, Շեքսպիրը անկասկած իր ստեղծա-
դորթական ֆանտազիայի առաջ ունեցել և Յագոյի պատ-
կերը, Լեզի Մակրեթի փիլիսոփայությունը մարդկային փոխ-
հարաբերությունների վերաբերյալ միանգամայն զուգադի-
պում և Յագոյի հայացքներին:

Լեզի Մակրեթը համոզում և ամուսնուն:

Յեթե ուզում ես խաբել աշխարհը—նմանվիր նրան:

մեծարիր աշքով, ձեռքով ու լեզվով.

յերեա ինչպես անմեղ ծաղիկը,

սակայն թ ներսից յեղիր թունոտ ու:

Նույն իմաստն ունի Յագոյի զրույցը Ռոդրիգոյի հետ,
յերբ նա պարզում և իր տեսակետը՝ արտաքին կեղծիքով
ներքինը թագցնելու մասին: «Յես,—ասում ե նա,—այն չեմ,
ինչ վոր կամ»: Այսինքն այն մի կարծիր ինձ, ինչ արտա-
քինս ե:

Կեղծելու գերազանց վարպետությունը Յագոյի հոգին
անճանաչնելի յե դարձնում մինչև Դեղգեմոնայի սպանու-
թյունը:

Նույն կեղծիքի թանձը քողն առնում և յերեսին Լեզի
Մակրեթը, յերբ նա դիմավորում և Դունկանին և «պատ-
վում» նրան իրենց հարկի տակ, Մակայն ժամացող քողի

տակ ծածկված եր մի թունոտ սիրտ, մահառիթ չարիք նյութելով ծերունու գլխին, լեղի Մակրեթի մեջ խոսում և սառնասիրտ չարությունը, մի կին, վորի համար մարդու զլուխ կտրելը ավելի չեր, քան հազ մորթելը: «Եսկ այս դիշերվան մեծ անելիքը ունտք և ինձ հանձնես», — ասում և նա Մակրեթին, ակնարկելով թագավորին սպանելու ռմեծ անելիքը:

Ենրբ Մակրեթը ընկնում և մտատանջությունների մեջ և կնոջը բացատրում դանդաղելու պատճառը նրանով, վոր դեռ նոր և Դունկանից պարզեներ ստացել, ովոսկը անուն վաստակելը և վոր վոճիրն անժամանակ ե, — լեղին հախուռն իշտամբանքով հիշեցնում և նրան իր յերդումը ռմեծ գործի սկզբին ու յազոյական յեռանդով ու ոլեզվի քաջությամբ՝ ըլլում իր վոգին Մակրեթի ականջի մեջ, վորպեսդի դաշտույնը չվրիպի դադացող ձեռքերում,

Այրող խոսքերով ու հնարագիտությամբ նա ողարձիւ յերբում տատանվող Մակրեթին ու արխություն ներշնչում նրան, Արժե լսել լեղի Մակրեթին:

Ցես ծիծ եմ տվել և շատ լավ գիտեմ, թե վորչափ քաղցը և սիրել մանուկը, վոր ծծում և ինձ,
բայց յես—յերբ վոր նա յերեսիս խայտար—
նրա տնտեսամ լոգերից ծիծու գուրս կըտշեյի,
ուղեղը գլխից ցըկվ կտայի,
յեթե յես այնպես յերդված լինեյի,
ինչպես զրւ այս մեծ գործի սկզբին:

Մանավանդ յերբ նա պարզում և իր ծրագիրը՝ բարդել հանցանքը Դունկանի արբեցրած թիկնապահների ոլը և տեղին ու ժամանակին թնդացնել ռմեռելի մըա լաց ու կոծը, այն ժամանակ, Մակրեթը «սթափվում ե» և հայտնում «զարհուրելի խիզախումի համար» իր պատրաստ լինելը:

Եեքսպիրը հետազոտող գիտնականի նման հետևում և հերոսունու հոգեկան շարժու մներին ու դործողություննե-

րին, յերբ սա ուղեղի վողջ լարվածությամբ հնտապնդում և Մակրեթին, վորը յերկու դաշույն ձեռքին արդեն մտել էր քնած Դունկանի սենյակը՝ իր արքայական թագը «ապահովելու» համար։ Այդ լարվածությունը Շեքսպիրը հասցնում և ամենաըարձը կետի, յերբ Լեդի Մակրեթը խլում և արդեն իր գործը կատարած, բայց չվարած Մակրեթի ձեռից արյունոտ դաշույնները, արյունով ներկում կիսամեռ թիկնապահների գլուխը, իսկ դաշույնները դնում մորթված Դունկանի կողքին։

Իմ ձեռքերն ահա քո ձեռքի գույնն են. բայց կամաշնյի,
յեթև իմ սիրոն ել քո սրտե նման սպիտակ լիներ։

«Սպիտակ սիրու—ուղում և ասել՝ անարյուն, վախ-
կու սիրու։

Լեդի Մակրեթը միաժամանակ նկատում և, վոր ամուսինը վոճիրը գործելուց հետո խղճի սապտիկ խայթ և զգում։ «Դու, —ասում ե նա, ամուսնուն, —անսասան կամքդ կորց-
րիր», «Ճի կանդնիր այդքան խղճալի, մտապաշտրված»։

Մակայն Շեքսպիրը դիտե, թե վորոտեղ պետք ե սպառ-
վի կնոջ ուժը, մինչև վհրանդ կարող ե նա դնալ ամուսնու
հետ, Մեր հիշատակած տեսարանում Լեդի Մակրեթի լար-
վածությունը հասնում ե. իր կուլմինացիային, ու այդտե-
ղից սկսվում սուր բնկումը։

Լեդի Մակրեթը, վորը տատանվող Մակրեթի առջև
անընկճելի կամքի մարմնացում եր, վոճիրը գործելուց հե-
տո նրա մեջ բացվում և տանջանքի սպանիչ աղբյուր, Այդ
փոփոխության սկիզբը Շեքսպիրը առաջին անգամ ակնար-
կում և այն տեսարանում, յերբ Մակրեթը արյունաշաղախ
ձեռքերով ներս մտնելով, հայտնում է կնոջը, վոր մնկը հաւ-
րեան սենյակում տեսր վողորմյան ասաց, իսկ ինքը «ամեն»
ասել չկարողացավ։ Լեդի Մակրեթը պատասխանում ե. «Կա-
րիք չկա այդ բոլորի վրա այդքան շատ մտածել. մարդ
կիսեմքանա...»։

Ապա դրան հաջորդում ե ուշաթափությունը, յերբ սպանության աղազակը վռաքի յե հանում բոլորին, Այժմ նա սկսում ե հասկանալ, վոր «Փափագի կատարումը» դռնացում չե ըերել նշան. «Լավ ե կործանված լինել, քան կործանել»—յեղրակացնում ե նա.

Այդ մոմենտից մենք այլևս չենք տեսնում Լեղի Մակը բեթին՝ իր ամուսնու հետաղա զործողություններում. Լեղի Մակը բը ընկճված, հօգնելան կորովը կորցրած, հիվանդանում ե լուսնոտությամբ (սոմնամրուլիոդ), դրանով հայանի դարձնելով պալատում գործված վոճիրի հեղինակներին: Լուսնոտ Լեղին «անկողնից յելնում ե, հազնում, գիշերազգեստը, դրանեղանը բաց անում, վերցնում ե թուղթը, ծալում ե, վրան մի բան ե դրում, կարգում... ձեռքերը տրոքում ե... վորպես թե ձեռքն ե լվանում»:

Լեղին «ասել ե բաներ, վոր չպիտի ասեր» պալատական ծառայողների առաջ.

— «Արյան հոտը գեռ պալիս ե. Արարիայի բոլոր անուշանու յուղերը յերբեք չեն կարող այս ձեռքը հոտավետ դարձնել...»:

Խղճի խայթ, սոմնամրուլիոդ, ինքնասպանություն, Ահա Լեղի Մակը բեթի վախճանը:

Մույլ տրամադրությամբ ե գըել Շեքսպիրը իր «Մակբերը», Այդ տրամադրությունը անդրադարձել ե նաև բնության նկարագրության վրա. Վողբերգության մեջ կատարվող յեղեռնագործությանը կարծես բնության տարրերն ել ե մասնակցում, ծիչտ ե, Շեքսպիրը այստեղ մասամբ հետեւել ե Հոլինդեշի «Ժամանակադրության» նյութերին, ուր պատմվում ե, թե ինչպես կատարված «աարսափելի վոճիրից հետո ամրող 6 ամիս արել չե յերևացել ցերեկը, իսկ լուսինը՝ գիշերը» և այլն. Մակայն մեծ ռեալիստը միանգամայն իրական շրջանակի մեջ ե առել բնության յերևույթների մասնակցությունը կատարվող դրամային: Դիտելի յե,



Նդմանդ Թիմը Մակբեթի դերում

Эдмунд Кин в роли Макбета.

Edmund Kean in the role of Macbeth.



թե ինչողես ծանր խոհերով և տոգորված յեղել ինքը դրամատուրգը՝ իր շրջապատում կատարվող մղձավանջային յերեսույթների հանդեպ և այդ յերեսույթների մռայլությունը փոխադրել ընության վրաս Փոթորկի արագությամբ զարդարող դրաման ուղեկցվում և բնության մեջ տեղի ունեցող փոթորիկներով, Ահարկու յե գիշերվա պատկերը դուրսը, յերբ նույն ժամին Դունկանի ննջարանում կատարվում եր Մակրեթի և Լեղի Մակրեթի վոճիրը: Պատերից ներս յեղեսնն եր տեսնում իր զործը, պատերից դուրս՝ ավերիչ փոթորիկը, վոր ծառեր եր պոկոտում, ծխնելույզներ քանդում. «լսնլի եյին վողագին ճիչեր և տարորինակ մահու պոչյուններ... խավարի թռչունն ամբողջ գիշեր վայում եր անդադար, ասում են, յերկինքը ինքն ել ջերմ ուներ և դողուի եր բռնված»:

Տնության միջամտությունն այստեղ յերկու բացարություն ունի. առաջին՝ վոր զա արտահայտում և Շեքսուպիրի հուզական վիճակը դրաման գրելիս, յերբ հոռետես ըանաստեղծի աշջին բնությունն ել յերեսում եր ծածկված ախրության քողով. յերկրորդ՝ դրամայի տպավորությունը հանդիսականների վրա ուժեղացնելու հանգամանք: Փոթորիկն ու թանձր խավարը—ահա «Մակրեր»ի գլխավոր ընանկար ֆոնը: Պիեսի մեջ ծերուկի և Ռոսի զրույցը նույնպես զսրեղացնում և զործված մարդասպանության տպավորությունը, միախառնելով բնության գոչյունները մարդկային բողոքող ձայնին, Մակրեթը ինքն ել և գիմում ևս գիշերված ոգնության, վորովհետեւ խավար զործը խավարով միայն կարելի յեր ծածկել:

... Ռ'վ զու կույր գիշեր,

յեկ, ամուր փակիր զթոս ցերեկվա կաթողին աշը,

և քո արյունոտ ու անտես ձեռքով

յես առ, ջարդութիր կաշկանդող շղթան,

վոր պահում և ինձ այսպես գումաթափ...

Կատարվող յեղեռնազործության պատկերը ավելի մոայլելու համար, Շեքսպիրը գործի յե դնում նաև գիշերվա թոշուններին, ոլորտնք նախապաշարված մարդու վրա ահեղ տպավորություն են թողնում. Ժամանակի դրամատուրգների համար սակայն դրանք սոսկ բնմական եֆֆեկտներ չեյին տպավորությունը ուժնդացնելու համար. հեղինակները և հավատում եյին այդ ամենին:

Նույն կրկնակի բացատրությունն ունի վհուկների ցուցադրումը: Ժամանակի սնոտիասպաշտ մարդը, անծանոթ բնության ուժերին և մարդկային պսիխիկայի որենքներին, հավատում եր դրանց: Միջնադարյան սխոլաստիկներն ու մարտական յեկեղեցու սպասավորները կախարդությունը կապել եյին կանաց սեռի հետ ու կազմակերպված հայածանք վարում «ջադուկների» դեմ. Հայտնի յեն ինկլիպիցիայի դատարաններն իրենց խարույկներով, մանավանդ 15-րդ դարում, յերբ հաղարավոր կանայք կրակի եյին մատնվում սատանաների հետ սեռական հարաբերությունն ունենալու համար...

Շեքսպիրի պիեսներում վհուկների պատկերը ընդհանուրապես ահավոր չե. «Մակեբրաի մեջ նրանք հանդես են բերված ընդհանուր արամադրությունն ավելի մոայլելու և վողբերգական վորոշ տեսարաններով հանդիսականներին փշաքաղ անելու համար: Շեքսպիրի վհուկները, առանձին վերցրած, գրեթե զուրկ են վերացական և գերբնական տեսքից. նրանք, վորապես գուշակներ, մոտ են կենցաղին, վորոնք իրենց աշխատանքի վարձն անգամ ստանում են մթերքներով, նրանց զորությունը, իրենց ասելով, շատ «մեծ» ե. կարող են ապադա գուշակել, ինչպես մեր որերի գնչուները, «կարող են քամի բարձրացնել» ծովի վրա, թեպետ «նավ ընկղմել չեն կարող», բայց ապրում են խող մորթելով, շագանակ մուրալով և այլն: Բանքոն տեսնելով նրանց մորուքավոր գեմքը հայտարարում ե. «Վհչ ձեզնից

շնորհ եմ հայցում, զիչ ել վախենում ձեր չարիքներից, իսկ Մակրեթն ասում ե. «անիծվի դրանց հավատացողը», թեև ինքը հավատում եւ Շեքսպիրի վհուկները մասամբ հիշեցնում են մոռիկ անցյալում մեր յետամնաց վայրերում վիտող մալչիներին, մաջյուն պատրաստողներին, գաղտնի խոտ ու ծաղկից սեր կատող ու արձակող դեղերի հեղինակներին, չար աչքից համայիլ դրող շառլատաններին և այն քրեական ափովի «ջադուկ»-ներին կամ «կախարդ»-ներին, վորոնք իրենց հունարը գործ դնելիս Փիզիքական ուժի յեն դիմում չար վոգին կնոջ մարմնից դուրս վանելու համար...

Շեքսպիրի «Մակրերառում միայն մի կարճ տեսարան կա, ուր բնությունը և թռչունը պայծառ և պատկերացված: Դրանքյան համապատասխան և տեսարանը.—զրուցում են Մակրեթի մոտ հյուրընկալվող Դունկանն ու Բանքոն, վորոնք դու բաց սրտով մտել են Մակրեթի տունը.

ԴՐԻՆԿԱՆ.

Դոյյակի զերծը ոքանչելի յի.

ոզը մեղմ ու նոսր, գգվում և ամեն գգայարանքդ:

ԲԱՆՔՈՒԹՅՈՒՆ.

Ամռավա հյուրը, գմբեթաթռիչ այս ծիծեռնակը,
իր սիրակառույց բնակարանով առաջնում ե,
թե յերկնքի շուածն իր անուշ բռւյրով այստեղ դյութիչ ե.
Չկա մի կերպվածք, մի այտմի զրուխ, մի անկյուն հարմար,
ուր այս թռչունը հյուսած շիննի ճուռակ անկողին
և բաղմաներանդ իր որորոցք,
Յես նկատել եմ, այստեղ, ուր նրանք շատ են հաճախում
և ձողեր բերում ոզն այստեղ նուրբ ե:

Մոռայլ տեսարաններին ուղեկցում են սև գիշերը, փոթորիկը, գիշերային վայող թռչունը. պայծառ տեսարանին —վոր բացառություն և «Մակրերա» մեջ—մեղմ ու գգվող ոզը և ծիծեռնակը իր սիրակառույց բնակարանով:

Մի խոշոր արժանիք ունեն շեքսպիրյան հերոսները, վոր ընդդեմի յե նրա բոլոր պիեսների նկատմամբ: Դա այն է, վոր նրանք մտածել զիտեն, մտքեր հայտնել՝ սեղմ ու իմաստալից: Մարգարիտների նման ցրված են այդ մըտքերը զանազան պիեսներում:

Բերենք մի քանիսը «Մակբեր»ից.

1. Վհուկներին լսելուց հետո Բանքոն ասում է Մակբերին.

Յեթե լրջորեն հավատանք դրան՝
բացի կազմորի թենք գտռնալուց,
դա ձեր սրտի մեջ դեռ թագի տենչ ել կարող և վառել:
Զարմանալի յե, համայն խավարի գործարանները
մեզ գեղի կարուստ մղելու համար նիշտ խօսի են ասում.
Դյուրում են փոքրիկ ծշմարտուրյանով,
վար մեզ կործանեն ծանր ու դժվարին հետեւանիներավ:

2. Մակբերի վոճիրը սարսափ և ազդում Դունկանի յերկու տղաների մեջ, և նրանք վճռում են փախչել մեկը Անդլիա, մյուսը՝ Իրանդիա: Նրանից մեկը ասում է.

Յեթե մեր բոխուը իրարից զտանենք,
թերեւ ավելի ապահով լինենք.
այնպիսի տեղ ենք գտնվում հիմա,
ուր դաշտումներ կան ժպիտների տակ:

3. ՄԱԿԲԵՐ.


Արքա լինելը—դեռ յեկա վոշնչ է,
ապահով լինելը՝ այս և խնդիրը:

Մի վերջին հարց: «Մակբեր»ը Շեքսպիրի հոռեանս մտքի արտահայտությունն է: Դրամատուրգի քննադատաներից շատերը այն միտքն են հայտնել թե հեղինակի հոռեատեսությունը անհույս է, վազբերգությունը յելք չունի: Այդ յեզրակացությունը մենք համարում ենք վոչ ճիշտ: Յեթե Շեքսպիրը մոայլ գույներ և գործածել, դա չե նշանակում,

թե նա ձեռնթափ ե կատարվող չարագործության հանդեպ։ Դերազանց վարպետությամբ վերաբարելով Մակրեթի ու նրա կնոջ վերելքի ընթացքը, նա չարաչար պատժում ե նրանց խղճի խայթով ու առա կործանում։ Կործանում վորպես արքայապահների, վորոնք գրավելով գահը, յերկրում ստեղծել են քառային վիճակ։ Միապետական Շեքսպիրը չե կարող հաշտվել նման դրության հետ։ Նա կողմնակից և միապետների, վորոնք «մնագությամբ են դործ դնում իրենց արքայական իշխանությունը», «անընասիր են իրենց մեծ պաշտունում», վորովիսի «բարեմասնություններ» նա տեսել ե սպանված Դունկանի մեջ և վորոնց ժառանգորդ ե համարում Մակրեթին հաջորդող Մալ'կոմին, Դունկանի վորդուն։

Նոր թագավորի վրա նա պարտականություն ե դնում մտքել յերկրում բուն դրած «բռնակալության վորոգայթները», հետ կանչել Մակրեթից հալածված վտարանդիներին և դատել «մսազործի» (իմա Մակրեթի) և նրա դիվահողի թագուհու անողորմ պաշտոնյաներին։

Ահա այն յելքը, վոր ցույց ե տալիս միապետական Շեքսպիրը իր մռայլ ու հոռետես վողբերգության վերջում։



«Եիր արքա»:—Սխալ տեսակես վաղբերգուրյան գաղափարի մասին:—Եւրկու միանման սյուժե:—Լիր՝ բազավոր. Լիր՝ սեփականազուրկ: Լիրի բարդ նոգեբանուրյան վերաբանուրյունը: Ու արքան իբրև նրան կարգեցի անկման հայելի:—Շեխապիրի հասարակական պեսսիմիզմը: Նդմունդը արգասիք բուրժուական դաժան վերելիք:—«Տիմոն Արենացի»: Տիմոնի միզաներապիան և Շեխապիրը:

Շեքսպիրի հոգերանական վողբերգությունների մեջ ու Արքան բռնում և առանձնահատուկ տեղ իր բարդ ու ցնցող դրամատիզմով, Գերազանց վարպետությամբ, խիտ պատկերներով հանճարեղ դրամատուրգը վերաբանագրել և զարաշրջանի որյեկտիվ իրականությունը, դնելով տիպերի և յերեռոյթների վրա սեփական վերաբերմունքի ընորոշ կնիքը, Վերցնելով սյատենն հին տարեգրությունից, խճող-ված հեքիաթային տարրերով, Շեքսպիրը ստեղծագործական անորինակ ուժով տվել և ընավորությունների մի զարգեցյա, զորոնք իրենց զործերով, ապրումներով ու մտքերով բաց են անում մեր տաջե ժամանակակից իրականության առանձին կողմերը: Լիր թագավորի և Դլուտերի ընտանեկան վողբերգությունների յետեւ մենք տեսնում ենք Փեղալական կարգերի անկման, հասարակական և ընտանեկան

կյանքի կազմալուծման յերևույթներ և նոր դասակարգի պատմական ասպարեղ մտնելու առանձին նշաններ հանձին տիպերի, վորոնք եյական դեր են խաղում Շեքսպիրի ներկա վողբերգության մեջ, Սույն գնահատությունը հիմք ունենալով, մենք չենք կարող համաձայնվել շեքսպիրյան այն քննադատների հետ, վորոնք «Ալիք Արքան բնորոշում են վորապես տառապանիքի վողբերգություն»: Չտեսնելով այն լայն ու խոր իրականությունը, վոր ընդդրկում է Շեքսպիրը իր յուրաքանչյուր գրվածքներ, բուրժուական շեքսպիրագետներից շատերը իրենց այսորինակ ձևական բնորոշումներով՝ նեղ շրջանակի մեջ են գնում մեծ դրամատուրգի գործերը: Ցեմե «տառապանքի վողբերգությունը» եյական հատկանիշն ե ալիք Արքաի, ապա պետք ե յենթագրել, վոր Շեքսպիրի մյուս վողբերգությունները տառապանքի տարրից ազատ են: Համապատասխանում ե դա դրամատուրգի ստեղծագործությունների դեղարվեստական տվյալներին: Տառապանքի խոշոր վաղբերգություն չկա «Մակբերք», «Որելլուկ», «Ճամլետ»ի կամ «Ռոմեո» և Զուլիյետ»ի մեջ:

«Վողբերգության գաղափարը,—ասում են նրանք,— անմիջականորեն բղխում ե հետեւյալից. ուսումնասիրել ճակատագրի տված հարվածների աղղեցությունը և առհասարակ մարդու բնափորության վրա տառապանքի ունեցած հետևանքները»: Մանավանդ տարորինակ ե վերոհիշյալ տեսակետը պաշտպանողների այն միտքը, թե Շեքսպիրը դրելով իր վողբերգությունը, վորապես թե կամնցել և ապացուցել, վոր տառապանքի մեջ մարդը զտվում ե, հոգով վերածնվում ու ավելի մարդկայնանում, և Ալիքը դրա պայծառորինակն եւ: Դուրս ե գալիս, վոր մարդուն մարդկայնացնող գերագույն միջոցը անհատական տառապանքն ե, վորը զտում, վերածնում ե նրա վողջ եյությունը»:

Մարդիկ չեն նկատում, թե ինչպես սահմանափակում են Շեքսպիրի գեղարվեստական ստեղծագործության լայն

ընդգրկումը, ուր ամփոփված կենդանի տիպերի ասլըումները իրենց ընդարձակ գիտակաղոնությունով սոսկ հողեափիզիոլոգիան յերևույթների նկարագրություններ չեն, այլ սոցիալական կյանքի բարդ վերաբռագրություն,

ուրիշ Արքասի մեջ ամփոփված սոցիալական յերևույթներին մենք կանդրագրառանք մի փոքր ներքն:

Դողբերդության հախնական նյութը Շեքսպիրը վերցրել է նույն Հոլինշեդի ժամանակագրությունից, վորի մասսին հիշատակել ենք սույն գրքում մի քանի անդամ, Տառըդիբը պատմում է Լիր անունով թագավորի մասին, վորն ունեցել է յերեք աղջիկ՝ Գոներիլ, Հռեգան և Կորդելիա, Ծերության հասակում Լիրը վորոշում է բաժանել իր թագավորությունը յերեք աղջիկների մեջ, բայց նախապես կամենում է իմանալ, թե աղջիկներից վերն է ավելի սիրում իրեն։ Առաջին յերկուաը փօքուն դարձվածքներով յերդվում են, վոր սիրում ին իրենց հորը ավելի քանի քան իրենց կյանքը և իրեն թե այն արտահայտելու համար նույնիսկ համապատասխան բառեր չեն գտնում։ Կորդելիան, վոր անկեղծ և ունի շիտակ բնավորություն, հայտնում է, վոր հորը սիրում է այնպես, ինչպես զայել է աղջկան։ Հորը դուր չեն դալիս աղջկա պարզ խոսքերը, և նա հեռացնում է նրան պալտից, զրկում ժառանգությունից։ Ոտարության մեջ Կորդելիան ամուսնանում է գաղիացոց թագավորի հետ։ Լիրն իր թագավորությունը բաժանում է յերկու աղջիկների մեջ և վորոշում հերթով ապրել սրանց մոտ։ Շուտով պարզվում է, վոր նրանցից և վոչ մեկը չե կամենում կատարել ծերունի թագավորի պահանջներն ու քմահաճույքները և ամեն մեկը նրանցից խորհուրդ և տալիս ապրել մյուսի մոտ, Խորը վիրավորված Լիրը գնում և մերժված աղջկա—Կորդելիայի մոտ, վորը ամուսնու ոգնությամբ դորք և հավաքում և պատերազմով դալիս յերկու ապերախտ

քույրերի վրա, հաղթում և նրանց ու դահը վերադարձնում էիր թագավորին և իրը թագավորում և յերկու տարի, վորից հետո գահը ժառանգում է Կորդելիան։ Մըա իշխանությունը անում և հինգ տարի, վորի ամուսնու մահից հետո ազգայաժմում են թագունու դեմ քեռորդիները, կալանավորում են նրան, բանա են զնում, ուր և նու ինքնասպանությամբ վերջ և տալիս իր տանջանքներին։

Իր թագավորի այս պատմությունը Յեղիսարենթ թագունու ժամանակ յենթարկվում և ընմական մշակման մի անհայտ հեղինակի, ձեռքով Այդ պիտի անունն և՝ «Ումարիս պատմություն Իր արքայի և իր աղջկիմերի մասին»։ Այդանող լիրը դուրս և ընթած վորպես մի անզոր և թուլամիտ ծերունի, դուրկ վեհությունից ու ինքնաւրույնությունից։

Եեքսպիրը ոգովելով Հոլինչեդի սյուժեյից, նշումը բավարար չե համարում։ Մըազրած վողբերդության հաճար նա նյութ և վերցնում մ. Սիրնեյի Շահկադիա վնայից, ուր պատմված և Պաֆլագոնիայի թագավորի մասին, վորը ունենում և մի ապօրինի և մի որինավոր զավակ։ Առաջինը մեծանալով, կամնուում և աէրնել հոր ժառանգությանը. ամբաստանություններով ու կեղծիքով լարում և հորը մյուս վորդու դեմ և սահպաւմ և զրկել նրան ժառանգությունից, Դյուրահավատ ծերունին հետազայում պատճենում և նույն ապօրեն զավակից, վորը նրան կուրացնում ու վանդում և պալատից Այս ծանր վիճակումն և դանում թշվառ ծերուն նրա հարազատ (վոնդված) վորդին ու ինսամումն նրանք պաշտպանություն են դանում ուրիշ իշխաններից, վորոնք յելնում են չարագործ վորդու դեմ, վախցնում նրան, իսկ ծերունուն ու վորդուն վերադարձնում դահը։

Ահա այս յերկու սյուժեյից մեծ գրամատուրդը հյուսել և իր վողբերդությունը, անհուն խորություն ու զբամատիզմ հաղորդելով նրան Վերցնելով նրանցից միմիայն փաստական կողմը, Եեքսպիրը միանգամայն ինքնուրույն և

յեղել նրանց մշակման դործում։ Գործողության ու դրամա-
տիումի դարձագման ընթացքում նա հարկ է համարել փո-
խութիւնութիւն վաստական մասը, հարմարեցնելով այն իր զե-
ղարվեստական ու գաղափարական նպատակներին։ Բնավո-
րությունները կերանելիս Շեքսպիրը մեկնակետ և ունեցել
բացառապես իրականությունը, կյանքի յերևույթները, զեպ-
քերը, անցքերը, վորոնց առնչությամբ այս կամ այն ուղ-
ղությունն են սատացնել հերոսների գործողությունները։ Միե-
նույն իրական յերևույթների աղջեցությունը հերոսների
բնավորությունների վրա հոգերանական նուրբ վերարտա-
պրամով հայտնաբերում և Շեքսպիրը։

Այստեղ պետք է ընդունվ, վոր Շեքսպիրը, մասնի
անշնոր իր իդեալիստ նպատակներին և արամադրությանը,
ուերժմել և յերկու սյուժեների նախնական վերջավորությու-
նը և դնացել ինքնուրույն ճանապարհով։ Յերկու պատմու-
թյունն ել, ինչպես տեսանք վերը, դրական վախճան ու-
նեն, բարին անպայման հաղթող և հանդիսանում, չարը
պատժվում։ Շեքսպիրի «Լիլի արքան», ընդհակառակը, վող-
բերզական վախճան ունի Լիլը և Կորդելիան կործանվում
են, թեղետ ընկնում են նրանց բոլոր թշնամիներն ել Հաղ-
թողը մահն եւ,

Շեքսպիրի «Լիլ արքան» այս հիման վրա իրավամբ
համարվում է դրամատուրգի ամենահոգեւոն վողբերզու-
թյունը։ Դրեթե բոլոր հերոսները մեռնում են բեմի վրա,
ինչպես դրամատիկական քրոնիկներից շատերի մեջ։ Մեռ-
նում են և լավերը և վատերը։ Վատերը թունավորվում կամ
անձնասովան են լինում, լավերին սպանում են, կուրաց-
նում, դուրս են նետում բաց յերկնքի տակ կամ խելազա-
րության հասցնում։

Բացարձակ «վատ» կամ «լավ» հերոսներ չունի Շեքս-
պիրը, «Դրական» և Լիլը, բայց վարչափ պակասություն-
ներով և ոժաշած նա։ Անգամ Կորդելիան, վոր կանացի

ամենաիդեալական զեմքն և համարվում այս ոլիեսում, իբ հետ խոսում ե այնպիսի լեզվով, կարծես առաջին անգամն և հանդիպում նրան և ինչ վոր ծառայական պարտականությունների մասին հայտարարություն անում, նույն և նդմօնդը, —վորպես բացասական տիպ, վորը պատճառ և զանում կուրացնելու հորը, գուրս վոնդելու նրան տանից, —մտքեր և արտահայտում, վորոնց հետ չե կարելի չհամաձայնվել, Աղջիկներից յերկուսը, վորոնք ևսև ապերախտությունն են հայտնաբերում հոր նկատմամբ, անկասկած արդարացի յեն իրենց գանդատով Լիր թաղավորին ուղեկցող հարյուր ասպետի վերաբերմամբ, վորոնք հանդուգն ու շուայլ են պահում իրենց Այս որյեկտինությունը շեքսպիրյան ստեղծադործական այն յեղանակն ե, ուորի շնորհիվ նրա հերոսները միշտ կենդանի յեն, կյանքի ժխորից վերցրած, իրենց ներքին հակասություններով և արտաքին հակասական ազդակներով:

Սակայն Շեքսպիրի այս պիեսը, հանճարեղ կերատվածք լինելով հանդերձ, ունի պահասություններ, վորոնք բղխում են հետեւյալ հանդամանքից: Այսաեղ, ուր պիեսի նախնական նյութը չե յենթարկված շեքսպիրյան մշակման, անիւրական ընույթ ե կրօւմ, Ամենից առաջ մատնանշենք այն տեսաբանը, ուր Լիրը պալատականների ներկայությամբ ստիպում ե աղջիկներին արտահայտել իրենց վորդիական սերը և խոստանում ժառանգության ամենամեծ բաժինը տալ նրան, ով կհամոզի, թե ինչը ավելի յե սիրուած հօրը: Գիեսում յեղած ակնարկներից կարելի յե յեզրակացնել, ուոր Լիրի ամենասիրելի աղջիկը Կորդելիան ե, աղջիկներից ամենափոքը: Ծեվ սակայն, յերբ մեծ քույրերը ժառանգություն ձեռք բերելու համար փքուն խոսքեր են շոայլում հոր հասցեյին, իսկ Կորդելիան իր անկենդ սերը հայտնում է պարզ ու անպահույն բառերով, Լիրը նույն վայրկյանին զրկում ե նրան, ժառանգությունից, ուրանալով շամեն:

ինսամք, սևը ու հայրական պարտականություն և արևնաւկան աղբականություն, ի՞նչ պատահեց, Մի վայրէկյան առաջ Լիրը Կորդելիային անփանում և «իմ վերջին ցնծություն» և հանկարծ՝ անմօք: Տեսարանն անբավարար և և հետևարար անհամողիչ, նույնը կատարվում է Գլուխերի և իր «ապօրինի զավակ» Եղմունդի մի տեսարանում: Վերջինը նպատակ և դնում կորսարի մատնելու յեղքորը, Եղգարին, վոր հոր ժառանգությանը ինքը տիրի: Յեզ նրան հոր առջև ամբաստանելու համար հրապարակ և հանում կեղծ համակ, իրը Եղգարի ձեռքով գրած, ուր վերջինը վորպես թե զայ և նյութում հոր զիմ նույն ժառանգության համար: Յեզ Գլուխերը հավատալով կեղծ նամակին և մյուս դրաբարտություններին, սկսում և սաստիկ հալածել իր սիրելի վորդի Եղգարին, վոնդում նրան տանից և այլն:

Սրանք անկասկած վողբերգության պակասություններն են, վորոնք տուած են յեկել գործողությունների թույլ պատճառաբանված լինելու հետեանքով: Շեքսպիրը իր ուշադրության կենարոնը Լիրի անկումն ու խելագարությունը համարելով, վողբերգության առաջին տեսարանի վրա տուանձին հոգ չե տարել, իր գրչին վայել հիմնավորում չե տվել:

Սակայն յերկրորդ տեսարանից սկսած վողբերգության կերտվածքը միանգամից այնպիսի հոյակապ վերելք և ընդունում, վոր առաջին տեսարանը իր թույլ իլլյուզիայով անցնում և հետին մակարդակը և մոռացվում:

Վողբերգության կենարոնում Լիր թագավորն է, վորի տիտանական կերպարանքը հիշեցնում և ասպետական հին աշխարհը և վորի տրագիկական կործանումը թողնում և այնպիսի տպավորություն, կարծես հանձին Լիր թագավորի գլուխում, տպավորում և ամբողջ ասպետական-ֆեոդալական աշխարհը:

Վողբերդության սկզբում՝ Լիրը հանդես և գալիս իր իշխանության վերջին ժամերում, յերբ նա վորոշել և «աղաւտել իր ծերությունը ամեն հոգս ու աշխատանքից» և թագավորական գայիսոնը հանձնել յերիտասարդ «կայտառ ուժերին»։ Բայց Լիրը տակալիին իր վրա կրում և արքայական շուքն ու փառքը, պահպանում բռնակալական կեցվածքը։ Կանդնած սոցիալական բուրդի դադարին նա իր վերջին կամքն և արտահայտում իրասած, քմահաճ, զուռող նա պահանջում և հարադար աղջիկներից տալ վորդիական սիրո ու հնագանդության հրապարակային յերաշխիքներ։ Ցեղ յերբ յերբորդ աղջկա, Կորդելիայի պարզ բացարձությունը չե գոհացնում նրան, Լիրը հայտնաբերում և իր դեսպոտիզմի բոլոր կողմերը։ Շողոքորթ մեծարանքի սովոր թագավորի մեջ վայրկենապես բռնկվում և զայրաւյթը աղջրկա դեմ, և առանց հաշիվ տալու նա վճիռ և կայացնում դրկել աղջկանը ժառանգությունից ու ծնողական խնամքից։ Բնորոշ և դաժան ու կամակոր ծերունու յերդումն ու անհծքը։

Թող վկա լինեն առւրբ լույսն արեի,
անհաս խորհուրդը խովար դիշերի,
հզոր շարժումները մթնոլորտների,
վորով գալիս ենք աշխարհ ու դնում,—
անա ուրանում եմ յես ամեն խնամք,
սեր ու հայրական պարտականություն
և որենտական աղջկանություն,
այժմ ու համբայան համարում եմ քեզ
ոտար իմ որսիս, ոտար իմ աշքիս...

Իշխելասեր, իր յեսալաշտության մեջ կղոյիացած Լիրը ոտար և մնացել հարադար աղջիկներին։ Ապրելով նրանց հետ մի հարկի տակ, նա չե ճանաչել նրանց, Կորդելիայի փքուն խոնքերից զերծ բացարձությունը Լիրը համարում և ըմբոստություն իր դեմ ու իշխանավորի ամբողջ իրա-

վունքով խոյանում ստրկական հնաղանդություն չցուցաբերող հարդելիայի վրա։ Յնիլ յերբ պալատականներից մեկը, իննաւը, ահեննելով կատարվող անարդարությունը, փորձում է միջամասի, իբրը իր ամրողջ կատաղությունը թափում և նրա դիմին, «Ճեռացցիր աշքից», «լարված և աղեղը, խուսափիր նեաից», «ծառանուկ...»՝ գոռում և նա ու ձեռքը տանում սրին՝ հանդուլն պաշտպանին հարվածելու համար։ Իր վարժունքի մեջ անզուսպ, աննահանջ, նա ինքն է դիմում կարդելիայի ձեռքը խնդրող Ֆրանսիայի թագավորին, խորհուրդ տալով չանարդել իր սերը նման աղջկա հետ «Ձեր սիրաց գարծքեք, — ասում է Լիբրը նրան, — ուրիշի վրա, վոր արժանազույն լինի, քան թե այս թշվառ արարածքը նրա մյուս աղջիկները, թեպետ շողոքորթելով ձեռք ին բերնել թաղավորական ժառանգությունը, շատ լավ դիմեն, վոր նրա «այժմյան առատածեռնությունը նախատինքի աղբյուր և լինելու իրենց համար, վոր իրենք ստիպված են առնելու «վոչ միայն նրա մեջ խոր ազմատացած թերությունները, այլ և այն քմահաճ զայրացկոտությունը, վոր գալիս և մաղձուռ ու հելվանդոս ծերության հետո։ Աղջիկներից մեկի ունենակալեատին Լիբրը հարվածում է միմիայն նրա համար, վոր նա հանդդնել և խեթ նայել իր վրա։ Հարյուր ուղեկից ասղեատվ նա նոտել և աղջիկներից մեկի առնը և մտքովն անդամ չե անցնում նահանջել նախկին զոսպ գահակալի դիբքերից։

Յեկ ահա իր շուրջը միմիայն ստրկական հնաղանդություն տեսած, ընավորությամբ ուժեղ միապետի գլխին իրար հետեւց իշնում են ծանրածանք հարվածներ։ Խորը վիրավորանք են հասցնում յերկու աղջիկները, վորոնք չեն ուզում ճանաչել նրա պահանջներն ու քմահաճույքը։ «Հարազառա», ուիրելիք աղջիկները, վորոնց լիբրը հանձնեց իր ամրողջ ունեցածը, այժմ հորը զրկում են անդամ ուղեկից ասոկենք պահելու իրավունքից։ Աղջիկներից մեկը, Գոներիլը,

անպատկառ և պահում իրեն, պահանջելով հորից «պատկասելի» ծեր հասակի հետ» ունենալ «նաև արժանի խնդք»:

Լիրը չե ուզում հավատալ իր ականջներին. «արթուր նև յես, թե՞ քնած», — հարցնում ե նա ինքն իրեն,

Առաջին հարվածը շնչեցուցիչ ե նրա համար: Ապերախտ աղջկա վարմունքը ցնցում ե նրա ամբողջ եյությունը: «Դարշնկի ծնունդ, քեզ այլև նեղություն չեմ տալ: մի դուստր ել ունեմ», — ասում ե նա, համոզված, վոր մյուս աղջիկը նրան կընդունի բոլոր ասպետներով: Բայց ըստ յերեսութին, հույսը մեծ չեր յերկրորդ աղջկանից, — Հոեգանից, ուստի նա հիշում է Կորդելիային, վորին այնքան անարդար վերաբերմունք ցույց տվեց ինքը: Լիրը պահանջում ե անմիջապես թամրել ձիերը. նա փորձ անգամ չե անում ըրանակցության՝ մեջ մանելու աղջկա հետ: Նա սովոր չե խնդրել, պատրաստ ե գնալ դեպի կործանում, բայց չբաղխել աղերսանքի դուռը: Նա յերկնքից պահանջում է համբերություն, վոր խելքը չթոցնի «Չեմ ուզում խելագարվել», ասում ե նա իր խեղկատակին: Չե ուզում ե արտասևել: «Եթերգված եմ, — ասում ե նա մեծ աղջկանը, — վոր ամոթ եմ զգում իմ թուլության համար, վոր հակառակ կամքիս դու կարող ես աչքից տաք արտասուք խլել:

Մեծ աղջկա կողմից մերժված, Լիրը իր ասպետներով գալիս և յերկրորդ աղջկա մոտ, բայց այստեղ ամելի գառն հիսանթափություն եր սպասում նրան: Աղջիկն ու փեսան վոչ միայն չեն ընդառաջում, այլ և խոսել չեն կամենում նրա հետ: Լիրը չի ուզում ընկճվել, բայց իր անսրոշ և միանգամայն անապահով վիճակը ստիպում ե վերջին անգամ խոսել սդուքսի և նրա կնոջը հետ (փեսան ու աղջիկը): Վռտնահարելով իր պատիվը, նա ստիպված ե մի քանի անգամ մարդ ուղարկելու նրանց հետևից: Հեշտ չե այդ ամենը տանել գոռող Լիրին: Նա ինքը զգում ե այդ և վախենում ե հոգեկան ցնցութեներից: Նրա մեջ յեռում ե վրեժ-



Պետրոս Ադամյանը Լիք արքայի դերամ
Петрос Адамян в роли короля Лира.
Petros Adamian in the role of king Lear.



ինողրության զդացմունքը. «Վլինժ», մահ, ժանտախտ, անհծօքաւ վերջապնս արժանանում ե Լիբը տեսանել Հռեգանին և գանդապնին մեծ քրոջ վրա, իսկ Հռեգանը, ինչպես ուետք եր սպասել, ոլաշտապան կանդնելով քրոջը, ոուրտ անտարըերությամբ խորհուրդ և տալիս ծերունուն մեղայականով վերադառնալ մեծ աղջկա մոտ և ընդունել նրա «իսոհեմ» պահանջները։

Այս հարվածը կրկնակի յեր, վորովհետև ծերունի Լիբը կորցնում եր վերջին հույսը և վերջին ապաստանը. կամ թե պետք և ներում խնդրեր ու այնպես մտներ աղջկա սիրեանը։

Մեծ գրամատուրգը, դնելով իր հերոսին տեղացող հարվածների տակ, քայլ առ քայլ հետեղում և հոգեկան այն ցնցումներին, վորոնց յինթարկվում ե նաև Տեղի ունեցավ այն, վորից վախենում եր Լիբը. նա սկսում ե կորցնել հոգեկան հավասարակշռությունը։ Սակայն հեռու յի ընկճվելու մաքից, արտասուք չե թափում։ Զավակներից մերժված, ամեն սեփականությունից, իրավունքից, անդամ ոթեանից դրկված, վրեժն ու ցասումը սրտում, Լիբը դուրս և գալիս դեպի վայրի դաշտ, անհայտ ու անորոշ, ուր սկսել եր փչել մի կատաղի մըրիկ, ուր թափվում եր տեղատարափ անձրեւ։

Մըրկահույղ ընությունը համապատասխան եր Լիբի ալեկոծ վիճակինու Շեքսպիրը միացնելով արտաքին ու ներքին մըրիկը, ավելի մեծ, ավելի գրանդիոզ և դարձնում Լիբի ապրումները, տակն ու վրա անելով նրա ներքին աշխարհը։ Խնչպես պատմում ե ասպետներից մեկը, յերեկվաթագավորի և այսորվա անոթեան ծերունու հոգին որվա յեղանակի պես լի յե ծփանքով, վորը կատաղի փոթորկի, վորու ու կայծակի հարվածների տակ բաց դաշտում էկատագած տարրերի դեմ և մարտնչում, աղերսում և հողմերին՝ նետել աշխարհը ծովի անդունդը կամ ծովը մղել յեղերքներից դուրս, վորպեսզի իրերը փոխվեն ու ջնջվեն։ Լիբը

ապրում և հոգեկան սուր տագնապ, պոկոտում և դլխի մաղերը, վորոնք կատաղի քամու ծփանքով ցըվում ևն ողում, թանձր խավարի, հողմ ու անձրեի մեջ, «յերը արջն իր ձագերով, առյուծն ու գայլը պահպում ևն իրենց վորջերում, ծերունին գլխաբաց այս ու այն կողմն և վազում և մրրիկ ու փոթորիկ փնտում, Հոգեկան այս վիճակը Լիրի մեջ առաջացնում և մի սուր բեկում և նա իրեն տեսնում և իրրկ «խղճուկ ծերունի, վշտահար, տկար, նախատված մի ստրուկ»: Նախկին թաղավորը, կյանքից բզկտված, կյանքի խնջույքից դուրս նետված, այժմ միայն գիտակցում և, վոր արքա ժամանակ ընդունակ չե յեղել տեսնելու այն, ինչ վոր այժմ և տեսնում—«մերկ թշվառներին», տոնանկ աղքատներին» և այնու Ա՛հ,—ասում և նա,—այս մասին շատ քիչ եյի խորհում յես», Մի տեսակ ջերմ մերձեցում զդալով զեպի թշվառ խեղկատակն ու մերկանդամ Եղզարը, կիդեպայան և համարում իր թիկունքը ծածկող արքայական հանդերձը և բուռն դայրույթով բղկտում, համարելով այն ռոտար ծածկույթ»:

Վողբերգության յերրորդ գործողությունը գրեթե ամբողջովին նվիրված և Լիրի ներքին տագնապի բուռն արտահայտության և ներքին կերպարանափոխության, մարդկայնացման: Շեքսպիրյան գրականության մեջ պատվավոր տեղ և բռնում հոգերույժների դիտողությունը, ուսումնասիրությունը խելագարության այն պրոցեսի մասին, վոր Շեքսպիրը գերազանց վարպետությամբ պատկերել և Շլյահանք մեջ, Ճիշտ և նկատում շեքսպիրագետ պրոֆ. Ստորոժենկոն, վոր Շեքսպիրի նպատակը չե յեղել խելագարության պատկերացումը, վորպես այդպիսին, այլ թե հոգեկան այդ վիճակը թաղավորից հասարակ մահկանացու դարձած Լիրի մեջ մտքերի ու զգացմունքների ինչ հեղաշրջում և առաջացրել:

Նույն բարձր վարպետությամբ նա պատկերում է կիրի ողացումը նորդելիքայի վրանում (Դուվը), յերբ խորը կաղզութիչ քնից հետո լիրը ուշգի յև դալիս, ճանաչում կորդելիքային ու ծնկաչոք ընկնում նրա առջև, դղջալով իր աններելի վարմունքի համար, Շեքսպիրը յերբեք չեղաղվել իր հերոսների հոգեկանի մանրակրկիտ ստատիկ աղբալումներով, ինչպես 19-րդ դարի բուրժուական մոդեռնիստական դրազները, վորոնչ իրենց հերոսի ներքին աշխարհը չեն դնում արտաքին հղոր ռեալ ապդակների ներգործության տակ Շեքսպիրը վարպետ և և շարժում ու կենդանի գործողություն սահեղեցիւ, և ամենանուրը թելերով հյուսելու այն հերոսի հոգեկան շարժումների հետ:

Դուռիդ թագավորին բաժին հանելով տառապանքի ձանը հարվածներ, Շեքսպիրը նրան ստիլում է քամել կյանքի մրուրը, խելակսրույս դարձնում աղջիկների ապերախտության, նրանց վայրենի եղոխզմի և անսիրտ վերաբերմունքի պատճառով, իսկ սոցիալական բուրդի ստորին տատիճաններում նրան մարդկայնացնում եւ Վառ ալատկերներով Շեքսպիրը լիրին հասցնում եւ այն դիտակցության, վոր նա, լիրը՝ հոգեկան սուր տաղնապ ապրելուց հետո, այլ չեն մտածում արքայական դահ ու դայիսոնի մասին, այլ զերաղտասում եւ սիրելի աղջկա՝ կորպելիքայի հետ մնալ բանտում, քան դնալ պայտա՞ տեսնելու նրա քույրերին, այսինքն իր աղջիկներին: Նա պատասխանում է կորպելիքային.

Վահ, վահ, վահ, Թանը բանա, այնոնք կերպնը
մենք, ինչուս յերկու թռչուն վանդակում,
զու իմ ողնութանը կուղես, իսկ յես
ծունկ չորած քեզնից ներում կիսնդրեմ:
Այսպես մենք կտարենք, կերպնը, կաղոթենք,
ավանդությաններ կապտմենք միմյանց,
պարտականների վրա կծիծաղենք,
կլանը նշան պատմությունները,
թե ով և ընկնում, ով բարձրանում,

ո՞վ շնորհը և գտնում, ո՞վ դրէվում նրանից,
գործերի զաղանիքը կմեկնարանենք,
իրրե սրտագետ Այսպես
բանտի պատերի մեջ մենք կտեսնենք
պալտոտի խաղերն ու խմբերը, վորոնը
լուսնի հետ անում ու պակասում են:

Շեքսպիրը սակայն գործողության դարձացումը հասցնում և իր արամարանական վախճանին, Լիրի քաշած տառապանքները նա բավական չեն համարում. նա պատրաստում և նրան մի նոր «գողգոթա», վորպեսզի այրող պատկերներով միաժամանակ կարողանա արտահայտել իր ծայրահետք հոռեակեսությունը կյանքի նոր յերեսույթների վերաբերմամբ նդմունդը, Գլուխերի «ապօրինի» զավակը և զորքերի առաջնորդը, դադոնի դահիճ և ուղարկում բանու և Լիրի աչքի առաջ սոլանել և տալիս Կորդիլիային, Թեպեահանկարծակի յեկած ծերունին վերջին ուժը հավաքում ու կատաղի հարձակումով խեղդամահ և անում դահճին, սակայն անկարող տանելու անփոխարինելի կորուստը՝ մեռնում վշտից:

Անկրկնելի յե այն տեսարանը, ուր թշվառ Լիրը գուրս և գալիս բանտից աղջկա դիակը գրկած:

Լքման ու հուսահատության ծանր զգացումով և տուգորիած ամրող վողբերգությունը:

Ելիր արժաքի մեջ վառ արտացոլում և դաել **Շեքսպիրի** հասարակական պեսսիմիզմը, Խնչից և առաջացել դա: Պատճառուները անկասկած անհատական չեն, այլ հասարակական: **Շեքսպիրի** սեփական մտքերը, վորոնք բղխում են նրա դասակարգային աշխարհայացքից, ցրված են վողբերգության զանազան յերեսներում և բնորոշում են նրա վերաբերմունքը դեպի իրերն ու յերեւյթները: Վոչ մի տեղ Շեքսպիրը այնպես ցայտուն չե արտահայտել իր ափսոսանքը անցման շրջանից բղխող իր տարակույսներն ու հոռի մտքերը, ինչ-

պես «լիր արքան» և «Տիմոն Արինացի» պիեսների մեջ։ Ծերանի Դլուստերի բերանով նա ասում է.

«Մերը ցամաքած, բարեկամությունը պաղած։ յեղբայր յեղբոր դեմ և յելնում. քաղաքներում խռովություն, գյուղներում յերկապահկություն, պալատներում դավ։ խզվում ենոր և վորդու մեջ յեղած կապը։ Իմ անաստիած վորդում շրա կատարվեցին այդ դուշակությունները. սա՝ վորդին ենոր դեմ յելած։ Թագավորը որենքից դուրս և յելնում. սա՝ հայրն և վորդուն դեմ։ Մեր լավ որերը անցան գնացին։ Նենդություն, խարդախություն, դավ և կործանիչ անկարգություններ... Ազնիվ, բարեհոգի կենան ել արտաքաված յերկրից իր բարեխղճության համար, Սոսկալի՛ յե, սոսկալի՛ ա:

Այստեղ ամեն բան ասված եւ «Մեր լավ որերն անցան, գնացին»։ Վորդնք եյին այդ ըլավ որերը։ Դա, ըստ յերեսութին, այն ժամանակն եր, յերը ամենուրեք տիրում եյին դարերի ընթանցքում սրբագործված, կարգերը՝ ընտանիքում և հասարակական կյանքում։ Յեղբայր յեղբոր դեմ չեր գնում, վոչ ել վորդին հոր դեմ, վորդինետե ամուր եյին նրանց դոգող կապերը, կաշկանդած եր անհատականությունը։ Իսկ այժմ Այժմ պատմական ասպարեզ և մոել մի դասակարգ, վորը քանդում են հին, ամուր կապերը կտրում անհատականության կապանքները, կազմալուծում հին աշխարհը, չե սանզծում նորը և ամեն բան առեծախսի առարկա դարձնում։ Այս չկա աղնվություն, բարեխղճություն յերանելի անցյալի մատքով վերցրած։ Նոր հարաբերությունների մեջ վաղեմի ռատպետականության տեղը բռնում են նենդությունը, խարդավանքը, կործանիչ անկարգությունները։

Կա այստեղ Շեքսպիրի համար ուրախանալու առիթ, Ծերանի ի իրը խելառ ու կամակոր, զրկում ե սիրած աղջկանը ժառանգությունից ու չնշին պատճառով դուրս անում տանից։ Հորից անչափ բավարարված, նրա բոլոր կարողությունը ժառանգած աղջիկները և ապերախտությումը են

պատասխանում, անարգում նրան, թողնում անոթեան և հասցնում ծերունուն խելազարության։ Պատերազմում են իրար հետ հարազատ քույրերը, թունավորում իրար, կարյերայի համար մոռիրներ և զործում նոր ֆորմացիայի խարդախ «ասպետը»՝ նղմունդը։

Հին կարգերը քայքայող անխուսափելի ուժը, վորի պատկերը տակավին պարզ չեր Շեքսպիրի համար, բայց զգում եր նրա յերթի զրոփյունը, — ապականություն և բերում, և Շեքսպիրի կարծիքով — յեթե զսպող զորություն չինի՝ ապա «կզա ժամանակ», յերբ մարդիկ կսկսեն միմյանց պատառել, ինչպես ծովի հրեշներ»։

Հանձին ուլու արբախ Շեքսպիրը պատկերել է ֆեուդալիզմի վերջնական անկումը, ուր չկա վոչ մի լուսավոր բան։ Թագավորը ինքը անմիտ բաներ և անում, բաժանում ունեցածը անարժան ժառանգներին, վորոնք պառակտվում են, իրար վոչնչացնում։

Անցման եղոխայում յելք չտեսնելով, Շեքսպիրը ավելի հեռուն և նայում, ստեղ հիշելով վարի խավերին,

Շեքսպիրը պարոքսիզմի հասած լիրի բերանով հուր ու կայծակ և թափում հասարակական ցեցերի վրա. չարագործների, վորոնք վարպետությամբ ծածկում են իրենց հանցանքները. արյունահեղ ձեռքերի, յերդմնազանց ու անառակ տիպերի, կեղծավորների, վորոնք առաքինության դիմակով քողարկում են վոճիրները։

«Տես, — ասում ե լիրը, — ինչպես այդ խարդախ դատավորը ծաղրում և հասարակ գողին, Ականջիղ ասեմ. փոխիր դրանց տեղը. վմբն և գողը, վմբն և գողի դատավորը»։

Շեքսպիրի սոցիալական դեմքը, ավելի պարզ արտահայտվում և այն տողերի մեջ, ուր հակադրված են հարուստը աղքատին, իսկ մուշտակը, կերպասն ու վուկին՝ ցնցոտիներին։

Արքայի կամ միապետության դեմ, վորակես սկզբունքի, ըստասական խոսք չունի Շեքսպիրը, Բայց, իբրև հուսանիստ, նրա համակրանքը թշվառների կողմն ե, Շեքսպիրը նրանց խղճում ե, ինչպես և նրա ծերունի հերոսը՝ նախկին արքան և այժմյան վայրի դաշտի ընակիչը:

«Եթիւ արքայի մեջ հիշատակված են սոցիալական այն մոտիվները, որոնք համեստի մերկացման առարկան եյին, ինչպես այնտեղ, ներկա վողքերգության մեջ ել սոցիալական անարդարությունը վերացնելու առաջարկ չունի Շեքսպիրը, Բայց վիճակում ե չարիքը մեղմելու միջոց: Յեզ այդ միջոցը Փելանտրոպիան ե, ունառի խղճահարությունը, բարեգործությունը: «Սովորիր, հարձւատ, սովորիր դդալ, — ասում ե Լիրը, — ինչ զգում են անանկները, վորպեսզի լիությունից վողորմություն տաս նրանց և յերկնքի արդարությունը ապացուցես»: Միջոց, վոր դարերով գործադրել են ֆեոդալական և բուրժուական հասարակությունները դժգոհներին լուսնելու համար: Շեքսպիրը գիտակցում ե, վոր հասարակական բարիքները անարդար են բաշխվում: Երախար, ասում ե նա խեղկատակի բերանով, մի պոռնիկ ե, վոր միշտ հարուստներին ե բաց անում իր դռները: Դիւտակցելով այդ՝ յերեսությը համարում ե համիտենական:

Յեթե այս ամենից կամենանք հանել մի յեղբակացություն, ապա կստանանք հետեւյալը. Շեքսպիրը մերկացնելով հասարակական չարիքները, իրար հակադրում ե հարուստներին և աղքատներին: Շեշտում ե բարիքների անարդար բաշխումը: Դեմ չիննելով միապետության, թշվառների պաշտպան ե:

Առեւրական կապիտալի արագ զարգացման հետևանքով (տես սույն գրքի սկզբում), սոցիալական անհավասարության խնդիրները շատ սուր եյին դրվում Անգլիայում: Դրանով ե բացատրվում Թոմաս Մոռի հռչակավոր Շնուրիակի յերևան գալը 16-րդ դարում: Այդ խնդիրները պատ-

կերների շարքով շոշափվել են նաև Շեքսպիրի գործերում, բայց այն տարբերությամբ, վոր հանճարեղ հումանիստ Թոմաս Մոռը փորձել է գտնելու անհավասարության վերացման ճանապարհը, հայացքն ուղղելով դեպի կոմունիզմ, Շեքսպիրը համարել է այն անլուծելի և մնացել ինդիվիդուալիզմի շրջանակում, համակվելով անհույս հոռեանությամբ:

Թոմաս Մոռի և Շեքսպիրի միջև կան մերձեցման և հեռացման կետեր: Շեքսպիրը կողմանակից և ուայ միապետից, Թոմաս Մոռն ել ընդունում է, վոր պետության գլուխ պետք և կանգնի «իմաստուն միապետը», Շեքսպիրը իր աշխարհայացքով կարող և ճանաչել միայն դասակարգային պետության գոյությունը: Թոմաս Մոռը զեմ լինելով մասնավոր սեփականության սիստեմին և քարողելով համայնական աշխատանք, տակավին չուներ անդասակարգ հասարակության գիտակցությունը. ցածր տեսակի աշխատանքի համար նա անհրաժեշտ եր գանում ստրուկտուրի գոյությունը: Շեքսպիրը կրոնով յերբեք չե տարգել. շատ անգամ նրա հերոսները «ասավածներին» են դիմում, հիշեցնելով անթիք աշխարհի մարդկայնացած աստվածություններին, բայց վոչ կաթոլիկական կամ բողոքական յեկեղեցու հետ կապված միստիկ աստծուն: — այնուամենայնիվ հավատում է աստծուն: Թոմաս Մոռը իր «Աւտոպիա»-ում անհրաժեշտ է համարում բոլոր կրոնների ազատ գոյությունը: բայց աթեիզմի համար պատիժ է սահմանում:

«Եկտարի մեջ Շեքսպիրը խիստ արտահայտություններ ե գործածում հարուստների, այսինքն բուրժուազիայի կամ բուրժուականացած ազնվականների հասցեյին, բայց նրանց զեմ պայքարելու մասին դադափար չունի: Մինչդեռ Թոմաս Մոռը բուրժուական հասարակության հիմքում տեսնում է սնարդուստների դավադրությունը՝ ուղղված ամբողջ հասարակության դեմ, այսինքն բանվորների, գյուղացինե-

բի և արհեստավորների դեմ, և առևջարկում և արմատական միջոցներ,

Այս գուղազրությունը մեր մեջ ակամա առաջացրեց մի հարց ծանոթ չե՞ր արդյոք Շեքսպիրը Թոմաս Մոռի դործներին Առանց ընդունելու նրա տեսակետը լրիվ կերպով, համարելով այն փանտաստիկա, Շեքսպիրը կարող եր նրանից վարոշ աղգեցությունն կրած լինել իր ստեղծագործական աշխարհական արխատկրատիայի կազմակերպման պրոցեսը և առևտրական-գաշխառուական կապիտալի դաժան վերելքը նրա մեջ առաջացընէլ եյին ծայրանեկ պեսսիմիստական վերաբերմունք դեպի կյանքը:

Թոմաս Մոռի^{*)} և Շեքսպիրի սասին մեր արտահայտութ միտքը այնքան ել ստարութի չպիտի թվա, վարովհետեւ մի քանի ապրի տատի Անդլիայում գտնված «Թոմաս Մոռի վերնազրով ձեռագիր-վողբերդության տակ զրկած և Վելիամ Շեքսպիր ստարագրությունը, Շեքսպիրյան տեքստությունները պիեսը կամ նրա տռանձին տեսաբանները համարում են Շեքսպիրի հեղինակություն, ստորագրությունը հիշեցնում և զրամասաւրդին վերագրվող մյուս ստորագրությունները:

*) Թոմաս Մոռը ծնվել և Լոնդոնում 1678 թ. ազնվական ընտանիքում, վարը մատիկ հարաբերությունն և ունեցել բուրժուական շրջանակից հետ, Յանցել և հումանիզմական կրթություն, Ցեղել և անզամ որաւլամմատիք, ընտրված Լոնդոնի բուրժուանութիւնութիւնը, Գետական խոշոր ընդունակությունների պատճեառով գրագիր և լորդ կանցլերի պաշտօնը: Մոռ ծանոթանալով պետական մեխանիզմին և ակտոնատես լինելով անսամբլական տաղնապի ժամանք հասեանքներին, արհեստավորների և գյուղացիների անհետության քայլայմանը, դարձագուրկ բանվորների տառաջարմանը, Թոմաս Մոռի աշխարհայացը, մեջ կատարվում և հիմնական հեղաշրջում, և նաև անցնում և զրկված աշխատավորության կողմը և զրում իր հաշակավոր սոցիալիստական Շնուռպիտիան: 1535 թ. Թոմաս Մոռը իր դաշտանած ծայրանեղ սկզբունքների համար կախաղան բարձրացվեց անդիքական թագավորի և խոշոր բուրժուազիայի որանոնշով:

«Եկր արքային նովիրված դլուխը փակելուց առաջ մենք անհրաժեշտ ենք համարում համառոտ կանգ առնել վողբերդության յերկրորդական հերոսներից մեկի — Եղմունդի վրա, վորը գործող անձերի շարքում հիշատակված ե վորովիս Դրսակերի «ապօրինի» դավակ, Շեքսպիրյան քննադատությաւնը դրեթե չե շոշափել այդ հերոսի տիտական գծերը:

Եղմունդը բուրժուական կուտակման շրջանի վեր մադըլցող տիպերի անդքաղաքացումն ե, Գլուխերի որինական վորդին, Եղդարը, դուքս և բերդած արիստոկրատ-ասպետի գրական հատկանիշներով, խեկ «ապօրինի» դավակ Եղմունդը՝ շատ բացասական կողմնը, Շեքսպիրինից դավակը հարցադատ չե նաև իր հար գասակարդին: Նու ոժակած և արիստոկրատական ցեղի բախտը կործանող դասակարգի հատկանիշներով:

Շեքսպիրը, մեր կարծիքով, մի դեպքում միայն համաձայն ե իր այս հերոսի հնտ, յերբ սա բողոք և հայտնում էապօրինի դավակը հասկացողության գնմ: Իր ժամանակի՝ համար (և ինչու միայն իր ժամանակի) միանգամայն ազատ ոքեր և գրել Շեքսպիրը հերոսի բերանը, վոր անկասկան արգասիք և գրամատուրդի հումանիստական մտածողության: Կապելով իր ծնունդը բնության մի սովորական յերեւյթի հետ, Եղմունդը հայտնում ե, վոր նա բնությունը համարում ե իր աստվածը և յենթարկվում նրան: Նա բողոքում և հասարակական այն անարդար կարծիքի դեմ, վորը հայկառակ առողջ տրամարանության անարգանքի կնիք և դնում «որինական» անկողնից դուրս ծնկած յերեխայի ճակատին: Եինչեւ յես պետք ե խոնարհվեմ, — ասում ե նա, — փուչ պայուրության ու հասարակական դատաստանի առաջ, ապրեմ իրեն վոչնչություն միմիայն այն պատճառով, վոր յեկըռըիցս մի քանի լսւանյակ հետո յեմ ծնվելը Ինչժեւ ապօրինի և ինչժեւ սանոր արարած: Մարմնիս կազմվածքը ամուր ու ոգիս աղնիվ, նույնչափ բարեձեւ ու ուշարդ ե գեմքս, ինչ-

աղես մի պարկեցտ կնոջ վորդունը: Խնչժւ մեզ կնքում են առողջինի, անսարդ բաներով:

Երջապատղների այս վերաբերմունքը դառնություն
և մացնում Եղմունդի սիրտը, և նա իր առաջին յելույթով՝
նպատակ և դնում իրեն՝ ուժով, խորամանելությամբ ու ա-
մեն անուակ զավերով գիրքեր գրավել կյանքի խնջույքում:
Նա ուղարձ և ձեռք բերել հոր ժառանգությունը, նախապես
չեղոքացնելով յնդրսրը և ուղավելով այն բանից, վոր հայրը
իրեն ամելի է սիրում:

Եկատղիրը բաց եւ անում նրա առջև գործելու ասպարեզ, վրապեսպի կարողանա դիտել, թե ինչպես եւ նա իր ձրագրները իրականացնում, Սոցիալական սանդուխքով վեր բարձրանալու համար Եզմունդը միջոցների մեջ խորություն չեն դնում, Ամենից առաջ նա իր գեմքը ծածկում եւ կեղծիքի պատյանով, վրապեսպի Յաղոյի կամ Ազի Մակբեթի նման սրտի խորքում նյութող դավերը դեմքի վրա չարտացոլին, Իր վերելքի ճանաղարհին նա պատրաստ եւ կուրրատի մատնելու թե յեղորը և թե հորը, Բայց այդ ամեն-

Նա այսպիս և անում, վոր յերկուան ել մնում են հա-
տողված, թե իրենք նրա հոգսի առարկան են: Հորը վորդու-
հեա և վորդուն հօր հետ կովեցնելու համար նդմունզը դի-
մում և պրովոկացիայի: Հորինում ե կեղծ նամակ նդգարի
անունից, ուղղված հօր կյանքի դեմ: Խառնակիչ և խո-
բամանիկ, ինչպիս Յագան: Պրովոկացիայի շնորհիվ հորը
դինում և վորդու դեմ, վորի հետեանքով նդգարը արտա-
քսվում և տանից, և ժառանգության իրավունքը վերապահ-
վում իրեն: Սակայն պա զործի կեսն և նդմունզը նպատակ
և դնում վարկարենկելու հօրը դուքսի առաջ: Այդ բանի հա-
մար նա ողտվում և հօր մերձավորությունից կիր թագա-
վորին ու Կորզելիային, վորի զորքերն արդեն մտել եյին
Դումբը: Հոր կապերի ու Դումբը ստացած մի նամակի մա-
սին Նդմունզն անմիջապիս իմաց և տալիս դուքսին ու կի-

րի մեծ աղջկանը, վորոնք քաղաքական դավաճանություն համարելով Գլոստերի քայլը, հանում են նրա՝ աչքերը և արտաքսում, իսկ նրա սեփականությունը հանձնում եղածունդին,

«Ասպետական ժամանակների առաջինությունները», մարդկային դրական հատկությունները, ինչպես վեհանձնություն, անձնազոհություն, ազնվություն և այլն, — սրանք բոլորը դատարկ հնչյուններ են Եղմունդի համար, վոր գիտե միայն սեփական շահը: Խոնչ և ազնվությունը, բարությունը, Տիսմար բան, պատասխանում և Եղմունդը: Դրանցով մարդ առաջ դնալ չե կարող, Խարեբայություն, ստորոտիթյուն, մատնություն, — ահա այն դենքերը, վորոնք եպոխայի դաժան պայմաններում ճարպիկների համար ուղիներ են հարթում:

Եղմունդը վորպես անհատական կարիյերայի սարուելը, իր հույսը գնում և բացառապես սեփական-անհատական ուժերի վրա, Մի զաղափար, վոր սկզբից վորդեզը եր բուրժուազիան: Անհատական վերնլը՝ անհատական ուժերով, բայց ուրիշի հաշվին: Վերելքի ճանապարհը հարթելու համար չպետք է խնայել վոչ վոքի: Մարդը մարդու համար դայլ ե: Կարմղ ես՝ վոչնչացրու քո յերթը խափանողին ու առաջ գնա: Ո՞վ ե քո բախտի տնորենը, — Դու ինքդ, «Հենց վոր մեր բախտը ծուռ ե բանում, — ասում ե Եղմունդը, — վուրը հաճախ պատահում ե մեր վարքի վատությունից, մեր գժբախտության մեղքը բարդուա ենք արեի, լուսնի, ասաղերի վրա, վորպես թե մենք ապաշնորհ ենք՝ ճակատագրի սրենքի հիման վրա: հիմար ենք՝ յերկնքի կտմքով: ոռող ենք՝ մթնոլորտների գործողության պատճառով: հարբեցող, ստահակ ենք՝ մոլորակների մեզ վրա ունեցած անդիմաղբեւմ զորությամբ: Խնդիվիդուալիզմի արսենալից վերցրած գատողություններ:

Նղմունդի ինդիվիդուալիզմը հիմնված և ծայրահեղ եղոյիզմի վրա։ Այլ տեսակ ինդիվիդուալիզմ բուրժուազիան չեն ճանաչում, մանավանդ իր սկզբնական կուտակման ու մերելքի շրջանում։ Մաղլցող ե, գիշատիչ, հանդուզն ու արակածախնդիր, նա ոգտվում և բոլորից, ոգտազործում բոլորին։ Յեթև հարկավոր լինի՝ պատրաստ ե իր շահերին դահ ընթել այդ բրոլորին։

Նղմունդի «գործը» պահանջում եր ոգտազործներ շատերին։ յերկու դուքսներին, յերկու քույրերին։ առաջիններին ոյեաք և հավատարիմ ձևանար, յերկրորդների զգացմունքները շահագործեր, և միաժամանակ բոլորին իրար դեմ լարուր։ «Սիրո և հավատարմության յերդում տվի յես յերկու քույրերին եւ—ասում ե նա, Նրանք միմյանց թշնամի յեն, ինչպես իժն ու թունավորվածը։ Վեր մեկի հետ ամուսնանամ... վոչ մնկից յես ողուտ չեմ ունենա, յեթև վողջ մնան յերկումն ել»։

«Ողուտը»—ահա գործողությունների զլիսավոր ստիւմուլը, շարժիչ ուժը։ «Ժամանակն ե մարդուն մարդ նողը», խօսատում ե նա սպային, վորին ուղարկում ե խեղուաման անելու կորդելիային։ Խղճահարությունը ամոթալի յերեսույթ ե, Ուղաւմ ես նոր դիրքեր գրավել, ստանալ բարձրագույն պատիվ։ մի կողմ նետիր փափկասրտությունդ և տրորիր քեզ խոչնդուտ կանգնողին։ Ահա այն տիպը, վորին իր դիտողության դաշտն ե առել Շեքսպիրը, իրբև նոր ֆորմացիայի մարդու, վոր շատ կողմերով տարբերվում ե ֆեռդալական արիստոկրատիայի ծանոթ ներկայացուցիչներից և միթարական վոչ մի բան չե բերում յերկու եպոխաների ընդհարման պրոցեսն ապրող մեծ դրամատիկական արդիականություն ունի մասնաւոր առաջնային դրամատուգին։

«Տիմոն Արենացի»ն Շեքսպիրի անկատար գործերից և, բայց դրամատուրգի աշխարհայացքի և տրամադրությունների լուսաբանման տեսակետից շատ արժեքավոր։ Այդ պիեսը գրված և Շեքսպիրի կյանքի մռայլ տարիներում՝ Վերշնական մշակման չե յենթարկվել։ անհարթ, անմշակ հատվածների կողքին ունի գոհարներ, հզկված, պատպահ, շեքսպիրյան Վումանք քննադատներից կարծում են, թե անկատար կտորները գրված են ուրիշների ձեռքով։ Դրանք առարկություն վերցնող կարծիքներ են։

«Տիմոն Արենացի» պիեսի սոցիալական նշանակությունը մեծ ե, Հայտնի յե, վոր Մարքսը մի քանի անգամ հիշատակում ե իր գործերում Շեքսպիրի այս պիեսը, քազնով նրա գլխավոր հերոսի, Տիմոնի, դրամի մասին արտահայտած մտքերը։ «Շեքսպիրը, — ասում ե Մարքսը, — զերազանց վարպետությամբ վերարտադրում ե դրամի եյությունը»։ «Շեքսպիրը ընդգծում է դրամի մանավանդ յերկու հատկանիշը։ 1) զա բոլորին տեսանելի աստվածությունները ե, բոլոր մարդկային և բնական հատկությունները իրենց հակառակերի վերածողը; 2) «Դա մարդկանց ու ժողովուրդների ընդհանուր հարճն ե, ընդհանուր խնամախոսը։ Մարդկային ու բնական բոլոր վորակների աղաղաղումն ու խառնակումը։ անկարելիությունների յնդբայրական միացումը»։

Տիմոնը իր մենախոսության մեջ այսպես ե բնորոշում դրամի եյությունը։ «Այսաեղ բավական վոսկի կա, — ասում ե նա զետնի տակից հանելով գտած վոսկու դանձը, — վորոպեսզի սեը սպիտակադույն դարձիք, ստորագույնը վեղեցիկ, հանցանքը ճշմարտություն, ցածությունը մեծություն, վախկոտը անդեհեր, ծերը յերիտասարդ ու թարմ։ Ապա. դրամը զլիսիդ տակից բարձր դուրս կքաշի, անիծվածին որհնված կհնչակե, ավազակին պատիվ ու շքանշան կտա և սենատորական աթոռի վրա կըազմեցնի... Դրա համար Ել

յեսամոլությունն և դարձել մարդկային հարաբերությունն ների գրդիշը և, ինչպես նույն պիհեսի մի այլ գործող անձն և ասում, չկա այլև վոչ խղճահարություն և վոչ ամոթ...

«Տիմոն Աքենացիւն, ինչպես տսել ենք վերը, զարդացումն և Շ.իշ արքայի մեջ տիրող հոռետեսության, Այստեղ այդ տրամադրությունը փախվում և մարդատեղության, միզանարոպիայի, կյանքի ժխտման գաղափարի, կարծես Շեքսոլիբի աշքում մարդկային կյանքը խորասուղվում և մի թանձր խաղաքի մեջ, թոշնում, մեռնում են ովաղեմի կյանքից լուսավոր յերևույթները և տեղը բռնում կեղտոտ դրամին խարսխված զծուծ անարժեք գոյություններ,

Դողիբըսության զլիավոր հերոս Աթենացի Տիմոնը հարուստ կարիածատեր և, առատաձեռն, բարեհոգի, իր կենցաղով հիշեցնում և դրամի արժեքը չնմացող արիստոկրատի, վոր ճոխության ու շռայլության մեջ, շրջապատված ինդ բարեկամներով, վերջինիրջո սնանկանում և, դառնում աղքատ, սեփականազուրկ, Նրա մշտական հյուրերն են պետական գործիչներ, ինտելիգենցիա պրոֆեսիայի մարդիկ՝ պուտ, նկարիչ, փիլմսոփա, զորավար, տիկիններ, վորոնք վայելում են նրա սեղանն ու ստանում առատ նվերներ։ Տիմոնը անտեղյակ և իր տնտեսական վիճակին և ցանկություն ել չունի նման իրազեկության կալվածների կառավարչի նախաղղուշացցումները միայն ջղագրգռություն են տատջ բերում նրա մեջ, և նա պատմիրում է չմռային նման բաներով իր վայելքի տրամադրությունը։ Միայն այն ժամանակ, յերբ կալվածները գրավ են գրվում, պարտատերերը սկսում են խեղդել նրան, Տիմոնը լուրջ անհանգտություն և զգում և ամրող հույսը դնում իր հարուստ սեղանակիցների վրա, Նրա գիմումների պատասխանը սակայն ամեն տեղից լինում և բացասական, Տիմոնի վողջ ունեցածը անցնում և պարտատերերի ձեռքը, իսկ ինքը մնում մերկ, անողնական։

Բախտի հանկարծակի շրջվելը Տիմոնը բացատրում և շրջապատողների սկ ապերախտությամբ, բայց վոչ իր անծայր շռայլ վատնումներով, Կորցնելով ամեն ինչ—կալվածք, ապարանք, նույնիսկ ապրելու անկյունն, Տիմոնը հուսակը ված, զայրույթն ու առելությունը սրտում, վերջին անգամ թոթափում և վոտների փոշին քաղաքի շեմքում, թողնում Աթենքը և անեծքը բերանին դուրս դալիս դեպի բաց տարածություն, քարայրների մեջ ազատան զանելու և արմատիքներով սնվելու համար։ Մարդատեցությունն այնաև և հասնում, վոր վոսկու զանձ դանելուց հետո անգամ նու հրաժարվում և քաղաք վերադառնալ և գանձը բաժանում և ավաղակներին, կարճ ժամանակից հետո մնոնում է։

Որ և «աթենացի» Տիմոնը, իր զայրույթով ու հուսալքումով, անհծովով ու վրեժինդրության զգացմունքով ովեասի զիամալոր հերոսը չե՛ հիշեցնում շեքսպիրյան եպախայի (16-ի վերջը 17-ի սկիզբը) ֆեռուալական արիստոկրատիայի այն ներկայացուցչին, վորի տնտեսությունը յենթարկվել և բուրժուադիայի անողասելի հարգածներին, քայլեայվել ու անցել դրամատուրգ վաճառականի ձեռքը՝ այլ հիմքերի, վրա վերակառացվելու համար։ Տրադիցիաներով, փառքով ու ճախությամբ հոգարտ արիստոկրատիան կարմաղ եր չաղըել իր անկման վողբերգությունը, քանի վոր տնտեսականի կորուստով նա կորցնում եր իր քաղաքական հեգեմոնիան։ Վաճառաշահ, տենդուտ քաղաքն իր մեջ սնուցանում եր մի «հիդրա», վորի շոշափուկները համառոքեն տարածվում եյին գեղի տոհմական ամրոցները, ապարանքները, կալվածները, թանգագին դարդերը, աղամանդները։

Ահա թե ինչու Տիմոնի անհծոն ու զայրույթը ուղղված ե ամենից առաջ քաղաքի՝ «Աթենքի» (իմա Լոնդոնի) դեմ, ուր արմատ ե բռնել ասպետական կյանքը խորտակող անողորմ դասակարգը։ Յեզ հասկանալի յե, թե ինչու իր սեփական ապարանքում այնքան մեղմ, հեղահամբույր,

հյուրասեր Տիմոնը սեփականազուրկ վիճակում դառնում է ծայր՝ աստիճան մաղձու ու մարդատյաց։ Դուքս գալով Աթենքից, նու անենք և թափում նրա գլխին, ցանկանում է տեսնել նրա կործանումը, անբարոյականացումը, և ենաւորներից տալալումը և նրանց իշխանությունը ստրուկ-ների ու ծաղրածուների ձեռքն անցնելը։ Ինչպէս բացատրել Տիմոնի վերջին ցանկությունը։ Անշուշտ նրանով, վոր հարադար գասակարդը այլևս հույս չուներ վերականգնելու իր վաղեմի տիրապետությունը։ «Ինձանից հետո թող լինի աշխարհի կործանում»; — այսպիս և մտածում ընկնող դասակարդը։ Յեզ Տիմոնը, անիծելով Աթենքը, գոչում և. «Յնզ ճշմարտությունը, և խաղաղությունը, արդարությունը, ամուսնությունը, հարևանների հաշտ կենցաղը, գիշերի հանգիստը, մարդավարությունը, լուսավորությունը, կրոնը, հարգանքը դեպի հասակը, արդյունաբերությունը, սովորույթն ու որենքը»; — այս ամենը թող դահավեժ լինեն և թնդ վայրենի քառոր տիրե աշխարհում։

